Հին կտակարան

Ավետարանական վարդապետության ուսուցչի ձեռնարկ

Հին կտակարան

Ավետարանական վարդապետության ուսուցչի ձեռնարկ

Հրատարակված է
Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու կողմից
Սոլթ Լեյք Սիթի, Յուտա

Դիտողություններ և առաջարկներ

Շնորհակալ կլինենք այս ձեռնարկի վերաբերյալ
ձեր դիտողությունների և առաջարկների համար:
Խնդրում ենք ուղարկել դրանք հետևյալ հասցեով.

Curriculum Planning
50 East North Temple Street, Floor 24
Salt Lake City, UT 84150-3200
USA
կամ cur-development@ldschurch.org էլ- փոստի հասցեով

Խնդրում ենք նշեք ձեր անունը, հասցեն, ծուխը և ցիցը:
Չմոռանաք գրել ձեռնարկի վերնագիրը:
Այնուհետև ներկայացրեք ձեր դիտողություններն ու
առաջարկները ձեռնարկի ուժեղ կողմերի և հնարավոր
ուղղումներ պահանջող մասերի վերաբերյալ:

Կազմի նկարը՝ Աննան իր որդի Սամուելին ներկայացնում է Հեղիին. ըստ Ռոբերտ Թ. Բարրեթի

© 1996, 2001 by Intellectual Reserve, Inc.
Բոլոր իրավունքները պաշտպանված են
Printed in the United States of America
Անգլերենի հաստատումը. 1/01
Թարգմանության հաստատումը. 1/01
Old Testament: Gospel Doctrine Teacher's Manual-ի թարգմանությունը

Armenian

Բովանդակություն

	Դասի համարը և վերնագիրը	Էջ
	Օգնություն ուսուցչին	v
1	«Սա է իմ գործը և իմ փառքը» (Մովսես 1.39)	1
2	«Դու ընտրվել էիր նախքան քո ծնվելը» (Աբրահամ 3, Մովսես 4.1–4)	6
3	Արարում (Մովսես 1.27–42, 2–3)	10
4	«Իմ օրինազանցության հետևանքով աչքերս բացվել են» (Մովսես 4, 5.1–15, 6.48–62)	13
5	«Եթե բարին գործես, դու կընդունվես» (Մովսես 5–7)	19
6	«Նոյը ....տապան պատրաստեց իր տան փրկության համար» (Մովսես 8.19–30, Ծննդոց Զ–Թ, ԺԱ.1–9)	25
7	Աբրահամի Ուխտը (Աբրահամ 1.1–4, 2.1–11, Ծննդոց ԺԲ.1–8, ԺԷ.1–9)	30
8	Արդար ապրելով ամբարիշտ աշխարհում (Ծննդոց ԺԳ–ԺԴ, ԺԸ–ԺԹ)	35
9	«Աստված կտեսնէ իր գառը ողջակեզի համար» (Աբրահամ 1, Ծննդոց ԺԵ–ԺԷ, ԻԱ–ԻԲ)	39
10	Անդրանիկության օրհնությունը. ամուսնության ուխտը (Ծննդոց ԻԴ–ԻԹ)	43
11	«Ես ինչպե՞ս գործեմ այս մեծ չարությունը» (ԾննդոցԼԴ, ԼԷ–ԼԹ)	50
12	«Իմ տառապանաց երկրումն աճեցրեց ինձ» (Ծննդոց Խ–ԽԵ)	55
13	Գերություն, Զատիկ և Ելից (Ելից Ա—Գ, Ե—Զ, ԺԱ–ԺԴ)	60
14	«Դուք ինձ համար [հատուկ գանձ] սեպհական ժողովուրդ կլինեք» (Ելից ԺԵ–Ի, ԼԲ–ԼԴ)	66
15	«Տես որ նայես առ Աստված և ապրես» (Թվոց ԺԱ–ԺԴ, ԻԱ.1–9)	73
16	«Իմ Եհովա Աստծո խոսքիցը չեմ կարող անց կենալ» (Թվոց ԻԲ–ԻԴ, ԼԱ.1–16)	78
17	«Զգույշ կաց մի գուցե մոռանաս» (Բ Օրինաց Զ, Ը, ԺԱ, ԼԲ)	83
18	«Զորացիր և քաջ եղիր» (Հեսու Ա–Զ, ԻԳ–ԻԴ)	88
19	Դատավորների կառավարում (Դատավորաց Բ, Դ, Զ–Է, ԺԳ–ԺԶ)	94
20	«Քաղաքիս բոլոր ժողովուրդը գիտե որ դու մի առաքինի կին ես» (Հռութ, Ա Թագավորաց Ա)	99
21	Աստված իրեն փառավորողներին կփառավորի (Ա Թագավորաց Բ –Գ, Ը)	104
22	«Տերը սրտին է նայում» (Ա Թագավորաց Թ–ԺԱ, ԺԳ, ԺԵ–ԺԷ)	110
23	«Տերն իմ և քո մեջն է հավիտյան» (Ա Թագավորաց ԺԸ–Ի, ԻԳ–ԻԴ)	117

24	«Սուրբ սիրտ ստեղծիր ինձանում» (Բ Սամուել ԺԱ–ԺԲ, Սաղմոս ԾԱ)	122
25	«Ամեն շունչ ունեցողը թող օրհնէ Տիրոջը» (Սաղմոսներ)	129
26	Սողոմոն թագավորը՝ իմաստության մարդ, հիմարության մարդ (Ա Թագավորաց Գ, Ե–ԺԱ)	135
27	Ամբարիշտ և արդար առաջնորդների ազդեցությունը (Գ Թագավորաց ԺԲ–ԺԴ, Բ Մնացորդաց ԺԷ, Ի)	140
28	«Կրակից հետո մի մեղմ ու բարակ ձայն» (Գ Թագավորաց ԺԷ–ԺԹ)	146
29	«Նա վեր առավ Եղիայի վերարկուն….» (Դ Թագավորաց Բ, Ե–Զ)	152
30	«Եկեք Տիրոջ Տունը» (Բ Մնացորդաց ԻԹ–Լ, ԼԲ, ԼԴ)	157
31	«Երանի այն մարդին որ իմաստություն է գտել» (Առակներ և Ժողովող)	164
32	«Ես գիտեմ, որ փրկիչս կենդանի է» (Հոբ Ա–Բ, ԺԳ, ԺԹ, ԻԷ, ԽԲ)	170
33	Աշխարհի հետ կիսվելով Ավետարանով (Հովնան Ա–Դ, Միքիա Բ, Դ–Է)	175
34	«Ես քեզ պիտի նշանեմ ինձ համար արդարությունով» (Ովսէէ Ա–Գ, ԺԱ, ԺԳ–ԺԴ)	179
35	Աստված հայտնում է Իր գաղտնիքները Իր մարգարեներին (Ամովս Գ, Է–Թ, Հովել Բ–Գ)	183
36	Սիոնի փառքը կլինի պաշտպանություն (Եսայիա Ա–Զ)	188
37	«Դու հրաշալի բաներ արեցիր» (Եսայիա ԻԲ, ԻԴ–ԻԶ, ԻԸ–Լ)	192
38	«Ինձանից ջոկ Փրկիչ չկա» (Եսայիա Խ-ԽԹ)	196
39	«Ի՞նչ գեղեցիկ են սարերի վրա»(Եսայիա Ծ–ԾԳ)	200
40	«Լայնացրու քո վրանի տեղը»(Եսայիա ԾԴ–ԾԶ, ԿԳ–ԿԵ)	203
41	«Ես քեզ այսօր ….երկաթի սյուն եմ շինում» (Երեմիա Ա–Բ, ԺԵ, Ի, ԻԶ, ԼԶ–ԼԸ)	208
42	«Նրանց սրտի վրա պիտի գրեմ այն»(Երեմիա ԺԶ, ԻԳ, ԻԹ, ԼԱ)	213
43	Իսրայելի հովիվները (Եզեկիել ԺԸ, ԼԴ, ԼԷ)	217
44	«Այն ամեն տեղերում ուր այն ….գետը գնում է, պիտի ապրէ» (Եզեկիել ԽԳ–ԽԴ, ԽԷ)	223
45	«Եթե կմեռնեմ, թող մեռնեմ» (Դանիել Ա, Գ, Զ, Եսթեր Գ–Ե, Է–Ը)	227
46	«Մի թագավորություն, որ հավիտյանս չի ավերվի» (Դանիել Բ)	233
47	«Եկեք վեր կենանք և շինենք» (Եզրաս Ա–Ը, Նէեմեա Ա–Բ, Դ, Զ, Ը)	238
48	«Տիրոջ մեծ և ահեղ օրը» (Զաքարիա Ժ–ԺԴ, Մաղաքիա)	244

Օգնություն ուսուցչին

Նախագահ Գորդոն Բ. Հինքլին ասել է. «Հուսով եմ, որ ձեզ համար [սուրբ գրություններն ուսումնասիրելը] կդառնա շատ ավելի հաճելի մի բան, քան պարտականություն կատարելն է, որ այն ավելի շուտ կդառնա Աստծո խոսքի հանդեպ սիրո գործ: Ես խոստանում եմ ձեզ, որ երբ դուք կարդաք, ձեր միտքը կլուսավորվի և ձեր հոգին կվեհանա» (“The Light within You,” *Ensign*, May 1995, 99):

Որպես Ավետարանի Վարդապետության ուսուցիչ, դուք հնարավորություն ունեք օգնել ձեր դասարանի անդամներին՝ սովորելու սիրել Հին Կտակարանը և գտնել այն լուսավորումը, որ Նախագահ Հինքլին խոստացել է: Ուսուցանելով՝ դուք հետևում եք Փրկչի օրինակին, որը սիրում էր սուրբ գրությունները և օգտագործում էր դրանք աշակերտներին սովորեցնելու համար:

Հիսուսն իր հարությունից անմիջապես հետո, օգտագործեց սուրբ գրությունները՝ երկու աշակերտների սովորեցնելու երկու հզոր ճշմարտությունների մասին: Կղեոպաս անունով մի աշակերտ և նրա ընկերը քայլում էին դեպի Էմմաուս՝ քննարկելով նորությունը, որը նրանք հենց նոր էին լսել, որ Հիսուսի մարմինն այլևս գերեզմանում չէր: Երբ նրանք քայլում էին, նրանց միացավ Հիսուսը, բայց չճանաչեցին նրան: Նա հարցրեց, թե ինչի մասին էին խոսում և ինչու էին տրտմած և նրանք պատմեցին նրան Խաչելության և Հարության մասին: Երբ Հիսուսը լսեց այդ, նա «մեկնեց նրանց՝ ինչ որ գրքերի մեջ գրված էր իր մասին» (Ղուկաս ԻԴ.27):

Կղեոպասն ու իր ընկերը խնդրեցին Փրկչին մնալ իրենց հետ և երբ նրանք նստեցին ուտելու, նրանք ճանաչեցին նրան՝ որպես հարություն առած Տեր: Նա նրանց աչքին աներևույթ եղավ և նրանք ասացին միմյանց. «Չէ որ մեր սրտերը բորբոքվում էին մեզանում, երբոր ճանապարհին մեզ հետ խոսում էր, և ինչպես գրքերը բաց էր անում մեզ համար»: (Ղուկաս ԻԴ.32):

Սուրբ գրությունները, որոնք աշակերտների սրտերը բորբոքեցին, Մովսեսի գրքերից էին և մարգարեներից՝ այն սուրբ գրություններից, որոնք մենք գիտենք, որպես Հին Կտակարան: Երբ դուք սովորեցնեք այս սրբազան ճշմարտությունները, նույն այս Սուրբ Հոգին կվկայի դրանց ճշմարտացիության մասին ձեր դասարանին, ինչպես Կղեոպասին և նրա ընկերոջը:

Հին Կտակարանի ուսումնասիրությունը պետք է զորացնի Փրկչի վերաբերյալ դասարանի անդամների վկայությունները և նրա ավետարանով ապրելու նրանց պարտավորությունը: Իրենց ուսումնասիրության ժամանակ առաջնորդվելով Հոգով՝ դասարանի անդամները պետք է կարողանան վկայել Հոբի պես. «Իսկ ես գիտեմ, որ Փրկիչս կենդանի է, և նա վերջը պիտի կանգնէ հողի վրա» (Հոբ ԺԹ.25):

Ուսուցանել Հոգու միջոցով

Երբ պատրաստվեք Ավետարանի վարդապետության դասարանի համար, կարևոր է, որ դուք ոգեշնչում և առաջնորդություն փնտրեք Տիրոջ Հոգուց: «Հոգին կտրվի ձեզ հավատքի աղոթքով,– ասել է Տերը,– և եթե դուք չստանաք Հոգին, դուք չպետք է ուսուցանեք» (ՎԵՈՒ 42.14): Հիշեք, որ ձեր դասարանում ուսուցիչը Սուրբ Հոգին է:

Ուղին, որով փնտրում եք Հոգին՝ աղոթքի, ծոմի, սուրբ գրությունների ամենօրյա ուսումնասիրության և պատվիրաններին հնազանդվելու միջոցով է: Երբ պատրաստվում եք դասին,

աղոթեք, որ Հոգին օգնի ձեզ հասկանալ սուրբ գրությունները և դասարանի անդամների կարիքները: Հոգին կարող է նաև օգնել ձեզ ծրագրել իմաստալից ուղիներ սուրբ գրությունները քննարկելու և դրանք առօրյա կյանքում կիրառելու համար (1 Նեփի 19.23): Հոգու միջոցով դուք արդյունավետ միջոց կդառնաք Տիրոջ ձեռքում՝ նրա խոսքն իր զավակներին ուսուցանելու համար:

Ստորև բերված են Հոգին ձեր դասարան հրավիրելու մի քանի առաջարկներ.

1. Առաջարկեք դասարանի անդամներին աղոթել նախքան դասը և դասից հետո: Դասի ընթացքում աղոթեք ձեր սրտում, որ Հոգին առաջնորդի ձեզ՝ բացելու դասարանի անդամների սրտերը, վկայելու և ոգեշնչելու համար:
2. Օգտագործեք սուրբ գրությունները (տես ստորև «Կենտրոնանալ սուրբ գրությունների վրա»):
3. Վկայություն բերեք ոչ միայն դասի վերջում, այլ երբ Հոգին հուշի ձեզ: Բերեք վկայություն Փրկչի մասին: Հաճախ հրավիրեք դասարանի անդամներին բերել իրենց վկայությունները:
4. Օգտագործեք օրհներգեր, երեխաների Միության երգեր և այլ հոգևոր երաժշտություն՝ դասարանի անդամների սրտերը պատրաստելու՝ Հոգին զգալու համար:
5. Արտահայտեք սեր դասարանի անդամների, ուրիշների և Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի հանդեպ:
6. Կիսվեք ներըմբռնումներով, զգացումներով և փորձառություններով, որոնք կապված են դասի սկզբունքների հետ: Առաջարկեք դասարանի անդամներին անել նույնը: Անդամները կարող են նաև պատմել, թե ինչպես են նրանք կիրառել կամ սովորեցրել այն, ինչ քննարկվել է նախորդ դասերի ժամանակ:

Կենտրոնանալ սուրբ գրությունների վրա

Ավետարանի վարդապետության դասին նախապատրաստվելու համար, անհրաժեշտ է սուրբ գրությունների ջանասեր, աղոթքով ուսումնասիրություն: Տերը պատվիրել է. «Մի փնտրիր հայտարարել իմ խոսքը, այլ նախ փնտրիր ձեռք բերել իմ խոսքը»: Երբ դուք ձեռք եք բերում նրա խոսքը սուրբ գրություններն ուսումնասիրելու միջոցով, Տերը խոստանում է, որ «հետո [ձեր] լեզուն պիտի արձակվի, հետո եթե կամենաս, դու կունենաս իմ Հոգին և իմ խոսքը, այո, Աստծո զորությունը՝ մարդկանց համոզելու համար» (ՎԱՈՒ 11.21):

Այս դասագիրքը մի միջոց է՝ օգնելու ձեզ սուրբ գրություններն ուսումնասիրելու համար: Դասարանի անդամներին խրախուսեք ամեն շաբաթ դասարան բերել իրենց սուրբ գրությունները: Հնարավորության դեպքում պետք է օգտագործվեն Աստվածաշնչի հաստատված հրատարակությունները: Օգտագործեք մեջբերումներ Աստվածաշնչի Ջոզեֆ Սմիթի Թարգմանությունից, որոնք ընդգրկված են Սուրբ Գրքերի Ուղեցույցում:

Դասի ընթացքում պահպանեք սուրբ գրությունների վրա կենտրոնացած քննարկումներ: Եղեք ողջամիտ՝ մեկնաբանություններ և ոչ սուրբգրքյան այլ տեղեկության աղբյուրների օգտագործման ժամանակ: Դասարանի անդամներին պետք է ուսուցանել՝ փնտրելու գիտելիք և ոգեշնչում սուրբ գրություններից և վերջին օրերի մարգարեների խոսքերից:

Դասարանի յուրաքանչյուր անդամի պետք է տրվի *Ուսումնական ուղեցույց Հին Կտակարանի դասարանի անդամների համար* (34592) գրքույկի մեկ օրինակ: Այս գրքույկը տալիս է ամփոփումներ և հարցեր, որոնք կօգնեն դասարանի անդամներին հասկանալ սուրբ գրությունները, մտածել, թե ինչպես կիրառեն դրանք և պատրաստվեն դասարանային քննարկմանը:

Խրախուսեք ծնողներին սուրբ գրությունների ընտանեկան ուսուցման ժամանակ օգտագործել ուսումնական ուղեցույցը:

Դասի կառուցվածքը

Այս ձեռնարկը գրվել է Ավետարանի Վարդապետության և՛ երիտասարդների, և՛ չափահասների դասարանների համար և պետք է օգտագործվի ամեն չորս տարին մեկ: Դասերը կազմված են այնպես, որ պարունակում են ավելի շատ տեղեկություններ, քան դուք, հավանաբար, կկարողանաք սովորեցնել մեկ դասի ժամանակահատվածում: Փնտրեք Տիրոջ Հոգու առաջնորդությունը, երբ որոշում եք, թե սուրբգրքյան պատմություններից, հարցերից և վարժություններից որոնք կբավարարեն դասարանի անդամների կարիքները:

Յուրաքանչյուր դաս բաղկացած է հետևյալ բաժիններից.

1. *Նպատակ:* Նպատակի ձևակերպումն ապահովում է ձեզ հիմնական գաղափարով, որի վրա պետք է կենտրոնանալ, երբ նախապատրաստվում և ուսուցանում եք դասը:
2. *Նախապատրաստություն:* Այս բաժնի առաջին մասի դասը ուրվագծում, հանրագումարի է բերում սուրբ գրությունների պատմությունները: Որոշ դասեր պահանջում են լրացուցիչ ընթերցանություն, որոնք կընդլայնեն ձեր ըմբռնումը: Բազմաթիվ դասերում այս բաժինը ներառում է նաև առաջարկվող այլ նախապատրաստություններ, ինչպես օրինակ նյութեր, որոնք ցանկալի կլիներ դասարան բերել:
3. *Ուշադրության կենտրոնացման վարժություն:* Այս բաժինը բաղկացած է մի պարզ վարժությունից, առարկայական դասից կամ հարցից՝ դասարանի անդամներին օգնելու նախապատրաստվել՝ սովորելու, մասնակցելու և Հոգու ազդեցությունը զգալու համար: Անկախ նրանից դուք օգտագործում եք ձեռնարկի ուշադրության կենտրոնացման վարժությունը, թե ձեր սեփական վարժություններից մեկը, կարևորը դասի սկզբում դասարանի անդամների ուշադրությունը կենտրոնացնելն է: Վարժությունը պետք է համառոտ լինի:
4. *Սուրբ գրությունների քննարկում և կիրառում:* Սա դասի հիմնական մասն է: Աղոթքով ուսումնասիրեք սուրբ գրության պատմությունները, որպեսզի կարողանաք դրանք արդյունավետ ուսուցանել և քննարկել: Օգտագործեք առաջարկներ «Օգնություն սուրբ գրությունների ուսուցման համար» բաժնից (ներքևում), ուսուցման տարբեր ոճ օգտագործելու և դասարանի անդամների հետաքրքրությունը պահպանելու համար:
5. *Եզրափակում:* Այս բաժինն օգնում է ամփոփել դասը և խրախուսել դասարանի անդամներին ապրել այն սկզբունքներով, որոնք քննարկել եք: Այն նաև հիշեցնում է ձեզ վկայություն բերել: Աշխատեք բավականաչափ ժամանակ թողնել յուրաքանչյուր դասը եզրափակելու համար:
6. *Ուսուցման լրացուցիչ գաղափարներ:* Այս բաժինը պարունակում է լրացուցիչ ճշմարտություններ սուրբ գրությունների պատմություններից, լրացուցիչ ուսուցողական մոտեցումներ, վարժություններ և այլ առաջարկներ, որոնք լրացնում են դասի ուրվագիծը: Հավանաբար, որպես դասի բաղկացուցիչ մաս, դուք կկամենաք օգտագործել այս գաղափարներից մի քանիսը:

Օգնություն սուրբ գրությունների ուսուցման համար

Օգտագործեք հետևյալ առաջարկները՝ առավել արդյունավետ ու բազմազան ուսուցանելու համար սուրբ գրությունների պատմությունները.

1. Օգնեք դասարանի անդամներին հասկանալ, թե ինչպես են սուրբ գրությունները սովորեցնում Հիսուս Քրիստոսի՝ Հին Կտակարանի Եհովայի մասին, որի ծնունդը, մահկանացու

առաքելությունը, երկրորդ գալուստը և հազարամյա թագավորումը մարգարեացվել են Հին Կտակարանում:

2. Խնդրեք դասարանի անդամներին մտածել և կիսվել այն առանձնահատուկ ուղիների վերաբերյալ, որոնցով սուրբ գրության հատվածը կարող են կիրառել իրենց կյանքում:
3. Բացի վարդապետությունից, շեշտը դրեք Հին Կտակարանի պատմությունների, հատկապես հավատքի պատմությունների վրա, հավաստիանալով, որ դասարանի անդամները հասկանում են դրանք և քննարկեք ուղիներ դրանք կիրառելու համար:
4. Հանձնարարեք դասարանի անդամներին որոնել բառեր, արտահայտություններ կամ գաղափարներ, որոնք հաճախ են կրկնվում սուրբ գրության հատվածում կամ, որը հատուկ նշանակություն ունի նրանց համար:
5. Գրատախտակին գրեք մի քանի արտահայտություն, կարևոր խոսքեր կամ հարցեր, որոնք կապված են սուրբ գրության պատմության հետ: Ապա կարդացեք կամ ամփոփեք պատմությունը: Երբ դասարանի անդամները լսում են արտահայտությունները, կարևոր խոսքերը կամ պատասխանում հարցերին, կանգ առեք և քննարկեք դրանք:
6. Մորմոնի Գրքի ողջ ընթացքում «և այսպիսով մենք տեսնում ենք» արտահայտությունը օգտագործվում է՝ ներկայացնելու ուսուցանված սկզբունքների ամբողջությունը: Սուրբ Գրքի հատվածը քննարկելուց հետո, խնդրեք դասարանի անդամներին լրացնել «և այսպիսով մենք տեսնում ենք» նախադասությունը, ուսուցանվող ավետարանական սկզբունքը բացատրելու համար:
7. Որոնեք և քննարկեք խորհրդանիշները, որոնք օգտագործվում են ողջ Հին Կտակարանում: Օրինակ հարսը և Փեսան ներկայացնում են Իսրայելը և Փրկչին:
8. Ուշադրություն դարձրեք, թե ինչպես սուրբ գրություններում մարդիկ և իրադարձությունները կարող են հակադրվել միմյանց: Օրինակ՝ դուք կարող եք Կայենին հակադրել Աբելի և Ենովքի հետ (Մովսես 5–7), Դավթին ու Բերսաբէին (Բ Թագավորաց ԺԱ) Եգիպտոսի Հովսեփի և Պետափրեսի կնոջ հետ (Ծննդոց ԼԹ.7–13), կամ մարգարե Եղիային ամբարիշտ թագավոր Աքաաբի հետ (Գ Թագավորաց ԺԶ.29–33, ԺԷ–ԺԹ):
9. Կազմակերպեք ընթերցողների թատրոն՝ հանձնարարելով դասարանի անդամներին սուրբ գրություններում կարդալ տարբեր մարդկանց խոսքերը:
10. Բաժանեք դասարանը երկու կամ երկուսից ավելի փոքր խմբերի: Սուրբ գրքի պատմությունը վերանայելուց հետո, հանձնարարեք յուրաքանչյուր խմբին գրել պատմության մեջ ուսուցվող սկզբունքները: Ապա խմբերը թող հերթով քննարկեն, թե նրանք ինչպես են այդ սկզբունքները կիրառում իրենց կյանքում:
11. Հանձնարարեք դասարանի անդամներին մատիտ բերել՝ կարևոր հատվածները նշելու համար, երբ դուք դրանք քննարկեք:

Խրախուսել դասարանային քննարկում

Դուք սովորաբար չպետք է դասախասություն կարդաք, այլ պետք է փորձեք օգնել դասարանի անդամներին մասնակցել սուրբ գրությունների իմաստալից քննարկմանը: Երբ դասարանի անդամները մասնակցում են, նրանք ավելի արդյունավետ են սովորում սուրբ գրությունների մասին և ավելի լավ են հասկանում, թե ինչպես կիրառեն ավետարանական սկզբունքները: Որոնեք Հոգու առաջնորդությունը, երբ որոշում եք, թե ինչ հարցեր տաք, ինչպես դրանք ձևակերպեք և ինչպես դրանք զարգացնեք: Դասարանական քննարկումները պետք է կենտրոնացած լինեն այն բաների վրա, որոնք կօգնեն անդամներին գալ դեպի Քրիստոս և ապրել որպես նրա աշակերտներ: Ուղղորդեք այն քննարկումները, որոնք կենտրոնացած չեն այս նպատակի վրա:

Սուրբ գրությունների հղումները տրվում են ձեզ և դասարանի անդամներին՝ օգնելու սուրբ գրություններում հարցերի մեծ մասի պատասխանները գտնելու համար: Որոշ հարցերի պատասխաններ կգան դասարանի անդամների փորձառություններից:

Դասի ողջ նյութին անդրադառնալն այնքան կարևոր չէ, որքան դասարանի անդամներին օգնելը, որ նրանք ավելի լավ հասկանան սուրբ գրությունները և պարտավորվեն ավելի լավ աշակերտ դառնալ: Եթե դասարանի անդամները սովորում են լավ քննարկումից, հաճախ ավելի օգտակար է թույլ տալ, որ այն շարունակվի, քան փորձել ուսուցանել դասի ողջ նյութը:

Օգտագործեք հետևյալ հրահանգները դասարանային քննարկում խրախուսելու համար.

1. Տվեք հարցեր, ապա հղումներ սուրբ գրություններից, որպեսզի դասարանի անդամները կարողանան գտնել պատասխանը:
2. Տվեք հարցեր, որոնք ավելի շուտ կառաջացնեն մտքեր և քննարկում, քան այո կամ ոչ պատասխաններ: *Ինչու, ինչպես, ով, ինչ, երբ* և *որտեղ* բառերով սկսվող հարցերը սովորաբար ամենաարդյունավետն են՝ քննարկում առաջացնելու համար:
3. Խրախուսեք դասարանի անդամներին սուրբ գրություններից իրենց սովորածի վերաբերյալ կիսվել իրենց զգացումներով: Նրանց խրախուսեք կիսվել նաև փորձառություններով, որոնք ցույց են տալիս, թե ինչպես կարելի է սուրբ գրությունների սկզբունքները կիրառել կյանքում: Դրականորեն մեկնաբանենք նրանց մասնակցությունն ու վերաբերմունքը:
4. Եղեք զգայուն դասարանի յուրաքանչյուր անդամի կարիքների հանդեպ: Չնայած դասարանի բոլոր անդամներին պետք է խրախուսել մասնակցել դասարանական քննարկումներին, ոմանք հնարավոր է դժվարանան արձագանքել: Դուք միգուցե առանձին խոսեք նրանց հետ՝ պարզելու համար, թե կկամենային արդյոք բարձրաձայն կարդալ կամ մասնակցել դասին: Ուշադիր եղեք դասարանի այն անդամների հանդեպ, ովքեր կարող են նեղվել, երբ իրենց հարցեր եք տալիս կամ խնդրում եք կարդալ:
5. Խրախուսեք դասարանի անդամներին դասին նախապատրաստվելու համար ուսումնասիրել սուրբ գրքի հանձնարարված գլուխները և *Ուսումնական ուղեցույց Հին Կտակարանի դասարանի անդամների համար* (34592) գրքույկը: Նրանք ավելի լավ կկարողանան մասնակցել քննարկմումներին, եթե նախապատրաստված լինեն: Առաջարկեք, որ դասարանի անդամները քննարկեն սուրբ գրքի պատմությունները և դասերն իրենց ընտանիքներում:

«Սա է իմ գործը և իմ փառքը»

Դաս
1

Մովսես 1

Նպատակ

Օգնել դասարանի անդամներին հասկանալ, որ (1) մենք Աստծո զավակներն ենք, (2) մենք կարող ենք դեմ կանգնել Սատանայի գայթակղություններին, և (3) Աստծո գործն է ու փառքը՝ իրականացնել մեր անմահությունն ու հավերժական կյանքը:

Նախապատրաստում

1. Աղոթքով կարդացեք հետևյալ սուրբ գրությունները Թանկագին Մարգարիտից.
   ա. Մովսես 1.1–11: Մովսեսը տեսնում է Աստծուն և դեմ առ դեմ խոսում նրա հետ: Մովսեսն իմանում է, որ ինքն Աստծո որդի է Հոր Միածնի նմանությամբ: Հիշեք՝ դասարանի անդամները պետք է հասկանան, որ Եհովան, ոչ թե Երկնային Հայրը, հայտնվեց Մովսեսին այս տեսիլքում: Եհովան նախամահկանացու Հիսուս Քրիստոսն է և Հին Կտակարանի Աստվածը: Նա մեկ է իր Հոր հետ նպատակով և ներկայացնում է Նրան զորությամբ և իշխանությամբ: Նրա խոսքերը Հորից են և երբեմն, ինչպես Մովսեսի գրքի 1.6 հատվածում, նա խոսում է Հոր անունից առաջին դեմքով:
   բ. Մովսես 1.12–23: Սատանան Մովսեսին դեմ է կանգնում, Մովսեսը նրան դուրս է գցում:
   գ. Մովսես 1.24–39: Աստված հայտնվում է կրկին և սովորեցնում իր գործի և փառքի մասին:
2. Ուսումնասիրեք դասը և որոշեք, թե ինչպես ուսուցանեք սուրբ գրքերի պատմությունները: Քանի որ դժվար կլինի տալ բոլոր հարցերը և հասցնել ուսուցանել դասի բոլոր կետերը, աղոթքով ընտրեք այն կետերը, որոնք լավագույնս կբավարարեն անդամների կարիքները: Ձեզ հավանաբար անհրաժեշտ կլինի համապատասխանեցնել որոշ հարցեր՝ելնելով դասարանի անդամների կարիքներից :
3. Ձեռք բերեք *Ուսումնական ուղեցույց Հին Կտակարանի դասարանի անդամների համար* (34592) գրքույկի մեկ օրինակ՝ դասարանի յուրաքանչյուր անձի համար: (Ծուխը պետք է որ պատվիրած լինի այս ուսուցողական ուղեցույցները որպես տարեկան ուսումնական ծրագրի պատվերի մի մաս, եպիսկոպոսության որևէ անդամ դրանք պետք է տա Կիրակնօրյա Դպրոցի նախագահությանը):
4. Եթե օգտագործելու եք երկրորդ ուշադրության վարժությունը, ձեռք բերեք թղթե կամ կտորե մի պարկ և դրա մեջ դրեք մի քանի առօրյա իրեր, ինչպես օրինակ՝ քար, սանր և մատիտ:

Առաջարկվող դասի զարգացում

Հին Կտակարանի նախաբան

Հին Կտակարանը մի պատմություն է իր ուխտի ժողովրդի հետ Աստծո գործերի մասին Արարման ժամանակից սկսած մինչև Փրկչի ծննդից մի քանի հարյուր տարի առաջ: Հին Կտակարանը հավատքի և հնազանդության վառ օրինակներ է տալիս: Այն նաև ցույց է տալիս, մոռանալու, անհնազանդության կամ Աստծուն հակադրվելու հետևանքները: Նրա մարգարեությունները վկայում են Մեսիայի ծննդյան, քավող զոհաբերության, երկրորդ գալստյան և հազարամյա թագավորության մասին:

Բացի Հին Կտակարանից այս դասընթացը ներառում է Մովսեսի ու Աբրահամի գրքերը և Թանկագին Մարգարիտը: Այս գրքերը կարևոր լրացումներ և մեկնաբանություններ են պարունակում Ծննդոց գրքի որոշ նյութերի վերաբերյալ: Մովսեսի գիրքը մի քաղվածք է Աստվածաշնչի Ջոզեֆ Սմիթի Թարգմանությունից: Աբրահամի գիրքը թարգմանություն է, որը Մարգարե Ջոզեֆ Սմիթը կատարել է եգիպտական որոշ պապիրաթղթերից: Ջոզեֆ Սմիթի Թարգմանության վերաբերյալ լրացուցիչ տեղեկության համար տես «Ջոզեֆ Սմիթ Թարգմանություն» Սուրբ Գրքերի Ուղեցույց, էջ 188: Ի նկատի ունեցեք նաև, որ Ջոզեֆ Սմիթի Թարգմանության ընտրանին ընդգրկված է Սուրբ Գրքերի Ուղեցույցում:

Ուշադրության կենտրոնացման վարժություն

Հավանաբար կցանկանայիք օգտագործել հետևյալ վարժություններից որևէ մեկը (կամ ձեր սեփականը) դասն սկսելու համար: Ընտրեք այն վարժությունը, որն ամենահարմարը կլինի դասարանի համար:

1. Խնդրեք դասարանի անդամներին Մովսես 1.6, 20–22 և 39 հատվածներում գտնել բացահայտված կարևոր ճշմարտություններ: Պատասխանները կարող են տարբեր լինել: Բացատրեք, որ այս դասը կկենտրոնանա երեք ճշմարտությունների վրա, որոնք նշված են «Նպատակ» վերնագրի տակ՝ 1-ին էջում:

2. Ընտրեք դասարանի երկու անդամների և տվեք նրանց մի քանի առօրյա իրեր պարունակող մի պարկ (տես «Նախապատրաստություն», էջ 1): Մասնակիցներին ասեք, որ պատրաստվում եք խաղ խաղալ, բայց հրահանգներ մի տվեք, ոչ էլ բացատրեք խաղի նպատակը: Խնդրեք մասնակիցներին բացել պարկը և սկսել խաղալ: Նրանք կակնկալեն, որ պարկի պարունակությունը կբացատրի խաղը: Սակայն պարունակությունը չի տալիս այս տեղեկությունը և մասնակիցները կզարմանան, թե ինչ պետք է անեն:

   Նշեք, որ խաղը հասկանալու համար, մենք պետք է հասկանանք դրա էությունը կամ նպատակը: Նմանապես, երկրի վրա մեր կյանքը հասկանալու համար, մենք պետք է հասկանանք մեր կյանքի էությունն ու նպատակը: Մովսեսի 1-ին գլուխն օգնում է մեզ հասկանալ այս՝ պատասխանելով երեք կարևոր հարցերի.

   Ո՞վ ենք մենք:
   Ինչպե՞ս կարող ենք հաղթահարել հակառակորդի ազդեցությունը:
   Ո՞րն է Աստծո գործն ու փառքը:

Սուրբ գրության քննարկում և կիրառում

Երբ ուսուցանեք հետևյալ սուրբ գրության հատվածները, քննարկեք, թե ինչպես են դրանք կիրառվում առօրյա կյանքում: Խրախուսեք դասարանի անդամներին կիսվել փորձառություններով, որոնք կապված են սուրբգրքյան սկզբունքների հետ: Դասի ընթացքում, հարմար պահի, տվեք *(Ուսումնական ուղեցույց Հին Կտակարանի դասարանի անդամների համար)* (34592) գրքույկը, խրախուսեք դասարանի անդամներին օգտագործել այն՝ իրենց ընտանեկան սուրբ գրությունների անձնական ուսումնասիրությունը շարունակելու համար:

1. Աստված սովորեցնում է, որ Մովսեսն Աստծո որդի է

Ուսուցանեք և քննարկեք Մովսես 1.1–11

- Ի՞նչ սովորեց Մովսեսն Աստծո մասին այն փորձառություններից, որոնք նկարագրված են Մովսես 1.1–7 հատվածներում: Ի՞նչ սովորեց Մովսեսն իր մասին: (Միգուցե դասարանի անդամներին հանձնարարեք ուշադրություն դարձնել, թե քանի անգամ է Աստված այս հատվածներում Մովսեսին դիմում որպես «որդիս»):

- Ի՞նչ է նշանակում, որ Մովսեսը ստեղծվել է Փրկչի «նմանությամբ» (Մովսես 1.6): Ի՞նչ փոփոխություն կարող է առաջացնել մեր կյանքում գիտենալը, որ մենք Աստծո զավակներն ենք, ստեղծված նրա Որդու նմանությամբ:

Երեց Դալին Հ. Օուքսն ասել է. «Մտածեք այն գաղափարի ուժի մասին, որը սովորեցվում է «Զավակն եմ Աստծո» մեր սիրելի երգում».... Ահա, ո՞վ եմ ես» կյանքի մեծագույն հարցերից մեկի պատասխանը: Ես Աստծո զավակն եմ՝ հոգևոր ծագմամբ, երկնային ծնողներից: Այդ ծագումը բնորոշում է մեր հավերժական ներուժը: Այդ հզոր գաղափարը հակադեպրեսանտի ներուժ ունի: Այն կարող է զորացնել մեզանից յուրաքանչյուրին՝ կատարելու ճիշտ ընտրություն և ձգտելու այն լավագույնին, որը կա մեր մեջ: Հիմնավորեք որևէ մարդու մտքում.... այն հզոր գաղափարը, որ նա Աստծո զավակն է և դուք նրան կտաք ինքնահարգանք և կյանքի խնդիրներին դեմ հանդիման գնալու դրդապատճառ (in Conference Report, Oct. 1995, 31; or *Ensign*, Nov. 1995, 25):

- Մովսեսին անընդհատ կոչելով «որդիս» և ասելով, նրան, որ դու ստեղծվել ես «իմ Միածնի նմանությամբ», Աստված Մովսեսին տվեց վստահություն և հասկացողություն իր արժեքավոր լինելու մասին: Ինչպե՞ս կարող է այս սկզբունքին հետևելն օգնել մեզ որպես ծնողներ: Ինչպե՞ս կարող է այն զորացնել ամուսնությունները: Ինչպե՞ս կարող է այն զորացնել ընկերությունը:

  Բացատրեք, որ մի աշխարհում, որտեղ բացասական քննադատությունը և, անհիմն պահանջկոտությունն ու դիտողությունը գերակշռում են, մենք պետք է հետևենք Տիրոջ օրինակին և ասենք բաներ, որոնք կօգնեն ուրիշներին տեսնելու իրենց որպես Աստծո զավակներ, ովքեր ունեն արժանապատվություն և արժեքավոր են:

- Մովսեսի կարևորությունը և հավերժական ներուժը շեշտադրված են Մովսես 1.1–7 հատվածներում: Սակայն, երբ Աստծո ներկայությունը ետ քաշվեց նրանից, Մովսեսն ասաց. «Այժմ, այս պատճառով, ես գիտեմ, որ մարդը ոչինչ է» (Մովսես 1.10): Ի՞նչ իմաստով են երկու տեսակետներն էլ ճիշտ: (Աստված անսահմանորեն ավելի իմաստուն է և ավելի հզոր, քան մահկանացու մարդիկ և կանայք: Մենք ոչինչ ենք առանց նրա: Բայց որպես նրա զավակներ, մենք ունենք նրա նման դառնալու ներուժ):

2. Սատանան հակադրվում է Մովսեսին. Մովսեը դուրս է գցում նրան:

Ուսուցանեք և քննարկեք Մովսես 1.12–23:

- Երբ եկավ սատանան, նա Մովսեսին ի՞նչ հրամայեց անել (Տես Մովսես 1.12): Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ սատանան Մովսեսին «մարդու որդի կոչեց»: (Սատանան ցանկացավ, որ Մովսեսը հավատա, որ նա Աստծո որդի *չէ*): Ինչո՞ւ է սատանան ուզում, որ մենք կասկածենք կամ անտեսենք, որ մենք Աստծո զավակներն ենք: Ինչպե՞ս է նա փորձում անել դա:
- Ինչպե՞ս պատասխանեց Մովսեսը, երբ սատանան կոչեց նրան «մարդու որդի» (Տես Մովսես 1.13): Ինչպե՞ս կարող է Աստծո որդիներն ու դուստրերը լինելու ուժեղ վկայությունն օգնել մեզ՝ գայթակղությանը դիմադրելու համար:
- Քանի՞ անգամ Մովսեսն ասաց սատանային հեռանալ: (Տես Մովսես 1.16, 18, 20:) Ի՞նչ է մեզ այս սովորեցնում սատանայի ջանքերին դիմակայելու մասին:
- Ինչպե՞ս Մովսեսն ուժ ստացավ դիմադրելու սատանայի գայթակղություններին (Տես Մովսես 1.18, 20–21):

3. Աստված կրկին հայտնվում է և ուսուցանում իր աշխատանքի և փառքի մասին:

Ուսուցանեք և քննարկեք Մովսես 1.24–39:

- Սատանայի հեռանալուց հետո, Մովսեսը կրկին տեսավ Աստծո փառքը և նրան ցույց տրվեց երկրի և նրա բնակիչների վերաբերյալ մեկ այլ տեսիլք (Տես Մովսես 1.24–28): Ի՞նչ երկու հարց տվեց Մովսեսը, երբ նրան ցույց տրվեց այս տեսիլքը (Տես Մովսես 1.30): Ի՞նչ պատասխաններ տվեց Աստված (Տես Մովսես 1.31–32, 39):

- Չնայած Աստված ստեղծել է աշխարհներ և ժողովուրդներ, որոնք անհամար են մեզ համար, նա հավաստիացրեց Մովսեսին, որ գիտի նրանց բոլորին (Մովսես 1.35): Ինչպե՞ս եք կարողացել զգալ, որ Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսն անձնապես գիտեն և սիրում են ձեզ: (Գուցե դուք բերեք ձեր վկայությունն այն ժամանակի մասին, երբ դուք զգում եք ձեր հանդեպ նրանց սերն ու մտահոգությունը):

- Աստծո գործն է ու փառքը «իրականացնել մարդու անմահությունն ու հավերժական կյանքը» (Մովսես 1.39): Ի՞նչ է հավերժական կյանքը: Ո՞վ կստանա հավերժական կյանք:

  Երեց Ջեյմս Ի. Ֆաուստն ասել է. «Կա տարբերություն անմահության կամ հավերժական գոյության և հավերժական կյանքի միջև, որը տեղ ունենալն է Աստծո ներկայության մեջ: Հիսուս Քրիստոսի ողորմածության միջոցով անմահությունը գալիս է բոլորին.... թե՛ արդարին, թե՛ անարդարին, թե՛ արդարակյացին, թե՛ ամբարիշտին: Այնուամենայնիվ, հավերժական կյանքը «մեծագույնն է Աստծո բոլոր պարգևներից» (ՎԿՈՒ 14.7): Մենք ձեռք ենք բերում այս մեծ պարգևը, ըստ Տիրոջ «եթե պահես իմ պատվիրանները և համբերես մինչև վերջ» խոստման: Եթե մենք այդպես համբերենք, ապա խոստումը սա է. «դու կունենաս հավերժական կյանք» (ՎԿՈՒ 14.7): (in Conference Report, Oct. 1988, 14; or *Ensign*, Nov. 1988, 12):

- Ինչո՞ւ է մեզ համար կարևոր իմանալ, թե որն է Աստծո գործն ու փառքը: Որո՞նք են այն մի քանի առանձնահատուկ ուղիները, որոնցով մենք կարող ենք օգնել նրան այս մեծ աշխատանքում:

  Նախագահ Գորդոն Բ. Հինքլին ասել է. «Մենք այստեղ ենք՝ օժանդակելու մեր Հորն իր գործում և Իր փառքում, «իրականացնելու մարդու անմահությունն ու հավերժական կյանքը» (Մովսես1.39): Ձեր պարտականությունը նույնքան լուրջ է պատասխանատվության ձեր ոլորտում, որքան իմ պարտականությունն իմ ոլորտում: Այս Եկեղեցում չկա կոչում, որը փոքր լինի կամ փոքր հետևանք ունենա: Մենք բոլորս ձգտելով կատարել մեր պարտականությունը, ազդում ենք ուրիշների կյանքի վրա: Մեզանից յուրաքանչյուրին մեր պարտականությունների վերաբերյալ Տերն ասել է.... «Անելով այս բաները, դուք մեծագույն բարիք արած կլինեք ձեր ընկերներին և կմեծացնեք փառքը Նրա, որը ձեր Տերն է» (ՎԿՈՒ 81.4)» (in Conference Report, Apr. 1995, 94; or *Ensign*, May 1995, 71. տես նաև ՎԿՈ 81.5–6):

Եզրափակում

Մովսեսի 1-ին գլուխը սովորեցնում է հզոր վարդապետություն, որ մենք Աստծո որդիներն ու դուստրերն ենք: Առաջարկեք դասարանի անդամներին խորհել այս ճշմարտության կարևորության մասին: Վկայեք, որ Մեր Երկնային Հայրը գիտի և սիրում է մեզանից յուրաքանչյուրին: Խրախուսեք դասարանի անդամներին արտահայտել իրենց ընտանիքների հանդեպ իրենց զգացմունքներն այն մասին, թե ինչ սովորեցին Մովսեսի 1-ին գլխից:

Ուսուցման լրացուցիչ գաղափարներ

Հետևյալ նյութը լրացնում է առաջարկվող դասի ուրվագիծը: Որպես դասի բաղկացուցիչ մաս դուք գուցե կամենաք օգտագործել այս գաղափարներից մեկը կամ մի քանիսը:

1. «Մովսեսը թողնվեց ինքն իր հետ» (Մովսես 1.9):

- Կլինեն ժամանակներ, երբ մենք «կթողնվենք [ինքներս մեզ] հետ» ինչպես Մովսեսը, ժամանակներ, երբ մենք ուժեղ չենք զգա Հոգին կամ կունենանք շատ փորձություններ: Ի՞նչ կարող ենք սովորել Մովսեսի 1-ին գլխից, որը կօգնի մեզ հաղթահարել այս ժամանակները: (Պատասխանները կարող են ներառել. Այդ դժվարությունները պարտադիր չէ, որ լինեն մեր կատարած սխալների պատճառով. Աստված մեզ լիովին չի լքում,

ինչպես ցույց է տրված 15 հատվածում, և մենք մեծ ուժ ենք ձեռք բերում, դիմակայելով մեր փորձություններին, կանչելով առ Աստված և զորացնելով մեր հավատքը):

2. Բոլորն Աստծո զավակներն են

- Մովսեսը ստացավ տեսիլք, որն արձանագրված է Մովսեսի 1-ին գլխում նախքան Իսրայելի որդիներին Եգիպտոսից դուրս հանելը: Ի՞նչ եք կարծում, ինչպե՞ս այս տեսիլքն օգնեց նրան այս գործում, հատկապես, երբ նա հուսահատվում էր ժողովրդի հաճախակի ապստամբություններից և հավատքի բացակայությունից: Ինչպե՞ս կարող է գիտենալը, որ մենք Աստծո զավակներն ենք, օգնել ուսուցչին կամ ղեկավարին: Ինչպե՞ս կարող է այս գիտելիքն օգնել մեզ ընտանիքի անդամների, ընկերների և ուրիշների հետ հարաբերություններում:

3. Աստվածաշնչի Ջոզեֆ Սմիթի Թարգմանությունը

Եթե *Հին Կտակարանի տեսանյութերը* (53224) մատչելի են, անհրաժեշտության դեպքում ցուցադրեք «Ջոզեֆ Սմիթի թարգմանության ուժը» հատվածը, որպես դասի բաղկացուցիչ մաս: Հիշեցրեք դասարանի անդամներին, որ Մովսեսի գիրքը մի քաղվածք է Աստվածաշնչի Ջոզեֆ Սմիթի թարգմանությունից:

Դաս
2

«Դու ընտրվել էիր նախքան քո ծնվելը»

Աբրահամ 3, Մովսես 4.1–4

Նպատակ

Օգնել դասարանի անդամներին հասկանալ նախակարգված լինելու վարդապետությունը և Աստծո արքայության կառուցմանն օգնելու և դեպի Քրիստոս հոգիներ բերելու իրենց անձնական պատասխանատվությունը:

Նախապատրաստում

1. Աղոթքով ուսումնասիրեք հետևյալ սուրբ գրությունները Թանկագին Մարգարիտից և Վարդապետություն և Ուխտերից.

   ա. Աբրահամ 3.11–12, 22–23, Վարդապետություն և Ուխտեր 138.53–57: Աբրահամը դեմ առ դեմ խոսում է Տիրոջ հետ և իմանում, որ նախամահկանացու կյանքում շատ «ազնվազարմ և մեծ» հոգիներ նախակարգվել էին իրենց մահկանացու առաքելությանը (Աբրահամ 3.11–12, 22–23): Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթն ավելի շատ բան է սովորում «ազնվազարմ և մեծ» հոգիների վերաբերյալ, երբ տեսիլք է տեսնում հոգիների աշխարհ Փրկչի կատարած այցելության մասին, նախքան Իր Հարություն առնելը: (ՎԵՈՒ 138.53–57):

   բ. Աբրահամ 3.24–28, Մովսես 4.1–4: Աբրահամին և Մովսեսին ցույց է տրվում տեսիլքով, որ Հիսուս Քրիստոսն ընտրվել էր Երկնքում Խորհրդի ժամանակ՝ լինելու մեր Փրկիչը, և որ մենք ընտրել ենք Նրան հետևել: Նրանց նաև ցույց է տրվում, որ Լյուցիֆերը (սատանան) և հոգիները, որոնք հետևեցին նրան, դուրս են գցվում երկնքից:

2. Լրացուցիչ ընթերցանություն. Եսայիա ԺԴ.12–15, Հայտնություն ԺԲ.7–9, Ալմա 13.3–5, Վարդապետություն և Ուխտեր 29.36–39, Աբրահամ 3-ի մնացած մասը և Վարդապետություն և Ուխտեր 138 գլուխը:

Առաջարկվող դասի զարգացում

Ուշադրության կենտրոնացման վարժություն

Հնարավոր է դուք ցանկանաք օգտագործել հետևյալ վարժությունները (կամ ձեր անձնականը) դասը սկսելու համար: Ընտրեք այն վարժությունը, որն ամենահարմարը կլինի դասարանի համար:

1. Նշեք, որ սուրբ գրությունները դառնում են ավելի իմաստալից մեզ համար, երբ կիրառում ենք դրանց ուսմունքները մեր կյանքում: Այս անելու համար մենք հաճախ պետք է դնենք մեզ հնադարյան մարգարեների և նրանց հետևորդների տեղում: Սակայն Աբրահամի 3.22–28 հատվածներում մենք կարիք չունենք մեզ դնելու որևէ մեկի տեղում, որովհետև այս հատվածները կարևոր իրադարձությունների մասին են, որոնց մենք մասնակից ենք եղել: Այս իրադարձությունները տեղի են ունեցել մեր նախամահկանացու կյանքի ընթացքում:

2. Գծեք 10 դատարկ վանդակներ գրատախտակին՝ ներկայացնելու *նախակարգում* բառի 10 տառերը: Բացատրեք, որ այս վանդակներում ներկայացված բառը կապված է նախամահկանացու կյանքի հետ:

Տվեք դասարանի անդամներին 10 հնարավորություն՝ գուշակելու, թե որ տառերն են կազմում այդ բառը: Երբ նրանք գուշակեն ճիշտ տառը, գրեք այն համապատասխան վանդակում կամ վանդակներում: Երբ նրանք գուշակեն մի տառ, որը չի օգտագործվում բառում, գրեք այն որևէ այլ տեղ գրատախտակի վրա՝ կանխարգելելու կրկնակի գուշակությունները:

Երբ դասարանի անդամները լրացնեն բոլոր դատարկ վանդակները կամ գուշակված խոսքը, օգնեք, որ նրանք սահմանեն դրա իմաստը: (Նախակարգումն Աստծո նախամահկանացու կարգումն է իր ոգեղեն զավակներին՝ իրենց մահկանացու կյանքի ընթացքում որոշակի առաքելություններ իրականացնելու համար:) Բացատրեք, որ այս դասը նախամահկանացու կյանքի մասին է, երբ շատ հոգիներ նախակարգվեցին՝ կարևոր բաներ անելու Երկնային Հոր համար:

Սուրբ գրությունների քննարկում և կիրառում

Երբ սովորեցնում եք սուրբ գրությունների հետևյալ հատվածները, քննարկեք թե դրանք ինչպես են կիրառվում իրենց ամենօրյա կյանքում: Խրախուսեք դասարանի անդամներին կիսվել փորձառություններով, որոնք կապված են սուրբգրքյան սկզբունքների հետ:

1. Աբրահամն իմանում է, որ նախամահկանացու կյանքում շատ հոգիներ նախակարգվեցին իրենց մահկանացու առաքելությունների համար:

Ուսուցանեք և քննարկեք Աբրահամ 3.11–12, 22–23, և Վարդապետություն և Ուխտեր 138.53–57 հատվածները:

- Աբրահամ 3-ում գրված տեսիլքում, Տերը ցույց տվեց Աբրահամին Երկնային Խորհուրդը, որը տեղի ունեցավ նախքան երկրագնդի ստեղծումը: (Նշեք, որ վերջին օրերի մարգարեներն ասել են, որ իրականում տեղի էին ունեցել մի շարք ժողովներ, և ոչ թե մեկ ժողով): Ովքե՞ր էին ներկա այդ ժողովում: (Երկնային Հայրը և իր զավակները): Ի՞նչ ենք մենք սովորում այս խորհրդի մասին Աբրահամ 3.22–23 հատվածներում:
- Ովքե՞ր են Աբրահամ 3.22–23 հատվածներում նկարագրված «ազնվազարմ և մեծ հոգիները» (Մարգարեներն ու Եկեղեցու մյուս առաջնորդները): Բացատրեք, որ 1918 թվականին Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթը հոգիների աշխարհի տեսիլքում տեսավ այդ «ազնվազարմ և մեծ հոգիներից» ոմանց: Ո՞ւմ տեսավ Նախագահ Սմիթը: (Տես ՎԱՈՒ 138.53, տես նաև ուսուցման երկրորդ լրացուցիչ միտքը):
- Ի՞նչ է նշանակում, որ Աբրահամը «ընտրված էր նախքան ծնվելը»: (Տես Աբրահամ 3.23: Նա նախակարգված էր մարգարե լինելու): Ի՞նչ է նշանակում լինել նախակարգված: (Տես ուշադրության երկրորդ միջոցառման սահմանումը): Ի՞նչ էին անելու Վարդապետություն և Ուխտերի 138.53 հատվածում նշվող նախակարգված մարդիկ (Տես ՎԱՈՒ 138.53–56):
- Արդյո՞ք նախակարգումը երաշխավորում էր, որ Աբրահամը, Ջոզեֆ Սմիթը և մյուսները դառնալու էին մարգարեներ: Ի՞նչ կապ կա նախակարգման և ազատ կամքի միջև: (Նույնիսկ, եթե մարդը նախակարգված է որևէ կոչման, այդ կոչումը կախված է մարդու արժանավորությունից և այն ընդունելու պատրաստակամությունից):
- Բացի մարգարեներին իրենց կոչումներում նախակարգելուց, Աստված նախակարգեց բազմաթիվ «ուրիշ ընտրյալ հոգիների» տարբեր ուղիներով օգնելու նրա արքայության կառուցմանը: Ի՞նչ անելու համար կարող ենք մենք նախակարգված լինել (Տես ՎԱՈՒ 138.56):

  Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոնը սովորեցրել է.

  «Աստված պահել է ձեզ պահեստագրում՝ երևան բերելու ձեզ վերջին օրերում, Տիրոջ երկրորդ գալուստից առաջ: Որոշ մարդիկ կհեռանան, բայց Աստծո արքայությունն

անեղծ կմնա՝ ողջունելու իր ղեկավարի, այսինքն՝ Հիսուս Քրիստոսի վերադարձը: Չնայած մեր սերունդն ամբարշտությամբ կհամեմատվի Նոյի օրերի ամբարշտության հետ, երբ Տերը մաքրեց երկիրը ջրհեղեղով, այս անգամ գոյություն կունենա մեծ տարբերություն: Դա այն է, որ Աստված պահել է իր ամենաուժեղ զավակներից ոմանց վերջին բերքահավաքի համար, ովքեր կօգնեն արքայության ցնծալի հաղթանակի կայացմանը....

....Սրանում չսխալվեք, դուք առանձնահատուկ սերունդ եք: Երբեք հավատարիմներից այդքան շատ բան չի ակնկալվել այսքան կարճ մի ժամանակահատվածում, որքան ակնկալվում է մեզանից» (*The Teachings of Ezra Taft Benson* [1988], 104–5):

- Ինչպե՞ս կարող ենք համոզված լինել, որ կատարում ենք մեր նախակարգված կոչումները: (Պատասխանները կարող են ներառել՝ ավետարանով ապրելը, մեր հայրապետական օրհնություններն ուսումնասիրելը և անձնական հայտնության ձգտելը: Հիշեցրեք դասարանի անդամներին, որ այս կոչումները կատարելու համար, մենք պետք է լինենք հոժարակամ և արժանի: Տես նաև ՎԵՈՒ 58.27–28):

2. Երկնային Խորհրդում Հիսուս Քրիստոսն ընտրվեց լինելու մեր Փրկիչը, մենք ընտրեցինք հետևել նրան: Լյուցիֆերը (սատանան) և ոգիները, որոնք հետևեցին նրան, դուրս գցվեցին երկնքից:

Ուսուցանեք և քննարկեք 3.24–28 և Մովսես 4.1–4:

- Բացատրեք, որ Երկնային Խորհրդում Երկնային Հայրը ներկայացրեց Իր փրկության ծրագիրը և ընտրեց մեզ համար Փրկիչ: Ովքե՞ր էին այն երկու ոգիները, որոնք առաջարկեցին լինել մեր Փրկիչները: (Տես Աբրահամ 3.27, Մովսես 4.1–2): Ինչպե՞ս էին տարբերվում նրանց առաջարկները: (Հիսուսը ցանկացավ հետևել Երկնային Հոր ծրագրին և նրան տալ փառքը: Լյուցիֆերը ցանկացավ հետևել իր սեփական ծրագրին և իրեն վերցնել փառքը): Ինչո՞ւ Երկնային Հայրն ընտրեց Հիսուս Քրիստոսին լինելու մեր Քավիչը: (Տես Մովսես 4.2–3):
- Մենք ո՞ւմ ընտրեցինք հետևել Երկնային Խորհրդում: Ինչպե՞ս ենք իմանում, որ ընտրել ենք հետևել Հիսուս Քրիստոսին: (Մենք ծնվել ենք երկրի վրա ստանալու ֆիզիկական մարմին):
- Ի՞նչ է նշանակում *առաջին վիճակ* և *երկրորդ վիճակ* տերմիններն Աբրահամ 3.26 հատվածում: (*Առաջին վիճակը* վերաբերում է նախամահկանացու կյանքին և *երկրորդ վիճակը* վերաբերում է մեր մահկանացու կյանքին: Մենք պահեցինք մեր առաջին վիճակը՝ ընտրելով հետևել Հիսուս Քրիստոսին և ոչ թե Լյուցիֆերին): Ի՞նչ օրհնություն ստացավ մեզանից յուրաքանչյուրը, քանի որ պահեցինք մեր առաջին վիճակը: (Երկրի վրա ծնվելու հնարավորություն): Ի՞նչ օրհնություններ կստանանք մենք, եթե պահենք մեր երկրորդ վիճակը:
- Ի՞նչ կատարվեց Լյուցիֆերի (սատանայի) հետ և նրանց հետ, ովքեր ընտրեցին հետևել նրան: (Նրանք դուրս գցվեցին երկնքից և զրկվեցին ֆիզիկական մարմիններ ունենալու հնարավորությունից: Տես Մովսես 4.3, Աբրահամ 3.28, Հայտնություն 12.7–9, ՎԵՈՒ 29.36–37):
- Ի՞նչ են անում սատանան և նրա հետևորդներն այժմ: (Նրանք դեռ շարունակում են կործանել մեր ազատ կամքը: Նրանք այսօր երկրի վրա են որպես չար ոգիներ, որոնք գայթակղում են մեզ մեղանչել: Տես Մովսես 4.4): Որո՞նք են այն մի քանի ուղիները, որոնցով սատանան և նրա հետևորդները փորձում են սահմանափակել կամ կործանել մեր ազատ կամքը: Ի՞նչ կարող ենք անել ճանաչելու և նրանց ջանքերին դիմադրելու համար:

- Ի՞նչն է օգնում ձեզ իմանալ, որ Երկնային Խորհրդում դուք ընտրեցիք հետևել Հիսուս Քրիստոսին: Խրախուսեք դասարանի անդամներին շարունակել որոշումներ ընդունել հետևելու Քրիստոսին, ինչպես նրանք արեցին նախամահկանացու գոյության ժամանակ:

Եզրափակում

Բերեք վկայություն որպես մեր նախակարգված Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի և նրա դերի մասին: Ձեր վստահությունն արտահայտեք դասարանի անդամներին՝ իրենց նախակարգված առաքելությունները կատարելու, Աստծո արքայության կառուցմանն օգնելու նրանց ունակության վերաբերյալ:

Ուսուցման լրացուցիչ գաղափարներ

Հետևյալ նյութը լրացնում է առաջարկվող դասի ուրվագիծը: Որպես դասի բաղկացուցիչ մաս դուք գուցե կամենաք օգտագործել այս գաղափարներից մեկը կամ մի քանիսը:

1. «Եվ դրանով մենք նրանց կստուգենք»

- Աբրահամ 3.24–25 հատվածները նշում է հիմնական նպատակներից մեկը, որի համար Հիսուս Քրիստոսը Երկնային Հոր ղեկավարությամբ ստեղծեց երկրագունդը: Ի՞նչու էր ստեղծվել երկրագունդը: Ինչպե՞ս է այն օգնում ձեզ իմանալ, որ դուք ընտրեցիք գալ երկիր, գիտենալով, որ դուք այստեղ ստուգվելու էիք:

2. «Մեծերի և հզորների»

- Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթը Վարդապետություն և Ուխտերի 138 բաժնում արձանագրված տեսիլքում տեսավ նաև «մեծերի և հզորների» թվում մի քանիսին, որոնք ապրել էին երկրագնդի վրա նախքան Քրիստոսի ծնվելը: Ո՞ւմ տեսավ Նախագահ Սմիթը: (Տես ՎԵՈՒ 138.38–49: Դուք գուցե կամենաք գրել այդ անունները գրատախտակին: Նշեք, որ եկող տարվա Կիրակնօրյա Դպրոցի ժամանակ դասարանի անդամները կսովորեն այդ անձանցից շատերի մասին):

Դաս
3

Արարում

Մովսես 1.27–42, 2–3

Նպատակ

Օգնել դասարանի անդամներին երախտագիտություն զգալ, որ Աստված ստեղծել է բոլոր բաները մեր օգտի համար, և որ մենք ստեղծվել ենք նրա պատկերով:

Նախապատրաստում

1. Աղոթքով ուսումնասիրեք հետևյալ սուրբ գրությունները Թանկագին Մարգարիտից.

   ա. Մովսես 1.27–42: Մովսեսը մի տեսիլք է տեսնում Աստծո արարչագործությունների մասին և նրան պատվիրվում է մի պատմություն գրել երկրի արարման մասին:
   բ. Մովսես 2.1–25, 3.1–14: Մովսեսն իմանում է, որ Աստված է բոլոր բաների արարիչը:
   գ. Մովսես 2.26–31, 3.7, 15–25: Մովսեսն իմանում է, որ տղամարդիկ և կանայք ստեղծվել են Աստծո պատկերով:

2. Լրացուցիչ ընթերցանություն Աբրահամ 4–5, Ծննդոց Ա–Բ:

3. Եթե օգտագործելու եք երկրորդ ուշադրության վարժությունը, բերեք պլաստիլին կամ կավիճ:

4. Եթե հետևյալ տեսալսողական նյութերը մատչելի են, դուք, անհրաժեշտության դեպքում, կարող եք օգտագործել դրանցից մի քանիսը որպես դասի մաս.

   ա. «Աստծո պատկերով» երեք րոպեանոց հատված *Հին Կտակարանի Տեսանյութերից* (53224):
   բ. Նկար «Արարչագործություն՝ Կենդանի Արարածներ» (62483, Ավետարանական արվեստի նկարների հավաքածու 100):

Առաջարկվող դասի զարգացում

Ուշադրության կենտրոնացման վարժություն

Ձեզ անհրաժեշտ կլինի օգտագործել հետևյալ վարժությունները (կամ ձեր անձնականը) դասը սկսելու համար: Ընտրեք այն վարժությունը, որն ամենահարմարը կլինի դասարանի համար:

1. Խնդրեք դասարանի անդամներին մտածել, թե որքան տեղեկություններ անհրաժեշտ կլիներ , եթե նրանք փորձեին նախադպրոցական երեխայի հետևյալ հարցերից մեկին պատասխանել: Ինչպե՞ս է օդանավը մնում օդում: Ինչպե՞ս է աշխատում հեռուստացույցը: Ինչպե՞ս են աճում բույսերը: Մեզանից մեծ մասը հաշվի կառնի նախադպրոցական երեխայի հասկացողությունը և կտա միայն ընդհանուր պատկերացում, թողնելով մանրամասները մինչև երեխան դառնա ավելի հասուն:

   - Ինչո՞վ են այս օրինակները նման Արարչագործության մասին Տիրոջ հայտնություններին: (Տերը հայտնել է հավերժական ճշմարտության միայն այն մասը, որը մեր մահկանացու միտքը կարող է հասկանալ, և որը մեզ անհրաժեշտ է փրկության հասնելու համար):

   Այս դասը կքննարկի այն ճշմարտությունները, որ Տերը բացահայտել է Արարչագործության մասին:

2. Խնդրեք դասարանի որևէ անդամի կամավոր պատրաստել կամ նկարել մի փոքրիկ կենդանի՝ օգտագործելով պլաստիլին կամ կավիճ (տվեք միայն մեկ կամ երկու րոպե): Այնուհետև քննարկեք այն փաստը, որ չնայած մենք կարող ենք պատրաստել կենդանի արարածի նմուշ, միայն Աստված կարող է կյանք ստեղծել: Այս դասը կքննարկի երկրի և նրա վրա ապրող ամեն ինչի արարման Աստծո մեծ հրաշքը:

Սուրբ գրությունների քննարկում և կիրառում

Երբ ուսուցանեք հետևյալ սուրբ գրությունների հատվածները, քննարկեք, թե ինչպես են դրանք առնչվում առօրյա կյանքին: Խրախուսեք դասարանի անդամներին կիսվել փորձառություններով, որոնք կապված են սուրբգրքյան սկզբունքների հետ:

1. Մովսեսն Աստծո արարչագործությունների մասին տեսիլք է տեսնում:

Ուսուցանեք և քննարկեք Մովսես 1.27–42:

- Ո՞վ է գրել Արարչագործության պատմութունը Ծննդոցում: (Տես Մովսես 1.40, 2.1): Ինչո՞ւ Մովսեսը գրեց այս պատմությունը (Տես Մովսես 1.40–41): Ի՞նչ կարող ենք սովորել Մովսես 1.27–39 հատվածներից Աստծո զորության մասին: Ի՞նչ կարող ենք սովորել իր զավակների հանդեպ Աստծո սիրո մասին:
- Ի՞նչպես են Ծննդոց, Մովսեսի և Աբրահամի գրքերի Արարչագործության պատմությունները տարբերվում միմյանցից (Աբրահամն ու Մովսեսը տեսիլքում տեսան այս երկրի կազմավորումը, իսկ հետո գրեցին իրենց տեսիլքները: Յուրաքանչյուրը թեթևակիորեն ընդգրկեց տարբեր մանրամասներ: Ծննդոց պատմությունը սկզբում գրվել է Մովսեսի կողմից, բայց նրա պատմության լրիվության որոշ մասեր կորել են: Այդ լրիվությունը վերականգվել է Մովսեսի գրքում):

2. Մովսեսն իմանում է, որ Աստված է ստեղծել բոլոր բաները:

Ուսուցանեք և քննարկեք Մովսես 2.1–25, 3.1–14:

- Ո՞վ ստեղծեց երկիրը (Տես Մովսես 1.32, 2.1, տես նաև Հովհ.Ա.1–3, 14, Եբրայեցիս Ա.1–2, Մոսիա 3.8, ՎԵՈՒ 14.19): Ի՞նչու է մեզ համար կարևոր իմանալ, թե ո՞վ է Արարիչը:
- Ի՞նչ է Աստված բացահայտել Արարման նպատակի վերաբերյալ (Տես Մովսես 1.39, Աբրահամ 3.24–25, տես նաև 1 Նեփի 17.36, 2 Նեփի 2.11–15: Արարչագործության նպատակն էր մի տեղ ապահովել, որտեղ Երկնային Հոր հոգևոր զավակները կարողանան գալ և ձեռք բերել ֆիզիկական մարմին և ստուգվեն կամ փորձվեն՝ տեսնելու, թե նրանք կհնազանդվեն նրան, երբ հեռու են գտնվում նրա ներկայությունից: Նրանք, ովքեր հավատարիմ են, կստանան հավերժական կյանք: Ձեզ գուցե անհրաժեշտ լինի նշել, որ չնայած Արարման պատմությունն ընդգրկված է Ծննդոց գրքում, Արարման նպատակներն ու կարևորությունը բացատրվում է միայն վերջին օրերի հայտնության մեջ):
- Ինչպե՞ս է երկրային կյանքը մեզ պատրաստում հավերժական կյանքի համար: (Պատասխանները կարող են ներառել՝ Մենք ֆիզիկական մարմին ենք ստանում, սովորում ենք օգտագործել մեր ազատ կամքը, գիտելիք ենք ձեռք բերում, ընտանիքներ ենք կազմում , արարողություններ ենք կատարում և կապում ուխտեր):
- Ի՞նչ է ասել Աստված Արարման արդյունքի մասին (Տես Մովսես 2.4, 10, 12, 18, 21, 25, 31, 3.2: Արարման համառոտ պատմության մեջ Աստված 8 անգամ հայտարարեց, որ իր աշխատանքը բարի էր): Աստծո արարչագործություններից որո՞նք են հատկապես գեղեցիկ ձեզ համար: Ինչո՞ւ մեզ համար օգտակար կլինի առավել ուշադիր լինել ու նկատել արարման գեղեցկություններն ամեն օր:

- Արդյոք երկրագունդը ստեղծվեց ոչնչի՞ց: (Տես Աբրահամ 3.24, 4.1)

  Մարգարե Ջոզեֆ Սմիթն ասել է. «Ստեղծել բառը եկել է [Եբրայերեն] *baurau* բառից, որը չի նշանակում ստեղծել ոչնչից, այն նշանակում է կազմավորել, ճիշտ ինչպես մարդ հումք կկազմավորեր և նավ կկառուցեր: Հետևաբար, մենք ենթադրում ենք, որ Աստված հումք ուներ քաոսից աշխարհը կազմավորելու համար՝ քաոսային նյութից» (*Teachings of the Prophet Joseph Smith,* sel. Joseph Fielding Smith [1976], 350–51):

- Ինչպե՞ս է ազդում Արարման պատմությունը Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի հանդեպ ձեր զգացումների վրա: Ինչպե՞ս են արարչագործությունները «վկայում» Աստծո մասին: (Տես Մովսես 6.63, Ալմա 30.44): Ինչպե՞ս կարող ենք մեր երախտագիտությունը ցույց տալ Արարչագործության պարգևի համար:

3. Մովսեսն իմանում է, որ տղամարդիկ և կանայք ստեղծվել են Աստծո պատկերով:

Ուսուցանեք և քննարկեք Մովսես 2.26–31, 3.7, 15–25:

- Ո՞ւմ պատկերով ենք մենք ստեղծվել: (Տես Մովսես 2.26–27):

  Առաջին Նախագահությունն ասել է. «Բոլոր տղամարդիկ և կանայք տիեզերքում բնակվող Հոր և Մոր նմանությամբ են ստեղծված և բառացիորեն Աստվածության որդիներն են ու դուստրերը» (“The Origin of Man,” *Improvement Era,* Nov. 1909, 78):

- Ինչպե՞ս կարող է գիտելիքը, որ մենք ստեղծվել ենք Աստծո պատկերով, օրհնել մեր կյանքը: Ինչպե՞ս պետք է այն ազդի ուրիշ մարդկանց հետ մեր հարաբերությունների վրա:

- Ի՞նչ են սովորեցնում մեզ Ենովքի խոսքերը Մովսես 7.30 հատվածում մեզանից յուրաքանչյուրի հանդեպ Աստծո անհատական հոգատարության մասին: Ի՞նչ են դրանք սովորեցնում մեզ մեր Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի մասին:

- Ինչ եք կարծում՝ ի՞նչ ի նկատի ուներ Տերը, երբ նա պատվիրեց մեզ իշխանություն ունենալ այս երկրագնդի վրայի իր արարչագործությունների վրա: (Տես Մովսես 2.26: Մենք պետք է հարգենք երկիրը և հոգ տանենք Աստծո արարչագործությունների մասին): Ինչպե՞ս կարող ենք մենք ավելի լավ կատարել արարչագործությունների վրա իշխանություն ունենալու մեր պարտականությունը:

Եզրափակում

Բերեք ձեր սովորեցրած սկզբունքների վերաբերյալ վկայություն: Հրավիրեք դասարանի անդամներին կիսվել Արարման վերաբերյալ իրենց զգացումներով:

Ուսուցման լրացուցիչ գաղափար

Հետևյալ նյութը օժանդակում է առաջարկվող դասի ուրվագծին: Դուք գուցե ցանկանաք օգտագործել այն որպես դասի բաղկացուցիչ մաս:

Արարման ժամանակահատվածը

Արարման համար պահանջվող ժամանակահատվածը հայտնի չէ: *Օր* բառը Արարման սուրբգրքյան պատմության մեջ չի ներկայացնում 24 ժամյա ժամանակահատված: Եբրայերեն *yom* խոսքը կարող է թարգմանվել որպես «օր», «ժամանակ» կամ «ժամանակահատված»: Պետրոս Առաքյալն ասել է, որ «Տիրոջ մոտ մեկ օրը հազար տարվա պես է» (Բ Պետրոս Գ.8, տես նաև Աբրահամ 3.4):

«Իմ օրինազանցության հետևանքով աչքերս բացվել են»

Դաս
4

Մովսես 4, 5.1–15, 6.48–62

Նպատակ

Օգնել դասարանի յուրաքանչյուր անդամի հասկանալ, որ Անկումը մեզ համար Երկնային Հոր ծրագրի անհրաժեշտ մասն էր:

Նախապատրաստում

1. Աղոթքով ուսումնասիրեք սուրբ գրքի հետևյալ հատվածները.

   ա. Մովսես 4, 5.10–11, 6.48–49, 55–56: Սատանան գալիս է Եդեմական պարտեզը և փորձում խաբել Եվային: Եվան և Ադամը ճաշակում են չարի և բարու գիտության ծառի պտղից (4.5–12): Անկման հետևանքով Ադամն ու Եվան դուրս են գցվում պարտեզից (4.13–31): Ադամն ու Եվան հետագայում ուրախանում են Անկման օրհնություններով (5.10–11): Ենովքը սովորեցնում է Անկման հետևանքների մասին (6.48–49, 55–56):

   բ. Մովսես 5.14–15, 6.50–54, 57–62: Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ մահկանացու մարդիկ փրկվում են ֆիզիկական մահից Հարության միջոցով և կարող են փրկվել հոգևոր մահից՝ հավատքով, ապաշխարությամբ, մկրտությամբ, Սուրբ Հոգու պարգևով և պատվիրաններին հնազանդվելով:

   գ. Մովսես 5.1–9, 12: Ադամն ու Եվան սկսում են ապրել որպես մահկանացուներ: Նրանք ունենում են երեխաներ և նրանց սովորեցնում իրենց սովորած ճշմարտությունները (5.1–4, 12): Ադամը զոհաբերություն է անում Միածնի զոհաբերության նմանությամբ (5.5–9):

2. Լրացուցիչ ընթերցանություն. Ծննդոց Բ–Գ, Ա Կորնթացիս ԺԵ.20–22, 2 Նեփի 2.5–30, 2 Նեփի 9.3–10, Հելաման 14.15–18, Վարդապետություն և Ուխտեր 19.15–19, 29.34–44, Հավատո Հանգանակ 1.2, «Ադամի և Եվայի Անկումը», Սուրբ Գրքերի Ուղեցույց, էջ 3:

3. Անհրաժեշտության դեպքում խնդրեք դասարանի անդամներից մեկին նախապատրաստել Ադամի և Եվայի Անկման պատմության ամփոփումը (Մովսես 4.6–31) իսկ դասարանի մեկ այլ անդամի նախապատրաստվել ամփոփելու Ադամի զոհաբերություններ կատարելու պատմությունը (Մովսես 5.5–9):

4. Եթե հետևյալ տեսալսողական նյութերը մատչելի են, կարող եք օգտագործել դրանք որպես դասի բաղկացուցիչ մաս:

   ա. «Անկում» վեց րոպեանոց տեսահոլովակը *Հին Կտակարանի* տեսանյութերից (53224):

   բ. Ադամի և Եվայի նկարը (62461, Ավետարանական արվեստի նկարների հավաքածու 101):

Առաջարկվող դասի զարգացումը

Ուշադրության կենտրոնացման վարժություն

Գուցե ձեզ անհրաժեշտ լինի օգտագործել հետևյալ վարժությունը (կամ ձեր սեփականը) դասը սկսելու համար:

Նկարեք 13 էջում գտնվող պատկերը գրատախտակին: Ասեք դասարանի անդամներին, որ Երեց Բրյուս Մակքոնկին ասել է, որ մեր փրկությունը հնարավոր է դարձել «երեք

աստվածային իրադարձությունների՝ հավերժության երեք սյուների» շնորհիվ: (*A New Witness for the Articles of Faith* [1985], 81: Ապա հարցրեք հետևյալ հարցը.

- Որո՞նք են այն մի քանի իրադարձությունները, որոնք առավել կարևոր են «հավերժության սյուներ» լինելու համար, որոնք հնարավոր դարձրեցին փրկությունը: (Երեց Մակքոնկին ասել է, որ այս սյուներն են՝ Արարումը, Անկումը և Քավությունը, որոնք բոլորը մեր փրկության համար Աստծո ծրագրի բաղկացուցիչ մասերն են: Գրեք Արարում, Անկում և Քավություն բառերը գրատախտակի վրայի երեք սյուների մեջ):



Բացատրեք, որ այս դասն օգնում է մեզ հասկանալ, թե որքան անհրաժեշտ էր Անկումը Երկնային Հոր ծրագրում՝ իրականացնելու մեր անմահությունն ու հավերժական կյանքը (Մովսես 1.39):

Սուրբ գրության քննարկում և կիրառում

Երբ կարդաք սուրբ գրության հետևյալ հատվածները, քննարկեք թե ինչպես կարելի է դրանք կիրառել ամենօրյա կյանքում: Խրախուսեք դասարանի անդամներին կիսվել փորձառություններով, որոնք կապված են այդ սուրբ գրությունների ուսուցանող սկզբունքների հետ:

1. Ադամի և Եվայի Անկումը և դրա ազդեցությունը նրանց ու մեզ վրա:

Ուսուցանեք և քննարկեք Մովսես 4, 5.10–11, 6.48–49, 55–56:

Եդեմի պարտեզում Աստված պատվիրեց Ադամին ու Եվային. «պտղաբեր եղեք և բազմացեք, լցրեք երկիրը» (Մովսես 2.28): Նա նաև նրանց պատվիրեց չուտել բարու և չարի գիտության ծառի պտղից (Մովսես 3.17): Քանի դեռ նրանք չէին ճաշակել արգելված պտղից, նրանք կմնային պարտեզում և չէին մահանա: Բայց նրանք նաև չէին կարողանա հնազանդվել բազմանալու պատվիրանին (Մովսես 5.11, 2 Նեփի 2.23): Երկնային Հայրը նրանց կամքի ազատություն տվեց ընտրելու այդ երկու պատվիրանների միջև:

Համառոտակի վերանայեք Ադամի ու Եվայի պատմությունը Մովսես 4.6–31 հատվածներում կամ հանձնարարեք դասարանի որևէ անդամի անել դա:

- Որո՞նք էին Անկման հետևանքներն Ադամի ու Եվայի և մեզ համար (Տես Մովսես 4.22–29, 5.10–11, 6.48–49, 55–56, 2 Նեփի 2.22–23, 9.6, Ծննդոց Գ.16–23): Գուցե անհրաժեշտ լինի գրատախտակին գրել այդ հետևանքներից մի քանիսը: Նշեք, որ Անկման վերաբերյալ այդ ճշմարտություններից շատերը վերականգվել են Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով և ընդհանուր առմամբ հայտնի չեն աշխարհին:

  ա. Ադամն ու Եվան կարողացան երեխաներ ունենալ, որը հնարավոր դարձրեց, որ մենք գանք աշխարհ և մահկանացու մարմիններ ստանանք (Մովսես 5.11, 6.48, 2. Նեփի 2.23, 25):

բ. Մենք տանում ենք ֆիզիկական մահ կամ ֆիզիկական մարմնի առանձնացում հոգուց (Մովսես 4.25, 6.48, 2 Նեփի 9.6):
գ. Մենք տանում ենք հոգևոր մահ կամ առանձնացում Աստծո ներկայությունից (Մովսես 4.29, 6.49, 2 Նեփի 9.6):
դ. Մենք թշվառության և վայի ճաշակողներ ենք (Մովսես 6.48, Ծննդոց Գ.16–17):
ե. Մենք ունակ ենք մեղանչելու (Մովսես 6.49, 55, 2 Նեփի 2.22–23):
զ. Հողն անիծված է, ստիպելով մեզ աշխատելու կարիք ունենալ (Մովսես 4.23–25, Ծննդոց Գ.17–19):
է. Մենք կարողանում ենք սովորել ճանաչել բարին ու չարը (Մովսես 4.28, 6.55–56, 2 Նեփի 2.23, Ծննդոց Գ.22):
ը. Մենք կարող ենք ուրախություն ունենալ մահկանացու կյանքում (Մովսես 5.10, 2 Նեփի 2.23, 25):
թ. Մենք կարող ենք իմանալ մեր փրկագնման ուրախությունը (Մովսես 5.11):
ժ. Մենք կարող ենք ձեռք բերել հավերժական կյանք (Մովսես 5.11):

Երբ քննարկեք Անկման այս հետևանքները, շեշտեք թե Անկումը որքան օգտակար է մեզ համար: Վերջին Օրերի հայտնությունը պարզաբանում է, որ նույնիսկ Արարումից առաջ, Երկնային Հայրը նախատեսել էր, որ մեր երկրային կյանքը լիներ ստուգման և փորձարկման ժամանակ, որպեսզի մենք կարողանայինք ավելի շատ նմանվել նրան (Աբրահամ 3.24–26): Սա պահանջում էր, որ մենք մահկանացու լինեինք, ունակ սովորելու ընտրել բարու և չարի միջև, որը հնարավոր դարձավ Անկման միջոցով:

- Ինչպե՞ս կարող է Անկման ճիշտ ըմբռնումը օգնել մեզ մահկանացու կյանքի ընթացքում:
- Ինչո՞ւ է կարևոր հասկանալ, որ Աստված կանխատեսել էր Անկումը, և որ այն մեր փրկության համար նրա ծրագրի անհրաժեշտ մասն էր:
- Սատանան հույս ուներ, որ Ադամին և Եվային արգելված պտղից ճաշակել տալով, նա կարող էր կործանել Աստծո ծրագիրը (Մովսես 4.6): Ի՞նչ է սովորեցնում մեզ Անկման պատմությունն Աստծո նպատակները կործանելու սատանայի ունակության մասին: (Տես ՎԵՈՒ 3.1–2):

2. Հիսուս Քրիստոսի Քավությունը փրկում է մեզ ֆիզիկական և հոգևոր մահից:

Ուսուցանեք և քննարկեք Մովսես 5.14–15, 6.50–54, 57–62:

Ադամի ու Եվայի անկումը ֆիզիկական և հոգևոր մահ բերեց աշխարհ: Ֆիզիկական մահը մարմնի և հոգու առանձնացումն է, որը տեղի է ունենում մեր մահկանացու կյանքի վերջում: Հոգևոր մահն Աստծո ներկայությունից առանձնացումն է, որը տեղի ունեցավ, երբ Ադամն ու Եվան դուրս գցվեցին այգուց: Բացատրեք, որ մենք չենք կարող ինքնուրույն հաղթահարել մահը: Այդ պատճառով Երկնային Հայրն ուղարկեց Իր Միածին Որդուն փրկագնելու մեզ մահից իր քավող զոհաբերության միջոցով (Ալմա 22.14):

- Երբ մարգարեները սովորեցնում են Ադամի ու Եվայի անկման մասին, նրանք հաճախ սովորեցնում են նաև Հիսուս Քրիստոսի Քավության մասին (Մովսես 5.10–15, 6.48–62, 2 Նեփի 9.6–10): Ինչո՞ւ է կարևոր սովորեցնել Քավությունն ակման հետ համընթաց: (Անկումն անհրաժեշտ դարձրեց Աստծո ծրագրում Քավությունը՝ մեր փրկագնման համար: Անկման հետ համընթաց սովորեցնելով Քավությունը օգնում է մեզ հասկանալ, թե ինչպես ենք մենք փրկագնվում ֆիզիկական և հոգևոր մահից):

Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոնն ասել է. «Փրկագնման պատմությունը պետք է սկսվի Ադամի անկման պատմության հետ: Մորոնիի խոսքերով ասած. «Ադամի միջոցով եկավ մարդու անկումը: Եվ մարդու անկման պատճառով եկավ Հիսուս Քրիստոսը.... և Հիսուս Քրիստոսի շնորհիվ եկավ մարդու փրկագնումը» (Մորմոն 9.12): Ճիշտ ինչպես մարդն իրապես ուտելիքի կարիք չի զգա, մինչև քաղց չզդա, այդպես էլ նա չի փնտրում

Քրիստոսի փրկությունը, մինչև չի իմանում, թե ինչու է իրեն անհրաժեշտ Քրիստոսը: Ոչ ոք համապատասխան և պատշաճ ձևով չգիտի, թե ինչու ունի Քրիստոսի կարիքը, մինչև նա չհասկանա և չընդունի Անկման վարդապետությունը և դրա ազդեցությունը ողջ մարդկության վրա (in Conference Report, Apr. 1987, 106; or *Ensign,* May 1987, 85):

- Ինչպե՞ս ենք փրկվում ֆիզիկական մահից: (Տես Ա Կորնթացիս ԺԵ.20–22, 2 Նեփի 2.8, 9.6: Հիսուս Քրիստոսի Քավությամբ մենք հարություն կառնենք):
- Ինչպե՞ս կարող ենք փրկվել հոգևոր մահից: (Տես Մովսես 5.14–15, 6:50–52, 59, Հելաման 14.15–18, ՎԵՈՒ 19.15–19: Քավության շնորհիվ մենք կարող ենք մաքուր և արժանի դառնալ ապրելու Աստծո հետ Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքի, ապաշխարության, մկրտության, Սուրբ Հոգու պարգևի և պատվիրաններին հնազանդվելու միջոցով):

Մորմոնի Գրքի մարգարե Հակոբը հրճվում է մահից փրկագնմամբ, որը գալիս է Փրկչի քավող զոհաբերության միջոցով (2 Նեփի 9.10): Ձեզ գուցե անհրաժեշտ լինի կարդալ այս հատվածը և կիսվել վկայությամբ և ձեր զգացումներով այն օրհնությունների վերաբերյալ, որ մենք ստանում ենք Քավության միջոցով: Հրավիրեք դասարանի անդամներին անել նույնը:

3. Ադամն ու Եվան սկսում են մահկանացու կյանքը, ունենում են երեխաներ, նրանց սովորեցնում են ավետարանը և երկրպագում ու հնազանդվում են Աստծուն:

Ուսուցանեք և քննարկեք Մովսես 5.1–9, 12.

- Ի՞նչ արեցին Ադամն ու Եվան Եդեմի պարտեզից վտարվելուց հետո (Տես Մովսես 5.1–5, 12): Ինչո՞վ է Ադամի և Եվայի կյանքը նման մեր այսօրվա կյանքին: Ի՞նչ կարող ենք սովորել Մովսես 5.1–9, 12 հատվածներից մեր մահկանացու կյանքի նպատակների մասին:
- Վերանայեք Մովսես 5.5–9 հատվածների պատմությունը կամ պատվիրեք դա անել դասարանի հանձնարարված մի անդամի: Ի՞նչ պատվիրան Տերը տվեց Ադամին (Տես Մովսես 5.5): Ինչո՞ւ էր Ադամն ընծա մատուցում, չնայած չգիտեր դա անելու պատճառը (Տես Մովսես 5.6):

  Մարգարե Ջոզեֆ Սմիթն ասել է. «Այն, ինչ Աստված է պահանջում, ճիշտ է.... չնայած մենք, հավանաբար, չենք տեսնի պատճառը, մինչև որ իրադարձություններից հետո չանցնի երկար ժամանակ» (*Teachings of the Prophet Joseph Smith,* sel. Joseph Fielding Smith [1976], 256):
- Ի՞նչու է կարևոր հնազանդվել Տիրոջ պատվիրաններին, նույնիսկ, եթե չենք հասկանում դրանց ողջ իմաստը: Ինչպե՞ս եք դուք օրհնվել որևէ պատվիրան պահելու համար, որը լիովին չէիք հասկացել:
- Ո՞րն էր Ադամի մատուցած ընծայի նպատակը (Տես Մովսես 5.7–9: Դրանք Երկնային Հոր Միածին Որդու զոհաբերության նմանությամբ կամ օրինակով էին: Այդպիսի ընծաների մատուցումը հիշեցում էր Ադամին և նրա սերնդին, որ բոլոր մահկանացուները կարող են փրկագնվել Անկումից Հիսուս Քրիստոսի Քավությամբ): Այս վարդապետության ի՞նչ հիշեցումներ են տրվել մեզ: Ինչպե՞ս կարող ենք ցույց տալ Անկման և Քավության համար մեր երախտագիտությունը:

Եզրափակում

Վերընթերցեք Եվայի վկայությունը՝ Անկման օրհնությունների վերաբերյալ (Մովսես 5.11): Արտահայտեք երախտագիտություն Ադամի և Եվայի գործերի համար, Անկման համար և Հիսուս Քրիստոսի Քավության համար:

Ուսուցման համար լրացուցիչ գաղափարներ

Հետևյալ նյութն օժանդակում է առաջարկվող դասի ուրվագծին: Անհրաժեշտության դեպքում օգտագործեք այն որպես դասի բաղկացուցիչ մաս:

1. Արգելված պտղից ճաշակելը մեղք չէր

Բացատրելու համար, որ Ադամն ու Եվան չմեղանչեցին, երբ ճաշակեցին արգելված պտղից, կարդացեք Երեց Դալլին Հ. Օուքսի հետևյալ միտքը որպես օգնություն.

«Եվան առաջինն էր, որ օրինազանցեց Եդեմի օրենքները, որպեսզի սկիզբ դներ մահկանացու պայմաններին: Նրա գործողությունը, ինչպիսին էլ որ լիներ դրա բնույթը, պաշտոնապես օրինազանցություն էր, բայց հավերժության տեսանկյունից մի փառահեղ անհրաժեշտություն՝ դեպի հավերժական կյանք դուռ բացելու համար: Ադամը դրսևորեց իր իմաստությունն անելով նույնը....

....Մենք ուրախանում ենք Եվայի վարմունքով և հարգում նրա իմաստությունը և քաջությունն այն մեծ միջադեպում, որը կոչվում է Անկում.... Երեց Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթն ասել է. «Ես երբեք չեմ խոսում այս անկմանը Եվայի մասնակցության մասին, որպես մեղք, ոչ էլ մեղադրում եմ Ադամին մեղքի համար.... Դա օրինազանցություն էր, բայց ոչ մեղք....

Մեղք և *օրինազանցություն* բառերի միջև գոյություն ունեցող այս առաջարկվող տարբերակումը հիշեցնում է մեզ հավատո հանգանակի երկրորդ կետի ստույգ ձևակերպումը. «Մենք հավատում ենք, որ մարդիկ կպատժվեն իրենց իսկ գործած *մեղքերի*, այլ ոչ թե Ադամի *[օրինազանցության]* համար» (շղագիրն ավելացված է): Այն նաև կրկնում է օրենքի ծանոթ սահմանումը: Որոշ գործողություններ, ինչպես օրինակ սպանությունը, հանցանք են այն պատճառով, որ ըստ էության սխալ են: Այլ գործողություններ, ինչպես օրինակ՝ առանց արտոնագրի աշխատելը, հանցանք են միայն այն պատճառով, որ օրենսդրորեն արգելված են: Այս տարբերակման համաձայն, այն գործողությունը, որն առաջ բերեց Անկումը, մեղք չէր այլ ըստ էության , օրինազանցություն՝ սխալ: Այս խոսքերը միշտ չէ, որ կիրառվում են արտահայտելու այս կամ այն բանը, բայց այս տարբերակումն իմաստալից է Անկման դեպքում» (in Conference Report, Oct. 1993, 98; or *Ensign*, Nov. 1993, 73):

2. Տարբերակում Անկման *հետևանքների* և դրա համար *պատասխանատվության* միջև

Ադամի և Եվայի բոլոր հետնորդները ժառանգեցին Անկման *հետևանքները*, ներառյալ ֆիզիկական և հոգևոր մահը, բայց ոչ թե Անկման համար *պատասխանատվությունը*: Հավատո հանգանակի երկրորդ կետը սովորեցնում է, որ. «մարդիկ կպատժվեն իրենց իսկ գործած մեղքերի, այլ ոչ թե Ադամի օրինազանցության համար» (Տես նաև Մորոնի 8.5–23):

3. «Դեպի ամուսինդ կլինի քո փափագը»

Հետևյալ մտքերը կարող են դասարանի անդամներին օգնել հասկանալ Տիրոջ միտքը Եվայի հանդեպ, երբ նա ասաց. «Դեպի ամուսինդ կլինի քո փափագը և նա կկառավարի քեզ» (Մովսես 4.22):

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալն ասել է. «Ես դեմ եմ *կառավարել* բային: Այն սխալ տպավորություն է գործում: Ես կնախընտրեի օգտագործել *նախագահել* բառը, որովհետև դա այն է, ինչ նա անում է: Արդար ամուսինը նախագահում է իր կնոջ և ընտանիքի վրա» (“The Blessings and Responsibilities of Womanhood,” *Ensign,* Mar. 1976, 72):

Երեց Մ. Ռասսել Բալլարդն ասել է. «Աստված հայտնել է իր մարգարեների միջոցով, որ տղամարդիկ պետք է ստանան քահանայություն, դառնան հայրեր և քնքշորեն և մաքուր, անկեղծ սիրով պետք է առաջնորդեն և հոգան իրենց ընտանիքների մասին արդարությամբ, ինչպես Փրկիչն է առաջնորդում Եկեղեցին (տես Եփեսացիս Ե.23)» (“Equality through Diversity,” *Ensign,* Nov. 1993, 90):

«Եթե բարին գործես, դու կընդունվես»

Դաս
5

Մովսես 5–7

Նպատակ

Օգնել դասարանի անդամներին հասկանալ, որ Հիսուս Քրիստոսին հետևելու ընտրությունները տանում են դեպի ազատություն, երջանկություն և հավերժական կյանք, մինչդեռ սատանային հետևելու ընտրությունները տանում են դեպի թշվառություն և գերություն:

Նախապատրաստում

1. Աղոթքով ուսումնասիրեք հետևյալ սուրբ գրությունները «Թանկագին Մարգարիտից».
   ա. Մովսես 5.16–41: Կայենը սատանային ավելի է սիրում, քան Աստծուն և հնազանդվում է Տիրոջը զոհաբերություն կատարելու սատանայի հրամանին (5.16–19): Տերը մերժում է Կայենի զոհաբերությունը և Կայենին հրամայում ապաշխարել (5.20–25): Կայենն ուխտի մեջ է մտնում սատանայի հետ և սպանում Աբելին (5.26–33): Տերն անիծում է Կայենին և Կայենը մեկուսացվում է Տիրոջ ներկայությունից (5.34–41):
   բ. Մովսես 6.26–63: Ենովքը՝ Ադամի չորրորդ ծոռներից մեկը, կանչվում է Տիրոջ կողմից ժողովրդին ապաշխարություն քարոզելու (6.26–36): Ենովքը հնազանդվում է Տիրոջ հրամանին և ուսուցանում է ժողովրդին (6.37–63):
   գ. Մովսես 7.13, 17–21, 23–47, 68–69: Ենովքի հավատքն այնքան մեծ է, որ սարերը փախչում են, գետերը փոխում են իրենց հոսանքը և մեծ վախ է գալիս բոլոր ազգերի վրա (7.13, 17): Տերն ու Ենովքն արտասվում են երկրի վրայի ժողովրդի ամբարշտության համար (7.23–47): Ենովքի քաղաքի ժողովուրդը մեկ սրտի են և մեկ մտքի Տիրոջ հետ, և ողջ քաղաքը վերցվում է երկինք (7.18–21, 68–69):
2. Լրացուցիչ ընթերցանություն. Մովսես 5.42–55, 6.10–23, 7.14–16, 59–64, 2 Նեփի 2.25–27, Ծննդոց Դ.1–16:

Առաջարկվող դասի զարգացում

Ուշադրության կենտրոնացման վարժություն

Ձեզ գուցե անհրաժեշտ լինի օգտագործել հետևյալ վարժությունը (կամ ձեր սեփականը) դասը սկսելու համար:

Նախքան դասն սկսելը գրատախտակի վրա կողք կողքի գրեք մտքերի հետևյալ երկու խումբը.

Խումբ 1	*Խումբ 2*
«Ո՞վ է Տերը, որ ես պետք է ճանաչեմ նրան»:	«Նա իմ Աստվածն է և ձեր Աստվածն է»:
«Ես ազատ եմ»:	«Ինչո՞ւ եք դուք խորհուրդ անում և ուրանում եք երկնքի Աստծուն»:
«Մի՞թե ես եղբորս պահապանն եմ»:	«Դուք իմ եղբայրներն եք»:

Ասեք դասարանի անդամներին, որ այդ երկու ցուցակներում գտնվող մտքերն արտահայտվել էին երկու տարբեր մարդկանց կողմից, որոնց մասին նրանք կսովորեն դասի ժամանակ: Հարցրեք դասարանի անդամներից, թե ինչպես կարող են նրանց արտահայտած այդ մտքերի խմբի հիման վրա պատկերացում կազմել յուրաքանչյուր մարդու մասին: (Գուցե ձեզ անհրաժեշտ լինի հանձնարարել դասարանի անդամներին հավաքվել փոքր խմբերով՝ քննարկելու այդ մտքերը: Երբ հինգ կամ վեց րոպեի ընթացքում խմբերը քննարկեն մտքերը, հանձնարարեք յուրաքանչյուր խմբից մեկ անձնավորության դասարանի մնացած անդամների համար ամփոփել խմբի քննարկումը):

Երբ դասարանի անդամները պատասխանեն, բացատրեք, որ մտքերի առաջին խումբն արտահայտվել է Կայենի կողմից, որն ընտրեց հետևել սատանային: Երկրորդ մտքերի խումբն արտահայտվել է Ենովքի կողմից, որն ընտրեց հետևել Տիրոջը: Յուրաքանչյուր մարդու մտքերն արտացոլում են Աստծո հանդեպ նրա վերաբերմունքը:

Սուրբ գրության քննարկում և կիրառում

Երբ սովորեցնում եք սուրբ գրության հետևյալ հատվածը, քննարկեք թե ինչպես է այն վերաբերում ամենօրյա կյանքին: Խրախուսեք դասարանի անդամներին կիսվել փորձառություններով, որոնք կապված են սուրբգրքյան սկզբունքների հետ:

1. Կայենն ուխտ է կապում սատանայի հետ, սպանում է Աբելին և անիծվում Տիրոջ կողմից:

Ուսուցանեք և քննարկեք Մովսես 5.16–41:

- Ադամն ու Եվան հույս ունեին, որ իրենց որդի Կայենը կհետևեր Տիրոջը, ինչպես իրենք արեցին: Բայց Կայենը «ականջ չդրեց» իր ծնողներին և Տիրոջն ու հարցրեց. «Ո՞վ է Տերը, որ ես պետք է ճանաչեմ նրան» (Մովսես 5.16): Ի՞նչ է ցույց տալիս այս հարցն Աստծո հանդեպ Կայենի վերաբերմունքի մասին: Ի՞նչ պետք է անենք Աստծուն ճանաչելու համար: (Տես Ալմա 22.17–18):
- Ի՞նչու Կայենն ընծա մատուցեց Տիրոջը: (Տես Մովսես 5.18): Ի՞նչ ընծա մատուցեց Կայենը: (Տես Մովսես 5.19): Ի՞նչու Տերն ընդունեց Աբելի ընծան, բայց մերժեց Կայենի մատուցած ընծան: (Տես Մովսես 5.5, 20–23): Տերը պատվիրել էր Ադամին ու Եվային և նրանց երեխաներին ընծա մատուցել իրենց հոտերի անդրանիկներից: Աբելը հնազանդվեց, բայց Կայենն ականջ դրեց սատանայի խոսքերին և ընծա մատուցեց հողի պտղից): Ի՞նչու էր կարևոր ընծա մատուցել այն ձևով ինչպես Տերն էր պատվիրել:

  Մարգարե Ջոզեֆ Սմիթը սովորեցրել է. «Աբելն ընծա մատուցեց Աստծուն, որն ընդունվեց, որը հոտերի անդրանիկներից էր: Կայենն ընծա մատուցեց հողի պտուղներից և չընդունվեց, որովհետև նա չէր կարող դա անել հավատքով.... Մարդու փրկագնման համար Միածնի արյան հեղումը.... փրկագնման ծրագիրն էր.... և քանի որ զոհաբերությունը հաստատված էր օրինակի համար, որով մարդ պետք է հասկանար մեծ Զոհաբերությունը, որն Աստված պատրաստել էր. ի հակառակ դրան ընծա մատուցելով հնարավոր չէր հավատք գործադրել.... հետևաբար, Կայենը չէր կարող ունենալ հավատք. և այն, ինչ հավատքից չէ, մեղք է» (*Teachings of the Prophet Joseph Smith*, sel. Joseph Fielding Smith [1976], 58):
- Ինչպե՞ս վերաբերվեց Կայենը, երբ Տերը մերժեց նրա ընծան և նրան ապաշխարության կանչեց (Տես Մովսես 5.21, 26): Ինչո՞ւ է երբեմն մեզ համար դժվար ապաշխարության կանչվել: Ինչպե՞ս կարող ենք զարգացնել ավելի ապաշխարող սրտեր:
- Իր եղբայր Աբելին սպանելուց հետո Կայենն ասաց. «Ես ազատ եմ» (Մովսես 5.33): Ի՞նչ եք կարծում ինչի՞ց էր Կայենն իրեն ազատ համարում: Ինչպե՞ս է Աստծո պատվիրաններին չհնազանդվելն իրականում նվազեցնում մեր ազատությունը: Ինչպե՞ս է հնազանդությունը մեծացնում մեր ազատությունը:

- Ինչպե՞ս պատասխանեց Կայենը, երբ Տերը հարցրեց, թե որտեղ է Աբելը: (Տես Մովսես 5.34): Ի՞նչ է նշանակում լինել մեր եղբոր պահապանը (Տես Ա Հովհաննես Գ.11, 17–18): Ի՞նչ միջոցներով կարող ենք գործել, որպես մեր եղբայրների և քույրերի պահապաններ:

  Եպիսկոպոս Ռոբերտ Լ. Սիմփսոնն ասել է. «Աշխարհն այսօր ասում է հանգիստ թողնել ձեր ընկերոջը: Նա իրավունք ունի գալ և գնալ ինչպես հաճելի է իրեն: Աշխարհն ասում է ձեզ, որ համոզելը եկեղեցի կամ քահանայության ժողովի հաճախել կամ վատ սովորույթին վերջ տալը կարող է տանել հուսախաբության և անտեղի լարվածության. սակայն ես նորից կրկնում եմ Տիրոջ խոսքը. Դուք ձեր եղբոր պահապանն եք, և երբ դուք դարձի եք գալիս, դուք պարտավորություն ունեք զորացնելու ձեր եղբորը» (in Conference Report, Oct. 1971, 114; or *Ensign,* Dec. 1971, 103):.

- Ի՞նչ պատահեց Կայենի հետ, երբ նա Աստծուն հետևելու փոխարեն, ընտրեց հետևել սատանային (Տես Մովսես 5.23–25, 36–41): Ինչպե՞ս անդրադարձավ Կայենի ընտրությունն իր ժառանգների, ինչպես նաև հենց իր վրա (Տես Մովսես 5.41–43, 49–52, 55): Ինչպե՞ս կարող է մեր արդար կամ անարդար ընտրությունն ազդել մեր ընտանիքի անդամների վրա:

2. Ենովքն իր ժողովրդին ապաշխարություն է քարոզում:

Ուսուցանեք և քննարկեք 6.26–63 հատվածները:

- Ինչպե՞ս արձագանքեց Ենովքը, երբ կանչվեց Տիրոջ կողմից ապաշխարություն քարոզելու ժողովրդին: (Տես Մովսես 6.31): Ի՞նչ խոստացավ Տերը Ենովքին, եթե նա առաջ գնար պատվիրվածի համաձայն (Տես Մովսես 6.32–34): Ի՞նչ կարող ենք սովորել Ենովքի պատմությունից, թե ինչպես է Տերն ընտրում իր առաջնորդներին: (Տես Ա Թագավորաց ԺԶ.7): Ի՞նչ կարող ենք սովորել Ենովքից Տիրոջը ծառայելու մասին, նույնիսկ երբ մենք ունակ չենք զգում մեզ:

- Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ ժողովուրդը վիրավորվեց, երբ Ենովքն ապաշխարություն սկսեց քարոզել (Տես Մովսես 6.37, տես նաև 1 Նեփի 16.2, Մոսիա 13.7): Ինչո՞ւ էին նրանք շարունակում լսել նրան, չնայած վիրավորված էին: (Մոսիա 6.38–39: Սկզբում նրանք ուղղակի հետաքրքրված էին, բայց հետո հասկացան, որ նա Աստծո մարդ էր): Ինչպե՞ս կարող ենք վկայություն ձեռք բերել, որ ապրող մարգարեն Աստծո մարդ է: Ինչպե՞ս կարող է այս վկայությունն օգնել մեզ հետևելու մարգարեին, եթե նույնիսկ նրա ուսմունքները ժողովրդականություն չեն վայելում:

- Ավետարանի ի՞նչ վարդապետություններ էր Ենովքը սովորեցնում, երբ ժողովրդին ապաշխարոթյան էր կանչում (Տես Մովսես 6.47–63: Եթե դուք քննարկել եք այս հատվածները 4-րդ դասի ժամանակ, պետք չէ դրանք նորից կրկնել):

- Տերը մեզ դարձրել է «գործակալներ մեր անձերի» (Մովսես 6.56): Ի՞նչ է սա նշանակում (Մենք իրավունք ունենք ընտրելու): Ինչո՞ւ է Աստծո ծրագրում ազատ կամքն անհրաժեշտ մեր փրկության համար: (Մենք կարիք ունենք ազատ կամքի, այսպիսով մենք պատասխանատու ենք մեր ընտրությունների համար): Որո՞նք են սատանային հետևելու ընտրության հետևանքները: Որո՞նք են Տիրոջը հետևելու ընտրության հետևանքները: (Տես 2 Նեփի 2.25–27):

3. Ենովքի քաղաքում մարդիկ մեկ սրտի և մեկ մտքի են Տիրոջ հետ և ողջ քաղաքը վերցվում է երկինք:

Ուսուցանեք և քննարկեք Մովսես 7.13, 17–21, 23–47, 68–69:

- Ինչպիսի՞ հրաշքներ կատարեց Տերը Ենովքի մեծ հավատքի շնորհիվ (Տես Մովսես 7.13): Ի՞նչ հրաշքներ է կատարում Տերը մեր օրերում ժողովրդի հավատքի շնորհիվ:

- Ինչպե՞ս օրհնվեցին այն մարդիկ, ովքեր լսեցին Ենովքի խոսքերը և ապաշխարեցին իրենց մեղքերից (Տես Մովսես 7.17–18): Ինչո՞ւ էր նրանց քաղաքը Սիոն կոչվում (Տես Մովսես 7.18): Ի՞նչ է նշանակում լինել «մեկ սրտի և մեկ մտքի»: Ի՞նչ կարող ենք անել Տիրոջ հետ մեկ սրտի և մեկ մտքի դառնալու համար. իսկ մեր ընտանիքներո՞ւմ. իսկ Եկեղեցո՞ւմ:
- Ի վերջո, ի՞նչ պատահեց Ենովքի և նրա ժողովրդի հետ (Տես Մովսես 7.19–21, 69):
- Մովսես 7.28 հատվածում Ենովքը տեսավ Տիրոջն արտասվելիս: Ինչո՞ւ էր Տերն արտասվում: Ինչո՞ւ Ենովքը հարցրեց Տիրոջն արտասվելու մասին (Տես Մովսես 7.29–31): Ի՞նչ պատասխանեց Տերը (Տես Մովսես 7.32–33, 36–37): Ի՞նչ եք զգում Տիրոջ հանդեպ, երբ կարդում եք այս հատվածները:
- Երբ Ենովքը տեսավ ժողովրդի ամբարշտությունը, նա նույնպես արտասվեց (Մովսես 7.41, 44): Տերն ինչպե՞ս հանգստացրեց Ենովքին (Տես Մովսես 7.44–47):

Ձեզ գուցե անհրաժեշտ լինի ասել դասարանի անդամներին, որ հետագա դասերը քննարկում են Սիոնի վերահաստատումը վերջին օրերին (ներառյալ Նոր Երուսաղեմը), Փրկչի Երկրորդ Գալուստը և նրա հազարամյա թագավորումը երկրի վրա, որը Ենովքը տեսավ տեսիլքում (Մովսես 7.62–65):

Եզրափակում

Նշեք, որ Կայենն ընտրեց հետևել սատանային և սովորեցնել նրա չար գործերն իր զավակներին ու հետևորդներին: Դրա հետևանքով Կայենի ժառանգները մեծացան ամբարշտության մեջ և անիծվեցին Աստծո կողմից իրենց անարդարության համար: Ենովքը, ընդհակառակը, ընտրեց հետևել Տիրոջը: Ենովքի հանազանդ լինելու և բոլորին, ովքեր կցանկանային լսել ավետարանը, սովորեցնելու ընտրության հետևանքով, ողջ քաղաքը դարձավ այնքան արդար, որ նրանք վերցվեցին երկրի վրայից՝ ապրելու Աստծո հետ:

Վկայեք, որ այն ընտրությունները, որ մենք կատարում ենք Հիսուս Քրիստոսին հետևելու համար, կօգնեն մեզ ավելի մոտենալ նրան և կառաջնորդեն մեզ դեպի ազատություն, երջանկություն և հավերժական կյանք:

Ուսուցման համար լրացուցիչ գաղափարներ

Հետևյալ նյութն օժանդակում է առաջարկվող դասի ուրվագծին: Անհրաժեշտության դեպքում օգտագործեք այն որպես դասի բաղկացուցիչ մաս:

1. Ընտանեկան հիշատակարաններ վարելը

- Ինչո՞ւ էր կարևոր, որ Ադամն ու Եվան և նրանց ժառանգները հիշատակի գիրք կամ տոհմաբանություն պահեին: (Տես Մովսես 6.5–8, 45–46): Ինչո՞ւ է կարևոր մեզ համար այդպիսի արձանագրություններ վարել այսօր: Ինչպե՞ս են ձեզ օգնել ձեր նախնիների կյանքի պատմությունները: Ինչպե՞ս կարող է ձեր կյանքի և հավատքի մասին գրված պատմությունը օգնել ձեր ընտանիքի անդամներին:
- Ինչպե՞ս կարող են սուրբ գրությունները համարվել ընտանեկան արձանագրություններ: Ինչպե՞ս կարող են ծնողներն ու ուսուցիչները արդյունավետ օգտագործել սուրբ գրությունները երեխաներին սովորեցնելու համար:

2. Համեմատություն Ենովքի և Կայենի միջև

Գրատախտակին գծեք երկու խումբ քայլեր, մեկը վեր գնացող, իսկ մյուսը վար գնացող (տես 21 էջի նկարը): Վերնագրեք վեր գնացող քայլերը *Վարքագծեր, որոնք տանում են մեզ դեպի Աստված*, և գրեք Ենովքի անունն առաջին քայլի վրա: Վերնագրեք ներքև իջնող

քայլերը *Վարքագծեր, որոնք տանում են մեզ դեպի կործանում*, և գրեք Կայենի անունն առաջին քայլի վրա:

Հանձնարարեք դասարանի անդամներին կարդալ Ենովքի առաջին քայլերի վրա նշված հատվածը (Մովսես 7.59) և Կայենի առաջին քայլերի վրա նշված հատվածը (Մովսես 5.16): Այնուհետև գրեք մի քանի կարևոր բառեր գրատախտակի վրայի համապատասխան քայլերի վրա: Կրկնեք նույնը մնացած քայլերի համար: Երբ բոլոր հատվածները կարդացվեն, վերնագրեք Ենովքի քայլերի ավարտը *Բնակվել Աստծո հետ*, և վերնագրեք Կայենի քայլերի ավարտը *Հոգևոր կործանում:* Քննարկեք թե ինչպես օգնեց Ենովքի խոսքերն ու գործերն ավելի մոտենալ Աստծուն, մինչդեռ Կայենի խոսքերն ու գործերը նրան ավելի մոտեցրեցին սատանային:

- Ի՞նչ ուղիներով կարող ենք մենք հետևել Ենովքի օրինակին և ավելի մոտենալ Աստծուն:



3. «Օծիր քո աչքերը.... և դու կտեսնես» (Մովսես 6.35)

Հիսուս Քրիստոսը մի անգամ բժշկեց մի կույր մարդու՝ այդ մարդու աչքերը օծելով կավով (Հովհաննես Թ.1–7): Ենովքը, որը դեռ հոգեպես հասուն չէր, և այսպիսով, հոգեպես կույր էր որոշ բաների հանդեպ, նույնպես պատվիրան ստացավ. «կավով օծել [իր] աչքերը, և լվալ այն» (Մովսես 6.35):

- Ի՞նչ տեսավ Ենովքը, երբ արեց դա (Տես Մովսես 6.36): Ի՞նչ է սովորեցնում մեզ կավը լվանալու խորհրդանշական գործողությունը:
- Ի՞նչ կարող ենք անել մենք ավելի լիովին բացելու մեր աչքերն Աստծո բաների հանդեպ: Ի՞նչպես կարող ենք բարելավել սուրբ գրությունների մեր ուսումնասիրությունը, որպեսզի տեսնենք դրանցում պարունակվող գանձերը:

4. Սիրելիները, որոնք մոլորվում են:

- Չնայած Ադամն ու Եվան իրենց երեխաներին սովորեցրեցին ավետարանը (Մովսես 5.12), Կայենը և մյուսներն ընտրեցին անարդար ապրելը: Ի՞նչ կարող ենք անել մենք՝ ինքներս մեզ օգնելու ցավը կրելու համար, երբ մեր սիրելիները մոլորվում են: Ի՞նչ կարող ենք անել մեր սիրելիներին օգնելու համար:

  Երեց Ռիչարդ Գ. Սքոթը խորհուրդ է տվել.

  «Ձեզանից շատերի սրտերն են ծանրացած՝ որդու կամ դստեր, ամուսնու կամ կնոջ արդարությունից շեղվելու և չարին հետևելու պատճառով: Իմ ուղերձը ձեզ համար է:

  Ձեր կյանքը լցված է տառապանքով, կսկիծով և երբեմն հուսահատությամբ: Ես կասեմ թե ինչպես պետք է մխիթարվեք Տիրոջով:

  Առաջինը դուք պետք է ընդունեք երկու հիմնական սկզբունք.

  1. Չնայած կան շատ բաներ, որոնք դուք կարող եք անել օգնելու կարիքի մեջ գտնվող ձեր սիրելի մարդուն, կան որոշ բաներ, որոնք պետք է արվեն Տիրոջ կողմից:
  2. Բացի այդ, տեղի չի ունենա հարատև բարելավում առանց ազատ կամքի արդար գործադրման: Մի փորձեք ազատ կամքի վրայով անցնել: Տերն ինքը չէր անի դա: Հարկադրված հնազանդությունն օրհնություններ չի բերում (տես ՎԿՈ 58.26–33):

  Ես կառաջարկեմ յոթ ուղիներ, որոնցով դուք կարող եք օգնել:

  Առաջինը՝ սիրեք առանց պայմանականությունների.... Երկրորդ՝ մի հաշտվեք օրինազանցության հետ, բայց հույս և ամեն օգնություն հասցրեք օրինազանցին.... Երրորդը՝ սովորեցրեք ճշմարտությունը.... Չորրորդը՝ ազնվորեն ներեք՝ այնքան հաճախ, որքան անհրաժեշտ կլինի.... Հինգերորդը՝ աղոթեք ապավինելով: «.... Շատ զորավոր է արդարի ջերմեռանդ աղոթքը» (Հակոբոս Ե.16)....

  Վեցերորդ՝ մի կորցրեք հույսը.... Երբ այն բաները, որոնք իրականում կարող եք անել օգնելու համար, արվել են, թողեք հարցը Տիրոջ ձեռքում և այլևս մի անհանգստացեք: Մեղավոր մի զգացեք, որովհետև չեք կարողանում անել ավելին: Մի վատնեք ձեր էներգիան անօգուտ անհանգստանալու վրա.... Ժամանակի ընթացքում դուք կունենաք պատկերացում և կիմանաք, թե ինչպես օգնել հետագայում: Դուք ավելի շատ խաղաղություն և երջանկություն կգտնեք, չեք անտեսի նրանց, ովքեր ձեր կարիքն ունեն և կկարողանաք ավելի մեծ օգնություն ցուցաբերել հավերժական հեռանկարի շնորհիվ....

  Մի վերջին առաջարկություն՝ Երբեք մի հրաժարվեք ձեր սիրեցյալից, երբե՛ք» (in Conference Report, Apr. 1988, 69–71; or *Ensign*, May 1988, 60–61):

«Նոյը.... տապան պատրաստեց իր տան փրկության համար»

Դաս
6

Մովսես 8.19–30, Ծննդոց Զ–Թ, ԺԱ.1–9

Նպատակ

Օգնել դասարանի անդամներին ցանկանալ արժանի ապրել և խուսափել աշխարհի չարիքներից:

Նախապատրաստում

1. Աղոթքով ուսումնասիրեք հետևյալ սուրբ գրությունները.

   ա. Մովսես 8.19–30, Ծննդոց 6.5–22, 7.1–10: Նոյը քարոզեց ավետարանը, բայց մարդիկ չլսեցին (Մովսես 8.19–25): Մարդկանց ամբարշտության պատճառով Տերը հայտարարում է, որ նա կործանելու է երկրի վրայի բոլոր մարմինները: (Մովսես 8.26–30, Ծննդոց Զ.5–13): Տերը պատվիրում է Նոյին տապան կառուցել և նավ վերցնել իր ընտանիքին և յուրաքանչյուր կենդանուց երկու հատ (Ծննդոց Զ.14–22, Է.1–10):

   բ. Ծննդոց Է.11–24, Ը, Թ.8–17: 40 օր և գիշեր անձրև է գալիս (Է.11–12): Բոլոր մարդիկ և արարածները, որոնք տապանի վրա չէին, մահանում են և ջրերը 150 օրվա ընթացքում ծածկում են երկիրը (Է.13–24): Երբ ջրերը ետ են քաշվում, Նոյը, նրա ընտանիքը և կենդանիները թողնում են տապանը (Ը.1–19) և Նոյը զոհաբերություն է մատուցում Տիրոջը (Ը.20–22): Տերն իր ուխտն է հաստատում Նոյի հետ և ծիածանը դնում որպես ուխտի նշան (Թ.8–17, ուշադրություն դարձրեք, որ 15 հատվածի Ջոզեֆ Սմիթի Թարգմանությունը նշում է, որ ուխտն Աստծո և Նոյի միջև էր, ոչ թե Աստծո և յուրաքանչյուր կենդանի արարածի միջև):

   գ. Ծննդոց ԺԱ.1–9: Ջրհեղեղից մի քանի սերունդ հետո, ժողովուրդը փորձում է մի աշտարակ կառուցել մինչև երկինք (Բաբելոնի աշտարակը): Տերը խառնում է նրանց լեզուն, այնպես որ նրանք չեն հասկանում մեկմեկու և ցրում է նրանց ողջ երկրի վրա:

2. Լրացուցիչ ընթերցանություն. Եբրայեցիս ԺԱ.7, Մովսես 7.32–36:

3. Եթե հետևյալ նկարները մատչելի են, դուք գուցե կամենաք օգտագործել դրանցից մի քանիսը որպես դասի բաղկացուցիչ մաս:

   ա. Նկարներ՝ Տապանի կառուցումը (62053, Ավետարանական Արվեստի Նկարների Հավաքածու 102), Նոյը և Տապանը կենդանիների հետ (62305, Ավետարանական Արվեստի Նկարների Հավաքածու 103), և Արարչագործություն՝ Կենդանի Արարածներ (62483, Ավետարանական Արվեստի Նկարների Հավաքածու 100):

Առաջարկվող դասի զարգացում

Ուշադրության կենտրոնացման վարժություն

Անհրաժեշտ ության դեպքում օգտագործեք հետևյալ վարժությունը (կամ ձեր սեփականը) դասը սկսելու համար: Ընտրեք այն վարժությունը, որն ամենահարմարը կլինի դասարանի համար:

1. Եթե ձեր դասասենյակը բավականին մեծ է, խնդրեք դասարանի մի քանի անդամների ուղիղ գծով ձեռքերը պարզած, այնպես կանգնել որ նրանց մատների ծայրերը հպվեն իրենց կողքին կանգնած մարդու մատների ծայրին: Բացատրեք, որ անհրաժեշտ կլինի

մոտավորապես այս ձևով կանգնած 85 դասարանի անդամ՝ նույն երկարության գիծ կազմելու համար, ինչպես Նոյի կառուցած տապանն էր:

2. Ցույց տվեք աղյուսակը դասի վերջում՝ օգնելու դասարանի անդամներին պատկերացնել Նոյան տապանի չափը՝ համեմատած այն նավերի հետ, որոնք կարող են ավելի ծանոթ լինել:

Սուրբ գրության քննարկում և կիրառում

Երբ ուսուցանեք սուրբ գրության հետևյալ հատվածները, քննարկեք, թե ինչպես են դրանք կիրառվում ամենօրյա կյանքում: Խրախուսեք դասարանի անդամներին կիսվել փորձառություններով, որոնք կապված են սուրբգրքյան սկզբունքների հետ:

1. Ժողովուրդը մերժում է Նոյի ապաշխարության կոչը, Նոյը տապան է կառուցում:

Ուսուցանեք և քննարկեք Մովսես 8.19–30 և Ծննդոց Զ.5–22, Է.1–10: (Եթե դասարանի անդամները հարցեր ունենան «մաքուր» և «ոչ մաքուր» կենդանիների վերաբերյալ, ձեզ անհրաժեշտ կլինի հղումների համար դիմել Ղևտացոց ԺԱ.1–31 հատվածներին):

- Ինչպիսի՞ն էր աշխարհը, երբ Տերը կանչեց Նոյին քարոզելու ավետարանը (Տես Մովսես 8.20–22): Ինչպիսի՞ նմանություններ կարող եք տեսնել Նոյի օրերի մարդկանց և մեր օրերի մարդկանց միջև: Ինչպե՞ս կարող էին Նոյի օրերի մարդիկ խուսափել կործանումից (Տես Մովսես 8.23–24): Ինչպե՞ս կարող է մարգարեներին լսելն ու հետևելը օգնել մեզ խուսափել հոգևոր և մարմնական կործանումից:
- Ինչո՞ւ Նոյը կառուցեց տապանը: (Տես Եբրայեցիս ԺԱ.7): Եկեղեցու առաջնորդները մեզանից յուրաքանչյուրին խորհուրդ են տվել «կառուցել անձնական տապան» (W. Don Ladd, in Conference Report, Oct. 1994, 36; or *Ensign*, Nov. 1994, 29): Ի՞նչ կարող ենք անել ինքներս մեզ և մեր ընտանիքներին հոգեպես պաշտպանելու համար: Ըստ ձեզ այսօր հատկապես ո՞ր պատվիրաններն են կարևոր՝ մեզ պաշտպանելու համար (Ձեզ գուցե անհրաժեշտ լինի քննարկման ժամանակ օգտագործել *Երիտասարդներին զորացնելու համար* [34285] գրքույկը):
- Ի՞նչ կարող ենք անել մենք աղետի կամ այլ կարիքի դեպքում նյութապես պատրաստված լինելու համար: (Տես ստորև բերված մեջբերումները Երեց Լ.Թոմ Փերիի ելույթից էջ 54): Ինչո՞ւ են մեզանից շատերը հետաձգում անհրաժեշտ նախապատրաստություններ անելը: Ինչպե՞ս կարող ենք այժմ նախապատրաստվելու հանձնարարությունն ավելի լավ կատարել:

  Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոնն ասել է. «Այսօր մեր նյութական բարօրության համար ուտելիք արտադրելու և պահեստավորելու հայտնությունը կարող է լինել նույնքան կարևոր, որքան մարդկանց համար տապանի մեջ մտնելը Նոյի օրերում» (in Conference Report, Oct. 1987, 61; or *Ensign*, Nov. 1987, 49):

  Երեց Վ. Դոն Լադն ասել է. «Երբ սկսում է անձրև տեղալ, խիստ ուշ է տապան կառուցելու համար.... Մենք.... պետք է լսենք Տիրոջ խոսնակներին: Մենք պետք է հանգիստ շարունակենք առաջ շարժվել և պատրաստվել այն ամենին, ինչն անշուշտ գալու է: Մենք չպետք է տագնապենք կամ վախենանք, քանզի եթե նախապատրաստվենք հոգեպես և նյութապես, մենք և մեր ընտանիքները կփրկվեն ցանկացած ջրհեղեղից: «Մեր տապանները կլողան հավատքի ծովում, եթե մեր գործերով հաստատապես և անկասկած նախապատրաստվել ենք ապագայի համար» (in Conference Report, Oct. 1994, 37; or *Ensign*, Nov. 1994, 29):
- Ինչպիսի՞ հատկանիշներ դրսևորեց Նոյը կառուցելով տապանը (Պատասխանները կարող են լինել հավատք, հնազանդություն և աշխատասիրություն): Ինչպե՞ս կարող ենք ուժեղացնել այս հատկանիշները մեր մեջ:

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալը բացատրել է, որ երբ Նոյը տապան կառուցեց. «անձրևի կամ ջրհեղեղի նշան չկար.... Նրա զգուշացումները համարվեցին անիրական.... Ինչպիսի՞ հիմարություն էր տապան կառուցել չոր հողի վրա փայլող արևի տակ,,երբ կյանքն իր սովորական հունով էր ընթանում: Բայց ժամանակը եկավ: Տապանի կառուցումն ավարտվեց: Ջրհեղեղները եկան: Անհնազանդներն ու ապստամբները խեղդվեցին: Տապանի հրաշքին նախորդեց հավատքը, որը դրսևորվեց այն կառուցելիս» (*Faith Precedes the Miracle* [1972], 5–6):

2. Տերը մաքրում է երկիրը ջրհեղեղով:

Ուսուցանեք և քննարկեք Ծննդոց Է.11–4, Ը, և Թ.8–17:

- Ի՞նչ պատահեց, երբ եկավ ջրհեղեղը (Տես Ծննդոց Է.23): Ի՞նչ «տապաններ» ունենք մենք այժմ, որոնք կարող են օգնել մեզ փրկվել՝ մեզ շրջապատող չարից: (Գուցե անհրաժեշտ լինի գրի առնել պատասխանները գրատախտակին և հրավիրել դասարանի անդամներին պատմել, թե ինչպես են այս «տապաններն» օգնել պաշտպանել մեզ: Հնարավոր պատասխանները կարող են լինել՝ մեր տները և ընտանիքները, ընկերները, տաճարները, սեմինարիաները, Եկեղեցու ժողովները, աղոթքները, սուրբ գրությունները և ապրող մարգարեները): Ինչպե՞ս կարող ենք օգնել ուրիշներին ապաստան գտնել այս «տապաններում»:
- Անձրևը դադարելուց հետո, ինչո՞ւ Նոյը տապանից դուրս թողեց աղավնուն (Տես Ծննդոց Ը.8): Ի՞նչ պատահեց առաջին երկու անգամները, երբ նա դուրս թողեց աղավնուն (Տես Ծննդոց Ը.8–11): Ի՞նչ պատահեց երրորդ անգամ (Տես Ծննդոց Ը.12):
- Որն էր առաջին բանը, որ արեց Նոյը տապանը թողնելուց հետո (Տես Ծննդոց Ը.20, տես նաև Ջոզեֆ Սմիթ Թարգմանություն, Ծննդոց Թ.4): Ինչպե՞ս կարող ենք մենք մեր երախտագիտությունը ցույց տալ Տիրոջը, երբ նա օգնում է մեզ հաղթահարել դժվար կացությունը:
- Ի՞նչ դրեց Տերը երկնքում ջրհեղեղը վերջանալուց հետո (Տես Ծննդոց Թ.13): Ի՞նչ ասաց Աստված, ի՞նչ պետք է իրենից ներկայացներ ծիածանը (Տես Ծննդոց Թ.12–13, 16–17): Ի՞նչ ուխտ կապեց Աստված Նոյի հետ: (Տես Ծննդոց Թ.8–11,15, տես նաև Ջոզեֆ Սմիթ Թարգմանություն, Ծննդոց Թ.21–22, 24):

3. Մարդիկ կառուցում են Բաբելոնի աշտարակը:

Ուսուցանեք և քննարկեք ԺԱ.1–9:

- Ինչո՞ւ Նոյի հետնորդները որոշեցին աշտարակ կառուցել (Տես Ծննդոց ԺԱ.4): Ինչ եք կարծում ի՞նչ էին ուզում նրանք իրականացնել իրենց համար «անուն ստանալով»: Ո՞րն է տարբերությունը մեզ համար «անուն ստանալու» և մեր վրա Քրիստոսի անունը վերցնելու միջև: Ի՞նչ պարտականություններ ենք վերցնում մեզ վրա, երբ վերցնում ենք Քրիստոսի անունը: (Տես Մոսիա 18.8–10):
- Ի՞նչ հետևանք ունեցավ մինչև երկինք աշտարակ կառուցելու նրանց փորձը (Տես Ծննդոց ԺԱ.5–9): Ինչո՞ւ չենք կարող երկնքին հասնել մեր սեփական կամ մարդկային մեթոդներով: Ո՞րն է մեզ երկինք հասցնելու Տիրոջ ուղին:

Եզրափակում

Բացատրեք, որ մարդիկ, ովքեր կառուցեցին Բաբելոնի աշտարակը պատժվեցին, որովհետև նրանք փորձեցին երկնքին հասնել աշխարհիկ միջոցներով: Մինչդեռ Նոյը և նրա ընտանիքը փրկվեցին ջրհեղեղից, որովհետև նրանք ապրում էին Աստծո պատվիրաններով:

Վկայեք, որ մեզ համար երկինք հասնելու միակ ճանապարհը Հիսուս Քրիստոսի ավետարանի միջոցով մեր Երկնային Հոր հետ ապրելու համար այնտեղ վերադառնալն է:

Մենք պետք է ապրենք արդար, ինչպես Նոյը՝ ունենալով հավատք առ Քրիստոս, ապաշխարելով մեր մեղքերից, ստանալով սրբազան արարողություններ և համբերելով մինչև մեր կյանքի վերջը: Եթե մենք անենք այս բաները, մենք չարից վեր կբարձրանանք և կկարողանանք վերադառնալ Աստծո ներկայության մեջ:

Ուսուցման համար լրացուցիչ գաղափարներ

Հետևյալ նյութն օժանդակում է առաջարկվող դասի ուրվագծին: Անհրաժեշտության դեպքում օգտագործեք այն որպես դասի բաղկացուցիչ մաս:

1. Ենովքը տեսիլքում տեսնում է Նոյի օրերը

Ենովքը՝ Նոյի մեծ պապը, տեսավ տեսիլքում Նոյի սերնդի ամբարշտությունը և դրա պատճառով ջրհեղեղը (Մովսես 7.41–52): Ենովքը սգաց այդ ամբարշտության պատճառով և խնդրեց Տիրոջը, որ նա ողորմություն ունենա Նոյի և նրա զավակների վրա: Տերը Ենովքին խոստացավ, որ Նա այլևս երբեք չի կործանի աշխարհը ջրհեղեղով (Մովսես 7.51): Տերը Ենովքին նաև խոստացավ, որ Նոյը կլինի իր ժառանգը և այսպիսով Ենովքի սերունդը կշարունակվի երկրի վրա, նույնիսկ, ջրհեղեղից հետո (Մովսես 7.52, 8.2, 6, 8–9): Տերն այս ուխտը նորոգեց Նոյի հետ ջրհեղեղից հետո (Ծննդոց Թ.8–17, ուշադրություն դարձրեք, որ 9 և 11 հատվածների Ջոզեֆ Սմիթի Թարգմանությունը վերաբերում է Ենովքի հետ Տիրոջ ուխտին, տես նաև Ջոզեֆ Սմիթ Թարգմանություն, Ծննդոց 9.21–25):

2. Տերը պահպանում է արդարներին

Ճիշտ ինչպես Նոյը և նրա ընտանիքը փրկվեցին ջրհեղեղից իրենց արդարության շնորհիվ, Տերը պահպանեց արդար մարդկանց նաև Բաբելոնի աշտարակի ժամանակ: Համառոտ քննարկեք Հարեդի և նրա եղբոր պատմությունը, որը գտնվում է Եթերի 1.1–5, 33–37 հատվածներում և թե ինչու նրանց լեզուն չխառնվեց:

Տարբեր նավերի համեմատական չափսերը (Տես Ուշադրության կենտրոնացման վարժությունը



Դաս
7

Աբրահամի Ուխտը

Աբրահամ 1.1–4, 2.1–11, Ծննդոց ԺԲ.1–8, ԺԷ.1–9

Նպատակ

Օգնել դասարանի անդամներին հասկանալ Աբրահամի ուխտի օրհնություններն ու պարտականությունները:

Նախապատրաստում

1. Աղոթքով ուսումնասիրեք Աբրահամ 1.1–4, 2.1–11, Ծննդոց ԺԲ.1–8, ԺԷ.1–9: Աբրահամը ձգտում է արդար լինել և ապրել Աստծո օրհնություններին արժանի: Աստված ուխտ է կապում Աբրահամի հետ՝ խոստանալով, որ նա բազմաթիվ սերունդ է ունենալու, որը ստանալու է խոստացված երկիրը և քահանայության ու ավետարանի օրհնությունները:
2. Լրացուցիչ ընթերցանություն՝ Ծննդոց ԺԵ, Վարդապետություն և Ուխտեր 132.19–24, 29–32, «Աբրահամի ուխտը» Սուրբ Գրքերի Ուղեցույց, էջ 2:
3. Եթե հետևյալ նկարները մատչելի են, անհրաժեշտության դեպքում օգտագործեք դրանք որպես դասի բաղկացուցիչ մաս:

   Միսիոներների նկար (62611) և տեղական տաճարի նկարը:

Առաջարկվող դասի զարգացում

Ուշադրության կենտրոնացման վարժություն

Օգտագործեք հետևյալ վարժությունը (կամ ձեր սեփականը) դասը սկսելու համար:

- Ի՞նչ է հայրապետական օրհնությունը:

  Առաջին նախագահությունն ասել է. «Հայրապետական օրհնությունները ոգեշնչված հայտարարություն [են] ստացողի ազգատոհմի մասին, և Հոգու կողմից մղված, ոգեշնչված և մարգարեական հայտարարություն են ստացողի կյանքի առաքելության վերաբերյալ, այնպիսի օրհնությունների, զգուշացումների և խրախուսանքների հետ միասին, երբ հայրապետին այդպիսի հուշում է տրվում.... Բոլոր խոստացված օրհնությունների իրականացումը պայմանավորված է մեր Տիրոջ ավետարանին հավատարիմ լինելու վրա» (letter to stake presidents, 28 June 1957; quoted in Bruce R. McConkie, *Mormon Doctrine,* 2nd ed. [1966], 558):

- Ձեզանից քանի՞սն եք ստացել ձեր հայրապետական օրհնությունը: Ի՞նչ է նշանակում, երբ հայրապետը օրհնության մեջ հայտարարում է մեր ազգատոհմը: (Երբ հայրապետը հայտարարում է մեր ազգատոհմը, նա հայտնում է մեզ, որ մենք մարգարե Աբրահամի ժառանգներն ենք Եփրեմի, Մանասեի կամ Աբրահամի մյուս ժառանգների միջոցով):

Բացատրեք, որ այս դասը քննարկում է այն օրհնությունները, որոնք մենք կարող ենք ստանալ և այն պարտականությունները, որոնք մենք ունենք, որպես Աբրահամի ժառանգներ:

Սուրբ գրության քննարկում և կիրառում

Երբ սովորեցնեք հետևյալ սուրբ գրության հատվածը, քննարկեք թե ինչպես դրանք կարող եք կիրառել ամենօրյա կյանքում: Խրախուսեք դասարանի անդամներին կիսվել փորձառություններով, որոնք կապված են սուրբգրքյան սկզբունքների հետ:

1. Աստված ուխտ է կապում Աբրահամի հետ:

Ուսուցանեք և քննարկեք Աբրահամ 1.1–4, 2.1–11, և Ծննդոց ԺԲ.1–8, ԺԷ.1–9:

- Երբ Աբրահամը երիտասարդ տղամարդ էր, նա ուզում էր արդար լինել և Աստծո օրհնություններին արժանի ապրել: Համաձայն Աբրահամ 1.2–4 հատվածների ի՞նչ օրհնություններ էր կամենում Աբրահամը:
- Աստված Աբրահամին և նրա ընտանիքին հրահանգեց թողնել իրենց տունն Ուրում և ճամփա ընկնել մի երկիր, որ նրանք կոչում էին Խառան (Աբրահամ 2.1–4): Այնտեղ Աբրահամն աղոթեց և տեսիլք ստացավ, որով Աստված ուխտ կապեց օրհնելու նրան և նրա սերնդին: Սա կոչվում է Աբրահամի ուխտ: Ի՞նչ օրհնություններ Աստված խոստացավ Աբրահամին այս ուխտի մեջ: (Տես Աբրահամ 2.6–11, Ծննդոց ԺԲ.1–8, ԺԷ.1–9: Ձեզ գուցե անհրաժեշտ կլինի նշել, որ Աբրահամը ստիպված էր սպասել շատ տարիներ, մինչև այդ խոստացված օրհնություններից մի քանիսն իրականացան և դրանք դեռ իրականանում են այսօր):

  Հետևյալ աղյուսակը կարող է օգնել ձեզ ամփոփել Աբրահամի ուխտի օրհնությունները: Ձեզ գուցե անհրաժեշտը լինի դնել մի համառոտ աղյուսակ գրատախտակի վրա, տեղ թողնելով ավելացնելու «Պարտականություններ» բաժինը, ինչպես ցույց է տրված 29 էջում:

Աբրահամի ուխտի օրհնություններն ու պարտականությունները			
Երկրային օրհնություններ.	Ապրելու համար խոստացված երկիր (Աբրահամ 2.6, 19, Ծննդոց ԺԲ.7, ԺԷ.8):	Մեծ սերունդ (Աբրահամ 2.9–10, Ծննդոց ԺԲ.2–3, ԺԷ.2, 4–6)	Հիսուս Քրիստոսի ավետարանը և Աբրահամի ու իր սերնդի համար քահանայություն (Աբրահամ 2.9–11, Ծննդոց ԺԷ.7)
Հավերժական զուգահեռներ.	Սելեստիալ արքայություն (ՎԵՈՒ 88.17–20)	Հավերժական ամուսնություն և հավերժական աճ (ՎԵՈՒ 132.19–22)	Վեհացում և հավերժական կյանք (ՎԵՈՒ 132.23–24)

2. Մենք Աբրահամի ուխտի օրհնությունների և պարտականությունների ժառանգորդներն ենք:

Բացատրեք, որ բոլոր Եկեղեցու անդամները «Աբրահամի սերունդն են», որը նշանակում է՝ մենք նրա ժառանգներն ենք: Երեց Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթն ասել է. «Նրանց մեծամասնությունը, ովքեր դառնում են Եկեղեցու անդամներ, Աբրահամի բառացի ժառանգներն են Եփրեմի՝ Հովսեփի որդու միջոցով: Նրանք, ովքեր Աբրահամի և Իսրայելի բառացի ժառանգները չեն, պետք է դառնան այդպիսիք, և երբ նրանք մկրտվում են և հաստատվում, նրանք պատվաստվում են ծառին և որպես ժառանգներ արժանանում բոլոր իրավունքներին և արտոնություններին» (“How One May Become of the House of Israel,” *Improvement Era,* Oct. 1923, 1149):

- Որպես Աբրահամի սերունդ Եկեղեցու անդամներն Աբրահամի ուխտի օրհնությունների և պարտականությունների ժառանգորդներ են: Ինչպե՞ս ենք դառնում այս ուխտի ժառանգորդներ: (Երբ մկրտվում ենք Եկեղեցում, Աբրահամի ուխտի *փրկության* խոստումը վերականգվում է մեզ հետ: Երբ կնքվում ենք տաճարում, Աբրահամի ուխտի *վեհացման* խոստումը վերականգվում է մեզ հետ: Ուխտի օրհնությունները ստանալու համար, մենք պետք է կատարենք դրան զուգորդող պարտականությունները և արժանի ապրենք):

  Երեց Բրյուս Ռ. Մակքոնկին բացատրել է.

  «Սկզբում Աբրահամն ավետարանը ստացավ մկրտության միջոցով (որը փրկության ուխտն է), այնուհետև նրան շնորհվեց բարձրագույն քահանայություն և նա կնքեց սելեստիալ ամուսնության ուխտը (որը վեհացման ուխտն է), դրա միջոցով ձեռք բերելով հավաստում, որ նա կունենա հավերժական աճ, վերջում նա խոստում ստացավ, որ այս բոլոր օրհնությունները կառաջարկվեն ողջ իր մահկանացու սերնդին: (Աբր. 2.6–11, ՎԿՈ 132.29–50): Աբրահամին տրված աստվածային խոստումների շարքում էր հավաստիացումը, որ Քրիստոսը գալու էր նրա ազգատոհմի միջոցով և հավաստիացում, որ Աբրահամի սերունդը ստանալու էր հատուկ խոստացված ընտիր հողեր որպես հավերժական ժառանգություն: (Աբր. 2, Ծնն. ԺԷ, ԻԲ.15–18, Գաղ. Գ):

  Բոլոր այս խոստումները միասին վերցված կոչվում են *Աբրահամի ուխտ*: Այս ուխտը վերահաստատվեց Իսահակի հետ (Ծնն.— ԻԴ.60, ԻԶ.1–4, ԻԴ), այնուհետև, Հակոբի հետ (Ծնն. ԻԸ, ԼԵ.9–13, ԽԸ.3–4): *Դրա այն մասերը, որոնք վերաբերում են անձնական վեհացմանը և հավերժական աճին վերկանգվում են Իսրայելի տան յուրաքանչյուր անդամի հետ, որը կնքում է սելեստիալ ամուսնության ուխտը.* այդ կարգի միջոցով մասնակից կողմերը դառնում են Աբրահամի, Իսահակի և Հակոբի բոլոր օրհնությունների ժառանգորդները (ՎԿՈ 132, Հռովմ. Թ.4, Գաղ. Գ, Դ)» (*Mormon Doctrine,* 2nd ed. [1966], 13):

- Ի՞նչ օրհնություններ կարող ենք ստանալ Աբրահամի ուխտի միջոցով: (Մենք կարող ենք ստանալ այն բոլոր օրհնությունները, որոնք ստացավ Աբրահամը, ինչպես նշված է նախորդ աղյուսակում: Այդ օրհնությունները ներառում են ավետարանը, քահանայությունը, վեհացումը և հավերժական ընտանեկան հարաբերությունները):

- Որպես Աբրահամի ուխտի ժառանգորդներ՝ որո՞նք են մեր պարտականությունները (Տես Աբրահամ 2.9, 11, Ծնն. ԺԸ.19: Մենք պետք է օգնենք Աստծո բոլոր զավակներին, կենդանի թե մահացած, ստանալ ավետարանի լրիվ օրհնությունները: Մենք պետք է նաև հնազանդվենք Աստծո պատվիրաններին):

  Եթե դուք գրել եք 28 էջի աղյուսակը գրատախատակին, տեղ ավելացրեք աղյուսակի ներքևում, նշելով մեր հետևյալ պարտականությունները.

Պարտականություններ.	Օգնել Աստծո բոլոր զավակներին ստանալ ավետարանի լրիվ օրհնությունները (Աբրահամ 2.9, 11):	Հնազանդվել Աստծո պատվիրաններին (Ծնն. 18.19):

- Ինչպե՞ս կարող ենք օգնել ուրիշներին ստանալ ավետարանը: (Կատարելով միսիոներական աշխատանք, կատարելով տաճարային արարողություններ մահացածների համար և լինելով արդարակեցության օրինակներ: Անհրաժեշտության դեպքում ցույց տվեք որևէ տաճարի և միսիոներների նկար):

Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոնն ասել է. «Աբրահամի սերնդի, որը մենք ենք, պարտականությունն է լինել միսիոներ «տանել այս ծառայությունն ու Քահանայությունը բոլոր ազգերին » (Աբրահամ 2.9)» (in Conference Report, Apr. 1987, 107; or *Ensign*, May 1987, 85):

Երեց Բոյդ Ք. Փաքերը հետևյալ համեմատությունն է արել՝ շեշտելով ուրիշների հետ ավետարանով կիսվելու մեր պարտականության մասին.

Պատկերացրեք, որ մեր եպիսկոպոսը հանձնարարել է մեզ զբոսախնջույք ծրագրել ծխի անդամների համար: Այն պետք է լինի լավագույն ժամանցը ծխի պատմության մեջ և մենք չպետք է փող խնայենք: Մենք զբոսախնջույքի համար մի գեղեցիկ տեղ ենք պատվիրում: Այդ բոլորը միայն մենք պետք է վայելենք:

Գալիս է օրը և ամեն ինչ անթերի է: Սեղանները պատրաստ են և խնջույքը տպավորիչ է: Այնուհետև, ճիշտ ինչպես օրհնության մեջ է ասվում, մի հին ավտոմեքենա շրջվում է դեպի զբոսախնջույքի վայրը և ցեխաջուր ցայտելով մի կերպ արգելակում: Անհանգստացած տղամարդը բարձրացնում է կապոտը և դուրս է ցայտում տաք գոլորշու շիթը: Մի քանի երեխաներ դուրս են ցատկում մեքենայից: Մտահոգված մայրը, քանի որ բավականաչափ ուտելիք չկար, մի արկղ է տանում դեպի մոտակա սեղանը: Նա մի քանի ուտելիքի մնացորդներ է դնում իր սոված երեխաների համար, փորձելով սեղանին ճաշասեղանի տեսք տալ:

Հետո փոքրիկ աղջնակներից մեկը տեսնում է մեր սեղանը: Նա քաշում է իր փոքրիկ եղբորը դեպի մեզ և մտցնում իր գլուխն իմ և ձեր մեջտեղը: Մենք մի կողմ ենք քաշվում: Փոքրիկ աղջնակն ասում է. «Ապա նայի՛ր, հետաքրքիր է, ի՞նչ համ ունի այն»:

Ի՞նչ կարող էինք անել մենք: Մենք նրանց կանտեսեի՞նք, թե կխնդրեինք լուռ մնալ: Կշրջեի՞նք մեր մեջքը դեպի նրանց սեղանը և կտայինք նրանց մի քիչ մեր ավելորդ ուտելիքից, թե՞ կհրավիրեինք նրանց գալ և միանալ մեզ, նստել մեզ հետ և մասնակցել խրախճանքին և կօգնեինք վերանորոգել նրանց մեքենան և նրանց կտայինք ինչ-որ բան ճանապարհի համար:

Երեց Փաքերն ասում է. «Կարո՞ղ էր իրականում լինել ավելի մեծ վայելք, քան տեսնելը, որքան լավ կարող ենք այդ սոված երեխաներին կերակրել: Կարո՞ղ էր լինել ավելի մեծ բավականություն, քան մեր խնջույքն ընդհատելը, որպեսզի օգնեինք [նրանց] վերանորոգել ավտոմեքենան....

.... Ողջ աշխարհում և մեր շրջապատում կան մարդիկ՝ մեր հարևաններից, ընկերներից, մեր ընտանիքներից, ովքեր հոգևոր առումով ընչազուրկ են: Նրանցից մի քանիսը սովամահ են լինում: Եթե մենք պահենք այդ բոլորը մեզ, դա նման կլինի խրախճանք անել նրանց առջև, ովքեր սոված են» (in Conference Report, Apr. 1984, 59–61; or *Ensign*, May 1984, 41–42):

- Ի՞նչ է սովորեցնում մեզ այս համեմատությունն ավետարանի օրհնությունները ստանալու համար ուրիշներին օգնելու մեր պարտականության մասին. (Մենք օրհնված ենք ավետարանի լրիվությամբ՝ մեծագույն խրախճանքը, որ աշխարհը երբևէ իմացել է [ՎԵՈՒ 58.8–12]: Աստված ուզում է, որ մենք կիսվենք այս օրհնությամբ ուրիշների հետ՝ ինչպես ողջերի հետ, այնպես էլ մահացածների):
- Ինչպե՞ս է մեր հայրապետական օրհնության մեջ ազգատոհմի հայտարարումը նմանվում մի կանչի՝ որպես Աբրահամի ուխտի ժառանգորդներ մեր պարտականություններն իրականացնելու համար (Հայտարարելով, որ մենք Աբրահամի սերունդն ենք, մեր հայրապետական օրհնությունը կրկին շեշտում է Աբրահամի ուխտի մեր օրհնությունները ստանալու մեր արտոնությունը և դրա պարտականությունները կատարելու մեր պարտավորությունը):

Եզրափակում

Վկայություն բերեք Աբրահամի ուխտի օրհնությունների մասին: Խրախուսեք դասարանի անդամներին կատարել իրենց պարտականությունները որպես այս ուխտի ժառանգորդներ:

Ուսուցման լրացուցիչ գաղափար

Հետևյալ նյութն օժանդակում է առաջարկվող դասի ուրվագծին: Անհրաժեշտության դեպքում օգտագործեք այն որպես դասի բաղկացուցիչ մաս:

Աշխարհում ապրելու մարտակոչը

Բացատրեք, որ հնադարյան Իսրայելացիները շրջապատված էին շատ ազգերով, որոնց ժողովուրդը չէին հավատում ճշմարիտ Աստծուն: Այս ազգերի թվում էին ասորեստանցիները, բաբելոնացիները, եգիպտացիները և ուրիշներ:

- Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ Տերն իր ուխտի ժողովրդին դրեց հին աշխարհի մեջտեղում, փոխարեն դնելու այնպիսի տեղում, որտեղ նրանք կկարողանային հանգիստ ապրել: (Տես Երկրորդ Օրինաց Դ.6–8: Նա ուզում էր, որ նրանք օրինակ լինեին ուրիշների համար և կատարեին ազգերն օրհնելու Աբրահամի ուխտը):

  Բացատրեք, որ Հին Կտակարանի բազմաթիվ պատմություններ ցույց են տալիս իրենց ուխտերը պահելու և արդարության համար ուրիշների վրա ազդելու Տիրոջ ժողովրդի հաջողությունը կամ ձախողումը: Աբրահամը, Հովսեփը, Դանիելը, Եսթերը և շատ ուրիշներ արդար ազդեցություն էին գործում: Սամփսոնը, Աքաաբը, անապատում թափառող Իսրայելի զավակները և ուրիշներ, թույլ տվեցին, որ աշխարհն ազդի իրենց վրա:

  Ինչպես նա արեց հնադարյան Իսրայելի հետ, Տերը մեզ՝ իր վերջին օրերի ուխտի ժողովրդին, դրել է աշխարհի մեջտեղում: Մեր մարտակոչն է ազդել աշխարհի վրա արդարության ուղիներով և թույլ չտալ, որ աշխարհն ազդի մեզ վրա անարդար ուղիներով:

Արդար ապրելով ամբարիշտ աշխարհում

Դաս
8

Ծննդոց ԺԳ–ԺԴ, ԺԸ–ԺԹ

Նպատակ

Զորացնել դասարանի յուրաքանչյուր անդամի վճռականությունը՝ աճող ամբարշտության ժամանակներում և այդ ընթացքում ամուր կառչել արդարության չափանիշներից:

Նախապատրաստում

1. Աղոթքով ուսումնասիրեք հետևյալ սուրբ գրությունները: Նկատառում. Ծննդոց ԺԷ.5 հատվածն ասում է, որ Տերը փոխեց Աբրամ անունն Աբրահամ անունով: Այս դասի ողջ ընթացքում օգտագործվում է *Աբրահամ* անունը:

   ա. Ծննդոց ԺԳ: Քանանի երկրում սովի պատճառով, Եգիպտոսում որոշ ժամանակ ապրելուց հետո, Աբրահամն ու իր ընտանիքը վերադառնում են Քանան: Աբրահամը բնակություն է հաստատում Քեբրոնում, իսկ նրա եղբոր որդին՝ Ղովտը բնակություն է հաստատում Սոդոմի մոտակայքում:

   բ. Ծննդոց ԺԴ.1–2, 8–24: Ղովտը գերի է վերցվում թագավորների ճակատամարտերի ժամանակ և ազատվում է Աբրահամի կողմից (14.1–2, 8–16): Աբրահամը տասանորդ է վճարում Մելքիսեդեկին և հրաժարվում ընդունել պատերազմի ավարը Սոդոմի թագավորից (ԺԴ.17–24):

   գ. Ծննդոց ԺԸ.16–33, ԺԹ.1–29: Տերը հայտարարում է, որ նա կկործանի Սոդոմն ու Գոմորը մարդկանց ամբարշտության պատճառով (ԺԸ.16–22): Աբրահամն աղաչում է Տիրոջը խնայել քաղաքները, եթե նա կարողանա այնտեղ ապրող արդար մարդիկ գտնել (18:23–33): Ղովտին և նրա ընտանիքին պատվիրվում է թողնել Սոդոմը (ԺԹ.1–23. նշեք, որ Ծննդոց ԺԹ.11–13 հատվածների Ջոզեֆ Սմիթի Թարգմանության մեջ ասվում է, որ Ղովտը *չէր* առաջարկել իր դուստրերին Սոդոմի մարդկանց, այլ նա փորձում էր պաշտպանել իր դուստրերին այդ մարդկանցից): Տերը կործանում է Սոդոմն ու Գոմորը (ԺԹ.24–29):

2. Լրացուցիչ ընթերցանություն՝ Ծննդոց ԺԲ, Ջոզեֆ Սմիթի Թարգմանություն, Ծննդոց 14.25–40, 19.9–15:

3. Ուշադրության վարժությունն օգտագործելու համար դասարան բերեք մի թարմ լրագիր:

Առաջարկվող դասի զարգացում

Ուշադրության կենտրոնացման վարժություն

Անհրաժեշտության դեպքում օգտագործեք հետևյալ վարժությունը (կամ ձեր սեփականը) դասը սկսելու համար:

Դասարանին ցույց տվեք մի թարմ լրագիր: Առանց կանգ առնելու նորությունների հատուկ կետերի վրա, մեկնաբանեք, թե ինչպես ենք մենք շրջապատված անարդար ազդեցություններով: Բացատրեք, որ այս դասն արդար լինելու կարևորության մասին է, նույնիսկ, երբ ողջ մեր շրջապատում ամբարշտություն է:

Սուրբ գրության քննարկում և կիրառում

Երբ սովորեցնեք հետևյալ սուրբ գրության հատվածը, քննարկեք թե ինչպես է այն վերաբերում մեր ամենօրյա կյանքին: Խրախուսեք դասարանի անդամներին կիսվել փորձառություններով, որոնք կապված են սուրբգրքյան սկզբունքների հետ:

1. Աբրահամն ու իր ընտանիքը բնակություն են հաստատում Քեբրոնում, իսկ Ղովտն ու իր ընտանիքը բնակություն են հաստատում Սոդոմի շրջակայքում:

Ուսուցանեք և քննարկեք Ծննդոց ԺԳ գլուխը:

Անհրաժեշտության դեպքում համառոտ ներկայացրեք Աբրահամի կյանքի այս շրջանի ճամփորդությունները: Նա մեծացել էր Քաղդեայի Ուրում, ապա Տիրոջ կողմից առաջնորդվել բնակվելու Խառանում (Ծննդոց ԺԱ.31, Աբրահամ 2.1–5): Ավելի ուշ Տերն առաջնորդեց նրան Խառանից դեպի Քանանի երկիրը և խոստացավ. «Քո սերնդին պիտի տամ այս երկիրը» (Ծննդոց ԺԲ.7}: Քանանում սովի պատճառով Աբրահամը և նրա ընտանիքը գնաց Եգիպտոս (ԺԲ.10): Ծննդոց ԺԳ գլուխը սկսվում է Եգիպտոսից Աբրահամի և նրա ընտանիքի վերադարձով դեպի Քանան:

- Ինչո՞ւ Աբրահամն ու Ղովտը և նրանց ընտանիքները չկարողացան միասին ապրել, երբ Եգիպտոսից վերադարձան Քանան (Տես Ծննդոց ԺԳ.5–7): Ի՞նչ ենք սովորում Աբրահամի մասին Ծննդոց ԺԳ.8–9 հատվածներում նրա դատողություններից: Ինչպե՞ս կարող ենք հետևել Աբրահամի օրինակին, երբ հակասություններ ունենանք ընտանիքի անդամների կամ ուրիշների հետ:
- Որտե՞ղ ընտրեց Ղովտն ապրել (Տես Ծննդոց ԺԳ.10–12): Նշեք, որ Սոդոմի ժողովուրդը չափազանց ամբարիշտ էր (Ծննդոց ԺԳ.13), բայց Ղովտը միևնույն է որոշեց ապրել նրանց մոտ: Ի՞նչը Սոդոմի մոտակա հողը գրավիչ դարձրեց Ղովտի համար (Տես Ծննդոց ԺԳ.10: Այն լավ ջրված էր և գեղեցիկ):
- Սկզբում Ղովտը «ապրեց հարթավայրի քաղաքներում» Սոդոմից դուրս, բայց նա «իր վրանները խփեց դեպի Սոդոմը» (Ծննդոց ԺԳ.12): Ավելի ուշ նա ապրեց հենց Սոդոմ քաղաքում (ԺԴ.12): Ի՞նչ բաներ կարող է մենք անենք, որոնք հոգևոր առումով նմանատիպ է մեր վրանները դեպի Սոդոմ խփելուն (Մենք կարող ենք հարաբերվել չար բաների հետ, փոխարեն դրանք հեռու վանելու, կամ կարող ենք թույլ տալ մեզ գործել փոքր մեղքեր, առանց մտածելու, որ դրանք կարող են տանել ավելի մեծ մեղքերի):
- Ղովտի նման Բենիամին թագավորի մարդիկ էլ Մորմոնի Գրքում իրենց վրանները խփեցին որոշակի ուղղությամբ: Ի՞նչ ուղղությամբ էին նայում նրանց վրանները (Տես Մոսիա 2.6): Ինչպե՞ս կարող ենք ուղղել մեր տները դեպի տաճարն աշխարհիկ վայրերի փոխարեն:

2. Աբրահամն ազատում է Ղովտին, տասանորդ վճարում Մելքիսեդեկին և հրաժարվում ընդունել պատերազմի ավարը Սոդոմի թագավորից:

Ուսուցանեք և քննարկեք Ծննդոց ԺԴ.1–2, 8–24:

- Երբ Ղովտն ապրում էր Սոդոմում, մի քանի քաղաք պետությունների թագավորներ, ներառյալ Սոդոմն ու Գոմորը, սկսեցին պատերազմել միմյանց հետ (Ծննդոց ԺԴ. 1–2, 8–9): Ի՞նչ պատահեց Ղովտին այդ պատերազմի ժամանակ (Տես Ծննդոց ԺԴ.10–12): Ինչպե՞ս Աբրահամն օգնեց Ղովտին, հետո երբ Ղովտը գերի էր վերցվել (Տես Ծննդոց ԺԴ.13–16):
- Ո՞ւմ հանդիպեց Աբրահամը Ղովտին ազատելուց հետո (Տես Ծննդոց ԺԴ.17–18): Ո՞վ էր Մելքիսեդեկը (Տես Ծննդոց ԺԴ.18, տես նաև ՎԿՈՒ 107.1–2): Ի՞նչ տվեց Աբրահամը Մելքիսեդեկին (Տես Ծննդոց ԺԴ.20, տես նաև Ջոզեֆ Սմիթ Թարգմանություն, Ծննդոց 14.36–40):
- Ինչո՞ւ Աբրահամը հրաժարվեց Սոդոմի թագավորից նույնիսկ մի թել ընդունել որպես պարգև: (Տես Ծննդոց ԺԴ.21–24: Նա չէր ցանկանում ստանալ որևէ բան անարդար թագավորից): Ի՞նչը կարող է անբարոյականության մի «թել»-ը լինել այսօրվա աշխարհում: Ի՞նչը կարող է լինել անազնվության մի «թել»-ը: Ինչպե՞ս ենք երբեմն համաձայնության

գալիս անարդարության հետ՝ ձգտելով որոշակի զվարճության: Ինչո՞ւ է կարևոր, որ մենք փորձենք նույնիսկ փոքր չափի աշխարհիկ ձևեր թույլ չտալ, որ մեր կյանք մտնի (Տես 2 Նեփի 28.20–21):

- Ի՞նչ կարող ենք սովորել Տիրոջ հանդեպ Աբրահամի նվիրվածությունից՝ համեմատելով նրա վերաբերմունքը Մելքիսեդեկի և Սոդոմի թագավորի հետ:

3. Տերը կործանում է Սոդոմն ու Գոմորը:

Ուսուցանեք և քննարկեք Ծննդոց ԺԸ.16–33, ԺԹ.1–29:

- Սոդոմի և Գոմորի ժողովրդի անօրինության պատճառով, Տերը ծրագրեց կործանել այդ քաղաքները (Ծննդոց ԺԸ.20–21): Ի՞նչ հարցրեց Տիրոջից Աբրահամն այս ծրագրի մասին իմանալուց հետո (Տես Ծննդոց ԺԸ.23–32): Ի՞նչ կարող ենք իմանալ այն փաստից, որ Տերը կամենում էր խնայել քաղաքները, եթե դրանցում հնարավոր լիներ արդար մարդիկ գտնել:
- Ինչո՞ւ Ղովտին պատվիրվեց թողնել Սոդոմը (Տես Ծննդոց ԺԹ.12–13,15): Ինչպե՞ս վերաբերվեցին Ղովտի փեսաները, երբ նա հորդորեց նրանց մեկնել իրենց հետ: (Տես Ծննդոց ԺԹ.14): Ինչո՞ւ որոշ մարդիկ հրաժարվում են հեռու մնալ վատ ազդեցություններից, նույնիսկ, երբ նրանք տեղեկացվում են վտանգի մասին:
- Ի՞նչ խորհուրդ տվեցին հրեշտակները, երբ Ղովտն ու իր ընտանիքը թողեցին քաղաքը (Տես Ծննդոց ԺԹ.17): Նշեք, որ նույնպիսի խորհուրդ է տվել Փրկիչն իր հետևորդներին (Ղուկաս Թ.62, ԺԷ.29–32, ՎԱՈՒ 133.14–15): Ի՞նչ է իրենից ներկայացնում «ետ նայելը»: (Մեզանից խնդրված բաները դժկամությամբ կատարելը կամ՝ հրաժարվելը, Քրիստոսին հետևելու ոչ լիակատար պարտավորվածությունը): Ինչպե՞ս կարող ենք մենք, երբեմն «ետ նայել»:
- Ի՞նչ պատահեց Ղովտի կնոջը, երբ նա ետ նայեց Սոդոմին (Տես Ծննդոց ԺԸ.26): Ի՞նչ կարող է Ղովտի կնոջ պատմությունը սովորեցնել մեզ ապաշխարության մասին: (Ապաշխարելու համար մենք պետք է փոխենք մեր սրտերը և վարքը: Այդ անելու համար մենք երբեմն պետք է ընտրենք նոր շրջապատ և նոր ընկերներ):
- Ի՞նչ կորցրեց Ղովտը «իր վրանները դեպի Սոդոմ խփելու պատճառով»: Ի՞նչ ենք պատրաստվում կորցնել, երբ մեզ մի վիճակում ենք դնում, որում մենք գիտենք, որ կգայթակղվենք: Ինչպե՞ս ենք ազդեցության տակ ընկնում, երբ թույլ ենք տալիս մեզ շրջապատվել չարով, նույնիսկ եթե մենք ուղղակիորեն չենք մասնակցում մեղսավոր գործողությունների:
- Ի՞նչ է հուշում Ծննդոց ԺԹ.29 հատվածը, ի՞նչն էր Ղովտին խնայելու պատճառը, երբ Սոդոմն ու Գոմորը կործանվեցին (Տերը հիշեց Աբրահամի արդարությունը): Ինչպե՞ս կարող է մեր արդար վարքը օգնել ուրիշներին:

  Նախագահ Վ. Քիմբալն ասել է. «Մեր աշխարհն այսօր շատ բաներով նույնն է ինչպես Նեփիացի մարգարեի օրերում էր, որն ասել է. «.... եթե չլինեն արդարների աղոթքները.... ձեզ հենց հիմա լիակատար կործանում կայցելի....» (Ալմա 10.22): Անկասկած, կան շատ-շատ ուղղամիտ և հավատարիմ մարդիկ, ովքեր ապրում են բոլոր պատվիրաններով, և որոնց կյանքն ու աղոթքները պահպանում են աշխարհը կործանումից» (in Conference Report, Apr. 1971, 7; or *Ensign*, June 1971, 16):

Եզրափակում

Վկայեք մեզ մեղքից զերծ պահելու կարևորության մասին, նույնիսկ, երբ չարը ողջ մեր շրջապատում է: Խրախուսեք դասարանի անդամներին ձգտել արդարությամբ ազդել աշխարհի վրա , փոխարենը թույլ տալու, որ աշխարհիկ բաներն ազդեն իրենց վրա:

Անհրաժեշտության դեպքում եզրափակեք Երեց Մ. Ռասսել Բալլարդի խոսքերով.

«Եկեղեցում մենք հաճախ ենք կրկնում այս կարգախոսը. «Եղեք աշխարհում, բայց ոչ աշխարհից»: Երբ դիտում ենք հեռուստահաղորդումներ, որոնք դարձնում են հայհոյանքը, բռնությունը և անհավատարմությունը սովորական երևույթ և նույնիսկ գայթակղիչ, մենք հաճախ ցանկանում ենք ինչ-որ ձևով փակվել աշխարհից և մեկուսացնել մեր ընտանիքներն այդ բոլորից....

Հավանաբար, մենք պետք է ասենք վերը նշված կարգախոսը որպես երկու առանձին հորդորներ: Առաջինը. *«Եղեք աշխարհում»:* Եղեք ներգրավված, եղեք տեղեկացված: Փորձեք լինել հասկացող և համբերատար և գնահատեք հակառակորդին: Հասարակության համար կատարեք իմաստալի ներդրումներ՝ ծառայության և մասնակցության միջոցով: Երկրորդը. *«Մի եղեք աշխարհից»:* Մի հետևեք սխալ ուղիների, ոչ էլ հակվեք հարմարվելու կամ ընդունելու այն, ինչը ճիշտ չէ....

Եկեղեցու անդամները պետք է ավելի շատ ազդեն, քան ազդվեն: Մենք պետք է աշխատենք դիմադրել մեղքի և չարի հոսանքին, ինքնաբերաբար դրանից քշվելու փոխարեն: Մեզանից յուրաքանչյուրը պետք է օգնի ավելի շուտ լուծել խնդիրը, քան խուսափել կամ անտեսել այն» (in Conference Report, Apr. 1989, 100–101; or *Ensign,* May 1989, 80):

Ուսուցման համար լրացուցիչ գաղափարներ

Հետևյալ նյութն օժանդակում է առաջարկվող դասի ուրվագծին: Անհրաժեշտության դեպքում օգտագործեք այն որպես դասի բաղկացուցիչ մաս:

1. Սոդոմի և Գոմորի մեղքերը

Ինչպես ներկայացված է Ծննդոց ԺԹ.4–11 հատվածներում և 19.9–15 հատվածների Ջոզեֆ Սմիթի Թարգմանությունում, Սոդոմի և Գոմորի ժողովուրդը կատարում էին ծանր սեռական մեղքեր: Բայց այս մեղքերը, չնայած ծանր էին, միակ մեղքերը չէին, որոնց համար քաղաքները կործանվեցին: Օգնեք դասարանի անդամներին հասկանալ, որ մենք կարող ենք կործանվել ինչպես մեծ նույնպես էլ փոքր թվացող մեղքերից, :

2. Առաջնորդել օրինակով

Ցույց տալու համար, որ Վերջին Օրերի Սրբերը կարող են բարու չափանիշ լինել ու ազդել, աշխարհի ազդեցության տակ ընկնելու փոխարեն, դուք կարող եք ցույց տալ «Առաջնորդել օրինակով» յոթ րոպեանոց հատված *Հին Կտակարանի Տեսանյութերից* (53224): Այս հատվածում երիտասարդ կնոջ օրինակն օգնում է մի ընկերոջ դարձի գալ դեպի Հիսուս Քրիստոսի ավետարանը:

«Աստված կտեսնէ իր գառը ողջակեզի համար»

Դաս
9

Աբրահամ 1, Ծննդոց ԺԵ–ԺԷ, ԻԱ–ԻԲ

Նպատակ

Օգնեք դասարանի անդամներին ավելի լավ հասկանալ Երկնային Հոր զոհաբերությունն իր Որդուն նվիրաբերելիս, երբ նրանք սովորեն Իսահակին զոհաբերելու Աբրահամի պատրաստակամության մասին:

Նախապատրաստում

1. Աղոթքով ուսումնասիրեք հետևյալ սուրբ գրությունները: Ուշադրություն դարձրեք՝ Ծննդոց ԺԷ գլուխը պատմում է Տիրոջ կողմից «Աբրամ» անունն «Աբրահամ»–ով և «Սարա» անունը «Սարրա»-ով փոխելու մասին: (տես 5, 15 հատվածները): Այս դասում օգտագործվում են Աբրահամ և Սարրա անունները:

   ա. Աբրահամ 1.1, 5–20: Երիտասարդ տարիքում Աբրահամը հալածվում է Փարավոնի կեղծ քահանաների կողմից: Նրանք փորձում են նրան զոհաբերություն մատուցել, բայց նա փրկվում է Եհովայի կողմից:

   բ. Ծննդոց ԺԵ–ԺԷ, ԻԱ: Հետագայում իր կյանքի ընթացքում Աբրահամը ցանկանում է զավակ ունենալ և նրան խոստում է տրվում, որ սերունդ կունենա (ԺԵ.1–6): Սարրան Հագարին կնության է տալիս Աբրահամին: Հագարը ծնում է Իսմայելին (ԺԶ.1–16): Աստված կրկին խոսում է Աբրահամի հետ իր ուխտի մասին, խոստանալով, որ նա կլինի բազում ազգերի հայր (ԺԷ.1–14, տես դաս 7): Հայտարարվում է Իսահակի ծնունդը, որի միջոցով կշարունակվի ուխտը (ԺԷ.16–22): Սարրան ծնում է Իսահակին (ԻԱ.1–12):

   գ. Ծննդոց ԻԲ: Աստված Աբրահամին պատվիրում է զոհաբերել Իսահակին (ԻԲ.1–2): Աբրահամը պատրաստվում է զոհաբերել Իսահակին, բայց Աստված զոհաբերության համար փոխարենը մի խոյ է տալիս (ԻԲ.3–19):

2. Լրացուցիչ ընթերցանություն՝ Եբրայեցիս ԺԱ.8–19, Հակոբոս Բ.21–23, Հակոբ 4.5, Վարդապետություն և Ուխտեր 132.34–36:

3. Եթե դուք օգտագործելու եք ուշադրության երկրորդ վարժությունը, այս դասից առնվազն մեկ շաբաթ առաջ խնդրեք մի քանի դասարանի անդամների պատրաստվել պատմելու մի ժամանակի մասին, երբ նրանք օրհնվել են, որովհետև կամեցել են զոհաբերել:

4. Եթե հետևյալ նկարները մատչելի են, անհրաժեշտության դեպքում օգտագործեք դրանցից մի քանիսը, որպես դասի բաղկացուցիչ մաս:

   Նկարներ Հրեշտակը փրկում է Աբրահամին (62607, Ավետարանական Արվեստի Նկարների Հավաքածու 104) և Աբրահամը տանում է Իսահակին զոհաբերելու (62054, Ավետարանական Արվեստի Հավաքածու 105):

Առաջարկվող դասի զարգացում

Ուշադրության կենտրոնացման վարժություն

Դուք գուցե ցանկանաք օգտագործել հետևյալ վարժություններից մեկը (կամ ձեր սեփականը) դասը սկսելու համար: Ընտրեք այն վարժությունը, որը կլինի ամենահարմարը դասարանի համար:

1. Խնդրեք դասարանի անդամներին մտածել մի անձնավորության մասին, որին նրանք շատ են սիրում կամ ունեցվածքի մասին, որը բարձր են գնահատում:
   - Ի՞նչ կզգայիք, եթե Աստված խնդրեր ձեզ հրաժարվել կամ զոհաբերել այդ անձնավորությանը կամ այդ ունեցվածքը: Ի՞նչ կանեիք դուք:
2. Հրավիրեք դասարանի մի քանի անդամների պատմել մի ժամանակի մասին, երբ նրանք օրհնվել են, որովհետև կամեցել են զոհաբերել:

Այս վարժություններից որևէ մեկից հետո, բացատրեք, որ Աստված պատվիրեց Աբրահամին զոհաբերել իր որդի Իսահակին, որին Աբրահամը շատ էր սիրում: Չնայած Աբրահամից չպահանջվեց վերջին հաշվով կատարել այդ զոհաբերությունը, այդ անելու նրա պատրաստակամությունը «արդարություն համարվեց նրան»: Աբրահամի արդարության համար, նա և նրա հետնորդները մեծապես օրհնվեցին:

Սուրբ գրության քննարկում և կիրառում

Երբ սովորեցնում եք հետևյալ հատվածները, քննարկեք, թե ինչպես են դրանք առնչվում առօրյա կյանքին: Խրախուսեք դասարանի անդամներին կիսվել փորձառություններով, որոնք կապված են սուրբգրքյան սկզբունքներին:

1. Փարավոնի կեղծ քահանաները քիչ էր մնում կուռքի զոհ դարձնեին Աբրահամին:

Ուսուցանեք և քննարկեք Աբրահամ 1.1, 5–20: Այս դասի մի մասը կենտրոնացած է Աստծո պատվիրանի վրա, որ Աբրահամը զոհաբերելու էր Իսահակին: Որպեսզի օգնեք դասարանի անդամներին հասկանալ այս պատվիրանի կարևորությունը և Աբրահամի հավատքի խորությունը, դասն սկսվում է համառոտ քննարկմամբ Աբրահամի փորձառության մասին, երբ երիտասարդ հասակում նա քիչ էր մնում կուռքի զոհ դառնար Փարավոնի կեղծ քահանայի կողմից:

- Ինչպիսի՞ն էին Քաղդեացիների պայմանները, երբ Աբրահամն ապրում էր այնտեղ (Տես Աբրահամ 1.1, 5–8): Ի՞նչ փորձեցին անել Փարավոնի կեղծ քահանաներն Աբրահամին (Տես Աբրահամ 1.7, 12): Ինչպե՞ս ազատվեց Աբրահամն այս կեղծ քահանաներից (Տես Աբրահամ 1.15–16, 20):
- Ինչպե՞ս կարող էր կեղծ քահանաների խորանի վրա Աբրահամի փորձառությունը օգնել պատրաստվելու ապագա փորձություններին: Ինչպե՞ս կարող են մեր փորձություններն օգնել մեզ նախապատրաստվել ապագա դժվարություններին:

2. Աբրահամը երեխաներ է ունենում Հագարից և Սարրայից:

Ուսուցանեք և քննարկեք Ծննդոց ԺԵ–ԺԸ, ԻԱ գլուխները:

- Ի՞նչ խոստում տվեց Տերն Աբրահամին երեխաների վերաբերյալ (Տես Ծննդոց ԺԵ.1–6): Ինչո՞ւ Սարրան Հագարին որպես կին տվեց Աբրահամին (Տես Ծննդոց ԺԶ.1–3, ՎԿՈՒ132.34–35): Ի՞նչ խոստում տվեց Տերը Հագարին (Տես Ծննդոց ԺԶ.10–11):
- Ի՞նչ հայտնեց Աստված Աբրահամին Ծննդոց ԺԷ.15–16,19 և 21 հատվածներում: Ի՞նչ պատասխանեց Աբրահամը (Տես Ծննդոց ԺԷ.17: Ուշադրություն դարձրեք, որ չնայած Աստվածաշնչի Հակոբոս Թագավորի տարբերակն ասում է, որ Աբրահամը «ծիծաղեց», երբ նա լսեց, որ Սարրան որդի է ունենալու, Եբրայերեն բառի մյուս իմաստը «ուրախանալն» է: Աստվածաշնչի Ջոզեֆ Սմիթի Թարգմանությունն ասում է, որ Աբրահամը «ուրախացավ» այդ նորությամբ):
- Ի՞նչ կարող է Աբրահամի և Սարրայի տղա ունենալու մասին հայտնությունը սովորեցնել մեզ այն մասին, թե ինչպես է Աստված կատարում իր խոստումները:

(Աստված կիրականացնի իր խոստումները, չնայած՝ ոչ պարտադիր այն ձևով կամ այն ժամանակ, որ մենք կարող է սպասենք: Նշեք, որ Աբրահամը և շատ ուրիշներ սուրբ գրություններում ստիպված էին հավատարմորեն սպասել շատ տարիներ, նախքան խոստացված օրհնությունները կտրվեին):

- Ի՞նչով էին Իսահակին Աստծո կողմից տրված օրհնությունները տարբեր Իսմայելին տրված օրհնություններից (Տես Ծննդոց ԺԷ.19–21):

3. Աստված պատվիրում է Աբրահամին զոհաբերել Իսահակին:

Ուսուցեք և քննարկեք Ծննդոց ԻԲ գլուխը:

- Ի՞նչու է Աստված խնդրում Աբրահամին զոհաբերել Իսահակին (Տես Ծննդոց ԺԲ.1:): Ի՞նչու էր սա Աբրահամի համար դժվարին ստուգարք: (Ոչ միայն այն պատճառով, որ Իսահակը նրա որդին էր, այլ Աստված խոստացել էր, որ Աբրահամի ուխտը շարունակվելու էր Իսահակի և նրա ժառանգների միջոցով [Ծննդոց ԺԷ.19]: Մեկ այլ պատճառ, որ կարող էր դժվար լինել, այն էր, որ երիտասարդ տարիքում Աբրահամն ինքը քիչ էր մնացել կուռքի զոհ դառնար Փարավոնի կեղծ քահանաների կողմից [Աբրահամ 1.1, 5–20]):
- Ինչպե՞ս պատասխանեց Աբրահամը Իսահակին զոհաբերելու Աստծո պատվիրանին (Տես Ծննդոց ԻԲ.2–3): Ի՞նչ կարող ենք սովորել Աբրահամից հավատքի և հնազանդության մասին (Տես Եբրայեցիս ԺԱ.17–19, Հակոբոս Բ.21–23):
- Ինչպե՞ս արձագանքեց Իսահակն այս իրավիճակին (Տես Ծննդոց ԻԲ.3–10: (Չկա ոչ մի ակնարկ, որ Իսահակը դիմադրեց իրեն զոհաբերելու Աբրահամի մտադրությանը):

  Երեց Դալլին Հ. Օուքսը բացատրել է. «Երբ նրանք հասան նշանակված վայրը, Աբրահամը զոհասեղան պատրաստեց և փայտ դրեց վրան: Հետո Աստվածաշունչն ասում է. «Աբրահամը.... իր որդի Իսահակին կապեց՝ սեղանի վրա դրավ նրան փայտերի վրայից» (Ծննդոց ԻԲ.9): Ի՞նչ մտածեց Իսահակը, երբ Աբրահամն այդպիսի տարօրինակ բան արեց: Աստվածաշունչը չի նշում որևէ պայքար կամ դիմադրություն: Իսահակի լռությունը կարող է բացատրվել իր հոր հանդեպ միայն նրա վստահությամբ և հնազանդությամբ» (in Conference Report, Oct. 1992, 51; or *Ensign*, Nov. 1992, 37):
- Իսահակին զոհաբերելու Աբրահամի պատրաստակամությունը Երկնային Հոր կողմից իր Միածին Որդուն զոհաբերելու պատրաստակամության նմանությամբ էր (Հակոբ 4.5, Ծննդոց ԻԲ.8, 13): Որո՞նք են Աբրահամի և Երկնային Հոր փորձառությունների միջև առկա որոշ նմանությունները: Ո՞րն է մեծագույն տարբերությունը:
- Ի՞նչ ձևով կարող ենք մեզ համեմատել Իսահակի հետ: Եթե Իսահակը ներկայացնում է մեզ, ո՞ւմ է ներկայացնում մացառներում բռնված խոյը: Ինչպե՞ս են այս համեմատությունները օգնում ձեզ ավելի լավ հասկանալ իր Որդուն զոհաբերելիս Երկնային Հոր սերը ձեր հանդեպ:

  Երեց Դալլին Հ.Օուքսն ասել է. «Այս պատմությունը.... ցույց է տալիս Աստծո բարությունը Իսահակին պահպանելիս և փոխարինող ապահովելիս, որպեսզի նա ստիպված չլիներ մահանալ: Մեր մեղքերի և մահկանացու լինելու պատճառով, Իսահակի նման մենք դատապարտված ենք մահվան: Երբ հույսն ամբողջությամբ հեռանում է, մեր Հայրը, որ Երկնքում է, ապահովում է Աստծո Գառին և մենք փրկվում ենք նրա զոհաբերությամբ» (in Conference Report, Oct. 1992, 51; or *Ensign*, Nov. 1992, 37):
- Ի՞նչ ապացուցեց Աբրահամն այս ստուգարքի միջոցով (Տես Ծննդոց ԻԲ.11–12): Հրավիրեք դասարանի անդամներին պատմել այլ իրավիճակների մասին՝ սուրբ գրություններից կամ անձնական կյանքից, որտեղ անձինք ստուգվում են որպես մի հնարավորություն ապացուցելու իրենց հավատարմությունը: Խնդրեք դասարանի

անդամներին նույնպես պատմել այն ուրախության և օրհնությունների մասին, որոնք եկել են հավատարմությունն ապացուցելու միջոցով:

- Ինչո՞ւ է Իսահակն ակնարկվում Ծննդոց ԻԲ.16 հատվածում որպես Աբրահամի միակ որդի (Իսահակն այն որդին էր, որի միջոցով շարունակվելու էր ուխտը: Այս ակնարկը նաև շեշտում է զուգահեռը Իսահակի և մեր Փրկչի՝ Հոր Միածին Որդու միջև): Ի՞նչ օրհնություններ էին խոստացվել Աբրահամին իր հավատարմության շնորհիվ (Տես Ծննդոց ԻԲ.15–18): Ի՞նչ օրհնություններ են մեզ խոստացվում Աբրահամի ուխտի միջոցով (Տես դաս 7): Որպես Աբրահամի ուխտի ժառանգներ՝ որո՞նք են մեր պարտականությունները:

Եզրափակում

Արտահայտեք ձեր երախտագիտությունն Աբրահամի կողմից ցույց տրված հավատքի և հնազանդության օրինակի համար: Վկայեք, որ Իսահակին զոհաբերելու Աբրահամի պատրաստակամությունն իր Միածին Որդուն զոհաբերելու Երկնային Հոր պատրաստակամության օրինակն է: Հրավիրեք դասարանի անդամներին կիսվել իրենց զգացումներով Քավության և այն մեծ սիրո մասին, որ Երկնային Հայրն ու Հիսուս Քրիստոսն ունեն մեր հանդեպ:

Ուսուցման համար լրացուցիչ գաղափարներ

Հետևյալ նյութն օժանդակում է առաջարկվող դասի ուրվագծին: Անհրաժեշտության դեպքում օգտագործեք այն որպես դասի բաղկացուցիչ մաս:

1. Սովորելով փորձություններից

- Նախագահ Հյու Բ. Բրաունն ասել է, որ Աստված պատվիրեց Աբրահամին զոհաբերել Իսահակին, որովհետև «Աբրահամը պետք է ինչ-որ բան իմանար Աբրահամի մասին» (in Truman G. Madsen, *The Highest in Us* [1978], 49): Ի՞նչ կարող էր Աբրահամն իմանալ իր մասին այս փորձառությունից: Ի՞նչ եք դուք սովորել ձեր փորձություններից:
- Տերը հայտնել է, որ մենք պետք է փորձվենք «նույնիսկ ինչպես Աբրահամը» (ՎԿՈՒ 101.4): Ի՞նչու եք կարծում, որ սա անհրաժեշտ է (Տես ՎԿՈՒ 101.5, 35–38, 122.5–7): Ի՞նչ կարող ենք անել մենք այժմ՝ նախապատրաստվելու զոհաբերությունների համար, որոնք Տերը կարող է խնդրել մեզ կատարել:

2. Կառուցելով ուժեղ հարաբերություն Աստծո հետ

Աբրահամ 1 և 2 գլուխները նկարագրում են այն հարաբերությունները, որոնք Աբրահամն ու նրա հայրն ունեցել էին Աստծո հետ: Աբրահամի հայրը դիմում էր Աստծուն դժվարության ժամանակ, սակայն դառնում էր կռապաշտ, երբ գործերը լավ էին գնում իր կյանքում (Աբրահամ 1.5, 30, 2.5): Ի տարբերություն նրա, Աբրահամն անընդհատ որոնում էր Աստծուն (Աբրահամ 1.2, 4, 2.12):

- Ինչպե՞ս կարող ենք Աստծուն որոնել, դարձնելով մեր հարաբերությունը նրա հետ հարատև և ոչ թե ժամանակավոր: Ինչպե՞ս կարող ենք ավելի հետևողական դարձնել մեր պարտավորվածությունն Աստծո հանդեպ, որպեսզի մենք որոնենք նրան ինչպես խաղաղ և հանգիստ ժամանակներում, այնպես էլ փորձությունների ժամանակ:

Անդրանիկության օրհնությունը. ամուսնության ուխտը

Դաս
10

Ծննդոց ԻԴ–ԻԹ

Նպատակ

Զորացնել դասարանի անդամների ցանկությունն անդրանիկության օրհնությանն ու հավերժական ամուսնությանն արժանի ապրելու համար:

Նախապատրաստում

1. Աղոթքով ուսումնասիրեք հետևյալ սուրբ գրությունները.

   ա. Ծննդոց ԻԴ. Աբրահամը շեշտում է Իսահակի համար արժանի կին ընտրելու միջոցով ուխտով ամուսնության (հավերժական ամուսնության) կարևորությունը:
   բ. Ծննդոց ԻԵ.20–34: Ռեբեկան հայտնություն է ստանում իր չծնված երկվորյակ որդիների վերաբերյալ (ԻԵ.22–23): Երբ այդ որդիները մեծանում են, Եսավը վաճառում է իր անդրանիկության իրավունքը Հակոբին (ԻԵ.29–34):
   գ. Ծննդոց ԻԶ–ԻԹ: Իսահակին և նրա հետնորդներին խոստացվում են Աբրահամի ուխտի օրհնությունները (ԻԶ.1–5): Եսավն ամուսնանում է առանց ուխտի և տրտմություն պատճառում իր ծնողներին (ԻԶ.34–35): Իսահակն օրհնում է Հակոբին՝ կառավարելու ժողովուրդների և ազգերի վրա (ԻԷ.1–46): Իսահակը Հակոբի վրա է հայտարարում Աբրահամի ուխտի օրհնությունները և ուղարկում արժանի կին գտնելու (ԻԸ.1–10): Հակոբն ուխտով ամուսնանում է Լիայի և Ռաքելի հետ (ԻԹ.1–30):

2. Եթե օգտագործելու եք ուշադրության առաջին վարժությունը, բերեք մի աման կամ մի տոպրակ բոված եգիպտացորեն կամ որևէ միրգ:

3. Եթե ուսուցանում եք պատանիներին կամ երիտասարդ ամուրիներին, մտածեք օգտագործել ուսուցման երկրորդ լրացուցիչ միտքը «Ճիշտ ամուսնությունն սկսվում է ճիշտ ժամադրությունից»:

4. Եթե հետևյալ տեսալսողական նյութերը մատչելի են, անհրաժեշտության դեպքում օգտագործեք դրանցից մի քանիսը, որպես դասի բաղկացուցիչ մաս:

   ա. «Ամուսնություն ուխտով» չորս րոպեանոց հատված *Հին Կտակարանի Տեսանյութերից* (53224):
   բ. Ռեբեկան ջրհորի մոտ նկարը (62160):

Առաջարկվող դասի զարգացում

Ուշադրության կենտրոնացման վարժություն

Օգտագործեք հետևյալ վարժություններից մեկը (կամ ձեր սեփականը) դասը սկսելու համար: Ընտրեք այնպիսի վարժություն, որը դասարանի համար կլինի ամենահարմարը:

1. Ցուցադրեք բոված եգիպտացորենի ամանը կամ տոպրակը կամ որևէ միրգ, ապա ուղղեք դասարանի անդամներին հետևյալ հարցը.

   - Եթե դուք ստիպված լինեիք ընտրել հենց այժմ մի աման եգիպտացորենի (կամ մրգի) միջև կամ անսահմանափակ եգիպտացորենի (կամ մրգի) միջև, որը կտրվեր ձեզ խոստումով, եգիպտացորեն (կամ միրգ) ցանելուց, տնկելուց, մշակելուց և հավաքելուց հետո, ո՞րը կընտրեիք դուք: Ինչո՞ւ:

Բացատրեք, որ մենք հաճախ ենք երկընտրանքի առաջ կանգնում այնպիսի բաների համար , որոնք մենք կարող ենք հեշտորեն ունենալ այժմ և այնպիսի բաների միջև, որոնց համար մենք պետք է աշխատենք և սպասենք: Երբեմն մենք ընտրում ենք այն, ինչ կբերի մեզ անմիջական բավարարվածություն (հաճույք կամ բավականություն), թեև աշխատելու և սպասելու ընտրությունն ի վերջո կապահովի ավելի մեծ օրհնություն: Եգիպտացորեն (կամ միրգ) այժմ կամ հետագայում ունենալու ընտրությունը կարևոր որոշում չէ: Սակայն կյանքում, մենք հանդիպում ենք այլընտրանքների , ինչպես օրինակ՝ որոշումը՝ ում հետ և որտեղ ամուսնանալ, երբ ընտրելով անմիջական բավարարվածությունը կարող ենք զրկել մեզ փառահեղ և երկարատև օրհնություններից:

2. Դասարանի անդամներին տվեք հետևյալ հարցը.

- Երբևէ եղե՞լ է, որ դուք մի բան ձեռք բերելու համար ծախսեք փող կամ ժամանակ, հետագայում հայտնաբերելով, որ չարժեր որ ծախսեիք դրա վրա այն, ինչ ծախսել եք:

Հրավիրեք դասարանի մի քանի անդամների պատմել այն ժամանակի մասին, երբ նրանք խիստ թանկ են վճարել մի բանի համար, որը նրանք կարծել են, թե ցանկանում են (գուցե կամենաք ինքներդ էլ կիսվել ձեր սեփական փորձառությամբ):

Բացատրեք, որ նույն բանը կարող է պատահել հոգևոր առումով: Կատարելով սխալ ընտրություն, մենք կարող ենք փոխել հավերժական օրհնություններն այնպիսի բաների հետ, որոնք շատ ավելի սակավարժեք են: Մյուս կողմից, արդար ապրելու միջոցով մենք կարող ենք ստանալ բոլոր օրհնությունները, որոնք Երկնային Հայրը պատրաստել է մեզ համար:

Սուրբ գրության քննարկում և կիրառում

Երբ ուսուցանեք սուրբ գրության հետևյալ հատվածները, քննարկեք, թե ինչպես են դրանք առնչվում ամենօրյա կյանքին: Խրախուսեք դասարանի անդամներին կիսվել փորձառություններով, որոնք կապված են սուրբգրյան սկզբունքների հետ:

1. Աբրահամը շեշտում է ուխտով ամուսնության (հավերժական ամուսնության) կարևորությունը:

Ուսուցանեք և քննարկեք Ծննդոց ԻԴ գլուխը: Երբ քննարկեք հավերժական ամուսնության կարևորությունը, եղեք զգայուն դասարանի այն անդամների զգացմունքների հանդեպ, ովքեր չեն ամուսնացել տաճարում կամ որոնց ծնողները չեն ամուսնացել տաճարում:

- Ինչո՞ւ էր Աբրահամն այդքան հետևողական, որ Իսահակն ամուսնանար մի կնոջ հետ, որն իր ցեղից էր, քան Քանանացիների հետ, որոնց երկրում Աբրահամն ու Իսահակն ապրում էին: (Աբրահամն ուզում էր, որ Իսահակն ամուսնանա մեկի հետ, որն իր սեփական հավատքից էր, որպեսզի նա կարողանա ամուսնանալ ուխտի մեջ: Սա անհրաժեշտ էր, որպեսզի Աբրահամի ուխտի օրհնությունները կարողանային տրվել Աբրահամի ժառանգներին): Ինչո՞ւ է կարևոր, որ մենք ամուսնանանք ուխտի մեջ: (Անհրաժեշտության դեպքում բացատրեք, որ մեր օրերում *ուխտով ամուսնություն*, *հավերժական ամուսնություն* և *տաճարային ամուսնություն* արտահայտությունները հաճախ օգտագործվում են միմյանց փոխարեն):
- Ե՞րբ է ուխտով ամուսնությունն Աստծո պատվիրան եղել: (Դա հավերժական արարողություն է, որը եղել է Տիրոջ կարգը բոլոր դարերում, երբ ավետարանի լրիվությունը եղել է երկրի վրա: Ադամն ու Եվան այս աշխարհում առաջինը մտան այդ կարգի մեջ):
- Աբրահամն ուղարկեց իր ծառային Իսահակի համար կին գտնելու (Ծննդոց ԻԴ.4): Ի՞նչ տպավորություն է թողնում ձեր վրա Աբրահամի ծառան: (Տես Ծննդոց ԻԴ: Պատասխանները կարող են տարբեր լինել, բայց կարող են ներառել այն, որ նա

վստահելի էր, նվիրված, աղոթքով լցված, հավատարիմ: Նույնիսկ երկար ճանապարհորդությունից հետո նա չկամեցավ ուտել, մինչև չվերջացրեց Աբրահամի կողմից տրված հանձնարարությունը: Եվ 10 օր տոնակատարության մնալու փոխարեն նա կամեցավ վերցնել Ռեբեկային և ուղիղ վերադառնալ Աբրահամի մոտ): Ի՞նչ կարող ենք սովորել Աբրահամի ծառայից, որը կօգնի մեզ ավելի լավ կատարել մեր պարտականությունները, որոնք Տերը տվել է մեզ:

- Ինչպե՞ս իմացավ Աբրահամի ծառան, որ Ռեբեկան լավ կին կլինի Իսահակի համար (Տես Ծննդոց ԻԴ.15–20, 58: Ռեբեկան բարի էր և պատրաստակամ ուրիշներին օգնելու, ինչպես ցույց է տրված Աբրահամի ծառայի և նրա ուղտերի համար ջուր քաշելիս: Դուք գուցե կամենաք նշել, որ մեկ ուղտը կարող է խմել մինչև 114 լիտր ջուր մեկ օրում, այսպիսով Ռեբեկան պետք է որ մեծ քանակությամբ ջուր քաշած լիներ 10 ուղտերին ջրով բավարարելու համար: Ռեբեկան նաև կամեցավ թողնել իր ընտանիքին՝ Իսահակի հետ ամուսնանալու համար, հավանաբար, այն պատճառով, որ մեծ հավատք ուներ և գիտեր, որ Տիրոջ կամքն է, որ ինքն ամուսնանա Իսահակի հետ):
- Ինչպիսի՞ հատկանիշներ դուք կկամենայիք, որ ձեր ամուսինը կամ կինն ունենար: Ինչո՞ւ են հոգևոր հատկանիշներն ավելի կարևոր, քան արտաքին տեսքը: Ինչպիսի՞ հատկանիշներ պետք է մեզանից յուրաքանչյուրը զարգացնի (արդեն ամուսնացած ենք թե ոչ), որոնք մեզ կդարձնեն լավ ամուսին կամ կին:
- Ե՞րբ պետք է մարդ սկսի պատրաստվել հավերժական ամուսնության համար: Որո՞նք են այն մի քանի բաները, որոնք երեխաներն ու պատանիները կարող են անել՝ հավերժական ամուսնությանը նախապատրաստվելու համար: Ինչպե՞ս կարող են ծնողներն ու մյուս չափահասներն օգնել երեխաներին և պատանիներին նախապատրաստվել տաճարում ամուսնանալու համար:

  Նախագահ Հովարդ Վ. Հանթերն ասել է. «Եկեք ծրագրենք և սովորեցնենք ու աղերսենք մեր երախաներին ամուսնանալ Տիրոջ տանը: Եկեք ավելի մեծ ուժով վերահաստատենք, քան երբևէ անցյալում, որ իսկապես կարևոր է, թե որտեղ եք ամուսնանում և ինչ իշխանությամբ եք հայտարարվում ամուսին և կին» (in Conference Report, Oct. 1994, 118; or *Ensign*, Nov. 1994, 88):

2. Եսավը վաճառում է իր անդրանիկության իրավունքը Հակոբին:

Ուսուցանեք և քննարկեք Ծննդոց ԻԵ.20–34 հատվածները:

- Ի՞նչ հայտնություն ստացավ Ռեբեկան իր դեռևս չծնված երկվորյակ որդիների մասին: (Տես Ծննդոց ԻԵ.22–23): Ինչո՞ւ էր Տիրոջ «մեծը կծառայի փոքրին» հայտարարությունն արտասովոր հայտարարություն: (Անդրանիկության իրավունքը սովորաբար անցնում էր հորից անդրանիկ որդուն: Այս անդրանիկությունը ստանալը նշանակում էր, որ անդրանիկ որդին կժառանգեր կրկնակի բաժին ընտանիքի հարստությունից և իր հերթին նա իր հոր մահից հետո կնախագահեր ընտանիքի վրա և հոգ կտաներ իր մոր և քույրերի մասին): Ռեբեկային արված հայտարարությունը «մեծը կծառայի փոքրին» Տիրոջ հայտնության մեջ, նշանակում էր, որ այս դեպքում փոքր որդին կստանար անդրանիկությունը և նրա ժառանգները կլինեին ուխտի ժողովուրդը):
- Ինչպե՞ս էր Եսավը՝ մեծ որդին, վերաբերվում այդ ուխտի հետ կապված իր անդրանիկության իրավունքին, որը կապվել էր իր պապ Աբրահամի և Տիրոջ միջև: (Տես Ծննդոց ԻԵ.29–34: Իր անցողիկ ֆիզիկական քաղցը հագեցնելու համար իր անդրանիկությունը զիջելու Եսավի պատրաստակամությունը ցույց է տալիս, թե նա որքան ցածր էր գնահատում անդրանիկության իրավունքը):

- Որպես Եկեղեցու անդամներ, մենք յուրաքանչյուրս մեր երկնային ծնողների կողմից իրավասու ենք հոգևոր անդրանիկության իրավունքի: Ինչպիսի՞ օրհնություններ են ներառված մեր անդրանիկության իրավունքի մեջ: (Պատասխանները կարող են լինել՝ քահանայությունը, տաճարային օրհնությունները, արարողությունները, հայտնությունը և վեհացման համար մեր ներուժը):
- Ինչպե՞ս է այն, թե որտեղ ենք ամուսնանում, ազդում է մեր անդրանիկությաիրավունքը իրավունքն ստանալու վրա: (Մենք մտնում ենք Աբրահամի ուխտի մեջ, որը վերաբերում է վեհացմանն ու հավերժական աճին՝ կապելով և պահելով տաճարային օժտման և հավերժական ամուսնության ուխտեր):
- Ինչպե՞ս են մեր խոսքերն ու գործերը ցույց տալիս այն արժեվորումը, որ մենք դրսևորում ենք մեր անդրանիկության հանդեպ: Ինչպե՞ս կարող են մեզանից ոմանք Եսավի նման սխալներ գործել, ընտրելով բաներ, որոնք ավելի շուտ բերում են անմիջական բավարարություն, քան բաները, որոնք հավերժական արժեք ունեն :
- Որոշելով ուխտի ժառանգորդին, Տերը նախընտրեց Իսահակին իր մեծ եղբայր Իսմայելից (Գաղատացիս Դ.22–23), Հակոբին իր մեծ եղբայր Եսավից, Հովսեփին իր մեծ եղբայր Ռուբենից (Ա Մնացորդաց Ե.1–2) և Եփրեմին իր մեծ եղբայր Մանասեից (ԽԸ.17–20): Ի՞նչ է սա ասում այն մասին, թե ինչպես ենք մենք արժանի դառնում Աստծո կոչումներին և օրհնություններին:

3. Հակոբն ուխտով ամուսնանում է Լիայի և Ռաքելի հետ և նրա միջոցով շարունակվում է Աբրահամի ուխտը:

Ուսուցանեք և քննարկեք Ծննդոց ԻԶ–ԻԹ:

- Եսավի կողմից կանանց ընտրությունն ի՞նչ է ասում նրա առաջնահերթության մասին: (Տես Ծննդոց ԻԶ.34–35, ԻԹ.6–9): Ի՞նչ կարող ենք սովորել Հակոբի մասին ուխտով ամուսնանալու նրա ջանքերից (Տես Ծննդոց ԻԸ.1–5, ԻԹ.1–28): Մի բան, որ կարող ենք սովորել, այն է, որ ուխտով ամուսնությունը շատ կարևոր էր Հակոբի համար: Նա երկար ճամփորդություն կատարեց ՝ ամուսնանալու և հավատարիմ կին գտնելու համար: Այնուհետև, նա Լաբանի համար աշխատեց յոթ տարի, նախքան Ռաքելի հետ ամուսնանալը և հետո էլ շարունակեց աշխատել նրա համար): Ինչպե՞ս կարող ենք ցույց տալ, որ ուխտով ամուսնանալը կարևոր է մեզ համար:

  Նախագահ Գորդոն Բ. Հինքլին պատմել է մի ընտանիքի մասին, որը միացել էր Եկեղեցուն Ավստրալիայում, իսկ հետո վաճառել բոլոր իրենց ունեցվածքը, որպեսզի կարողանային ուղևորվել դեպի Նոր Զելանդիա և կնքվել որպես ընտանիք: Այս ընտանիքի հայրն ասել էր. «Մենք հնարավորություն չունեինք [տաճար] գալու: Մեր աշխարհիկ ունեցվածքը բաղկացած էր մի հին ավտոմեքենայից, մեր կահույքից և մեր ամանեղենից: Ես ասացի իմ ընտանիքին. «Մենք չենք կարող չգնալ: Եթե Տերը կամենա ուժ տալ ինձ, ես կարող եմ աշխատել և բավականաչափ վաստակել մեկ ուրիշ ավտոմեքենա և կահույք ու ամանեղեն գնելու համար, բայց եթե ես կորցնեմ իմ այս սիրելիներին, ես իսկապես աղքատ կլինեմ ինչպես կյանքում, այնպես էլ հավերժության մեջ»» (*Be Thou an Example* [1981], 138):
- Երկու անձնավորություններ տաճարում ամուսնանալուց հետո, ի՞նչ պետք է անեն հավատիանալու համար, որ իրենք իսկապես հավերժական ամուսնություն ունեն: Ինչպե՞ս կարող են ամուսինն ու կինը պահպանել և բարելավել ամուսնական հարաբերությունը, որպեսզի տաճարում խոստացված ուխտերն ու օրհնություններն իրականանան: (Գուցե դուք կամենաք հրավիրել դասարանի մի քանի անդամների կիսվել ինչ-որ մի օրինակով, որ իրենց կողակիցը կամ ծնողն անում է՝ սելեստիալ ոգին ամուսնություն բերելու համար):

Եզրափակում

Ընտրեք ուխտով ամուսնանալու և անդրանիկության օրհնություններին արժանի ապրելու կարևորության մասին: Կոչ արեք դասարանի անդամներին իմաստուն ընտրություն կատարել և չփոխել հավերժական օրհնությունն անցողիկ հաճույքի կամ բավականության հետ:

Ուսուցման համար լրացուցիչ մտքեր

Հետևյալ նյութը օժանդակում է դասի ուրվագծին: Օգտագործեք այս մտքերից որևէ մեկը կամ մի քանիսը որպես դասի բաղկացուցիչ մաս:

1. Ռեբեկան ընտրվեց որպես Իսահակի կին

Ծննդոց ԻԴ-ից դուրս գրեք հետևյալ մեջբերումներն առանձին թղթի կտորների վրա և տվեք մեկը կամ մի քանիսը յուրաքանչյուր դասարանի անդամի: Հանձնարարեք դասարանի անդամներին օգտագործել իրենց սուրբ գրությունները՝ գտնելու, թե ով է արտահայտել այդ միտքը և որ հատվածներում են այդ մտքերն արձանագրված: Երբ դասարանի անդամները վերջացնեն, քննարկեք մտքերը և ենթատեքստը, որոնցում դրանք արտահայտվել են: Նշեք ուխտով ամուսնության կարևորությունը, Աբրահամի ծառայի հավատքն ու նվիրվածությունը և Ռեբեկայի ունեցած հատկանիշները, որոնք դարձրեցին նրան հավերժական ընկերակցի համար լավ ընտրություն:

ա. «Իմ որդու համար կին չառնես Քանանացիների աղջիկներից»:
բ. «Այլ իմ երկիրն և իմ ազգականների մոտ գնաս, և իմ որդու համար կին առնես»:
գ. «Եհովան՝ երկնքի Աստվածը.... իր հրեշտակը կուղարկե քո առաջին»:
դ. «Սորանով գիտենամ, որ իմ տիրոջը բարերարություն արիր»:
ե. «Ուղտերիդ էլ ջուր քաշեմ մինչև որ ամենքը խմեն վերջացնեն»:
զ. «Ես Մեղքայի որդի Բաթուելի աղջիկն եմ, որ Նաքովրի համար ծնեց»:
է. «Օրհնյալ լինի Եհովա Աստվածը, [որը] ինձ իմ տիրոջ եղբայրների տունն առաջնորդեց»:
ը. «Նա ինձ ասէ. Դու էլ խմիր և ուղտերիդ համար էլ ջուր կքաշեմ, նա լինի այն կինը որ Եհովան սահմանել է իմ տիրոջ որդու համար»:
թ. «Եվ արդ եթե իմ տիրոջը շնորհք և հավատարմություն եք անելու, ինձ պատմեցեք. և եթե ոչ, ինձ ասեցեք»:
ժ. «Ահա Ռեբեկան քո առջևն է, առ և գնա. և թող քո տիրոջ որդու համար կին լինի, ինչպես Եհովան ասել է»:
ի. «Կգնամ»:
լ. «Ով մեր քույր, շատ և շատ հազարներ դառնաս»:

Պատասխաններ՝ ա-Աբրահամ (հ. 3), բ-Աբրահամ (հ. 4), գ-Աբրահամ (հ. 7), դ-ծառա (հ. 14), ե-Ռեբեկա (հ. 19), զ-Ռեբեկա (հ. 24), է-ծառա (հ. 27), ը-ծառա (հ. 44), թ-ծառա (հ. 49) ժ-Լաբան և Բեթուել (հ.. 51), ի-Ռեբեկա հ. 58), լ-Ռեբեկայի ընտանիքը (հ. 60).

2. «Ճիշտ ամուսնությունն սկսվում է ճիշտ ժամադրությունից»

- Ինչպես Իսահակն այնպես էլ Հակոբն ուսուցվում էին իրենց հայրերի կողմից ամուսնանալ իրենց սեփական հավատքի կանանց հետ: Եսավը տրտմություն բերեց իր ծնողներին՝ ամուսնանալով կանանց հետ, ովքեր չէին հավատում Աբրահամի Աստծուն: Ինչո՞ւ է կարևոր ամուսնանալ մեր սեփական հավատքի մարդու հետ:

  Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալը տվել է այս խորհուրդը. «Պողոսը Կորնթացիներին ասաց. «Անհավատների հետ այլախառն լծակից մի լինեք....»: Հավանաբար, Պողոսն ուզում էր, որ նրանք տեսնեն, որ կրոնական տարբերություններն արմատական տարբերություններ են: Կրոնական տարբերությունները հակասության ավելի լայն ոլորտներ են ընդգրկում: Հավատարմությունը Եկեղեցուն հակասության մեջ է մտնում ընտանիքի հա-

վատարմության հետ: Երեխաների կյանքը հաճախ խոչնդոտվում է: Ոչ անդամը կարող է հավասարապես փայլուն, լավ դաստիարակված և հմայիչ լինել և տղան կամ աղջիկը կարող է ամենահաճելի անձնավորությունը լինել, բայց առանց միասնական հավատքի, ամուսնության համար կանխավ անախորժություն է սպասվում: Կան որոշ բացառություններ, բայց օրինաչափությունը դաժան է և ապերջանիկ» (*The Miracle of Forgiveness* [1969], 240):

- Ի՞նչ կարող եք անել օգնելու համոզվել, որ անձնավորությունը, որի հետ ամուսնանում եք մեկն է, որի հետ կարող եք ունենալ հավերժական ամուսնություն: Ինչպե՞ս ձեր ներկա ծանոթություններն ու ընկերությունները կազդեն ձեր մնացած կյանքի և հավերժության վրա:

  Նախագահ Քիմբալը շարունակում է. «Պարզ բան է՝ ճիշտ ամուսնությունն սկսվում է ճիշտ ժամադրությունից: Մարդն ընդհանրապես ամուսնանում է նրանցից ինչ որ մեկի հետ, որոնց հետ նա.... շփվում է: Հետևաբար, այս նախազգուշացումը գալիս է խիստ շեշտադրմամբ: Մի օգտվեք ոչ անդամների կամ չուսուցված և հավատազուրկ անդամների հետ տեսակցելու առիթից: Աղջիկը կարող է ասել. «Օհ, ես մտադիր չեմ ամուսնանալ այդ մարդու հետ: Դա ուղղակի «զվարճալի» տեսակցություն է»: Բայց մարդ չի կարող թույլ տալ իրեն օգտվել մեկին սիրահարվելու առիթից, որը երբեք չի ընդունի ավետարանը: Ճիշտ է, մի փոքր տոկոսն ի վերջո մկրտվում են Եկեղեցու անդամների հետ ամուսնանալուց հետո.... Նրանք մեր օրհնված փոքրամասնությունն են.... Բայց մեծամասնությունը չեն միանում Եկեղեցուն և.... հակառակությունները, հուսախաբությունները և ամուսնալուծությունը բնորոշ է նրանց ամուսնությունների խիստ մեծամասնությանը» (*The Miracle of Forgiveness*, 241–42):

3. Աստված կանանց ևս հայտնություն է տալիս՝ ինչպես տղամարդկանց

Սուրբ գրություններում հայտնության պատմությունները հիմնականում նկարագրում են Աստծո և քահանայության առաջնորդների միջև հաղորդակցությունները, ովքեր տղամարդիկ էին: Սակայն, Ծննդոց ԻԵ.22–23 հատվածները պարունակում են պատմություն Աստծո կողմից կնոջը հայտնություն տալու մասին:

Ռեբեկայի աղոթքի վերաբերյալ Երեց Բրյուս Մակքոնկին ասել է. «Կարո՞ղ եմ մեր ընդհանուր նախնուն՝ Ռեբեկային, վերցնել որպես օրինակ այն բանի համար, թե ինչ կարող են անել այժմ նրա դուստրերը Եկեղեցում.... Երբ Ռեբեկան նեղված էր և կարիք ուներ աստվածային առաջնորդության, նա ինքն այդ հարցը ներկայացրեց Տիրոջը, և Նա խոսեց նրա հետ ի պատասխան: Տերը տալիս է հայտնություն այն կանանց, ովքեր աղոթում են հավատքով» (in Conference Report, Tahiti Area Conference 1976, 16):

- Ինչպե՞ս կարող են տղամարդիկ և նմանապես կանայք պատրաստվել անձնական հայտնություն ստանալու համար:

4. Հակոբի տեսիլքը երկինք հասնող սանդուղքի մասին

- Երբ Հակոբը ճանապարհորդում էր Քանանից դեպի իր ազգի երկիրը՝ կին գտնելու և Եսավի զայրույթից խուսափելու համար, նա կանգ առավ գիշերը հանգստանալու և տեսավ մի նշանավոր երազ (Ծննդոց ԻԸ.10–19): Ի՞նչ տեսավ Հակոբն այդ երազում: Ի՞նչ օրհնություններ նրան խոստացավ Տերը: (Տես Ծննդոց ԻԸ.13–15): Սրանք Աբրահամի ուխտի օրհնություններն են, որոնք վերկանգվեցին Հակոբի հետ այս տեսիլքում. տես դաս 7: Ի՞նչ է խորհրդանշում սանդուղքը:

Երեց Մարիոն Գ. Ռոմնին ասել է այս երազի մասին. «Հակոբը հասկացավ, որ ուխտերը, որոնք նա արել էր Տիրոջ հետ.... ա յն աստիճաններն էին, որոնք նա ինքը պետք է մագլցեր, որպեսզի ձեռք բերեր խոստացված օրհնությունները՝ օրհնություններ, որոնք իրեն իրավունք կտային երկինք մտնել և միանալ Տիրոջը» (“Temples—The Gates to Heaven,” *Ensign,* Mar. 1971, 16):

Դաս
11

«Ես ինչպե՞ս գործեմ այս մեծ չարությունը»

Ծննդոց ԼԴ, ԼԷ–ԼԹ

Նպատակ

Օգնել դասարանի անդամներին (1) սովորել, թե ինչպես բոլոր փորձառություններն ու հանգամանքները ծառայեցնեն, որ միասին գործեն իրենց բարօրության համար և (2) զորացնեն բարոյականության Տիրոջ չափանիշին հնազանդվելու իրենց սեռական պարտավորությունը:

Նախապատրաստում

1. Աղոթքով ուսումնասիրեք հետևյալ սուրբ գրությունները.

   ա. Ծննդոց ԼԷ: Հովսեփին՝ Հակոբի տասնմեկերորդ որդուն, իր եղբայրներն ատում են և վաճառում են ստրկության:

   բ. Ծննդոց ԼԹ: Հովսեփը բարգավաճում է ստրկության ժամանակ, բայց մեղադրվում է անբարոյականության մեջ և բանտ ուղարկվում (ԼԹ.1–20): Բանտապետը Հովսեփի ձեռքն է հանձնում բոլոր մյուս բանտարկյալների համար պատասխանատվությունը (ԼԹ.21–23):

   գ. Ծննդոց ԼԴ.1–12, ԼԵ.22, ԼԷ.1–30: Անբարոյականության մեղքը բացասական հետևանքներ է թողնում Հակոբի ընտանիքի վրա՝ Դինայի՝ նրա դստեր (ԼԴ.1–12), Ռուբենի՝ նրա անդրանիկ որդու (ԼԵ.22) և Հուդայի՝ նրա որդիներից մյուսի համար (ԼԸ.1–30):

2. Լրացուցիչ ընթերցանություն՝ Ծննդոց ԼԴ.13–31:

3. Եթե հետևյալ նկարները մատչելի են, Օգտագործեք դրանցից մի քանիսը որպես դասի բաղկացուցիչ մաս:

   Նկարներ՝ Հովսեփը վաճառվում է իր եղբայրների կողմից (62525, Ավետարանական Արվեստի Նկարների Հավաքածու 109) և Հովսեփը դիմադրում է Պետափրեսի կնոջը (625548, Ավետարանական Արվեստի Նկարների Հավաքածու 110):

Առաջարկվող դասի զարգացում

Ուշադրության կենտրոնացման վարժություն

Դուք գուցե կամենաք օգտագործել հետևյալ վարժությունը (կամ ձեր սեփականը) դասը սկսելու համար:

Խնդրեք դասարանին անվանել կինոնկարներից, հեռուստաներկայացումներից, գրքերից կամ ամսագրերից մի քանիսը, որոնք ներկայումս հանրահայտ են ձեր տարածաշրջանում:

- Բարյականության ինչպիսի՞ չափանիշներ են ներկայացված մամլո այս հանրահայտ թողարկումներում: Ինչպե՞ս են այդ սեռական պրոպագանդման աշխարհիկ չափանիշները, տարբերվում Տիրոջ չափանիշներից, որոնք ուսուցանվում են սուրբ գրություններում և Եկեղեցու առաջնորդների կողմից:

Բացատրեք, որ հասարակության բարոյական վարքը հաճախ տարբերվում է այն չափանիշներից, որոնք Տերն է հաստատել: Մինչ հասարակության չափանիշները կարող են փոխվել, Տիրոջ չափանիշները հաստատուն են:

Այս դասը քննարկում է մի մարդու փորձառությունները, որը հետևեց Տիրոջ բարոյական չափանիշներին և մյուս մարդու փորձառությունները, որը չհետևեց դրանց : Դասը նաև քննարկում է Տիրոջ չափանիշներին հետևելու կամ չհետևելու հետևանքները:

Սուրբ գրության քննարկում և կիրառում

Երբ սովորեցնեք հետևյալ սուրբ գրության հատվածները, քննարկեք թե ինչպե՞ս են դրանք վերաբերում ամենօրյա կյանքին: Խրախուսեք դասարանի անդամներին կիսվել փորձառություններով, որոնք կապված են սուրբգրքյան սկզբունքների հետ:

1. Հովսեփը ստրկության է վաճառվում իր եղբայրների կողմից:

Ուսուցեք և քննարկեք Ծննդոց ԼԷ գլուխը:

Հակոբն ամուսնացավ Լիայի և Ռաքելի՝ իր մոր եղբոր Լաբանի դուստրերի հետ և ամուսնացավ նաև նրանց աղախինների Զեղփայի և Բաղղայի հետ: Հակոբի կանայք ծնեցին նրան տասներկու որդիներ, ովքեր դարձան Իսրայելի տասներկու ցեղերի սկզբնավորողները (Տերը փոխեց Հակոբի անունը՝ Իսրայել դրեց, տես Ծննդոց ԼԲ.28): Հակոբի տասնմեկերորդ որդին Հովսեփն էր. որպես Հակոբի և Ռաքելի անդրանիկ որդի՝ Հովսեփը ստացավ անդրանիկության իրավունքը, երբ Ռուբենը՝ Հակոբի և Լիայի անդրանիկ որդին, կորցրեց այն՝ անօրինության պատճառով (Ա Մնացորդաց Ե.1–2):

- Ինչո՞ւ էին Հովսեփի եղբայրները նախանձում նրան: (Տես Ծննդոց ԼԷ.3–8): Ինչպե՞ս եք վերաբերվում դուք, երբ ձեր ընտանիքի անդամները վիրավորում են ձեզ կամ երբ նրանք ավելի լավ վերաբերմունքի են արժանանում, քան դուք: Ինչպե՞ս կարող ենք հաղթահարել նախանձի կամ բարկության զգացումներն ընտանիքի անդամների կամ ընկերների հանդեպ:
- Ինչպե՞ս վերաբերվեց Հովսեփը, երբ նրա հայրը խնդրեց նրան Սյուքեմ գնալ՝ տեսնելու թե ինչպես էին իր եղբայրները: (Տես Ծննդոց ԼԷ.13–14: Նշեք, որ Սյուքեմը մոտ 45 մղոն հեռավորության վրա էր): Ի՞նչ արեց Հովսեփը, երբ նա Սյուքեմում չկարողացավ գտնել իր եղբայրներին: (Տես Ծննդոց ԼԷ.15–17: Նշեք, որ Դոթայիմն առնվազն ևս 12 մղոն հեռու էր): Ի՞նչ կարող ենք իմանալ երիտասարդ Հովսեփի մասին այս պատմությունից: (Պատասխանները կարող են ներառել, որ նա հնազանդ էր իր հորը և հետևողական իր հոր խնդրածն անելիս):
- Ի՞նչ դավադրեցին անել Հովսեփի եղբայրները, երբ Հովսեփը հասավ այն դաշտերը, որտեղ նրանք արածեցնում էին ոչխարներին: (Տես Ծննդոց ԼԷ.12–18): Ինչո՞վ էր Հովսեփի կյանքը խնայելու Ռուբենի պատճառաբանությունը տարբերվում Հուդայի առաջարկությունից: (Տես Ծննդոց ԼԷ.21–22, 26–27): Ի վերջո, ի՞նչ արեցին Հովսեփի եղբայրները նրան սպանելու փոխարեն (Տես Ծննդոց ԼԷ.28, 31–33):

2. Հովսեփը հրաժարվեց «մեղանչել Աստծո դեմ»:

Ուսուցեք և քննարկեք Ծննդոց ԼԹ գլուխը:

- Ինչպե՞ս Տերն օրհնեց Հովսեփին, այն բանից հետո, երբ նա ստրկության վաճառվեց: (Տես Ծննդոց ԼԹ.1–4): Ինչո՞ւ էր Պետափրեսը՝ Փարավոնի մի հարուստ ներքինի, այդպիսի վստահություն ցույց տալիս Հովսեփին, որը ստրուկ էր (Տես Ծննդոց ԼԹ.5–6):
- Ի՞նչ արեց Հովսեփը, երբ Պետափրեսի կինը փորձեց գայթակղել նրան անիրավություն գործելու: (Տես Ծննդոց ԼԹ.11–12: Նշեք, որ Հովսեփն անմիջապես խույս տվեց այդ իրավիճակից): Ինչպե՞ս կարող ենք հետևել Հովսեփի օրինակին, երբ մենք գայթակղվում ենք:
- Ինչպիսի՞ պատճառաբանություններ կարող էր Հովսեփն օգտագործել, եթե նա կամենար տեղի տալ Պետափրեսի կնոջ գայթակղություններին: Ինչպիսի՞ պատճառաբանություններ են մարդիկ տալիս այսօր՝ փորձելով արդարացնել բարոյական

օրինազանցությունները: Ինչո՞ւ այս պատճառաբանությունները ճշմարիտ արդարացումներ չեն:

- Ինչպե՞ս պատժվեց Հովսեփն առաքինի լինելու համար, երբ Պետափրեսի կինը մոտեցավ նրան: (Տես Ծննդոց ԼԹ.12–20: Նա հեռացվեց Պետափրեսի տան վերակացուն լինելուց՝ դառնալով բանտարկյալ): Ինչպե՞ս են աշխարհում այժմ որոշ մարդիկ վերաբերվում նրանց, ովքեր առաքինի են: (Պատասխանները կարող են տարբեր լինել: Մարդիկ, ովքեր առաքինի են, երբեմն ծաղրի են ենթարկվում և հասարակության կողմից մերժվում, բայց հաճախ նրանք հարգվում են): Դուք գուցե կամենաք քննարկել անբարոյական լինելու աշխարհի ճնշումը, որին դիմակայում են այսօրվա երիտասարդները և ինչպես կարող է երիտասարդությունը դիմադրել այս ճնշմանը:

- Սուրբ գրությունները շեշտում են, որ երբ Հովսեփը բանտում էր, Տերը նրա հետ էր (Ծննդոց ԼԹ.21–23): Ի՞նչ է բացահայտում սա Հովսեփի մասին: (Նա շարունակում էր հավատքով, և ոչ թե առաքինի լինելու պատճառով բանտարկության համար հարցաքննում և մեղադրում Աստծուն:): Ի՞նչ կարող ենք սովորել Հովսեփից վատ փորձառություններն ու հանգամանքները լավի փոխելու մասին: (Գուցե այս քննարկման ընթացքում կամենաք կարդալ Հռովմայեցիս Ը.28):

  Երեց Հարթման Ռեքտոր կրտսերը բացատրել է. «Ամեն ինչ ի բարին փոխելու ունակությունը երևում է աստվածային հատկանիշ է: Մեր Երկնային Հայրն անշուշտ կարողանում է դա անել: Ամեն ինչ անկախ նրանից, թե որքան սոսկալի կարող է լինել, դառնում է հաղթանակ Տիրոջ համար: Հովսեփը, չնայած ստրուկ էր և բացարձակապես անարժան այդ ճակատագրին, այնուամենայնիվ, մնաց հավատարիմ Տիրոջը և շարունակեց ապրել պատվիրաններով և այդ նվաստացուցիչ հանգամանքներում նա իրեն ճիշտ պահեց : Այդպիսի մարդիկ չեն կարող պարտվել» (in Conference Report, Oct. 1972, 170; or *Ensign*, Jan. 1973, 130):

3. Սյուքեմը, Ռուբենը և Հուդան բարոյական լուրջ մեղքեր են գործում:

Ուսուցանեք և քննարկեք Ծննդոց ԼԴ.1–12, ԼԵ.22 և ԼԸ.1–30: Մանրամասն մի քննարկեք այս մարդկանց մեղքերը, օգտագործեք նրանց՝ հակադրելով Հովսեփի հավատարմությանը:

- Նշեք, որ Հովսեփի ընտանիքի ոչ բոլոր անդամներն ու ծանոթներն էին հավատարիմ ինչպես Հովսեփը, երբ հանդիպում էին գայթակղությունների: Ինչպե՞ս վերաբերվեցին գայթակղությանը Սյուքեմը, Ռուբենը և Հուդան և սեռական մեղք գործեցին:

- Ուշադրություն դարձրեք Ծննդոց ԼԴ.3 հատվածի խոսքերի վրա, որոնք նկարագրում են Սյուքեմի զգացմունքները Դինայի հանդեպ: «Եվ նրա հոգին....Դինային հարեց. և սիրեց այն աղջկանը»: Ի՞նչու է այս նկարագրությունն անհամապատասխան Սյուքեմի գործողությունների հետ: (Եթե Սյուքեմն իսկապես սիրեր Դինային, նա չէր պղծի նրան: Օգնեք դասարանի անդամներին հասկանալ, որ հաճախ մարդիկ օգտագործում են «ես սիրահարված եմ » պատճառաբանությունն արդարացնելու անբարոյական արարքները, բայց մարդիկ, եթե իսկապես սիրում են, մեղք և ցավ չեն պատճառում միմյանց ֆիզիկական կրքերն ու ցանկությունները բավարարելու համար: Վարքագիծը, որը դժվարացնում է աղոթել, դարձնում է նրանց անարժան տաճար մտնելու կամ բաժանում է ընտանիքները՝ սիրով չեն կարող արդարացվել):

- Երբ Հակոբն օրհնեց իր որդիներից յուրաքանչյուրին իր կյանքի վերջում, նա ակնարկելով Ռուբենի բարոյական օրինազանցությունը, նկարագրեց Ռուբենին որպես «ջրի պես եռացող»: (ԽԹ.3–4): Ինչո՞վ է սա տեղին համեմատություն: Ի՞նչ ասաց Հակոբը, ի՞նչ էր լինելու Ռուբենին նրա «ջրի պես եռացող» լինելու պատճառով:

- Համեմատեք այն գինը, որ Հովսեփը վճարեց առաքինի լինելու համար՝ այն գնի հետ, որը վճարեց Ռուբենն անբարոյական լինելու համար: Ի՞նչ կորցրեց Ռուբենն

իր անբարոյականության պատճառով: (Տես Ա Մնացորդաց Ե.1–2): Ինչպիսի՞ն է այսօր սեռական մեղքի հոգևոր և մարմնական հետևանքները: Ինչո՞ւ է Տերն այդպիսի կարևորություն տալիս բարոյապես մաքուր լինելուն:

- Եկեղեցու ղեկավարները հետևողականորեն ուսուցանել են, որ Աստծո պատվիրաններին հնազանդ լինելն իսկական ազատություն է: Ինչպե՞ս ենք տեսնում սա Հովսեփի կյանքում: Ինչպե՞ս անհնազանդությունն ավելի պակաս ազատություն տվեց Սյուքեմին, Ռուբենին և Հուդային : Ինչպե՞ս կարող է պատվիրանները պահելը մեզ դարձնել առավել ազատ, քան դրանք խախտելու ընտրությունը : (Տես Հովհ. Ը.31–36):

Եզրափակում

Վկայեք, որ Տիրոջ օգնությամբ բոլոր մեր փորձառություններն ու իրավիճակները կարող են գործել միասին մեր բարիքի համար: Վկայեք նաև, ինչպես մտքերով այնպես էլ արարքներով բարոյապես մաքուր մնալու կարևորության մասին: Կոչ արեք դասարանի անդամներին ստուգել կինոնկարները, ամսագրերը և այլ հրատարակությունները և օգտագործել միայն նրանք, որոնք արտացոլում են բարոյականության Տիրոջ չափանիշները: Խրախուսեք դասարանի անդամներին այնպես հնազանդ ու նվիրված լինել մաքրաբարոյության օրենքին, ինչպես Հովսեփն էր:

Ուսուցման լրացուցիչ գաղափարներ

Հետևյալ նյութն օժանդակում է առաջարկվող դասի ուրվագծին: Օգտագործեք այս գաղափարներից մեկը կամ մի քանիսը որպես դասի բաղկացուցիչ մաս:

1. Բեթել՝ Աստծո տունը

- Երբ Հակոբը ճամփորդում էր Քանանից դեպի իր ազգի երկիրը, նա կանգ առավ հանգիստ առնելու գիշերը և մի նշանավոր երազ տեսավ՝ երկինք հասնող սանդուղքի մասին (Ծննդոց ԻԸ.10–19, տես 10-րդ դասի չորրորդ լրացուցիչ ուսուցողական գաղափարը): Հակոբն այդ վայրը *Բեթել* կոչեց, որը նշանակում է «Աստծո տուն» (Ծննդոց ԻԸ.19): Այսօր ո՞ր վայրն է նույն անունով կոչվում: (Տաճարը, որը կոչվում է Տիրոջ տուն):

  Երեց Մարիոն Գ. Ռոմնին նշել է. «Տաճարները մեզ բոլորիս համար այն են, ինչ Բեթելը Հակոբի համար» (“Temples—The Gates to Heaven,”.*Ensign,* Mar. 1971, 16):

- Ծննդոց ԼԵ.1–5 հատվածներում, Հակոբը ետ տարավ իր ընտանիքին այս սրբազան վայրը: Հակոբն ի՞նչ խնդրեց իր ընտանիքին անել՝ Բեթել՝ «Աստծո տունը» վերադառնալու համար: (Տես Ծննդոց ԼԵ.2): Ինչպե՞ս են այս բաները նման այն նախապատրաստություններին, որ մենք ենք անում Տիրոջ տունը գնալու համար: Ինչպիսի՞ «օտար աստվածներ» կարող են լինել մեր մեջ:

  Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալն ասել է.

  «Տերն օրհնել է մեզ որպես ժողովուրդ այնպիսի մի բարգավաճմամբ, որը չի կարող համեմատվել հին ժամանակների հետ: Միջոցները, որոնք դրվել են մեր իշխանության ներքո, հրաշալի են և անհրաժեշտ՝ այստեղ երկրի վրա մեր աշխատանքի համար: Բայց վախենում եմ, որ մեզանից շատերն այնքան են հագեցել հոտերով, նախիրներով և հողերով և ամբարներով ու հարստությամբ, որ սկսել են պաշտել դրանց որպես կեղծ աստվածներ և դրանք իշխանություն ունեն մեզ վրա: Միթե՞ այնքան շատ ունենք այս հրաշալի բաներից, որ մեր հավատքը չի կարողանում դիմանալ....

  Չնայած, որ մենք հրճվում ենք, թե ժամանակակից մարդիկ ենք և կարծում ենք , որ օժտված ենք գիտությամբ, որը ոչ մի ժողովուրդ անցյալում երբևէ չի ունեցել,– չնայած այս բաներին, մենք ընդհանուր առմամբ կռապաշտ ժողովուրդ ենք,– մի վիճակ,

որն ամենանողկալին է Տիրոջ համար (“The False Gods We Worship,” *Ensign,* June 1976, 4, 6):

- Ինչպե՞ս կարող ենք «հեռացնել [մեր] օտար աստվածները.... և մաքուր լինել» արժանի լինել տաճար գնալու (Տես Ծննդոց ԼԵ.2, Սաղմոս ԻԴ.3–4, Բ Կորնթացիս Է.1, Մորոնի10.30, 32):

2. Հակոբն ու Եսավը վերամիավորվում են

- Վերադառնալով Քանանի հողը, Հակոբը գիտեր, որ նա կրկին հանդիպելու էր իր եղբայր Եսավին (Ծննդոց ԼԲ.3–23, ԼԳ.1–17): Ինչո՞ւ էր Հակոբը վախենում տեսնել Եսավին (Ծննդոց ԼԲ.11): Հակոբն ինչպե՞ս պատրաստվեց հանդիպելու Եսավին: (Տես Ծննդոց ԼԲ.13–20): Ինչպե՞ս վերաբերվեց Եսավը Հակոբին, երբ նրանք կրկին հանդիպեցին: (Տես Ծննդոց ԼԳ.4, 8–11): Ի՞նչ կարող ենք սովորել Հակոբից և Եսավից ընտանեկան վեճերը հարթելու համար:

3. Հարճեր Հին Կտակարանի ժամանակներում

Ծննդոց ԼԵ.22 հատվածում Բաղղան՝ Ռաքելի աղախիններից մեկը, ակնարկվում է որպես Հակոբի հարճը: Երեց Բրյուս Մակքոնկին տվել է հետևյալ բացատրությունը Հին Կտակարանում *հարճ* տերմինի օգտագործման վերաբերյալ:

«Իր ժողովրդի հետ Աստծո գործերի պատմության ողջ ընթացքում, ներառյալ նրանք, որոնք կատարվել են Իսրայելի տան հետ, հարճերն իրենց ամուսինների հետ նոր և հավերժական ուխտով ամուսնացած օրինական կանայք էին.... Հնադարյան ժամանակներում նրանք համարվում էին *երկրորդական կանայք,* այսինքն՝ կանայք, ովքեր չունեին նույն դիրքը կաստայական համակարգում, որը գերիշխում էր այդ ժամանակ, ինչ այն կանայք, ովքեր չէին կոչվում հարճեր» (*Mormon Doctrine,* 2nd ed. [1966], 154):

«Իմ տառապանաց երկրումն աճեցրեց ինձ»

Դաս
12

Ծննդոց Խ–ԽԵ

Նպատակ

Օգնել դասարանի անդամներին հասկանալ, որ եթե մենք հավատարիմ լինենք և հնազանդ, Աստված կազատի մեզ, մեր չարչարանքներից ու կսրբագործի մեզ բարու համար:

Նախապատրաստում

1. Աղոթքով ուսումնասիրեք հետևյալ սուրբ գրությունները.
   ա. Ծննդոց Խ–ԽԱ: Բանտում Հովսեփը ճիշտ է մեկնաբանում Փարավոնի ծառաների երազները: Այնուհետև, նա մեկնաբանում է Փարավոնի երազները կովերի և ցորենի մասին: Հովսեփը վերակացու է նշանակվում ողջ Եգիպտոսի վրա՝ Փարավոնի ներքո և նախապատրաստում է մարդկանց՝ գալիք սովի համար:
   բ. Ծննդոց ԽԲ–ԽԵ: Հակոբն իր որդիներին երկու անգամ Եգիպտոս է ուղարկում ցորեն գնելու: Հովսեփը հայտնում է իր ով լինելն իր եղբայրներին և ներում է նրանց, և նրանք ուրախանում են միասին:
2. Լրացուցիչ ընթերցանություն՝ 2 Նեփի 2.2, Վարդապետություն և Ուխտեր 64.8–11, 122.5–9:
3. Խնդրեք դասարանի որևէ անդամի պատրաստվել ներկայացնել Ծննդոց ԽԲ–ԽԳ գլուխների համառոտ բովանդակությունը:

Առաջարկվող դասի զարգացում

Ուշադրության կենտրոնացման վարժություն

Օգտագործեք հետևյալ վարժությունը (կամ ձեր սեփականը) դասը սկսելու համար:

Խնդրեք դասարանի անդամներին պատկերացնել, որ նրանք մահացել են և մտել հոգևոր աշխարհ և այժմ աչքի են անցկացնում իրենց փորձառությունները մահկանացու կյանքում: Բացատրեք, որ դուք կտաք չորս հարց նրանց օգնելու համար, թե ինչպես է ճախորդությունը ձևավորել իրենց կյանքը: Բոլոր չորս հարցերը տալուց հետո, հրավիրեք դասարանի անդամներին մեկնաբանել այն հարցերը, որոնք նրանք կցանկանանային մեկնաբանել:

- Որո՞նք էին այն մի քանի փորձությունները որոնց դուք հանդիպել եք մահկանացու կյանքում:
- Ի՞նչ դասեր եք քաղել կյանքի փորձություններից:
- Եթե դուք կրկին կարողանայիք ապրել, ի՞նչ կփոխեիք այն վերաբերմունքի մեջ, որով դուք հաղթահարել եք ձեր փորձությունները:
- Ինչպե՞ս ավելի լավ կօգտվեիք կյանքի փորձառություններից:

Բացատրեք, որ այս դասը Հովսեփի մասին է՝ Հակոբի որդու, և թե ինչպես էր նա հավատարիմ ու հնազանդ նույնիսկ մեծ փորձությունների ժամանակ:

Սուրբ գրության քննարկում և կիրառում

Երբ ուսուցանեք հետևյալ սուրբ գրության հատվածները, քննարկեք, թե ինչպես են դրանք վերաբերում ամենօրյա կյանքին: Խրախուսեք դասարանի անդամներին կիսվել փորձառություններով, որոնք կապված են սուրբգրքյան սկզբունքների հետ:

1. Հովսեփը մեկնաբանում է մատռվակի, հացագործի և Փարավոնի երազները: Փարավոնը Հովսեփին կառավարիչ է դարձնում ողջ Եգիպտոսի վրա:

Ուսուցանեք և քննարկեք Ծննդոց Խ–ԽԱ:

Հանձնարարեք դասարանի անդամներին վերանայել նախորդ դասը՝ թվելով իր կյանքի վաղ տարիներին Հովսեփի տարած մի քանի փորձությունները (Ծննդոց ԼԷ, ԼԹ): Գուցե կամենաք գրի առնել դասարանի անդամների պատասխանները գրատախտակի վրա: Պատասխանները կարող են ներառել.

ա. Նա ատված էր իր եղբայրների կողմից (Ծննդոց ԼԷ.4):
բ. Նրա եղբայրները դավադրեցին սպանելու նրան, ապա փոխարենը վաճառեցին նրան որպես ստրուկ (Ծննդոց ԼԷ.18–28):
գ. Չարիք գործելուց հրաժարվելուց հետո, նա անիրավորեն բանտ դրվեց (Ծննդոց ԼԹ.20):

- Հովսեփն ինչպե՞ս արձագանքեց իր փորձություններին: Ինչպե՞ս Տերն օրհնեց Հովսեփին նույնիսկ փորձությունների ժամանակ արդարակյաց լինելու համար:
- Բանտում Հովսեփին միացան Փարավոնի մատռվակն ու հացագործը, որոնցից երկուսն էլ երազ տեսան, որոնք նրանք չհասկացան (Տես Ծննդոց Խ.14–15): Երբ Հովսեփը մեկնաբանեց մատռվակի երազը, նա փոխարենն ի՞նչ խնդրեց մատռվակից (Ծննդոց Խ.14–15): Ի՞նչ պատահեց, երբ մատռվակն ազատվեց բանտից (Տես Խ.21, 23): Ինչո՞ւ էր սա ևս մեկ փորձություն Հովսեփի համար (Տես Ծննդոց ԽԱ.1, 14: Նա ևս երկու տարի մնաց բանտում):
- Ինչո՞ւ Հովսեփին բանտից ի վերջո բաց թողեցին (Տես Ծննդոց ԽԱ.1, 8–15): Ի՞նչ պատասխանեց Հովսեփը, երբ Փարավոնն ասաց, որ լսել էր, որ Հովսեփը կարողանում է երազներ մեկնել (Տես Ծննդոց ԽԱ.16): Ինչպե՞ս կարող ենք պատշաճ երախտագիտություն ցույց տալ Տիրոջը մեր տաղանդների և պարգևների համար (Մենք կարող ենք օգտագործել դրանք Աստծուն փառաբանելու և ուրիշներին օրհնելու համար, ոչ թե մեր սեփական փառքի համար):
- Ի՞նչ երազ տեսավ Փարավոնը (Տես Ծննդոց ԽԱ.1–7, 17–24): Ինչպիսի՞ն էր Փարավոնի երազի մեկնաբանությունը (Տես Ծննդոց ԽԱ.25–32): Հովսեփը մեկնաբանությունը տալուց հետո, ի՞նչ առաջարկեց Փարավոնին անել (Տես Ծննդոց ԽԱ.33–36, տես նաև լրացուցիչ ուսուցողական երկրորդ միտքը): Ի՞նչ պատասխանեց Փարավոնը սովին նախապատրաստվելու Հովսեփի առաջարկին (Տես Ծննդոց ԽԱ.37–43):

2. Հովսեփն իրեն հայտնի է դարձնում իր եղբայրներին և ներում նրանց:

Ուսուցանեք և քննարկեք Ծննդոց ԽԲ–ԽԵ: Հանձնարարեք դասարանի որևէ անդամի համառոտ ամփոփել Ծննդոց ԽԲ–ԽԳ գլուխները:

- Ինչո՞ւ Հովսեփի եղբայրներն առաջին անգամ եկան Եգիպտոս (Տես Ծննդոց ԽԲ.1–3): Ինչո՞ւ նրանք Եգիպտոս վերադարձան երկրորդ անգամ (Տես Ծննդոց ԽԲ.33–34, ԽԳ.2): Ինչո՞ւ Հակոբը դժկամությամբ թողեց Բենիամինին իր եղբայրների հետ Եգիպտոս գնալ (Տես Ծննդոց ԽԲ.36, 38) Ինչո՞ւ նա ի վերջո համաձայնվեց թույլ տալ Բենիամինին գնալ (Տես Ծննդոց ԽԳ.3–5, 11–14):
- Իր եղբայրների հետ Բենիամինին Եգիպտոս ուղարկելով, Հակոբը զգում էր, որ կկորցնի իր մյուս որդուն (Ծննդոց ԽԲ.36): Ինչպե՞ս Տերն այս կանխազգացած փորձությունն օրհնություն դարձրեց Հակոբի համար:
- Երբ Հովսեփը երիտասարդ էր, նա երազ տեսավ, որը կանխագուշակեց, որ իր եղբայրներն ի վերջո կխոնարհվեն իր առաջ (Ծննդոց ԼԷ.5–11): Ինչպե՞ս իրականացավ այս

երազը: (Տես Ծննդոց ԽԲ.6, ԽԳ.26–28): Ինչպե՞ս այս իրականացումը, որը եղբայրները կարծում էին մեծ փորձություն էր լինելու իրենց համար, դարձավ օրհնություն:

- Հովսեփին ստրկության վաճառելուց ավելի քան 20 տարի հետո, նրա եղբայրները դեռ իրենց մեղավոր էին զգում իրենց արածի համար (Ծննդոց ԽԲ.21): Ինչպե՞ս կարող է հանցանքը երբեմն դրականորեն ազդել մեր կյանքի վրա: Ինչպե՞ս կարող է այն բացասական ազդեցություն թողնել : Ինչպե՞ս է լիակատար ապաշխարությունն ազդում հանցավորության մեր զգացումների վրա: (Տես Ենովս 1.4–6):
- Ինչպե՞ս Հովսեփի եղբայր Հուդան ցույց տվեց, որ նա Հովսեփին վերջին անգամ տեսնելուց հետո, դարձել էր ավելի բարի անձնավորություն: (Տես Ծննդոց ԽԴ.18, 30–34: Հիշեցրեք դասարանի անդամներին, որ Հովսեփին որպես ստրուկ վաճառելը Հուդայի գաղափարն էր):
- Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ էին Հովսեփի եղբայրներն անհանգստացած, երբ Հովսեփը հայտնեց իր ինքնության մասին (Տես Ծննդոց ԽԵ.1–3): Ինչպե՞ս Հովսեփը ցույց տվեց, որ նա ներել էր իր եղբայրներին (Տես Ծննդոց ԽԵ.4–11, 14–15): Ինչ եք կարծում, ինչպե՞ս Հովսեփի ներումն օգնեց իր եղբայրներին հոգեպես բարձրանալ:
- Ի՞նչ է մեզ ասում աշխարհը, որ անենք, երբ ինչ որ մեկն անիրավություն է անում մեր դեմ, ինչպես Հովսեփին արեցին նրա եղբայրները: Ի՞նչ է Տերն ասում մեզ անել (Տես ՎԱՈՒ 64.8–11): Ինչպե՞ս եք օրհնվել դուք, երբ բարությամբ եք վերաբերվել ուրիշների հետ, ովքեր ձեզ հետ վատ են վարվել: Ինչպե՞ս կարող ենք ավելի ներող դառնալ:
- Ինպե՞ս Հովսեփի բանտարկությունը Եգիպտոսում, որը նրա համար փորձություն էր, իր և իր ընտանիքի ու ողջ Եգիպտոսի համար օրհնություն դարձավ (Տես Ծննդոց ԽԵ.4–8): Ինչպե՞ս կարող ենք հետևել Հովսեփի օրինակին մեր սեփական դժվարություններն ու փորձությունները հաղթահարելիս:
- Նոր Կտակարանում Պողոս Առաքյալն ասում է Հռովմայեցիներին, որ «Աստծուն սիրողներին ամեն բաները գործակից են լինում դեպի բարին» (Հռովմայեցիս Ը.28): Որքանով է սա ճշմարիտ եղել ձեր կյանքում: Հրավիրեք դասարանի անդամներին կիսվել անձնական փորձառություններով, երբ ինչ-որ մի իրադարձություն, որը սկզբում բացասական է թվացել, հետագայում դարձել է օրհնություն:

Եզրափակում

Հիշեցրեք դասարանի անդամներին, որ իր բազմաթիվ փորձությունների ժամանակ Հովսեփը հավատարիմ մնաց: Նա նույնիսկ իրեն ստրկության վաճառելու համար ներեց իր եղբայրներին: Իր արդարակեցության համար Հովսեփը մեծապես օրհնվեց: Վկայեք, որ եթե մենք հավատարիմ լինենք, Աստված կօրհնի մեզ՝ ամեն բաները գործակից դարձնելով մեզ համար դեպի բարին:

Ուսուցման լրացուցիչ գաղափարներ

Հետևյալ նյութը լրացնում է առաջարկվող դասի ուրվագիծը: Օգտագործեք այս գաղափարներից մեկը կամ մի քանիսը որպես դասի բաղկացուցիչ մաս:

1. Վերջին օրերի մեծ Հովսեփը

Ծննդոց Ծ. 24–38 հատվածների Ջոզեֆ Սմիթի Թարգմանությունը պարունակում է մարգարեություններ, որոնք Հովսեփն արեց իր ժառանգներից մեկի վերաբերյալ, որը պետք է դառնար «ընտիր տեսանող»: Մորմոնի Գրքի մարգարե Լեքին վերահաստատել է այդ մարգարեությունները 2 Նեփի 3.5–15 հատվածներում: Այդ մարգարեություններում ակնարկվող ժառանգը Մարգարե Ջոզեֆ Սմիթն էր:

Քննարկեք, թե Եգիպտոսի Հովսեփի կողմից արված հետևյալ մարգարեություններն ինչպես են իրականացել Ջոզեֆ Սմիթի կյանքում:

ա. Հովսեփի ժառանգներից մեկը կլինի «ընտիր տեսանող» (Ջոզեֆ Սմիթ Թարգմանություն, Ծննդոց 50.26, 2 Նեփի 3.6):
բ. Այս տեսանողը շատ հարգված կլինի Հովսեփի մյուս ժառանգների կողմից (Ջոզեֆ Սմիթ Թարգմանություն, Ծննդոց 50.27, 2 Նեփի 3.7):
գ. Նա կսովորեցնի նրանց այն ուխտերի մասին, որ Աստված արել է իրենց նախնիների հետ (Ջոզեֆ Սմիթ Թարգմանություն, Ծննդոց 50.28, 2 Նեփի 3.7):
դ. Նա հնազանդ կլինի Աստծուն (Ջոզեֆ Սմիթ Թարգմանություն, Ծննդոց 50.28, 2 Նեփի 3.8):
ե. Նա մեծ մարգարե կլինի Մովսեսի նման (Ջոզեֆ Սմիթի Թարգմանություն, Ծննդոց 50.29, 2 Նեփի 3.9):
զ. Նա միջոց կլինի առաջ բերելու նոր սուրբ գրություններ (Մորմոնի Գիրքը), որը կօժանդակի և կգործակցի գոյություն ունեցող սուրբ գրության (Աստվածաշնչի) հետ (Ջոզեֆ Սմիթի Թարգմանություն, Ծննդոց 50.30–31, 2 Նեփի 3.11–12):
է. Չնայած նա թույլ կլինի, Տերը նրան կզորացնի (Ջոզեֆ Սմիթի Թարգմանություն, Ծննդոց 50.32, 2 Նեփի 3.13):
ը. Ինչպես նա, այնպես էլ նրա հայրը կկոչվեն Հովսեփ (Ջոզեֆ Սմիթի Թարգմանություն 50.33, 2 Նեփի 3.15):

2. Նախապատրաստվելով սովի համար

- Հովսեփը խորհուրդ տվեց Փարավոնին օգտագործել Եգիպտոսի առատության յոթ տարիները՝ նախապատրաստելու հետագա յոթ տարիների սովի համար (Ծննդոց ԽԱ.29–30, 34–36): Ի՞նչ խորհուրդ են տալիս մեզ մեր Եկեղեցու առաջնորդները սովի կամ այլ դժվար ժամանակների նախապատրաստվելու համար:

  Երեց Լ.Թոմ Փերին սովորեցրել է.

  «Ճիշտ այնպես ինչպես կարևոր է, որ ինքներս պատրաստվենք հոգեպես, մենք պետք է նաև պատրաստվենք մեր ֆիզիկական կարիքների համար.... Մեզ հրահանգվել է տարիներ շարունակ հետևել առնվազն չորս պահանջների՝ նախապատրաստվելու նրան, ինչը պիտի գա:

  Առաջինը՝ պետք է ձեռք բերել համապատասխան կրթություն: Սովորել մեկ այլ արհեստ կամ մասնագիտություն, որը հնարավորություն կտա ձեզ ձեռք բերել հաստատուն աշխատանք, ապահովելով բավականաչափ վարձատրություն ձեր և ձեր ընտանիքի համար....

  Երկրորդը, խստորեն ապրել ձեր եկամուտների սահմանում և խնայել որոշ բան նեղ օրվա համար: Կիրառել ձեր կյանքում բյուջե վարելու սկզբունքը, այն միջոցներով, որով Տերն օրհնել է ձեզ: Կանոնավորապես վճարելով ձեր տասանորդը, մի կողմ դրեք որոշ գումար, որն անհրաժեշտ կլինի ընտանեկան կարիքների համար....

  Երրորդը, խուսափեք մեծ պարտքերից: Անհրաժեշտ պարտքը պետք է վերցվի միայն ուշադիր, խելամիտ աղոթքից և հնարավոր լավագույն խորհուրդը ձեռք բերելուց հետո: Մենք պետք է ձգտենք կարգապահության՝ վճարունակ մնալու համար....

  Չորրորդը՝ ձեռք բերեք և պահեստավորեք ուտելիքի և մթերքների պաշար՝ կյանքը պահպանելու համար [եթե տեղական օրենքները թույլ են տալիս այդպիսի պահեստ]: Ձեռք բերեք հագուստներ և խելամիտ, լավ ծրագրավորված հիմունքներով, ստեղծեք խնայողությունների հաշիվ, որը կարող է լավ ծառայել արտակարգ իրավիճակներում: Որքանով որ կարողանում եմ հիշել, մեզ ուսուցանվել է, որ նախապատրաստվենք ապագայի համար և ձեռք բերենք առաջին անհրաժեշտության իրերի մեկ տարվա պաշար: Ենթադրում եմ, որ առատության տարիները գրեթե ողջ աշխարհում ստիպել են մեզ մի

կողմ թողնել այս խորհուրդը: Համոզված եմ, որ այս խորհուրդը հաշվի չառնելու ժամանակն ավարտվել է: Այսօր աշխարհում կատարվող իրադարձությունների պատճառով, այն պետք է հաշվի առնվի ամենայն լրջությամբ» (in Conference Report, Oct. 1995, 46–47; or *Ensign*, Nov. 1995, 36):

- Սովի ժամանակ «բոլոր երկրները եկան Եգիպտոս՝ Հովսեփի մոտ» ուտելիք գնելու, որովհետև Եգիպտոսը միակ երկիրն էր, որ նախապատրաստվել էր սովի համար (Ծննդոց ԽԱ.54–57): Ինչպե՞ս կարող է նախապատրաստված լինելն ուրիշներին ծառայելու հնարավորություններ ընձեռել մեզ:

3. Հովսեփի որդիները

- Փարավոնը նրան Եգիպտոսի վրա կառավարիչ դնելուց հետո, Հովսեփին ամուսնացրեց Ասանեթ անունով մի աղջկա հետ և նրանք երկու որդի ունեցան (Ծննդոց ԽԱ.45, 50): Ինչպե՞ս կոչեցին իրենց որդիներին Հովսեփն ու Ասանեթը (Տես Ծննդոց ԽԱ.51–52): Ինչո՞վ էին այդ անունները համապատասխանում Հովսեփի որդիներին (Ձեզ գուցե անհրաժեշտ լինի ասել դասարանի անդամներին, որ *Մանասե* նշանակում է «մոռացնել», իսկ *Եփրեմ* նշանակում է «աճեցնել» Տես սուրբ Գրքերի Ուղեցույց էջ 65):

Դաս
13

Գերություն, Զատիկ և Ելից

Ելից Ա–Գ, Ե–Զ, ԺԱ–ԺԴ

Նպատակ

Խրախուսել դասարանի անդամներին (1) վստահել Տիրոջը, որպեսզի կատարվեն նրա խոստումները, (2) մեծացնել նրանց երախտագիտությունը Փրկչի քավող զոհաբերության հանդեպ և (3) դարձնել հաղորդությունն ավելի իմաստալից իրենց կյանքում:

Նախապատրաստում

1. Աղոթքով ուսումնասիրեք հետևյալ սուրբ գրությունները.

   ա. Ելից Ա–Գ: Իսրայելի որդիները գերության մատնվեցին Եգիպտացիների կողմից (Ա.1–14): Փարավոնը հրամայում է, որ Իսրայելացիներից ծնված բոլոր որդիները սպանվեն (Ա.15–22): Մովսեսը ծնվում է և մեծացվում Փարավոնի աղջկա կողմից (Բ.1–10): Մովսեսը մի եգիպտացու է սպանում և փախչում Մադիամ, որտեղ նա ամուսնանում է Սեպփորայի հետ (Բ.11–22): Եհովան հայտնվում է Մովսեսին վառվող մորենու միջից և կանչում է նրան՝ Իսրայելը գերությունից ազատելու համար (Գ.1–2. նշեք, որ Աստվածաշնչի Ջոզեֆ Սմիթի թարգմանության մեջ, «Եհովայի հրեշտակը» Ելից Գ.2 հատվածում փոխված է «Եհովայի ներկայությունը» արտահայտությամբ):

   բ. Ելից Ե–Զ: Մովսեսն ու Ահարոնը խնդրում են Փարավոնին ազատել Իսրայելին, բայց Փարավոնը հրաժարվում է և ավելի մեծ բեռներ է դնում ժողովրդի վրա (Ե.1–23): Տերը խոստանում է կատարել Աբրահամի հետ կապած ուխտը (Զ.1–8): (Ուշադրություն դարձրեք՝ Է–Ժ գլուխները պատմում են շատ անգամներ Մովսեսի կողմից Փարավոնին մոտենալու, Իսրայելին ազատելու նրա խնդրանքի մասին: Չնայած շատ նշաններին, հրաշքներին և պատուհասներին, Փարավոնը մերժում է: Այս գլուխների Ջոզեֆ Սմիթի Թարգմանության մեջ «Եհովան կարծրացրեց Փարավոնի սիրտը» արտահայտությունը փոխված է «Փարավոնը կարծրացրեց իր սիրտը»):

   գ. Ելից ԺԱ–ԺԳ: Տերը խոստանում է ևս մեկ պատուհաս ուղարկել Եգիպտոսի վրա, որով յուրաքանչյուր տան առաջնեկը մեռնելու էր (ԺԱ.1–10): Եհովան պատվիրում է Մովսեսին պատրաստվել Զատիկին, որը կպաշտպանի Իսրայելին պատուհասից (ԺԲ.1–20): Եգիպտոսում առաջնեկները սպանվում են (ԺԲ:29–30): Փարավոնը թույլատրում է Մովսեսին Եգիպտոսից տանել իր ժողովրդին և Իսրայելացիները հեռանում են (ԺԲ.31–42): Մովսեսը պատվիրում է Իսրայելի որդիներին ապագայում պահել Բաղարջակերաց տոնն ի հիշատակ իրենց ազատման (ԺԳ.1–16). Եհովան գնում է Իսրայելի ժողովրդի առաջին ցերեկն ամպի սյունով և գիշերը կրակի սյունով (ԺԳ.17–22): (Նշեք, որ «Զատիկի տոն» և «Բաղարջակերաց տոն» անունները հաճախ օգտագործվում են հոմանիշաբար, Զատիկը Բաղարջակերաց տոնի առաջին օրն է):

   դ. Ելից ԺԴ: Փարավոնն ու իր բանակը հետապնդում են Իսրայելի որդիներին (ԺԴ.1–9): Ժողովուրդը վախենում է և Մովսեսը Եհովայից օգնություն է խնդրում (ԺԴ.10–18): Իսրայելի որդիներն ազատվում են բանակից և անցնում են Կարմիր ծովը չոր գետնի վրայով, Փարավոնի մարդիկ հետապնդում են նրանց և խեղդվում (ԺԴ.19–31):

2. Լրացուցիչ ընթերցանություն՝ Ելից Դ, Է–Ժ, ԺԵ:

3. Խնդրեք դասարանի որևէ անդամի պատրաստվել Ելից Ա և Բ գլուխների վերաբերյալ համառոտ ակնարկ ներկայացնել:

4. Պատրաստեք *Զատիկ* և *Հաղորդություն* բառերով թղթի կտորներ:

5. Եթե հետևյալ տեսալսողական նյութերը մատչելի են, օգտագործեք դրանցից մի քանիսը, որպես դասի բաղկացուցիչ մաս.

   ա. «Կենդանիների զոհաբերությունը և Քավությունը» ինը րոպեանոց հատված *Հին Կտակարանի Տեսանյութերից* (53224).

   բ. Նկարներ՝ Հիսուս Քրիստոսը (62572, Ավետարանական Արվեստի Նկարների Հավաքածու 240), Մովսեսը Եղեգնուտում (62063, Ավետարանական Արվեստի Նկարների Հավաքածու 106), Մովսեսը և Վառվող Մորենին (62239, Ավետարանական Արվեստի Նկարների Հավաքածու 107), և Կարմիր ծովի անցումը (62100):

Առաջարկվող դասի զարգացում

Ուշադրության կենտրոնացման վարժություն

Օգտագործեք հետևյալ վարժությունը (կամ ձեր սեփականը) դասը սկսելու համար:

Հարցրեք դասարանի անդամներին, թե նրանց երբևէ փրկել են վտանգավոր իրավիճակից: Հրավիրեք նրանցից մեկին կամ երկուսին համառոտակի կիսվել իրենց փորձառությամբ կամ պատմեք ձեր փորձառություններից մեկը: Հարցրեք դասարանի անդամներին, թե ինչ էին զգում այն մարդու հանդեպ, որը փրկել էր իրենց:

Բացատրեք, որ այս դասը երբևէ տեղի ունեցած ամենադրամատիկ փրկություններից մեկի մասին է՝ մահվան պատուհասից և Եգիպտական գերությունից Իսրայելի զավակների ազատման մասին: Բացատրեք նաև, որ շատ կողմերով այն խորհրդանշում է նույնիսկ ավելի մեծ փրկության մասին՝ Փրկչի քավող զոհաբերության միջոցով մեղքից և մահից մեր ազատման մասին:

Սուրբ գրության քննարկում և կիրառում

Երբ ուսուցանեք սուրբ գրությունների հետևյալ հատվածները, քննարկեք, թե ինչպես են դրանք վերաբերում ամենօրյա կյանքին: Խրախուսեք դասարանի անդամներին կիսվել փորձառություններով, որոնք կապված են սուրբգրքյան սկզբունքների հետ:

Հակոբի և իր ընտանիքի Եգիպտոս տեղափոխվելուց հետո, Իսրայելացիներն այնտեղ ապրեցին 430 տարի: Այդ ժամանակաընթացքում մի Փարավոն եկավ, որը նրանց ստրկացրեց և ծանր բեռներ դրեց նրանց վրա: Ինչպես մարգարեացել էր Հովսեփը, Տերը բարձրացրեց Մովսեսին ազատելու Իսրայելի զավակներին (2 Նեփի 3.10):

1. Իսրայելին գերությունից ազատելու համար Տերը կանչում է Մովսեսին:

Դասարանի հանձնարարված որևէ անդամի խնդրեք, որ համառոտ ներկայացնի Ելից Ա և Բ գլուխների բովանդակությունը, ապա ուսուցանեք և քննարկեք Ելից Գ գլուխը:

- Իսրայելին գերությունից ազատելու համար Տերն ինչպե՞ս կանչեց Մովսեսին (Տես Ելից Գ.1–4): Ի՞նչ ասաց Տերը Մովսեսին, երբ կանչեց նրան (Տես Ելից Գ.5–10): Ի՞նչ կարող ենք սովորել Տիրոջ մասին, երբ նա կանչեց Մովսեսին: (Պատասխանները կարող են ներառել, որ Տերը գիտի իր ժողովրդին, ողորմած է նրանց հանդեպ, ուզում է օրհնել նրանց և պահում է նրանց տված խոստումները):
- Խնդրեք դասարանի անդամներին պատկերացնել, որ իրենք Եգիպտոսում ապրող Իսրայելի զավակներն են: Սերունդների ընթացքում նրանց սովորեցվել է, որ իրենք Աստծո ուխտի ժողովուրդն են, և որ նա կկատարի խոստումները, որոնք նա տվել էր Աբրահամին: Սակայն այժմ ապրելով ընդդիմության և գերության մեջ ՝ նրանք դեռևս ստրուկներ են: Ի՞նչ կարող ենք սովորել այս հանգամանքից, որը կարող է օգնել մեզ, երբ ձախորդության մեջ ենք լինում: (Աստված չի մոռանում մեզ մեր ձախորդության

մեջ, ինչպես որ նա ցույց տվեց կանչելով Մովսեսին և, ի վերջո, ազատելով Իսրայելին: Բայց սովորաբար նա փորձություններից չի ազատում մեզ անմիջապես: Անկախ նրանից, թե որքան երկար է տևում փորձությունը, մենք պետք է շարունակենք աղոթել նրան, վստահելով, որ նա սիրում է մեզ, և որ նա բոլոր բաները միասին գործի կդնի մեր բարօրության համար, եթե մենք հնազանդվենք նրան: Տես ՎԱՈՒ 90.24, 98.3, Մոսիա 24.14–15): Ինչպե՞ս եք մխիթարություն և օգնություն ստացել Տիրոջից ձախորդության ժամանակ:

- Ի՞նչ ասաց Մովսեսը, երբ Տերը կանչեց նրան ազատելու Իսրայելը: (Տես Ելից Գ.11, Դ.1, 10): Ինչո՞ւ էր Մովսեսն իրեն անհամապատասխան զգում: Տերն ի՞նչ հավաստիացումներ տվեց նրան (Տես Ելից Գ.12, Դ.11–12): Ինչպե՞ս եք զգում, երբ կոչում եք ստանում Տիրոջից: Ինչո՞ւ անհամապատասխանության որոշ զգացումներ կարող են օգտակար լինել: Ինչպե՞ս է Տերն օգնել ձեզ կոչումներում, որոնց համար դուք ձեզ անհամապատասխան եք զգացել:
- Ի՞նչ զոհաբերեց Մովսեսը՝ ընդունելով իր ժողովրդին առաջնորդելու կոչը (Տես Երբրայեցիս ԺԱ.24–26): Ի՞նչ ենք զոհաբերում մենք՝ ընդունելով Տիրոջը ծառայելու կոչումներ: Ինչո՞ւ է կարևոր, որ մենք հոժարակամ զոհաբերենք Տիրոջ համար:

2. Տերը պատուհասներ է ուղարկում Եգիպտոսի վրա:

Ուսուցանեք և քննարկեք Ելից Ե–Զ գլուխները: Ձեզ գուցե նաև անհրաժեշտ լինի համառոտ ակնարկ տալ Ելից Է–Ժ գլուխների վերաբերյալ, բացատրելով, որ Մովսեսը Փարավոնին շատ անգամներ մոտեցավ և խնդրեց նրան ազատել Իսրայելին: Չնայած նշաններին, հրաշքներին և պատուհասներին, Փարավոնը հրաժարվեց: Դուք, հավանաբար, դասարանին չպետք է ժամանակ հատկացնեք վերապատմելու առանձին նշանները, հրաշքներն ու պատուհասները:

- Ինչպե՞ս պատասխանեց Փարավոնը, երբ առաջին անգամ Մովսեսն ու Ահարոնը խնդրեցին նրան թույլ տալ Իսրայելի զավակներին գնալ (Տես Ելից Ե.1–9): Ինչպե՞ս արձագանքեցին Իսրայելի զավակներն այս փորձությանը: (Տես Ելից Ե.15–21): Ինչպե՞ս պատասխանեց դրան Մովսեսը (Տես Ելից Ե.22–23): Ի՞նչ կարող ենք սովորել այս պատմությունից (Մի բան, որ կարող ենք սովորել, ձախորդության մեջ համբերության անհրաժեշտությունն է: Տերը կկատարի իր խոստումները, չնայած նա կարող է անել դա ոչ այն ժամանակ և ոչ այն ձևով, ինչպես մենք ենք սպասում):
- Հետո, երբ Փարավոնը շատացրեց Իսրայելի բեռները, Տերը կրկնեց իր խոստումները Մովսեսին: Որո՞նք էին այդ խոստումները (Տես Ելից Զ.4–8: Ի՞նչ պատասխանեցին Իսրայելի որդիները, երբ Մովսեսը հիշեցրեց նրանց այս խոստումների մասին (Տես Ելից Զ.9): Ինչո՞ւ են մեզանից ոմանք փորձությունների ժամանակ դադարում լսել մարգարեներին և չեն հավատում Աստծո խոստումներին: Ինչպե՞ս կարող ենք պահպանել հավատքն առ Աստված ձախորդությունների ժամանակ:
- Ի՞նչ պատասխանեց Մովսեսը, երբ Տերը նրան խնդրեց գնալ Փարավոնի առաջ երկրորդ անգամ՝ Իսրայելի համար ազատություն խնդրելու (Տես Ելից Զ.10–12): Նշեք, որ մենք ևս երբեմն կարող ենք դժկամությամբ անել այն, ինչ Տերը խնդրում է մեզ անել՝ վախի պատճառով կամ այն պատճառով, որ մենք կարծում ենք, որ դա հնարավոր չէ: Ինչպե՞ս է Տերն օգնել ձեզ, երբ դուք կասկած կամ վախ եք զգացել:

3. Տերը հրահանգում է Մովսեսին՝ նախապատրաստելով Զատիկի համար:

Ուսուցանեք և քննարկեք Ելից ԺԱ–ԺԳ գլուխները:

- Ո՞րն էր Զատիկի առաջին նպատակը (Տես Ելից ԺԲ.12–13, 22–23): Ինչո՞ւ էր Տերն ուզում, որ Իսրայելը շարունակի պահել Զատիկի տոնն ապագա տարիներին (Տես Ելից ԺԲ.24–27, 42, ԺԳ.1–10):

- Բացատրեք, որ բացի Իսրայելին հիշեցնելուց, որ Աստված պաշտպանեց նրանց մահվան պատուհասից և ազատեց նրանց Եգիպտացիներից, Զատիկը նաև խորհրդանշում է մի կարևոր ապագա իրադարձություն: Ի՞նչ իրադարձություն էր դա: (Հիսուս Քրիստոսի՝ Աստծո Գառի քավող զոհաբերությունը, որն ազատում է մեզ մեղքից և մահից: Տես Ա Կորնթացիս Ե.7): Ինչպե՞ս է Զատիկը խորհրդանշում Քավությունը:

  Դուք գուցե ցանկանաք ցույց տալ Զատիկի և Հիսուս Քրիստոսի քավող զոհաբերության միջև հետևյալ նմանությունները.

  ա. Իսրայելի որդիները պետք է օգտագործեին անբիծ առաջնեկ արու գառ Զատիկի ժամանակ (Ելից ԺԲ.5): Փրկիչն Աստծո առաջնեկ Որդին է՝ Աստծո Գառը, առանց արատի կամ բծի (Ա Պետրոս Ա.19):
  բ. Իսրայելի զավակները պետք է ցողեին գառան արյունն իրենց դռների դրանդիներին իրենց առաջնեկներին մահից փրկելու համար (Ելից ԺԲ.7, 22–23): Փրկչի արյունը, որը նա հեղեց Գեթսեմանում և խաչի վրա, մաքրում է հավատարիմներին և փրկում նրանց հոգևոր մահից (Մոսիա 4.2):
  գ. Իսրայելի զավակները պետք է ուտեին չխմորված հաց (Ելից ԺԲ.8, 15–20): «Թթխմորը կամ մակարդը հնադարյան ժամանակներում համարվում էր քայքայման խորհրդանիշ, որովհետև այն հեշտությամբ փչացնում էր և բորբոսեցնում.... Իսրայելացիների համար չխմորված հաց ուտելը խորհրդանշում էր, որ ճաշակում էին հաց, որը չէր քայքայվում կամ չուներ անմաքրություն, այսինքն Կյանքի Հացը, որը Հիսուս Քրիստոսն է» (տես Հովհաննես Զ.35) (*Old Testament Student Manual: Genesis–2 Samuel* [1981], 119): Թթխմորի վերացումը նաև նշանակում էր ապաշխարություն, կամ անձնավորության կյանքից մեղքի հեռացում:
  դ. Իսրայելի զավակները պետք է ուտեին Զատիկի ուտելիքը շտապելով (Ելից ԺԲ.11): Իսրայելացիների նման մենք էլ պետք է պատրաստակամությամբ և անմիջապես արձագանքենք այն փրկությանը, որը Փրկիչն առաջարկում է մեզ:

- Վերջին Ընթրիքի ժամանակ Փրկիչը հաստատեց հաղորդությունը Զատիկի փոխարեն (Մատթեոս ԻԶ.19, 26–28): Ցուցադրեք Փրկչի նկարը՝ դնելով թղթի վրա գրված *Զատիկ* բառը ձախ կողմում իսկ *Հաղորդություն* բառը՝ աջ կողմում: Ի՞նչ նմանություններ կան Զատիկի և հաղորդության միջև (Տես Ելից ԺԲ.14, ԺԳ.9–10, ՎԵՈՒ 20.75–79):

  Երեց Հովարդ Վ. Հանթերը սովորեցրել է, որ Զատիկի ուտելիքը, որն այժմ հայտնի է որպես Վերջին Ընթրիք. «հացը և գինին, ոչ թե կենդանիներն ու բույսերը, [դարձան] մեծ Գառի մարմնի խորհրդանիշները, խորհրդանիշներ, որոնք պետք է ուտվեն և խմվեն ակնածանքով և Նրա հիշատակին հավիտյան:

  Այս պարզ, բայց տպավորիչ ձևով Փրկիչը հաստատեց այն արարողությունը, որն այժմ հայտնի է որպես Տիրոջ Ընթրիքի հաղորդություն: Գեթսեմանի տառապանքով, Գողգոթայի զոհաբերությամբ և պարտեզի գերեզմանից հարությամբ, Հիսուսն իրականացրեց հնադարյան օրենքը և բերեց նոր տնտեսություն, որը հիմնված էր զոհաբերության օրենքի ավելի բարձր, ավելի սուրբ հասկացողության վրա: Այլևս մարդկանցից չէր պահանջվի զոհաբերել իրենց հոտի առաջնածին գառը, որովհետև Աստծո Անդրանիկը եկավ և իրեն «անսահման և հավերժական զոհ» մատուցեց (in Conference Report, Apr. 1985, 22; or *Ensign*, May 1985, 19):

- Երեց Հովարդ Վ. Հանթերն ասել է, որ ճիշտ ինչպես Զատիկը պաշտպանության ուխտ էր հնադարյան Իսրայելի համար, հաղորդությունը «անվտանգության նոր ուխտ է» մեզ համար (in Conference Report, Apr. 1974, 24; or *Ensign*, May 1974, 18): Ի՞նչ

իմաստով է հաղորդությունն անվտանգության ուխտ մեզ համար: (Հաղորդությունը հիշեցնում է մեզ Փրկչի քավող զոհաբերության մասին, որը բերում է հավերժական ապահովություն՝ ազատելով մեզ մեղքի և մահվան կապանքներից: Ուխտերը, որոնք մենք նորոգում ենք, երբ ճաշակում ենք հաղորդությունից, օգնում են մեզ նաև ապահովվել հավերժական անվտանգությամբ):

Երեց Ջեֆրի Ռ.Հոլլանդը հարցրել է.

«Արդյոք մենք տեսնո՞ւմ ենք [հաղորդությունը] որպես *մեր* զատիկ, ի հիշատակ *մեր* անվտանգության, ազատման և փրկագնման»:

Այդքան շատ վտանգների մեջ, այս արարողությանը, որը խավարի հրեշտակից մեր փախուստի հիշատակին է, պետք է ավելի մեծ լրջությամբ վերաբերվել, քան երբեմն արվում է: Այն պետք է լինի հզոր, ակնածալի, լրջամիտ պահ: Այն պետք է առաջացնի հոգևոր զգացումներ և տպավորություններ (in Conference Report, Oct. 1995, 89; or *Ensign,* Nov. 1995, 68):

- Զատիկի վերաբերյալ իր հրահանգներում Տերը շեշտում է ծնողների կողմից իրենց երեխաներին դրա նշանակության մասին սովորեցնելու անհրաժեշտությունը (Ելից ԺԲ.26–27, ԺԳ.8, 14): Ինչո՞ւ էր անհրաժեշտ, որ Իսրայելացի ծնողներն անեին այս: Ինչպե՞ս կարելի է այն վերաբերել մեր օրերին: (Հնադարյան Իսրայելացիների նման մենք պետք սովորեցնենք մեր երեխաներին հաղորդության և մյուս արարողությունների կարևորությունը, որոնք հիշեցնում են մեզ՝ մեղքից և մահից ազատող Տիրոջ ձեռքի մասին):

4. Իսրայելի զավակներն անցնում են Կարմիր ծովը:

Ուսուցանեք և քննարկեք Ելից ԺԴ գլուխը:

- Փարավոնը Իսրայելի զավակներին Եգիպտոսից մեկնելու թույլտվություն տալուց հետո, շրջվեց նրանց դեմ և ուղարկեց իր բանակը նրանց ետևից (Ելից ԺԴ.5–9): Ի՞նչ արեցին Իսրայելի զավակները, երբ տեսան իրենց հետապնդող բանակը (Տես Ելից ԺԴ.10–12): Ի՞նչ ասաց Մովսեսը Իսրայելի զավակներին, երբ նրանց հավատքը թուլացավ (Տես Ելից ԺԴ.13–14): Ինչպե՞ս կարող ենք այնպիսի հավատք զարգացնել, որը բավականին ուժեղ կլինի՝ մեզ հաստատելու համար, երբ վախով ենք լցված:
- Ինչպե՞ս Տերը փրկեց Իսրայելի զավակներին նրանց հետապնդող Եգիպտական բանակից (Տես Ելից ԺԴ.21–23): Ինչպե՞ս կարող է այս պատմությունն օգնել մեզ փորձության պահերին:

Եզրափակում

Վկայեք, որ ճիշտ ինչպես Տերը կատարեց Իսրայելացիներին գերությունից ազատելու իր խոստումը, նա կկատարի մեզ տված իր խոստումները: Խրախուսեք դասարանի անդամներին մեծացնել իրենց երախտագիտությունը Փրկչի քավող զոհաբերության հաղեպ և հաղորդությունն արժանիորեն և լրջամտությամբ ճաշակեն պահելով «նրան միշտ հիշելու» ուխտը (ՎԱՈՒ 20.77):

Ուսուցման լրացուցիչ գաղափարներ

Հետևյալ նյութը լրացնում է առաջարկվող դասի ուրվագիծը: Դուք կարող եք օգտագործել այս գաղափարներից մեկը կամ մի քանիսը որպես դասի բաղկացուցիչ մաս:

1. Սատանան կեղծում է Աստծո զորությունը

- Ի՞նչ արեց Փարավոնը, երբ Մովսեսն ու Ահարոնը ցույց տվեցին նրան նշաններ Աստծո զորության մասին (Տես Ելից Է.8–12, 17–22): Ի՞նչ կարող ենք սովորել սատանայի մասին այս հատվածներից:
- Որոնք են այն մի քանի ուղիները, որոնցով սատանան կեղծում է Աստծո զորությունն ու օրհնություններն այսօր: Ինչպիսի՞ պարգևներ է Տերը մեզ տվել օգնելու համար, տարբերել բարին չարից: Ինչպե՞ս կարող ենք մեծացնել բարին չարից տարբերելու մեր ունակությունը:

2. Պատուհասները

- Ինչո՞ւ Տերը պատուհասներ ուղարկեց Եգիպտոսի վրա (Տես Ելից Է.5, 17, Ը.10, Թ.14, 29, Ժ.2, ԺԴ.4): Ինչպիսի՞ն էր Փարավոնի վերաբերմունքը պատուհասների հանդեպ: (Տես, օրինակ, Ելից Ը.8, 15, 25, 28, 32): Ինչո՞ւ պատուհասները չվնասեցին Իսրայելի զավակներին (Տես Ելից Թ.4–6, 23–26, Ժ.22–23, ԺԱ.4–7):

3. Զատիկը

Երբ սովորեցնեք, թե ինչպես է Զատիկը Հիսուս Քրիստոսի Քավության խորհրդանիշ, ձեզ գուցե անհրաժեշտ լինի ձեռք բերել հետևյալ իրերը ցույց տալու Զատիկի խորհրդանիշները.

ա. Գառան և դռան նկարներ:
բ. Բաղարջ, առանց թթխմորի թխված լավաշ կամ լոշիկ (տափակ, չխմորված հաց ներկայացնելու համար):
գ. Ծովաբողկ կամ երկար տերևներով սալաթ (դառը խոտերի փոխարեն):
դ. Մի զույգ կոշիկ կամ կիսակոշիկ (Իսրայելացիներն ուտում էին ուտելիքը կոշիկները հագած, խորհրդանշելով այն շտապողականությունը, որով նրանք թողեցին Եգիպտոսը):

4. «Բոլորը մկրտվեցին..... ամպի և ծովի մեջ» (Ա Կորնթացիս Ժ.2)

Կարդացեք Ա Կորնթացիս Ժ.1–4, որտեղ Պողոսը սովորեցնում է, որ Իսրայելի զավակները մկրտվեցին ամպում և ծովում: Բացատրելով դրա կարևորությունը՝ Երեց Բրյուս Մակքոնկին ասել է. «[Պողոսն] ասում է, որ ճիշտ ինչպես Իսրայելը, երբ անցավ Կարմիր ծովի միջով, փախավ Եգիպտոսի աշխարհիկությունից, այդպես էլ նրանց Քրիստոնյա հետևորդները մկրտության միջոցով պետք է թողնեն մարմնի ցանկությունները և ապրեն աստվածապաշտ կյանքով» (*Doctrinal New Testament Commentary*, 3 vols. [1966–73], 2:355):

Դաս
14

«Դուք ինձ համար [հատուկ գանձ] սեպհական ժողովուրդ կլինեք»

Ելից ԺԵ–Ի, ԼԲ–ԼԴ

Նպատակ

Տիրոջ հոգևոր ջուրն ու հացը ճաշակելու համար, դասարանի անդամներին խրախուսեք հաստատել նրա ընտրած ղեկավարներին և հնազանդվել նրա պատվիրաններին, որպեսզի նա կարողանա դարձնել իրենց «սուրբ ազգ» (Ելից ԺԹ.6):

Նախապատրաստում

1. Աղոթքով ուսումնասիրեք հետևյալ սուրբ գրությունները.

   ա. Ելից ԺԵ.22–27, ԺԶ.1–31, ԺԷ.1–7: Իսրայելի զավակները տրտնջում են, որովհետև սոված են ու ծարավ և Տերը տալիս է ջուր, մանանա և լոր:

   բ. Ելից ԺԷ.8–13, ԺԸ.13–26: Ամաղեկը գալիս է Իսրայելի հետ պատերազմելու: Իսրայելը հաղթում է, երբ Մովսեսը ձեռքերը վեր է բարձրացնում, իսկ երբ հոգնում է և ձեռքերն իջեցնում՝ Ամաղեկն է հաղթում: Ահարոնը և Ովրը Մովսեսի ձեռքերը վեր են բռնում և Իսրայելը հաղթում է ճակատամարտում (ԺԷ.8–13): Մովսեսը հետևում է Հոթորի խորհրդին դատավորներ է նշանակում և նրանց իշխանություն տալիս (ԺԸ.13–26):

   գ. Ելից ԺԹ–Ի: Տերը հանդիպում է Մովսեսի հետ Սինայ լեռան վրա և տալիս է Իսրայելին Տասը Պատվիրանները:

   դ. Ելից ԼԲ–ԼԴ: Մովսեսը ստանում է քարե տախտակները, որոնք պարունակում են Տիրոջ պատվիրանները, բայց ջարդում է տախտակները, երբ վերադառնում է Սինայից ու տեսնում, որ ժողովուրդը երկրպագում է ոսկե հորթի (ԼԱ.18, ԼԲ.1–24): Տերն Իսրայելից վերցնում է Մելքիսեդեկյան Քահանայության արարողությունները և տալիս ավելի ցածր օրենք՝ Մովսեսի օրենքը (Ջոզեֆ Սմիթ Թարգմանություն, Ելից 34.1–2): Մովսեսը քարե նոր տախտակներ է կոփում իր ջարդածների փոխարեն, բայց նոր տախտակները չեն ներառում «սուրբ քահանայության հավիտենական ուխտի խոսքերը» (Ելից ԼԴ.1–5, Ջոզեֆ Սմիթ Թարգմանություն, Բ Օրինաց 10.2): Ժողովուրդն ուխտում է հնազանդվել Մովսեսի օրենքին (ԼԴ.10–35):

2. Լրացուցիչ ընթերցանություն. Սաղմոս ՀԸ, Ա Կորնթացիս Ժ.1–11, Վարդապետություն և Ուխտեր 84.19–27:

3. Դասարան բերեք մի քանի գրքեր կամ այլ ծանր առարկաներ, եթե դուք օգտագործելու եք 64–65 էջերում գտնվող առարկայական դասը:

4. Եթե *Հին Կտակարանի Տեսաֆիլմերը* (53224) մատչելի են, ցույց տվեք «Ժամանակակից Կռապաշտություն» յոթ րոպեանոց հատվածը, որպես դասի բաղկացուցիչ մաս:

Առաջարկվող դասի զարգացում

Ուշադրության կենտրոնացման վարժություն

Դուք գուցե կամենաք օգտագործել հետևյալ վարժությունը (կամ ձեր սեփականը) դասը սկսելու համար:

- Պատկերացրեք, որ դուք պետք է ճանապարհորդեք մի անապատով, որտեղ երբեք չեք եղել, և որը չի քարտեզագրվել: Ինչպե՞ս կպատրաստվեիք այդ ճամփորդությանը

(Պատասխանները կարող են տարբեր լինել, բայց օգտակար նախապատրաստությունների մեկը կարող է լինել ուղեկցորդ գտնելը):

- Ի՞նչ որակավորում կկամենայիք, որ ձեզ դեպի անապատի տարածք առաջնորդող ձեր ուղեկցորդն ունենար (Պատասխանները կարող են տարբեր լինել, բայց ուղեկցորդը պետք է իմանա տարածքը և վստահելի լինի):
- Ո՞վ էր Մովսեսի և Իսրայելի զավակների ուղեկցորդը Եգիպտոսից փախչելուց և անապատ մտնելուց հետո (Տերը):

Նշեք, որ Իսրայելացիների փորձառությունները, երբ ճանապարհորդում էին անապատում, կարող են սովորեցնել մեզ կարևոր դասեր, երբ մենք ճանապարհորդում ենք մահկանացու կյանքով: Կարևոր դասերից մեկն այն է, որ մենք կարող ենք վստահել Աստծուն՝ մեզ ուղեկցելու և հոգատարության համար, ինչպես նա արեց Իսրայելացիներին:

Սուրբ գրության քննարկում և կիրառում

Երբ դասավանդեք հետևյալ սուրբ գրության հատվածները, քննարկեք, թե ինչպես է այն առնչվում ամենօրյա կյանքին: Խրախուսեք դասարանի անդամներին կիսվել փորձառություններով, որոնք կապված են սուրբգրքյան սկզբունքների հետ: Քանի որ դժվար կլինի հարցնել յուրաքանչյուր հարցը կամ հասցնել քննարկել դասի յուրաքանչյուր կետը, աղոթքով ընտրեք նրանք, որոնք լավագույնս կբավարարեն դասարանի անդամների կարիքները:

1. Տերը Իսրայելի զավակներին տալիս է ջուր, մանանա և լոր:

Ուսուցանեք և քննարկեք Ելից ԺԵ.22–27, ԺԶ.1–31 և ԺԷ.1–7 հատվածները:

Կարմիր ծովով անցնելուց հետո, Աստված պատվիրեց Մովսեսին Իսրայելացիներին առաջնորդել դեպի խոստացված երկիր: Բայց առաջինը Տերն անապատում փորձեց Իսրայելացիների հավատքը: Մարդկանցից շատերը հավատք չունեին, բողոքելով Տիրոջը փոխարենը դառնալու դեպի նա: Այնուամենայնիվ, Տերը ջուր տվեց նրանց՝ ծարավը հագեցնելու համար և մանանա և լոր՝ նրանց քաղցը բավարարելու համար:

- Ի՞նչ խնդրի հանդիպեցին Իսրայելացիները Ելից ԺԵ.22–24 և ԺԷ.1–3 հատվածներում: Ինչպե՞ս պատասխանեց Մովսեսը, երբ ժողովուրդը տրտնջաց նրա դեմ: (Տես Ելից ԺԵ.25, ԺԷ.4: Նա Տիրոջը դիմեց օգնության համար): Ի՞նչ կարող ենք սովորել Մովսեսի պատասխանից: Ինչպե՞ս պատասխանեց Տերը օգնություն հայցող Մովսեսի աղոթքներին (Տես Ելից ԺԵ.25–26, ԺԷ.5–7):
- Տերն ապահովեց բնական և հոգևոր ջուր Իսրայելի զավակների համար: Բնական ջուրը դուրս բխեց, երբ Մովսեսը զարկեց ժայռին, «հոգևոր խմելիքը» եկավ «հոգևոր Վեմից», որը Քրիստոսն է (Ա Կորնթացիս Ժ.4): Ո՞րն է հոգևոր ջուրը, որը հոսում է Քրիստոսից (Տես 1 Նեփի 11.25): Ինչպե՞ս կարող ենք խմել այդ ջուրը: Ի՞նչ է խոստացված նրանց, ովքեր խմում են այդ ջուրը (Տես Հովհաննես Դ.14, ՎԱՈՒ 63.23):
- Ի՞նչ խնդրի հանդիպեցին Իսրայելացիները Ելից ԺԶ.2–3 հատվածներում: Ինչպե՞ս պատասխանեց Տերը (Տես Ելից ԺԶ.4, 11–15): Բացի ժողովրդի քաղցը հագեցնելուց, ո՞րն էր մանանա ուղարկելու մյուս նպատակը:

  ա. Այն ցույց կտար Տիրոջը, թե իր ժողովուրդը կհնազանդվեր իրեն, թե ոչ (Ելից ԺԶ.4, 16–31):
  բ. Այն կտար ժողովրդին ամենօրյա հիշեցում Տիրոջ զորության և սիրո մասին (Ելից ԺԶ.12):
  գ. Այն կսովորեցներ ժողովրդին, որ նրանք ապրում են «ոչ միայն հացով, այլ.... Եհովայի բերանից դուրս եկած ամեն [խոսքով]» (Բ Օրինաց Ը.3):
  դ. Այն կխոնարհեցներ ժողովրդին և կօգներ նրանց ստանալ փրկություն (Բ Օրինաց Ը.16):

- Ի՞նչ եք կարծում ինչպե՞ս օգնեց մանանան իրականացնել այս նպատակներից յուրաքանչյուրը: Ինչպե՞ս է Տերն իրականացնում այս նպատակներից յուրաքանչյուրը մեր կյանքում:
- Ինչպե՞ս է մանանան ներկայացնում Քրիստոսին (Տես Հովհաննես Զ.35): Ինչպե՞ս է Քրիստոսի կենդանի հացը տարբերվում մանանայից (Տես Հովհաննես Զ.48–51): Ինչպե՞ս կարող ենք ամեն օր ճաշակել Քրիստոսի կենդանի հացից:
- Իսրայելացիները պետք է ամեն օր հավաքեին մանանա՝ ֆիզիկական ուժը պահպանելու համար: Ինչպե՞ս կարելի է սա նմանեցնել, թե ինչ պետք է անենք մենք հոգևոր ուժը պահպանելու համար (Ճիշտ ինչպես մենք կարիք ունենք ամենօրյա սնուցման՝ ֆիզիկական ուժը պահպանելու համար, մենք նաև ամենօրյա սնուցման կարիք ունենք՝ հոգևոր ուժը պահպանելու համար: Մենք չենք կարող սպասել հոգեպես սնուցվելու, եթե հազվադեպ ենք ուսումնասիրում սուրբ գրությունները և աղոթում):
- Ի՞նչ էր սովորաբար պատահում երբ Իսրայելացիները գիշերը պահում էին մանանան (Տես Ելից ԺԶ.19–20): Ի՞նչ էր պատահում, երբ նրանք պահում էին մանանան գիշերը՝ պատրաստվելով Հանգստության օրվա համար (Տես Ելից ԺԶ.22–25): Ինչպե՞ս կարող ենք կիրառել այս սկզբունքը Հանգստության օրվա համար մեր ամենշաբաթյա նախապատրաստություններին:
- Ի՞նչ կարող էր պատահել Իսրայելացիներին, եթե նրանք փորձեին ճանապարհորդել անապատում առանց Տիրոջ օգնուության: Ի՞նչ կպատահի մեզ հետ, եթե մենք փորձենք ճանապարհորդել մահկանացու կյանքում առանց Տիրոջ օգնության:

2. Ահարոնն ու Ովրը բարձր են պահում Մովսեսի ձեռքերը, որպեսզի Իսրայելը հաղթի Ամաղեկի դեմ մղվող ժակատամարտում: Մովսեսը հետևում է Հոթորի խորհրդին՝ դատավորներ նշանակում և նրանց իշխանություն տալիս:

Ուսուցանեք և քննարկեք Ելից ԺԷ.8-13 և ԺԸ.13–26 հատվածները: Նշեք, որ այս երկու պատմությունները սովորեցնում են մեզ Եկեղեցու առաջնորդներին աջակցելու և հաստատելու կարևորության մասին:

- Ամաղեկացիները պատերազմում էին Իսրայելի զավակների հետ շատ տարիների ընթացքում, սկսած Մովսեսի ժամանակներից: Ինչպե՞ս կարողացան Իսրայելացիները պարտության մատնել Ամաղեկի ժողովրդին այն ճակատամարտում, որը նկարագրված է Ելից ԺԷ.8–13 հատվածներում: (Երբ Ահարոնն ու Ովրը հաստատում էին Մովսեսին բարձր պահելով նրա ձեռքերը, Իսրայելը հաղթում էր ճակատամարտում): Ինչպիսի՞ հոգևոր ճակատամարտեր ենք մղում մենք այսօր: Ինչպե՞ս է մարգարեին հաստատելն օգնում մեզ հաղթել այդ ճակատամարտերում:

  Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոնն ասել է. «Ես հիշեցի, թե ինչպես Մովսեսը բլրի գագաթին բարձրացրեց իր ձեռքերը Իսրայելի զորքերի հաղթության համար: Քանի դեռ նրա ձեռքերը բարձրացված էին, Իսրայելը հաղթում էր, բայց երբ դրանք հոգնածությունից իջնում էին, այդ ժամանակ հաղթում էր թշնամին: Եվ այսպիսով, Ահարոնն ու Ովրը մեկն այս կողմից և մյուսն այն կողմից նրա ձեռքերը բարձր պահեցին և Իսրայելը հաղթեց (Ելից ԺԷ.12): Այդպես էլ մենք կհաղթենք, երբ վեր պահենք Տիրոջ օծված ծառաների ձեռքերը» (in Conference Report, Apr. 1986, 98; or *Ensign,* May 1986, 77):
- Ի՞նչն անհանգստացրեց Հոթորին, երբ նա տեսավ, որ ժողովուրդը գալիս էր Մովսեսի մոտ ամբողջ օրը և երեկոյան: (Տես Ելից ԺԸ.13–18): Հոթորն ի՞նչ խորհուրդ տվեց անել Մովսեսին (Տես Ելից ԺԸ.19–23):
- Մարգարեի ի՞նչ պարտականություններ են նշվում Ելից ԺԸ.16–20 հատվածներում:

Հանձնարարեք դասարանի անդամներին այս հատվածներում փնտրել պարտականությունները, ապա գրի առնել պատասխանները գրատախտակի վրա: Օգտագործեք հետևյալ առարկայական դասը. Հրավիրեք դասարանի որևէ անդամի մեկնել իր ձեռքերը: Երբ առաջին պարտականությունը որոշվի, դրեք մի գիրք կամ որևէ այլ ծանր առարկա դասարանի անդամի ձեռքերում: Ավելացրեք ևս մեկ գիրք կամ ծանր առարկա, երբ նշվի յուրաքանչյուր մյուս պարտականությունը:

ա. Եղեք դատավոր մարդկանց համար (Ելից ԺԸ.16):
բ. Ներկայացրեք մարդկանց Աստծո առաջ (Ելից ԺԸ.19):
գ. «Նրանց սովորեցրեք արարողություններն ու օրենքները» (Ելից ԺԸ.20):
դ. «[Ցույց տվեք] նրանց ճանապարհը, որով նրանք պետք է քայլեն» (Ելից ԺԸ.20):
ե. «[Ցույց տվեք] նրանց.... այն աշխատանքը, որ նրանք պետք է անեն» (Ելից ԺԸ.20):

- Ինչպե՞ս կարող ենք մեր մարգարեի և առաքյալների ձեռքերը վեր բարձրացնել և թեթևացնել նրանց բեռներն այսօր (Տես ՎԱՈՒ 21.4–5, 107.22: Երբ դասարանի անդամներն առաջարկներ անեն, վերցրեք գրքերից կամ առարկաներից մի քանիսը դասարանի անդամի ձեռքից, որը պահում է դրանք):
- Ինչպե՞ս կարող ենք աջակցել և հաստատել մեր տեղական Եկեղեցու առաջնորդներին (Պատասխանները կարող են ներառել՝ նրանց մասին լավ խոսելը, մեր Եկեղեցական կոչումներում ջանասիրաբար ծառայելը լավ ընտանեկան ուսուցիչներ և այցելող ուսուցիչներ, լինելը):
- Ինչպե՞ս եք օրհնվել, երբ աջակցել եք Եկեղեցու առաջնորդներին (Դուք գուցե օգտագործեք ՎԱՈՒ 21.6 հատվածն այս քննարկման ժամանակ):

3. Տերը հանդիպում է Մովսեսի հետ Սինայ լեռան վրա և Իսրայելին տալիս Տասը Պատվիրանները:

Ուսուցան եք և քննարկեք Ելից ԺԹ–Ի գլուխները:

Իսրայելն անապատ մտնելուց հետո, երեք ամսվա ընթացքում Տերը կամենում էր հաստատել իր ուխտը նրանց հետ (Ելից ԺԹ.5–6): Որպես այս ուխտի մաս նա հայտնեց Մովսեսին Տասը պատվիրանները:

- Երբ Իսրայելի զավակները ճամբար էին խփել Սինայ լեռան մոտ, ի՞նչ խոստացավ Տերը, եթե նրանք հնազանդ լինեին (Տես Ելից ԺԹ.3–6: Նա կդարձներ նրանց «սեպհական ժողովուրդ.... քահանաների թագավորություն և սուրբ ազգ»): Ի՞նչ են նշանակում այս խոստումները: Ինչպե՞ս են այս խոստումները վերաբերում մեզ այսօր:

  Այս խոստումները նշանակում են, որ Իսրայելը կդառնա Տիրոջ ուխտի ժողովուրդը, բոլորից ավելի արտոնված և ընտրված՝ կրելու քահանայությունը և տանելու ավետարանը բոլոր մարդկանց (տես նաև Բ Օրինաց Է.6, ԺԴ.1–2, Ա Պետրոս Բ.9):
- Ի՞նչ փորձառություն էր Տերը կամենում, որ իր ժողովուրդն ունենար Սինայ լեռան մոտ (Տես Ելից ԺԹ.9, 11, 16–17, ՎԱՈՒ 84.23): Ի՞նչ էր Տերը պահանջում իր ժողովրդից անել, նախքան իր հետ հանդիպելը (Տես Ելից ԺԹ.10, 14):
- Սինայ լեռը սուրբ տեղ էր, որտեղ Տերը կամեցավ խոսել իր ժողովրդի հետ և նրանց ցույց տալ իրեն: Ինչպիսի՞ սուրբ վայրեր է նա տվել, որտեղ մենք կարող ենք ստանալ այս նույն օրհնությունները (Տաճարները. տես ՎԱՈՒ 97.15–16, 109.12–13): Հրավիրեք դասարանի անդամներին պատմել, թե ինչպես է տաճարն օգնել նրանց լսել Տիրոջ ձայնը և զգալ նրա ներկայությունը:
- Ելից Ի-ում առաջին չորս պատվիրանները սովորեցնում են մեր և Աստծո միջև սերտ հարաբերության մասին (Ելից Ի.3–11): Ինչպե՞ս է Տիրոջը պաշտելու և նրա առաջ ուրիշ ոչ մի

աստվածներ չունենալու պատվիրանը կարևոր այսօր: Ի՞նչ կեղծ աստվածների են որոշ մարդիկ պաշտում այսօր (Տես Ա Թագավորաց ԺԵ.23, Եփեսացիս Ե.5, ՎԱՈՒ 1.15–16):

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալն ասել է.

«Կռապաշտությունն ամենալուրջ մեղքերի շարքում է.... Ժամանակակից կուռքերը կամ կեղծ աստվածները կարող են ընդունել այնպիսի ձևեր, ինչպիսիք են՝ հագուստը, տները, կարիերան, ավտոմեքենաները, զբոսանավերը և բազմաթիվ այլ Աստծո ճանապարհից շեղող նյութական բաներ....

Անշոշափելի բաները նույնպես կարող են դառնալ աստվածներ: Գիտական աստիճանները և սպորտային մրցանակները և պատվավոր կոչումները կարող են դառնալ կուռքեր....

Շատ մարդիկ կառուցում են և կահավորում տունը և առաջին հերթին ավտոմեքենա գնում, իսկ հետո «բավականաչափ փող չեն ունենում» տասանորդ վճարել: Ում են նրանք պաշտում: Անշուշտ ոչ երկնքի և երկրի Տիրոջը....

Շատերը պաշտում են որսորդությունը, ձկնորսությունը, զվարճությունները, շաբաթավերջի զբոսախնջույքներն ու էքսկուրսիաները: Մյուսները որպես իրենց կուռքեր են դարձնում սպորտային խաղերը, բասկետբոլը, ֆուտբոլը, ցլամարտը կամ գոլֆը....

Մեկ կուռք ևս, որին մարդիկ պաշտում են, իշխանությունն ու հեղինակությունն է.... Իշխանության, հարստության և ազդեցության այս աստվածներն ամենապահանջկոտն են և միանգամայն իրական են, ինչպես Իսրայելի զավակների ոսկե հորթերն անապատում (*The Miracle of Forgiveness* [1969], 40–42):

- Որոնք են այն ուղիները, որոնցով մարդիկ դատարկ տեղը հիշում են Աստծո անունը: Ինչո՞ւ է կարևոր, որ մենք դատարկ տեղը չհիշենք նրա անունը:
- Ինչո՞ւ է կարևոր մեզ համար Հանգստության օրը սուրբ պահելը (Տես Ելից Ի.8, ԼԱ.16–17, Եսայիա ԾԸ.13–14, ՎԱՈՒ 59.9–10): Ինչպե՞ս պետք է որոշենք, թե որ գործերն են պատշաճ Հանգստության օրվա համար: Ինչպե՞ս եք դուք օրհնվել, երբ այդ օրը սուրբ եք պահել:
- Կրկնեք վեց պատվիրանները, որոնք վերաբերում են ուրիշ մարդկանց հետ մեր հարաբերություններին (Ելից Ի.12–17): Ինչպե՞ս է այս պատվիրաններին հնազանդվելը բարելավում մեր հարաբերություններն ուրիշների հետ: (Կենտրոնացեք առանձին պատվիրանների վրա, բացատրելով, թե դրանք ինչ են նշանակում և անհրաժեշտության դեպքում, քննարկեք դրանք):

4. Տերը ներկայացնում է Մովսեսի օրենքը:

Ուսուցանեք և քննարկեք Ելից ԼԲ–ԼԴ:

Երբ Տերը խոսեց Մովսեսի հետ Սինայ լեռան վրա, նա հայտնեց մի օրենք, որը ներառում էր Մելքիսեդեկյան Քահանայության արարողությունները (ՎԱՈՒ 19–23): Սակայն Իսրայելացիների կռապաշտ վարքը ցույց տվեց, որ նրանք պատրաստ չէին ապրել ավետարանի լրիվությամբ (Ելից ԼԲ.1–9, ՎԱՈՒ 84.24): Քանի որ նրանք այդքան շուտ մոռացան Տիրոջը, նա ետ վերցրեց նրանցից Մելքիսեդեկյան Քահանայությունը և հայտնեց ավելի փոքր օրենք՝ Մովսեսի օրենքը (Ջոզեֆ Սմիթ Թարգմանություն, Ելից 34.1–2, ՎԱՈՒ 84.25–27):

Ավետարանի պատվիրանները, ուխտերը կամ սկզբունքները չփոխարինվեցին Մովսեսի օրենքով: Այն ավելի շուտ տվեց «ծիսակատարությունների և արարողությունների մի օրենք, որին նրանք պետք է օրեցօր խստորեն հետևեին, պահելու դրանք ի հիշատակ Աստծո և նրա հանդեպ իրենց պարտականության» (Մոսիա 13.30): Մովսեսի օրենքն ու-

սուցանում էր ժողովրդին խոստովանել իրենց մեղքերը և փոխհատուցում կատարել՝ հետևելով խիստ կանոնների՝ կատարել կենդանիների զոհաբերություններ, առողջ պահել իրենց մարմինները, Տիրոջ գործին աջակցելու համար, շնորհակալություն հայտնել և հաշտվել Աստծո հետ:

- Ինչո՞ւ Տերը Իսրայելի զավակներին տվեց Մովսեսի օրենքը (Տես Գաղատացիս Գ.23–24, Մոսիա 13.29, Ալմա 25.15–16, ՎԱՈՒ 84.19–27): Ինչպե՞ս էր այս օրենքն օգնելու սուրբ դարձնել Իսրայելը և նրանց բերելու դեպի Քրիստոս (Տես Մոսիա 13.30, Ալմա 34.14–15):
- Ե՞րբ կատարվեց Մովսեսի օրենքը (Տես 3 Նեփի 15.4–10): Այժմ, երբ Տերն այլևս կենդանու զոհաբերություն չէր պահանջում, որը Մովսեսի օրենքի կարևոր մասն էր, ինչ զոհաբերություն է նա խնդրում մեզ անել (Տես 3 Նեփի 9.19–22.): Ի՞նչ է նշանակում զոհաբերել կոտրված սիրտ և ապաշխարող հոգի:

  Երեց Մ. Ռասել Բալլարդը սովորեցրել է.

  «Չնայած Մովսեսի օրենքը կատարվել է, զոհաբերության օրենքի սկզբունքները շարունակում են լինել Եկեղեցու վարդապետության մասը:

  Չնայած զոհաբերության օրենքի հիմնական նպատակը շարունակում էր լինել ստուգումը և օգնելը մեզ գալ դեպի Քրիստոս, երկու փոփոխություններ կատարվեցին Քրիստոսի վերջնական զոհաբերությունից հետո: Առաջինը՝ հաղորդության արարողությունը փոխարինեց [կենդանիների] զոհաբերության արարողությանը և երկրորդը՝ այս փոփոխությունը տեղափոխեց զոհաբերության կիզակետը մարդուն պատկանող կենդանուց դեպի հենց իրեն՝ մարդուն: Այսինքն՝ զոհաբերությունը փոխվեց մատուցումից դեպի մատուցողը....

  ....Իր մահկանացու ծառայությունից հետո, Քրիստոսը զոհաբերության օրենքը բարձրացրեց նոր մակարդակի վրա.... Տերը մարդու կենդանին կամ հացահատիկը պահանջելու փոխարենը, այժմ պահանջում է, որ մենք վերջ տանք այն ամենին , ինչն անաստվածային է: Դա զոհաբերության օրենքի առավել բարձր կիրառում է, այն հասնում է մինչև մարդու հոգու խորքերը» (*The Law of Sacrifice* [address delivered at the Church Educational System Symposium, 13 Aug. 1996], 5):

Եզրափակում

Վկայեք դասարանի անդամներին, որ եթե նրանք ճաշակեն Տիրոջհոգևոր ջրից և հացից, հաստատեն նրա ընտրած առաջնորդներին և հնազանդվեն նրա պատվիրաններին, նա կիրավիրի նրանց իր սուրբ սարը՝ տաճար: Այնտեղ նրանք կհանդիպեն Նրա հետ, կստանան նրա օրենքները, կտեսնեն նրա փառքը և ոգեշնչված առաջ կգնան՝ նրան էլ ավելի նմանվելու համար:

Ուսուցման լրացուցիչ գաղափարներ

Հետևյալ նյութը լրացնում է առաջարկվող դասի ուրվագիծը: Օգտագործեք այս գաղափարներից մեկը կամ մի քանիսը որպես դասի բաղկացուցիչ մաս:

1. Տասը Պատվիրանները

Նշեք, որ Տասը Պատվիրանները կրկնվում են Բ Օրինաց Ե. 5–21, Մոսիա 12.33–36 և 13.12–24, և ՎԱՈՒ 42.18–27 և 59.5–16 հատվածներում: Վերանայեք այս հատվածները Տասը պատվիրանների հետագա ներըմբռնման համար:

2. Ոսկե հորթը

Քննարկեք Ելից ԼԲ գլխի ոսկե հորթի կառուցման և պաշտամունքի պատմությունը: Այս պատմությունից բազմաթիվ սկզբունքներ կարելի է կիրառել, ներառյալ հետևյալ երկուսը՝

ա. Հավատքի կամ վարքի հին սովորույթներն ու ձևերը դժվար է փոխել: Չնայած Իսրայելացիները ֆիզիկապես հեռացել էին Եգիպտոսից, նրանք դեռ հոգեպես չէին ազատվել վերջինիս ազդեցություններից: Իսրայելացիները Սինայ սարից, Աստծո տասը պատվիրանների հռչակումը նրա իսկ ձայնով լսելուց հետո, նրանք արագ խախտեցին առաջին երկուսը:

բ. Կարևոր է դիմադրել հասակակիցների բացասական ճնշմանը: Ահարոնը զիջեց Իսրայելացիների անարդար ցանկություններին: Երբեմն առաջնորդներն ու ծնողները պետք է ասեն «ոչ», նույնիսկ ռիսկի դիմեն, վիրավորելով կամ դժգոհություն առաջացնել նրանց մեջ, ում համար նրանք պատասխանատու են:

«Տես որ նայես առ Աստված և ապրես»

Դաս
15

Թվոց ԺԱ–ԺԴ, ԻԱ.1–9

Նպատակ

Խրախուսել դասարանի անդամներին հաղթահարել աշխարհիկ ցանկությունները և երկյուղները և առաջնորդության համար նայել դեպի Փրկիչը և նրա մարգարեները:

Նախապատրաստում

1. Աղոթքով ուսումնասիրեք հետևյալ սուրբ գրությունները.

   ա. Թվոց ԺԱ: Իսրայելացիները բողոքում են մանանայի համար և ցանկանում են միս ուտել (ԺԱ.1–9): Մովսեսն իր բեռները կրելու համար առաջնորդություն և օգնություն է խնդրում Տիրոջից (ԺԱ.10–15): Տիրոջ կարգադրության համաձայն, Մովսեսը 70 երեցներ է հավաքում՝ իրեն օգնելու համար (ԺԱ.16–17, 24–30): Տերը պատասխանում է Իսրայելացիների միս ուտելու ցանկությանը՝ ուղարկելով նրանց անհամար լորամարգիներ և զարկում նրանց պատուհասով նրանց ագահության և ցանկասիրության պատճառով (ԺԱ.18–23, 31–35):

   բ. Թվոց ԺԲ: Մարիամն ու Ահարոնը խոսում են Մովսեսի դեմ, բողոքելով Եթովպեացի կնոջ հետ նրա ամուսնության համար, և որպես նախագահող իշխանության՝ նրան մարտակոչ են նետում (ԺԲ.1–3): Տերը խրատում և պատժում է Մարիամին և Ահարոնին նրանց տրտունջների համար (12.4–16):

   գ. Թվոց ԺԳ–ԺԴ: Մովսեսը կարգադրում է 12 մարդկանց լրտեսել Քանանի երկիրը (ԺԳ.1–20): Նրանք վերադառնում են երկրի ռեսուրսների մասին լավ լուրերով, բայց բոլորը, բացի Հեսուից և Քաղեբից, վախեցած են լինում բնակիչներից և ցանկանում են վերադառնալ Եգիպտոս (ԺԳ.21–14:10): Տերն ասում է Մովսեսին, որ անհավատ և բողոքող Իսրայելացիները 40 տարի կթափառեն անապատում, մինչև որ, բացի Հեսուից և Քաղեբից, բոլոր մեծահասակ սերունդը մահանա (ԺԴ.11–39):

   դ. Թվոց ԻԱ.1–9: Իսրայելացիները կոտորում են Քանանացիներին, ովքեր իրենց դեմ են գալիս (ԻԱ.1–3): Տերը Իսրայելացիների անընդհատ բողոքների պատճառով կիզող օձեր է ուղարկում (ԻԱ.4–6): Մովսեսն արույրե օձ է սարքում, ամրացնում ձողի ծայրին և ասում ժողովրդին, որ եթե նրանք նայեն դրան, նրանք կապրեն (ԻԱ.7–9):

2. Լրացուցիչ ընթերցանություն՝ Հովհաննես Գ.14–16, 1 Նեփի 17.41, Ալմա 33.18–22, 37.46–47, Հելաման 8.13–15:

3. Եթե օգտագործելու եք ուշադրության կենտրոնացման վարժությունը մի պաստառ պատրաստեք *Խոստացված Երկիր* բառերով:

4. Եթե Մովսեսն ու Արույրե Օձը նկարը մատչելի է, օգտագործեք այն դասի ընթացքում (62202):

Առաջարկվող դասի զարգացում

Ուշադրության կենտրոնացման վարժություն

Օգտագործեք հետևյալ վարժությունը (կամ ձեր սեփականը) դասը սկսելու համար:

Գրեք *Եգիպտոս* բառը գրատախտակին: Դրեք *Խոստացված Երկիր* բառերով պաստառը սենյակի մյուս կողմում: Հանձնարարեք դասարանի որևէ անդամի քայլել գրատախտակից դեպի պաստառը՝ այդ ընթացքում ուսի վրայով ետ նայելով *Եգիպտոս* բառին:

Եթե դասարանի անդամը պաստառին հասնելու դժվարություն ունենա, տվեք հետևյալ հարցը.

- Ինչո՞ւ է դժվար ուղիղ առաջ գնալ, երբ ետ եք նայում:

Եթե դասարանի անդամը հեշտորեն է հասնում պաստառին, տվեք հետևյալ հարցերը.

- Ի՞նչ եք կարծում, որքա՞ն հեռու կկարողանայիք գնալ առանց շեղվելու ուղիղ գծից: Ինչո՞ւ է դժվար ուղիղ առաջ գնալ, երբ ետ եք նայում:

Բացատրեք, որ այս ցուցադրումը կարելի համեմատել Եգիպտոսից Իսրայելացիների ճամփորդության հետ: Չնայած Տիրոջ կողմից Իսրայելացիների ստացած օրհնություններին, նրանց վախն ու հավատքի բացակայությունը հաճախ ստիպում էր նրանց ցանկալ, որ իրենք հեռացած չլինեին Եգիպտոսից: Նրանց տենչը Եգիպտոսի հանդեպ հետաձգում և բարդացնում էր նրանց ճամփորդությունը դեպի խոստացված երկիր:

Սուրբ գրության քննարկում և կիրառում

Երբ ուսուցանեք հետևյալ սուրբ գրության հատվածները, քննարկեք, թե ինչպես են դրանք վերաբերում ամենօրյա կյանքին: Խրախուսեք դասարանի անդամներին կիսվել փորձառություններով, որոնք կապված են սուրբգրքյան սկզբունքների հետ: Քանի որ դժվար կլինի հարցնել յուրաքանչյուր հարցը կամ հասցնել քննարկել դասի յուրաքանչյուր կետը, աղոթքով ընտրեք նրանք, որոնք լավագույնս կբավարարեն անդամների կարիքները: Անհրաժեշտության դեպքում որոշ հարցեր՝ համապատասխանեցրեք դասարանի անդամների կարիքներին:

1. Տերը պատասխանում է Իսրայելացիների միս ուտելու ցանկությանը՝ նրանց համար լորամարգիներ ուղարկելով և զարկելով նրանց պատուհասով:

Ուսուցանեք և քննարկեք Թվոց ԺԱ գլուխը:

- Չնայած մանանան մեծ օրհնություն էր Տիրոջ կողմից, Իսրայելացիները սկսեցին բողոքել դրա վերաբերյալ (Թվոց ԺԱ.6): Ի՞նչը հուշեց նրանց բողոքել (Տես Թվոց ԺԱ.4–5. նրանք սկսեցին մտածել, ցանկանալ միս և այլ ուտելիքներ, որոնք նրանք կերել էին Եգիպտոսում): Ինչո՞ւմ է վտանգը ավելին ցանկանալը, քան մենք արդեն ունենք:
- Իսրայելացիները դարձան այնքան տենչանքով լցված, որ կորցրեցին խոստացված երկրի իրենց նպատակակետը և սկսեցինմտածել, որ ցանկալի կլիներ, որ իրենք հեռացած չլինեին Եգիպտոսից (Թվոց ԺԱ.4–6): Ժամանակակից մարդկանց ինչպիսի՞ օրինակներ գիտեք, որոնք կորցնում են մեծ օրհնությունները, որպեսզի բավարարեն անմիջական ցանկությունները: Ինչո՞ւ են նրանք անում այդ: Ինչպե՞ս կարող ենք հաղթահարել այդպիսի գայթակղությունները:
- Ինչպե՞ս պատասխանեց Տերը Իսրայելացիների միս ուտելու ցանկությանը (Տես Թվոց ԺԱ.18–20, 31–33):
- Մովսեսն այնպես էր ծանրաբեռնված Իսրայելացիների մեղքերով, որ նա խնդրեց Տիրոջը վերցնել իր կյանքը (Թվոց ԺԱ.14–15): Ինչպե՞ս Տերը մխիթարություն տվեց նրան (Տես Թվոց ԺԱ.16–17: Յոթանասուն մարդ կանչվեց օգնելու Մովսեսին): Ի՞նչ մեծ օրհնություններ ստացան այդ մարդիկ (Տես Թվոց ԺԱ.24–29):

2. Տերը խրատում է Մարիամին և Ահարոնին Մովսեսի դեմ խոսելու համար:

Ուսուցանեք և քննարկեք Թվոց ԺԲ:

- Մարիամն ու Ահարոնը խոսեցին Մովսեսի դեմ՝ որպես իրենց նախագահող իշխանության, նշելով, որ իրենք ևս հայտնություն էին ստացել (Թվոց ԺԲ.2): Ինչպիսի՞ն էր

նրանց բողոքին Տիրոջ պատասխանը (Տես Թվոց ԺԲ.5–9): Որո՞նք են հայտնություն ստանալու մեր իրավունքի սահմանները:

Երեց Ջեյմս Ի. Ֆաուստն ասել է. «Մարգարեները, տեսանողները և հայտնողները պարտականություն և արտոնություն են ունեցել և դեռ ունեն՝ ստանալու և հայտնելու Աստծո խոսքն աշխարհին: Անհատ անդամները, ծնողներն ու ղեկավարները կարող են հայտնություն ստանալ իրենց սեփական պարտականության վերաբերյալ, բայց ոչ պարտավորություն, ոչ էլ իրավունք ունեն հայտնել Աստծո խոսքն իրենց սեփական պարտականության սահմաններից այն կողմ» (in Conference Report, Oct. 1989, 9; or *Ensign,* Nov. 1989, 8):

- Տերը խրատեց և պատժեց Մարիամին և Ահարոնին Եթովպեացի կնոջ հետ Մովսեսի ամուսնության մասին բողոքելու համար (Թվոց ԺԲ.1, 9–10): Ինչպե՞ս է մեզ վրա ազդում, երբ մենք քննադատում ենք Եկեղեցու առաջնորդներին: Ինչպե՞ս կարող է Եկեղեցու առաջնորդների մեր քննադատությունն ազդել մեր ընտանիքի և ընկերների վրա:
- Թվոց ԺԲ.3 հատվածում ասվում է. «Մովսեսը շատ հեզ էր»: Ի՞նչ է նշանակում հեզ լինել:

  Նախագահ Գորդոն Բ. Հինքլին ասել է. «Հեզությունը ենթադրում է երախտագիտության ոգի՝ ի հակադրություն ինքնագոհության վերաբերմունքի, մեզանից վեր ավելի մեծ զորության ընդունում՝ Աստծո ճանաչում և նրա պատվիրանների ընդունում» (“With All Thy Getting Get Understanding,” *Ensign,* Aug. 1988, 3–4):
- Ինչպե՞ս Մովսեսը ցույց տվեց իր հեզությունը, երբ Մարիամը պատժվեց նրա դեմ ապստամբելու համար (Տես Թվոց ԺԲ.13–15: Իր քրոջ վրա նախագահելու իշխանությամբ գոհ լինելու փոխարեն, նա աղաչեց Տիրոջը բժշկել նրան: Նա և նրա ժողովուրդը հետաձգեցին իրենց ճամփորդությունը, մինչև նա բժշկվեց): Ինչպե՞ս կարող ենք հեզ լինել, նույնիսկ երբ մարդիկ քննադատում կամ մեզ դեմ են լինում: Ինչպե՞ս է օգնում մեզ քննադատությանը հեզությամբ պատասխանել:

3. Մովսեսը 12 մարդու կարգադրում է լրտեսել Քանանի երկիրը:

Ուսուցանեք և քննարկեք Թվոց ԺԳ–ԺԴ գլուխները:

- Երբ Իսրայելացիները հասան Քանանի երկրի սահմանին, Մովսեսը 12 մարդ ուղարկեց լրտեսելու երկիրը, ռեսուրսները և ժողովրդին (Թվոց ԺԳ.17–20): Ի՞նչ տեղեկություն նրանք բերեցին երկրի ռեսուրսների մասին (Տես Թվոց ԺԳ.23–27): Ի՞նչ տեղեկացրին 10 մարդը, բացի Քաղեբից և Հեսուից այն մարդկանց մասին, ովքեր ապրում էին Քանանում (Տես Թվոց ԺԳ.28–33): Ինչպե՞ս են մեզանից ոմանք կատարում նույն սխալը, ինչպես այդ 10 մարդը:

  Նախագահ Գորդոն Բ. Հինքլին ասել է.

  «Լրտեսներից տասն իրենց իսկ կասկածների և երկյուղների զոհերն էին: Նրանք բացասական տեղեկություններ տվեցին Քանանացիների թվի և կազմվածքի մասին.... Նրանք իրենց համեմատեցին մարախի հետ այն հսկաների համեմատությամբ, որոնց տեսել էին երկրում....

  Մեր շրջապատում մենք տեսնում ենք ոմանց, ովքեր անտարբեր են այս աշխատանքի ապագայի վերաբերյալ, ովքեր անզգա են, ովքեր խոսում են սահմանափակումների մասին, ովքեր երկյուղում են, ովքեր անցկացնում են իրենց ժամանակը, գրելով այն մասին, թե ինչն են համարում թուլություն, որն իրականում ոչ մի նշանակություն չունի: Կասկածելով նրա անցյալին, նրանք հեռանկար չունեն նրա ապագայի վերաբերյալ» (in Conference Report, Oct. 1995, 93–94; or *Ensign,* Nov. 1995, 71):

- Ինչպե՞ս էին Քաղեբի և Հեսուի տեղեկությունները տարբերվում մյուս 10 մարդկանց տեղեկություններից (Տես Թվոց ԺԳ.30, ԺԴ.6–9): Ինչո՞ւ Քաղեբն ու Հեսուն չէին վախենում Քանանի բնակիչներից (Տես Թվոց ԺԴ.9): Ի՞նչ որոշակի ուղիներով կարող ենք հետևել Քաղեբի և Հեսուի օրինակին, երբ դժվար կացության մեջ ենք ընկնում:

  Նախագահ Գորդոն Բ. Հինքլին ասել է.

  «Այս աշխատանքում տեղ չկա նրանց համար, ովքեր հավատում են միայն տխրության և հուսահատության ավետարանին: Ավետարանը բարի լուր է: Այն հաղթանակի լուր է: Այն մի գործ է, որը պետք է ընդունվի ջերմեռանդությամբ:

  Տերը երբեք չի ասել, որ չեն լինի նեղություններ: Մեր ժողովուրդը ճաշակել է բազում չարչարանքներ, երբ նրանք, ովքեր այս աշխատանքին հակադրվել են, եկել են նրանց վրա: Բայց հավատք է դրսևորվել բոլոր նրանց տառապանքների մեջ: Այս աշխատանքը հետևողականորեն առաջ է շարժվել և երբեք չի կատարել հետադիմական քայլ այն ժամանակից ինչ սկսվել է....

  Սա վատատեսության դարաշրջան է: Բայց մեզ համար հավատքի առաքելություն է: Իմ եղբայրներ և քույրեր, ես ձեզ ամենուր կոչ եմ անում վերահաստատել ձեր հավատքը, առաջ տանելու այս գործը ողջ աշխարհով մեկ: Դուք կարող եք զորացնել այն՝ ձեր ապրելաձևով (in Conference Report, Oct. 1995, 94–95; or *Ensign*, Nov. 1995, 71–72):

- Ինչպե՞ս վերաբերվեց ժողովուրդը Քաղեբի և Հեսուի խոսքերին (Տես Թվոց ԺԴ.10): Ինչպե՞ս Տերը պատժեց Իսրայելացիներին նրանց անընդհատ տրտնջալու և Եգիպտոս վերադառնալու ցանկության համար (Տես Թվոց ԺԴ.22–23, 26–35): Ինչպե՞ս նա պատժեց այն 10 մարդկանց, ովքեր բերեցին բացասական տեղեկություն Քանանի մասին (Տես Թվոց ԺԴ.36–37): Ինչպե՞ս նա օրհնեց Քաղեբին և Հեսուին իրենց հավատարմության համար (Թվոց ԺԴ.24, 38):

4. Մովսեսը պղնձե օձ է պատրաստում և ասում ժողովրդին, որ եթե նրանք նայեն նրան, նրանք կբժշկվեն:

Ուսուցանեք և քննարկեք Թվոց ԻԱ.1–9:

- Չնայած Տերն օրհնեց Իսրայելացիներին պարտության մատնել հարձակվող Քանանացիներին, Իսրայելացիները շարունակում էին տրտնջալ: Ինչպե՞ս Տերը պատժեց նրանց (Տես Թվոց ԻԱ.6): Ինչպես վերաբերվեցին Իսրայելացիներն այս պատժին (Տես Թվոց ԻԱ.7):

- Ի՞նչ ասաց Տերը Մովսեսին անել, երբ Մովսեսը խնդրեց նրան, որ կիզող օձերը վեր առնի (Տես Թվոց ԻԱ.8–9): Ի՞նչ պետք է աներ յուրաքանչյուր մարդ կիզող օձերի խայթերից փրկվելու համար:

- Մորմոնի Գրքի երկու մարգարեներ՝ Նեփին և Ալման սովորեցրել են, որ շատ Իսրայելացիներ մահացան, որովհետև նրանք չկամեցան նայել պղնձե օձի վրա: Ինչո՞ւ նրանք չնայեցին (Տես 1 Նեփի 17.41, Ալմա 33.18–20):

- Ո՞ւմ էր խորհրդանշում պղնձե օձը (Տես Հովհաննես Գ.14–16, Հելաման 8.13–14):

- Ճիշտ ինչպես Իսրայելի զավակները պետք է նայեին պղնձե օձին, որ ապրեին, մենք էլ պետք է նայենք Հիսուս Քրիստոսին հավերժական կյանք ստանալու համար (Ալմա 37.46–47, Հելաման 8.15): Ի՞նչ է նշանակում նայել Քրիստոսին: Ինչպե՞ս են այսօր շատ մարդիկ կատարում նույն սխալն ինչ Իսրայելացիները, որոնք չկամեցան նայել պղնձե օձին (Տես Ալմա 33.20: Նրանք չեն նայում Հիսուս Քրիստոսին, որովհետև չեն հավատում, որ այդպես անելով իրենք կփրկվեն):

Երեց Կառլոս Ի. Էսեյն ասել է. «Մենք հնադարյան Իսրայելի պես պետք է սևեռենք մեր աչքերն ու միտքը.... Քրիստոսի վրա, եթե հույս ունենք ձեռք բերել հավերժական կյանք.... Մենք չպետք է թույլ տանք, որ մեր հայացքները թափառեն ճանապարհից այն կողմ կամ կենտրոնանան աշխարհի անցողիկ բաների վրա: Աչքը.... պետք է վարժեցնել, որ նայի դեպի վեր: Մենք պետք է նայենք դեպի Աստված և ապրենք» (in Conference Report, Oct. 1978, 81; or *Ensign*, Nov. 1978, 54):

- Ալման սովորեցրել է, որ ճիշտ ինչպես կիզող օձերից բժշկվելն էր հեշտ՝ դեպի հավերժական կյանք տանող ճանապարհն էլ հեշտ է (Ալմա 37.46): Ի՞նչ իմաստով է դեպի հավերժական կյանք տանող ճանապարհը հեշտ: Ինչպե՞ս են որոշ մարդիկ փորձում բարդացնել դեպի հավերժական կյանք տանող ճանապարհը (Տես Հակոբ 4.14: Նրանք Հիսուս Քրիստոսի պարզ փրկարար սկզբունքներից՝ ապաշխարությունից և հնազանդությունից այն կողմ են նայում): Ինչպե՞ս կարող ենք պահել մեր նպատակակետն առ Քրիստոս հավատքի վրա:

Եզրափակում

Խրախուսեք դասարանի անդամներին չնայել աշխարհի բաների վրա և չվախենալ «հսկաներից», որոնք շեղում են մեզ այն բաներից, որոնք ամենակարևորն են: Վկայեք, որ եթե մենք կամենանք «նայել Աստծո Որդուն հավատքով» (Հելաման 8.15) և հետևենք նրա մարգարեներին, մենք կօրհնվենք այս կյանքում և գալիք կյանքում:

Ուսուցման լրացուցիչ գաղափարներ

Հետևյալ նյութն օժանդակում է առաջարկվող դասի ուրվագծին: Օգտագործեք այս գաղափարներից մեկը կամ մի քանիսը որպես դասի բաղկացուցիչ մաս:

1. «Եկեք Եգիպտոս դառնանք» (Թվոց ԺԴ.4)

- Ինչպիսի՞ն էր Իսրայելացիների վերաբերմունքը, երբ նրանք.

  ա. Թակարդված էին Եգիպտացիների և Կարմիր ծովի միջև (Տես Ելից ԺԴ.10–12):
  բ. Բացի մանանայից ոչինչ չէր տրվում ուտելու (Տես Թվոց ԺԱ.4–6, 18–20):
  գ. Մարտահրավեր ունեին նվաճել Քանանի երկիրը (Տես Թվոց ԺԴ.1–4):
  դ. Հուսահատված էին անապատում դժվարին ճամփորդության պատճառով (Տես Թվոց ԻԱ.4–5):

- Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ էր Իսրայելացիների համար այդքան դժվար լքել Եգիպտոսը: Որո՞նք են այն որոշակի բաները, որոնցից դժվար է մեզ հրաժարվել այսօր: Ինչպե՞ս կարող ենք զորացնել միմյանց, երբ ձգտում ենք թողնել հին սովորությունները կամ աշխարհիկ վարքագիծը:

2. Ո՞ւր նայել առաջնորդության համար

Թվոց գիրքը սովորեցնում է մեզ, թե ուր պետք է նայենք առաջնորդության համար: Երբ սովորեցնեք սուրբ գրության պատմությունները, շեշտեք այս ուսմունքները, գրատախտակին գրելով հետևյալ սկզբունքները.

ա. Նայեք դեպի մարգարեն (Թվոց ԺԲ):
բ. Նայեք դեպի խոստացված երկիրը՝ մեզ համար՝ սելեստիալ արքայությունը (Թվոց ԺԳ–ԺԴ):
գ. Նայեք դեպի Փրկիչը (Թվոց ԻԱ.4–9):

Դաս
16

«Իմ Եհովա Աստծո խոսքիցը չեմ կարող անց կենալ»

Թվոց ԻԲ–ԻԴ, ԼԱ.1–16

Նպատակ

Խրախուսեք դասարանի անդամներին առանց տատանվելու հնազանդվել Աստծո կամքին:

Նախապատրաստում

1. Աղոթքով ուսումնասիրեք հետևյալ սուրբ գրությունները.

   ա. Թվոց ԻԲ.1–21: Բաղակը՝ Մովաբի թագավորը, սարսափահար է լինում մոտեցող Իսրայելացիներից: Նա պարգևներ է առաջարկում Բաղաամին, եթե նա գա Մովաբ և անիծի Իսրայելացիներին: Աստված հրամայում է Բաղաամին հրաժարվել և Բաղաամը հնազանդվում է (ԻԲ.1–14): Բաղակն առաջարկում է Բաղաամին հավելյալ պատիվ և հարստություն, եթե նա գա Մովաբ և անիծի Իսրայելին: Աստված ասում է Բաղաամին, որ նա կարող է գնալ, եթե ցանկանում է, բայց նա պետք է միայն խոսի այն խոսքերը, որ Աստված կտա նրան (ԻԲ.15–21): Բաղաամը որոշում է գնալ:

   բ. Թվոց ԻԲ.22–35: Աստված զայրանում է Բաղաամի վրա Մովաբ գնալու համար, գիտենալով, որ նա Բաղակի կողմից ինչ-որ պարգևի հույս ունի: Իր ճանապարհին Բաղաամն իմանում է Աստծո դժգոհությունն առաջացնելու վտանգի մասին, երբ նրա էշն ու մի հրեշտակ խոսում են նրա հետ:

   գ. Թվոց ԻԲ.36–24:25: Բաղաամը հանդիպում է Բաղակի հետ (ԻԲ.36–23:2): Երեք անգամ Բաղակը խնդրում է նրան անիծել Իսրայելին, բայց Բաղաամը հնազանդվում է Աստծուն և ամեն անգամ օրհնում է Իսրայելին (ԻԳ.3–24:9): Ապա նա անիծում է Մովաբը և մարգարեանում Հիսուս Քրիստոսի մասին (ԻԴ.10–25):

   դ. Թվոց ԼԱ.1–16: Իսրայելացիները կործանեցին Մադիանացիներին և սպանեցին Բաղաամին: Մովսեսը բացատրում է, որ Բաղաամը Մադիանացիներին խորհուրդ էր տվել Իսրայելացիներին մեղքի մեջ գցել: (Բաղաամի խորհրդի հետևանքները նկարագրված են Թվոց ԻԵ.1–3 հատվածներում: Չնայած Բաղաամն ուղղակիորեն չանիծեց Իսրայելին, նա ակնհայտորեն այնքան շատ էր Բաղակից պարգև ակնկալում, որ առաջարկեց Իսրայելին գայթակղել ի մեղք, որպեսզի նրանք կորցնեին Աստծո պաշտպանությունը):

2. Լրացուցիչ ընթերցանություն. Բ Պետրոս Բ.15–16, Հուդա Ա.11, Հայտնություն Բ.14:

Առաջարկվող դասի զարգացում

Ուշադրության կենտրոնացման վարժություն

Օգտագործեք հետևյալ վարժությունը (կամ ձեր սեփականը) դասը սկսելու համար:

Խնդրեք դասարանի անդամներին ուշադիր լսել հետևյալ մտքերը և մտածել, թե ինչպիսի մարդ կարող էր դրանք արտահայտել.

«Եթե [թագավորը] իր տունը լիքն ինձ արծաթ ու ոսկի տա իմ Եհովա Աստծո խոսքիցը չեմ կարող անցնել» (Թվոց ԻԲ.18):

«Ինչ որ Եհովան խոսէ՝ այն կանեմ» (Թվոց ԺԳ.26):

«Ես Եհովայի խոսքիցը չեմ կարող անցնիլ, որ մի վատ կամ լավ բան անեմ ինձանից. Եհովան ինչ որ ասի՝ այն պիտի խոսեմ» (Թվոց ԻԴ.13):

- Որո՞նք են այն մարդու որոշակի հատկանիշները, ով կասեր այս բաները (Այսպիսի մտքերը խոսում են այն մասին, որ մարդը հնազանդ է, հավատարիմ և խոնարհ):

Բացատրեք, որ այս մտքերն արտահայտվել են մի մարդու կողմից, որի անունը Բաղաամ էր, որը հայտարարում էր խիստ հնազանդություն, բայց իր սրտում ցանկանում էր երկրային պարգևներ ու պատիվներ: Այս դասը ցույց է տալիս այդպիսի ցանկությունները կատարելու մեր սեփական կամքի ու համառորեն առաջ տանելու հետևանքները:

Սուրբ գրության քննարկում և կիրառում

Երբ դուք ուսուցանեք հետևյալ սուրբ գրության հատվածները, քննարկեք, թե ինչպես են դրանք վերաբերում առօրյա կյանքին: Խրախուսեք դասարանի անդամներին կիսվել փորձառություններով, որոնք կապված են սուրբգրքյան սկզբունքների հետ:

1. Բաղաամը հրաժարվում է Բաղակի Իսրայելին անիծելու համար առաջարկած պարգևներից

Ուսուցանեք և քննարկեք Թվոց ԻԲ.1–21:

- Սարսափած Իսրայելացիների առաջխաղացումից, Բաղակը՝ Մովաբի թագավորը, սուրհանդակներ ուղարկեց Բաղաամին պարգևներ առաջարկելով, եթե նա գար Մովաբ և անիծեր Իսրայելին (Թվոց ԻԲ.5–7): Ինչպե՞ս Բաղաամը պատասխանեց այս առաջարկին (Տես Թվոց ԻԲ.8–14): Ինչպիսի՞ երբեմն այսպես կոչված պարգևներ են մեզ առաջարկում Աստծուն չհնազանդվելու փոխարեն:
- Բաղաամը Մովաբ գալուց հրաժարվելուց հետո, Բաղակն ուղարկեց մարդկանց մի երկրորդ խումբ, ավելի ազդեցիկ քան առաջինը՝ փորձելով համոզել նրան: Ի՞նչ առաջարկեց Բաղակը Բաղաամին (Տես Թվոց ԻԲ.15–17): Ինչպե՞ս պատասխանեց Բաղաամը (Տես Թվոց ԻԲ.18–19): Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ նա կամեցավ կրկին հարցնել Տիրոջը: (Գուցե Բաղաամը հույս ուներ, թե Եհովան կփոխեր իր միտքը և թույլ կտար իրեն ստանալ Բաղակի առաջարկած պարգևները): Որո՞նք են Աստծո պատվիրաններից և խորհրդից բացառություններ որոնելու վտանգները:
- Եհովան Բաղաամին թույլ տվեց գնալ Բաղակի սուրհանդակների հետ, եթե նա ցանկանում էր դա: Բայց հետո Եհովան զայրացավ Բաղաամի վրա, որ նա գնաց (Թվոց ԻԲ.20–22): Ի՞նչ է ցույց տալիս Եհովայի զայրույթն այն մասին, թե ինչ կար Բաղաամի սրտում (Տես Բ Պետրոս Բ.15, Եսայիա ԻԹ.13):

2. Տերը ցույց է տալիս իր սեփական կամքն առաջ տանելիս Բաղաամի համառ հետևողականության վտանգը

Ուսուցանեք և քննարկեք ԻԲ.22–35:

- Մովաբի ճանապարհին Բաղաամը երեք անգամ փորձեց ստիպել իր էշին առաջ գնալ (Թվոց ԻԲ.22–30): Ինչո՞վ էր սա նման Բաղաամի փոխհարաբերությանը Տիրոջ հետ (Բաղաամն ուզում էր պարտադրել իր կամքը էշին և Տիրոջը: Դուք կարող եք նաև նշել, որ էշը տեսավ հրեշտակին, բայց Բաղաամը՝ ոչ: Նմանապես Տերը տեսնում էր շատ բաներ, որոնք չէր տեսնում Բաղաամը):
- Որո՞նք են ժամանակակից անձանց և խմբերի այն որոշակի զուգահեռները, որոնք համառորեն փորձում են անել, ինչ իրենք են կամենում, քան Աստծո կամքին կամ ծնողների կամ ղեկավարների արդար խորհրդին ենթարկվելը:

  Քննարկեք հետևյալ օրինակներից մի քանիսը.

ա. Երեխան մի ծնողի պատասխանից դժգոհ լինելով, գնում է մյուս ծնողի մոտ, հույս ունենալով լսել ուրիշ պատասխան:
բ. Եկեղեցու անդամը չբավարարված քահանայության առաջնորդի խորհրդից, գնում է մեկ ուրիշ քահանայության առաջնորդի մոտ:
գ. Եկեղեցու անդամը տրամաբանում է, որ պատվիրանը չի վերաբերում իրեն, ինչպես այն վերաբերում է մյուսներին:

- Տերը խրատեց Բաղաամին հրեշտակի և էշի միջոցով: Ի՞նչ պատասխանեց Բաղաամը հրեշտակի խրատող խոսքերին (Տես Թվոց ԻԲ.31–35): Ի՞նչու է Աստված խրատում իր զավակներին (Տես ՎԱՈՒ 95.1): Ինչպե՞ս կարող է Աստծո խրատը օրհնություն լինել մեզ համար:

3. Բաղաամը հրաժարվում է անիծել Իսրայելին:

Ուսուցանեք և քննարկեք ԻԲ.36–24:25:

- Բաղաամը Մովաբ հասնելուց հետո, Բաղակը նրան երեք անգամ խնդրեց անիծել Իսրայելը: Յուրաքանչյուր անգամը Տերն ասաց Բաղաամին օրհնել Իսրայելը և Բաղաամը հնազանդվեց: Այս պատմության մեջ Բաղաամն ինչպիսի ուժեղ կողմեր դրսևորեց (Տես Թվոց ԻԲ.38, ԻԳ.8, 19–20, ԻԴ.1, 12–13): Սակայն ի՞նչ թուլություն էր ակնհայտ Բաղաամի մեջ (Տես Թվոց ԻԲ.41, ԻԳ.1–3, 13–15, 27–30): Չնայած Բաղաամը հրաժարվեց Իսրայելն անիծելու Բաղակի առաջարկներից, նա տեղից տեղ կամեցավ հետևել Բաղակին և լսել նրա անարդար առաջարկները, չնայած գիտեր, որ դրանք սխալ էին): Որո՞նք են անարդար առաջարկներ լսելու վտանգները (օրինակ՝ ընկերներից կամ մամուլից), երբ գիտենք, որ դրանք սխալ են:

4. Իսրայելացիները կործանում են Մադիանացիներին և սպանում Բաղաամին:

Ուսուցանեք և քննարկեք ԼԱ.1–16:

- Ինչո՞ւ Իսրայելացիները գնացին պատերազմելու Մադիանացիների դեմ (Տես Թվոց ԼԱ.1–3, Տերը զայրացած էր Մադիանացիների վրա Իսրայելացիներին դեպի մեղք գայթակղելու համար, ինչպես արձանագրված է Թվոց ԻԵ.1–3 հատվածներում: Ո՞վ խորհուրդ տվեց Մադիանացիներին գայթակղել Իսրայելի զավակներին՝ մասնակցելու կռապաշտության և անբարոյականության (Տես Թվոց ԼԱ.16): Ինչո՞ւ Բաղաամը տվեց այդ խորհուրդը: (Չնայած Բաղաամը հնազանդվեց Տիրոջ պատվիրաններին՝ ավելի շուտ օրհնելով, քան անիծելով Իսրայելին, իր սրտում նա ցանկացավ աշխարհիկ պատիվներ և պարգևներ: Այդ պարգևները ստանալու համար, նա առաջարկեց գայթակղել Իսրայելին մեղանչել՝ նրանց ստիպելով կորցնել Աստծո պաշտպանությունը): Ի՞նչ պատահեց Բաղաամի հետ Մադիանացիների հետ Իսրայելացիների ճակատամարտի ժամանակ (ԼԱ.8):

- Նոր Կտակարանում երեք գրողներ անդրադառնում են Բաղաամին (Բ Պետրոս Բ.15–16, Հուդա Ա.11, Հայտնություն Բ.14): Ինչպիսի՞ն են նրանց տպավորությունները նրա մասին:

- Ի՞նչ դասեր կարող ենք սովորել այս պատմությունից (Եկեղեցու անդամները, ովքեր ձգտում են երկրային պարգևների և պատիվների, ովքեր ձգտում են Աստծո խորհրդի և պատվիրանների բացառությունների կամ փորձում Եկեղեցում ներկայացնել աշխարհիկ գաղափարներ, գործառություններ կամ չափանիշներ, հետևում են Բաղաամի անարդար օրինակին: Սա Հայտնություն Բ.14 հատվածում կոչվում է «Բաղաամի վարդապետություն»):

Երեց Բրյուս Մակքոնկիին ասել է.

«Ինչպիսի՜ պատմություն: Ահա Աստծո մի մարգարե, որը հաստատապես պարտավորվել է հայտարարել միայն այն, ինչ Երկնքի Տերն է կարգադրում: Թվում է նրա մտքում չկա ամենափոքր իսկ կասկածն այն ուղու վերաբերյալ, որին նա պետք է հետևի: Նա ներկայացնում է Տիրոջը և թագավորի առաջարկած ոչ մի տուն լիքը ոսկին ու արծաթը, ոչ էլ բարձր պատիվները չեն կարող հեռացնել նրան իր որոշած ուղուց....

Բայց հարստության տենչը և պատիվների համար կիրքը կանչում են նրան: Ինչ սքանչելի կլիներ [նրա համար] հարուստ և հզոր լինել.... Հավանաբար, Տերը թույլ կտա նրան հարամարեցնել իր չափանիշները և որոշ աշխարհիկ բարգավաճում և հզորություն ունենալ.... Զարմանում եմ, թե որքան հաճախ են մեզանից շատերը Եկեղեցուց ստանում մեր ուղղությունը, իսկ հետո Բաղամի նման խնդրում որոշ աշխարհիկ պարգևներ....

Բաղաամը.... մի ժամանակ ոգեշնչված և հզոր, վերջում կորցրեց իր հոգին, որովհետև դրեց իր սիրտն ավելի շուտ այս աշխարհի բաների վրա, քան հավերժության հարստությունների վրա (“The Story of a Prophet’s Madness,” *New Era*, Apr. 1972, 7):

- Անդրադարձեք ուշադրության վարժության մեջ գտնվող մտքերին: Նշեք, որ չնայած Բաղաամը թվում էր խիստ հնազանդ, նրա սրտի ցանկություններն էին աշխարհիկ պարգևներ և պատիվներ ստանալը: Ի՞նչ է սովորեցնում այս պատմությունը մեր սրտերի ցանկություններն անարատ պահելու կարևորության մասին: Ինչպե՞ս կարող ենք մեր սրտերի ցանկություններն անարատ պահել:

Եզրափակում

Վկայեք, որ եթե Բաղաամը խոնարհաբար ենթարկվեր Աստծո կամքին՝ ինչպես ինքն, այնպես էլ Իսրայելը, շատ մեղքից և տառապանքից կխուսափեին: Խրախուսեք դասարանի անդամներին ավելի շուտ անսասան լինել, քան համառ, փնտրել և հետևել Տիրոջ կամքը՝ առանց փորձելու այն շրջանցել կամ փոխել:

Ուսուցման լրացուցիչ գաղափարներ

Հետևյալ նյութն օժանդակում է առաջարկվող դասի ուրվագծին: Օգտագործեք մեկ կամ մի քանի գաղափարներ որպես դասի բաղկացուցիչ մաս:

1. Հնազանդվել Տիրոջը

Մենք կարող ենք Բաղաամից սովորել Տիրոջը հնազանդվելու մասին: Մենք այն կարող ենք սովորել նաև սուրբ գրությունների բազմաթիվ այլ տղամարդկանց և կանանց օրինակներից: Բերեք հետևյալ օրինակները.

ա. Փրկիչը՝ գիտենալով և Գեթսեմանիում խաչի վրա իրեն սպասվող հոգևարքի մասին. «ծունր դրավ, աղոթք էր անում, և ասում. Հայր, եթե կամիս այս բաժակն անցրու ինձանից. սակայն ոչ թե իմ կամքը՝ բայց քո կամքը լինի» (Ղուկաս ԻԲ.41–42):
բ. Երբ Աբրահամին հրամայվեց զոհաբերել իր որդի Իսահակին, նա «առավոտանց կանուխ վեր կացավ» դեպի Մորիայի սար ճամփորդությունը սկսելու համար (Ծննդոց ԻԲ.3):
գ. Երբ Մարիամին ասվեց, որ նա Աստծո Որդու մայրը պիտի լինի, նա պատասխանեց. «Ահա Տիրոջ աղախինն եմ, թող քո խոսքի պես լինի ինձ» (Ղուկաս Ա.38):
դ. Երբ Նեփիին կարգադրվեց վերադառնալ Երուսաղեմ Լաբանից վերցնելու արույրե թիթեղները, նա անմիջապես պատասխանեց. «Ես կգնամ ու կանեմ այն բաները, որոնք Տերը պատվիրել է» (1 Նեփի 3.7):
ե. Հելամանի որդիները հաջողակ էին պատերազմում, որովհետև «նրանք հնազանդվում և ձգտում էին ճշգրիտ կատարել հրամանի ամեն մի բառը» (Ալմա 57.21):

2. «Եհովան քեզ պատվից զրկեց» (Թվոց ԻԴ.11)

- Երբ Բաղաամը հրաժարվեց անիծել Իսրայելին և ստանալ Բաղակի պարգևներն ու պատիվը, Բաղակն ասաց նրան. «Եհովան քեզ պատվից զրկեց» (Թվոց ԻԴ.11): Ինչպե՞ս է Տիրոջը հետևելը երբեմն մեզ պահում աշխարհիկ պարգևներ և պատիվներ ստանալուց: Ի՞նչ է խոստանում Տերն աշխարհիկ պարգևների փոխարեն (Տես ՎԱՈՒ 81.6):

«Զգույշ կաց մի գուցե մոռանաս»

Դաս
17

Բ Օրինաց Զ, Ը, ԺԱ, ԼԲ

Նպատակ

Խրախուսեք դասարանի անդամներին (1) հիշել Տիրոջը և այն ուխտերը, որ իրենք կապել են նրա հետ և (2) ստեղծել մի միջավայր, որը կօգնի նրանց անել այդ:

Նախապատրաստում

1. Աղոթքով ուսումնասիրեք հետևյալ սուրբ գրությունները.

   ա. Բ Օրինաց Զ.1–9, ԺԱ.18–21: Մովսեսը Իսրայելացիներին կարգադրություններ է տալիս՝ օգնելու նրանց հիշել իրենց ուխտերը: Նա կարգադրում է ծնողներին սովորեցնել իրենց երեխաներին իր խոսքերը:

   բ. Բ Օրինաց Զ.10–12, Ը.1–20: Մովսեսը հիշեցնում է Իսրայելացիներին իրենց տրված Աստծո օրհնությունները: Նա նախազգուշացնում է նրանց, որ նրանք կոչնչանան, եթե չհնազանդվեն Աստծո պատվիրաններին և չհիշեն Նրան:

   գ. Բ Օրինաց ԼԲ.1–4, 15–18, 30–40, 45–47. Մովսեսը խորհուրդ է տալիս Իսրայելացիներին հիշել իրենց փրկության Վեմին (Հիսուս Քրիստոս):

2. Լրացուցիչ ընթերցանություն՝ Բ Օրինաց Դ, Է.1–4, ԺԳ.1–8, 34:

3. Եթե օգտագործելու եք ուշադրության առաջին վարժությունը, առարկաներ բերեք ձեր տնից, ինչպես նկարագրված է «Ուշադրության կենտրոնացման վարժությունում»:

Առաջարկվող դասի զարգացում

Ուշադրության կենտրոնացման վարժություն

Օգտագործեք հետևյալ վարժությունը (կամ ձեր սեփականը) դասը սկսելու համար: Ընտրեք այն վարժությունը, որն ամենահարմարը կլինի դասարանի համար:

1. Ցուցադրեք ձեր տնից բերած այն առարկաները, որոնք հիշեցնում են ձեզ Տիրոջ մասին և այն ուխտերի մասին, որոնք դուք կապել եք նրա հետ: (Այդպիսի առարկաներ կարող են լինել՝ սուրբ գրությունները, նկարները, գրքերը և երաժշտության ձայնագրությունները): Դասարանի անդամներին ասեք, թե ինչու են այս առարկաները կարևոր ձեզ համար: Բացատրեք որ այս դասի մի մասը նյութական առարկաների մասին է, որոնք հնում Իսրայելացիներն օգտագործում էին Տիրոջ և նրա հետ կապած ուխտերի մասին իրենց հիշեցնելու համար: Նշեք, որ նյութական առարկաները մեզ համար ևս կարող են լինել հզոր հիշեցումներ:

2. Հետևյալ բառերը գրեք գրատախտակին.

   Խաբել, մոլորեցնել, ծուղակը գցել, խարդախել, ոչնչացնել, հրապուրել, գայթակղել, հանդարտեցնել, կատաղեցնել, կուրացնել, ստել, շողոքորթել, կործանել

   - Ի՞նչ ընդհանուր բաներ ունեն այս խոսքերը: (Մեկ ընդհանուր հատկանիշն այն է, որ դրանք բոլորը նկարագրում են սատանայի գործելակերպը Տիրոջից մեզ հեռացնելու նրա ջանքերում):

   - Դասարանի որևէ անդամի տվեք կարդա ՎԵՈՒ 76.28–29: Բացատրեք, որ այս հատվածները Ջոզեֆ Սմիթին և Սիդնի Ռիգդոնին տրված մի տեսիլքից են: Ի՞նչ կարող ենք անել սատանայի ազդեցությունից պաշտպանվելու համար:

(Օգտագործեք հետևյալ աղյուսակը ցույց տալու համար այն մի քանի բաները, որոնք մենք կարող ենք անել սատանայի գայթակղություններից մեզ վահանապատելու համար):



Բացատրեք, որ Բ Օրինաց գրքում Մովսեսն Իսրայելացիներին սովորեցրեց, թե ինչպես ստեղծեն մի միջավայր, որը կօգնի նրանց դիմադրել սատանայի գայթակղություններին: Այս դասը վերանայում է Մովսեսի խորհուրդը և քննարկում, թե ինչպես կարող ենք կիրառել այն այսօր:

Սուրբ գրության քննարկում և կիրառում

Երբ կարդաք սուրբ գրության հետևյալ հատվածը, քննարկեք թե ինչպես է այն վերաբերում ամենօրյա կյանքին: Խրախուսեք դասարանի անդամներին կիսվել փորձառություններով, որոնք կապված են սուրբգրքյան սկզբունքների հետ:

Անապատում 40 տարի Իսրայելացիներին ստուգելուց, խրատելուց և ուսուցանելուց հետո, Տերն ասաց, որ նրանք պատրաստ էին մտնել խոստացված երկիր: Բայց առաջինը նա որոշ կարևոր կարգադրություններ ուներ նրանց համար: Մովսեսը հաղորդեց այդ կարգադրությունները երեք քարոզների ընթացքում, որոնք արձանագրված են Բ Օրինաց գրքում:

Այս քարոզներում Մովսեսը վերհիշեց Իսրայելի 40-ամյա թափառումները՝ ընդունելով Աստծո ձեռքն իրենց ազատման մեջ: Մովսեսը նաև քննարկեց որպես Աստծո ընտրյալ ժողովուրդ Իսրայելի պարտականությունները: Նա շեշտեց, որ նրանք պետք է հնազանդվեն Աստծո պատվիրաններին, հատկապես Նրան հիշելու և կռապաշտությունից հեռու մնալու պատվիրաններին: Մովսեսը նախազգուշացրեց, որ չնայած Իսրայելի զավակները պատրաստ էին խոստացված երկիր մտնելու, եթե նրանք վերադառնային դեպի ամբարշտություն, նրանք կկորցնեին իրենց ժառանգությունը և կցրվեին:

1. Մովսեսը կարգադրություններ է տալիս Իսրայելացիներին՝ նրանց օգնելու հիշել իրենց ուխտերը:

Ուսուցան եք և քննարկեք Բ Օրինաց Զ.1–9 և ԺԱ.18–21:

- Բ Օրինացը պարունակում է Իսրայելացիներին ուղղված Մովսեսի վերջին խոսքերը: Եթե ձեզ անհրաժեշտ լիներ տալ վերջին մի ուղերձ ձեր ընտանիքին և ընկերներին, ինչպիսի՞ն կլիներ այն:
- Ի՞նչ էր Տերը պատվիրում Իսրայելացիներին անել Բ Օրինաց Զ.5–7 հատվածներում: Ինչպե՞ս կարող ենք ստանալ սուրբ գրությունների խոսքերը մեր սրտերում: Ծնողներն ինչպե՞ս կարող են արդյունավետ ուսուցանել ավետարանն իրենց երեխաներին և օգնել նրանց սիրել սուրբ գրությունները:

- Ի՞նչ խորհուրդ տվեց Մովսեսը Իսրայելացիներին անել Բ Օրինաց Զ.8–9 և ԺԱ.18–20 հատվածներում: (Նշեք, որ ճակատանոցները «մագաղաթյա ժապավեն էին, որոնց վրա գրվում էին սուրբ գրության չորս հատվածներ.... և որոնք ոլորվում էին և ամրացվում կաշվե կապերին, որոնք կրում էին.... ճակատին կամ բազկին կապած» [Bible Dictionary, "Frontlets," 676]):

- Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ Մովսեսն ասաց ժողովրդին, սուրբ գրության հատվածները դնել իրենց աչքերի մեջտեղում, իրենց ձեռքերի վրա, իրենց տների դրանդիների և իրենց դռների վրա: Ինչպե՞ս կարող են այդպիսի անընդհատ հիշեցումներն ազդել մեր գործողությունների վրա: Ի՞նչ կարող ենք անել մեր տներում, որ մեզ հիշեցնի Տիրոջ, նրա խոսքերի և նրա հետ մեր ուխտերի մասին: Արդյոք մեր պատերի նկարները, մեր կարդացած գրքերը և կինոնկարներն ու հեռուստաներկայացումները, որոնք մենք դիտում ենք մեզ հիշեցնո՞ւմ են Տիրոջ մասին, թե դրանք տենչ են առաջացնում աշխարհի հանդեպ:

  Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոնն ասել է, որ այն մարդիկ ովքեր «ղեկավարվում են Քրիստոսի կողմից, կլանված կլինեն Քրիստոսով.... Մտեք նրանց տները և նրանց պատերի նկարները, նրանց դարակների գրքերը, օդում հնչող երաժշտությունը, նրանց խոսքերն ու գործերը կբացահայտեն նրանց որպես Քրիստոնյաներ» (in Conference Report, Oct. 1985, 6; or *Ensign*, Nov. 1985, 6–7):

2. Մովսեսը խորհուրդ է տալիս Իսրայելացիներին հնազանդվել Աստծո պատվիրաններին և հիշել Նրան:

Ուսուցանեք և քննարկեք Բ Օրինաց Զ 10–12 և Ը.1–20:

- Որո՞նք են Բ Օրինաց Զ.10–12 և Ը.1–20 հատվածների հիմնական ուղերձը: Ի՞նչ է նշանակում մոռանալ Տիրոջը: (Տես Բ Օրինաց Ը.11): Որո՞նք են նրան մոռանալու հետևանքները: (Տես Բ Օրինաց Ը.19): Ինչպե՞ս կարող ենք համոզված լինել, որ մենք չենք մոռանում Աստծուն:

- Ի՞նչ պայմաններ կամ դժվարություններ անվանեց Մովսեսը, որոնք կարող էին պատճառ դառնալ, որ մարդիկ մոռանան Տիրոջը (Տես Բ Օրինաց Զ.10–12, Ը.10–20): Ինչո՞ւ են ոմանք մոռանում Տիրոջը, հետո երբ նա առատորեն օրհնում է նրանց: (Տես Բ Օրինաց Ը.17):

  Նախագահ Բրիգամ Յանգն ասել է. «Վատթարագույն մտավախությունը, որ ես ունեմ [այս Եկեղեցու անդամների] համար՝ այն է, որ նրանք կհարստանան այս երկրում, կմոռանան Աստծուն և նրա ժողովրդին, կգիրանան և կփախչեն Եկեղեցուց և կգնան դժոխք: Այս ժողովուրդը կդիմանա հետապնդումների, թալանի, աղքատության և ամեն տեսակի հալածանքի և կմնա հավատարիմ: Բայց իմ մեծագույն մտավախությունը նրանց համար այն է, որ նրանք չեն կարող դիմանալ հարստության, և այնուամենայնիվ, նրանք պետք է փորձվեն հարստություններով, քանզի նրանք կդառնան այս աշխարհի ամենահարուստ ժողովուրդը» (in Preston Nibley, *Brigham Young: The Man and His Work* [1936], 128):

- Ո՞վ է ամեն բարգավաճման աղբյուրը, որ մենք կարող է ունենանք (Տես Բ Օրինաց Ը.18): Ի՞նչպես կարող ենք օգտագործել մեր բարգավաճումը Տիրոջ աշխատանքն առաջ տանելու համար: (Տես Բ Օրինաց Ը.18, Հակոբոս Բ.18–19):

3. Մովսեսը խորհուրդ է տալիս հիշել իրենց փրկության Վեմը (Հիսուս Քրիստոսին):

Ուսուցանեք և քննարկեք Բ Օրինաց ԼԲ.1–4, 15–18, 30–40, 45–47:

- Ո՞վ է Բ Օրինաց ԼԲ.3–4 հատվածներում խոսվող Վեմը (Հիսուս Քրիստոս, տես նաև հատվածներ 15, 18 և 30–31): Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ է երբեմն Հիսուս Քրիստոսը կոչվում Վեմ (Տես Հելաման 5.12):
- Մովսեսը հայտարարեց, որ «նրանց վեմը» (ամբարիշտների կեղծ աստվածները), մեր Վեմի պես չեն (ԼԲ.31): Ինչո՞վ է «նրանց վեմը» տարբեր «մեր Վեմից» (Բ Օրինաց ԼԲ.37–40):
- Ի՞նչ է նշանակում կառուցել Վեմի վրա (Տես Բ Օրինաց ԼԲ.46–47, Մատթեոս Է.24–27, ՎԱՈՒ 50.44): Ինչպե՞ս կարող ենք անել այս: (Տես Բ Օրինաց ԺԸ.18–19, որը մարգարեանալով Քրիստոսի գալստյան մասին, խոսում է նրա խոսքերին ականջ դնելու անհրաժեշտության մասին):

Եզրափակում

Բերեք ձեր վկայությունը Փրկչի մասին և արտահայտեք ձեր երախտագիտությունը՝ այն ուխտերի համար, որ դուք արել եք նրա հետ: Շեշտեք Աստծուն հիշելու և նրա հետ մեր կապած ուխտերը պահելու կարևորությունը: Վկայեք, որ այն առարկաները, որոնք մենք դնում ենք մեր շրջապատում, ինչպես օրինակ՝ նկարները, գրքերը կամ երաժշտությունը, որը լսում ենք, կարող են հզոր հիշեցումներ լինել Տիրոջ և նրա հետ մեր կապած ուխտերի մասին: Նշեք, որ այս բաներով մեզ շրջապատելու մեր նպատակը նույնն է, ինչ հնադարյան Իսրայելացիների կողմից ճակատանոցներ կրելու նպատակը՝ օգնելու մեզ կառուցել մեր կյանքը Վեմի վրա, օգնելու մեզ հիշել և հետևել Տիրոջը:

Ուսուցման լրացուցիչ գաղափարներ

Հետևյալ նյութը լրացնում է առաջարկվող դասի ուրվագիծը: Օգտագործեք մեկ կամ մի քանի գաղափարներ որպես դասի բաղկացուցիչ մաս:

1. «Քո տան դրանդիքի վրա գրիր նորանք» (Բ Օրինաց Զ.9)

Հրավիրեք դասարանի անդամներին իրենց տան նկարների, պաստառների, երաժշտական ձայնագրությունների և այլ առարկաների ցուցակ կազմել: Հանձնարարեք նրանց պիտակավորել կամ «+» նշանով (ցույց տալով, որ առարկան հավանաբար մղում է նրանց հիշել Տիրոջը) կամ «–» նշանով (ցույց տալով որ առարկան հեռացնում է նրանց սրտերը Տիրոջից): Առաջարկեք, որ դասարանի անդամներն անեն այս իրենց ընտանիքների հետ ընտանեկան երեկոյի ընթացքում:

2. «Նա քեզ չի թողնիլ» (Բ Օրինաց Դ.31)

- Իսրայելացիներին մարգարեանալուց հետո, որ նրանք կդառնան ուրիշ աստվածներ երկրպագող և կցրվեն (Բ Օրինաց Դ.25–28), Մովսեսն ասաց հույսի խոսքեր: Ի՞նչ նա խոստացավ նրանց, ովքեր որոնում են Տիրոջը ողջ իրենց սրտով (Տես Բ Օրինաց Դ.29–31, Եսայիա ԽԹ.14–16): Ինչպե՞ս է այս խոստումն իրականացել ձեր կյանքում: Ի՞նչ պետք է մենք անենք Տիրոջը ողջ մեր սրտով և հոգով որոնելու համար:

3. Դիմադրելով ուրիշների բացասական ազդեցություններին

- Ի՞նչ վտանգի դեմ նախազգուշացրեց Մովսեսը Բ Օրինաց ԺԳ.6–8 հատվածներում: Ինչպե՞ս կարող ենք ճանաչել, երբ ինչ-որ մեկը փորձում է մեզ հեռու տանել Տիրոջից: Ինչպե՞ս պետք է պատասխանենք այդպիսի անձնավորությանը:

4. «Եվ մեկը Եհովայի առաջին ձեռքը դատարկ չերևա» (Բ Օրինաց ԺԶ.16)

- Բ Օրինաց ԺԶ.2, 11 և 16 հատվածներում նշվող տեղն այն տաղավարն էր, որը շարժական տաճար էր Իսրայելացիների համար: Պատրաստվելով տաղավարահարաց տոնին,

Մովսեսը կարգադրեց ժողովրդին «Եհովայի առաջին ձեռքը դատարկ չերևալ» (Բ Օրինաց ԺԶ.16): Ինչպե՞ս կարող է դա վերաբերվել տաճար հաճախելուն: Ինչպե՞ս կարող ենք նախապատրաստվել մեր տաճար գնալուն, որպեսզի տաճար չմտնենք «դատարկ»: Ինչպե՞ս այս նախապատրաստությունը կօգնի մեզ «ուրախանալ Եհովայի առաջին» տաճարում (Բ Օրինաց ԺԶ.11):

- Նախագահ Հովարդ Վ. Հանթերը խորհուրդ է տվել. «Եկեք տաճար հաճախող ժողովուրդ լինենք: Տաճար հաճախեք այնքան հաճախ, որքան անձնական հանգամանքները թույլ կտան: Պահեք տաճարի նկար ձեր տանը, որ ձեր երեխաները կարողանան տեսնել այն» (in Conference Report, Oct. 1994, 8; or *Ensign*, Nov. 1994, 8): Ինչո՞ւ է կարևոր մեզ համար տաճար գնալ այնքան հաճախ, որքան հնարավոր է: Ինչո՞ւ է կարևոր մեր տանը տաճարի նկար պահել:

5. «Մի մարդ չիմացավ նրա գերեզմանը» (Բ Օրինաց ԼԴ.6)

Բ Օրինաց Գրքի գրողը, որը վերջացրեց գիրքը, գիտեր միայն, որ Մովսեսը գնաց և այսպիսով ենթադրեց, որ նա մահացել էր, որ Տերը թաղել էր նրան և ոչ ոք չգիտեր որտեղ էր նրա գերեզմանը: Սակայն մենք գիտենք, որ Մովսեսը փոխակերպվել էր: (Փոխակերպված էակների վիճակի բացատրության համար, տես 3 Նեփի 28.7–9, 37–40): Աստվածաշնչյան բառարանը Մովսեսի փոխակերպության վերաբերյալ տալիս է հետևյալ բացատրությունը:

«Ինչպես շատ հնադարյան մարգարեների դեպքում, Մովսեսի ծառայությունը շարունակվեց նրա մահկանացու կյանքի ժամանակահատվածի սահմաններից այն կողմ: Եղիայի ընկերակցությամբ նա եկավ Կերպարանափոխության սարը և շնորհեց քահանայությունը Պետրոսին, Հակոբոսին և Հովհաննեսին (Մատթեոս ԺԷ.3–4, Մարկոս Թ.4–9, Ղուկաս Թ.30, ՎԱՈՒ 63.21 *History of the Church*, 3:387): Այս իրադարձությունից, որը տեղի էր ունեցել նախքան Հիսուսի հարությունը, մենք հասկանում ենք, որ Մովսեսը փոխակերպված էակ էր և չէր մահացել, ինչպես հիշատակվում է Բ Օրինաց ԼԴ գլխում (Ալմա 45.19): Պետք է որ նա փոխակերպվեր, որպեսզի մսից և ոսկորից մարմին ունենար կերպարանափոխության ժամանակ, քանի որ հարությունը դեռ տեղի չէր ունեցել: Եթե նա միայն հոգի լիներ, նա չէր կարողանա կատարել աշխատանքը սարի վրա՝ տալով բանալիները մահկանացու Պետրոսին, Հակոբոսին և Հովհաննեսին (համեմատեք ՎԱՈՒ 129)» (Սուրբ Գրքերի Ուղեցույց «Մովսես» էջ 161):

Դաս
18

«Զորացիր և քաջ եղիր»

Հեսու Ա–Զ, ԻԳ–ԻԴ

Նպատակ

Խրախուսեք յուրաքանչյուր անդամի ուժեղ և քաջ լինել Հիսուս Քրիստոսի ավետարանով ապրելիս:

Նախապատրաստում

1. Աղոթքով ուսումնասիրեք հետևյալ սուրբ գրությունները.

   ա. Հեսու Ա: Տերը կանչում է Հեսուին Մովսեսին հաջորդելու համար և պատվիրում է նրան զորանալ, քաջ լինել, ուսումնասիրել սուրբ գրությունները և պահել պատվիրանները: Հեսուն նախապատրաստում է Իսրայելացիներին տիրելու երկրին, որը Տերը խոստացել էր նրանց:

   բ. Հեսու Գ–Դ, Զ: Իսրայելացիներն անցնում են Հորդանան գետը չոր գետնի վրայով և որպես իրենց անցման հուշարձան դնում 12 քար: Իսրայելացիների հավատքի միջոցով Երիքովը կործանվում է:

   գ. Հեսու ԻԳ, ԻԴ.14–31: Հեսուն և նրա ժողովուրդն ուխտում են ծառայել Տիրոջը:

2. Լրացուցիչ ընթերցանություն. Հեսու Է, ԺԴ:

3. Խնդրեք դասարանի որևէ անդամի նախապատրաստվել պատմելու Երիքովի ճակատամարտի պատմությունը, այնպես, կարծես թե իրենք ականատեսներ էին եղել (Հեսու Զ): Խնդրեք մեկ կամ երկու դասարանի անդամների պատրաստվել կիսվելու մի փորձառությամբ, որը կհիշեցնի նրանց Աստծո զորությունն ու սերը:

4. Եթե օգտագործելու եք ուշադրության կենտրոնացման վարժությունը, վերցրեք մի թերթ թուղթ, ժապավեն, էլաստիկ թել և գիրք: Եթե օգտագործելու եք թակարդների և ծուղակների վերաբերյալ հարցերը, ձեզ գուցե անհրաժեշտ կլինի բերել մի փոքրիկ թակարդ, ինչպես օրինակ մկան թակարդը, քննարկումը ներկայացնելու համար:

Առաջարկվող դասի զարգացում

Ուշադրության կենտրոնացման վարժություն

Օգտագործեք հետևյալ վարժությունը (կամ ձեր սեփականը) դասը սկսելու համար:

Բացատրեք, որ այս դասը Հեսուի մասին է՝ մարգարե, որն Իսրայելի զավակներին առաջնորդեց խոստացված երկրի նվաճման ժամանակ: Երբ Տերը Հեսուին մարգարե կանչեց, նրան մի խորհուրդ տվեց «զորանալ և քաջ լինել» (Հեսու Ա.6): Գրեք այս արտահայտությունը գրատախտակին: Ցույց տվեք մի թերթ թուղթ և գիրք: Խնդրեք դասարանի որևէ անդամի կանգնեցնել թուղթն իր եզրի վրա և փորձել գիրքը դնել վրան:

Հետո երբ դասարանի անդամն այս փորձի անել, բացատրեք, որ կա մի ձև թուղթն ամրացնելու համար, որպեսզի այն պահի գիրքը: Թուղթը գլանաձև փաթաթեք և ամրացրեք այն էլաստիկ թելով կամ ժապավենով: Կանգնացրեք գլանը հարթ մակերեսի վրա: Զգուշությամբ դրեք գիրքը դրա ծայրին (Փորձեք այդ դասարանի առջև):

Բացատրեք, որ Հեսուն դարձավ ուժեղ, քանի որ նա թույլ տվեց Աստծուն ձևավորել իր բնավորությունը: Նմանապես մենք, երբ թույլ ենք տալիս Աստծուն ձևավորել մեր

բնավորությունը, մենք կարող ենք զորանալ և կատարել այն բաները, որոնք Տերը կամենում է, որ մենք անենք:

Սուրբ գրության քննարկում և կիրառում

Երբ ուսուցանեք սուրբ գրության հետևյալ հատվածները, քննարկեք թե ինչպես են դրանք վերաբերում մեր ամենօրյա կյանքին: Խրախուսեք դասարանի անդամներին կիսվել փորձառություններով, որոնք կապված են սուրբգրքյան սկզբունքների հետ:

Անապատում Իսրայելացիների 40-ամյա ճամփորդությունների ընթացքում Մովսեսը տվեց նրանց Աստծո օրենքը, գործեց որպես Աստծո խոսնակ և ծառայեց որպես նրանց ուղեկցորդ: Նա Իսրայելացիների մի ողջ սերնդի համար միակ հայտնի առաջնորդն էր: Բայց Տերը վերցրեց նրան իրենց ճամփորդությունների վերջում, ճիշտ այն ժամանակ, երբ նրանք մեծ քննության առջև էին կանգնած: Հիշելով Իսրայելին տված իր խոստումները, Տերը բարձրացրեց նոր առաջնորդի՝ Հեսուին, որը հմտությամբ ղեկավարեց խոստացված երկրի նվաճումն ու բնակեցումը:

1. Տերը կանչում է Հեսուին:

Ուսուցանեք և քննարկեք Ա գլուխը:

- Ի՞նչ եք կարծում ի՞նչ մարտահրավերների հանդիպեց Հեսուն, երբ Տերը կանչեց նրան փոխարինելու Մովսեսին՝ Իսրայելացիներին առաջնորդելու համար: (Նա պետք է առաջնորդեր Իսրայելին նվաճելու և բնակեցնելու Քանանը, որը վիթխարի գործ էր: Նա նաև զբաղեցնում էր մի մեծ առաջնորդի տեղը): Ի՞նչ հավաստիացում տվեց Տերը Հեսուին, երբ Հեսուն պատրաստվում էր մտնել խոստացված երկիր (Տես Հեսու Ա.5): Ինչպե՞ս կարող է այս հավաստիացումն օգնել մեզ նոր կոչումներում կամ մարտահրավերներում: Ինչպե՞ս է Տերն օգնել ձեզ այդպիսի հանգամանքներում:
- Ի՞նչ պատվիրան կրկնեց Տերը երեք անգամ Հեսու Ա.6–9 հատվածներում: Ի՞նչ ասաց Տերը, որ Հեսուն պիտի քաջություն և զորություն ունենար անել (Տես Հեսու Ա.7: Նշեք որ չնայած Հեսուն պետք է քաջություն ունենար կռվելու բազմաթիվ ռազմի ճակատամարտեր, նրան նաև անհրաժեշտ կլիներ բարոյական խիզախություն՝ խիզախություն անելու այն, ինչ ճիշտ էր): Ի՞նչ մարտահրավերների ենք առճակատում մենք այսօր, որոնք պահանջում են զորություն և բարոյական խիզախություն: Բարոյական խիզախության ի՞նչ օրինակներ եք դուք նկատել:
- Ի՞նչ ասաց Տերը Հեսուին անել «հաջողակ լինելու» համար: (Տես Հեսու Ա.8: Բացատրեք, որ օրենքի գիրքը սուրբ գրություններն են): Ինչո՞ւ եք կարծում սուրբ գրությունների ուսումնասիրությունը կարևոր էր, որ Հեսուն իր կոչումում հաջողության հասներ: Ինչպե՞ս է սուրբ գրությունների կանոնավոր ուսումնասիրությունն օգնում մեզ:

2. Իսրայելացիները կտրում անցնում են Հորդանան գետը չոր գետնի վրայով, նրանց հավատքի միջոցով Երիքովը կործանվում է:

Ուսուցանեք և քննարկեք Հեսու Գ–Դ և Զ գլուխները:

- Երբ Իսրայելացիները պետք է անցնեին Հորդանան գետը, նրա ափերը հեղեղված էին: Ինչպե՞ս Տերը ցույց տվեց Իսրայելի զավակներին, որ նա Հեսուի հետ էր, ճիշտ ինչպես եղել էր Մովսեսի հետ (Տես Հեսու Գ.7–8, 14–17, Դ.14: Անհարժեշտության դեպքում բացատրեք, որ ուխտի տապանակը շարժական զոհասեղան էր, որը պարունակում էր սրբազան գրվածքները, ներառյալ Մովսեսի գրվածքները և քարե տախտակները, որոնք պարունակում էին Տասը Պատվիրանները): Ինչպե՞ս է Տերը ցույց տալիս մեզ, որ նա առաջնորդում և ոգեշնչում է ապրող մարգարեին, ինչպես նա անում էր անցյալի մարգարեներին:

- Ի՞նչ պետք է անեին տապանակը տանող քահանաները, նախքան Հորդանան գետի ջրերի կանգնելը (Տես Հեսու Գ.13–17: Նրանք պետք է մտնեին հեղեղված գետը միևնույն ժամանակ տանելով տապանակը): Ինչպե՞ս է Տերը երբեմն խնդրում նման բաներ մեզանից:

  Երեց Բոյդ Ք. Փաքերն ասել է.

  «Բարձրագույն Իշխանավոր կանչվելուց ոչ շատ անց ես գնացի Երեց Հարոլդ Բ. Լիի մոտ խորհրդի: Նա շատ ուշադիր լսեց իմ խնդրի մասին և առաջարկեց, որ ես տեսնեմ Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյին: Նախագահ Մակքեյն ինձ խորհուրդ տվեց, թե ինչ ուղղությամբ պետք է գնայի: Ես փափագում էի հնազանդ լինել, բայց ինձ համար չէի տեսնում հնարավոր ուղի անելու այնպես, ինչպես նա էր խորհուրդ տվել:

  Ես վերադարձա Երեց Լիի մոտ և ասացի նրան, որ չէի տեսնում հնարավորություն շարժվելու այն ուղղությամբ, որ ինձ խորհուրդ էր տրվել գնալ: Նա ասաց. «Քո խնդիրը նրանում է, որ դու ուզում ես տեսնել վերջը սկզբից»: Ես պատասխանեցի, որ ուզում էի տեսնել առնվազն մեկ երկու քայլ առաջ: Այնուհետև, ես սովորեցի ամենակարևոր դասն իմ կյանքում. «Դու պիտի սովորես քայլել մինչև լույսի եզրը և ապա մի քանի քայլ կատարես դեպի խավարը, այդ ժամանակ կհայտնվի լույսը և քո առաջ կբացի ճանապարհը » (“The Edge of the Light,” *BYU Today*, Mar. 1991, 22–23):

- Ինչո՞ւ Իսրայելը 12 քարերից կազմված հուշարձան կանգնեցրեց Հորդանան գետն անցնելուց հետո (Տես Հեսու Դ.1–9:) Այն պետք է լիներ Տիրոջ զորության վերաբերյալ վկայություն ապագա սերունդների համար՝ հիշեցնելով նրանց, որ Տերն օրհնելու էր նրանց, ճիշտ ինչպես իրենց հայրերին էր օրհնել): Ի՞նչ անձնական հուշարձաններ են հիշեցնում ձեզ Աստծո զորության մասին ձեր կյանքում (Պատասխանները կարող են ներառել հաղորդությունը, Քրիստոսի նկարները, տաճարները, մարգարեները, սուրբ գրությունները և օրագրերում արձանագրված հոգևոր փորձառությունները): Ինչպե՞ս կարող են այս հուշարձաններն օրհնել ուրիշների կյանքը (Տես Հեսու Դ.21–24):

  Վկայեք, որ Տերը կպատասխանի աղոթքներին, կտա օրհնություններ, կտա հայտնություններ և կկատարի սքանչելի գործեր յուրաքանչյուր նոր սերնդի համար: Խնդրեք նախապես հանձնարարված դասարանի անդամներին կիսվել փորձառություններով, որոնք հիշեցնում են նրանց Աստծո զորությունն ու սերը:

- Խնդրեք նախապես հանձնարարված դասարանի որևէ անդամի նկարագրել Երիքովի անկումը կարծես նա ականատես էր եղել (Հեսու Զ): Ի՞նչը ստիպեց Երիքովի պատերին փլվել: (Տես Եբրայեցիս ԺԱ.30): Ինչո՞ւ էր Իսրայելացիների վարքը հավատքի գործ:

- Ովքե՞ր էին Երիքովի միակ բնակիչները, ովքեր փրկվեցին (Տես Հեսու Զ.17, 22–25, տես նաև Հեսու Բ.1–15): Ի՞նչ կարող ենք սովորել Ռահաբի և նրա ընտանիքի փրկվելուց:

3. Հեսուն և նրա ժողովուրդն ուխտ են կապում ծառայել Տիրոջը:

Ուսուցանեք և քննարկեք Հեսու ԻԳ և ԻԴ.14–31:

- Իր կյանքի վերջում Հեսուն հիշեցրեց Իսրայելացիներին, թե ինչ էր Տերն արել նրանց համար: Հեսուն նաև խորհուրդ տվեց նրանց թակարդներից և ծուղակներից խուսափելու մասին: Եթե բերել եք մի փոքրիկ թակարդ, ցույց տվեք թե ինչպես է աշխատում այն: Եթե թակարդ չեք բերել, նկարագրեք, թե այն ինչպես է աշխատում: Որո՞նք են այն մի քանի բաները, որոնք մենք պետք է անենք թակարդն ընկնելուց խուսափելու համար: (Առաջինը մենք պետք է ճանաչենք, որ այն թակարդ է, իսկ հետո հեռու մնանք դրանից):

- Իր վերջին խորհրդում, Հեսուն խրախուսեց Իսրայելին «Տիրոջը հարել», ոչ թե «մնացած [Քանանացիների] ազգերի մնացորդին հարել» (Հեսու ԻԳ.8, 12: Նշեք, որ այս

դեպքում *հարել* բառը նշանակում է սոսնձվել կամ միանալ): Ինչպե՞ս կարող ենք ավելի շուտ «հարել Տիրոջը», քան հարել աշխարհին: Ինչպե՞ս կարող է Քանանացի ազգերին հարելը ծուղակ և թակարդ լինել Իսրայելացիների համար: Որո՞նք են այն մի քանի ծուղակներն ու թակարդները, որոնց հանդիպում ենք մենք այսօր:

- Իր կյանքի վերջում ի՞նչ կարևոր խորհուրդ տվեց Հեսուն (Տես Հեսու ԻԴ.14–15): Հեսուն և Իսրայելը ո՞ւմ հետ ուխտ կապեցին ծառայել: (Տես Հեսու ԻԴ.15–18, 21–25, 31): Ինչո՞ւ մարդ չի կարող ծառայել ճշմարիտ Աստծուն և միևնույն ժամանակ աշխարհիկ աստվածներին:

- Ինչո՞ւ է կարևոր ընտրել *այսօր* ծառայել Տիրոջը: Ինչպե՞ս կարող ենք ցույց տալ, որ մենք ընտրել ենք նրան ծառայել:

  Երեց Մարվին Ջ. Աշթոնն ասել է. «Հեսուն հիշեցնում է մեզ ճիշտ որոշումներ ընդունելու կարևորությունը. «Ընտրեք այսօր ձեզ համար, թե ում եք ծառայելու.... բայց ես և իմ տունը Եհովային ենք ծառայելու» (Հեսու ԻԴ.15): Ոչ թե վաղը, ոչ թե, երբ պատրաստվենք, ոչ թե, երբ հարմար լինի, բայց «այսօր» անհապաղ, ընտրեք ում եք ծառայելու: Նա ով հրավիրում է մեզ հետևել, միշտ մեր առջևում կլինի Իր Հոգով և ազդեցությամբ առաջնորդելով ուղին: Նա քարտեզագրել է և նշել ուղին, բացել դարպասները և ցույց տվել ճանապարհը: Նա հրավիրել է մեզ գալ Իր մոտ և Իր ընկերակցությունը վայելել: Այդ անելու լավագույն պահը դա անհապաղ ահելն է: Մենք լավագույնս կարող ենք գտնել ուղին և մնալ ուղու վրա՝ անելով այն, ինչ Հիսուսն արեց՝ պարտավորվելով ամբողջապես կատարել Իր Հոր կամքը» (in Conference Report, Apr. 1983, 41; or *Ensign,* May 1983, 30–31):

Եզրափակում

Հեսուի վերջնական խորհուրդն Իսրայելացիներին պարունակում էր նույն պատվերը, ինչ Տերը տվել էր նրան, երբ կանչել էր նրան մարգարե լինելու՝ զորանալ և քաջ լինել (Հեսու ԻԳ.1–6): Պատվերը նույնչափ վերաբերում է այսօրվան, որչափ այն վերաբերում էր այն ժամանակին, որովհետև մենք բոլորս ներգրավված ենք բարու և չարի հոգևոր կարևորագույն ճակատամարտի մեջ:

Երեց Էզրա Թաֆթ Բենսոնն ասել է, որ ապահովության և խաղաղության համար կարևոր են երկու սկզբունքներ. «Առաջինը, վստահել Աստծուն և երկրորդն ունենալ վճռականություն՝ պահել պատվիրանները, ծառայել Տիրոջը, անել այն, ինչը ճիշտ է.... Տերը դա շատ հստակ է դարձրել հայտնությունների մեջ, որ չնայած ժամանակները կդառնան չար, չնայած մենք շրջապատված կլինենք գայթակղություններով և մեղքով, չնայած անապահովության զգացում կլինի, չնայած մարդկանց սրտերը կարող են թուլանալ և անհանգստությամբ լցնել նրանց հոգիները, եթե մենք միայն վստահենք Աստծուն և պահենք նրա պատվիրանները, մենք վախենալու կարիք չենք ունենա» (in Conference Report, Oct. 1950, 146):

Ուսուցման լրացուցիչ գաղափարներ

Հետևյալ նյութը լրացնում է առաջարկվող դասի ուրվագիծը: Օգտագործեք այս գաղափարներից մեկը կամ մի քանիսը որպես դասի բաղկացուցիչ մաս:

1. Զբաղեցնելով հաջողակ առաջնորդի տեղը

- Շատ մարդիկ, ինչպես օրինակ Հեսուն և Բրիգամ Յանգը կանչվեցին զբաղեցնելու մեծ առաջնորդների տեղը: Որո՞նք էին նրանց մարտահրավերներից մի քանիսը: Ի՞նչ եք կարծում, ի՞նչն օգնեց նրանց հաջողակ լինել: Ի՞նչ կարող ենք անել՝ օգնելու մեզ հաջողակ լինել, երբ մենք հաջորդում ենք մեկին, որը գերազանցում էր մեզ, թե աշխատանքում, թե եկեղեցում, թե դպրոցում, թե տանը:

2. Մեկ անձնավորության մեղքերի հետևանքներն այլ մարդկանց վրա

- Ուսուցանեք Հեսու Է գլխում Աքարի պատմությունը: Աքարի անհնազանդության պատճառով Իսրայելացիները պարտվեցին Գայիի ժողովրդի կողմից (Հեսու Է.1–5): Ի՞նչ էր արել Աքարն առաջ բերելով այդ: (Տես Հեսու Է.20–21): Նա Տիրոջ դժկամությունն էր բերել Իսրայելի վրա՝ չհնազանդվելով նրան, Երիքովից վերցնելով հագուստներ և փող):

- Ի՞նչ են հուշում Աքարի մեղքերի ազդեցությունն այն մասին, թե մեր անձնական մեղքերն ինչպես կարող են ազդել ուրիշ մարդկանց վրա: Ինչո՞ւ է մեր կողմից մոլորություն մտածելը, որ ինչ որ մենք անում ենք, մեր անձնական գործն է և չի կարող ազդել ուրիշ մարդկանց վրա: Վթարը, որի պատճառը հարբած վարորդն է, կարող է ազդել ամեղ մարդկանց վրա, ովքեր վնասվել են: Մարդը, որը խանգարում է Կիրակնօրյա Դպրոցի դասը, դժվարացնում է ուրիշներին կենտրոնանալ և զգալ Հոգին: Մարդը, որը սեռական մեղքեր է գործում կամ չի ապրում Իմաստության Խոսքով, ցավ և տառապանք է բերում ուրիշներին: Ամուսինը, որն անհավատարիմ է, կարող է կործանել ընտանիքը և մեծ ցավ պատճառել ընտանիքի անմեղ անդամներին: Եկեղեցու անհատական անդամները, ովքեր չեն հետևում Տիրոջը կարող են Եկեղեցին ետ պահել որպես ամբողջություն Տիրոջ օրհնությունները ստանալուց):

  Երեց Ջեյմս Ի. Ֆաուստն ասել է. «Անձնական ընտրություններն անձնական չեն, դրանք բոլորն ունեն հասարակական հետևանքներ.... Մեր հասարակությունը հանրագումարն է այն ամենի, ինչ միլիոնավոր անհատներ անում են իրենց անձնական կյանքում: Անձնական վարքի այդ հանրագումարը վիթխարի կարևորության համաշխարհային հասարակական հետևանքներ ունի: Գոյություն չունեն լիակատար անձնական ընտրություններ» (in Conference Report, Apr. 1987, 101; or *Ensign*, May 1987, 80):

3. Քաղեբը ստանում է Քեբրոնի երկիրը

- Հեսու ԺԴ գլուխը պատմում է, թե ինչպես Քաղեբը ստացավ Քեբրոնի երկիրը: Ինչո՞ւ Քաղեբը ստացավ Քեբրոնի երկիրը (Տես Հեսու ԺԴ.6–14: Նշեք, որ «բոլորովին հետևեցի Տիրոջը» արտահայտությունը կրկնվում է Ը, Թ և ԺԴ գլուխներում):

  Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալն արտահայտել է իր հիացմունքը Քաղեբի հանդեպ և առաջարկել որոշ դասեր, որոնք կարող ենք քաղել նրանից.

  «Քաղեբի օրինակից մենք կարող ենք շատ կարևոր դասեր քաղել: Ճիշտ ինչպես Քաղեբը ստիպված էր պայքարել և մնալ նվիրված և հավատարիմ իր ժառանգությունը ձեռք բերելու համար, նույնպես և մենք պիտի հիշենք, որ մինչ Տերը մեզ մի տեղ է խոստացել իր արքայությունում, մենք միշտ պետք է ձգտենք անդադար և հավատարմորեն, որպեսզի արժանի լինենք ստանալու այդ պարգևը:

  Քաղեբն ավարտեց իր հուզիչ հայտարարությունը խնդրանքով և մարտահրավերով, որի հետ սիրտս լիապես համահունչ է: Ենակիմները՝ հսկաները, դեռ բնակվում էին խոստացված երկրում և նրանց անհրաժեշտ էր հաղթել: Եվ ասաց Քաղեբը, որն այդ ժամանակ 85 տարեկան էր «Տուր ինձ այն սարը» (Հեսու ԺԴ.12):

  Այս պահին այսպիսին է իմ զգացողությունն այս աշխատանքի վերաբերյալ: Մեզ մեծ մարտահրավերներ են սպասվում, հաղթահարելու վիթխարի հնարավորություններ: Ես ողջունում եմ այդ հուզիչ ապագան և ուզում եմ ասել Տիրոջը խոնարհաբար «Տուր ինձ այն սարը», տուր ինձ այդ մարտահրավերները» (in Conference Report, Oct. 1979, 115; or *Ensign*, Nov. 1979, 79):

4. «Ընտրեցեք այսօր ձեզ համար, թե ում եք ծառայելու»

Եթե *Հին Կտակարանի Տեսաֆիլմերը* (53224) մատչելի են, ցուցադրեք «Ընտրեցեք այսօր ձեզ համար, թե ում եք ծառայելու» վեց րոպեանոց հատվածը՝ սովի և ծարավի ժամանակ արաբական նժույգի հնազանդության մասին:

Դաս
19

Դատավորների կառավարում

Դատավորներ Բ, Դ, Զ–Է, ԺԳ–ԺԶ

Նպատակ

Խրախուսեք դասարանի անդամներին որոնել ազդեցություններ, որոնք կզորացնեն նրանց՝ ապրելու ավետարանով մարտահրավերների այս աշխարհում:

Նախապատրաստում

1. Աղոթքով ուսումնասիրեք հետևյալ սուրբ գրությունները.

   ա. Դատավորաց Բ. 6–23: Ուրացության շրջան է սկսվում, երբ Իսրայելի զավակների աճող սերունդը լքում են Տիրոջը՝ իրենց շրջապատող ժողովրդի աստվածներին ծառայելու համար:

   բ. Դատավորաց Դ.1–16: Բարակին պատվիրվում է ազատել Իսրայելը Հաբինից՝ Քանանի թագավորից (Դ.1–7): Նա համաձայնվում է գնալ, եթե Դեբորան կամենա գնալ իր հետ (Դ.8–9): Դեբորան և Բարակն ազատում են Իսրայելը Քանանացիներից (Դ.10–16):

   գ. Դատավորաց Զ–Է: Գեդեոնին պատվիրվում է ազատել Իսրայելը Մադիամացիներից (Զ.1–24): Նա և 10 ուրիշ մարդիկ գիշերով կործանում են Բահաղի սեղանը (Զ.36–40): Տերը հավաստիացնում է Գեդեոնին օգնել նրան երկու նշան շնորհելով (Զ.36–40): Գեդեոնը և 300 ուրիշ մարդիկ ազատում են Իսրայելը Մադիամացիներից (Է.1–25):

   դ. Դատավորաց ԺԳ–ԺԶ: Մի հրեշտակ կարգադրում է Սամփսոնի ծնողներին նրան մեծացնել որպես ուխտավոր (ԺԳ.1–25): Սամփսոնն ուժով մեծ սխրագործություններ է կատարում, բայց խախտում է իր ուխտավորի երդումները (ԺԴ–ԺԵ): Սամփսոնը տեղի է տալիս Դալիլայի հրապույրներին. նրա մազերը կտրում են, և նա թուլանում է. Փղշատցիները բռնում են նրան, և նա մեռնում է՝ քարուքանդ անելով նրանց տաճարը (ԺԶ.1–31):

2. Լրացուցիչ ընթերցանություն. «Դատավորաց Գիրքը» Սուրբ Գրքերի Ուղեցույց, էջ 47:

3. Խնդրեք դասարանի անդամներին այս դասի ընթացքում պատրաստվել ամփոփել մեկ կամ մի քանի սուրբգրքյան պատմություններ:

Առաջարկվող դասի զարգացում

Ուշադրության կենտրոնացման վարժություն

Օգտագործեք հետևյալ վարժությունը (կամ ձեր սեփականը) դասը սկսելու համար:

Նախագահ Գորդոն Բ. Հինքլին պատմել է մի ժամանակի մասին, երբ նա մի երիտասարդ ծառ տնկեց իր բակում, բայց անտեսեց նեցուկներ օգտագործել՝ օգնելու, որ ուղիղ աճեր: Ժամանակի ընթացքում քամին խիստ ծռեց ծառը մի կողմի վրա: Նախագահ Հինքլին հասկացավ, որ եթե նա կապած լիներ ծառը նեցուկներին, դա կօգներ մինչև այն բավականաչափ կամրանար ինքնուրույն քամուն դիմադրելու համար: (In Conference Report, Oct. 1993, 77–78; or *Ensign*, Nov. 1993, 59):

Բացատրեք, որ մենք երբեմն կարող է նմանվենք այդ երիտասարդ ծառին, անկարող լինելով քամուն (սատանայի գայթակղություններին) ինքնուրույն դիմադրելու: Դատավորաց գրքում մենք իմանում ենք մի քանի «նեցուկների» մասին, որոնք կարող են օգնել մեզ:

Գրատախտակին նկարեք մի երիտասարդ ծառ, որը կապված է չորս նեցուկներով: Երբ առաջ գնաք դասի չորս սուրբգրքյան պատմություններով, յուրաքանչյուր նեցուկը պիտակավորեք հետևյալ ձևով.



Սուրբ գրության քննարկում և կիրառում

Երբ սովորեցնեք հետևյալ սուրբ գրության հատվածը, քննարկեք, թե ինչպես է այն վերաբերում ամենօրյա կյանքին: Խրախուսեք դասարանի անդամներին կիսվել փորձառություններով, որոնք կապված են սուրբգրքյան սկզբունքների հետ:

Առաջնորդվելով Հեսուի կողմից՝ Իսրայելացիները նվաճեցին խոստացված երկրի մեծ մասը: Հեսուի մահից հետո Իսրայելը չմիավորվեց մեկ ընհանուր ղեկավարի ներքո մինչև մարգարե Սամուելի և Թագավոր Սավուղի ժամանակները: Այս ժամանակահատվածի ընթացքում 12 դատավորներ ծառայեցին որպես Իսրայելի կառավարիչներ և ռազմական առաջնորդներ: Նրանց կառավարման մեծ մասը ողբերգական էր, քանի որ Իսրայելը շատ անգամ անցավ ուրացության, գերության, ապաշխարության և ազատման փուլերով:

Որպես այս պատմության ողբերգական մասերի հակակշիռ կան մարդկանց պատմություններ, ովքեր մնացին հավատարիմ, հզոր օրինակներ դառնալով, թե ինչպես գործադրել հավատք և քաջություն ուրացած աշխարհում: Դեբորան և Գեդեոնը երկուսն էլ արդար դատավորներ էին, որոնց Տերը բարձրացրեց ազատելու Իսրայելը: Քանանացիների բանակից ազատվելու համար Իսրայելը հիմնականում Դեբորայի հավատքին էր պարտական: Տիրոջն ապավինելը Գեդեոնին թույլ տվեց իր 300 հոգիանոց բանակով՝ հրաշքով հաղթել Մադիամացիներին:

1. Արդար ծնողների ուժը և նրանց ուղիներից հեռանալու հետևանքները

Ուսուցանեք և քննարկեք Դատավորաց Բ.6–23:

- Դատավորաց գրքում Իսրայելի զավակներն անցան արդարակեցության և ուրացության մի քանի փուլեր (տես «Ուրացության փուլը Դատավորաց գրքում» ուրվագիծը 89 էջում): Ինչպե՞ս սկսեց Իսրայելացիների աճող սերունդն ուրացության փուլը: (Տես հատկապես Դատավորաց Բ.10, 12, 17, 20 և 22: Առաջարկեք, որ դասարանի անդամներն այս հատվածներում ընդգծեն կարևոր բառերը: Նշեք, որ Իսրայելի զավակները թողեցին Աստծուն և թողեցին իրենց ծնողների ուղիներն ու ուխտերը):
- Ինչո՞ւ են զավակները երբեմն թողնում իրենց ծնողների արդար ուսմունքներն ու ուղիները: Ինչպե՞ս կարող են ծնողներն օգնել իրենց զավակներին հավատարիմ լինել: Ինչպե՞ս են ձեր ծնողներն ու ընտանիքի մյուս անդամները զորացրել ձեզ՝ ապրելու արդարակյաց կյանքով:

- Ինչպե՞ս կարող ենք ճանաչել ուրացության վաղ նշանները: Ինչպե՞ս կարող է մարդ կոտրել ուրացության փուլը: Ինչպե՞ս կարող ենք հավուր պատշաճի օգնել ընտանիքի անդամին կամ ընկերոջը, որը մոլորվում և հեռանում է ճշմարտությունից:



2. Դեբորա՝ արդար ընկերոջ ուժը

Համառոտ ամփոփեք Դեբորայի և Բարակի պատմությունը Դատավորաց Դ.1–16 հատվածներում կամ դասարանի որևէ անդամի հանձնարարեք անել դա:

- Ի՞նչ պատվիրեց Տերն անել Բարակին (Տես Դատավորաց Դ.6–7): Ի՞նչ էր զգում Բարակն այս հանձնարարության վերաբերյալ: Ի՞նչ պայմանով էր Բարակը կամենում գնալ ճակատամարտելու Սիսարայի և նրա 900 կառքերի դեմ (Տես Դատավորաց Դ.8): Ի՞նչ եք կարծում ինչո՞ւ Բարակը կամեցավ դիմակայել Սիսարային, եթե Դեբորան գնար իր հետ:
- Ի՞նչն է Դեբորայի մեջ ձեզ վրա տպավորություն գործում: Ի՞նչ հատկանիշներ ուներ Դեբորան, որոնք գուցե չուներ Բարակը (Տես Դատավարաց Դ.4–9, 14):
- Ի՞նչ կարող ենք սովորել Դեբորայից իսկական ընկեր լինելու մասին: (Մի բան, որը կարող ենք սովորել այն է, որ իսկական ընկերները ոգեշնչում են մեզ հնազանդվել Տիրոջը և մեզ ուժ են տալիս անել այն, ինչ ճիշտ է): Ինչպե՞ս են ձեր ընկերներն օգնել ձեզ դիմակայել դժվար մարտահրավերներին կամ հնազանդվել Տիրոջ պատվիրաններին: Ինչպե՞ս կարող ենք ավելի լավ ընկերներ լինել ուրիշների համար:

  Առաջարկեք դասարանի անդամներին գրի առնել իրենց ընկերների անունները և հարցնել իրենք իրենց (1) թե իրենց այդ ընկերների հանդեպ իրենք Դեբորայի նման ե՞ն և (2) թե այդ ընկերներն արդյոք Դեբորային են նման:

3. Գեդեոն՝ հավատքի ուժ առ Աստված

Համառոտ ամփոփեք Գեդեոնի պատմությունը Դատավորաց Զ–Է գլուխներում կամ հանձնարարեք դասարանի որևէ անդամի անել այդ:

- Ի՞նչ պատվիրեց Տերը Գեդեոնին անել: (Տես Դատավորաց Զ.14): Ո՞րն էր Գեդեոնի առաջին պատասխանը (Տես Դատավորաց Զ.15):
- Ինչպե՞ս Տերը հավաստիացրեց Գեդեոնին, որ Նա էր հրամայել Գեդեոնին ազատագրել Իսրայելը, և որ Նա լինելու էր նրա հետ և օգնելու էր նրան (Տես Դատավորաց Զ.16–23, 36–40, Է.9–15):
- Երբ Գեդեոնը հավատաց, որ Տերն իսկապես հրամայում էր իրեն ազատագրել Իսրայելը, նա առաջ գնաց հավատքով: Ինչո՞ւ Տերը կամեցավ, որ Գեդեոնի 32000-անոց

բանակը կրճատվի մինչև 300 մարդ Մադիամացիների հետ կռվելու համար: (Տես Դատավորաց Է.2: Տերը կամենում էր, որ Իսրայելացիները վստահեին իրեն և ճանաչեին իր զորությունը և ոչ թե իրենց զորությունը): Ինչպե՞ս է Տերը սովորեցնում մեզ վստահել իրեն և ճանաչել իր զորությունն այսօր:

- Ի՞նչ պատահեց, երբ Գեդեոնը և նրա 300 մարդիկ հանդիպեցին Մադիամացիներին (Տես Դատավորաց Է.16–23): Ի՞նչ եք կարծում ինչո՞ւ Գեդեոնն իր մարդկանց հրամայեց աղաղակել. «Տիրոջ և Գեդեոնի սուրը» (Տես Դատավորաց Է.20: Գեդեոնը գիտեր և կամենում էր, որ իր մարդիկ իմանային, որ Տերն իրենց հետ էր):
- Ի՞նչ կարող ենք սովորել Գեդեոնից: Ինչպե՞ս է Տերն օգնել ձեզ անել մի բան, որը դժվար էր (Երբ դասարանի անդամները կիսվեն փորձառություններով, վկայեք, որ երբ Տերը պատվիրում է մեզ ինչ որ բան անել, նա կօգնի մեզ իրականացնել այն):

4. Սամփսոն՝ ուխտերի ուժը և դրանց խախտելու հետևանքները

Համառոտ ամփոփեք Սամփսոնի պատմությունը Դատավորաց ԺԳ–ԺԶ գլուխներում կամ դասարանի որևէ անդամի հանձնարարեք անել դա:

- Ինչպե՞ս Սամփսոնի մայրը, որն ամուլ էր, իմացավ, որ որդի է ունենալու (Տես Դատավորոց ԺԳ.2–3): Ի՞նչ ասաց հրեշտակը Սամփսոնի մորը՝ այն որդու մասին, որին պիտի ծներ (Տես Դատավորաց ԺԳ.4–5: Բացատրեք, որ ուխտավորներն ուխտեր էին կապում Տիրոջ հետ՝ առանձնացնելով իրենց աշխարհիկ բաներից և դառնում սուրբ Նրա համար: Ուխտավորների երդումները գրված են Թվոց Զ.2–6, 8 հատվածներում):
- Ի՞նչ օրհնություններ տվեց Տերը Սամփսոնին՝ նրան օգնելու Իսրայելը Փղշատցիներից ազատագրելու իր միսիան իրականացնելու համար: (Տես Դատավորաց ԺԳ.24–25, ԺԴ.5–6, 19, ԺԵ.14–15: Տերը նրան տվեց հոգևոր և ֆիզիկական ուժ):
- Որպես ուխտավոր և Իսրայելի տան անդամ՝ Սամփսոնն ուխտեր կապեց Տիրոջ հետ: Սակայն շուտով, որպես Իսրայելի տան անդամ, նա խախտեց իր ուխտավորի երդումներն ու ուխտերը: Ի՞նչ երդումներ և ուխտեր նա խախտեց: (Ստորև բերված են Սամփսոնի կողմից խախտած մի քանի ուխտեր):

  ա. Նա ամուսնացավ Իսրայելի տան ուխտերից դուրս (Դատավորաց ԺԴ.1–3):
  բ. Նա անբարոյականություն արեց մի պոռնիկի հետ (Դատավորաց ԺԶ.1):
  գ. Նրա մազերը կտրեցին (Դատավորաց ԺԶ.4–20):
- Որո՞նք էին Սամփսոնի կողմից իր ուխտերի խախտման հետևանքները (Տես Դատավորաց ԺԶ.17–21: Նա կորցրեց իր հոգևոր և ֆիզիկական ուժը և Փղշատցիները կուրացրեցին և կապեցին նրան: Անհրաժեշտության դեպքում բացատրեք, որ Սամփսոնի մազերը չէին նրա ֆիզիկական ուժի աղբյուրը: Ավելի շուտ նրա մազերն իր ուխտի նշանն էին Տիրոջ հետ և երբ նրա մազերը կտրեցին, Տերը վերցրեց նրա ֆիզիկական ուժը, որովհետև նրա ուխտը խախտված էր): Ի՞նչ է պատահում, երբ մենք խախտում ենք մեր ուխտերը: Տիրոջ հետ ուխտի ի՞նչ նշաններ ունենք մենք:
- Ուխտերը, որոնք անում ենք մենք Տիրոջ հետ, պետք է լինի ուժի, առաջնորդության և պարտավորության աղբյուր: Ի՞նչ ուխտեր ենք մենք կապում Տիրոջ հետ: Ինչպե՞ս են այդ ուխտերը զորացրել ձեզ (Ուղիներից մեկն այն է, որ ուխտերը զորացնում են մեզ՝ օգնելով դիմադրել սատանայի ջանքերին, որը փորձում է կուրացնել ու կապել մեզ):
- Սամփսոնը մեծ ներուժ ուներ: Հրեշտակը, որը հայտնեց նրա ծննդյան մասին, ասաց, որ նա կսկսի ազատագրել Իսրայելը Փղշատցիներից: Տերն օրհնեց նրան բազմաթիվ պարգևներով, ներառյալ մեծ ֆիզիկական ուժով: Ներքին ինչպիսի՞ թուլություններ պատճառ դարձան նրա անկման համար (Տես Դատավորաց ԺԵ.7, ԺԶ.1, ՎԼՈՒ 3.4: Պատասխանները կարող են լինել՝ ցանկամոլությունը, անբարոյականությունը,

ոխակալությունը և ուխտերը խախտելը): Ինչպե՞ս կարող ենք հաղթահարել թուլությունները, որոնք կարող են խանգարել մեզ գործադրել մեր ներուժը:

Եզրափակում

Բացատրեք, որ Հեսուի գրքում Իսրայելացիները կռվեցին ու հաղթեցին բազմաթիվ ֆիզիկական ճակատամարտեր Քանանացիների դեմ: Սակայն Դատավորաց գրքում Իսրայելացիները սկսեցին կորցնել հոգևոր ճակատամարտերը, անձնատուր լինելով Քանանացիների աշխարհիկ գործառությունների և կեղծ աստվածների ազդեցություններին: Մենք դիմակայում ենք նմանատիպ հոգևոր ճակատամարտերի: Վկայեք, որ մենք կարող ենք հաջողության հասնել այս ճակատամարտերում, եթե (1) հետևենք արդար ծնողների և նախնիների ուղուն (2) լավ ընկերներ ունենանք, (3) մեծացնենք մեր հավատքն առ Տերը և (4) պահենք մեր ուխտերը:

Ուսուցման լրացուցիչ գաղափարներ

Հետևյալ նյութը լրացնում է դասի ուրվագիծը: Օգտագործեք այս գաղափարներից մեկը կամ մի քանիսը որպես դասի բաղկացուցիչ մաս:

1. Իրենց զավակների աշխարհիկության մեջ ծնողների դերը (Դատավորաց Ա.28)

- Իսրայելացիների աճող սերնդի հավատարիմ մնալու ձախողումն ամբողջովին իրենց սեփական մեղքով չէր: Դատավորաց Ա.21, 27–33, և Բ.1–4 հատվածների համաձայն՝ ահա թե ինչպես էր դրվել զավակների ձախողման հիմքը: (Այն դրվել էր Քանանացիներին դուրս քշելիս ծնողների ձախողմամբ: Չնայած ծնողները բավականաչափ ուժեղ էին իրենց շրջապատող աշխարհի ազդեցությունների հանդեպ, նրանց երեխաներն ուժեղ չէին):
- Ինչպե՞ս են որոշ ծնողներ այսօր իրենց երեխաներին ենթարկում աշխարհիկ ազդեցությունների՝ կատարելով նույն սխալները, ինչ որ Իսրայելացիների «աճող սերնդի» ծնողները (Խրախուսեք առանձնահատուկ պատասխաններ):

2. Հրաշքներ մեր օրերում

- Ինչո՞ւ են որոշ մարդիկ Գեդեոնի նման զգում, որ Տերն ավելի շատ հրաշքներ է գործել նախորդ սերունդների մեջ, քան իրենց (Տես Դատավորաց Զ.13): Ինչպե՞ս ենք իմանում, որ Աստված շարունակում է հրաշքներ գործել այսօր: Ո՞րն է մեր դերը հրաշքների գործում (Տես Մորոնի 7.35–38): Ինչպե՞ս եք իմանում, որ Աստված շարունակում է հրաշքներ գործել այսօր: Ինչպե՞ս կարող ենք զանազանել չաղաղակող հրաշքները մեր կյանքում:

3. «Մի գուցե Իսրայելն ինձ դեմ պարծենա» (Դատավորաց Է.2)

- Ինչո՞ւ Տերը պատվիրեց Գեդեոնին իր զորքերի մեծ մասին ուղարկել տուն նախքան Մադիամացիների դեմ գնալը: (Տես Դատավորաց Է.2): Ինչպե՞ս են մեզանից ոմանք «պարծենում իրենցով» (Փոխարեն ընդունելու, որ մեր օրհնություններն ու ուժը գալիս է Տիրոջից, մեզանից ոմանք հայտարարում են, որ մենք ենք վաստակել այն բոլորը, ինչ ունենք, մեր սեփական ջանքերի միջոցով: Ինչպե՞ս կարող ենք հաղթահարել պարծենկոտությունը:

4. Դիմակայելով գայթակղությանը

- Ինչո՞ւ Սամփսոնն իմանալով, որ Դալիլան փորձել էր երեք անգամ դավաճանել իրեն, պատմեց նրան իր ուժի գաղտնիքը: (Տես Դատավորաց ԺԶ.15–17): Հակադրեք Դալիլային տված Սամփսոնի պատասխանները Պետափրեսի կնոջը տված Հովսեփի պատասխաններին (Ծննդոցs ԼԹ.7–12): Ինչպե՞ս կարող ենք դիմադրել կամ հաղթահարել համառորեն շարունակվող գայթակղությունները:

«Քաղաքիս բոլոր ժողովուրդը գիտե որ դու մի առաքինի կին ես»

Դաս 20

Հռութ, Ա Թագավորաց Ա

Նպատակ

Խրախուսեք դասարանի անդամներին ընդօրինակել Հռութի, Նոեմիի և Աննայի արդար հատկանիշները:

Նախապատրաստում

1. Աղոթքով ուսումնասիրեք հետևյալ սուրբ գրությունները.

   ա. Հռութ Ա–Բ: Իր ամուսնու մահից հետո Հռութը թողնում է իր տունը, սկեսրոջ՝ Նոեմիի հետ գնում Բեթլեհեմ: Բեթլեհեմում Հռութն աշխատում է Բոոսի դաշտերում, որը բարությամբ է վերաբերվում նրան:

   բ. Հռութ Գ–Դ: Հռութը պառկում է Բոոսի ոտքերի մոտ, և նա խոստանում է ամուսնանալ նրա հետ: Նրանք ամուսնանում են և երեխա են ունենում: Նրանց ժառանգների թվում են Թագավոր Դավիթը և Հիսուս Քրիստոսը:

   գ. Ա Թագավորաց Ա, Բ. 1–2, 20–21: Աննան օրհնվում է որդիով, որին նա իր խոստումի համաձայն՝ նվիրաբերում է Տիրոջը: Հետագայում նա օրհնվում է ուրիշ երեխաներով:

2. Եթե օգտագործելու եք ուշադրության կենտրոնացման վարժությունը, բերեք մի թերթ թուղթ և մի գրիչ կամ մատիտ դասարանի յուրաքանչյուր անդամի համար:

3. Եթե Հին Կտակարանի տեսաժապավենը (53224) մատչելի է, ցույց տվեք «Աննայի հավատքը» երեք րոպեանոց հատվածը, որպես դասի բաղկացուցիչ մաս:

Առաջարկվող դասի զարգացում

Ուշադրության կենտրոնացման վարժություն

Օգտագործեք հետևյալ վարժությունը (կամ ձեր սեփականը) դասը սկսելու համար:

Դասարանի յուրաքանչյուր անդամի տվեք մի կտոր թուղթ և գրիչ կամ մատիտ:

Բացատրեք, որ չնայած Հռութի գիրքը համառոտ է, այն հստակորեն ցույց է տալիս, որ Հռութն արդար կին էր: Այնուհետև, տվեք հետևյալ հարցերը և հանձնարարեք դասարանի յուրաքանչյուր անդամի գրել պատասխաններն իրենց թղթերի վրա:

- Եթե ձեր բնավորությունն անհրաժեշտ լիներ նկարագրել ուղղակի մի քանի խոսքով, ինչ բառեր կկամենայիք, որ դրանք լինեին: Ինչպիսի՞ բան կարող եք անել այս շաբաթ՝ ավելի մոտենալու այդ ցանկալի նկարագրությանը:

Բացատրեք, որ այս դասին կքննարկվի Հռութի և մյուս երկու կնոջ՝ Նոեմիի և Աննայի արդար հատկանիշները:

Սուրբ գրության քննարկում և կիրառում

Երբ ուսուցանեք սուրբ գրության հետևյալ հատվածները, քննարկեք թե ինչպես են դրանք վերաբերում ամենօրյա կյանքին: Խրախուսեք դասարանի անդամներին կիսվել փորձառություններով, որոնք կապված են հոգևոր սկզբունքների հետ:

1. Հռութը թողնում է իր տունը՝ Նոեմիի հետ գնալով Բեթլեհեմ:

Ուսուցանեք և քննարկեք Հռութ Ա–Բ:

- Ինչո՞ւ էր Նոեմին և նրա ընտանիքը գնացել ապրելու Մովաբում: (Տես Հռութ Ա.1–2): Ինչո՞ւ Նոեմին վերադարձավ Բեթլեհեմ իր ամուսնու և որդիների մահից հետո (Տես Հռութ Ա.6: Բեթլեհեմը նրա հայրենիքն էր և սովն այնտեղ ավարտվել էր):
- Երբ Նոեմին ապրում էր Մովաբում, նրա որդիներն ամուսնացան Որփայի և Հռութի հետ, որոնք Մովաբից էին (Հռութ Ա.4): Ինչպե՞ս Նոեմին սեր և մտահոգություն ցուցաբերեց իր հարսների հանդեպ, որը կարող է օգնել մեզ մեր ընտանեկան փոխհարաբերություններում:
- Նոեմիի հարսներից մեկը՝ Որփան, վերադարձավ իր ընտանիքը, բայց մյուսը՝ Հռութը, պնդեց, որ Նոեմիի հետ գնա Բեթլեհեմ: Ի՞նչ կարող ենք իմանալ Հռութի մասին՝ Հռութ Ա.16–17 հատվածներում Նոեմիին տված իր խոստումից (Նա սիրով էր լցված, հավատարիմ էր և պատրաստակամ զոհաբերություն կատարելու): Ինչպե՞ս կարող ենք առավել հավատարիմ լինել մեր ընտանիքներում: Ինչպե՞ս կարող ենք առավել անեսասեր լինել ինչպես Հռութը :
- Ինչի՞ց հրաժարվեց Հռութը՝ գնալով Բեթլեհեմ Նոեմիի հետ: (Պատասխանները կարող են ներառել իր հայրենիքը, ընտանիքը, ընկերներն ու կրոնը): Ի՞նչ կարող ենք սովորել Հռութից ավետարանի համար զոհաբերություններ կատարելու վերաբերյալ: Ի՞նչ ձեռք բերեց Հռութը՝ գնալով Նոեմիի հետ: (Հիսուս Քրիստոսի ավետարանը, տես ուսուցման առաջին լրացուցիչ գաղափարը):
- Բեթլեհեմ գնալուց հետո, ի՞նչ արեց Հռութն իրեն և Նոեմիին ուտելիքով ապահովելու համար: (Տես Հռութ Բ.2: Գուցե ձեզ անհրաժեշտ լինի բացատրել, որ հասկ ժողովողը մի մարդ է, որին թույլատրվում է հավաքել և պահել հացահատիկը, որը մնում է դաշտերում բերքահավաքից հետո): Ո՞ւմ դաշտերում էր Հռութը հասկ ժողովում (Տես Հռութ Բ.1, 3): Ինչո՞ւ էր Բոոսը լավ տպավորություն ստացել Հռութից (Տես Հռութ Բ.5–7, 11. Բոոսը տեսավ, որ Հռութը լավ աշխատող է: Նա նաև տեղյակ էր այն բոլոր բաներին, որ Հռութն արել էր Նոեմիի համար): Ինչպե՞ս Բոոսը բարություն ցույց տվեց Հռութին (Տես Հռութ Բ.8–9, 14–16):
- Ինչպե՞ս Հռութը ցույց տվեց իր ինքնազոհությունը, երբ վերադարձավ հասկ ժողովելուց (Տես Հռութ Բ.14, 17–18: Հռութը տուն բերեց հացահատիկը Նոեմիի համար, որը նա ժողովել էր և նաև Նոեմիի համար մի քիչ ուտելիք բերեց, որը խնայել էր իր կեսօրվա ճաշից): Ինչպե՞ս եք դուք օրինվել ուրիշ մարդկանց ինքնազոհ գործերից:

2. Հռութը և Բոոսն ամուսնանում են և երեխա ունենում:

Ուսուցանեք և քննարկեք Հռութ Գ–Դ:

- Նոեմին խորհուրդ տվեց Հռութին մի ծես կատարել, որը նա հույս ուներ, որ կհանգեցներ Հռութի և Բոոսի ամուսնությանը (Հռութ Գ.1–5): Պառկելով Բոոսի ոտքերի մոտ՝ Հռութը, փաստորեն, նրան ամուսնության առաջարկ էր անելու: Ի՞նչ ցույց տվեց Հռութի հնազանդությունը Նոեմիի խորհրդին՝ Նոեմիի հանդեպ ունեցած նրա զգացմունքների մասին:
- Ինչպե՞ս արձագանքեց Բոոսը, երբ արթնանալով Հռութին պառկած գտավ իր ոտքերի մոտ (Տես Հռութ Գ.8–15: Նշեք, որ երբ Հռութն ասաց. «Քո քղանցքը տարածիր քո աղախնի վրա....» նա ի նկատի ուներ «պահպանիր ինձ, պաշտպանիր ինձ, հոգ տար իմ մասին»): Ի՞նչ պայմանով Բոոսը համաձայնվեց ամուսնանալ Հռութի հետ (Տես Հռութ Գ.11–13: Բացատրեք, որ երբ Հռութի ամուսինը մահացավ, նրա ամենամոտ ազգականը պարտավոր էր ամուսնանալ Հռութի հետ: Բոոսն ամենամոտ ազգականը

չէր, բայց նա համաձայնվեց ամուսնանալ Հռութի հետ, եթե ամենամոտ ազգականը չկամենար այդ անել):

- Ինչպիսի՞ն էր Հռութի համբավը Բեթլեհեմի ժողովրդի մեջ (Տես Հռութ Գ.11): Ինչպե՞ս այդ համբավը օգտակար եղավ Բոոսի հետ նրա հարաբերություններում: Ինչո՞ւ է կարևոր, որ մեր ընտանիքի անդամները, ընկերները և հարևաններն իմանան, թե ինչի ենք հավատում մենք և ինչպիսի արժեքների ենք ձգտում հավատարիմ մնալ:
- Ի՞նչ արեց Բոոսը Հռութին ամուսնանալու խոստում տալուց հետո (Տես Հռութ Գ.15, Դ.1–8): Ինչպե՞ս Բոոսը ցույց տվեց, որ նա վստահելի մարդ էր (Տես Հռութ Դ.9–10, 13. Նա կատարեց Հռութին տված իր խոստումը և հարգեց իր հասարակական պարտավորությունը նրա հանգուցյալ ամուսնու հանդեպ):
- Իսրայելի ո՞ր հայտնի թագավորն էր Հռութի և Բոոսի հետնորդը: (Թագավոր Դավիթը նրանց ծոռներից մեկն էր, տես Հռութ Դ.17, 21–22): Ուրիշ ո՞վ էր Հռութի և Բոոսի հետնորդը (Հիսուս Քրիստոսը. տես Մատթեոս Ա.5–16, Հովհաննես Է.42):
- Երեց Թոմաս Ս. Մոնսոնը Հռութին կոչել է հերոսուհի (in Conference Report, Oct. 1974, 156; or *Ensign*, Nov. 1974, 108). Ի՞նչ եք կարծում, ինչո՞վ էր Հռութը հերոսուհի: (Երեց Մոնսոնն ասել է, որ Հռութը հավատարմության և նվիրվածության օրինակ է: Դասարանի անդամները կարող են առաջարկել լրացուցիչ մտքեր, որոնցով Հռութը հերոսուհի է):

3. Աննան օրհնվում է որդիով, որին նա փոխ է տալիս Տիրոջը, ինչպես խոստացել էր:

Ուսուցանեք և քննարկեք Ա Թագավորաց Ա գլուխը:

- Աննան՝ Եղկանայի կինն, ամուլ էր: Ամեն տարի նա լաց էր լինում և աղոթում որդի ունենալու համար (Ա Թագավորաց Ա.1–7): Ի՞նչ խոստում տվեց Աննան Տիրոջը Ա Թագավորաց Ա.11 հատվածում: Ի՞նչ կարող ենք սովորել Աննայի մասին այս խոստումից: (Նա մեծ հավատքով կին էր. դասարանի անդամները կարող են առաջարկել լրացուցիչ պատասխաններ):
- Ո՞վ վկա եղավ Աննայի աղոթքին տաճարում (Տես Ա Թագավորաց Ա.9–12): Ի՞նչ ասաց Հեղին Աննային Տիրոջն արած նրա խոստման վերաբերյալ (Տես Ա Թագավորաց Ա.17): Ի՞նչ զգաց Աննան Հեղիի խոսքերը լսելուց հետո (Տես Ա Թագավորաց Ա.18): Ինչպե՞ս կարող են Եկեղեցու առաջնորդներն օգնել մեզ, երբ մենք վշտացած ենք:
- Աննան ասաց Հեղիին, որ նա «բացել [էր իր] սիրտը Տիրոջ առաջին» (Ա Թագավորաց Ա. 15): Ինչպե՞ս կարող ենք մեր աղոթքները դարձնել ավելի անկեղծ և իմաստալից:
- Ի՞նչ պատահեց ի պատասխան Տիրոջն արած Աննայի խոստման: (Տես Ա Թագավորաց Ա.19–20): Սամուելի ծննդից հետո ինչպե՞ս Աննան պահեց իր խոստումը: (Տես Ա. Թագավորաց Ա.21–28): Ի՞նչ խոստումներ ենք մենք անում Տիրոջը: (Պատասխանները կարող են ներառել մկրտության և տաճարում արած մեր ուխտերը): Ի՞նչ կարող ենք սովորել Աննայից, որը կօգնի մեզ ջանասեր լինել այդ խոստումները պահելիս:
- Ի՞նչ եք կարծում, ի՞նչ էր մտածում Աննան Սամուելին Տիրոջը ծառայության տալով: Ի՞նչ է խնդրում Տերը մեզանից տալ իրեն: Ինչպիսի՞ն պիտի լինի մեր վերաբերմունքը նրան ինչ-որ բան տալիս: (Մենք պետք է տանք պատրաստակամորեն, հիշելով, որ այն ամենը, որ մենք ունենք, գալիս է Տիրոջից):
- Երբ Աննան Սամուելին տաճար բերեց, նա զոհաբերություններ արեց և փառաբանություններ երգեց Տիրոջը (Ա Թագավորաց Ա.24–25, 28, Բ.1–2): Ինչո՞ւ է կարևոր

հիշել շնորհակալություն հայտնել Տիրոջը՝ այն օրհնությունների համար, որոնք Նա տալիս է մեզ:

- Աննան շատ տարիներ սպասեց, մինչև օրհնվեց զավակներով (Ա Թագավորաց Ա.2, Բ.21): Ի՞նչ ուրիշ աստվածաշնչյան կերպարներ են օրհնվել Տիրոջը համբերությամբ սպասելու շնորհիվ: Ի՞նչ է ասում աշխարհն այն մասին, թե երբ պետք է ստանանք այն բաները, որոնք մենք ենք կամենում: Ի՞նչ է ասում Տերը: Ինչպե՞ս կարող ենք սովորել սպասել համբերատարությամբ այն օրհնությունների համար, որոնք կգան Տիրոջ ժամանակին:

Եզրափակում

- Ինչպիսի՞ արդար հատկանիշներ են դրսևորվել Հռութի, Նոեմիի և Աննայի կողմից (Գրի առեք այդ հատկանիշները գրատախտակին):

Խրախուսեք դասարանի անդամներին ընդօրինակել այն արդար հատկանիշները, որոնք ցույց են տրվել Հռութի, Նոեմիի և Աննայի կողմից: Վկայեք, որ այս հատկանիշները զարգացնելը մեզ ավելի կմոտեցնի մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսին:

Ուսուցման լրացուցիչ գաղափարներ

Հետևյալ նյութը լրացնում է դասի ուրվագիծը: Օգտագործեք այս գաղափարներից մեկը կամ մի քանիսը որպես դասի բաղկացուցիչ մաս:

1. Աբրահամի ուխտի մեջ դարձի եկած հեթանոսների ընդունումը

Բացատրեք, որ Հռութը ծննդով Իսրայելացի չէր: Երբ նա թողեց Մովաբը՝ Նոեմիի հետ Բեթլեհեմ գնալու համար, նա թողեց նաև իր կրոնը և հետևեց Իսրայելի Աստծուն, ասելով Նոեմիին «Քո Աստվածը [կլինի] իմ Աստվածը» (Հռութ Ա.16): Ամուսնանալով Բոոսի հետ՝ Հռութը դարձավ Իսրայելի թագավորական գծի մի մասը՝ Թագավոր Դավթի և Հիսուս Քրիստոսի նախնին:

- Ինչպե՞ս է Հռութի դարձը և Իսրայելի տան մեջ նրա ընդունումն արտացոլում Քրիստոսի վերաբերմունքը նրանց հանդեպ, ովքեր ցանկանում են միանալ Նրա Եկեղեցուն (Տես 2 Նեփի 26.33, Ալմա 19.36, 3 Նեփի 21.6): Ինչպե՞ս կարող ենք օգնել նորադարձներին իրենց ընդունված զգալ Եկեղեցում:

2. Դատել արդարամտորեն

- Երբ քահանա Հեղին տաճարում նայում էր Աննային աղոթելիս, նա սխալ դատեց նրան, մտածելով, թե «հարբած է» (Ա Թագավորաց Ա.13): Որո՞նք են մարդկանց միայն արտաքինով դատելու վտանգները: Ինչպե՞ս կարող ենք խուսափել այս տիպի դատողությունից:
- Նախագահ Հյու Բ. Բրաունն ասել է.«Եթե ես սխալներ եմ անում [մարդկանց մասին դատելիս] ես կուզեի լինել ներողամտության կողմում» (in Eugene E. Campbell and Richard D. Poll, *Hugh B. Brown: His Life and Thought* [1975], 225). Ինչպե՞ս կարող ենք կիրառել այս սկզբունքը:

3. Լուծելով մտահոգություններն ու վշտերը՝ գնալով տաճար:

- Որտե՞ղ Աննան խոստում արեց Տիրոջը (Տես Ա Թագավորաց Ա.9–11): Ինչպե՞ս կարող է տաճար գնալն օգնել մեզ մեր մտահոգություններում և վշտերում:

  Երեց Ջոն Ա. Ուիդսոուն ասել է. «Ես հավատում եմ, որ զբաղված մարդը.... որը մտահոգություններ և վշտեր ունի, կարող է ավելի լավ և ավելի արագ լուծել իր խնդիրները Տիրոջ

տանը, քան որևէ այլ տեղում: Եթե նա [կատարի] տաճարային աշխատանք իր և իր մահացածների համար, նա զորավոր օրհնություն կշնորհի նրանց, ովքեր իրենից առաջ են հեռացել և.... մի օրհնություն կգա նրան ամենաանսպասելի պահերի, տաճարում կամ տաճարից դուրս կգա նրան, որպես հայտնություն՝ այն խնդիրների լուծման համար, որոնք անախորժություններ են պատճառում նրան կյանքում: Դա մի պարգև է, որը գալիս է նրանց, ովքեր պատշաճորեն են մտնում տաճար» (quoted by David B. Haight, in Conference Report, Oct. 1990, 76; or *Ensign,* Nov. 1990, 61):

Դաս
21

Աստված իրեն փառավորողներին կփառավորի

Ա Թագավորաց Բ –Գ, Ը

Նպատակ

Օգնեք դասարանի անդամներին հասկանալ Տիրոջը պատվելու և գոհացնելու օրհնություններն իրենցից, ուրիշներից կամ աշխարհից վեր դասելու կարևորությունը:

Նախապատրաստում

1. Աղոթքով ուսումնասիրեք հետևյալ սուրբ գրությունները.
   ա. Ա Թագավորաց Բ.12–17, 22–25: Հեղիի որդիները կատարում են օրինազանցություններ և հայրը նրանց խորհուրդ է տալիս:
   բ. Ա Թագավորաց Բ.27–36, Գ.12–14: Աստծո մի մարդ նախազգուշացնում է Հեղիին իր ընտանիքի ամբարշտության հետևանքների մասին:
   գ. Ա Թագավորաց Գ: Տերը կանչում է Սամուելին և նա պատասխանում է:
   դ. Ա Թագավորաց Ը: Իսրայելացիները թագավոր են ուզում, որպեսզի իրենք լինեն «բոլոր ազգերի նման»: Սամուելը նախազգուշացնում է նրանց այդպիսի ընտրության վտանգների մասին:
2. Խնդրեք դասարանի անդամներից մեկին պատրաստվել ամփոփել Սամուելին կանչելու պատմությունը (Ա Թագավորաց Գ) և մեկ ուրիշ անդամի պատրաստվել ամփոփել Իսրայելի թագավոր ուզելու պատմությունը (Ա Թագավորաց Ը):
3. Եթե որոշեք քննարկել *Երիտասարդներին զորացնելու համար* գրքույկը (34285) այս դասում, դասարան բերեք մի օրինակ:
4. Եթե օգտագործելու եք ուշադրության կենտրոնացման վարժությունը, բերեք Փրկչի նկարը (62572, Ավետարանական Արվեստի Նկարների Հավաքածու 240): Եթե նախընտրեք չցուցադրել նկարները գրատախտակին, բերեք հայելի, այլ մարդկանց ներկայացնելու համար, և քարտեզ, գլոբուս կամ ուրիշ առարկա՝ ներկայացնելու աշխարհը:
5. Եթե մատչելի է «Պատանի Սամուելը կանչվում է Տիրոջ կողմից» նկարը, օգտագործեք այն դասի ընթացքում (62498, Ավետարանական Արվեստի Նկարների Հավաքածու 111):

Առաջարկվող դասի զարգացում

Ուշադրության կենտրոնացման վարժություն

Օգտագործեք հետևյալ վարժությունը (կամ ձեր սեփականը) դասը սկսելու համար:

Դասարանի առջև ցուցադրեք և ծածկեք Փրկչի նկարը: Ներկայացրեք 97 էջի վրայի երեք կերպարանքներ գրատախտակի վրա և ծածկեք դրանք (կամ ցուցադրեք և ծածկեք երեք առարկաները, որոնք «Նախապատրաստում» վերնագրի տակի ցուցակում են): Բացատրեք, որ յուրաքանչյուր թաքցված իր ինչ որ բանով կապված է այն բանի հետ, թե ում ենք մենք փորձում պատվել և թե ում ենք փորձում գոհացնել:

- Համաձայն Ա Թագավորաց Բ.30 հատվածի, ո՞ւմ է Տերը պատվում:

Ասեք դասարանի անդամներին, որ այս դասը կքննարկի այն օրհնությունները, որոնք գալիս են Տիրոջը պատվելուց: Բացատրեք, որ դուք կբացեք թաքցված առարկաները դասի համապատասխան պահերին:



Սուրբ գրության քննարկում և կիրառում

Երբ ուսուցանեք սուրբ գրության հետևյալ հատվածները, քննարկեք թե ինչպես են դրանք վերաբերում ամենօրյա կյանքին: Խրախուսեք դասարանի անդամներին կիսվել փորձառություններով, որոնք կապված են սուրբգրքյան սկզբունքների հետ:

1. Հեղիի որդիներն իրենց ավելի են փառավորում, քան Տիրոջը:

Ուսուցանեք և քննարկեք Ա Թագավորաց Բ.12–17, 22–25:

Ոփնին և Փենեհեսը Հեղիի՝ քահանայապետի, որդիներն էին և իրենք էլ քահանաներ էին: Սակայն նրանք ամբարիշտ էին: Երբ Իսրայելացիները գալիս էին զոհեր մատուցելու խորանում, Ոփնին և Փենեհեսը բռնի վերցնում էին զոհաբերվող անասունների միսը, նախքան զոհասեղանի վրա ճարպոտ մասերի այրելը: Նրանք վերցնում էին նաև այն մսից, որը զոհ մատուցողը եփում էր զոհաբերության ճաշի համար (Ա Թագավորաց Բ.12–17): Սրանք Աստծո օրենքի լուրջ խախտումներ էին, հավասարազոր Աստծուն թալանելուն: Հեղիի որդիները նաև գործում էին չափազանց ծանր մեղք՝ գայթակղելով կանանց, ովքեր հավաքվում էին խորանի դռանը (Ա Թագավորաց Բ.22):

- Ի՞նչ ազդեցություն էին թողնում Հեղիի որդիների գործողություններն ուրիշ մարդկանց վրա Իսրայելում (Տես Ա Թագավորաց Բ.17, 24):
- Ի՞նչ են ասում Հեղիի որդիների գործողություններն այն մասին, թե ում էին նրանք ընտրում փառաբանել (Բացեք առաջին առարկան կամ հայելին): Մեր կյանքի որ ոլորտներում ենք մենք երբեմն ավելի փառավորում և գոհացնում ինքներս մեզ, քան Տիրոջը: Դասարանի անդամները կարող են առաջարկել այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են.

  ա. Զվարճություն
  բ. Կիրակին սուրբ պահելը
  գ. Ժամադրելը և բարոյականությունը
  դ. Ծոմապահությունը
  ե. Եկեղեցական կոչումները

- Ինչո՞ւ եք կարծում, որ մենք երբեմն ավելի շուտ մեզ ենք գոհացնում, քան Աստծուն: Որո՞նք են մեզ Աստծուց ավելի փառավորելու հետևանքները:

2.Հեղին Տիրոջից վեր է փառավորում իր որդիներին:

Ուսուցանեք և քննարկեք Ա Թագավորաց Բ.27–36, Գ.12–14:

- Ի՞նչ պատասխանատվություն ուներ Հեղին, երբ նա իմացավ իր որդիների ամբարշտության մասին: Ի՞նչ արեց նա (Տես Ա Թագավորաց Բ.22–25): Ինչպիսի՞ն էր նրանց պատասխանը (Տես Ա Թագավորաց Բ.25):
- Իր որդիներին նախատելուց հետո, Հեղին այնուհետև ոչինչ չարեց ահավոր մեղքերը իր ընտանիքում և խորանի մոտ ուղղելու համար: Այդ պատճառով Աստծո մի մարդ եկավ և խիստ հանդիմանեց նրան, ասելով, որ նա իր որդիներին ավելի է փառավորում, քան Աստծուն (Ա Թագավորաց Բ.27–29): Ի՞նչ ձևով էր Հեղին իր որդիներին ավելի փառավորել, քան Աստծուն: Ի՞նչ ասաց Աստծո մարդը, որ պետք է պատահեր Հեղիի տան հետ (Տես Ա Թագավորաց Բ.30–35):
- Ինչպե՞ս ենք մենք երբեմն ավելի շատ փառավորում ուրիշ մարդկանց, քան Աստծուն: (Բացեք երկրորդ իրը կամ առարկան, որը ներկայացնում է ուրիշ մարդկանց): Դասարանի անդամները կարող են առաջարկել ուղիներ ինչպիսիք են հետևյալը.

  ա. Մենք թույլ ենք տալիս մեր հասակակիցներին համոզել մեզ անել այնպիսի մի բան, որ գիտենք որ սխալ է:
  բ. Մենք գործում ենք անազնիվ, որովհետև վախենում ենք, թե ինչ կմտածեն ուրիշ մարդիկ մեր մասին:
  գ. Մենք չենք ուղղում ընտանիքի անդամներին կամ ընկերներին սխալ արարքներ կատարելիս, որովհետև ցանկանում ենք լավ հարաբերություններ պահպանել նրանց հետ:

  Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթն ուսուցանել է. «Մեզանից [չ]պետք է լինի որևէ մեկն այնքան անմտորեն երես տվող, այնքան անխելք և այնքան մակերեսային մեր երեխաների հանդեպ սիրո մեջ, որ վախենալով վիրավորել նրանց՝ չհամարձակվենք կասեցնել նրանց իրենց քմահաճ ուղուց, սխալ գործելուց և անմտորեն աշխարհիկ բաներն ավելի շատ սիրելուց, քան արդարության բաները» (*Gospel Doctrine,* 5th ed. [1939], 286):
- Ինչպե՞ս կարող են ծնողները կատարել իրենց պարտականությունն իրենց քմահաճ զավակների հանդեպ սիրո ոգով: Ինչպիսի՞ն է զավակների պարտականությունը, երբ նրանց ծնողները ձգտում են առաջնորդել նրանց արդարության մեջ:

3. Սամուելը փառավորում է Տիրոջը:

Ուսուցանեք և քննարկեք Ա Թագավորաց Գ գլուխը: Հանձնարարեք դասարանի որևէ անդամի համառոտակի ամփոփել այս գլուխը: Հիշեցրեք դասարանի անդամներին, որ պատանի Սամուելը ծառայում էր տաճարում, հետո երբ Աննան՝ նրա մայրը, նրան Տիրոջը ծառայության տվեց, ինչպես որ խոստացել էր (Ա Թագավորաց Ա):

- Ո՞վ խոսեց Սամուելի հետ գիշերը: (Տես Ա Թագավորաց Գ.4): Սամուելին սկզբում թվաց թե ո՞վ էր կանչում իրեն (Տես Ա Թագավորաց Գ.5–6, 8): Ինչպե՞ս իմացավ Սամուելը, որ Տերն էր կանչում իրեն (Տես Ա Թագավորաց Գ.8–9):
- Ինչպե՞ս է Տերը հաղորդակցվում մեզ հետ: (Նա շատ հաճախ մեզ հետ հաղորդակցվում է Սուրբ Հոգու շշունջների միջոցով: Դասարանի անդամները կարող են առաջարկել լրացուցիչ ձևեր, որոնցով նա հաղորդակցվում է մեզ հետ: Ինչպե՞ս կարող ենք պատրաստվել՝ Տիրոջից եկող հաղորդակցությունները ստանալու և հասկանալու համար):

- Ինչպե՞ս Սամուելը փառավորեց Տիրոջը: (Բացեք Տիրոջ նկարը): Ձեր քննարկման ժամանակ կանգ առնեք հետևյալ հատվածների վրա.

  «Ես ինձ համար մեկ հավատարիմ քահանա պիտի հանեմ, որ բոլոր իմ սրտի և հոգիի միջի եղածը կատարե» (Ա Թագավորաց Բ.35):

  «Տերը կանչեց Սամուելին, և նա ասեց. Ահա ես» (Ա Թագավորաց Գ.4):

  «Եվ Սամուելն ասեց. Խոսիր, որովհետև քո ծառան լսում է» (Ա Թագավորաց Գ.10):

- Տերը խոստացավ փառավորել նրանց, ովքեր կփառավորեն իրեն (Ա Թագավորաց Բ.30): Ինչպե՞ս փառավորեց Տերը Սամուելին (Տես Ա Թագավորաց Գ.19): Ինչ եք կարծում, ինչպե՞ս Տերը կփառավորի մեզ, եթե մենք փառավորենք նրան, ինչպես Սամուելն արեց:

4. Իսրայելացիները փառավորում են աշխարհը:

Ուսուցանեք և քննարկեք Ա Թագավորաց Ը գլուխը: Հանձնարարեք դասարանի որևէ անդամի համառոտակի ամփոփել այս գլուխը:

- Սամուելի ծառայության ժամանակ ինչպիսի՞ կառավարություն ուներ Իսրայելը (Տես Ա Թագավորաց Ը.1: Իսրայելացիները կառավարվում էին դատավորների կողմից: Ո՞ւմ պետք է Իսրայելացիները համարեին որպես իրենց թագավոր (Տես Ա Թագավորաց ԺԲ.12):

- Ինչո՞ւ էին Իսրայելի զավակները թագավոր ուզում (Տես Ա Թագավորաց Ը.5, 20): «բոլոր ազգերի պես» թագավոր ուզելով ո՞ւմ էր Իսրայելը մերժում: (Տես Ա Թագավորաց Ը.7): Ի՞նչ կարգադրեց Տերը Սամուելին ասել թագավոր ունենալու խնդրի վերաբերյալ (Տես Ա Թագավորաց Ը.9–18): Ո՞րն էր Իսրայելի պատասխանը Սամուելի նախազգուշացումներին (Տես Ա Թագավորաց Ը.19–22):

- Ո՞ւմ փառավորեցին Իսրայելացիները՝ կամենալով թագավոր ունենալ (Բացեք երրորդ առարկայի վրայի ծածկոցը, որը ներկայացնում է աշխարհը):

- Ի՞նչ ձևերով ենք երբեմն ցանկանում լինել «բոլոր ազգերի պես» (Տես Ա Թագավորաց Ը.5):

  Օգտագործեք *Երիտասարդներին զորացնելու համար* գրքույկը (34285) քննարկելու համար այն չափանիշները, որոնք Տերը սահմանել է մեզ համար, որպեսզի մենք չմասնակցենք աշխարհի ամբարիշտ ուղիներին: Բացատրեք, որ այս չափանիշները վերաբերում են ինչպես երիտասարդությանը, այնպես էլ մեծահասակներին:

- Տեր Հիսուս Քրիստոսը մեր ճշմարիտ թագավորն է, ճիշտ ինչպես Իսրայելացիների իսկական թագավորն էր (Սաղմոս ԽԷ.7, ՁԹ.18, ՃԽԹ.2): Ինչպե՞ս պետք է այս գիտելիքն ազդի աշխարհիկ ուղիների հանդեպ մեր վերաբերմունքի վրա: Ինչպե՞ս ենք մենք երբեմն մերժում Տիրոջը՝ մեր թագավորին:

Եզրափակում

Ուշադրությունը հրավիրեք չորս առարկաների վրա, որոնք ցուցադրվեցին դասի ժամանակ: Բացատրեք, որ ամեն օր մենք բոլորս պետք է ընտրենք, թե ում պետք է փառավորենք: Բերեք վկայություն այն օրհնությունների և ուրախության մասին, որ դուք ստացել եք, երբ փառավորել եք Տիրոջը: Հրավիրեք դասարանի անդամներին կիսվել իրենց սեփական փորձառություններով կամ վկայություններով:

Ուսուցման լրացուցիչ գաղափարներ

Հետևյալ նյութը լրացնում է առաջարկվող դասի ուրվագիծը: Օգտագործեք այս գաղափարներից մեկը կամ մի քանիսը որպես դասի բաղկացուցիչ մաս:

1. Մեր ընտրած բաների արժեքը

- Երբեմն մենք փոխում ենք մեծ արժեքի բաներն ավելի փոքր արժեքի բաներով: Իրենց ընտրությունների միջոցով ինչի՞ց հրաժարվեցին Հեղին և նրա որդիները: Ի՞նչ բաներից պետք է Իսրայելացիները հրաժարվեին, որոնց մասին ասաց Սամուելը, եթե նրանք թագավոր ուզեին (Տես Ա Թագավորաց Ը.11–17): Մեծ արժեքի ինչ բաներից ենք մենք հրաժարվում հանուն ավելի փոքրարժեք բաների:

2. «Ում Տերը կանչում է, նրան Տերը որակավորում է»:

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնն արտահայտել է հետևյալ միտքը, ցույց տալու թե ինչպես է Տերը փառավորում նրանց, ովքեր փառավորում են Իրեն:

«Ձեզանից ոմանք գուցե ամաչկոտ են բնավորությամբ կամ իրենց անհամապատասխան են համարում որևէ կոչում ընդունելու համար դրական պատասխան տալ: Հիշեք, որ այս աշխատանքը միայն ձերը կամ իմը չէ: Այն Տիրոջ աշխատանքն է և երբ մենք Տիրոջ հանձնարարության տակ ենք, մեզ տրվում է Տիրոջ օգնությունը: Հիշեք, որ նրան, ում Տերը կանչում է, նրան Տերը որակավորում է» (in Conference Report, Apr. 1996, 62; or *Ensign*, May 1996, 44):

Այնուհետև Նախագահ Մոնսոնը պատմեց հետևյալ պատմությունը.

«Եթե խիստ դժվար և ժամանակ խլող ենք համարում որևէ կոչում, թույլ տվեք կիսվել ձեզ հետ մի հավատարիմ տնային ուսուցչի և նրա ընկերակցի փորձառությամբ մի վայրում, որն այն ժամանակ կոչվում էր Արևելյան Գերմանիա»:

Եղբայր Ջոն Դենդորֆերը Եկեղեցում նորադարձ էր դարձել Գերմանիայում և Երկրորդ Համաշխարհային Պատերազմից հետո նա իրեն փաստորեն գերության մեջ գտավ իր իսկ երկրում՝ Հունգարիայի Դեբրեցեն քաղաքում: Ինչպես էր ուզում տաճար գնալ: Ինչպես էր ցանկանում հոգևոր օրհնություն ստանալ: Շվեյցարիայի տաճար ուղևորության խնդրանքը մեկը մյուսի ետևից մերժվում էր և նա գրեթե հուսահատվել էր: Այդ ժամանակ նրա տնային ուսուցիչն այցելեց նրան: Եղբայր Ուոլթեր Կրաուսը Գերմանիայի հյուսիս արևելյան մասից գնաց հասավ մինչև Հունգարիա: Նա ասել էր իր տնային ուսուցման ընկերակցին. «Կկամենայի՞ր այս շաբաթ ինձ հետ տնային ուսուցման գնալ»:

Նրա ուղեկիցն ասել էր. «Երբ ենք մեկնում»:

«Վաղը»,– պատասխանել էր Եղբայր Կրաուսը:

«Ե՞րբ ենք վերադառնալու»,– հարցրել էր ընկերակիցը:

Դե, մոտ մեկ շաբաթ անց, եթե մինչև այդ կարողանանք վերադառնալ:

Եվ նրանք գնացին այցելելու Եղբայր Դենդորֆերին: Նա ուսուցիչներ չէր ունեցել պատերազմը սկսվելուց ի վեր: Այժմ, երբ նա տեսավ Տիրոջ ծառաներին, նա ցնցված էր: Նա չբարևեց նրանց ձեռքսեղմամբ, այլ շտապեց դեպի իր ննջարանը և թաքցրած տեղից հանեց իր տասանորդը, որը նա հավաքել էր այն օրվանից սկսած, երբ դարձել էր Եկեղեցու անդամ և վերադարձել էր Հունգարիա: Նա ներկայացրեց տասանորդն իր տնային ուսուցիչներին և ասաց. «Հիմա ես ընդունված եմ Տիրոջից: Այժմ ես արժանի եմ զգում սեղմել Տիրոջ ծառաների ձեռքը»:

Եղբայր Կրաուսը հարցրեց նրան, թե ցանկանո՞ւմ էր այցելել Շվեյցարիայի տաճարը: Եղբայր Դենդորֆերն ասաց. «Օգուտ չունի: Ես փորձել եմ և փորձել: Կառավարությունը բռնագրավել է նույնիսկ իմ եկեղեցական գրքերը՝ իմ ամենամեծ հարստությունը»:

Եղբայր Կրաուսը, որը հայրապետ էր, Եղբայր Դենդորֆերին տվեց հայրապետական օրհնություն: Օրհնության վերջում նա ասաց Եղբայր Դենդորֆերին. «Շվեյցարիա գնալու համար նորից դիմիր կառավարությանը»: Եվ եղբայր Դենդորֆերը կրկին դիմեց իշխանություններին: Այս անգամ եկավ թույլտվություն և Եղբայր Դենդորֆերն ուրախությամբ գնաց Շվեյցարիայի տաճարը և մնաց մեկ ամիս: Նա ստացավ իր օժտումը, նրա մահացած կինը կնքվեց նրա հետ և նա կարողացավ իր հարյուրավոր նախնիների համար աշխատանք կատարել: Նա իր տուն վերադարձավ մարմնով և հոգով վերանորոգված (in Conference Report, Apr. 1996, 64–65; or *Ensign,* May 1996, 45–46):

Դաս
22

«Տերը սրտին է նայում»

Ա Թագավորաց Թ–ԺԱ, ԺԳ, ԺԵ–ԺԷ

Նպատակ Խրախուսեք դասարանի անդամներին ավելի շատ վստահել Տիրոջը, քան իրենց սեփական հասկացողությանը:

Նախապատրաստում

1. Աղոթքով ուսումնասիրեք հետևյալ սուրբ գրությունները.

   ա. Ա Թագավորաց Թ–ԺԱ: Սավուղն առաջնորդություն է փնտրում մարգարե Սամուելից (Է.1–14, ԺԸ–ԻԴ): Տերը Սամուելին հայտնում է, որ Սավուղը պետք է թագավոր լինի (Թ.15–17): Սամուելը խորհուրդ է տալիս Սավուղին և օծում նրան որպես Իսրայելի առաջին թագավոր (Թ.25–27, Ժ.1–8): Սավուղը հոգեպես վերածնվում է, և նա մարգարեանում է (Ժ.9–13): Սամուելը ներկայացնում է Սավուղին ժողովրդին (Ժ.17–27): Սավուղը Իսրայելին հաղթանակի է տանում Ամմոնացիների հետ պատերազմում (ԺԱ.1–11): Նա հրաժարվում է պատժել այն մարդկանց, ովքեր կասկածում էին ժողովրդին առաջնորդելու իր կարողությանը (ԺԱ.12–15):

   բ. Ա Թագավորաց ԺԳ.1–14: Սավուղը ողջակեզ է կատարում առանց համապատասխան իշխանություն ունենալու:

   գ. Ա Թագավորաց ԺԵ: Սավուղին հրամայվում է ոչնչացնել Ամաղեկացիներին և բոլոր նրանց ունեցվածքը, բայց նա խնայում է նրանց կենդանիներից մի քանիսին՝ զոհաբերության համար (ԺԵ.1–9): Տերը մերժում է Սավուղին որպես թագավոր և Սամուելն ասում է, որ հնազանդությունն ավելի լավ է, քան զոհաբերությունը (ԺԵ.10–35):

   դ. Ա Թագավորաց ԺԶ: Տերն ընտրում է Դավթին՝ մի պատանի հովիվ տղայի՝ Սավուղին որպես թագավոր հաջորդելու համար (ԺԶ.1–13): Սուրբ Հոգին հեռանում է Սավուղից և մի չար ոգի է տիրում նրան (ԺԶ.14–16, նշեք, որ Ջոզեֆ Սմիթի թարգմանությունն ուղղում է այս հատվածները՝ ցույց տալով, որ չար ոգին Աստծուց *չէր*): Սավուղն ընտրում է Դավթին քնար նվագելու իր համար և լինելու իր կապարճակիրը (ԺԶ.17–23):

   ե. Ա Թագավորաց ԺԷ: Դավիթը սպանում է Գողիաթին Տիրոջ ուժով:

2. Լրացուցիչ ընթերցանություն՝ Ա Թագավորաց ԺԲ, ԺԴ:

3. Խնդրեք դասարանի անդամներից մեկին նախապատրաստվել ամփոփելու Տիրոջ կողմից Դավթին որպես թագավոր ընտրելու պատմությունը (Ա Թագավորաց ԺԶ.1–13) և մեկ ուրիշ դասարանի անդամի նախապատրաստվել ամփոփելու Դավթի կողմից Գողիաթին սպանելու պատմությունը (Ա Թագավորաց ԺԷ.1–54):

4. Եթե օգտագործելու եք ուշադրության կենտրոնացման վարժություններից երկուսն էլ, գրեք հետևյալ սուրբ գրությունը գրատախտակին կամ պաստառի վրա. «Տիրոջն ապավինիր քո բոլոր սրտովը, և քո հասկացողությանը մի վստահիր: Քո բոլոր ճանապարհներումը ճանաչիր նրան, և նա կուղղե քո ճանապարհները» (Առակաց Գ.5–6): Եթե օգտագործելու եք առաջին ուշադրության կենտրոնացման վարժությունը, ընտրեք մի բառ Սուրբ Գրքերի Ուղեցույցից, որը կարող է անծանոթ լինել դասարանի անդամների համար, ինչպես օրինակ՝ *երախայրի, խորան, ի սպաս դնել*: Գրեք այդ բառը գրատախտակին կամ պաստառի վրա:

5. Եթե հետևյալ տեսալսողական նյութերը մատչելի են, օգտագործեք դրանք որպես դասի բաղկացուցիչ մաս:

   ա. «Տերը ....կազատի ինձ» չորս րոպեանոց հատված Դավթի մասին՝ *Հին Կտակարանի Տեսանյութերից* (53224):

   բ. Դավիթը սպանում է Գողիաթին նկարը (62073, Ավետարանական Արվեստի նկարների հավաքածու 112):

Առաջարկվող դասի զարգացում

Ուշադրության կենտրոնացման վարժություն

Օգտագործեք հետևյալ վարժություններից մեկը (կամ ձեր սեփականը) դասը սկսելու համար: Ընտրեք այն վարժությունը, որն ամենահարմարն է դասարանի համար:

1. Հանձնարարեք դասարանի անդամներին քննարկել գրատախտակին կամ պաստառի վրա գրված անծանոթ բառը (տես «Նախապատրաստում» վերևում): Խնդրեք դասարանի անդամներին գուշակել բառի բացատրությունը: Մի քանի ենթադրություններից հետո, հանձնարարեք դասարանի անդամներին նայել ճիշտ բացատրությունը Սուրբ Գրքերի Ուղեցույցում:

   Բացատրեք, որ անծանոթ բառի վերաբերյալ ենթադրություններ անելը նման է միայն մեր հասկացողության վրա հիմնված որոշումներ ընդունելուն: Ցույց տվեք Առակաց Գ.5–6 հատվածների տեքստը: Շեշտեք, որ ճիշտ ինչպես մենք դիմեցինք մի վստահված աղբյուրի՝ բառի ճիշտ բացատրությունն իմանալու համար, մենք պետք է վստահենք Տիրոջը և փնտրենք նրա կամքը՝ մեր կյանքում ճիշտ որոշումներ ընդունելու համար: Այս դասը հակադրում է երկու տղամարդկանց՝ Սավուղի և Դավթի փորձառությունները, որպեսզի սովորենք որոշումներ կայացնելիս Տիրոջն ապավինելու և նրա առաջնորդությունը փնտրելու կարևորությունը:

2. Խնդրեք դասարանի անդամներին պատմել մի քանի կարևոր որոշումների մասին, որոնք նրանք ընդունել են վերջերս: Հարցրեք, թե ինչն օգնեց նրանց այդպիսի որոշումներ կայացնել:

   Ցույց տվեք Առակաց Գ.5–6 հատվածների տեքստը (գուցե կամենաք, որ դասարանի անդամներն անգիր սովորեն այդ հատվածը): Բացատրեք, որ այս դասը հակադրում է երկու տղամարդկանց՝ Սավուղի և Դավթի փորձառությունը որպեսզի սովորենք որոշումներ կայացնելիս Տիրոջն ապավինելու և նրա առաջնորդությունը փնտրելու կարևորությունը:

Սուրբ գրության քննարկում և կիրառում

Երբ սովորեցնեք հետևյալ հատվածը, քննարկեք, թե ինչպես են դրանք վերաբերում ամենօրյա կյանքին: Խրախուսեք դասարանի անդամներին կիսվել փորձառություններով, որոնք կապված են այդ սուրբգրքյան սկզբունքների հետ: Քանի որ դժվար կլինի ուղղել յուրաքանչյուր հարցը կամ քննարկել դասի յուրաքանչյուր կետը, աղոթքով ընտրեք նրանք, որոնք լավագույնս կբավարարեն դասարանի անդամների կարիքները: Օրինակ, եթե ուզում եք կենտրոնանալ Դավթի և Գողիաթի վրա, դուք կարող եք ավելի քիչ ժամանակ տրամադրել Սավուղի կյանքի քննարկմանը:

1. Սավուղն առաջնորդություն է փնտրում Սամուելից և օծվում է լինելու թագավոր:

Ուսուցանեք և քննարկեք Ա Թագավորաց Թ–ԺԱ:

- Իսրայելացիները թագավոր ուզեցին իրենց շրջապատի ազգերի պես: Տեղի տալով Իսրայելացիների խնդրանքին, Տերը պատվիրեց Սամուելին օծել Սավուղին որպես Իսրայելի առաջին թագավոր: Սավուղը «մի [ընտիր] տղամարդ էր.... և Իսրայելի

որդկանց մեջ նրանից գեղեցիկ մարդ չկար» (Ա Թագավորաց Թ.2): Ի՞նչ արեց Սավուղը նախքան թագավոր օծվելը և անմիջապես դրանից հետո, որը ցույց տվեց նրա լավ հատկանիշները:

ա. Նա ջանասեր էր իր հոր էշերը որոնելիս (Ա Թագավորաց Թ.3–4):
բ. Նա պատրաստ էր լսել և հետևել իր հոր ծառայի իմաստուն խորհրդին (Ա Թագավորաց Թ.5–10):
գ. Նա վստահեց մարգարե Սամուելին և հանդիպեց նրա հետ (Ա Թագավորաց Թ.18–25):
դ. Նա խոնարհ էր (Ա Թագավորաց Թ.20–21):
ե. Նա հոգեպես վերածնվեց և մարգարեացավ (Ա Թագավորաց Ժ.6–10):
զ. Նա ներեց իր քննադատներին (Ա Թագավորաց ԺԱ.11–13):
է. Նա ընդունեց Տիրոջ օգնությունը Ամմոնացիների դեմ Իսրայելի հաղթանակում (Ա Թագավորաց ԺԱ.13):

2. Սավուղը ողջակեզ է անում առանց համապատասխան իշխանություն ունենալու:

Ուսուցանեք և քննարկեք Ա Թագավորաց ԺԳ.1–14:

- Սավուղի թագավոր օծվելուց երկու տարի անց Փղշատցիները մի հզոր բանակ հավաքեցին՝ Իսրայելի դեմ կռվելու համար: Սավուղի մարդիկ այնպես վախեցան, որ նրանցից շատերը թաքնվեցին ու ցրվեցին: Ինչո՞ւ էր Սավուղը կամենում, որ մարգարե Սամուելը գար իր մոտ այդ ժամանակ: (Տես Ա Թագավորաց ԺԳ.7–8: Սավուղը կամենում էր, որ Սամուելը զոհ մատուցի Տիրոջը ժողովրդի անունից): Ի՞նչ արեց Սավուղը, երբ Սամուելը նշանակված ժամին չեկավ (Տես Ա Թագավորաց ԺԳ.9: Սավուղն ինքը մատուցեց զոհաբերությունը, չնայած նա քահանայության իշխանություն չուներ այդ անելու համար):

  Երեց Ջեյմս Ի. Թալմիջը գրել է. «Սավուղն ինքը պատրաստեց ողջակեզը մոռանալով, որ չնայած նա էր զբաղեցնում գահը և կրում թագն ու բռնում գավազանը, նա իրավունք չուներ պաշտոնավարելու....Աստծո Քահանայությամբ և այս ու մյուս դեպքերում նրա անարդար արարքների պատճառով նա մերժվեց Աստծո կողմից և ուրիշը թագավոր դարձվեց նրա փոխարեն» (*The Articles of Faith,* 12th ed. [1924], 185):

- Ինչպիսի՞ն էր Սամուելի արձագանքը Սավուղի կողմից անօրինական զոհաբերություն մատուցելու հանդեպ (Տես Ա Թագավորաց ԺԳ.10–14):

- Ի՞նչ բացահայտեց Սավուղի անօրինական զոհաբերությունը նրա մասին (Նա այլևս [Տիրոջ] սրտի համեմատ մարդ չէր: [Ա Թագավորաց ԺԳ.14]: Նա դարձել էր անհամբեր, չէր վստահում Տիրոջը և անհնազանդ էր: Բացի այդ, նրա կողմից զոհաբերություն մատուցելու իշխանության գործադրումը մտածել է տալիս, որ նա չափազանցված կարծիք ուներ իր սեփական իշխանության և կարևորության վերաբերյալ): Ի՞նչ ուղիներով է երբեմն դրսևորվում մեր անհամբերությունը Տիրոջ կամ նրա ծառաների հանդեպ: Ինչպիսի՞ն կարող է լինել այդպիսի անհամբերության հետևանքները: Ինչպե՞ս կարող ենք լիովին վստահել Տիրոջը:

3. Սավուղը չի հնազանդվում Տիրոջը Ամաղեկացիների հետ ճակատամարտի ժամանակ և մերժվում է որպես թագավոր:

Ուսուցանեք և քննարկեք Ա Թագավորաց ԺԵ:

- Տերն ի՞նչ պատվիրեց Սավուղին անել Ամաղեկացիների հետ (Տես Ա Թագավորաց ԺԵ.1–3): Ի՞նչ արեց Սավուղը դրա փոխարեն (Տես Ա Թագավորաց ԺԵ.11: Նա ավելի շուտ հետևեց իր իսկ դատողությանը, քան արեց Տիրոջ կամքը):

- Ինչպե՞ս Սավուղը փորձեց արդարացնել Ամաղեկացիների անասունները խնայելու իր անհնազանդությունը (Տես Ա Թագավորաց ԺԵ.13–15, 20–21, 24: Անասուններին խնայել ցանկանալու համար նա մեղադրեց իր ժողովրդին): Ըստ Սավուղի՝ ինչո՞ւ էր նրա ժողովուրդը կամենում խնայել Ամաղեկացիների լավագույն անասուններին (Տես Ա Թագավորաց ԺԵ.15, 21): Ի՞նչ ձևերով ենք մենք երբեմն փորձում արդարացնել Տիրոջը չհնազանդվելը (Մենք կարող է ինքներս մեզ ասել. «Սա ընդամենը մի փոքրիկ մեղք է», «Ես հնազանդվում եմ ավելի շուտ օրենքի ոգուն, քան օրենքի տառին», «Այն չի վնասի որևէ մեկին», «Ուրիշ մարդիկ էլ են անում դա» կամ «Այդ պատվիրանն ինձ չի վերաբերում»): Ինչպե՞ս կարող ենք հաղթահարել՝ մեղքը պատճառաբանելու կամ արդարացնելու միտումը:
- Ինչպե՞ս պատասխանեց Սամուելը Ամաղեկացիների անասունները խնայելու Սավուղի բացատրությանը (Ա Թագավորաց ԺԵ.22): Ինչպե՞ս կարող է Սամուելի խոսքերը վերաբերել մեզ:
- Երբ Սամուելը նախատում էր Սավուղին նրա համառության և Տիրոջ խոսքը մեժելու համար, ասաց. «[Համառությունը] կռապաշտության պես է....» (Ա Թագավորաց ԺԵ.23): Ինչպե՞ս է համառությունը կռապաշտության նման: Ո՞րն էր Սավուղի համառ և ապստամբ դառնալու հետևանքը (Տես Ա Թագավորաց ԺԵ.23, 26, 28): Ինչպե՞ս ենք մենք երբեմն լինում համառ և ապստամբ: Ինչպես կարող ենք մենք ճանաչել և հաղթահարել այս վարքագծերը:

4. Տերն ընտրում է Դավթին որպես թագավոր:

Ուսուցանեք և քննարկեք Ա Թագավորաց ԺԶ: Հանձնարարեք դասարանի որևէ անդամի համառոտակի ամփոփել այս պատմությունը: Բացատրեք, որ չնայած Սամուելն օծեց Դավթին թագավոր լինելու, Դավիթը չդարձավ թագավոր, մինչև Սավուղը մահացավ շատ տարիներ հետո:

- Ի՞նչ սովորեց Սամուելը, երբ փորձում էր որոշել, թե Հեսսեի որդիներից, որ մեկը պիտի հաջորդ թագավորը դառնար (Տես Ա Թագավորաց ԺԶ.6–7): Ինչպե՞ս է Դավթին ընտրելու Տիրոջ գործելակերպը նմանվում այն ձևին, թե ինչպես է Նա առաջնորդներ ընտրում այսօր: Ի՞նչ է Ա Թագավորաց ԺԶ.7 հատվածը սովորեցնում այն մասին, թե ինչպես է Տերը գնահատում մեզ: Ի՞նչ է Տերը որոնում մեր սրտերում:

  Երեց Մարվին Ջ. Աշթոնն ասել է.

  « Մենք.... միտում ունենք գնահատել ուրիշներին արտաքին երևույթով՝ իրենց ֆիզիկական, «գեղեցիկ տեսքով», նրանց հասարակական դիրքով, նրանց ընտանեկան տոհմածառերով, նրանց գիտական աստիճաններով կամ նրանց տնտեսական վիճակով:

  Սակայն Տերն այլ չափանիշ ունի, որով նա գնահատում է մարդուն.... Նա չի վերցնում մետր չափելու մարդու գլուխը՝ որոշելու համար նրա մտավոր կարողությունը, ոչ էլ նրա կրծքավանդակը՝ որոշելու համար նրա տղամարդկային ուժը, այլ Նա չափում է սիրտը՝ որպես ուրիշներին օրհնելու մարդու ունակության և ներուժի չափորոշիչ:
  (in Conference Report, Oct. 1988, 17; or *Ensign*, Nov. 1988, 15):

- Ինչո՞ւ է կարևոր, որ ուրիշների հետ մեր հարաբերություններում մենք տեսնենք արտաքին տեսքից այն կողմ և նայենք սրտին: Ինչպե՞ս կարող ենք բարելավել այս հատկանիշը և այդ անելու պարտավորությունը»:
- Քանի որ Սավուղն անհնազանդ էր եղել, Տիրոջ Հոգին հեռացել էր նրանից (Ա Թագավորաց ԺԶ. 14): Ինչպե՞ս էր Սավուղը հանգստություն գտնում չար ոգուց, որը գալիս էր նրա վրա (Տես Ա Թագավորաց ԺԶ.15–23): Այսօր ի՞նչ արտաքին աղբյուրների են երբեմն մարդիկ դիմում, երբ փորձում են հանգիստ գտնել իրենց մեղքերից: Ո՞րն

է Տիրոջ ուղին մեզ համար, որով հանգիստ ենք գտնում մեր մեղքերից (Տես Մատթեոս ԺԱ.28–30, ՎԱՈՒ 58.42):

- Ինչպիսի՞ բնավորության գծեր ուներ Դավիթը, որոնք նրան արժանի էին դարձնում առաջնորդ լինելու համար (Տես Ա Թագավորաց ԺԶ.18):

5. Դավիթը սպանում է Գողիաթին Տիրոջ ուժով:

Ուսուցանեք և քննարկեք Ա Թագավորաց ԺԷ: Հանձնարարեք դասարանի որևէ անդամի համառոտ ամփոփել այս պատմությունը:

- Ի՞նչ կարող էին շահել կամ կորցնել Իսրայելացիները Գողիաթի հետ կռվելիս (Տես Ա Թագավորաց ԺԷ.8–9): Ինչո՞ւ էին Սավուղն ու նրա բանակը վախենում կռվել Գողիաթի հետ (Տես Ա Թագավորաց ԺԷ.4–11: Նրանք չէին կարծում, թե կարող էին հաղթել Գողիաթին, նրա չափերի, ուժի, զրահի և զենքերի պատճառով):
- Ինչպե՞ս Դավիթը խիզախություն ստացավ կռվել Գողիաթի հետ (Տես Ա Թագավորաց ԺԷ.32–37, 45–47: Դավիթը գիտեր, որ Տերն ազատել էր իրեն առյուծից և արջից, երբ արածեցնում էր իր հոր ոչխարներին և նա վստահեց Տիրոջը՝ օգնելու իրեն կռվել Գողիաթի հետ):
- Ի՞նչ ասաց Գողաիթը, երբ տեսավ Դավթին իր հետ կռվելու գալիս (Տես Ա Թագավորաց ԺԷ.42–44): Ի՞նչ պատասխանեց Դավիթն ի պատասխան (Տես Ա Թագավորաց ԺԷ.45–47): Ինչպե՞ս կարող է Դավթի պատասխանը հիշելը օգնել մեզ, երբ մարդիկ ծաղրեն կամ սպառնան մեզ:
- Պատանի ժամանակ առյուծի և արջի վրա Դավթի տարած հաղթանակները պատրաստեցին նրան դիմակայելու Գողիաթի ավելի մեծ մարտահրավերին: Ինչպե՞ս են այդ մարտահրավերների մեր պատասխաններն ազդում հետագա Գողիաթների դեմ ճակատամարտելու մեր ունակության վրա: Վկայեք, որ երբ մենք հաղթում ենք առյուծներին և արջերին մեր կյանքում, մենք կզարգացնենք վստահություն, բնավորություն և հավատք պարտության մատնելու մեր Գողիաթներին:
- Ինչպիսի՞ Գողիաթների ենք հանդիպում մենք այսօր: Ի՞նչ կարող ենք իմանալ Դավթից այն մասին, թե ինչպես հաղթենք դրանց (Տես Ա Թագավորաց ԺԷ.45, Եփեսացիս Զ. 11–18): Ինչպե՞ս է Տերն օգնել ձեզ հաղթել Գողիաթներին, որոնց դուք եք հանդիպել:

  Նախագահ Գորդոն Բ. Հինքլին ասել է.

  «Ձեր շուրջ բոլորը կան Գողիաթներ՝ ձեզ կործանելու չար մտադրությամբ վիթխարի հսկաներ: Նրանք 2.7 մետր հասակով տղամարդիկ չեն, այլ տղամարդիկ և կազմակերպություններ, որոնք վերահսկում են հրապուրիչ բայց չար բաների, որոնք կարող են մարտի հրավիրել և թուլացնել ու կործանել ձեզ: Դրանց շարքում են գարեջուրը և այլ ոգելից խմիչքներն ու ծխախոտը: Նրանք, ովքեր վաճառում են այս ապրանքները, կամենում են ստրկացնել ձեզ դրանց օգտագործմամբ: Կան տարբեր տեսակի թմրադեղեր, որոնք ինչպես ասել են ինձ, համեմատաբար հեշտ է ձեռք բերել բազմաթիվ միջնակարգ դպրոցներում: Նրանք, ովքեր վաճառում են դրանք, միլիոնավոր դոլարների արտադրություն ունեն՝ չարիքի մի հսկայական սարդոստյան: Մյուսը պոռնոգրաֆիան է՝ գայթակղիչ ու հետաքրքիր և հրավիրող: Այն դարձել է հսկայական արդյունաբերություն՝ արտադրելով ամսագրեր, կինոնկարներ և այլ նյութեր, որոնք նախատեսված են վերցնել ձեր փողը և տանել ձեզ այնպիսի գործողությունների, որոնք կկործանեն ձեզ:

  Հսկաները, որոնք այս ջանքերի ետևում են կանգնած, ահարկու են և հմուտ: Նրանք ձեռք են բերել լայնածավալ փորձառություն այն պատերազմում, որ նրանք են մղում: Նրանք կամենում են ձեզ ծուղակը գցել:

Գրեթե անհնարին է լիովին խուսափել նրանց արտադրանքների ցուցադրումից: Դուք տեսնում եք այդ նյութերն ամենուրեք: Բայց դուք կարիք չկա որ վախենաք դրանցից, եթե դուք ունեք ճշմարտության պարսատիկը ձեր ձեռքում: Ձեզ զգուշացվել է և ուսուցանվել ու խորհուրդ տրվել: Դուք ունեք առաքինության և պատվի ու ազնվության քարերը՝ օգտագործելու այդ թշնամիների դեմ, որոնք կամենում են հաղթել ձեզ: Ինչ վերաբերում է ձեզ, դուք կարող եք փոխաբերական արտահայտությամբ ասած՝ զարկել նրանց «աչքերի մեջտեղին»: Դուք կարող եք հաղթել նրանց ինքնակարգապահություն վարժեցնելով ձեզ մոտ՝ խուսափելու նրանցից: Դուք կարող եք ասել նրանց բոլորին ինչպես Դավիթն ասաց Գողիաթին. «Դու սրով, նիզակով և գեղարդով ես գալիս ինձ վրա, բայց ես գալիս եմ քեզ վրա Զորաց Տիրոջ՝ Իսրայելի զորքերի Աստծո անունովը, որին դու նախատեցիր»:

Հաղթանակը ձերը կլինի.... Դուք ունեք Նրա ուժը ձեր մեջ՝ հաստատելու ձեզ: Դուք ձեզ շրջապատող սպասավորող հրեշտակների պաշտպանության իրավունքն ունեք: Մի թույլ տվեք Գողիաթին վախեցնել ձեզ: Կանգնեք ձեր դիրքում և պահպանեք ձեր տեղը և դուք հաղթական կլինեք» (in Conference Report, Apr. 1983, 66; or *Ensign*, May 1983, 46, 51):

Եզրափակում

Խրախուսեք դասարանի անդամներին վստահել և հնազանդվել Տիրոջը: Խոստացեք, որ անելով այդ, նրանք կդառնան ուժեղ և կունենան Տիրոջ հավաստիացումը, որ նա կօգնի նրանց հաղթել իրենց անձնական Գողիաթներին: Հիշեցրեք դասարանի անդամներին, որ Տերը նայում է մեր սրտերին, ոչ թե մեր հարստությանը կամ դիրքին կամ էլ հանրաճանաչ չափանիշներին մեր համապատասխանությանը:

Ուսուցման լրացուցիչ գաղափարներ

Հետևյալ նյութը լրացնում է առաջարկվող դասի ուրվագիծը: Օգտագործեք այս գաղափարներից մեկը կամ մի քանիսը որպես դասի բաղկացուցիչ մաս:

1. Մեղքը արդարացնելը

Երեց Սպենսեր Վ. Քիմբալից հետևյալ մեջբերումը կարող է օգտակար լինել, երբ քննարկեք Ամաղեկացիների հետ կապված Սավուղի անհնազանդությունը:

«Սավուղն արդարացրեց իրեն: Նրա համար հեշտ էր հնազանդվել, ինչ վերաբերում էր թագավորներին, ինչի՞ էին պետք պարտված թագավորները: Բայց ինչո՞ւ չպահել գեր ոչխարերին և կովերին: Մի՞թե նրա թագավորական դատողությունն ավելի բարձր չէր, քան խոնարհ Սամուելինը....

Որքան շատերն են նման Սավուղին այսօր: Մեկն ապրում է Տիրոջ առողջության օրենքի հայտնության համաձայն, բացի այն որ պետք է երբեմն խմի իր մի գավաթ սուրճը, նա չի օգտագործում ծխախոտ կամ ոգելից խմիչք, որոնց հանդեպ նա ցանկություն չունի, բայց պետք է խմի իրեն հանգստացնող իր մի բաժակ թեյը:

Նա ծառայում է Եկեղեցական պաշտոնում, քանի որ այստեղ կա գործունեություն, որը նա սիրում է և պատիվ, որին նա ձգտում է.... բայց հեշտությամբ է արդարացում գտնում տասանորդ չվճարելու համար, համարելով դժվար: Նա իրեն չի կարող թույլ տալ.... քանզի համոզված չէ, թե այն միշտ այնպես է բաշխվում ինչպես ինքը կկամենար անել դա, կամ՝ ի դեպ ո՞վ կիմանա նրա այդ ձախողման մասին:

Մեկ ուրիշը հաճախում է ժողովների, բայց Սավուղի նման արդարացում գտնում օրվա մնացած մասի համար: Ինչո՞ւ չպետք է նայի ֆուտբոլի խաղը, կատարի անհրաժեշտ աշխատանքը բակում կամ զբաղվի սովորականի պես իր գործով:

Մեկ ուրիշը կրոնապաշտորեն արտաքուստ կատարում է իր Եկեղեցական պարտականությունները, բայց մերժում որևէ առաջարկություն, ինչ վերաբերում է ընտանեկան շփումներին իր տանը կամ ընտանեկան աղոթքներին, երբ ընտանիքը շատ դժվար է հավաքել:

Սավուղն այդպիսին էր: Նա կարող էր անել անհրաժեշտ բաները, բայց կարողանում էր գտնել այլուրեքություն այն բաների համար, որոնք դեմ էին իր սեփական ցանկություններին (in Conference Report, Oct. 1954, 51):

2. Պարտության մատնել մեր Գողիաթներին

Կտրեք 3 մետրանոց մի լար, որը մոտավորապես Գողիաթի բարձրության է: Դասարան բերեք լարը, կպչուն ժապավենը, մի քանի թերթ թուղթ և մի մարկեր: Լարն ուղղահայաց վերևի և ներքևի ծայրերում ամրացրեք պատին մի կտոր ժապավենով (եթե պատը բավականաչափ բարձր չէ, թողեք մի ծայրն ընկնի հատակին): Ասեք դասարանի աղամներին, որ լարը ներկայացնում է Գողիաթին: Խնդրեք դասարանի անդամներին թվել բաներ, որոնք կարող են վտանգ հանդիսանալ նրանց համար (պատասխանները կարող են ներառել՝ հպարտություն, պոռնոգրաֆիա, նախանձություն և թմրանյութեր): Գրեք յուրաքանչյուր վտանգը մի կտոր թղթի վրա և կպչուն ժապավենով ամրացրեք թղթի կտորը պատին ու լարին՝ ծածկելով լարը վերից վար:

Բացատրեք, որ մենք Գողիաթին հաղթելու համար զենքերի կարիք ունենք (պատասխանները կարող են ներառել՝ Տիրոջն ապավինելը, սուրբ գրությունները ուսումնասիրելը, ճշմարտությունը սովորելը, բարոյապես մաքուր լինելը և լավ ընկերներ ընտրելը): Երբ դասարանի անդամները նշեն յուրաքանչյուր զենքը, հեռացրեք մի թուղթ: Սկսեք լարի ծայրից՝ հեռացնելով թուղթն ու կպչուն ժապավենը, որոնք պահում են լարը պատի վրա: Թույլ տվեք, որ լարն ընկնի հաջորդ թղթի վրա: Հետո երբ բոլոր թղթերն ու ժապավենը հեռացվեն, լարը կընկնի հատակին և Գողիաթը կպարտվի:

«Տերն իմ և քո մեջն է հավիտյան»

Դաս
23

Ա Թագավորաց ԺԸ–Ի, ԻԳ–ԻԴ

Նպատակ

Խրախուսել դասարանի անդամներին հավատարիմ լինել իրենց ընկերներին, ինչպես Հովնաթանն ու Դավիթն էին և խուսափել նախանձությունից և ատելությունից թուլանալուց, ինչպես Սավուղը:

Նախապատրաստում

1. Աղոթքով ուսումնասիրեք հետևյալ սուրբ գրությունները.

   ա. Ա Թագավորաց ԺԸ.1–16: Հովնաթանն ու Դավիթն ընկերության ուխտ են կապում (ԺԸ.1–4): Ճակատամարտում իր հաջողության համար Դավիթը պատվի է արժանանում Իսրայելացիների կողմից (ԺԸ.5–7): Սավուղը նախանձում է Դավթին և փորձում է սպանել նրան նիզակով (ԺԸ.8–16), նշեք, որ Ջոզեֆ Սմիթի թարգմանության մեջ Ա Թագավորաց ԺԸ.10 հատվածում նշվում է, որ չար ոգին, որը գալիս էր Սավուղի վրա Աստծուց *չէր*):

   բ. Ա Թագավորաց ԺԸ.17–30, ԺԹ.1–18: Դավիթը կռվում է Փղշատցիների դեմ՝ փոխարենը Սավուղի դստեր հետ ամուսնանալու իրավունք ստանալու համար, անտեղյակ, որ Սավուղը հույս ուներ, որ Դավիթը կմեռնի ճակատամարտի դաշտում (ԺԸ.17–25): Դավիթը հաղթանակ է տանում Փղշատցիների վրա և ամուսնանում է Սավուղի դստեր՝ Մեղքողի հետ (ԺԸ.26–28): Հովնաթանը զգուշացնում է Դավթին թաքնվել և փորձում համոզել Սավուղին նրան չսպանել (ԺԹ.1–7): Սավուղի Դավթին ևս մեկ անգամ նիզակով սպանելու փորձը ձախողվում է (ԺԹ.9–10): Մեղքողը փրկում է Դավթի կյանքը Սավուղի այլ մահափորձերից (ԺԹ.11–18):

   գ. Ա Թագավորաց Ի: Հովնաթանն ու Դավիթը վերանորոգում են ընկերության իրենց ուխտը և խաղաղությունը (նշեք, որ այս ուխտը միայն Հովնաթանի և Դավթի միջև չէր, այլ նաև նրանց ընտանիքների): Երբ Սավուղը նորից է փորձում սպանել Դավթին, Հովնաթանը զգուշացնում է Դավթին փախչել:

   դ. Ա Թագավորաց ԻԳ–ԻԴ: Դավիթը շարունակում է կռվել Փղշատցիների հետ և փախչել Սավուղից: Դավիթը գտնում է Սավուղին և խնայում է նրա կյանքը:

2. Լրացուցիչ ընթերցանություն՝ Ա Թագավորաց ԺԴ.1–16, Բ Թագավորաց Ա:

Առաջարկվող դասի զարգացում

Ուշադրության կենտրոնացման վարժություն

Օգտագործեք հետևյալ վարժությունը (կամ ձեր սեփականը) դասը սկսելու համար:

Առաջադրեք դասարանի անդամներին հետևյալ հարցը.

- Որո՞նք են այն հատկանիշները, որոնք փնտրում եք ձեր ընկերոջ մեջ: (Գրատախտակին գրեք դասարանի անդամների պատասխանները: Պատասխանները կարող են ներառել՝ հավատարմություն, ազնվություն, անեսասիրություն, բարություն և գթություն):

Բացատրեք, որ այս դասի մի մասը սովորեցնում է հավատարիմ ընկեր լինելու կարևորության մասին:

Սուրբ գրության քննարկում և կիրառում

Երբ դուք ուսուցանեք սուրբ գրության հետևյալ հատվածը, քննարկեք, թե ինչպես է այն վերաբերում առօրյա կյանքին: Խրախուսեք դասարանի անդամներին կիսվել փորձառություններով, որոնք կապված են սուրբգրային սկզբունքների հետ:

1. Հովնաթանն ու Դավիթն ընկերության ուխտ են կապում: Սավուղը նախանձում է Դավթին և փորձում է սպանել նրան:

Ուսուցանեք և քննարկեք Ա Թագավորաց ԺԸ.1–16:

Գողիաթին սպանելուց հետո, Դավիթն անմիջապես հերոս է դառնում: Սավուղ թագավորն ու ողջ թագավորությունը փառաբանում են նրան: Այնուամենայնիվ, ոչ ոք այնպես հավատարիմ չէր Դավթին, ինչպես Հովնաթանը՝ Սավուղի որդին:

- Ի՞նչ էին զգում Հովնաթանն ու Դավիթը միմյանց հանդեպ (Ա Թագավորաց ԺԸ.1, 3): Ինչո՞ւ էր Հովնաթանի համար հեշտ նախանձություն զգալ Դավթի հանդեպ:

  ա. Որպես Սավուղի որդի՝ Հովնաթանը թագավորական գծում հաջորդն էր: Սակայն մարգարե Սամուելն օծել էր Դավթին դառնալու հաջորդ թագավորը (Ա Թագավորաց ԺԶ.6–13):

  բ. Մինչ Դավիթը մեծապես փառաբանվում էր ժողովրդի կողմից ճակատամարտում իր հաջողության համար, Հովնաթանը քիչ ուշադրության արժանացավ ճակատամարտում ունեցած իր սեփական հաջողության համար (Ա Թագավորաց ԺԴ.1–16):

- Ինչո՞ւ եք կարծում, որ Հովնաթանը չէր նախանձում Դավթին կամ նրա կողմից սպառնալիք չէր տեսնում (Ա Թագավորաց ԺԸ.1, 3): Ինչպե՞ս Հովնաթանը ցույց տվեց իր աջակցությունը Դավթին (Ա Թագավորաց ԺԸ.4: Նա իր թագավորական վերարկուն և զենքերը տվեց Դավթին):

- Ի՞նչ էր զգում թագավոր Սավուղը Դավթի հանդեպ Գողիաթին սպանելուց հետո (Տես Ա Թագավորաց ԺԸ.2, 5: Սավուղը Դավթին տարավ իր տուն և դրեց նրան իր զորքերի վրա): Ինչպե՞ս էր Դավիթը ցույց տալիս իր հավատարմությունը թագավոր Սավուղի հանդեպ (Տես Ա Թագավորաց ԺԸ.5): Ի՞նչը Սավուղին հուշեց դեմ գնալ Դավթին (Տես Ա Թագավորաց ԺԸ.6–9): Ինչո՞ւ է երբեմն դժվար երջանիկ լինել ուրիշների հաջողությամբ: Ինչպե՞ս է նախանձությունը և հպարտությունն ազդում մեր հոգևոր բարօրության վրա:

  Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնն ասել է.

  «Սավուղը թշնամի դարձավ Դավթին հպարտության պատճառով: Նա նախանձեց, որովհետև Իսրայելացի կանանց ամբոխները երգում էին, որ «Սավուղն իր հազարավորներին զարկեց և Դավիթն իր բյուրավորներին» (Ա Թագավորաց ԺԸ.7, տես նաև ԺԸ.6, 8):

  Հպարտներն ավելի շատ վախենում են մարդկանց դատաստանից.... «Ի՞նչ կմտածեն մարդիկ իմ մասին» ավելի մեծ կշիռ ունի, քան «Ի՞նչ կմտածի Աստված իմ մասին»…

  Մարդկանց դատաստանից վախը դրսևորվում է մարդկանց հավանության համար մրցակցության մեջ: Հպարտները սիրում են «մարդկանց փառքն ավելի, քան Աստծո փառքը» (Հովհ. ԺԲ.42–43): Մեր վարվելակերպի շարժառիթը՝ ահա այստեղ է, որ դրսևորվում է մեղքը: Հիսուսն ասել է, որ Նա անում էր «միշտ այն բաները», որոնք գոհացնում են Աստծուն (Հովհ.Ը.29): Ավելի լավ չէ՞ր լինի » մեզ համար ունենալ Աստծո գոհությունը որպես մեր դրդապատճառ, քան փորձել բարձրացնել մեզ մեր եղբորից վեր և դուրս մղել մեկ ուրիշին:

  Որոշ հպարտ մարդիկ այնքան էլ չեն մտահոգվում, թե իրենց աշխատավարձը բավարարում է իրենց կարիքները թե ոչ, այլ այն, թե որքանով է իրենց աշխատավարձն

ավելի, քան մեկ ուրիշինը: Նրանց վարձքը մնացածից մի քիչ ավելի բարձր լինելն է....Երբ հպարտությունն իշխանություն ունի մեր սրտերի վրա, մենք կորցնում ենք մեր անկախությունն աշխարհից և հանձնում ենք մեր ազատությունը մարդկանց դատաստանի գերությանը: Աշխարհն ավելի բարձր է գոռում, քան Սուրբ Հոգու շշունջները: Մարդկանց տրամաբանությունն ավելի կարևոր է դառնում, քան Աստծո հայտնությունները և հպարտը բաց է թողնում երկաթյա ձողը (in Conference Report, Apr. 1989, 4–5; or *Ensign*, May 1989, 5):

- Ինչպե՞ս էր իրեն պահում Դավիթն այն բանից հետո, երբ ճակատամարտի դաշտում Տերն օրհնեց նրան հաջողությամբ (Տես Ա Թագավորաց ԺԸ.5, 14–16): Ի՞նչ կարող ենք սովորել նրա օրինակից: Ինչ եք կարծում, ի՞նչ է նշանակում [իմաստուն վարվել], երբ հաջողակ ենք:

2. Սավուղը ձախողվում է Դավթի կյանքը խլելու համար ևս երեք փորձ կատարելիս:

Ուսուցանեք և քննարկեք Ա Թագավորաց ԺԸ.17–30, ԺԹ.1–18:

- Սավուղն առաջարկեց Դավթին ամուսնանալ իր դուստրերից մեկի հետ, եթե Դավիթը կռվեր Փղշատցիների դեմ: Ո՞րն էր այդ անելիս Սավուղի իսկական դրդապատճառը (Տես Ա Թագավորաց ԺԸ.20–25: Նա հույս ուներ, որ Դավիթը կսպանվեր Փղշատցիների կողմից):
- Ինչո՞վ էր Հովնաթանն իսկական ընկեր, երբ Սավուղը ձգտում էր սպանել Դավթին (Տես Ա Թագավորաց ԺԹ.1–7): Ի՞նչ է նշանակում լինել իսկական ընկեր: Ինչպե՞ս են ձեր ընկերները հավատարիմ ձեզ: Ինչպե՞ս եք դուք հավատարիմ ձեր ընկերներին:
- Չնայած Սավուղի զգացումները Դավթի հանդեպ փոխելու Հովնաթանի ջանքերին, Սավուղը շարունակում էր ձգտել խլելու Դավթի կյանքը (Ա Թագավորաց ԺԹ.9–10): Ինչպե՞ս Մեղքողը՝ Դավթի կինը, ցույց տվեց, որ նա հավատարիմ էր իր ամուսնուն (Տես Ա Թագավորաց ԺԹ.11–18):

3. Դավիթն ու Հովնաթանը վերանորոգում են ընկերության իրենց ուխտը և Հովնաթանը փրկում է Դավթի կյանքը:

Ուսուցանեք և քննարկեք Ա Թագավորաց Ի:

- Ինչպիսի՞ն էր Դավթի վերաբերմունքը Սավուղի ատելության և իրեն սպանելու նրա ջանքերի հանդեպ (Տես Ա Թագավորաց Ի.1): Ինչպե՞ս էր Հովնաթանը շարունակում ցույց տալ իր ընկերասիրությունը, մինչ Սավուղը ձգտում էր խլել Դավթի կյանքը (Տես Ա Թագավորաց Ի.2–4, 13–17, 23, տես նաև Ա Թագավորաց Ի.24–42, որը քննարկվում է ստորև):
- Ինչպե՞ս էր Աստծո հանդեպ հավատքն ազդում Հովնաթանի և Դավթի ընկերության վրա (Տես Ա Թագավորաց Ի.23.) Ինչպե՞ս է Աստծո հանդեպ մեր սերն ազդում ուրիշների հանդեպ մեր սիրո վրա:
- Եթե մենք մեր կյանքում առաջինը դնենք Աստծո հանդեպ հավատարմությունը, ի՞նչ կանենք մենք, եթե մեր ընկերներն անեն սխալ բաներ (Մենք սիրով կփորձենք օգնել մեր ընկերներին փոխվել): Ի՞նչ կանենք մենք, եթե մեր ընկերները խնդրեն մեզ անել բաներ, որոնք սխալ են (Մենք չենք անի անարդար բաներ, որոնք մեր ընկերներն են խնդրում մեզ անել, անկախ հասարակական հետևանքներից և մենք կփորձենք ազդել մեր ընկերների վրա, որ նրանք արդար ընտրություններ կատարեն):

- Ինչպե՞ս պետք է Հովնաթանը Դավթին իմաց տար, թե Սավուղի պալատ վերադառնալն անվտանգ է (Տես Ա Թագավորաց Ի.5–7, 18–22): Սավուղն ինչպե՞ս վերաբերվեց Դավթի բացակայությանը և իր ընկերոջ Հովնաթանի պաշտպանելուն (Տես Ա Թագավորաց Ի. 24–33): Ինչպե՞ս Հովնաթանը զգուշացրեց Դավթին փախչել Սավուղից (Տես Ա Թագավորաց Ի.35–42):

4. Սավուղը կործանվում է Դավթի հանդեպ ատելությունից: Դավիթը խնայում է Սավուղի կյանքը:

Ուսուցանեք և քննարկեք Ա Թագավորաց ԻԳ–ԻԴ:

- Դավիթը մարտադաշտում օրհնվեց անընդհատ հաջողությամբ (Ա Թագավորաց ԻԳ.1–5): Ինչո՞ւ Դավիթը ստիպված եղավ թողնել Կեիլա քաղաքը՝ նրա ժողովրդին Փղշատցիներից փրկելուց հետո (Տես Ա Թագավորաց ԻԳ.7–13):
- Երբ Սավուղն իմացավ, որ Դավիթը Կեիլայում էր, նա պատրաստեց իր զորքերը կործանելու ողջ քաղաքը (Ա Թագավորաց ԻԳ.10: Ի՞նչը Սավուղին փոխեց արդար թագավորից նրան դարձնելով մի մարդ, որը կամենում էր մի ամբողջ քաղաք կործանել, մեկ մարդու սպանելու համար: Ինչո՞ւ են նախանձությունը և ատելությունն այդքան կործանարար: Ինչպե՞ս կարող ենք ազատվել նախանձությունից կամ ատելությունից:
- Երբ Դավիթը թաքնվում էր Սավուղից, Հովնաթանն այցելեց Դավթին և «նրա ձեռքը Աստծով զորացրեց» (Ա Թագավորաց ԻԳ.16): Ի՞նչ եք կարծում, ի՞նչ է դա նշանակում: Ինչպե՞ս կարող ենք մենք զորացնել մեր ընկերներին Աստծով:
- Դավթին գտնելու և սպանելու մեկ այլ փորձի ժամանակ Սավուղը կանգնեց հանգիստ առնելու մի քարայրում (Ա Թագավորաց ԻԴ.1–3): Ի՞նչ ասացին Դավթի մարդիկ, երբ գտան Սավուղին (Տես Ա Թագավորաց ԻԴ.4): Ի՞նչ արեց Դավիթը (Տես Ա Թագավորաց ԻԴ.4–5: Ուշադրություն դարձրեք, որ Դավիթը կտրեց Սավուղի վերարկուի մի ծայրը՝ վերարկուի այն մասը, որը խորհրդանշում է իշխանություն):
- Ի՞նչու Դավիթը հրաժարվեց վնասել Սավուղին (Տես Ա Թագավորաց ԻԴ.6–12): Ի՞նչ է սովորեցնում Դավթի օրինակը մեզ՝ վրեժի և նրանց պատասխանելու մասին, ովքեր մեզ չարիք են անում (Տես Ա Թագավորաց ԻԴ.12–15, տես նաև Մորմոն Ը.20): Ի՞նչ ասաց Սավուղը, երբ Դավիթը խնայեց նրա կյանքը (Տես Ա Թագավորաց ԻԴ.16–19):

Եզրափակում

Նշեք, որ Հովնաթանի և Դավթի պատմությունը հիշեցնում է մեզ, որ իսկական ընկերությունը և սերը մեզ մոտեցնում է մեր ընկերներին և Աստծուն: Սավուղի պատմությունը հիշեցնում է մեզ, որ նախանձությունն ու ատելությունը կարող են ոչնչացնել մեզ և հեռու տանել մեր ընկերներից և Աստծուց: Խրախուսեք դասարանի անդամներին հավատարիմ լինել իրենց ընկերներին, այնպես որ նրանք կարողանան ասել նրանց. «Տերն իմ և քո մեջև լինի հավիտյան » (Ա Թագավորաց Ի.23):

Ուսուցման լրացուցիչ գաղափարներ

Ընկերասիրության ինքնագնահատում

Օգտագործեք հետևյալ վարժությունը, եթե ուզում եք շեշտել իսկական ընկեր լինելու կարևորությունը:

Տվեք դասարանի յուրաքանչյուր անդամի մի կտոր թուղթ և մատիտ կամ գրիչ: Բացատրեք, որ պետք է մի քանի հարցեր տաք նրանց՝ օգնելու նրանց որոշել, թե արդյոք նրանք լավ

ընկերներ են: Հանձնարարեք դասարանի անդամներին գրել իրենց պատասխանները՝ հավաստիացնելով նրանց, որ նրանք ստիպված չեն լինի կիսվել իրենց պատասխաններով: Ապա տվեք հետևյալ հարցերը.

1. Վերջին անգամ ի՞նչ լավ բան եք արել որևէ մեկի համար:
2. Ի՞նչ եք անում դուք, երբ լսում եք, որ մեկը չար բաներ է ասում մեկ ուրիշի մասին:
3. Ի՞նչ եք արել օգնելու ձեր ընկերներին, որ ավելի լավ մարդիկ լինեն:

Դաս
24

«Սուրբ սիրտ ստեղծիր ինձանում»

Բ Թագավորաց ԺԱ–ԺԲ, Սաղմոս ԾԱ

Նպատակ

Խրախուսել դասարանի անդամներին մաքուր լինել մտքերով ու գործերով և ապաշխարել իրենց մեղքերից:

Նախապատրաստում

1. Աղոթքով կարդացեք հետևյալ սուրբ գրությունները.
   ա. Բ Թագավորաց ԺԱ: Դավիթը շնություն է գործում Բերսաբեի՝ Ուրիայի կնոջ հետ (ԺԱ.1–5): Դավիթը ձախողվում է իր մեղքը թաքցնելու փորձերում (ԺԱ.6–13): Նա կազմակերպում է, որ Ուրիան մահանա պատերազմում (ԺԱ.14–17): Դավիթն ամուսնանում է Բերսաբեի հետ, և նրանք որդի են ունենում (ԺԱ.26–27):
   բ. Բ Թագավորաց ԺԲ.1–23: Մարգարե Նաթանը սովորեցնում է Դավթի մեղքերի խստության մասին Դավթին մի առակ պատմելով (ԺԲ.1–6): Դավթին ասվում է, որ նա կպատժվի իր մեղքերի համար (ԺԲ.7–14, նշեք, որ Ջոզեֆ Սմիթի թարգմանության մեջ 13 հատվածում, Նաթանը հաղորդեց. «Տերն էլ մի կողմ *չի* դրել քո մեղքը, որ դու չմեռնես»): Դավթի և Բերսաբեի որդին մեռնում է մանուկ հասակում (ԺԲ.15–23):
   գ. Սաղմոս ԾԱ: Ապաշխարող Դավիթը ներում է որոնում:
2. Լրացուցիչ ընթերցանություն՝ Բ Թագավորաց Բ–Ժ:
3. Եթե օգտագործելու եք ուշադրության վարժությունը բերեք մի կոճ թել և մի մկրատ:

Առաջարկվող դասի զարգացում

Ուշադրության կենտրոնացման վարժություն

Անհրաժեշտության դեպքում օգտագործեք հետևյալ վարժությունը (կամ ձեր սեփականը) դասը սկսելու համար:

Հանձնարարեք որևէ մեկին ձեռքերն առաջ մեկնած կանգնել դասարանի առաջ: Մեկ տակ թելով թույլ կապեք նրա երկու դաստակները: Բացատրեք, որ այս մեկ տակ թելը ներկայացնում է մեկ անմաքուր միտք: Ապա նրան հանձնարարեք կտրել թելը ձեռքերը կտրուկ դեպի դուրս շարժելով:

- Ի՞նչ պետք է մենք անենք, երբ մի անմաքուր միտք է մտնում մեր ուղեղը (Մենք պետք է այն անմիջապես կասեցնենք):

Խնդրեք անդամներից որևէ մեկին նորից պարզել ձեռքերը: Նրա դաստակները կապեք մի քանի տակ թելերով, որպեսզի բավականին դժվար լինի դրանք կտրել: Ապա նրան խնդրեք, որ փորձի կտրել թելերը: Կրկնեք այս գործընթացը օգտագործելով բավականաչափ թելեր, որպեսզի անհնար դառնա կտրելով ազատվել դրանցից:

- Ի՞նչ է պատահում, երբ մենք թույլ ենք տալիս, որ անմաքուր մտքերը մնան մեր ուղեղում:

Ազատեք դասարանի այդ անդամի ձեռքերը կտրելով թելերը մկրատով: Բացատրեք, որ այս դասի մի մասը քննարկում է անմաքուր մտքեր ունենալու հետևանքների մասին: Դասը նաև քննարկում է ուղիներ՝ ազատելու մեզ անմաքուր մտքերից:

Սուրբ գրքերի քննարկում և կիրառում

Երբ դուք հետևեք սուրբ գրքի հետևյալ հատվածին, քննարկեք, թե ինչպես է այն առնչվում ամենօրյա կյանքին: Քաջալերեք դասարանի անդամներին կիսվել փորձառություններով, որոնք կապված են սուրբգրքյան սկզբունքների հետ: Քանի որ դժվար կլինի սպառել դասի յուրաքանչյուր հարցը կամ ամեն մի կետը, աղոթքով ընտրեք նրանք, որոնք լավագույնս կբավարարեն դասարանի անդամների կարիքները: Անհրաժեշտության դեպքում որոշ հարցեր հարմարեցրեք դասարանի անդամների կարիքներին ելնելով հանգամանքներից:

Ա Թագավորաց ԻԵ-ից մինչև Բ Թագավորաց Ժ գլուխը կարևոր պատմական տեղեկություն է տալիս այս դասի համար: Քանի որ այս գլուխները ներառված չեն այս ձեռնարկում, դուք գուցե ամփոփեք դրանք հետևյալ ձևով.

Հետո, երբ Դավիթը խնայեց Սավուղի կյանքը, շուտով Սավուղը որոնեց խլել Դավթի կյանքը մեկ անգամ ևս: Դավիթը կրկին հնարավորություն ունեցավ սպանել թագավորին, բայց նա հրաժարվեց դա անել: Ճակատամարտերը շարունակվեցին Հուդայի ժողովրդի և նրանց շրջապատող ազգերի միջև և Սավուղն ու Հովնաթանը սպանվեցին այդ ճակատամարտերից մեկում: Դավիթը հաջորդեց Սավուղին որպես թագավոր և դարձավ Իսրայելի պատմության մեջ մեծագույն թագավորներից մեկը: Նա միավորեց ցեղերին մեկ ազգի մեջ, ապահովեց երկրի տիրակալությունը, որը խոստացվել էր իր ժողովրդին և հիմնադրեց մի կառավարություն, որը հիմնված էր Աստծո օրենքի վրա: Սակայն, նրա կյանքի վերջին 20 տարիներն աղտոտվեցին մեղսավոր որոշումներով, որոնք քննարկվում են այս դասում:

1. Դավիթը շնություն է գործում Բերսաբեի հետ և ծրագրում Ուրիայի՝ Բերսաբեի ամուսնու մահը:

Ուսուցանեք և քննարկեք Բ Թագավորաց ԺԱ:

- Դավիթը շրջում էր իր տան կտուրին, երբ տեսավ Բերսաբեին և գայթակղվեց շնություն գործել նրա հետ (Բ Թագավորաց ԺԱ.2): Ի՞նչ պետք է աներ Դավիթը, երբ տեսավ Բերսաբեին: Ի՞նչ արեց Դավիթը, որն իրեն տարավ մեղսագործության նրա հետ (տես Բ Թագավորաց ԺԱ.2–4): Ի՞նչը կարող է տանել մարդկանց գայթակղության, սեռական մեղքեր գործելու: Ի՞նչ կարող ենք անել մենք, որ խուսափենք սեռական մեղքեր գործելու գայթակղությունից:

Փորձեք գրատախտակի վրա գրի առնել դասարանի անդամների պատասխանները՝ օգտագործելով ստորև բերվածի նմանատիպ մի սխեմա: Պատասխանները կարող են ընդգրկել հետևյալը.

Բաներ, որոնցից պետք է խուսափել	*Ինչպես խուսափել դրանցից*
Անմաքուր կամ անբարոյական մտքեր	Լցրեք ձեր միտքը վսեմացնող մտքերով:
Հեռուստահաղորդումներ, կինոնկարներ, ամսագրեր, գրքեր և երաժշտություն, որոնք պոռնոգրաֆիկ են կամ ինչ-որ ձևով անպարկեշտ մտքեր են առաջացնում:	Ընտրեք հեռուստահաղորդումներ որոնք կոգեշնչեն ձեզ բարիք անել:
Ոչ առաքինի ժամադրություններ	Հետևեք վերջին օրերի մարգարեների կողմից ուսուցանված ժամադրության չափանիշներին և *Երիտասարդներին զորացնելու համար* գրքույկում նշվածներին:
Սիրաբանել ամուսնությունից հետո	Սիրեք ձեր կողակցին ողջ ձեր սրտով: Շարունակեք «հրապուրել» (զարգացնել ձեր հարաբերությունները) ձեր կողակցի հետ:
Տեղեր կամ գործեր, որոնք ձեզ հնարավորություն չեն տա ունենալ Սուրբ Հոգու մշտական ուղեկցությունը:	Հավաստիացեք, որ այն վայրերը, ուր դուք գնում եք և միջոցառումները, որոնց մասնակցում եք, հնարավորություն կտա ձեզ հետ ունենալ Սուրբ Հոգու մշտական ուղեկցությունը:

Փորձեք օգտագործել ուսուցման առաջին լրացուցիչ միտքը՝ քննարկելու համար անմաքուր մտքերից խուսափելու ուղիները:

- Ի՞նչ փորձեց անել Դավիթը, երբ իմացավ, որ Բերսաբեն հղի էր (Տես Բ Թագավորաց ԺԱ. 6–13: Նա փորձեց ստիպել Ուրիային՝ Բերսաբեի ամուսնուն, տուն վերադառնալ նրա մոտ: Այդ դեպքում կթվար, որ չծնված երեխան Ուրիայինն էր): Ինչո՞ւ Դավթի ծրագիրը ձախողվեց (Տես Բ Թագավորաց ԺԱ.11: Ուրիան չկամեցավ տուն վերադառնալ այդ ժամանակ, որովհետև նա հավատարիմ էր իր մարտընկերներին և զգում էր, որ պիտի մնար նրանց հետ):
- Ի՞նչ ավելի լուրջ մեղք գործեց Դավիթը՝ փորձելով ծածկել իր անբարոյականությունը: (Տես Բ Թագավորաց ԺԱ.14–17): Ի՞նչ եք կարծում Դավիթը ո՞ւմից էր մտածում, թե կարող է թաքցնել իր մեղքը: Ինչպե՞ս են մարդիկ փորձում ծածկել իրենց մեղքերն այսօր: Ի՞նչ է տեղի ունենում, երբ մենք փորձում ենք ծածկել մեր մեղքերը:

  Երեց Ռիչարդ Գ. Սքոթն ասել է.

  «Մի հանգստացեք այն փաստով, որ ձեր օրինազանցությունները հայտնի չեն ուրիշներին: Դա նման է ջայլամին, որը թաքցնում է իր գլուխն ավազի մեջ: Նա տեսնում է միայն խավար և զգում հարմարավետ թաքնված: Իրականում նա ծիծաղելիորեն ուշագրավ է: Նմանապես մեր յուրաքանչյուր քայլը նկատվում է Երկնային Հոր և Նրա Սիրելի Որդու կողմից: Նրանք ամեն ինչ գիտեն մեր մասին….

  Եթե դուք լուրջ օրինազանցություն եք կատարել, դուք չեք գտնի որևէ տևական բավարարվածություն կամ հանգիստ այն բանում, ինչ արել եք: Արդարացնել օրինազանցությունը՝ ծածկելով այն, կարող է թվալ խնդրի լուծում, բայց այդպես չէ: Փորձիչը մտադրություն ունի հասարակայնացնել ձեր ամենաամոթալի գործերն ամենավտանգավոր պահին: Ստերը ստեղծում են մի իրավիճակ, որը շատ ավելի դատապարտելի է և դառնում է թակարդ, որը սատանան կօգտագործի ձեզ վնասելու համար (in Conference Report, Apr. 1995, 103; or *Ensign*, May 1995, 77).

Անհրաժեշտության դեպքում օգտագործեք լրացուցիչ ուսուցման երկրորդ գաղափարը՝ ցույց տալու համար մեր մեղքերը ծածկել փորձելու վտանգը:

2. Դավթին ասվեց, որ նա կպատժվի իր մեղքերի համար:

Ուսուցանեք և քննարկեք Բ Թագավորաց ԺԲ.1–23:

- Ի՞նչ առակ պատմեց մարգարե Նաթանը, որ ցույց տա, թե որքան դժգոհ էր Տերը Դավթից (Տես Բ Թագավորաց ԺԲ.1–4): Ի՞նչ մտածեց Դավիթն առակի միջի աղքատ մարդու հանդեպ հարուստ մարդու վերաբերմունքի մասին (Տես Բ Թագավորաց ԺԲ.5–6): Ինչո՞վ էր Դավթի վարմունքը նման հարուստ մարդու վարմունքին (Տես Բ Թագավորաց ԺԲ.7–9): Ինչպե՞ս Դավիթը պատասխանեց Տիրոջ հանդիմանությանը (Տես Բ Թագավորաց ԺԲ.13):
- Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ Դավիթը չկարողացավ ճանաչել, որ ինքն էր ներկայացնում առակի միջի հարուստ մարդուն: Ինչո՞ւ ենք մենք երբեմն անկարող ճանաչել մեր իսկ մեղսավորությունը:
- Որո՞նք էին Դավթի մեղքերի հետևանքները (Տես Բ Թագավորաց ԺԲ.10–14): Այս մարգարեությունների իրականացումը կարելի է գտնել 15–23 հատվածներում և Բ Թագավորաց և Գ Թագավորաց գրքի հետագա գլուխներում, տես նաև ՎԿՈՒ 132.39: Նշեք, որ շնությունը լուրջ մեղք է, և Դավիթը զրկվեց իր վեհացումից, որովհետև Տերը նրան համարեց Ուրիայի սպանության պատասխանատուն):

  Նախագահ Մարիոն Գ. Ռոմնին ասել է. «Դավիթը…. չնայած մեծապես արտոնված էր Տիրոջ կողմից (նա փաստորեն համարվում էր մի մարդ Աստծո իսկ սրտով) տեղի տվեց գայթակղությանը: Նրա անմաքրաբարոյությունը տարավ նրան դեպի սպանություն և դրա հետևանքով, նա կորցրեց իր ընտանիքները և իր վեհացումը»(in Conference Report, Apr. 1979, 60; or *Ensign*, May 1979, 42):
- Որո՞նք են անբարոյականության անմիջական հետևանքներն այսօր: Ինչու՞ են չզղջացողի համար որոշ հետևանքներ երկարատև:

3. Ապաշխարող Դավիթը ներում է փնտրում:

Ուսուցանեք և քննարկեք Սաղմոս ԾԱ:

Տիրոջն ուղղված մի սաղմոսում Դավիթը ցանկություն հայտնեց օգնել ուրիշներին ապաշխարել, ասելով. «Անօրեններին կսովորեցնեմ քո ճանապարհները. և մեղավորները ետ կդառնան քեզ մոտ» (Սաղմոս ԾԱ.13): Չնայած Դավիթը կորցրեց իր վեհացումը, որովհետև կազմակերպեց Ուրիայի մահը, մենք կարող ենք սովորել նրա ապաշխարող վերաբերմունքից, երբ նա ներում էր փնտրում շնության մեղքի համար: Նրա խոսքերը ԾԱ սաղմոսում սովորեցնում են ճշմարիտ ապաշխարության շատ կողմեր: Երբ ուսումնասիրեք սաղմոսը դասարանի անդամների հետ, քննարկեք թե ինչպե՞ս կարող ենք կիրառել Դավթի ապաշխարության օրինակը մեր կյանքում:

- ԾԱ Սաղմոսում առաջինը Դավիթն ընդունեց Աստծուն և Նրա ողորմությունը (Սաղմոս ԾԱ.1): Դավիթը նաև ընդունեց իր սեփական մեղսավորությունը (Սաղմոս ԾԱ.1–3): Ինչո՞ւ է կարևոր, որ մենք ճանաչենք Աստծո մեծությունը և մեր իսկ մեղսավորությունը, երբ մենք ապաշխարում ենք մեր մեղքերից:
- Ի՞նչ պետք է մենք զոհաբերենք որպեսզի ստանանք ներում մեր մեղքերին (Տես Սաղմոս ԾԱ.16–17): Ի՞նչ է նշանակում ձեր կարծիքով «կոտրված և փշրված սիրտ»:
- Ինչպե՞ս են մեր մեղքերը «ամեն ժամանակ [մեր] առաջին» (Սաղմոս ԾԱ.3): Ինչպե՞ս է դա փոխվում մեր ներվելուց հետո: (Տես Սաղմոս ԾԱ.10, Ալմա 36.17–19): Ինչպե՞ս է

Աստված նայում մեր անցյալ մեղքերի վրա մեզ ներելուց հետո (Տես Սաղմոս ԾԱ.9, Եսայիա ԽԳ.25, ՎԼՈՒ ԾԸ.42):

- Դավիթը նկարագրում է ներումը որպես սրբում (Սաղմոս ԾԱ.1–2, 7, 9–10), հաստատում (Սաղմոս ԾԱ.12), և փրկություն (Սաղմոս ԾԱ.14): Ինչո՞ւ են այս համապատասխան նկարագրությունները Աստծո ներման օրհնությունները:

Եզրափակում

Բացատրեք, որ ինչքան էլ հաջողակ և ուժեղ լինենք, մենք զերծ չենք գայթակղությունից: Խրախուսեք դասարանի անդամներին կատարել անհրաժեշտ փոփոխություններն իրենց կյանքում, որոնք կօգնեն նրանց լինել մաքրաբարո մտքով և գործով: Արտահայտեք ձեր սերը Հիսուս Քրիստոսի հանդեպ և երախտագիտություն Նրա Քավության համար: Վկայեք, որ Քավության շնորհիվ մենք կարող ենք ներվել մեր մեղքերի համար:

Ուսուցման լրացուցիչ գաղափարներ

Հետյալ նյութն օժանդակում է առաջարկվող դասի ուրվագիծին: Օգտագործեք մեկ կամ մի քանի գաղափարներ որպես դասի բաղկացուցիչ մաս:

1. Հեռացնելով անմաքուր մտքերը մեր ուղեղից

Ձեր սեփական խոսքերով կիսվեք Երեց Փաքերի հետևյալ մտքով, թե ինչպես հեռացնել անմաքուր մտքերը, որոնք մտել են մեր ուղեղն առանց հրավերի:

«Ուղեղը նման է բեմի: Բացի այն ժամանակից, երբ մենք քնած ենք, վարագույրը միշտ վեր է բարձրացված: Այդ բեմում անընդհատ ինչ-որ գործողություն է կատարվում: Այն կարող է լինել կատակերգություն կամ ողբերգություն, հետաքրքիր կամ ձանձրալի, լավ կամ վատ, բայց ուղեղի բեմում միշտ ինչ-որ գործողություն է կատարվում:

Նկատել ե՞ք, որ առանց իսկական մտադրության ձեր կողմից, գրեթե ամեն ներկայացման մեջտեղում մի փոքրիկ մութ միտք կարող է սողոսկել ներս՝ կուլիսների կողմից և գրավել ձեր ուշադրությունը: Այս մեղավոր մտքերը կփորձեն բեմից հեռացնել բոլորին: Եթե դուք թույլ տաք, որ դրանք շարունակվեն, բոլոր առաքինի մտքերը կթողնեն բեմը: Ձեզ կլքեն, որովհետև դուք հավանություն տվեցիք դրան՝ անարդար մտքերի ազդեցությանը:

Եթե դուք տեղի տաք դրանց, նրանք ձեզ կներկայացնեն ձեր մտքի բեմում ցանկացած բան՝ ձեր հանդուրժողականության սահմաններում: Դրանք կարող են ներկայացնել դառնության, նախանձության, կամ ատելության թեման: Այն կարող է լինել գռեհիկ, անբարոյական, նույնիսկ անառակ: Երբ նրանք տիրանան բեմին, եթե դուք թույլ եք տալիս, նրանք կհնարեն ամենախելացի փաստարկները ձեր ուշադրությունը պահելու համար: Դրանք անշուշտ կարող են հետաքրքիր դառնալ, նույնիսկ համոզել ձեզ, որ անմեղ են, քանի որ դրանք ընդամենը մտքեր են:

Ի՞նչ պիտի անեք նման պահին, երբ ձեր ուղեղի բեմը բռնագրավված է անմաքուր մտքերի դևիկներով, լինեն դրանք մոխրագույն, որոնք կարող են գրեթե մաքուր թվալ, թե կեղտոտ, որոնք կասկածի տեղ չեն թողնում: Եթե կարողանաք վերահսկել ձեր մտքերը, դուք կարող եք հաղթահարել սովորույթները, նույնիսկ այլասերող անձնական սովորույթները: Եթե դուք կարողանաք սովորել ղեկավարել դրանց, դուք կունենաք երջանիկ կյանք:

Սա այն է, ինչ կկամենայի սովորեցնել ձեզ: Ընտրեք Եկեղեցու սրբազան երաժշտությունից մի սիրելի օրհներգ, այնպիսին, որն ունի վսեմացնող խոսքեր և ակնածալի երաժշտություն, այնպիսին, որը ոգեշնչման զգացում է առաջացնում ձեր մեջ: Մտքում ուշադիր երգեք այն: Անգիր սովորեք: Չնայած երաժշտական կրթություն կարող է չունեք, կարող եք մտածել օրհներգի միջոցով:

«Այսպիսով օգտագործեք այս օրհներգը որպես ձեզ համար գնալու մի տեղ: Դարձրեք այն ձեր շտապ օգնության ուղին: Երբ որ այս անպարկեշտ մտքերը ձեր մտածողության սահմանագծերից ներս սողոսկեն դեպի ձեր ուղեղի բեմը, դրեք այս ձայնագրությունը: Երբ երաժշտությունը սկսվի և երբ բառերը ձևավորեն ձեր մտքերը, անարժաններն ամոթահար փախուստի կդիմեն: Այն ամբողջապես կփոխի ձեր ուղեղի բեմի տրամադրությունը: Որովհետև այն վսեմացնող է և մաքուր, ստոր մտքերը կանհետանան: Քանի որ ընտրված առաքինությունը չի ընկերակցում կեղտի հետ, չարը չի կարող տանել լույսի ներկայությունը:

Համապատասխան պահին դուք կնկատեք, որ երգում եք այդ երաժշտությունը: Երբ քննեք ձեր մտքերը, կբացահայտեք, որ ինչ-որ ազդեցություն աշխարհից ձեր մեջ խրախուսել է մի անարժան միտք շարժվելու ձեր ուղեղի բեմի վրա և երաժշտությունը գրեթե ինքնաբերաբար սկսվել է:

Երբ սովորեք մաքրել ձեր ուղեղի բեմն անարժան մտքերից, պահեք այն զբաղված՝ սովորելով արժանի բաներ: Փոխեք ձեր միջավայրը, որպեսզի դուք ունենաք ձեր շրջապատում այնպիսի բաներ, որոնք կոգեշնչեն բարի և վսեմացնող մտքեր: Զբաղվեք անընդհատ այնպիսի բաներով, որոնք արդար են» (in Conference Report, Oct. 1976, 99–100):

2. Մեր մեղքերը ծածկելու փորձերի վտանգը

Փորձելով ծածկել շնության իր մեղքը՝ Դավիթը գործեց նույնիսկ ավելի մեծ մեղք: Մեր մեղքերը թաքցնելու վտանգի մասին քննարկելու համար, համեմատեք մեղքը մի գունդ ցեխի հետ: Ցուցադրեք այս միտքը գրատախտակի վրա, ինչպես ցույց է տրված առաջին նկարում՝ էջ 116:





- Ի՞նչ կպատահի, եթե մենք փորձենք ծածկել մի փոքրիկ ցեխի գնդիկ (Այդ գնդիկը կմեծանա և ավելի տեսանելի կդառնա: Պարզաբանեք այս գաղափարն ինչպես ցույց է տրված վերևի երկրորդ նկարում):
- Ինչո՞վ է մեր մեղքերը ծածկելը նման ցեխի մի գունդ ծածկելուն (Մեր մեղսավորությունը դառնում է ավելի մեծ և ավելի լուրջ, երբ մենք փորձում ենք ծածկել մեր մեղքերը):
- Եթե մենք չենք կամենում, որ մարդիկ տեսնեն ցեխի գունդը, ի՞նչ պետք է անենք: (Մենք պետք է հեռացնենք ցեխը, այն ծածկելու փոխարեն): Ինչպե՞ս կարող ենք հեռացնել մեղքը մեր կյանքից:

3. «Հետո Ամնոնը նրան ատեց շատ մեծ ատելությամբ» (Բ Թագավորաց ԺԳ.15):

Բ Թագավորաց ԺԳ գլուխը պարունակում է Դավթի որդի Ամնոնի և Դավթի դստեր Թամարի պատմությունը: Ամնոնը հրապուրվեց Թամարով և ստիպեց նրան պառկել իր հետ:

- Բ Թագավորաց ԺԳ.1 գլխում ասվում է, որ Ամնոնը սիրում էր Թամարին: Ինչպե՞ս փոխվեցին Ամնոնի զգացմունքները Թամարի հանդեպ, երբ նա մեղանչեց նրա դեմ

(Տես Բ Թագավորաց ԺԳ.15): Ինչո՞ւ է ավելի շատ ատելություն քան սեր հաճախ առաջանում մարդկանց միջև, ովքեր խախտում են բարոյականության սկզբունքները:

Նախագահ Գորդոն Բ. Հինքլին ասել է. «Ես լսել եմ ինչպես է Ջոն Ա. Ուիդսթոուն…. ասել. «Ես նկատել եմ, որ այն երիտասարդն ու օրիորդը, որոնք խախտում են բարոյականության սկզբունքները, շուտով սկսում են ատել միմյանց»: Ես նկատել եմ, որ կարող են լինել սիրո խոսքեր սկզբում, բայց կլինեն զայրույթի և դառնության խոսքեր հետագայում» (“True to the Faith,” *Ensign*, June 1996, 5):

4. Հույս ապաշխարողի համար

Եթե դուք շեշտեք, որ երբեք ուշ չէ ապաշխարելու համար, դուք գուցե կիսվեք Երեց Բոյդ Ք. Փաքերի հետևյալ մտքով.

«Այն հուսալքող միտքը, որ սխալը (կամ նույնիսկ դրանց շարանը) դարձնում է հավիտյան խիստ ուշ, չի գալիս Տիրոջից: Նա ասել է, որ *եթե* մենք կամենանք ապաշխարել, Նա ոչ միայն կների մեզ մեր օրինազանցությունները, այլ Նա կմոռանա դրանք և այլևս չի հիշի…. Ապաշխարությունը նման է օճառի, այն կարող է լվանալ մեղքը: Ցեխով աղտոտված լինելը կարող է պահանջել կարգապահական ուժեղ ախտահանող միջոց՝ բծերը հեռացնելու համար, բայց դրանք դուրս կգան» (in Conference Report, Apr. 1989, 72; or *Ensign*, May 1989, 59):

«Ամեն շունչ ունեցողը թող օրհնե Տիրոջը»

Դաս
25

Սաղմոսներ

Նպատակ

Օգնել դասարանի անդամներին ցույց տալ իրենց երախտագիտությունը Փրկչի և այն բազմաթիվ օրհնությունների համար, որ նա և Երկնային Հայրը տվել են մեզ:

Նախապատրաստում

1. Աղոթքով ուսումնասիրեք դասում քննարկվող սուրբ գրությունները և որքան հնարավոր է շատ Սաղմոսների գրքից:
2. Ուսումնասիրեք դասը և աղոթքով ընտրեք սուրբ գրությունները, թեմաները և հարցերը, որոնք լավագույնս կբավարարեն դասարանի անդամների կարիքները: Այս դասը չի ընդգրկում ողջ Սաղմոսների գիրքը: Ավելի շուտ այն շոշափում է մի քանի կարևոր թեմաներ, որոնք արտահայտված են ողջ գրքի մեջ:
3. Եթե դուք օգտագործելու եք ուշադրության առաջին վարժությունը, բերեք Փրկչի մի նկար և չորս կամ հինգ առարկաներ, որոնց համար երախտապարտ եք, ինչպես օրինակ սուրբ գրությունները, ձեր սիրելիներից մեկի նկարը, մի առարկա, որը ներկայացնում է ձեր տաղանդներից մեկը կամ ուտելիքի մի տեսակ: Եթե օգտագործելու եք ուշադրության երկրորդ վարժությունը, խնդրեք մեկ կամ երկու դասարանի անդամի նախապատրաստվել՝ կիսվելու մի սիրելի սաղմոսով և ասել, թե ինչո՞ւ է այն կարևոր իրենց համար:
4. Բերեք մեկ կամ մի քանի տաճարների նկարներ:

Առաջարկվող դասի զարգացում

Ուշադրության կենտրոնացման վարժություն

Անհրաժեշտության դեպքում օգտագործեք հետևյալ վարժություններից մեկը (կամ ձեր սեփականը), երբ դասը սկսվի: Ընտրեք այն վարժությունը, որն ամենահարմարը կլինի դասարանի համար:

1. Ցույց տվեք Փրկչի մի նկար և արտահայտեք ձեր սերը նրա կյանքի և առաքելության հանդեպ: Ցուցադրեք այլ առարկաներ, որոնք ներկայացնում են այնպիսի բաներ, որոնց համար դուք երախտապարտ եք: Արտահայտեք ձեր երախտագիտությունը յուրաքանչյուրի համար: Ապա ուղղեք հետևյալ հարցը.
   - Տիրոջից ի՞նչ պարգևների և հնարավորությունների համար եք հատկապես երախտապարտ: Ինչպե՞ս ձեր կյանքն այլ կլիներ առանց այդ օրհնությունների:

   Բացատրեք, որ սաղմոսներից շատերն արտահայտում են երախտագիտություն Տիրոջ տված օրհնությունների համար: Այս դասի մի մասը կենտրոնանում է այս օրհնությունների վրա և այն բանի վրա, թե ինչ կարող ենք անել՝ ցույց տալու մեր երախտագիտությունը նրանց հանդեպ:
2. Խնդրեք դասարանի որևէ անդամի կարդալ ԻԳ Սաղմոսը բարձրաձայն: Ապա ուղղեք հետևյալ հարցը.
   - Ի՞նչ զգացումներ են արտահայտված այս սաղմոսում: Որո՞նք են ձեր զգացումները, երբ կարդում կամ լսում եք այս սաղմոսները:

Խնդրեք մեկ կամ երկու դասարանի հանձնարարված անդամների կիսվել որևէ սիրելի սաղմոսով և ասել, թե ինչո՞ւ է այն կարևոր իրենց համար:

Սուրբ գրության քննարկում և կիրառում

Երբ ուսուցանում եք սուրբ գրության հետևյալ հատվածները, քննարկեք, թե ինչպես են դրանք վերաբերում ամենօրյա կյանքին: Խրախուսեք դասարանի անդամներին կիսվել փորձառություններով, որոնք կապված են սուրբգրքյան սկզբունքների հետ:

Բացատրեք, որ Սաղմոսների գիրքը սկզբում բանաստեղծությունների մի ժողովածու է եղել, որոնք երգվել են որպես փառաբանություններ կամ խնդրանքներ Աստծուն: Շատերը գրվել են Դավթի կողմից: Այս գիրքը հնադարյան Իսրայելի օրհներգերի գրքի է նման: Աշխարհի լավագույն ոգեշնչված որոշ ստեղծագործություններ ստեղծվել են նրա լիրիկայի հիման վրա, արտահայտելով հավատք առ Աստված և արդար ապրելու անկեղծ ցանկություն:

1. Մարգարեություններ Հիսուս Քրիստոսի կյանքի և առաքելության մասին

Շատ սաղմոսներ մարգարեանում են Քրիստոսի առաքելության մասին՝ որպես Մեսիա: «Պետք է կատարվի Մովսեսի օրենքումը և մարգարեներումը և սաղմոսներումը բոլոր ինձ համար գրվածները» (Ղուկաս ԻԴ.44): Քննարկեք Քրիստոսի մասին հետևյալ մարգարեություններից մի քանիսի իրականացման մասին, որոնք գրված են Սաղմոսների գրքում.

Մարգարեություն	*Իրականացում*
Սաղմոս ՃԷ.23–30	Մատթեոս Ը.23–27: Հիսուսը հանդարտեցրեց քամիներն ու ալիքները:
Սաղմոս ԿԹ.8	Հովհաննես Ա.11, Է.5: Հիսուսը չընդունվեց իր իսկ ժողովրդի կողմից:
Սաղմոս ԽԱ.9, ՃԵ.12–14	Հովհաննես ԺԳ.18, 21: Հիսուսը դավաճանվեց ընկերոջ կողմից:
Սաղմոս ԿԹ.20	Մարկոս ԺԴ.32–41: Հիսուսը միայնակ տառապեց Գեթսեմանիում:
Սաղմոս ԻԲ.7–8	Մատթեոս ԻԷ.39–43: Հիսուսը ծաղրվեց:
Սաղմոս ԻԲ.16	Մարկոս ԺԵ.25: Հիսուսը խաչվեց:
Սաղմոս ԻԲ.18	Մատթեոս ԻԷ.35: Զինվորները վիճակ են գցում Քրիստոսի շորերի համար:
Սաղմոս ԻԲ.1	Մատթեոս ԻԷ.46: Հիսուսը հարցրեց Հորը, թե ինչու մենակ թողեց իրեն:
Սաղմոս ԿԹ.21	Հովհաննես ԺԹ.28–30: Հիսուսին քացախ տրվեց, երբ ծարավ էր:
Սաղմոս ԼԴ.20	Հովհաննես ԺԹ.33–36: Հիսուսի ոսկորներից ոչ մեկը չջարդվեց:
Սաղմոս ԼԱ.5	Ղուկաս ԻԳ.46: Հիսուսն իր հոգին հանձնեց Հորը և մահացավ:
Սաղմոս ԺԶ.10	Գործք Բ.31–32, ԺԳ.34–35: Փրկչի մարմինն ապականություն չտեսավ՝ Հարությամբ բարձրացվելով:

- Հիսուս Քրիստոսը միակ անձնավորությունն է, որի ծնունդը, կյանքը, մահը և հարությունը մարգարեացել են նրա ծննդից առաջ: Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ էին այդպիսի մանրամասն մարգարեություններ տրվել Փրկչի կյանքի մասին: (Այս մարգարեությունները հստակ էին դարձնում, որ Հիսուսը խոստացված Մեսիան էր՝ աշխարհի Փրկիչը): Ինչպե՞ս էին այս մարգարեությունները օրհնություն նրանց համար, ովքեր դրանք ստացել էին: (Մարգարեություններն օգնում էին ժողովրդին իմանալ Փրկչի մասին, ձեռք բերել վկայություններ նրա մասին, նույնիսկ նրա ծննդից առաջ [Տես Մոսիա 3.13]: Մարգարեությունները նաև օգնեցին որոշ մարդկանց ճանաչել նրան, երբ նա եկավ):

2. «Տերը բարի արավ քեզ» (Սաղմոս ՃԺԶ.7):

Բացի Փրկչի կյանքի և առաքելության մասին մարգարեանալուց, շատ սաղմոսներ արտահայտում են երախտագիտություն օրհնությունների համար, ինչպես օրինակ երկնքի և երկրի ստեղծումը, Փրկչի ողորմությունը, ներումը և սերը, սուրբ գրությունները և տաճարը:

Երկնքի և Երկրի ստեղծումը

Քննարկեք հետևյալ սաղմոսները, որոնք արտահայտում են երախտագիտություն Տիրոջը երկնքի և երկրի ստեղծման համար.

Սաղմոս ԺԹ.1
Սաղմոս ՃԴ.5–7, 14, 24
Սաղմոս ՃԼԶ.3–9

- Ինչպե՞ս է երկնքի և երկրի ստեղծումը վկայում Աստծո զորության և սիրո մասին: (Տես Ալմա Լ.44, Մովսես Զ.63) Ինչպե՞ս կարող ենք ցույց տալ երախտագիտություն Ստեղծման պարգևի համար:

Փրկչի ողորմությունը, ներումն ու սերը

Քննարկեք հետևյալ սաղմոսներից մի քանիսը, որոնք երախտագիտություն են արտահայտում Փրկչին՝ իր ողորմության, ներման և սիրո համար.

Սաղմոս ԻԳ (դուք կարող եք չքննարկել այս սաղմոսը, եթե այն օգտագործել եք ուշադրության վարժությունում)
Սաղմոս ԾԱ (դուք կարող եք չքննարկել այս սաղմոսը, եթե այն քննարկել եք դաս 24-ում)
Սաղմոս ԾԹ.16
Սաղմոս ՀԸ.38
Սաղմոս ՁՁ.5, 13
Սաղմոս Ճ.4–5
Սաղմոս ՃԳ.2–4, 8–11, 17–18

- Ի՞նչ կարող եք սովորել Տիրոջ մասին այս սաղմոսներից: Հրավիրեք դասարանի անդամներին պատմել, թե ինչպե՞ս են եկել Տիրոջ ողորմության, ներման և սիրո իմացությանը:
- Ի՞նչն է մեծ տպավորություն գործում ձեզ վրա ԾԱ սաղմոսում ներում խնդրող Դավթի աղերսանքի մեջ: Ի՞նչ է այս սաղմոսը սովորեցնում մեզ ապաշխարության և ներման մասին: (Ուշադրություն դարձրեք 2, 7, և 12 հատվածների առաջին խոսքերին: Այս խոսքերը նկարագրում են ապաշխարության մասին կարևոր տեսանկյուններ: Ուշադրություն դարձրեք նաև 17 հատվածին, որը նկարագրում է սրտի վիճակը, որ մենք պետք է ունենանք իսկապես ապաշխարելու համար:)

Սուրբ գրություններ

Քննարկեք հետևյալ սաղմոսները, որոնք արտահայտում են երախտագիտություն Տիրոջը՝ սուրբ գրությունների համար.

Սաղմոս ԺԹ.7–11
Սաղմոս ՃԺԹ

- Ի՞նչ խոսքեր է Դավիթն օգտագործում Սաղմոս ԺԹ.7–10 հատվածներում՝ նկարագրելու սուրբ գրությունները (Սուրբ գրությունների համար հոմանիշները ներառում են՝ *օրենք, վկայություն, հրամաններ, պատվիրաններ և դատաստաններ:* Սուրբ գրությունները նկարագրող ածականները ներառում են՝*կատարյալ, ճշմարիտ, ուղիղ, անարատ, մաքուր* և *արդար* բառերը: Սուրբ գրությունները նկարագրվում են նաև, որպես ավելի ցանկալի, քան ոսկին և ավելի քաղցր, քան մեղրը):
- Ի՞նչ օրհնություններ կարող են սուրբ գրությունները բերել մեր կյանք, ինչպես գրված է սաղմոս ԺԹ.7–11 հատվածներում: Գուցե կամենաք գրատախտակին գրի առնել այս օրհնությունների մի ցուցակ:

  ա. Դրանք հանգստացնում են մեր հոգին (հատված 7):
  բ. Դրանք իմաստուն են անում պարզամիտին (հատված 7):

գ. Դրանք ուրախացնում են մեր սիրտը (հատված 8):
դ. Դրանք լուսավորում են մեր աչքերը (հատված 8):
ե. Դրանք մեզ ջերմություն են տալիս (հատված 11):

- Ինչպե՞ս են սուրբ գրություններն օրհնել մեր կյանքը նշված ձևերով կամ այլ ուղիներով:
- Սաղմոսողը բացականչում է դեպի Տերը. «Որքան եմ սիրում քո օրենքը. Ամեն օր նա է իմ մտածմունքը (Սաղմոս ՃԺԹ.97, տես նաև հատվածներ 15–16, 33–35, 40, 47–50, 72, 92, 104, 174). Ինչպե՞ս կարող ենք զարգացնել այդպիսի սեր սուրբ գրությունների հանդեպ:
- Ինչպե՞ս են սուրբ գրությունները «ճրագ մեր ոտքերի համար և լույս մեր ճանապարհի համար» (Սաղմոս ՃԺԹ.105):

Տաճար

Կարդացեք տաճարի մասին հետևյալ սաղմոսներից մի քանիսը: Գուցե կամենաք տաճարների մի քանի նկարներ ցուցադրել, երբ դասարանի անդամները կարդան այս սաղմոսները.

Սաղմոս Ե.7
Սաղմոս ԺԵ.1–3
Սաղմոս ԻԴ
Սաղմոս ԻԷ.4
Սաղմոս ԿԵ.4
Սաղմոս ՁԴ.1–2, 4, 10–12
Սաղմոս ՃԻԲ
Սաղմոս ՃԼԴ

- Ի՞նչ կարող ենք սովորել տաճարի մասին այս սաղմոսներից: Ի՞նչ կարող ենք սովորել տաճար գնալուն նախապատրաստվելու համար:

Գուցե կամենաք հանձնարարել դասարանի անդամներին երգել կամ կարդալ «Մենք սիրում ենք քո տունն ով Աստված» օրհներգը (*Hymns*, no. 247), կամ հրավիրել Երեխաների Միությունից մի քանի երեխաների գալ դասարան և երգել «Ես սիրում եմ տեսնել Տաճարը» (*Children's Songbook*, 95).

3. «Ի՞նչ հատուցանեմ Տիրոջը նրա բոլոր բարության համար, որ ինձ արավ»: (Սաղմոս ՃԺԶ.12)

- ՃԺԶ.12 սաղմոսում Դավիթը հարցնում է. «Ի՞նչ հատուցանեմ Տիրոջը նրա բոլոր բարության համար, որ ինձ արավ»: Ինչպե՞ս Դավիթը պատասխանեց այս հարցին: Գուցե կամենաք գրի առնել Դավթի յուրաքանչյուր միտքն ինչպես տրված է ներքևում.

  ա. «Փրկության բաժակը կառնեմ» (ՃԺԶ.13):
  բ. «….Տիրոջ անունը կկանչեմ» (ՃԺԶ.13):
  գ. «Ո՜հ Տեր, ես [իսկապես] քո ծառան եմ» (ՃԺԶ.16):
  դ. «Քեզ գոհության պատարագ կմատուցեմ» (ՃԺԶ.17):
  ե. «Իմ ուխտերը Տիրոջը կվճարեմ նրա բոլոր ժողովրդի առաջին, Տիրոջ տան սրահներումը» (ՃԺԶ.18–19):

- Ինչպե՞ս կարող ենք կիրառել Դավթի պատասխանները՝ ցույց տալով երախտագիտություն Տիրոջ հանդեպ:

4. «Տիրոջը հուսացեք» (Սաղմոս Դ.5)

- «Տիրոջը հուսացեք» հորդորն ամենատարածվածներից մեկն է Սաղմոսների գրքում: (Սաղմոսներ Դ.5, Ե.11, Թ.10, ԺԸ.2, ԾԶ.11, ԿԲ.8, ՃԺԸ.8–9) Ինչպե՞ս ենք մեր հույսը դնում Տիրոջ վրա: Ինչպե՞ս եք օրհնվել, երբ հուսացել եք նրան:

Եզրափակում

Սաղմոսները հզոր վկայություն են բերում Հիսուս Քրիստոսի աստվածային առաքելության վերաբերյալ: Դրանք նաև հիշեցնում են մեզ այն մեծ օրհնությունների մասին, որոնք Նա և մեր Երկնային Հայրն են տվել մեզ: Եվ նրանք ուղիներ են առաջարկում, որոնցով կարող ենք արտահայտել երախտագիտություն այդ օրհնությունների համար:

Հրավիրեք դասարանի անդամներին կարդալ վերջին Սաղմոսը (Սաղմոս ՃԾ) ամփոփելու Սաղմոսների գրքի ուղերձը: Ավելացրեք փառաբանության և շնորհակալության ձեր սեփական վկայությունը:

Ուսուցման լրացուցիչ գաղափարներ

Հետևյալ նյութն օժանդակում է առաջարկվող դասի ուրվագիծին: Օգտագործեք մեկ կամ մի քանի գաղափարներ որպես դասի բաղկացուցիչ մաս:

1. Հին Կտակարանի սաղմոսներից ոգեշնչված վերջին օրերի հիմներ

Բացատրեք, որ մեր օրհներգերի գիրքը կարելի է համարել որպես սաղմոսների մեր վերջին օրերի համարժեքը: Հանձնարարեք դասարանի անդամներին երգել վերջին օրերի մի օրհներգ, որը ոգեշնչված է Հին Կտակարանի սաղմոսից: Այդ օրհներգերից մի քանիսն են՝ «Տերն իմ Հովիվն է» (*Hymns,* no. 108; Սաղմոս ԻԳ), «Տերն իմ լույսն է» (*Hymns,* no. 89; Սաղմոս ԻԷ.1), «Ինչ մեծ ես Դու» (*Hymns,* no. 86; Սաղմոսներ Ը.3–9, Թ.1–2), և «Գովք Տիրոջն Ամենազոր» (*Hymns,* no. 72; Սաղմոսներ ԻԳ.6, ՃԾ):

2. Օրհներգեր երգելու օրհնությունները

- Որո՞նք են մեր վերջին օրերի օրհներգերի հիմնական մի քանի թեմաները: (Պատասխանները կարող են ներառել՝ Փրկիչը, որպես Եկեղեցու անդամներ մեր պարտականությունները, մինչև վերջ համբերելը, հավատք, տուն և ընտանիք, սեր, միսիոներական աշխատանք, աղոթք, քահանայություն, մարգարեներ, ավետարանի վերականգնում, հաղորդություն, ծառայություն, փորձություններին դիմանալ և Սիոն:) Ինչպե՞ս է օրհներգեր երգելն օրհնում մեզ (Տես ՎԱՈՒ 25.12):

  Քննարկեք հետևյալ ուղիներից մի քանիսը, երբ օրհներգեր երգելը կարող է մեզ օրհնել.

  ա. Օրհներգերը վեհացնում են մեր հոգին:
  բ. Օրհներգերը ոգեշնչում են մեզ ավելի արդար ապրել:
  գ. Օրհներգերը հիշեցնում են մեզ մեր օրհնությունների մասին:
  դ. Օրհներգերը մեզ հնարավորություն են ընձեռում գովք երգել Տիրոջը:
  ե. Օրհներգերը ցույց են տալիս մեզ վկայություն բերելու ուղի:
  զ. Օրհներգերն օգնում են մեզ վերանվիրվել Տիրոջը:
  է. Օրհներգերն օգնում են մեզ զգալ Հոգին:
  ը. Օրհներգերն օգնում են մեզ ավելի ներդաշնակության մեջ լինել մեր Երկնային Հոր հետ:
  թ. Օրհներգերն օգնում են մեզ սովորել և ուսուցանել ավետարանը:

Առաջին Նախագահությունն ասել է.

«Ոգեշնչող երաժշտությունը մեր եկեղեցու ժողովների հիմնական մասն է կազմում: Օրհներգերը հրավիրում են Տիրոջ Հոգին, ստեղծում ակնածանքի զգացում, միավորում մեզ որպես անդամներ և Տիրոջը գովերգելու ուղի են ապահովում մեզ համար:

Ամենամեծ քարոզներից մի քանիսն ասվել են օրհներգեր երգելով: Օրհներգերը մեզ մղում են դեպի ապաշխարություն և բարի գործեր, կառուցում վկայություն և հավատք, սփոփում հոգնածին, մխիթարում սգացողին և ոգեշնչում մեզ համբերել մինչև վերջ:

- Որոշ սաղմոսներ խոսում են երգելու մասին, որպես «ցնծության ձայն առ Տերը»: (Սաղմոսներ ՂԸ.4, ԿԶ.1, տես նաև ՂԵ.1–2) Ինչպե՞ս կարող ենք ավելի լավ օգտագործել օրհներգեր երգելը մեր Եկեղեցու ժողովներում և տանը, հավաստիանալով, որ այն բերկրալի է և իմաստալից:
- Վերջին Ընթրիքի ժամանակ Հիսուսը և նրա Առաքյալները օրհներգ երգեցին (Մատթեոս ԻԶ.30): Ի՞նչ եք կարծում օրհներգ երգելը օգնե՞ց Հիուսին և նրա Առաքյալներին պատրաստվել կատարելու գործը, որը նրանց առջևում էր:
- Քարթեջի բանտում, հենց Մարգարե Ջոզեֆ Սմիթի նահատակությունից առաջ, նա խնդրեց Ջոն Թեյլորին երգել «Խեղճ թափառաշրջիկ վշտահար մարդը» օրհներգը (*Hymns,* no. 29; see also B. H. Roberts, *A Comprehensive History of the Church,* 2:282–84). Ի՞նչ եք կարծում ինչպե՞ս այս օրհներգը երգելն օգնեց Մարգարեին:

3. Բանաստեղծական համանմանությունը սաղմոսներում

Սաղմոսների ձեր ուսումնասիրությունը կարող է հարստանալ՝ հասկանալով այն բանաստեղծական տեխնիկան, որը Դավիթն ու մյուս Եբրայեցի բանաստեղծներն օգտագործել են: Այդ միջոցներից մեկը համանմանությունն է: Համանմանության բնորոշ հատկանիշներից մեկը տարբեր խոսքերով որևէ մտքի կրկնությունն է: Այդպիսի կրկնությունը մեծացնում կամ ուժեղացնում է մտքի իմաստը: Այդպիսի համանմանության մի օրինակ է Սաղմոս ՃԲ.1–2, որում նույն միտքն արտահայտվում է տարբեր խոսքերով հինգ անգամ («լսիր իմ աղոթքը», «թող իմ աղաղակը քեզ մոտ գա», «մի թաքցնիր երեսդ ինձանից», «խոնարհեցրու ականջդ ինձ մոտ» և «այն օրը որ կանչեմ՝ շուտով պատասխան տուր ինձ»): Նշեք, թե ինչպես է կրկնությունն ուժեղացնում ուղերձը:

Սողոմոն թագավոր՝ իմաստության մարդ, հիմարության մարդ

Դաս 26

Գ Թագավորաց Գ, Ե–ԺԱ

Նպատակ

Դասարանի անդամներին խրախուսեք իրենց օրհնություններն իմաստուն օգտագործել և տաճար մտնել արժանիորեն:

Նախապատրաստում

1. Աղոթքով ուսումնասիրեք հետևյալ սուրբ գրությունները՝

   ա. Գ Թագավորաց Գ.5–28: Սողոմոնը հաջորդում է իր հորը՝ Դավթին, որպես թագավոր, և հետևում է Տիրոջը: Տերը հայտնվում է Սողոմոնին, որը խնդրում է, որ օրհնվի հասկացող սրտով (Գ.5–9): Տերն օրհնում է Սողոմոնին իմաստությամբ, հարստություններով և փառքով (Գ.10–15): Երկու կին տանում են իրենց երեխային Սողոմոնի մոտ, որն իմաստությամբ որոշում է, թե որ կինն է երեխայի մայրը: (Գ.16–28):

   բ. Գ Թագավորաց Ե–Զ, Է.1–12: Սողոմոն թագավորը ղեկավարում է մի մեծ տաճարի շինարարությունը (Ե–Զ): Նա մի պալատ է կառուցում իր համար (Է.1–12):

   գ. Գ Թագավորաց Ը.22–66, Թ.1–9: Սողոմոնը նվիրագործում է տաճարը և խնդրում Տիրոջը օրհնել Իսրայելացիներին հոգևոր և աշխարհիկ բարգավաճմամբ (Ը.22–53): Ժողովուրդը երկրպագում է 14 օր (Ը.54–66): Տերը կրկին հայտնվում է Սողոմոնին, խոստանալով օրհնել Իսրայելացիներին, եթե նրանք ծառայեն Իրեն, բայց կանիծի նրանց, եթե նրանք դառնան դեպի ուրիշ աստվածներ (Թ.1–9):

   դ. Գ Թագավորաց Ժ–ԺԱ: Սողոմոնի համբավը մեծանում է, նրա հարստության և իմաստության պատճառով (Ժ.14–23, 26): Նա ամուսնանում է բազմաթիվ ոչ Իսրայելացի կանանց հետ, ովքեր համոզում են նրան երկրպագել կեղծ աստվածների: (ԺԱ.1–10): Տերը հակառակորդներ է բարձրացնում Սողոմոնի դեմ (ԺԱ.11–25): Մի մարգարե կանխագուշակում է, որ Իսրայելի թագավորությունը կբաժանվի Սողոմոնի ամբարշտության պատճառով (ԺԱ.26–40):

2. Լրացուցիչ ընթերցանություն՝ Գ Թագավորաց Բ.1–12, Դ.29–34, Է.13–51, Ա Մնացորդաց ԻԹ, Վարդապետություն և Ուխտեր 46:

3. Եթե «Հին դարերում օգտագործվող տաճար» նկարը մատչելի է, օգտագործեք այն դասի ընթացքում (62300, Ավետարանական արվեստի նկարների հավաքածու 118):

Առաջարկվող դասի զարգացում

Ուշադրության կենտրոնացման վարժություն

Օգտագործեք հետևյալ վարժությունը (կամ ձեր սեփականը) դասը սկսելու համար:

Կարդացեք կամ հանձնարարեք դասարանի որևէ անդամի կարդալ Երեց Դալլին Հ. Օուքսի հետևյալ միտքը:

«Մենք սովորաբար մտածում ենք, որ սատանան հարձակվում է մեր ամենաթույլ տեղերի վրա…. Բայց խոցելիությունը չէ մեր միակ թուլությունը: Սատանան կարող է նաև հարձակվել մեզ վրա այն տեղերում, որտեղ մենք մտածում ենք, որ ուժեղ ենք,– հենց այն բաներում, որոնցում մենք պարծենում ենք մեր ուժեղությամբ: Նա կմոտենա մեզ այն մեծագույն տաղանդների և հոգևոր պարգևների միջոցով, որոնք մենք ունենք: Եթե մենք զգույշ չլինենք, սատանան կարող է առաջացնել մեր հոգևոր անկումը՝ փչացնելով մեզ՝ ինչպես

մեր ուժեղ կողմերը, այնպես էլ մեր թուլությունները շահագործելու միջոցով» («Մեր ուժեղ կողմերը կարող են դառնալ մեր անկման պատճառը» *Ensign*, Oct. 1994, 12):

- Որո՞նք են որոշակի այն ուժեղ կողմերը, որոնք կարող են դառնալ մեր անկման պատճառը:

Բացատրեք, որ այս դասը Սողոմոն թագավորի մասին է, մի մարդու, որը մեծ պարգևներ ստացավ Աստծուց, բայց ի վերջո օգտագործեց այդ պարգևներն անարդար ձևով: Առաջարկեք, որ դասարանի անդամները որոնեն դեպքեր, որոնք ցույց են տալիս Սողոմոնի աստիճանական անկումը: Շեշտեք, որ մենք պետք է որոնենք նրա թերությունները ոչ թե նրան դատելու, այլ նրա սխալներից սովորելու համար:

Սուրբ գրության քննարկում և կիրառում

Երբ ուսուցանեք հետևյալ սուրբ գրությունների հատվածները, քննարկեք թե ինչպես են դրանք վերաբերում ամենօրյա կյանքին: Խրախուսեք դասարանի անդամներին կիսվել փորձառություններով, որոնք կապված են սուրբգրքյան սկզբունքների հետ:

Հենց որ Դավիթը մահացավ, Սադովկ քահանան և Նաթան մարգարեն, օծեցին Սողոմոնին որպես նոր թագավոր: Սողոմոնը, որը Դավթի և Բերսաբեի որդին էր, իր հորից ստացավ հետևյալ խորհուրդը. «Դու ամուր…. և արի եղիր. և պահիր քո Տեր Աստծո պահպանությունը, որ գնաս նորա ճանապարհներովը, որ պահես նորա պատվիրանքները, հրամանները, իրավունքները և վկայությունները…. Որպեսզի հաջողվես ամեն արած բանումդ» (Գ Թագավորաց Բ.2–3):

1. Տերն օրհնում է Սողոմոնին իմաստությամբ, հարստություններով և փառքով:

Ուսուցանեք և քննարկեք Գ Թագավորաց Գ.5–28:

- Սողոմոնի թագավոր դառնալուց հետո, շուտով Տերը հայտնվեց նրան երազում և ասաց. «Խնդրիր թե քեզ ինչ տամ» (Գ Թագավորաց Գ.5): Ի՞նչ խնդրեց Սողոմոնը (Տես Գ Թագավորաց Գ.9): Ի՞նչ է նշանակում ունենալ «իմաստուն սիրտ» (Տես Գ Թագավորաց Գ.28, 4.29): Ինչո՞ւ էր Սողոմոնն այդ օրհնության հատուկ կարիքը զգում (Տես Գ Թագավորաց Գ.7–8): Ինչպե՞ս կարող էր «Աստծո իմաստությունը» ունենալը օգնել մեզ մեր պարտականություններում՝ տանը, աշխատանքում, դպրոցում, Եկեղեցում: Ինչպե՞ս կարող ենք ստանալ այդ իմաստությունը:
- Ինչո՞ւ էր Տերը գոհ Սողոմոնի իմաստուն սիրտ ունենալու խնդրանքից (Տես Գ Թագավորաց Գ.11–12: Սողոմոնը խնդրեց պարգև, որը կօգներ նրան ավելի շատ ծառայել ուրիշներին, քան եսասիրական նպատակները բավարարել): Որո՞նք են այն որոշ հոգևոր պարգևները, որոնց մենք կարող ենք ձգտել: (Տես ՎԿՈՒ 46.13–26): Ի՞նչ պայմաններով է Տերը տալիս Հոգու պարգևները: (Տես Գ Թագավորաց Գ.14, ՎԿՈՒ 46.8–12): Ինչպե՞ս կարող ենք օգտագործել այս պարգևները՝ ուրիշներին ծառայելու համար:
- Ի՞նչ լրացուցիչ օրհնություններ Տերը շնորհեց Սողոմոնին (Տես Գ Թագավորաց Գ.13–14): Ինչպե՞ս այդ օրհնությունները կարող են օգտագործվել ուրիշներին ծառայելու համար:
- Ո՞րն էր առաջին իրավիճակը, որի ժամանակ պահանջվեց Սողոմոն թագավորի դատողությունը (Տես Գ Թագավորաց Գ.16–22): Ինչպե՞ս Սողոմոնը լուծեց այդ խնդիրը (Տես Գ Թագավորաց Գ.23–28): Ինչպե՞ս Սողոմոնի լուծումը ցույց տվեց, որ Տերն օրհնել էր նրան իմաստությամբ:

2. Սողոմոն թագավորը ղեկավարում է մի մեծ տաճարի շինարարությունը և պալատ կառուցում իր համար:

Ուսուցանեք և քննարկեք Գ Թագավորաց Ե–Զ, Է.1–12 հատվածները:

- Տիրոջ պատվիրածի համաձայն՝ Սողոմոնը կարգադրեց, որ տաճար կառուցվեր: (Համառոտակի աչքի անցկացրեք Գ Թագավորաց Ե.1–6, 17–18, Զ.15–36 հատվածները շեշտելու տաճարի նրբակերտությունը): Ինչո՞ւ եք կարծում Սողոմոնն այդպիսի ընտիր նյութեր օգտագործեց տաճար կառուցելու համար:
- Ինչպե՞ս էին կառուցողներն ակնածանք ցույց տալիս տաճարի հանդեպ նրա շինարարության ընթացքում (Տես Գ Թագավորաց Զ.7):
- Ինչպե՞ս էր Սողոմոնն օգտագործում իր իմաստությունը, հարստությունները և փառքը տաճարի պատշաճ շինարարությունն ապահովելու համար (Տես Գ Թագավորաց Ե.1–12: Այդ ունակությունների շնորհիվ նա կարողացավ ձեռք բերել շինանյութեր և ներգրավել վարպետ աշխատողների օգնությունը տաճարի շինարարության մեջ):
- Ի՞նչ խոստում տվեց Տերը Սողոմոնին տաճարի վերաբերյալ (Տես Գ Թագավորաց Զ.11-13): Ի՞նչ նմանատիպ խոստում է տվել Տերը մեզ այսօր (Տես ՎԿՈՒ 97.15–17):
- Սողոմոնը նաև տուն կառուցեց իր համար: Ինչպիսի՞ն էր նրա տան չափսը Տիրոջ տան չափսի համեմատությամբ (Տես Գ Թագավորաց Զ.2–3, Է.2, 6–7): Ինչպե՞ս է այդ հարստությունների օգտագործումը ցույց տալիս Սողոմոնի աստիճանական անկումը:

3. Սողոմոնը նվիրագործում է տաճարը:

Ուսուցանեք և քննարկեք Գ Թագավորաց Ը.22–66, Թ.1–9:

- Յոթ տարվա շինարարությունից հետո տաճարը նվիրագործվեց: Որոնք են այն բաները, որոնց համար Սողոմոնն աղոթեց նվիրագործման աղոթքում (Տես Գ Թագավորաց Ը.22–53):

  Գրի առեք դասարանի անդամների պատասխանները գրատախտակին: Պատասխանները կարող են ներառել հետևյալը.

  ա. Պատասխաններ աղոթքներին (Գ Թագավորաց Ը.28–30, 49–52)
  բ. Ներում (Գ Թագավորաց Ը.33–39)
  գ. Անձրև (Գ Թագավորաց Ը.35–36)
  դ. Օգնություն սովի և հիվանդության ժամանակ (Գ Թագավորաց Ը.37)
  ե. Օգնություն պատերազմի ժամանակ (Գ Թագավորաց Ը.44–45)

- Իր նվիրագործման աղոթքում Սողոմոնն աղոթեց Տիրոջը, որ Նա օգներ իր ժողովրդին բազում դժվարին խնդիրների ժամանակ: Ինչպե՞ս կարող է տաճար այցելելն օգնել մեզ, երբ մենք ծանրաբեռնված ենք խնդիրներով:

  Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոնն ասել է. «Այդ գեղեցիկ տաճարների խաղաղության մեջ, երբեմն մենք լուծումներ ենք գտնում կյանքի լուրջ խնդիրների համար: Այնտեղ, Հոգու ազդեցության ներքո, երբեմն մաքուր գիտելիքը հոսում է դեպի մեզ: Տաճարներն անձնական հայտնության վայրեր են: Երբ ես ծանրաբեռնված եմ եղել որևէ խնդրով կամ դժվարությամբ, ես Տիրոջ Տուն եմ գնացել սրտումս աղոթելով պատասխանների համար: Այդ պատասխանները եկել են հստակ և անսխալ ուղիներով» (“What I Hope You Will Teach Your Children about the Temple,” *Ensign*, Aug. 1985, 8):

- Սողոմոնն աղոթեց, որ տաճարն օգնի առաջնորդել անհավատներին դեպի Տերը (Գ Թագավորաց Ը.41–43): Ինչպե՞ս կարող է տաճարն անել այդ: (Հրավիրեք դասարանի անդամներին բերել օրինակներ, թե ինչպես են իրենք կամ ուրիշները հետաքրքրվել Եկեղեցով տաճարների հանդեպ իրենց հետաքրքրության պատճառով):
- Սողոմոնը նվիրագործման աղոթքն ասելուց հետո, խորհուրդ տվեց իր ժողովրդին. «Ձեր սիրտը մեր Տեր Աստծո հետ ուղիղ լինի….» (Գ Թագավորաց Ը.61): Ի՞նչ եք

կարծում, ի՞նչ է նշանակում ունենալ սիրտ, որը «ուղիղ է Տիրոջ հետ»: Ինչպե՞ս կարող է տաճար այցելելն օգնել մեզ ուղղել մեր սրտերը:

- Ի՞նչ կարող ենք անել ուժեղ պահելու տաճարի ազդեցությունը մեր կյանքում: (Պատասխանները կարող են ներառել՝ Հնարավորության դեպքում հաճախ այցելել, ունենալ գործող երաշխավորագիր և տաճարի նկարներ ունենալ մեր տներում):
- Ի՞նչ արեց ժողովուրդը տաճարը նվիրագործելուց հետո (Տես Գ Թագավորաց Ը.62–66): Ինչպիսի՞ն էր ժողովրդի տրամադրությունը, երբ նրանք վերադարձան իրենց տները, տաճարի նվիրագործումից և 14-օրյա երկրպագությունից հետո (Տես Գ Թագավորաց Ը.66): Ինչպե՞ս եք զգում դուք, երբ տուն եք վերադառնում տաճարից:
- Ինչպիսի՞ն էր Տիրոջ ուղերձը, երբ նա այցելեց Սողոմոնին տաճարի նվիրագործումից հետո (Տես Գ Թագավորաց Թ.3–9: Տես նաև Գ Թագավորաց Ջ.11–13: Նշեք, որ Տերը նմանատիպ մի հայտարարություն արեց տաճարի շինարարության ընթացքում): Ի՞նչ եք կարծում ինչո՞ւ Սողոմոնին անհրաժեշտ եղավ հիշեցնել իր ուխտի մասին: Ինչպե՞ս է Տերը հիշեցնում մեզ մեր ուխտերի մասին:

4. Սողոմոնը չափազանց հարստանում է և ամուսնանում բազմաթիվ ոչ Իսրայելացի կանանց հետ, որոնք համոզում են նրան երկրպագել կուռքերի:

Ուսուցանեք և քննարկեք Գ Թագավորաց Ժ–ԺԱ:

- Ինչպե՞ս Սողոմոնի հարստությունները և փառքը մեծացավ տաճարի կառուցումից հետո: (Տես Գ Թագավորաց Ժ.1–15, 24–25): Ինչպե՞ս Սողոմոնը սխալ օգտագործեց այդ օրհնությունները (Տես Գ Թագավորաց Ժ.16–23, 26–29: Նշեք, որ նա օգտագործեց դրանք կառուցելու իր սեփական թագավորությունը, փոխարեն կառուցելու Աստծո թագավորությունը): Ինչպե՞ս պետք է օգտագործվեն իմաստությունը, հարստությունները և փառքը (Տես Հակոբ 2.18–19):
- Ինչպե՞ս Սողոմոնի կողմից կանանց ընտրությունը ցույց տվեց, որ նա ուրացել էր Աստծուն (Տես Գ Թագավորաց ԺԱ.1–2: Նա ամուսնացավ առանց ուխտի:) Ի՞նչ դրդեցին նրան անել Սողոմոնի ոչ Իսրայելացի կանայք (Տես Գ Թագավորաց ԺԱ.3–8: Նշեք, որ Ջոզեֆ Սմիթի թարգմանության մեջ 4-րդ հատվածում ասվում է, որ Սողոմոնի սիրտը «դարձավ ինչպես իր հոր՝ Դավթի սիրտը» և 6-րդ հատվածն ասում է, որ «Սողոմոնը չարիք գործեց Տիրոջ աչքում, ինչպես Դավիթը՝ նրա հայրը»):
- Ի՞նչ արեց Տերը, երբ Սողոմոնը խախտեց իր ուխտերը և ուրացավ (Տես Գ Թագավորաց ԺԱ.9–14, 23–25, 33–36):
- Ինչ եք կարծում, ինչպե՞ս իմաստությունը, հարստությունները և փառքը նպաստեցին Սողոմոնի անկմանը: Ինչ եք կարծում, ինչպե՞ս են այս ուժեղ կողմերը նպաստել մարդկանց անկմանն այսօր: Ինչպե՞ս կարող ենք հավաստիանալ, որ մեր ուժեղ կողմերը անկման պատճառ չեն դառնում մեզ համար (Տես Գ Թագավորաց Ը.61, ՎԵՈՒ 88.67):

  Երեց Դալլին Հ. Օուքսն ասել է.

  «Ինչպե՞ս…. կանխարգելենք, որ մեր ուժեղ կողմերը չդառնան մեր անկման պատճառը: Հատկանիշը, որ մենք պետք է զարգացնենք խոնարհությունն է: Խոնարհությունը մեր մեծագույն պաշտպանն է: Խոնարհությունը հպարտության հակաթույնն է: Խոնարհությունը ողջ գիտելիքի խթանիչն է, հատկապես հոգևոր բաների: Մորոնի մարգարեի միջոցով Տերը տվել է մեզ խոնարհության դերի վերաբերյալ այս մեծ ներըմբռնումը. «Ես մարդկանց թուլություն եմ տալիս, որպեսզի նրանք խոնարհ լինեն. և իմ շնորհը բավական է բոլոր մարդկանց համար, ովքեր իրենց խոնարհեցնում են իմ առաջ. Քանզի, եթե նրանք խոնարհեցնեն իրենց իմ առաջ, և հավատք ունենան ինձանում, այն ժամանակ, նրանց թույլ կողմերը ես կդարձնեմ ուժեղ» (Եթեր 12.27):

Մենք կարող ենք նաև ասել, որ եթե տղամարդիկ և կանայք խոնարհեցնեն իրենց Աստծո առջև, նա կօգնի նրանց կանխարգելել իրենց ուժեղ կողմերը թուլություններ դառնալուց, որպեսզի հակառակորդը չշահագործի դրանք նրանց կործանելու համար….

…. Եթե մենք խոնարհ լինենք և ուսանելի, ականջ դնելով Աստծո պատվիրաններին, նրա առաջնորդների խորհրդին և Հոգու հուշումներին, մենք կառաջնորդվենք, թե ինչպես օգտագործենք մեր հոգևոր պարգևները, մեր ձեռքբերումները և բոլոր մեր մյուս ուժեղ կողմերն արդարության համար: Եվ մենք կարող ենք առաջնորդվել, թե ինչպես խուսափենք մեր ուժեղ կողմերը մեր անկման համար օգտագործելու սատանայի ջանքերից:

Այս բոլոր բաներում մենք պետք է հիշենք և ապավինենք Տիրոջ ուղղորդմանը և խոստումին. «Եղիր խոնարհ. և Տերը՝ քո Աստվածը, ձեռքդ բռնած կառաջնորդի քեզ և կպատասխանի քո աղոթքներին» (ՎԿՈՒ 112.10)» (“Our Strengths Can Become Our Downfall,” *Ensign*, Oct. 1994, 19).

Եզրափակում

Արտահայտեք ձեր երախտագիտությունը հոգևոր և նյութական օրհնությունների համար, որոնք Տերը տվել է ձեզ և նաև տաճարի համար: Խրախուսեք դասարանի անդամներին խոնարհեցնել իրենց Տիրոջ առաջ, որպեսզի նրանք կարողանան իմաստուն ձևով օգտագործեն իրենց օրհնությունները և տաճար մտնեն արժանի ձևով:

Ուսուցման լրացուցիչ գաղափարներ

Հետյալ նյութն օժանդակում է առաջարկվող դասի ուրվագծին: Օգտագործեք մեկ կամ մի քանի գաղափար որպես դասի բաղկացուցիչ մաս:

1. «Որ իր սիրտն իր եղբայրների վրա չհպարտանա» (Բ Օրինաց ԺԷ.20)

- Հանձնարարեք որևէ դասարանի անդամի բարձրաձայն կարդալ Բ Օրինաց ԺԷ.14–20: Ինչպե՞ս կարող էր այս սուրբ գրության կիրառումը փոխել Սողոմոնի կյանքը և նրա թագավորության ժողովրդի կյանքը:

2. Նվիրագործման աղոթքներ տաճարների համար

Եթե դասարանի որևէ անդամ այցելել է տաճարի նվիրագործման, խնդրեք նրանցից մեկին կամ երկուսին պատմել իրենց փորձառությունների մասին: Խնդրեք դասարանի որևէ անդամի պատրաստվել կիսվելու վերջին օրերի տաճարի նվիրագործման վերաբերյալ երկու կամ երեք ներընմբռնմամբ: (Վարդապետություն և Ուխտերի 109 բաժինը պարունակում է աղոթք, որն ասվել է Կիրթլանդի տաճարի նվիրագործման ժամանակ: Նոր նվիրագործված տաճարների նվիրագործման աղոթքները երբեմն տպվում են *Ensign* ամսագրում):

- Ի՞նչ ազդեցություն պետք է ունենա նվիրագործման աղոթքը մեր անձնական կյանքի վրա:

  Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթն ասել է. «Երբ նվիրագործում ենք Տիրոջ տունը, այն ինչ իրականում մենք անում ենք, մեզ նվիրաբերելն է Տիրոջ ծառայությանը, մի ուխտով, որ մենք կօգտագործենք տունն այն ձևով, որ Նա է նախատեսել այն օգտագործելու համար» (*Church News*, 22 Jan. 1972, 3):

Դաս
27

Ամբարիշտ և արդար առաջնորդների ազդեցությունը

Գ Թագավորաց ԺԲ–ԺԴ, Բ Մնացորդաց ԺԷ, Ի

Նպատակ

Խրախուսեք դասարանի անդամներին զարգացնել ղեկավարելու լավ հատկանիշներ, որպեսզի կարողանան ազդել ուրիշների վրա արդարությամբ ապրելու համար:

Նախապատրաստում

1. Աղոթքով ուսումնասիրեք հետևյալ սուրբ գրությունները.

   ա. Գ Թագավորաց ԺԲ.1–20: Ռոբովամը հաջորդում է իր հորը՝ Սողոմոնին, որպես Իսրայելի տասներկու ցեղերի թագավոր: Նա մերժում է իր ժողովրդին ծառայելու իմաստուն մարդկանց խորհուրդը՝ ձգտելով ընդհակառակը նրանց վրա ավելի մեծ բեռներ դնել (ԺԲ.1–15): Թագավորությունը բաժանվում է, քանի որ տասը ցեղերն ապստամբում են (ԺԲ.16–19. տասը ցեղերը պահպանում են Իսրայելի թագավորություն անվանումը, մինչդեռ Հուդայի և Բենյամինի ցեղերը մնում են Ռոբովամի իշխանության տակ և կոչվում են Հուդայի թագավորություն): Իսրայելի թագավորությունը որպես թագավոր է ընտրում Հերոբովամին, որը նախկին կառավարիչ էր Սողոմոնի թագավորությունում (ԺԲ.20):

   բ. Գ Թագավորաց ԺԲ.25–33, ԺԳ.33–34, ԺԴ.14–16, 21–24: Հերոբովամն իր ժողովրդին տանում է դեպի կռապաշտություն և քահանաներին փոխարինում մարդկանցով, ովքեր Ղևտացիներ չեն (ԺԲ.25–33, ԺԳ.33–34. կուռքերի անտառների և բարձրավանդակների բացատրությունների համար տես՝ ուսուցման երկրորդ լրացուցիչ գաղափարը): Մի մարգարե կանխագուշակում է Հերոբովամի ընտանիքի կործանումը և Իսրայելի ցրումը (ԺԴ.14–16): Ռոբովամը տանում է Հուդայի թագավորությունը դեպի կռապաշտություն (ԺԴ.21–24):

   գ. Բ Մնացորդաց ԺԷ.1–10, Ի.1–30: Հովսափատը՝ Ռոբովամի ծոռը, թագավորում է արդարաբար Հուդայի թագավորությունում, կործանելով կուռքերի անտառներն ու բարձրավանդակները և ուղարկում Ղևտացիներին ողջ Հուդայով մեկ ուսուցանելու Տիրոջ օրենքի գրքից (ԺԷ.1–10): Երբ Հուդայի թշնամիները գալիս են նրանց դեմ, նրանք ծոմ են պահում և աղոթում: Տերն ասում է նրանց, որ պատերազմը նրանցը չէ այլ իրենը: Նրանց վրա հարձակվողները պատերազմում են միմյանց դեմ և կործանում միմյանց (Ի.1-30):

2. Լրացուցիչ ընթերցանություն՝ Գ Թագավորաց ԺԱ.26–40, Դ Թագավորաց ԺԷ.20–23:

3. Եթե օգտագործելու եք ուշադրության վարժությունը, ձեռք բերեք մի հին հագուստ, որը հնարավոր կլինի պատռել կտորների կամ մի մեծ թղթի կտոր, որը ձևված կլինի հագուստի ձևով:

Առաջարկվող դասի զարգացում

Ուշադրության կենտրոնացման վարժություն

Օգտագործեք հետևյալ վարժությունը (կամ ձեր սեփականը) դասը սկսելու համար:

Վերցրեք որևէ հին հագուստ կամ կամ թղթի կտոր, որը ձևված է հագուստի տեսքով և պատռեք այն 12 մասի: Բացատրեք, որ Սողոմոնի կյանքի վերջում, մարգարե Աքիան մարգարեացավ, որ Հերոբովամը՝ Սողոմոնի հարկերի և աշխատանքի 12 վերակացուներից մեկը, իշխելու էր Իսրայելացի ազգի մեծ մասի վրա: Այդ պարզաբանելու համար

Աքիան բռնեց նրա նոր վերարկուից և պատռեց այն՝ բաժանելով 12 մասի և տվեց 10 մասը Հերոբովամին (Անգլերեն ՎՕՍ Աստվածաշնչի Գ Թագավորաց ԺԱ.29–32 հատվածում, տողատակի 32ա ծանոթագրությունը նշում է, որ ըստ Սեպտագինտի՝ Հին Կտակարանի հունական թարգմանության, երկու ցեղեր, այլ ոչ թե մեկը կմնա Դավթի հետնորդների կողմից կառավարվող թագավորությունում):

Փրկիչը սովորեցրել է, որ «ամեն թագավորություն, որ իր դեմ բաժանված է՝ կավերվի» (Մատթեոս ԺԲ.25): Բացատրեք, որ սա այն էր, ինչ տեղի ունեցավ Իսրայելի թագավորության հետ Սողոմոնի մահից հետո: Այս դասը Իսրայելի բաժանված թագավորության վրա ամբարիշտ և արդար առաջնորդների ազդեցության մասին է:

Սուրբ գրության քննարկում և կիրառում

Երբ ուսուցանեք հետևյալ սուրբ գրության հատվածները, քննարկեք, թե ինչպես են դրանք առնչվում ամենօրյա կյանքին: Խրախուսեք դասարանի անդամներին կիսվել փորձառություններով, որոնք կապված են սուրբգրքյան սկզբունքների հետ:

1. Իսրայելի թագավորությունը բաժանվում է՝ հիմնականում Ռոբովամի դաժան կառավարման պատճառով:

Ուսուցանեք և քննարկեք Գ Թագավորաց ԺԲ.1–20:

Գրատախտակին գրեք հետևյալ մտքերը.

Լավ առաջնորդը՝
1. Ծառայություն է մատուցում:

- Սողոմոնի մահից հետո նրա որդին՝ Ռոբովամը դարձավ Իսրայելի թագավորը: Ի՞նչ փոփոխություններ էին կամենում Իսրայելացիները, որ Ռոբովամը կատարեր այն ձևից, որով նրա հայրն էր կառավարում (Տես Գ Թագավորաց ԺԲ.3–4): Ի՞նչ խորհուրդ տվեցին ծեր մարդիկ Ռոբովամին հաջող կառավարման վերաբերյալ (Տես Գ Թագավորաց ԺԲ.6–7, Բ Մնացորդաց Ժ.7): Ինչո՞ւ ենք մենք ամենայն հավանականությամբ ավելի դրականապես ներգործվում մի առաջնորդի կողմից, որը բարի է, և որը ծառայում է մեզ: Ինչպե՞ս կարող ենք այս խորհուրդը կիրառել տանը, եկեղեցում, դպրոցում (Տես ՎԿՈՒ 121.41–46): Այս խորհուրդը հաջող կիրառելու ինչպիսի՞ օրինակներ կարող եք բերել, որոնք մենք տեսել ենք մեր ծնողներից կամ այլ առաջնորդներից:
- Ծեր մարդկանց խորհուրդը մերժելուց հետո, Ռոբովամը դիմեց երիտասարդներին, որոնց նա ճանաչում էր մանկությունից: Ինչպիսի՞ն էր նրանց պատասխանը (Տես Գ Թագավորաց ԺԲ.8–11): Որո՞նք էին նրանց խորհրդին հետևելու Ռոբովամի որոշման հետևանքները (Տես Գ Թագավորաց ԺԲ.12–17): Բացատրեք, որ «Իսրայելը գնաց իր վրանները» արտահայտությունը վերաբերում է տասը ցեղերին, ովքեր առանձնացան Ռոբովամի թագավորությունից): Ինչպե՞ս կարող էին այս հետևանքներն այլ լինել, եթե Ռոբովամը հետևեր ծեր մարդկանց խորհրդին (Տես Գ Թագավորաց ԺԲ.7):
- Հերոբովամը հարկերի և աշխատանքի վրա Սողոմոնի 12 վերակացուներից մեկն էր: Սողոմոնի թագավորության վերջին ժամանակներում մարգարե Աքիան մարգարեացավ, որ Հերոբովամը դառնալու էր թագավոր Իսրայելի շատ ցեղերի վրա (Գ Թագավորաց ԺԱ.29–31, տես ուշադրության կենտրոնացման վարժությունը): Ինչպե՞ս իրականացավ այս մարգարեությունը (Տես Գ Թագավորաց ԺԲ.20. Անգլերեն ՎՕՍ Աստվածաշնչի տողատակի ծանոթագրությունը նշում է, որ ըստ Սեպտագինտի՝ Հին Կտակարանի հունական թարգմանության, այս հատվածի վերջում Հուդայի հետ նշվում է նաև Բենյամինի անունը: Հուդայի և Բենյամինի ցեղերը մնացին Ռոբովամի հետ հարավային թագավորությունում կամ Հուդայի թագավորությունում: Մյուս տասը ցեղերը հետևեցին Հերոբովամին հյուսիսային թագավորությունում կամ Իսրայելի թագավորությունում):

2. Հերոբովամը և Ռոբովամը տարան իրենց թագավորությունները դեպի կռապաշտություն:

Ուսուցանեք և քննարկեք Գ Թագավորաց ԺԲ.25–33, ԺԳ.33–34, ԺԴ.14–16, 21–24 հատվածները:

Ավելացրեք գրատախտակի վրա ձեր գրած մտքին.

Լավ առաջնորդը՝
1. Մատուցում է ծառայություն:
2. Վստահում է և հնազանդվում Տիրոջը:

- Մարգարե Աքիայի միջոցով Տերը խոստացավ Հերոբովամին, որ նրան կտրվի «հաստատուն տուն» (ապահով թագավորություն), եթե նա քայլի Տիրոջ ուղիներում (Գ Թագավորաց ԺԲ.25–33): Ինչո՞ւ Հերոբովամը ոսկե հորթեր և բարձրավանդակներ շինեց ու կեղծ քահանաներ կարգեց (Տես Գ Թագավորաց ԺԲ.26–33, ԺԳ.33–34):

  Բացատրեք, որ Հերոբովամը վախենում էր, որ իր ժողովուրդը, եթե գնար Երուսաղեմ երկրպագելու, նրանք կարող է ետ գնային Ռոբովամի մոտ: Ջանալով վերահսկել իր ժողովրդին և պահպանել նրանց հավատարմությունը, նա ոսկե հորթեր շինեց Բեթելում և Դանում՝ Հյուսիսային Թագավորության երկու քաղաքներում, և կոչ արեց իր ժողովրդին երկրպագել այդ քաղաքներում: Անելով այս, նա թույլ տվեց, որ պարտության իր վախը ոտնատակ աներ Տիրոջ խոստումների հանդեպ իր վստահությունը: Նշեք, որ իմաստուն առաջնորդը վստահում է Տիրոջը և չի հիմնում իր որոշումները վախի կամ անձնական դատողության վրա:

- Երբ նրա որդին հիվանդացավ, Հերոբովամը օգնություն հայցեց մարգարե Աքիայից: Ի՞նչ մարգարեացավ Աքիան Հերոբովամի տան (ընտանիքի) և թագավորության վերաբերյալ (Տես Գ Թագավորաց ԺԴ.14–16: Այս մարգարեության իրականացումը գտնվում է Դ Թագավորաց ԺԷ.20–23 հատվածներում):

- Հերոբովամի նման՝ Ռոբովամն էլ չհնազանդվեց Աստծուն՝ տանելով ժողովրդին դեպի կռապաշտություն (Գ Թագավորաց ԺԴ.21–24): Այս երկու թագավորների ամբարիշտ կառավարումը երկարատև հետևանքներ ունեցան: Շատ տարիներ անց երկու թագավորություններն էլ ցրվեցին կամ գերության տարվեցին (Իսրայելը՝ Ասորեստանի կողմից, իսկ Հուդան՝ Բաբելոնի կողմից), որովհետև նրանք շարունակում էին իրենց ամբարիշտ ավանդությունները: Ինչպե՞ս կարող է մեկ ամբարիշտ թագավոր այդպիսի խոր ազդեցություն ունենալ այդքան շատ մարդկանց վրա:

  Նշեք, որ մենք չպետք է ընդօրինակենք ամբարիշտ թագավորների գործերը, Իսրայելի և Հուդայի ժողովրդի պես: Աստված մեզ ազատ կամք է տվել և մենք կարող ենք օգտագործել այդ ուժը՝ ընտրելու բարին, եթե նույնիսկ առաջնորդներն ընտրում են չարը (Հելաման ԺԴ.30–31):

3. Հովասափատն առաջնորդում է Հուդայի թագավորությունը՝ հետևելով Տիրոջը և նրա մարգարեներին:

Ուսուցանեք և քննարկեք Բ Մնացորդաց ԺԷ.1–10, Ի.1–30:

Գրատախտակի վրայի ցուցակին կրկին ավելացրեք.

Լավ առաջնորդը՝
1. Մատուցում է ծառայություն:
2. Վստահում և հնազանդվում է Տիրոջը:
3. Ունենում է հավատք առ Աստված:
4. Ուսուցանում է սուրբ գրություններից:

5. Հետևում է մարգարեներին:

- Ռոբովամից երեք սերունդ հետո, նրա ծոռը՝ Հովասափատը, թագավորեց Հուդայի թագավորության վրա: Ինչպե՞ս Հովասափատը ցույց տվեց իր անձնական արդարակեցությունը (Տես Բ Մնացորդաց ԺԷ.3–4, 6): Ինչպե՞ս է մեր անձնական նվիրվածությունն ազդում ուրիշներին առաջնորդելու մեր ունակության վրա:

- Հովասափատը «վերցրեց Հուդայից բարձրավանդակները և Աստարովթի կուռքերը» (Բ Մնացորդաց ԺԷ.6): Ինչ եք կարծում, ի՞նչ սովորեց ժողովուրդը սրանից (Տես Բ Մնացորդաց Ի.12–13, ուշադրություն դարձնելով, որ «բոլոր Հուդան կանգնած էր Տիրոջ առաջը, նաև նրանց երեխայքը. նրանց կանայքը և որդիքը»:) Ի՞նչ կարող ենք վերացնել մեր տներից և մեր անձնական կյանքից, որպեսզի կարողանանք երկրպագել Աստծուն ավելի մեծ նվիրվածությամբ:

- Հովասափատը Ղևտացիներ ուղարկեց ողջ թագավորությունով մեկ՝ սովորեցնելու ժողովրդին «Տիրոջ օրենքի գրքից» (Բ Մնացորդաց ԺԷ.9): Ինչ եք կարծում, ինչպե՞ս սուրբ գրություններից ուսուցանելն ազդեց Հուդայի ժողովրդի վրա: Ինչպե՞ս է օգնել ձեզ սուրբ գրությունների անձնական և ընտանեկան ուսումնասիրությունը: Ինչպե՞ս է տանը սուրբ գրությունների ուսումնասիրությունն ազդում մեր ընտանիքների և Եկեղեցու վրա ընդհանրապես:

  Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոնն ուսուցանել է. «Հաճախ մենք մեծ ջանքեր ենք գործադրում՝ փորձելով մեծացնել մեր ցցերի ակտիվության մակարդակը: Մենք ջանասիրաբար աշխատում ենք բարձրացնել հաղորդության ժողովների մասնակցողների տոկոսը: Մենք աշխատում ենք ունենալ միսիաներում գտնվող երիտասարդ տղամարդկանց ավելի բարձր տոկոս: Մենք ձգտում ենք տաճարում ամուսնացողների թիվը բարելավել: Այս բոլորն անհրաժեշտ ջանքեր են և կարևոր թագավորության աճի համար: Բայց եթե անդամներն անհատապես և ընտանիքներով կանոնավորապես և հետևողականորեն ընկղմվում են սուրբ գրությունների ընթերցանության մեջ, այս գործունեության մյուս շրջաններն ինքնըստինքյան կգան: Վկայությունները կմեծանան: Պարտավորվածությունը կուժեղանա: Ընտանիքները կամրանան: Կհորդի անձնական հայտնությունը» (*The Teachings of Ezra Taft Benson* [1988], 44):

- Բ Մնացորդաց Ի գլխում պատմվում է Հուդայի ժողովրդի սոսկալի անհանգստության մասին, քանի որ երեք ազգեր պատերազմ էին հայտարարել նրանց: Հետևանքն անհույս էր թվում թագավոր Հովսափատին և նրա ժողովրդին, որովհետև նրանք թվով շատ քիչ էին: Ի՞նչ արեց Հովսափատն օգնություն ստանալու համար (Տես Բ Մնացորդաց Ի.3–13): Ինչպիսի՞ն էր Տիրոջ պատասխանն այս խնդրանքին (Տես Բ Մնացորդաց Ի.14–17): Նշեք, որ այս պատասխանը եկավ մարգարե Հազիելին): Ի՞նչ խորհուրդ տվեց Հովսափատն իր ժողովրդին (Տես Բ Մնացորդաց Ի.20):Որպես Վերջին Օրերի Սրբեր՝ մենք ինչպես ենք թվով քիչ Հին դարերի Հուդայի ժողովրդի պես: Ինչպե՞ս է Հովսափատի խորհուրդը վերաբերում մեզ:

- Հիշելով մարգարե Հազիելի հավաստիացումը, որ պատերազմն Աստծունն է, Հովսափատը կռվելու փոխարեն երգիչներ նշանակեց՝ փառաբանելու Տիրոջը: Երբ նրանք սկսեցին երգել, Տերը նրանց պաշտպանեց ՝ նրանց վրա հարձակվողների մեջ կռիվ առաջացնելով և միմյանց կործանելով (Բ Մնացորդաց Ի.21–24): Ինչպե՞ս ենք մենք պաշտպանվում, երբ հիշում ենք և հնազանդվում ապրող մարգարեի խոսքերին:

- Ի հակադրություն Հերոբովամի և Ռոբովամի, որոնք առաջնորդեցին իրենց ժողովրդին դեպի կռապաշտություն, Հովսափատը Հուդայի ժողովրդի վրա իր ազդեցությունը գործադրեց՝ նրանց խոնարհեցնելու Տիրոջ առաջ (Բ Մնացորդաց Ի.3–4): Արդար առաջնորդների ազդեցության ինչպիսի՞ օրինակներ եք դուք տեսել: Ի՞նչ կարող ենք անել մենք՝ օգնելու նրանց, ում մենք ծառայում ենք, որպեսզի արդար ապրեն:

Եզրափակում

Վկայեք այն իշխանության մասին, որ ունեն առաջնորդները՝ տանելու ժողովրդին դեպի ամբարշտություն կամ արդարություն: Հիշեցրեք դասարանի անդամներին մեր Եկեղեցու կոչումներում, մեր համայնքներում, աշխատանքում և տանն առաջնորդելու մեր պատասխանատվության մասին: Խրախուսեք դասարանի անդամներին լինել լավ առաջնորդներ՝ մատուցելով ծառայություն, վստահելով և հնազանդվելով Տիրոջը, ունենալով հավատք Նրա հանդեպ, ուսուցանելով սուրբ գրություններից և հետևելով մարգարեներին:

Ուսուցման լրացուցիչ գաղափարներ

Հետևյալ նյութը լրացնում է առաջարկվող դասի ուրվագիծը: Օգտագործեք այս գաղափարներից մեկը կամ մի քանիսը որպես դասի բաղկացուցիչ մաս:

1. Հաղթահարելով հասակակիցների բացասական ճնշումը

- Իսրայելի թագավորությունը հիմնականում բաժանվեց, որովհետև Ռոբովամն ընտրեց հետևել իր հասակակիցների ոչ իմաստուն խորհրդին (Գ Թագավորաց ԺԲ.9–16): Ինչպե՞ս կարող ենք դիմադրել մեր ընկերների ոչ իմաստուն խրհրդին հետևելու գայթակղությանը:

  Երեց Մալքոմ Ս. Ջեփսենն ասել է.

  «Ձեզանից շատերի հետ….ինչ-որ մի ժամանակ կպատահի այնպես, որ ձեր «ընկերներից» մեկը կամ մի քանիսը կգայթակղեն ձեզ անել ինչ-որ բան, որ դուք գիտեք չպետք է անեք….

  «Ոչ ոք երբևէ չի իմանա,– կասեն այսպես կոչված ընկերները:– Բացի այդ, ի՞նչ պիտի անի դա քեզ»:

  Դուք չպետք է հրաժարվեք ձեր ընկերներից, ովքեր սխալ ուղու վրա են, դուք նույնիսկ անպայման չէ որ թողնեք նրանց: Դուք կարող եք լինել նրանց հոգատար ընկերը, պատրաստակամորեն օգնելով նրանց, երբ նրանք պատրաստ կլինեն օգնությունն ընդունել: Դուք կարող եք խոսել նրանց հետ ու բարձրացնել նրանց և բերել նրանց ձեր վկայությունը: Առաջնորդեք նրանց ձեր օրինակով:

  Բայց երբեք մի արեք այնպիսի բան, որ Երկնային Հոր դժգոհությունն առաջացնեք ձեր ընկերների պատճառով, ովքեր կարող է ասեն, որ որպես ընկերության պայման, դուք պետք է ընտրեք նրանց ուղու և Տիրոջ ուղու միջև:

  Եթե դա տեղի ունենա, ընտրեք Տիրոջ ուղին և գտեք նոր ընկերներ» (in Conference Report, Apr. 1990, 59; or *Ensign,* May 1990, 45):

2. *Բարձրավանդակների* և *կուռքերի անտառների* նշանակությունը

Հետևյալ սահմանումները կօգնեն ձեզ բացատրել Հերոբովամի և Ռոբովամի կողմից մտցված կեղծ պաշտամունքը:

Բարձրավանդակներ (Գ Թագավորաց ԺԲ.31). զոհասեղաններ, որոնք կառուցված էին բլուրների գագաթին: Երբ ժողովուրդն ընկավ կռապաշտության մեջ, նրանք սրբապղծեցին այդ զոհասեղանները և օգտագործեցին դրանք՝ կուռքեր պաշտելու համար:

Կուռքերի անտառներ (Գ Թագավորաց ԺԴ.15). հեթանոսական պաշտամունքի վայրեր, որտեղ երբեմն մարդիկ զբաղվում էին անբարոյական գործերով:

3. «Եվ.... Աստվածներ կպաշտեք, որ մարդի ձեռքի գործ են» (Երկրորդ Օրինաց Դ.28)

- Երբ Հերոբովամը տեղադրեց ոսկե հորթերը և ժողովուրդը երկրպագեց բարձրավանդակներում և կուռքերի անտառներում, նա և նրա ժողովուրդն անտեսում էին Մովսեսի նախազգուշացումները, որոնք տրվել էին 500 տարի առաջ (Բ Օրինաց Դ.25–28): Ի՞նչ աղետ էին նրանք բերում իրենց վրա: Ի՞նչ էր խոստացված, եթե նրանք կեղծ կուռքերի փոխարեն դառնային դեպի Տերը (Տես Բ Օրինաց Դ.29–31):

4. Ղեկավարության առարկայական դաս

Դասարան բերեք երկու նմանատիպ խորանարդների (կամ այլ առարկաների) հավաքածու: Հրավիրեք դասարանի երկու անդամների մասնակցել հետևյալ ցուցադրմանը: Յուրաքանչյուր մասնակցին տվեք խորանարդների մի հավաքածու: Նշանակեք դասարանի մեկ անդամի լինել ղեկավար, իսկ մյուսին լինել հետևորդ: Հանձնարարեք դասարանի երկու անդամներին մեջքով շրջվել միմյանց, որպեսզի նրանք չկարողանան տեսնել միմյանց խորանարդները: Հանձնարարեք ղեկավարին արագ ինչ-որ կառույց կառուցել խորանարդներով և ուղղություն տալ հետևորդին, թե ինչպես կառուցի նմանատիպ մի կառույց: Հետևորդը չպետք է հարցեր տա, երբ նա հետևում է ցուցումներին: Ոչ էլ մասնակիցը պետք է նայի մյուսի խորանարդներին, մինչև որ գործն ավարտի:

Երբ հետևորդն ավարտի կառուցելը, քննարկեք թե որքան կարևոր է ղեկավարների համար հստակ հրահանգներ տալը, իսկ հետևորդի համար ուշադիր լսելը: Եթե հետևորդը կառուցել է մի կառույց, որը նման է ղեկավարի կառուցածին, գովաբանեք երկու մասնակցին էլ և խնդրեք դասարանի մյուս անդամներին մեկնաբանել, թե ինչո՞ւ էին նրանք հաջողակ: Եթե ցուցադրումն առաջ է բերել տարբեր կառույցներ, ուղղեք հետևյալ հարցերը.

- Արդյոք կարո՞ղ էր ղեկավարն ավելի հստակ հրահանգներ տալ: Արդյոք կարո՞ղ էր հետևորդն ավելի ուշադիր լսել: Ինչպե՞ս կարող էր օգնել հետևորդին, եթե թույլ տրվեր նրան նայել, թե ինչպես էր ղեկավարը կառուցում կառույցը:
- Ինչպե՞ս կարող ենք կիրառել այն, ինչ սովորեցինք այս ցուցադրումից մեր եկեղեցական կոչումներում և մեր տներում:

Դաս
28

«Կրակից հետո մի մեղմ ու բարակ ձայն»:

Գ Թագավորաց ԺԷ–ԺԹ

Նպատակ

Խրախուսեք դասարանի անդամներին իրենց կյանքում առաջինը դնել Աստծուն և առաջնորդություն և սփոփանք գտնել ապրող մարգարեի խոսքերում և Սուրբ Հոգու շշունջներում:

Նախապատրաստում

1. Աղոթքով ուսումնասիրեք հետևյալ սուրբ գրությունները.

   ա. Գ Թագավորաց ԺԷ: Եղիան կնքում է երկինքները, որ անձրև չգա, փախչում է Աքաաբից և Հեզաբելից և հրաշքով պահպանվում անապատում (ԺԷ.1–6): Տերն ուղարկում է Եղիային մի որբևայրու մոտ, որը նրան ուտելիք և ջուր է տալիս (ԺԷ.7–16): Եղիան որբևայրու որդուն հարություն է տալիս մեռած տեղից (ԺԷ.17–24):

   բ. Գ Թագավորաց ԺԸ: Ավելի քան երկամյա սովից հետո, Եղիան հանդիպում է Աքաաբի հետ և մարտահրավեր նետում Բահաղի քահանաներին կրակ իջեցնել երկնքից իրենց զոհաբերությունն այրելու համար (ԺԸ.1–2, 17–24): Բահաղի քահանաները ձախողվում են իրենց փորձերում, իսկ Եղիան աղոթում է և Տերը կրակ է ուղարկում ներքև՝ այրելու նրա պատրաստած զոհաբերությունը (ԺԷ.25–40): Եղիան աղոթում է, որ սովը վերջանա և Տերն անձրև է ուղարկում (ԺԸ.41–46):

   գ. Գ Թագավորաց ԺԹ: Հեզաբելը փորձում է սպանել Եղիային (ԺԹ.1–2): Եղիան փախչում է անապատ և կերակրվում հրեշտակի կողմից (ԺԹ.3–8): Եղիան գնում է Քորեբ, որտեղ նա մխիթարվում է Սուրբ Հոգու կողմից և հրահանգվում շարունակել Աստծո գործը (ԺԹ.9–19):

2. Խնդրեք դասարանի մի անդամի պատրաստվել համառոտ պատմելու Եղիայի առճակատումը Բահաղի քահանաների հետ (Գ Թագավորաց ԺԸ.17–40):

Առաջարկվող դասի զարգացում

Ուշադրության կենտրոնացման վարժություն

Օգտագործեք հետևյալ վարժությունը (կամ ձեր սեփականը) դասը սկսելու համար:

Կիսվեք Երեց Թոմաս Ս. Մոնսոնի կողմից պատմած հետևյալ պատմվածքով.

«Ծնված լինելով աղքատության մեջ, բայց դաստիարակված հավատքով [Խոսե Գարսիան] պատրաստվում էր միսիոներական կանչի: Ես ներկա էի այն օրը, երբ ստացան նրա երաշխավորագիրը: Այնտեղ կար այս միտքը. «Եղբայր Գարսիան կծառայի ի մեծ զոհաբերություն իր ընտանիքի, քանի որ նա է ընտանիքի հիմնական օժանդակության միջոցը: Բայց նա մի ունեցվածք ունի՝ մի թանկարժեք դրոշմանիշների հավաքածու, որը նա կկամենար վաճառել, եթե անհրաժեշտ լինի օգնել իր միսիայի ֆինանսավորմանը:

Նախագահ [Սպենսեր Վ.] Քիմբալն ուշադիր լսեց այս միտքը, երբ այն կարդացվեց նրա համար, իսկ հետո պատասխանեց. «Հանձնարարիր նրան վաճառել այդ դրոշմանիշների հավաքածուն: Այդպիսի զոհաբերությունը նրա համար օրհնություն կլինի»:

Հրավիրեք դասարանի անդամներին մտածել այն մասին, թե ինչպես նրանք կարձագանքեին, եթե նրանց խնդրեին հրաժարվել բոլոր իրենց ունեցվածքից Տիրոջը ծառայելու համար: Հետո շարունակեք պատմվածքը.

«Ապա, փայլատակող աչքերով և դեմքին մի ժպիտ, այս սիրառատ մարգարեն ասաց,– Ամեն ամիս Եկեղեցու վարչությունում մենք ստանում ենք հազարավոր նամակներ աշխարհի բոլոր ծայրերից: Հոգ տարեք, որ այդ դրոշմանիշները պահվեն և տվեք դրանք Խոսեին իր միսիայի ավարտին: Նա Մեքսիկայի բոլոր երիտասարդներից լավագույն դրոշմանիշների հավաքածուն կունենա անվճար » (in Conference Report, Oct. 1978, 83; or *Ensign,* Nov. 1978, 56):

Բացատրեք, որ երբ մենք առաջինը դնում ենք Աստծո բաները մեր կյանքում, մեր ստացած պարգևները շատ ավելի մեծ են լինում, քան որևէ բան, որ մենք կարող է զոհաբերենք այդ ճանապարհի ընթացքում: Այս դասը պատմում է երկու մարդկանց մասին՝ Եղիայի և Սարեփթացի այրու մասին, ովքեր ստացան մեծ օրհնություններ, որովհետև կամեցան հետևել Աստծուն, նույնիսկ, երբ դժվար էր այդ անել:

Սուրբ գրության քննարկում և կիրառում

Երբ ուսուցանեք սուրբ գրության հետևյալ հատվածները, քննարկեք, թե ինչպես են դրանք վերաբերում ամենօրյա կյանքին: Խրախուսեք դասարանի անդամներին կիսվել փորձառություններով, որոնք կապված են սուրբգրքյան սկզբունքների հետ:

Իսրայելի թագավորությունը կռապաշտության մեջ գցելուց հետո, Հերոբովամը և նրա ժառանգները կործանվեցին: Նրանց հաջորդեցին կռապաշտ թագավորների մեկ այլ շարան: Այդ կառավարողներից Աքաաբն այն թագավորն էր, որը «իրենից առաջ եղած Իսրայելի բոլոր թագավորներից ավելի բարկացրեց Իսրայելի Տեր Աստծուն» (Գ Թագավորաց ԺԶ.33): Նա ամուսնացավ Հեզաբելի հետ, որդեգրեց Բահաղի նրա պաշտամունքը, և խրախուսեց իր ժողովրդին հետևել իրեն այս կեղծ աստծո իր պաշտամունքում: Եղիա Մարգարեն հայտնեց նախազգուշական խոսքեր Աքաաբին և նրա թագավորությանը:

1. Եղիան կնքում է երկինքները, հրաշքով պահպանվում և հարություն է տալիս այրու մահացած որդուն:

Ուսուցանեք և քննարկեք Գ Թագավորաց ԺԷ:

- Աքաաբի և նրա ժողովրդի ամբարշտության պատճառով, Եղիան հայտարարեց. «Այս տարիներին ցող և անձրև պիտի չլինի, *բայց եթե իմ խոսքովը*» (Գ Թագավորաց ԺԷ.1, շղագիրն ավելացված է): Ինչո՞ւ Եղիան կարողացավ այդպիսի հայտարարություն անել (Համեմատեք Եղիային Հելամանի որդի Նեփիի հետ, որին տրվել էր նմանատիպ զորություն: Բոլոր բաներն ըստ Նեփիի խոսքերի կատարվելու թույլտվության Տիրոջ պատճառները գտնվում են Հելաման 10.4–5 հատվածներում):
- Եղիայի հայտարարելուց հետո, որ անձրև պիտի չլինի թագավորությունում, Տերը նրան պատվիրեց փախչել: Ինչպե՞ս արձագանքեց Եղիան Տիրոջ հրամանին (Տես Գ Թագավորաց ԺԷ.2–5): Ի՞նչ կարող ենք սովորել Եղիայի արձագանքից:

  Երեց Գորդոն Բ. Հինքլին ասել է.

  «Ես ուժ եմ ստանում Մարգարե Եղիայի վերաբերյալ արված պարզ հաղորդումից, որը նախազգուշացրեց թագավոր Աքաաբին երկրի վրա եկող երաշտի և սովի մասին: Բայց Աքաաբը ծաղրեց: Եվ Տերն ասաց Եղիային գնալ և թաքնվել Քերիթ հեղեղատի մոտ և այնտեղ նա պիտի հեղեղատիցը խմեր և պիտի կերակրվեր ագռավների կողմից: Եվ սուրբ գրություններն արձանագրել են մի հիանալի միտք. «Եվ նա գնաց և արեց Տիրոջ խոսքի համեմատ» (Գ Թագավորաց ԺԷ.5):

  Չեղավ ոչ մի վիճաբանություն: Չեղավ ոչ մի պատճառաբանություն: Չեղավ ոչ մի երկդիմություն: Եղիան ուղղակի «գնաց և արեց Տիրոջ խոսքի համեմատ»: Եվ նա փրկվեց սոսկալի աղետներից, որոնք տեղացին նրանց վրա, ովքեր ծաղրեցին և վիճաբանեցին ու կասկածեցին» (in Conference Report, Oct. 1971, 159; or *Ensign,* Dec. 1971, 123–24):

- Ինչպե՞ս Եղիան գոյատևեց անապատում երաշտը սկսվելուց հետո (Տես Գ Թագավորաց ԺԷ.4, 6): Ինչպիսի՞ փորձառություններ եք ունեցել, երբ Տերը պահպանել է ձեզ ֆիզիկապես կամ հոգեպես:

- Անապատում հեղեղատի չորանալուց հետո, Տերն ո՞ւմ պատրաստեց օգնելու Եղիային (Տես Գ Թագավորաց ԺԷ.7–13): Ի՞նչ կարող է սա սովորեցնել մեզ, թե ինչպես է Տերն օգնում նրանց, ովքեր կարիքի մեջ են: (Բացատրեք, որ Տերը հաճախ օգնում է կարիքի մեջ գտնվողներին ուրիշ մարդկանց ծառայության միջոցով): Ինչպե՞ս եք նկատել, որ Տերն օգնում է կարիքի մեջ գտնվողներին ուրիշ մարդկանց ծառայության միջոցով: Ի՞նչ կարող ենք անել կարիքի մեջ գտնվող ուրիշ մարդկանց օգնելու համար:

  Երեց Ջեֆրի Ռ. Հոլլանդն ասել է. «Ես գիտեմ, որ մենք ամենքս կարող ենք անել ինչ-որ բան, որքան էլ որ այդ գործը փոքր թվա: Մենք կարող ենք վճարել ազնիվ տասանորդ և կարող ենք տալ մեր ծոմի և կամավոր նվիրատվությունները…. Եվ կարող ենք այլ ուղիներ փնտրել օգնելու: Արժանավոր գործերի և կարիքավոր մարդկանց համար մենք կարող ենք տրամադրել ժամանակ, եթե չունենք փող, և մենք կարող ենք տալ սեր, երբ մեր ժամանակը սպառվում է: Մենք կարող ենք կիսվել մեր ունեցած հացով և վստահել Աստծուն, որ կուժիցը յուղը չի պակասի» (in Conference Report, Apr. 1996, 41; or *Ensign,* May 1996, 31):

- Ինչպե՞ս այրին պատասխանեց Եղիայի մի քիչ խմելու ջրի խնդրանքին (Տես Գ Թագավորաց ԺԷ.10–11: Նա գնաց բերելու առանց տատանվելու): Ի՞նչ ասաց այրին, երբ Եղիան նրանից ուտելիք խնդրեց (Տես Գ Թագավորաց ԺԷ. 11–12): Ի՞նչ խոստացավ նրան Եղիան (Տես Գ Թագավորաց ԺԷ. 13–14): Ի՞նչ արեց այդ ժամանակ այրին (Տես Գ Թագավորաց ԺԷ.15): Ի՞նչ կարող ենք սովորել այրու պատասխանից:

  Երեց Հոլլանդն ասել է, որ այրու պատասխանը, երբ Եղիան նրանից ուտելիք խնդրեց «հավատքի արտահայտություն էր՝ այնպես մեծ այդ հանգամանքներում, ինչպես սուրբ գրություններում իմ իմացածներից ցանկացածը…. Հավանաբար, չիմանալով, թե ինչ պիտի լիներ իր հավատքի վարձքը…. Նա առաջինն իր մի փոքրիկ կտոր հացը տվեց Եղիային, ակնհայտորեն վստահելով, որ եթե բավականաչափ հաց չմնար, առնվազն նա և իր որդին կմահանային գթության սուրբ գործ կատարելով» (in Conference Report, Apr. 1996, 39; or *Ensign,* May 1996, 29):

- Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ Աստված պատվիրեց այրուն կերակրել Եղիային, երբ նա այդքան քիչ ուներ: Ի՞նչ օրհնություն ստացավ այրին իր հնազանդության համար (Տես Գ Թագավորաց ԺԷ.16): Որո՞նք են այն բաները, որոնք Աստված խնդրում է մեզանից, որոնք կարող են դժվար լինել: Ի՞նչ ուղիներով ենք մենք օրհնվում, երբ առաջին տեղում Աստծուն ենք դնում, անելով այն, ինչ նա խնդրում է, նույնիսկ, երբ դա դժվար է:

  Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոնը սովորեցրել է.

  «Երբ մենք Աստծուն առաջին տեղում ենք դնում, բոլոր մյուս բաներն ընկնում են իրենց ճիշտ տեղը կամ դուրս են մղվում մեր կյանքից: Տիրոջ հանդեպ մեր սերն ուղղություն կտա այն բաներին, որոնք մենք սիրում ենք, որոնց մենք ժամանակ ենք հատկացնում, այն հետաքրքրություններին և մեր առաջնահերթությունների կարգին, որոնց ձգտում ենք….

  Թող Աստված օրհնի մեզ, որ մենք [նրան] առաջին տեղում դնենք և որպես արդյունք հնձենք խաղաղություն այս կյանքում և լիակատար ուրախությամբ հավերժական կյանք գալիք կյանքում (in Conference Report, Apr. 1988, 3, 6; or *Ensign,* May 1988, 4, 6).

- Ի՞նչ արեց Եղիան, երբ որբևայրու որդին հիվանդացավ և մահացավ (Տես Գ Թագավորաց ԺԷ.17–22): Ի՞նչ զորությամբ Եղիան կարողացավ որբևայրու որդուն ետ բերել կյանք: Ինչպե՞ս է օրհնվել ձեր կյանքը քահանայության զորությամբ:

2. Եղիան մարտահրավեր է նետում Բահաղի քահանաներին և բացում երկինքներն անձրևի համար:

Ուսուցանեք և քննարկեք Գ Թագավորաց ԺԸ:

- Սովի երրորդ տարում Տերը հրամայեց Եղիային. «Գնա երևա Աքաաբին, և ես անձրև պիտի տամ երկրի երեսին» (Գ Թագավորաց ԺԸ.1): Ինչպե՞ս վերաբերվեց Աքաաբը, երբ տեսավ Եղիային (Տես Գ Թագավորաց ԺԸ.17: Նշեք, որ Աքաաբը մեղադրեց Եղիային սովի համար): Ո՞րն էր սովի իրական պատճառը (Տես Գ Թագավորաց ԺԸ.18):
- Եղիայի առաջարկի համաձայն Աքաաբը հավաքեց ողջ Իսրայելը և 850 կեղծ քահանաներ Կարմեղոս սարի վրա (Գ Թագավորաց ԺԸ.19–20): Երբ ժողովուրդը հավաքվեց լսելու Եղիայի խոսքը, նա հարցրեց նրանց. «Մինչև ե՞րբ պիտի դուք կաղաք երկու կողմի վրա» (Գ Թագավորաց ԺԸ.21): Ի՞նչ եք կարծում ի՞նչ է նշանակում կաղալ երկու կողմի վրա: Ինչպե՞ս ենք մենք երբեմն կաղում երկու կողմի վրա (Տես Մատթեոս Զ.24: Նշեք, որ *մամոնա* բառը վերաբերում է աշխարհիկությանը):

  Երեց Նիլ Ա. Մաքսվելն ասել է. «Տարբեր մարգարեների հուզիչ խոսքերը…. ստիպում են մեզ ընտրել, որոշել և ոչ թե կաղալ…. Եղիայի ուղերձը վիթխարի արդիականություն ունի այսօր, քանի որ բոլորն, ի վերջո, պետք է ընտրեն այս աշխարհի աստվածների և հավերժության Աստծո միջև» (*That My Family Should Partake* [1974], 22):

Հանձնարարեք դասարանի անդամներին համառոտակի պատմել Բահաղի քահանաների հետ Եղիայի առճակատման մասին (Գ Թագավորաց ԺԸ.17–40):

- Ո՞րն էր Բահաղի քահանաներին մարտահրավեր նետելու Եղիայի նպատակը (Տես Գ Թագավորաց ԺԸ.36–37): Ինչպե՞ս մարդիկ վերաբերվեցին Տիրոջ ցուցադրած զորությանը (Տես Գ Թագավորաց ԺԸ.38–39): Ինչպե՞ս նրանք օրհնվեցին ճանաչելով Տիրոջը և նրա զորությունը (Տես Գ Թագավորաց ԺԸ.45): Ինչպե՞ս կարող ենք մենք ավելի լիովին ճանաչել Տիրոջն ու նրա զորությունը (Տես Ա Թեսաղոնիկեցիս Ե.16–18, Ալմա 34.38, Մորոնի 7.33–39):

3. Եղիան մխիթարվում է Սուրբ Հոգու կողմից և հրահանգվում շարունակել Աստծո գործը:

Ուսուցանեք և քննարկեք Գ Թագավորաց ԺԹ գլուխը:

Բարկանալով Բահաղի քահանաների դեմ ունեցած Եղիայի հաղթանակից, Հեզաբելը որոնում էր սպանել նրան: Եղիան փախավ անապատ և կանչեց առ Տերը, ասելով. «Արդեն բավական է, ով Տեր, իմ հոգին առ»: (Գ Թագավորաց ԺԹ.4): Տերն օրհնեց Եղիային՝ ուղարկելով մի հրեշտակ ուտելիքով և ջրով: Նշեք, որ մարգարեները ևս կարող են հուսահատության գիրկն ընկնել և մխիթարության և առաջնորդության կարիք զգալ, որը կարող է ապահովել միայն Աստված:

- Ինչո՞ւ էր Եղիան հուսալքված (Տես Գ Թագավորաց ԺԹ.10, 14: Չնայած Աստծո զորության ազդու դրսևորմանը, Եղիան զգաց, որ ինքը միակ Իսրայելացին էր մնացել, որը երկրպագում էր ճշմարիտ Աստծուն): Ի՞նչ արեց նա խաղաղություն ձեռք բերելու համար (Տես Գ Թագավորաց ԺԹ.4, 8: Նա աղոթեց և ծոմ պահեց): Ի՞նչ կարող ենք սովորել Եղիայի փորձառությունից՝ ինքներս մեզ օգնելու համար, եթե մենք հուսալքված, ճնշված կամ հուսահատված ենք զգում:

- Ինչպե՞ս Աստված մխիթարեց Եղիային Քորեբ սարի վրա (Տես Գ Թագավորաց ԺԹ.9–13): Ի՞նչ կարող ենք սովորել, թե Աստված ինչպե՞ս է հաղորդակցվում մեզ հետ: Ի՞նչու եք կարծում, որ Աստված ավելի հաճախ հաղորդակցվում է Սուրբ Հոգու «մեղմ ու բարակ ձայնով», քան իր զորության բարձր և ազդու ձայնի դրսևորումով: Ինչպե՞ս կարող ենք զանազանել Սուրբ Հոգու հուշումները:

  Երբ մի լրագրող հարցրեց Նախագահ Հինքլիին, թե ինչպես էր նա հաղորդակցվում Աստծո հետ, մարգարեն պատասխանեց. «Կարծում եմ լավագույն ուղին, որով կարող եմ նկարագրել այդ գործընթացը Եղիայի փորձառությանը նմանեցնելն է, ինչպես գրված է Գ Թագավորաց գրքում: Եղիան խոսեց Տիրոջ հետ, և հողմ եղավ, մի զորավոր հողմ և Տերը հողմի մեջ չէր: Եվ երկրաշարժ եղավ, բայց Տերը երկրաշարժի մեջ չէր: Եվ կրակ եղավ, բայց Տերը կրակի մեջ չէր: Եվ կրակից հետո, եղավ մի մեղմ բարակ ձայն, որը ես նկարագրում եմ, որպես Հոգու շշունջներ» (in Conference Report, Oct. 1996, 71; or *Ensign*, Nov. 1996, 51):

  Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոնը սովորեցրել է. «Դուք տրամադրո՞ւմ եք ժամանակ լսելու Հոգու շշունջները: Աղոթքի պատասխանները շատ հաճախ գալիս են մեղմ ձայնի միջոցով և զանազանվում՝ մեր ամենախոր և ներքին *զգացումների* միջոցով: Ես ասում եմ ձեզ, որ դուք ինքներդ կարող եք իմանալ Աստծո կամքը ձեր վերաբերյալ, եթե ժամանակ տրամադրեք աղոթելուն և լսելուն» (in Conference Report, Oct. 1977, 46; or *Ensign*, Nov. 1977, 32):

- Բացի Մխիթարիչ լինելուց, Սուրբ Հոգին նաև ուսուցիչ է (Հովհաննես ԺԴ.26, 2 Նեփի 32.5): Ի՞նչ արեց Տերը, Սուրբ Հոգու միջոցով, Եղիային հրահանգելու համար (Տես Գ Թագավորաց ԺԹ.15–16): Ինչպե՞ս կարող է Տիրոջը ծառայելը օգնել մեզ, երբ մենք հուսալքված ենք:

- Ուղիներից մեկը, որով Տերը մխիթարեց Եղիային այն էր, որ նա ասաց նրան, որ դեռ կային շատ Իսրայելացիներ, ովքեր չէին ընդունել Բահաղի պաշտամունքը (Գ Թագավորաց ԺԹ.18): Ինչպե՞ս կարող է ուրիշ հավատարիմ Վերջին Օրերի Սրբերի հետ ընկերությունը մխիթարել մեզ: Ինչպիսի՞ ազդեցություններով եք դուք շրջապատված, որոնք օգնում են ձեզ իմանալ, որ դուք միայնակ չեք: Ի՞նչ կարող եք անել օգնելու ուրիշներին, երբ նրանք իրենց մենակ են զգում:

Եզրափակում

Վկայեք, որ մենք կմխիթարվենք և կառաջնորդվենք, երբ առաջին տեղում դնենք Աստծուն և ականջ դնենք Սուրբ Հոգու հուշումներին:

Ուսուցման լրացուցիչ գաղափար

Հետևյալ նյութը լրացնում է առաջարկվող դասի ուրվագիծը: Օգտագործեք այն որպես դասի բաղկացուցիչ մաս:

Եղիայի ոգին

Վերջին Օրերի Սրբերը հաճախ խոսում են Եղիայի հոգու մասին: Այս արտահայտությունը վերաբերում է այն աշխատանքին, որ մենք կատարում ենք «հայրերի սրտերը դեպի զավակները դարձնելու համար, և զավակներինը դեպի հայրերը» (ՎԵՈՒ 110.15): Այս աշխատանքը ներառում է ընտանեկան պատմության հետազոտություններ և տաճարային աշխատանք ողջերի և մահացածների համար: Մենք կոչում ենք այն Եղիայի ոգի, որովհետև Եղիան վերականգնեց քահանայության կնքող զորության բանալիները Ջոզեֆ Սմիթին (ՎԵՈՒ 110.13–16): Այս զորության միջոցով կարող են կատարվել կնքող արարողություններ, որոնք միավորում են ընտանիքները հավերժության համար:

Ջոզեֆ Սմիթն ասել է.

«Եղիայի ոգին, զորությունը և կոչումն այն է, որ դուք իշխանություն ունեք կրելու Մելքիսեդեկյան Քահանայության լրիվության՝ հայտնությունների, արարողությունների, մարգարեությունների, զորությունների և օժտումների, և երկրի վրա Աստծո արքայության լրիվության բանալիները, և ստանալու, ձեռք բերելու և կատարելու բոլոր արարողություն-ները, որոնք պատկանում են Աստծո արքայությանը, այսինքն՝ դարձնելով հայրերի սրտերը դեպի զավակները և զավակների սրտերը դեպի հայրերը, նույնիսկ նրանց, ովքեր երկնքում են….

Ես կամենում եմ, որ դուք հասկանաք այս նյութը, քանզի այն կարևոր է, և եթե դուք ընդու-նեք՝ սա է Եղիայի հոգին, որ մենք փրկագնում ենք մեր մահացածներին և կապում մեզ մեր հայրերի հետ, ովքեր երկնքում են և կնքում մեր մահացածներին առաջին հարության ժա-մանակ դուրս գալու համար, և դրա համար մենք ունենք Եղիայի զորության կարիքը՝ կնքելու նրանց, ովքեր ապրում են երկրի վրա, նրանց հետ ովքեր ապրում են երկնքում: Սա է Եղիայի զորությունը և Եհովայի արքայության բանալիները» (*Teachings of the Prophet Joseph Smith,* sel. Joseph Fielding Smith [1976], 337–38):

Դաս
29

«Նա վեր առավ Եղիայի վերարկուն….»

Դ Թագավորաց Բ, Ե–Զ

Նպատակ

Օգնեք դասարանի անդամներին հասկանալ, թե ինչպես է իշխանությունը (թիկնոցը) մեկ մարգարեից անցնում մեկ ուրիշին, քաջալերելու նրանց հնազանդվել մարգարեների խոսքերին, և հավաստիացնելու նրանց, որ Աստծո զորությունն ավելի մեծ է, քան որևէ այլ զորություն:

Նախապատրաստում

1. Աղոթքով ուսումնասիրեք հետևյալ սուրբ գրությունները.

   ա. Դ թագավորաց Բ.1–18: Եղիսեն դառնում է նոր մարգարեն (Բ.1–10): Եղիան երկինք է վերցվում: Եղիսեն վերցնում է Եղիայի վերարկուն և դառնում մարգարե (Բ.11–15): Հիսուն մարդ երեք օր որոնում են Եղիային, չնայած Եղիսեյի խորհրդին, որ նրանք չպետք է դա անեն: (Բ.16–18):

   բ. Դ Թագավորաց Ե: Եղիսեն բորոտությունից բժշկում է Նէեմանին (Ե.1–14): Նէեմանը փառաբանում է Աստծուն և ընծա առաջարկում, որից Եղիսեն հրաժարվում է (Ե.15–19):

   գ. Դ Թագավորաց Զ.8–18: Ասորեստանի հետ պատերազմում Եղիսեն առաջնորդում է Իսրայելի թագավորին (Զ.8–10): Ասորեստանի թագավորը հրամայում է բռնել Եղիսեին և բանակը շրջապատում է Դոթայիմը (Զ.11–14): Աներկյուղ, Եղիսեն աղոթում է և Տերը հայտնի է դարձնում հրեղեն ձիերով և կառքերով լիքը մի սար, ապա ասորիներին զարկում է կուրությամբ (Զ.15–18):

2. Եթե օգտագործելու եք ուշադրության վարժությունը, բերեք որևէ գործվածքի կտոր այն որպես թիկնոց օգտագործելու համար:

Առաջարկվող դասի զարգացում

Ուշադրության կենտրոնացման վարժություն

Օգտագործեք հետևյալ վարժությունը (կամ ձեր սեփականը) դասը սկսելու համար:

Ծածկեք ձեր ուսերը (կամ դասարանի որևէ անդամի ուսերը) մի կտոր գործվածքով: Բացատրեք, որ Եղիա մարգարեն վերարկու էր կրում: Մենք ճշգրիտ չգիտենք, թե վերարկուն ինչպիսի տեսք ուներ, բայց հավանաբար այն կտորից կարված վերարկու էր: Վերարկուն Եղիայից Եղիսեին անցնելը խորհրդանշում է մարգարեական իշխանությունը Եղիսեին անցնելը:

Ժամանակակից օրերում մենք երբեմն խոսում ենք իշխանության «թիկնոցի» մասին, որը ստանում է մարգարեն, երբ կարգվում է և ձեռնադրվում: Չնայած մարգարեն այսօր չի կրում վերարկու կամ թիկնոց, Աստված շնորհում է քահանայության բանալիները նրա վրա: Այդ բանալիները նրան իշխանություն են տալիս գործելու Աստծո անունով որպես երկրի վրա Եկեղեցու առաջնորդ: Երբ մարգարեն մահանում է, իշխանության այս թիկնոցը տրվում է նոր մարգարեին:

Սուրբ գրության քննարկում և կիրառում

Երբ ուսուցանում եք սուրբ գրության հետևյալ հատվածները, քննարկեք, թե ինչպես են դրանք կիրառվում ամենօրյա կյանքում: Խրախուսեք դասարանի անդամներին կիսվել փորձառություններով, որոնք առնչվում են սուրբգրքյան սկզբունքների հետ:

1. Եղիսեն հաջորդում է Եղիային որպես մարգարե:

Ուսուցանեք և քննարկեք Դ Թագավորաց Բ.1–18:

- Ի՞նչ կապ կար Եղիայի և Եղիսեյի միջև (Տես Դ Թագավորաց Բ.2–10): Ի՞նչ եք կարծում ինչո՞ւ էր Եղիսեն այդքան վճռական Եղիայի հետ մնալու հարցում: Ի՞նչ արեց Եղիսեն, հետո, երբ Եղիան երկինք վերցվեց (Տես Դ Թագավորաց Բ.11–13: Եթե չեք օգտագործել ուշադրության վարժությունը, անդրադարձեք դրան՝ բացատրելու, թե ինչ էր Եղիայի վերարկուն և ի՞նչ էր իրենից ներկայացնում այն):
- Ո՞վ ունի մարգարեի թիկնոցն այսօր: (Եկեղեցու ներկայիս Նախագահը): Ինչպե՞ս է այդ թիկնոցը փոխանցվում, երբ մարգարեն մահանում է:

  Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը բացատրել է.

  «Գաղտնիք չկա Եկեղեցու Նախագահին հաջորդող ընտրելիս: Տերը կարգավորել է դա շատ ժամանակ առաջ և *ավագ առաքյալն ինքնինքստյան դառնում է Եկեղեցու նախագահող պաշտոնյան,* և նա այդպես հաստատվում է Տասներկուսի Խորհրդի կողմից, որը դառնում է Եկեղեցու նախագահող մարմինը, երբ Առաջին Նախագահություն չկա: Նախագահը *չի ընտրվում*, բայց նա պետք է *հաստատվի* ինչպես Խորհրդի կազմի մեջ մտնող եղբայրների կողմից, այնպես էլ Եկեղեցու անդամների կողմից» (*Doctrines of Salvation,* comp. Bruce R. McConkie, 3 vols. [1954–56], 3:156):

  Նախագահ Գորդոն Բ. Հինքլին բացատրել է, թե ինչպես հետևեցին այս ընթացակարգին, երբ նա Նախագահ Հովարդ Վ. Հանթերի մահից հետո, կարգվեց և ձեռնադրվեց որպես մարգարե և Եկեղեցու Նախագահ.

  «Նախագահ Հանթերի կյանքից հեռանալու հետո Առաջին Նախագահությունն արձակվեց: Եղբայր Մոնսոնն ու ես, որ ծառայել էինք որպես Նրա խորհրդականներ, զբաղեցրեցինք մեր տեղերը Տասներկուսի Քվորումում, որը դարձավ Եկեղեցու նախագահող իշխանությունը:

  [Մի քանի օր անց] կարգված բոլոր ապրող Առաքյալները ծոմի և աղոթքի ոգով հավաքվեցին տաճարի վերին սենյակում: Այդտեղ մենք երգեցինք մի սրբազան օրհներգ և միասին աղոթեցինք: Մենք ճաշակեցինք Տիրոջ ընթրիքի հաղորդությունը՝ այդ սրբազան, խորհրդանշական վկայությամբ նորոգելով մեր ուխտերն ու մեր փոխհարաբերությունը Նրա հետ, ով մեր աստվածային Քավիչն է: Այդ ժամանակ Նախագահությունը վերակազմավորվեց, հետևելով անցած սերունդների ընթացքում լավ հաստատված նախադեպով [այս նախադեպը բացատրվում է Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի նախորդ մտքով]: Չկար պայքար, մրցակցություն, տենչ պաշտոնի համար: Այն լուռ, խաղաղ, պարզ և սրբազան էր: Դա արվեց այն ձևի համաձայն, որը Տերն Ինքն է սահմանել (in Conference Report, Apr. 1995, 92; or *Ensign,* May 1995, 69):

  Գուցե կամենաք նշել, որ ինչպես որ հին ժամանակներում նա արեց, Փրկիչը տվել է քահանայության բանալիները վերջին օրերի Առաքյալներից յուրաքանչյուրին: Այնուամենայնիվ, միայն Եկեղեցու Նախագահը, որն ապրող ավագ Առաքյալն է, կարող է օգտագործել այդ բանալիները (կամ լիազորել ուրիշներին՝ դրանք օգտագործելու համար) ողջ Եկեղեցու անունից (տես ՎԵՈՒ 132.7):

- Ինչպե՞ս արձագանքեցին մարդիկ, երբ տեսան, որ Եղիսեն կրկնօրինակեց Հորդանանի ջրերը բաժանելու Եղիայի հրաշքը (Տես Դ Թագավորաց Բ.14–15): Ինչո՞ւ է կարևոր, որ մենք անմիջապես ընդունենք և հաստատենք նոր կարգված Եկեղեցու Նախագահին (Տես ՎԵՈՒ 43.2–3, 7):
- Շուտով, երբ Եղիան երկինք վերցվեց, մարդիկ կամեցան ուղարկել 50 ուժեղ մարդ նրան որոնելու համար: Ի՞նչ ասաց Եղիսեն մարդկանց (Տես Դ Թագավորաց Բ.16):

Ինչպե՞ս մարդիկ արձագանքեցին Եղիսեի պատասխանին (Տես Դ Թագավորաց Բ.17: Նրանք աղաչեցին Եղիսեին մինչև նա թույլ տվեց տղամարդկանց գնալ):

- Ի՞նչ ասաց մարդկանց Եղիսեն, երբ այն 50 մարդիկ վերադարձան առանց Եղիային գտնելու (Տես Դ Թագավորաց Բ.18): Ի՞նչ կարող ենք սովորել այդ 50 մարդկանց փորձառությունից (Մենք պետք է հետևենք մարգարեի խորհրդին առաջին անգամ, երբ լսում ենք այն): Ինչո՞ւ մենք երբեմն սպասում ենք, որ մարգարեները կրկնեն խորհուրդը, նախքան մենք կհետևենք դրան: Ի՞նչ խորհուրդ են տվել Եկեղեցու առաջնորդները մեզ վերջին տարիներին: Ինչպե՞ս եք օրհնվել, երբ հետևել եք այդ խորհրդին:

2. Եղիսեն Նէեմանին բժշկում է բորոտությունից:

Ուսուցանեք և քննարկեք Դ Թագավորաց Ե գլուխը:

- Ով էր Նէեմանը և ինչպիսին էր նրա տկարությունը (Տես Դ Թագավորաց Ե.1): Ինչո՞ւ նա գնաց Եղիսեի մոտ (Տես Դ Թագավորաց Ե.2–9): Բժշկվելու համար Նէեմանին ի՞նչ ասաց Եղիսեի պատգամավորը, որ անի (Տես Դ Թագավորաց Ե.10): Ինչո՞ւ սկզբում Նէեմանը մերժեց հետևել Եղիսեի հրահանգներին (Տես Դ Թագավորաց Ե.11–12):
- Ինչպե՞ս Նէեմանի ծառաները համոզեցին նրան անել, ինչ Եղիսեն ասել էր նրան անել (Տես Դ Թագավորաց Ե.13): Ի՞նչ պատահեց, երբ Նէեմանը յոթ անգամ թաղվեց Հորդանան գետի մեջ (Տես Դ Թագավորաց Ե.14):
- Ի՞նչ կարող է Նէեմանի պատմությունը մեզ սովորեցնել մարգարեի խորհրդին հետևելու մասին, նույնիսկ, երբ մենք գուցե չհավանենք կամ չհասկանանք այն կամ երբ այն լինի փոքր և հասարակ բաների մասին, որոնք խնդրվել է անել մարգարեի կամ Եկեղեցու առաջնորդների կողմից: Ինչո՞ւ է երբեմն դժվար այդ բաներն անել: Ինչպե՞ս կարող ենք մեծացնել Եկեղեցու առաջնորդների խորհրդին հետևելու մեր պատրաստակամությունը:

  Երեց Ռեքս Դ. Փինիգարը հարց է տվել. «Միթե՞ մենք երբեմն նման չենք Նէեմանին, ձգտելով մեծ և կարևոր բաներ անել և անցնելով հասարակ բաների կողքով, որոնք կարող էին փոխել մեր կյանքը և բժշկել մեզ մեր տկարություններից» (in Conference Report, Oct. 1994, 106; or *Ensign,* Nov. 1994, 80):

  Անդրադառնալով Նէեմանի պատմությանը, Երեց Գորդոն Բ. Հինքլին ասել է. «Ավետարանի ուղին պարզ ուղի է: Պահանջներից մի քանիսը կարող են ձեզ թվալ տարրական և ոչ անհրաժեշտ: Մի արհամարհեք դրանք: Խոնարհեցրեք ձեզ և քայլեք հնազանդությամբ: Ես խոստանում եմ, որ արդյունքները, որոնք կհետևեն, կլինեն սքանչելի՝ տեսնելու համար և բավարարող՝ փորձառության համար» (in Conference Report, Oct. 1976, 143; or *Ensign,* Nov. 1976, 96):

- Ի՞նչ սովորեց Նէեմանն այս բժշկությունից (Տես Դ Թագավորաց Ե.15): Ինչպե՞ս է հասարակ բաներում ձեր հնազանդությունը զորացրել ձեր վկայությունը:
- Բժշկվելուց հետո ի՞նչ փորձեց Նէեմանը տալ Եղիսեին (Տես Դ Թագավորաց Ե.15): Ի՞նչ եք կարծում ինչո՞ւ Եղիսեն հրաժարվեց Նէեմանի առաջարկից: Ինչո՞ւ է կարևոր ծառայել առանց մտահոգվելու երկրային վարձատրության համար:

3. Ասորեստանի հետ մղվող պատերազմում Եղիսեն առաջնորդում է Իսրայելին:

Ուսուցանեք և քննարկեք Դ Թագավորաց Զ.8–18:

- Ինչպե՞ս Եղիսեն օգնեց Իսրայելի թագավորին Ասորեստանի դեմ պատերազմում (Տես Դ Թագավորաց Զ.8–10): Ի՞նչ արեց Ասորեստանի թագավորը, երբ իմացավ, թե ինչ էր Եղիսեն անում (Տես Դ Թագավորաց Զ.11–14):

- Ինչպե՞ս արձագանքեց Եղիսեի ծառան, երբ տեսավ քաղաքը շրջապատող ասորական ձիերը և կառքերը (Տես Դ Թագավորաց Զ.15): Ինչպե՞ս արձագանքեց Եղիսեն (Տես Դ Թագավորաց Զ.16): Ի՞նչ ի նկատի ուներ Եղիսեն, երբ նա ասաց իր ծառային. «Մեզ հետ եղողները շատ են, քան թե նրանց հետ եղողները» (Դ Թագավորաց Զ.16): Արդյոք նկատե՞լ եք, որ Եղիսեի հայտարարությունը դեռևս զորեղ է որպես ճշմարտություն այսօրվա համար:

- Ինչպիսի՞ ժամանակակից օրերի հանգամանքներ կարող են առաջնորդել մեզանից ոմանց հավատալ, որ մենք անօգնական ենք աշխարհի չարիքների դեմ: Ինչպե՞ս կարող է վստահությունը, որ «Մեզ հետ եղողները շատ են, քան թե նրանց հետ եղողները» օգնել մեզ, երբ մենք ճակատամարտում ենք այս չարիքների դեմ:

  Երեց Դալլին Հ. Օուքսն ասել է. «Երբ ես կարդացի այս հրաշալի պատմությունը, երբ պատանի էի, ես միշտ նույնացնում էի ինձ Եղիսեի երիտասարդ ծառայի հետ: Ես մտածում էի, եթե երբևիցե շրջապատված լինեմ չարի ուժերով, երբ Տիրոջ ծառայության մեջ լինեմ, հուսով եմ, որ Տերը կբացի աչքերս և կտա ինձ հավատք հասկանալու, որ երբ մենք Տիրոջ աշխատանքում ենք, նրանք ովքեր մեզ հետ են, միշտ ավելի հզոր են, քան նրանք, ովքեր դեմ են մեզ (in Conference Report, Oct. 1992, 54; or *Ensign,* Nov. 1992, 39):

- Ինչպե՞ս կարող է վստահությունը, որ «մեզ հետ եղողները շատ են, քան թե նրանց հետ եղողները» օգնել մեզ, երբ մենք տանենք ավետարանը բոլոր մարդկանց (Տես ՎԿՈՒ 84.87–88):

  Նախագահ Գորդոն Բ. Հինքլին ասել է. «Մենք դեռ չենք տարել ավետարանն ամեն ազգի, ցեղի, լեզվի ու ժողովրդի: Բայց մենք մեծ հաջողությունների ենք հասել: Մենք գնացել ենք, ուր մեզ թույլատրվել է գնալ: Աստված ղեկի մոտ է և կբացվեն դռներ Նրա զորությամբ, համաձայն Նրա աստվածային կամքի: Դրանում ես համոզված եմ: Դրանում ես վստահ եմ (in Conference Report, Oct. 1995, 93; or *Ensign,* Nov. 1995, 70–71):

- Ո՞րն էր Եղիսեի աղոթքն իր ծառայի համար (Տես Դ Թագավորաց Զ.17): Ինչո՞ւ սկզբում ծառան չէր տեսնում ձիերով և հրեղեն կառքերով լիքը սարը, որն ուղարկել էր Աստված: Ի՞նչ կարող ենք անել ավելի լիովին բացելու մեր աչքերը դեպի Աստծո զորությունը մեր իսկ կյանքում և աշխարհում:

Եզրափակում

Վկայեք, որ Եկեղեցու Նախագահը Աստծո մարգարեն է: Խրախուսեք դասարանի անդամներին հաստատել Եկեղեցու նոր ղեկավարներին և հետևել մարգարեների խորհրդին: Վկայեք, որ Աստծո զորությունն ավելի մեծ է, քան որևէ այլ զորություն:

Ուսուցման լրացուցիչ գաղափարներ

Հետևյալ նյութը լրացնում է առաջարկվող դասի ուրվագիծը: Գուցե ցանկանաք օգտագործել այն որպես դասի բաղկացուցիչ մաս:

1. Եղիսեի հրաշքները

Եղիսեն բազմաթիվ մեծ հաշքներ գործեց, ցույց տալով կարեկցանք ժողովրդի հանդեպ և տալով նոր ապացույցներ, որ նա Եղիայի լիազորված հաջորդողն էր: Նա բաժանեց Հորդանանի ջրերը, բժշկեց Երիքովի ջրերը, շատացրեց որբևայրու յուղը, մեռած տղային կենդանացրեց, բժշկեց մարդկանց, ովքեր թունավորվել էին, կերակրեց սովածներին, բժշկեց Նէեմանի բորոտությունը, երկաթին լողալ տվեց և թագավորներին առաջնորդեց պատերազմում: Գուցե կամենաք վերընթերցել այս հրաշքներից մի քանիսը Դ Թագավորաց Բ–Զ գլուխներում:

- Ի՞նչ եք կարծում, այսօր տեղի՞ են ունենում նմանատիպ հրաշքներ, ինչպիսիք տեղի էին ունենում Եղիսեի օրոք: Ո՞րն է միայն տպավորիչ հրաշքներ որոնելու վտանգը: Ինչպիսի՞ փոքր թվացող հրաշքներ են տեղի ունենում մեր կյանքում:

2. Մի Իսրայելացի երիտասարդ աղջիկ պատմեց Նէեմանին Եղիսեի մասին:

- Ինչպե՞ս Նէեմանն իմացավ Եղիսեի և նրա բժշկող զորությունների մասին (Տես Դ Թագավորաց Ե.2–4: Մի երիտասարդ Իսրայելացի աղջիկ, որին Ասորիները գերի էին վերցրել, պատմեց Նէեմանի կնոջը, որ Իսրայելում կար մարգարե, որը կարող էր բժշկել Նէեմանին): Ինչպե՞ս է այս Իսրայելացի աղջիկը օրինակ մեզ համար: (Անկախ մեր տարիքից, պայմաններից կամ եկեղեցական կոչումից, մենք կարող ենք շատ բարիք գործել՝ ուղղություն ցույց տալով մարդկանց դեպի մարգարեները և դեպի Տերը):

«Եկեք Տիրոջ Տունը»

Դաս
30

Բ Մնացորդաց ԻԹ–Լ, ԼԲ, ԼԴ

Նպատակ

Ոգեշնչել դասարանի յուրաքանչյուր անդամին ստանալ խոստացված օրհնությունները, որոնք գալիս են տաճարային աշխատանքից և սուրբ գրությունների ուսումնասիրությունից:

Նախապատրաստում

1. Աղոթքով ուսումնասիրեք հետևյալ սուրբ գրությունները.

   ա. Բ Մնացորդաց ԻԹ–Լ: Եզեկիան՝ Հուդայի թագավորը, բացում է տաճարի դռները և կարգադրում քահանաներին և Ղևտացիներին մաքրել և սրբագործել այն՝ երկրպագության համար (ԻԹ.1–19): Երբ տաճարը մաքրվում է, Եզեկիան և նրա ժողովուրդը երկրպագում են և փառաբանում Տիրոջը (ԻԹ.20–36): Եզեկիան հրավիրում է բոլոր Իսրայելացիներին գալ Տիրոջ տունը, որ Երուսաղեմում էր (Լ.1–9): Ոմանք ծիծաղում և ծաղրում են հրավերը, բայց Իսրայելի հավատարիմները երկրպագում են Տիրոջը Երուսաղեմում (Լ.10–27):

   բ. Բ Մնացորդաց ԼԲ.1–23: Սենեքերիմը՝ Ասորեստանի թագավորը, ներխուժում է Հուդա և վիրավորական ձևով խոսում Տիրոջ դեմ (ԼԲ.1–19): Եսայիան և Եզեկիան աղոթում են օգնության համար և մի հրեշտակ բնաջինջ է անում Ասորական բանակի մեծ մասին (ԼԲ.20–23):

   գ. Բ Մնացորդաց ԼԴ: Եզեկիայի որդին և թոռը կառավարում են ամբարշտությամբ, Եզեկիայի ծոռը՝ Հովսիան դառնում է Հուդայի թագավորը: Հովսիան ավերում է կուռքերը թագավորությունում և վերանորոգում է տաճարը (ԼԴ.1–13): Տաճարում գտնում են օրենքի գիրքը և կարդում Հովսիայի համար, որն արտասվում է, երբ իմանում է, թե որքան հեռու է ժողովուրդը գնացել օրենքից (ԼԴ.14–21): Ողդա մարգարեուհին ասում է Հուդայի վրա եկող ամայացման մասին, բայց մարգարեանում է, որ Հովսիան չպիտի ականատես լինի դրան (ԼԴ.22–28): Հովսիան և նրա մարդիկ ուխտում են ծառայել Տիրոջը (ԼԴ.29–33):

2. Լրացուցիչ ընթերցանություն՝ Բ Մնացորդաց ԼԱ, ԼԳ, Դ Թագավորաց ԺԸ–ԺԹ, ԻԲ–ԻԳ, Եսայիա ԼԷ.10–20, 33–38:

3. Եթե հետևյալ նկարները մատչելի են, օգտագործեք դրանք դասի ընթացքում. Հին դարերում օգտագործվող Տաճար (62300) և վերջին օրերի տաճարի նկար:

Առաջարկվող դասի զարգացում

Ուշադրության կենտրոնացման վարժություն

Օգտագործեք հետևյալ վարժությունը (կամ ձեր սեփականը) դասը սկսելու համար:

Բացատրեք, որ Երուսաղեմը Ասորիների հարձակումներից պաշտպանելու համար Եզեկիա թագավորը փոխեց Գեհոնի աղբյուրի ջրի հոսքը դեպի քաղաքի պատերի ներսում գտնվող Սիլոամի ավազանը՝ (Բ Մնացորդաց ԼԲ.2–4, 30): Սա արվեց կրաքարի ժայռի միջով մոտ 540 մետր երկարությամբ ջրի համար մի ջրանցք (կամ թունել) փորելով: Այնուհետև Եզեկիան հրամայեց, որ քաղաքից դուրս գտնվող աղբյուրները փակեն՝ ասորիներին թույլ չտալու հեշտությամբ ջրից օգտվել: Ասորեստանի կողմից պաշարման ժամանակ Երուսաղեմի ժողովուրդն իր գոյությունը չէր կարողանա պահպանել առանց քաղաքի պատերի ներսում այդ ջուրն ունենալու:

Նշեք, որ ճիշտ ինչպես Գեհոնի աղբյուրի ջուրը կենսական նշանակություն ուներ Եզեկիայի ժողովրդի ֆիզիկական գոյատևման համար ասորիների հետ նրանց պատերազմների ընթացքում, այնպես էլ կենդանի ջուրը կարևոր է մեր հոգևոր գոյատևման համար սատանայի հետ մեր պատերազմների ժամանակ:

- Ի՞նչ է կենդանի ջուրը (Տես Հովհաննես Դ.10–14):

  Երեց Բրյուս Ռ. Մակքոնկին բացատրել է, որ կենդանի ջուրը «հավերժական կյանքի խոսքերն են, փրկության ուղերձը, Աստծո և Նրա թագավորության մասին ճշմարտությունները, դա ավետարանի վարդապետություններն են» (*Doctrinal New Testament Commentary*, 3 vols. [1966–73], 1:151):

- Ինչպե՞ս կարող ենք ջրանցք բացել դեպի Տերը, որպեսզի կենդանի ջուրը կարողանա հոսել մեր կյանքի մեջ:

Բացատրեք, որ կենդանի ջուր ստանալու ուղիներից մեկը Տիրոջ տուն՝ տաճար գնալն է, որտեղ մենք կկարողանանք օժտվել զորությամբ և հասկացողությամբ, կկարողանանք հրահանգվել Տիրոջից և զգալ խաղաղություն և ուրախություն:

Նշեք, որ տաճարում երկրպագությունը Եզեկիայի ժամանակ Իսրայելացիների համար կարևոր պաշտպանություն էր և այն կարող է այսօր մեզ համար նույնպես կարևոր պաշտպանություն լինել:

Սուրբ գրության քննարկում և կիրառում

Երբ ուսուցանեք սուրբ գրության հետևյալ հատվածները, քննարկեք, թե ինչպես են դրանք վերաբերում ամենօրյա կյանքին: Խրախուսեք դասարանի անդամներին կիսվել փորձառություններով, որոնք կապված են սուրբգրքյան սկզբունքների հետ:

1. Եզեկիան հրամայում է մաքրել Տիրոջ տունը:

Ուսուցանեք և քննարկեք Բ Մնացորդաց ԻԹ–Լ:

- Եզեկիայի հայրը՝ Աքազը, ամբարիշտ թագավոր էր, որը սրբապղծել էր Տիրոջ տաճարը և «փակել [դրա] դռները» (Բ Մնացորդաց ԻԸ.24): Երբ Եզեկիան դարձավ Հուդայի (Հարավային Թագավորության) թագավոր 715 թվականին Ք.ծ.ա., առաջին բաներից մեկը, որ նա արեց, տաճարի դռները բացելն էր և քահանաներին ու Ղևտացիներին հրամայելը, որ մաքրեն այն և սրբագործեն (Բ Մնացորդաց ԻԹ.3–5): Ինչո՞ւ, ըստ Եզեկիայի, տաճարը պետք է սրբագործվեր (Տես Բ Մնացորդաց ԻԹ.6–7): Ինչպե՞ս մենք ինքներս նույնպես կարող ենք հանցավոր լինել «[մեր] երեսը Տիրոջ խորանիցը շրջելու» համար: Ի՞նչ պատահեց Հուդայի ժողովրդի հետ տաճարի հանդեպ իրենց անհարգալից լինելու պատճառով (Տես Բ Մնացորդաց ԻԹ.8–9):

- Ինչի՞ էր Եզեկիան ձգտում հասնել տաճարը մաքրելով և կրկին այն նախապատրաստելով երկրպագության համար (Տես Բ Մնացորդաց ԻԹ.10): Ինչո՞ւ է կարևոր անմաքուր բաները տաճարից դուրս պահել (Տես ՎԱՈՒ 97.15–17): Ո՞րն է մեր պարտականությունը հավաստիանալիս, որ անմաքուր որևէ բան տաճար չմտնի (Տես ՎԱՈՒ 109.20–21: Մենք պետք է համոզված լինենք, որ մենք մաքուր ենք, երբ գնում ենք տաճար):

- Ի՞նչ արեցին Եզեկիան և Երուսաղեմի ժողովուրդը, երբ տաճարը մաքրվեց (Տես Բ Մնացորդաց ԻԹ.20–21, 29–31, 36): Ո՞ւմ Եզեկիան հրավիրեց Տիրոջ տուն Զատիկը տոնելու համար (Տես Բ Մնացորդաց Լ.1, 6): Ինչպե՞ս ընդունվեց այդ հրավերը (Տես Բ Մնացորդաց Լ.10–11):

- Ի՞նչ օրհնությունից հրաժարվեց Իսրայելը՝ մերժելով տաճար գալ (Տես Բ Մնացորդաց Լ.6–9: Բացատրեք, որ մինչև Եզեկիայի թագավորումը Իսրայելի թագավորության մեծ մասը [Հյուսիսային Թագավորության] գերի էին տարվել ասորեստանցիների կողմից):

Եզեկիան խոստացել էր մնացած Իսրայելացիներին, որ եթե նրանք «դառնային դեպի Տերը» գերյալները կարձակվեին: Փոխարենը Իսրայելի ժողովրդի մեծ մասը մերժեց Եզեկիայի հրավերը: Ժողովրդի ամբարշտության պատճառով Իսրայելի թագավորության մնացած մասը մի քանի տարի անց գերի տարվեց [Դ Թագավորաց ԺԸ.10–12]: Գերի տարված Իսրայելացիները դարձան կորած տասը ցեղերը):

2. Ասորիները ներխուժում են Հուդայի թագավորություն: Եսայիան և Եզեկիան աղոթում են օգնության համար և Տիրոջ հրեշտակը կործանում է Ասորական բանակի մեծ մասին:

Ուսուցանեք և քննարկեք Բ Մնացորդաց ԼԲ.1–23:

- Իսրայելի թագավորությունը գերի տարվելուց հետո ասորիները սկսեցին հարձակվել Հուդայի թագավորության վրա (Բ Մնացորդաց ԼԲ.1): Ի՞նչ արեց Եզեկիան, երբ տեսավ, որ Սենեքերիմի բանակը ծրագրում էր հարձակվել Երուսաղեմի վրա (Տես Բ Մնացորդաց ԼԲ.2–5): Պատերազմի համար նախապատրաստվելուց հետո, ի՞նչ ասաց Եզեկիան իր ժողովրդին՝ հարձակմանը դիմադրելու մասին (Տես Բ Մնացորդաց ԼԲ.6–8): Ի՞նչ կարող ենք սովորել Եզեկիայից մեր սեփական ջանքերին վստահելու և Տիրոջը ապավինելու միջև մեր ջանքերի մասին:
- Սենեքերիմն իր ծառաներին ուղարկեց խոսելու Երուսաղեմի ժողովրդի հետ: Ի՞նչ ասացին ծառաները (Տես Բ Մնացորդաց ԼԲ.9–17): Ինչո՞ւ նրանք ասացին այդ բաները (Տես Բ Մնացորդաց ԼԲ.18): Ինչպե՞ս սատանան կարող է փորձել համոզել մեզ, որ Աստված չի կարող կամ չի կամենա օգնել մեզ:
- Ինչպե՞ս Եզեկիան և Եսայիա մարգարեն արձագանքեցին Սենեքերիմի ծառայի խոսքերին (Տես Բ Մնացորդաց ԼԲ.20, Եսայիա ԼԷ.14–20): Ինչպե՞ս Տերը պատասխանեց Եզեկիայի և Եսայիայի աղոթքներին (Տես Բ Մնացորդաց ԼԲ.21–22. Եսայիա ԼԷ.33–38):
- Եզեկիան և նրա ժողովուրդն իրենց արդարակեցության շնորհիվ ստացան Տիրոջ պաշտպանությունը, որը դրսևորվեց տաճարում նրանց երկրպագության միջոցով: Ինչպե՞ս կարող է տաճար հաճախելը պաշտպանություն լինել մեզ համար (Տես ՎԱՈՒ 109.24–28): Ի՞նչ կարող ենք անել որպեսզի տաճարին արժանի լինելը և տաճար հաճախելն առաջնահերթություն դառնան մեր կյանքում:

  Նախագահ Հովարդ Վ. Հանթերը հորդորել է.

  «Եկեք տաճար հաճախող ժողովուրդ լինենք: Այցելեք տաճար այնքան հաճախ, որքան թույլ կտան անձնական պայմանները: Պահեք տաճարի մի նկար ձեր տանը, որ ձեր երեխաները տեսնեն այն: Ուսուցանեք նրանց Տիրոջ տան նպատակների մասին: Հանձնարարեք նրանց ծրագրել իրենց ամենավաղ հասակից գնալ այնտեղ և արժանի մնալ այդ օրհնությանը:

  Եթե տաճարի հեռավորությունը թույլ չի տալիս հաճախ այցելել, հավաքեք ձեր ընտանիքի պատմությունը և պատրաստեք անուններն այն սրբազան արարողությունների համար, որոնք կատարվում են միայն տաճարներում: Ընտանեկան այս հետազոտությունը խիստ կարևոր է տաճարային աշխատանքի համար և օրհնություններն անշուշտ կգան նրանց, ովքեր անում են այդ աշխատանքը (in Conference Report, Oct. 1994, 8; or *Ensign*, Nov. 1994, 8):

3. Հովսիան և նրա ժողովուրդն ուխտում են ծառայել Տիրոջը:

Ուսուցանեք և քննարկեք Բ Մնացորդաց ԼԴ:

Եզեկիային որպես թագավոր հաջորդեցին իր որդին՝ Մանասեն և նրա թոռը՝ Ամոնը (Բ Մնացորդաց ԼԳ): Մանասեն ամբարշտությամբ կառավարեց Հուդան՝ դնելով կուռքեր տաճարում և առաջնորդելով ժողովրդին ի մեղք: Մանասեն վերջում, այնուամենայնիվ, խոնարհեցրեց իրեն և ապաշխարեց իր մահից առաջ: Ամոնը չապաշխարեց և նա սպանվեց իր իսկ ծառաների կողմից: Ամոնի որդին Հովսիան դարձվեց Հուդայի թագավոր, երբ ութ տարեկան էր: Նա դարձավ արդար թագավոր, որը հրաժարվեց իր հոր և պապի ամբարիշտ ուղիներից:

- Ինչպիսի՞ անձնավորություն էր թագավոր Հովսիան (Տես Բ Մնացորդաց ԼԴ.1–2, Դ Թագավորաց ԻԳ.25: Նշեք, որ Բ Մնացորդաց ԼԴ հատվածում հիշատակվող Դավիթը, Հովսիայի նախապապն էր, ոչ թե նրա բառացի հայրը):
- Ի՞նչ լավ գործեր կատարեց Հովսիան որպես թագավոր իր թագավորման վաղ շրջանում (Տես Բ Մնացորդաց ԼԴ.3–8: Նա որոնեց ճշմարիտ Աստծուն, թագավորությունում վերացրեց կռապաշտությունը և ուղարկեց մարդկանց՝ վերանորոգելու տաճարը: Նշեք որ Հովսիան ընդամենը 15 կամ 16 տարեկան էր, երբ սկսեց կատարել այս կարևոր փոփոխությունները):
- Ի՞նչ կարևոր հայտնագործություն կատարեց Քեղկիան՝ քահանայապետը, տաճարի վերանորոգման ժամանակ (Տես Բ Մնացորդաց ԼԴ.14: Նա գտավ Տիրոջ օրենքի գիրքը կամ սուրբ գրությունները: Նշեք, որ մինչև Հուդայի պատմության այդ ժամանակահատվածը, գրված օրենքն ըստ երևույթին կորել էր և փաստորեն անհայտ էր): Ինչպե՞ս վարվեց Հովսիան, երբ օրենքի գիրքը կարդացվեց նրա համար (Տես Բ Մնացորդաց ԼԴ.19: Նշեք որ հին Իսրայելում սովորույթ էր պատռել կամ ճղոտել հագուստները՝ ցույց տալու մեծ սուգ կամ վիշտ): Ինչո՞ւ էր Հովսիան այդքան վշտացած, լսելով այն, ինչ օրենքի գիրքն էր պարունակում (Տես Բ Մնացորդաց ԼԴ.21):
- Ի՞նչ ասաց Ողդա մարգարեուհին Հուդայի հետ պատահելիք բաների մասին, որովհետև մարդիկ ձախողվել էին պահել Տիրոջ խոսքը և անել այն, ինչ սուրբ գրություններն էին սովորեցնում (Տես Բ Մնացորդաց ԼԴ.22–25): Ի՞նչ կպատահի մեզ, եթե մենք աչքաթող անենք սուրբ գրությունները կարդալը և դրանց ուսմունքները կիրառելը:

  Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոնը նկարագրել է մեր սուրբ գրություններից մեկը՝ Մորմոնի Գիրքն անտեսելու վտանգները.

  «1829 թվականին Տերը նախազգուշացրեց Սրբերին, որ նրանք թեթևամտորեն չպիտի վերաբերվեն սրբազան բաների հետ, և այնուամենայնիվ, շատերն են անլուրջ կամ այլ կերպ ասած, թեթևամտորեն վերաբերվում դրան, որպես քիչ կարևորություն ունեցող բան համարում այն:

  1832 թվականին, երբ առաջին միսիոներներից մի քանիսը վերադարձան իրենց գործունեության դաշտից, Տերը նրանց նախատեց Մորմոնի Գրքին թեթևամտորեն վերաբերվելու համար: Որպես այդ վերաբերմունքի արդյունք, ասաց նա, նրանց մտքերը խավարվել են: Այս սուրբ գրքին թեթևամտորեն վերաբերվելը ոչ միայն լույսի կորուստ է բերել իրենց, այլ նաև այն ողջ Եկեղեցին է բերել դատապարտության տակ, նույնիսկ Սիոնի բոլոր զավակներին: Իսկ հետո Տերն ասել է. «Եվ նրանք պետք է մնան այդ դատապարտության տակ, մինչև որ ապաշխարեն և հիշեն նոր ուխտը, այսինքն՝ Մորմոնի Գիրքը» (ՎԿՈՒ 84.54–57)….

  Եթե առաջին Սրբերը նախատվեցին Մորմոնի Գրքին թեթևորեն վերաբերվելու համար, միթե՞ մենք նվազ դատապարտության տակ կլինենք, եթե մենք նույնն անենք» (in Conference Report, Oct. 1986, 3–4; or *Ensign*, Nov. 1986, 4–5):

- Ի՞նչ ասաց Ողդան, որ պիտի պատահեր Հովսիայի հետ (Տես Բ Մնացորդաց ԼԴ.26, 28: Այս խոստման իրականացումը նկարագրվում է Բ Մնացորդաց ԼԵ.20–24 հատվածներում): Ինչո՞ւ Տերն այս խոստումը տվեց Հովսիային (Տես Բ Մնացորդաց ԼԴ.27):
- Հետո, երբ Հովսիան պարզեց, որ իր ժողովուրդը դատապարտվելու է, որովհետև նրանք չէին արել այնպես, ինչպես սուրբ գրություններն էին պատվիրում, նա կանչեց բոլոր մարդկանց տաճար և նրանց համար կարդաց սուրբ գրությունները (Բ Մնացորդաց ԼԴ.29–30): Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ նա այդ արեց: (Ժողովուրդը չէր կարող հետևել Աստծո օրենքներին, եթե նրանք դրանք չիմանային: Ինչպե՞ս կարող են ծնողները հետևել Հովսիայի օրինակին և սովորեցնել իրենց երեխաներին ավետարանի օրենքները: (Տես ՎԱՈՒ 68.25, 28):
- Ինչպե՞ս կարող ենք ցույց տալ այն կարևորությունը, որ մենք դնում ենք սուրբ գրությունների վրա: Նշեք, որ մենք ունենք ավելի շատ սուրբ գրություններ, քան Իսրայելացիները և սուրբ գրությունները մեզ համար ավելի մատչելի են: Ի՞նչ պատասխանատվություն ունենք մենք այդ օրհնությունների շնորհիվ:

  Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալն ասել է. «Տերը չի կատակում մեզ հետ, երբ նա մեզ տալիս է այս բաները, քանզի «այն ամենին որ շատ տրվեց՝ նրանից շատ կուզվի» (Ղուկաս ԺԲ.48): Այս բաների հետ առնչություն ունենալը նշանակում է պատասխանատվություն կրել դրանց համար: Մենք պետք է ուսումնասիրենք սուրբ գրությունները Տիրոջ պատվիրանների համաձայն (տես 3 Նեփի 23.1–5), և մենք պետք է թույլ տանք, որ դրանք կառավարեն մեր կյանքը» (“How Rare a Possession–the Scriptures!” *Ensign*, Sept. 1976, 5):
- Մինչ Հովսիան և նրա մարդիկ տաճարում էին, նրանք ուխտ կապեցին Տիրոջ հետ: Ի՞նչ ուխտեցին նրանք անել (Տես Բ Մնացորդաց ԼԴ.31–33): Բացատրեք, որ տաճարում մենք սրբազան ուխտեր ենք կապում Տիրոջ հետ, որոնց կատարումը կբերի մեզ երկրային օրհնություններ և հավերժական վեհացում: Ինչպե՞ս կարող ենք մենք պատրաստվել տաճարային սրբազան ուխտեր կապելուն: Երբ մենք կապում ենք այս ուխտերը, ինչո՞ւ է կարևոր, որ մենք որքան հնարավոր է հաճախ վերադառնանք տաճար:

Եզրափակում

Բացատրեք, որ Հուդայի թագավորության ժողովուրդը վերջում այնքան ամբարիշտ դարձավ, որ Տերը թույլ տվեց նրանց գերի տարվել (Բ Մնացորդաց ԼԶ.14–21): Այնուամենայնիվ, Եզեկիան և Հովսիան իրենց թագավորման ընթացքում ձգտում էին զորացնել ժողովրդին, նրանց ուշադրությունը հրավիրելով տաճարի և սուրբ գրությունների վրա: Վկայեք, որ երբ մենք կենտրոնացնում ենք մեր ուշադրությունը Տիրոջ պատվիրաններին հնազանդվելու վրա և արժանի լինում տաճար մտնելու, մենք կօրհնվենք հոգևոր ուժով և ուրախությամբ: Խրախուսեք դասարանի անդամներին վայելել տաճարի օրհնությունները՝ արժանի ապրելով և որքան հնարավոր է հաճախ այցելելով այնտեղ:

Ուսուցման լրացուցիչ գաղափարներ

Հետևյալ նյութը լրացնում է առաջարկվող դասի ուրվագիծը: Օգտագործեք այդ գաղափարներից մեկը կամ մի քանիսը որպես դասի բաղկացուցիչ մաս:

1. «Վարկային քարտ Տիրոջ հետ»

Այս դասն ուսուցանելուց մեկ շաբաթ առաջ, խնդրեք դասարանի որևէ անդամի ծանոթանալ Նախագահ Գորդոն Բ. Հինքլիի ելույթի հետևյալ հատվածին և պատրաստ լինել կիսվել դրանով դասարանի հետ:

«Ես ձեր առաջ երկու վարկային քարտ եմ բռնել: Ձեզանից շատերը ծանոթ են այսպիսի քարտերի հետ:

Առաջինը բանկի վարկային քարտ է: Այն ինձ թույլ է տալիս վարկով առևտուր անել և հետո, մի օր, վճարել իմ գնումների համար: Այն արժեքավոր բան է և մի բան, որը պետք է ապահով պահել: Եթե այն գողանան կամ անազնիվ օգտագործեն, այն կարող է մեծ կորուստ և, հավանաբար, բավականին անհանգստություն պատճառել ինձ: Այն իմ բանկից ստանալու ժամանակ ես համաձայնվեցի կատարել այն պահանջները, ըստ որի ինձ այն տրվել է:

Այն տրվել է ընդամենը մեկ տարով և այն ամեն տարի պետք է նորից տրվի, եթե ես կամենում եմ օգտվել այն արտոնություններից, որ այն ընձեռում է: Այն իրականում իմը չէ: Բանկին է պատկանում դրա տնօրինությունը: Եթե ես թերանամ պահանջները կատարելիս, այդ դեպքում բանկը կարող է փակել վարկը և ետ պահանջել քարտը:

Մյուս քարտը, որը ես ունեմ, այն է, ինչ մենք կոչում ենք տաճարային երաշխավորագիր: Այն իրենից ներկայացնում է վարկային քարտ Տիրոջ հետ՝ ինձ համար մատչելի դարձնելով Նրա մեծագույն շնորհները: Բանկային քարտը վերաբերում է աշխարհիկ բաներին, երաշխավորագիրը՝ Աստծո բաներին:

Տաճարային երաշխավորագիրն ապահովելու համար, ստացողը պետք է նաև դրսևորի իր արժանավորությունը, իսկ այդ արժանավորությունը հիմնված է անձնական արժանիքների վրա: Երբ այն շնորհվում է մեկ անգամ, այն չի տրվում հավերժ, այլ պետք է նորից տրվի ամեն տարի: Հետագայում, այն կարող է կորստի առարկա լինել, եթե երաշխավորագրի տերն անի որևէ բան, որը կորակազրկի նրան, զրկելով դրա արտոնությունից:

Տաճարային երաշխավորագրի համար արժանավորությունը հիմնված չէ ֆինանսական արժանավորության վրա: Այն ոչ մի ընդհանուր բան չունի դրա հետ: Այն հիմնված է անձնական հետևողական վարքի, մարդու կյանքի բարոյականության վրա: Այն կապված չէ փողային հարցերի հետ, այլ ավելի շուտ՝ հավերժության բաների հետ:

Բանկային քարտը բացում է դռները դեպի ֆինանսական վարկ: Տաճարային երաշխավորագիրը բացում է դուռը դեպի Տիրոջ Տունը: Այն կապված է սուրբ տեղեր մտնելու՝ սրբազան և աստվածային աշխատանք կատարելու հետ…

….Այս երաշխավորագիրը, որը ես ունեմ և որը ձեզանից այնքան շատերն ունեն, թանկագին և հրաշալի բան է: Այն մարդուն բացառիկ և նշանավոր արտոնության իրավունք է տալիս՝ արտոնություն մտնելու Տունը, որն ասում է իր պատերի վրա «Սրբություն Տիրոջը՝ Տիրոջ Տունը»: Ապրեք արժանի ծառայելու այդ տանը: Պահեք այն սուրբ: Արեք ձեր պարտականությունը Տիրոջ տունը որևէ անմաքուր կամ պղծող ազդեցությունից կամ անձնավորությունից պահպանելու համար: Վայելեք նրա գեղեցկությունը: Վայելեք այն բոլոր արարողությունների գեղեցկությունն ու հրաշքի օրհնությունը, որոնք այնտեղ սպասավորվում են, որոնց մասին խոսվում է այնտեղ:

Նրանց, ովքեր դեռ չեն եղել տաճարում, կարո՞ղ եմ առաջարկել, որ դուք օգտվեք մահացածների համար մկրտվելու արտոնությունից: Իսկ հետո թող այդ սուրբ փորձառությունը խարիսխ դառնա ձեր կյանքի համար, որ դուք ձեզ այնպես պահեք ամեն ժամանակ և բոլոր հանգամանքներում, որպեսզի պատշաճ ժամանակ կարողանաք ձեռք բերել հատուկ և սահմանափակ վարկի քարտ Տիրոջ հետ, այսինքն՝ երաշխավորագիր Նրա սուրբ տան համար, այնտեղ վայելելու բոլոր դրա օրհնություններն ու արտոնությունները»
(in Conference Report, Apr. 1990, 65, 69; or *Ensign*, May 1990, 49, 52):

2. Տաճարների նպատակները

Բերեք վերջին օրերի տաճարների մի քանի նկարներ (եթե հնարավոր է՝ մի քանի ճարտարապետական ոճերի): Նշեք, որ չնայած այս տաճարներն արտաքուստ կարող են տարբեր երևալ, դրանց ներսում կատարվող արարողություններն ու կապվող ուխտերը նույնն են:

Բացատրեք, որ չնայած հնադարյան Իսրայելի տաճարներում որոշ գործողություններ տարբեր էին նրանցից, ինչ մենք անում ենք վերջին օրերի տաճարներում (օրինակ՝ մենք չենք զոհաբերում կենդանիներ կամ մոմեր և խունկ չենք վառում վերջին օրերի տաճարներում), հնադարյան տաճարների և վերջին օրերի տաճարների նպատակը նույնն է՝ նախապատրաստվել գալ Տիրոջ ներկայության մեջ և լինել նրա նման:

Ձեզ գուցե անհրաժեշտ լինի ցուցադրել «Հնադարյան Տաճարներ» ինը րոպեանոց հատվածը *Հին Կտակարանի Տեսանյութերից* (53224), որոնք նկարագրում են Մովսեսի խորանը և որոշ գործողություններ, որոնք կատարվում էին այնտեղ:

3. Սուրբ գրությունների ուսումնասիրություն

- Ինչո՞ւ ենք մենք երբեմն դժվարության հանդիպում սուրբ գրություններն ուսումնասիրելիս:

Գրատախտակի վրա մի սյունակում գրի առեք դասարանի անդամների պատասխանները: Այնուհետև քննարկեք ուղիներ, որոնցով կարող ենք հաղթահարել այդ դժվարությունները: Օրինակ, եթե չենք հասկանում, թե ինչ ենք կարդում, մենք կարող ենք աղոթել՝ հասկանալու համար և ուսումնասիրել այն, ինչ մարգարեներն ու առաքյալներն են ասել այն հատվածների վերաբերյալ, որոնք մենք կարդում ենք, եթե մենք շատ քնատ ենք գիշերը՝ սուրբ գրությունները կարդալու համար, մենք կարող ենք այլ ժամանակ գտնել օրվա ընթացքում կարդալու համար: Այս լուծումները գրի առեք գրատախտակի վրա մեկ այլ սյունակում:

Կոչ արեք դասարանի անդամներին ավելի նվիված լինել սուրբ գրությունների իրենց ուսումնասիրությանը:

Դաս
31

«Երանի այն մարդին, որ իմաստություն է գտել»

Առակաց և Ժողովող

Նպատակ

Ոգեշնչեք դասարանի անդամներին ավելի նմանվել Քրիստոսին՝ կիրառելով Առակաց և Ժողովող գրքերի իմաստուն խորհուրդները:

Նախապատրաստում

1. Աղոթքով ուսումնասիրեք սուրբ գրությունները, որոնք քննարկվում են դասի ուրվագծում և այնքան շատ Առակաց և Ժողովող գրքերից, որքան կարող եք:
2. Եթե օգտագործելու եք ուշադրության առաջին վարժությունը, գրեք հետևյալ նախադասությունները դասարանում պաստառի կամ գրատախտակի վրա:

   ա. Կորուստից առաջ գնում է _____ :
   բ. Կրթիր _____ իր ճանապարհին համեմատ:
   գ. Ամեն բանի համար _____ կա, և _____ երկնքի տակի բոլոր ձեռնարկության:
   դ. Տիրոջն _____ քո բոլոր սրտովը:
   ե. _____ _____ կհանգստացնե բարկությունը:
   զ. Որովհետև նա ինչպես որ իր սրտումը _____ այնպես է:

   Եթե օգտագործելու եք ուշադրության երկրորդ վարժությունը, խնդրեք մեկ կամ երկու դասարանի անդամների նախապատրաստվել կիսվելու մի սիրելի հատվածով Առակաց կամ Ժողովող գրքերից և ասել, թե ինչու է այն կարևոր նրանց համար:
3. Եթե *Հին Կտակարանի Տեսանյութերը* (53224) մատչելի են, դուք կարող եք ցուցադրել «Տիրոջն ապավինելով» հինգ րոպեանոց հատվածը, որպես դասի բաղկացուցիչ մաս:

Առաջարկվող դասի զարգացում

Ուշադրության կենտրոնացման վարժություն

Օգտագործեք հետևյալ վարժություններից մեկը (կամ ձեր սեփականը) դասը սկսելու համար: Ընտրեք վարժությունը, որն ամենահարմարը կլինի դասարանի համար:

1. Դասարանի անդամներին մեջ բերեք պաստառի կամ գրատախտակի վրա ձեր գրած նախադասությունները (տես «Նախապատրաստում» վերում): Բացատրեք, որ սրանք հանրաճանաչ մտքեր են Առակաց և Ժողովող գրքերից և խնդրեք դասարանի անդամներին լրացնել բաց թողված բառերը: Եթե անհրաժեշտ է, տվեք հետևյալ մեջբերումները, որպեսզի դասարանի անդամները կարողանան նայել սուրբ գրությունները՝ գտնելու այն խոսքերը, որոնք նրանք չգիտեն:

   ա. Առակաց ԺԶ.18 (հպարտություն)
   բ. Առակաց ԻԲ.6 (երեխա)
   գ. Ժողովող Գ.1 (ժամանակ)
   դ. Առակաց Գ.5 (ապավինել)
   ե. Առակաց ԺԵ.1 (մեղմ պատասխան)
   զ. Առակաց ԻԳ.7 (հաշիվներ անող)
2. Խնդրեք մեկ կամ երկու հանձնարարված դասարանի անդամի կիսվել Առակաց և Ժողովող գրքերից որևէ սիրելի հատվածով և ասել, թե ինչու է այն կարևոր նրանց համար:

Սուրբ գրության քննարկում և կիրառում

Երբ սովորեցնեք սուրբ գրության հետևյալ հատվածները, քննարկեք, թե ինչպես են դրանք վերաբերում ամենօրյա կյանքին: Խրախուսեք դասարանի անդամներին կիսվել փորձառություններով, որոնք կապված են սուրբգրքյան սկզբունքների հետ: Քանի որ դժվար կլինի հարցնել յուրաքանչյուր հարց կամ ընդգրկել դասի յուրաքանչյուր կետ, աղոթքով ընտրեք նրանք, որոնք լավագույնս կբավարարեն դասարանի անդամների կարիքները: Համապատասխանեցրեք որոշ հարցեր՝ հարամարեցնելով դասարանի անդամների կարիքներին:

Առակները կարճ ասացվածքներ են, որոնք սովորաբար խորհուրդ են տալիս արդար ապրելու մասին: Հին կտակարանն արձանագրել է, որ Սողոմոնը «երեք հազար առակ խոսեց» (Գ Թագավորաց Դ.32): Այս իմաստուն ասացվածքներն ընդգրկված են Առակաց գրքում: Չնայած Սողոմոնը և այս գրքի մյուս հեղինակները մարգարեներ չէին, նրանց գրվածքների մեծ մասը ոգեշնչված էր Տիրոջ կողմից: Նրանց գրվածքներն ընդհանրապես արտահայտում են հավատք, որ ճշմարիտ իմաստությունը գալիս է Աստծուց:

Ժողովողի գիրքը նույնպես պարունակում է իմաստուն ասացվածքներ և որոշ մարդիկ հավատում են, որ դրանց հեղինակը Սողոմոնն է: Ժողովողի ուղերձն այն է, որ կյանքն իմաստալի է միայն Աստծո միջոցով:

Այս դասը բաժանվում է յոթ բաժինների, որոնք կենտրոնանում են Առակների և Ժողովողի գրքերում գտնվող կարևոր թեմաների վրա: Ձեր անձնական ուսումնասիրության ընթացքում դուք հնարավոր է գտնեք այլ թեմաներ, որոնք կկամենաք քննարկել դասարանում:

1. Իմաստություն

Ուսուցանեք և քննարկեք Առակաց և Ժողովող գրքերից հետևյալ հատվածները:

- Առակաց և Ժողովող գրքերը շեշտում են իմաստության կարևորությունը: Ի՞նչ՞ տարբեր-տարբերություն կա կրթված և իմաստուն լինելու միջև: (Տես Առակաց Ա.7, Թ.9–10, 2 Նեփի 9.28–29: Նշեք, որ աստվածաշնչյան լեզվով, Տիրոջից վախենալ նշանակում է Նրա հանդեպ պատկառանք ունենալ և հնազանդվել Նրան: Բացատրեք, որ իմաստությունն ավելին է, քան գիտելիքը, դա գիտելիքի ճիշտ կիրառումն է: Իսրայելացիների համար իմաստությունը նշանակում էր հնազանդություն Աստծո օրենքներին):
- Ի՞նչ կարող ենք սովորել Առակաց Բ.2–6 հատվածներից այն մասին, թե ինչպես ձեռք բերել Աստծո գիտությունը: Ինչո՞ւ եք կարծում, թե ջանասիրություն է պահանջվում այդ գիտությունը ձեռք բերելու համար:
- Ինչպե՞ս է իմաստության արժեքը համեմատվում աշխարհիկ գանձերի արժեքի հետ (Տես Առակաց Գ.13–18, Ժողովող Է.12: Նշեք, որ *նա* և *նրա* բառերը Առակաց Գ.15–18 հատվածներում վերաբերում է իմաստությանը): Ինչպե՞ս է իմաստությունը երջանկություն և խաղաղություն բերում:
- Առակաց Գ.18 հատվածն ասում է, որ իմաստությունը «կենաց ծառ է» նրանց համար, ովքեր ունեն այն: Ի՞նչ կարող է այս խորհրդանիշը սովորեցնել մեզ իմաստության արժեքի մասին (Տես 1 Նեփի 11.8–11, 21–25, նշելով, որ կենաց ծառը Աստծո սիրո մի խորհրդանիշ է):
- Իմաստուն մարդկանց ինչպիսի հատկանիշներ են նշվում Առակաց Թ.9–10 և ԺԵ.31–33 հատվածներում: Ինչո՞ւ են այս հատկանիշներն անհրաժեշտ իմաստություն ձեռք բերելու համար:

2. Տիրոջն ապավինելը

Ուսուցանեք և քննարկեք Առակաց Գ.5–7 հատվածները:

- Ի՞նչ խորհուրդ է տրվում Առակաց Գ.5–7 հատվածներում: Ինչպե՞ս է Տերն ուղղում մեր ճանապարհները: Ի՞նչ փորձառություններ են սովորեցրել ձեզ ապավինել Տիրոջը:
- Ի՞նչ է նշանակում ճանաչել Աստծուն (Տես Առակաց Գ.6, Ալմա 34.38, ՎԼՈՒ 59.21): Ինչպե՞ս ենք մենք օրհնվում, երբ ճանաչում ենք Նրան:

3. Խոսքերը, որ խոսում ենք մենք

Ուսուցանեք և քննարկեք հետևյալ հատվածներն Առակաց գրքից:

- Առակաց Զ.16–19 հատվածները նշում են յոթ բան, որ Տերն ատում է: Այդ բաներից երեքը՝ սուտ խոսելը, կեղծ վկայություն տալը և կռիվներ գցելը վերաբերում են այն խոսքերին, որ մենք խոսում ենք (Տես Առակաց ԺԶ.27–28, ԺԸ.8, ԻԵ.18, Մատթեոս ԺԲ.36–37): Ինչպե՞ս կարող ենք հաղթահարել ուրիշների մասին սուտ խոսելու, բամբասելու կամ բացասաբար խոսելու խնդիրները:
- Առակաց ԺԶ.24 հատվածն ասում է, որ «մեղրի խորիսխ է վայելուչ խոսքը, քաղցր է հոգիին»: Ինչպե՞ս է այն ճշմարիտ: Որո՞նք են բարությամբ խոսելու արդյունքը (Տես Առակաց ԺԲ.25, ԺԵ.1, ԺԶ.24): Ինչպե՞ս են ձեզ օգնել ուրիշների բարի խոսքերը:
- Ինչպե՞ս է օգնում մեղմ խոսելը, երբ հակաճառություն է բարձրանում (Տես Առակաց ԺԵ.1):

  Երեց Գորդոն Բ. Հինքլին ասել է. «Մենք հազվադեպ ենք նեղության մեջ ընկնում, երբ մեղմ ենք խոսում: Միայն մեր ձայները բարձրացնելիս է, որ կայծեր են թռչում և փոքրիկ բլրակները դառնում են հակառակության մեծ լեռներ» (in Conference Report, Apr. 1971, 82; or *Ensign,* June 1971, 72):

4. Հպարտություն

Ուսուցանեք և քննարկեք Առակաց Ը.13, ԺԳ.10, ԺԶ.18–19:

- Առակաց Ը.13-ը նշում է, որ Տերն ատում է հպարտությունը: Ինչո՞ւ է հպարտությունն այդպիսի լուրջ մեղք:

  Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոնն ասել է.

  «Հպարտության հիմնական բնորոշիչ հատկանիշը թշնամանքն է՝ թշնամանք Աստծո և մերձավորի հանդեպ: *Թշնամանք* նշանակում է «ատելություն, ոխ ունենալ կամ ընդդիմության վիճակում լինել»: Դա այն ուժն է, որով սատանան ցանկանում է իշխել մեզ վրա:

  Հպարտությունը հիմնականում մրցակցական է իր էությամբ: Մենք հակադրում ենք մեր կամքն՝ ընդդեմ Աստծո: Երբ մենք ուղղում ենք մեր հպարտությունը դեպի Աստված, ապա այն հետևյալ ոգով է. «Իմ կամքը թող կատարվի, ոչ թե քո»: Ինչպես Պողոսն է ասել, «….ամենքն իրանց բաներն են որոնում և ոչ թե Հիսուս Քրիստոսինը» (Փիլիպպեցիս Բ.21):

  Մեր կամքի մրցակցությունը Աստծո կամքի հետ, թույլ է տալիս ցանկությունների, ախորժակների և կրքերի անսանձ ընթացք (տես Ալմա 38.12, 3 Նեփի 12.30):

  Հպարտները չեն կարող ընդունել Աստծո հեղինակությունը՝ իրենց կյանքին ուղղություն տալիս (Տես Հելաման 12.6): Նրանք հակադրում են ճշմարտության իրենց զգայական ընկալումը Աստծո մեծ իմացության դեմ, իրենց ունակություններն՝ ի հակադրություն Աստծո քահանայության զորությանը, իրենց ձեռքբերումներն՝ ընդդեմ Նրա հզոր գործերի:

  Աստծո հանդեպ մեր թշնամանքն ունի բազմաթիվ պիտակներ, ինչպիսիք են՝ ապստամբ, կարծրասիրտ, խստապարանոց, չապաշխարող, փքված, հեշտ վիրավորվող

և նշաններ որոնող: Հպարտները ցանկանում են, որ Աստված համաձայնվի իրենց հետ: Նրանք չեն ցանկանում փոխել իրենց կարծիքը՝ համաձայնվելու Աստծո հետ….

Հպարտությունն անիծյալ մեղք է բառի բուն իմաստով. Այն սահմանափակում կամ կանգնեցնում է առաջընթացը (տես Ալմա 12.10–11): Հպարտներին հեշտ չէ ուսուցանելը (տես 1 Նեփի 15.3, 7–11): Նրանք չեն կամենում փոխել իրենց կարծիքը, որպեսզի ընդունեն ճշմարտությունը, որովհետև այդպես վարվելը կնշանակեր, որ իրենք սխալ են եղել» (in Conference Report, Apr. 1989, 3–5; or *Ensign*, May 1989, 4, 6):

- Առակաց ԺԳ.10 և ԺԶ.18 հատվածները սովորեցնում են, որ հպարտությունը տանում է դեպի հակառակության և կործանման: Ինչպե՞ս կարող է հպարտությունն անել այս: Ինչպե՞ս է հպարտությունն ազդում մեր ընտանիքների վրա:

  Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոնն ասել է.

  «Հպարտության մեկ այլ արտահայտություն է հակառակությունը: Վեճերը, կռիվները, անարդար իշխանությունը, տարակարծության ճեղքվածքը սերունդների միջև, ամուսնալուծությունները, կողակցի հանդեպ բռնությունը, անկարգություններն ու խռովությունները,– բոլորը մտնում են հպարտության այս որակման մեջ:

  Մեր ընտանիքներում հակառակությունը հեռու է վանում Տիրոջ Հոգին: Այն նաև հեռու է վանում մեր ընտանիքի անդամներից շատերին….

  Հպարտությունը բացասաբար է ազդում բոլոր մեր հարաբերությունների վրա՝ Աստծո և Նրա ծառաների հետ մեր հարաբերությունների, ամուսնու և կնոջ, ծնողի և երեխայի փոխհարաբերության վրա» (in Conference Report, Apr. 1989, 5; or *Ensign*, May 1989, 6):

- Ինչպե՞ս կարող ենք հաղթահարել հպարտությունը (Տես Առակաց ԺԶ.19): Ի՞նչ կարող ենք անել մեր ընտանիքի անդամների և Աստծո հետ մեր հարաբերություններում ավելի խոնարհ լինելու համար:

5. Ընկերություն

Ուսուցանեք և քննարկեք հետևյալ հատվածները Առակաց և Ժողովող գրքերից:

- Ինչո՞ւ ենք մենք նախազգուշացվում անարդար ընկերների վերաբերյալ (Տես Առակաց ԺԳ.20, ԻԲ.24–25):
- Որո՞նք են լավ ընկերների որոշ հատկանիշներ (Տես Առակաց ԺԷ.17, ԻԷ.9): Ինչպե՞ս են լավ ընկերներն օգնել դժվար ժամանակների ընթացքում:
- Ի՞նչ կարող ենք անել ճշմարիտ ընկերներ ձեռք բերելու համար (Տես Առակաց ԺԸ.24: Նշեք, որ լավ ընկերներ ունենալու համար մենք պետք է լինենք լավ ընկերներ):
- Ինչպե՞ս են ճշմարիտ ընկերներն արձագանքում, երբ մենք ոչ իմաստուն ընտրություններ ենք կատարում (Տես Ժողովող Դ.9–10):

  Երեց Մարվին Ջ. Աշթոնն ասել է.

  «Ինչ-որ մեկն ասել է. «Ընկերը մի մարդ է, որը կամենում է ընդունել ինձ այնպիսին, ինչպիսին որ կամ»: Սա ընդունելով որպես բառի սահմանումներից մեկը, կարելի է արագ մի առաջարկ անել, որ մենք ինչ-որ չափով իսկական ընկեր չենք, եթե մենք թողնում ենք մարդուն այնպիսին, ինչպիսին, որ նրան գտնում ենք….

  Ուրեմն, երբ ծառայում ենք, ավելի մեծ վարձք չի կարող գալ մեզանից որևէ մեկին, քան անկեղծ «Շնորհակալություն իմ ընկերը լինելու համար» արտահայտությունը: Երբ նրանք, ովքեր օգնության կարիք ունեն, գտնում են իրենց վերադարձի ուղին մեր միջոցով և մեզ հետ, դա ընկերություն է գործի մեջ: Երբ մեր կյանքի միջոցով թույլերը

դառնում են ուժեղ և ուժեղներն՝ ավելի ուժեղ, դա իսկական ընկերություն է: Եթե մարդ կարող է դատվել իր ընկերների կողմից, նա կարող է նաև չափվել նրանց բարձրությամբ….

Այո, ընկերը մի մարդ է, որը կամենում է ընդունել ինձ այնպիսին, ինչպիսին որ կամ, բայց որը կամենում է և կարող է թողնել ինձ ավելի լավը դարձած, քան երբ ինձ գտել էր (in Conference Report, Oct. 1972, 32, 35; or *Ensign*, Jan. 1973, 41, 43):

- Ինչպե՞ս կարող ենք զորացնել ընկերությունն ընտանիքի անդամների միջև:
- Հիսուս Քրիստոսը հաճախ կոչում էր իր հետևորդներին իր ընկերները (ՎԿՈՒ 88.62, 93.45): Ինչպե՞ս է նա ցույց տվել մեզ, որ նա մեր ընկերն է (Տես Հովհաննես ԺԵ.13): Ինչպե՞ս ենք մենք ցույց տալիս, որ մենք նրա ընկերներն ենք (Տես Հովհաննես ԺԵ.14): Ինչպե՞ս եք զգացել նրա ընկերությունը:

6. Մեծացնելով երեխաներ

Ուսուցանեք և քննարկեք հետևյալ հատվածները Առակաց գրքից:

- Առակաց ԻԲ.6 հատվածն ասում է. «Կրթիր երեխային իր ճանապարհին համեմատ»: Ի՞նչ պետք է անեն ծնողներն այս խորհրդին հետևելու համար (Տես ՎԿՈՒ 68.25–28): Ինչպե՞ս կարող ենք ավելի արդյունավետ ուսուցանել երեխաներին ավետարանի սկզբունքները և աճեցնել նրանց վկայությունները:

  Երեց Ռիչարդ Գ. Սքոթն ասել է. «Դուք պետք է պատրաստ լինեք հրաժարվել անձնական հաճույքներից և եսասիրությունից, կենտրոնանալով ընտանեկան գործերի վրա, և երեխայի համակողմանի զարգացմանը նպաստելու հիմնական դերը չթողնեք եկեղեցու, դպրոցի կամ հասարակության վրա: Պահանջվում է ժամանակ, մեծ ջանքեր և նշանակալի անձնական զոհաբերություն «կրթելու երեխային իր ճանապարհի համեմատ»: Սակայն, ուրիշ որտե՞ղ կարող ենք ավելի մեծ վարձք գտնել լավ կատարված աշխատանքի համար» (in Conference Report, Apr. 1993, 43; or *Ensign*, May 1993, 34):

- Ինչո՞ւ երեխաները կարիք ունեն կանոնների, սահմանների և սիրալիր ուղղումների (Տես Առակաց ԺԹ.18, ԻԹ.17): Ինչպե՞ս պետք է երեխաները վերաբերվեն իրենց ծնողների արդար խորհրդին (Տես Առակաց Զ.20–23): Ինչպե՞ս պետք է ծնողներն ուղղումներ տան (Տես ՎԿՈՒ 121.41–44):

7. Երջանկություն և լավ հումոր

Ուսուցանեք և քննարկեք Առակաց ԺԵ.13 և ԺԷ.22 հատվածները:

- Ինչո՞ւ է կարևոր զարգացնել ուրախ վերաբերմունք և հումորի լավ զգացում (Տես Առակաց ԺԵ.13, ԺԷ.22):

  Նախագահ Հյու Բ. Բրաունն ասել է. «Ես կկամենայի, որ դուք ժպտայիք, որովհետև, ի վերջո, մենք պետք է պահպանենք հումորի զգացումը ինչ էլ որ լինի: Կարծում եմ աշխարհի բոլոր մարդկանցից մենք պետք է լինենք ամենաերջանիկը: Մենք ունենք մեծագույն և ամենաուրախալի լուրն աշխարհում: Կարծում եմ, երբ անցնենք մյուս կողմը, ինչ-որ մեկը կդիմավորի մեզ ժպիտով (եթե չգնանք սխալ տեղ և այդ ժամանակ ինչ-որ մեկը քմծիծաղ չտա), այնպես որ եկեք երջանիկ լինենք: Բայց թող մեր երջանկությունն իսկական լինի, թող այն գա ներսից» (*The Abundant Life* [1965], 83):

- Ի՞նչ կարող ենք անել մեր ընտանիքներում՝ ոգին բարձրացնող հումոր խրախուսելու համար (Գուցե կամենաք խնդրել դասարանի անդամներին պատմել այն ժամանակների մասին, երբ հումորն օգնել է իրենց ընտանիքներին լուծել խնդիրները և աճել միմյանց հանդեպ սիրով):

Եզրափակում

Կիսվեք քննարկված թեմաների շուրջ ձեր զգացումներով: Խրախուսեք դասարանի անդամներին հիշել և հետևել Առակաց և Ժողովող գրքերի խորհուրդներին: Դուք գուցե նաև կամենաք խրախուսել նրանց այդ գրքերից մեկից անգիր սովորել սիրելի մի հատված:

Ուսուցման լրացուցիչ գաղափարներ

Հետևյալ նյութը լրացնում է առաջարկվող դասի ուրվագիծը: Օգտագործեք այդ գաղափարներից մեկը կամ մի քանիսը որպես դասի բաղկացուցիչ մաս:

1. Առակների վարժություն

Գրեք մի քանի մեջբերումներ Առակաց գրքից թղթի առանձին թերթիկների վրա և դրեք դրանք մի ամանի մեջ: Հանձնարարեք դասարանի անդամներին ամանից հերթով ընտրել թղթի մի թերթիկ, կարդալով թղթի վրա գրված սուրբ գրության հատվածը և բացատրել, թե ինչպես է այդ հատվածը կիրառվում մեր կյանքում:

2. Սուրբ գրության կիրառում

Նկարեք մարմնի մի ուրվագիծ գրատախտակի վրա: Հանձնարարեք դասարանի անդամներին գտնել հետևյալ հատվածները և գրել մեջբերումները մարմնի համապատասխան յուրաքանչյուր մասի կողքին: Միասին կարդացեք հատվածները և քննարկեք, թե ինչպես են դրանք կիրառվում մեր կյանքում:

ա. Առակաց Բ.2 (ականջ և սիրտ)
բ. Առակաց Գ.5 (սիրտ)
գ. Առակաց Գ.7 (աչքեր)
դ. Առակաց Գ.27 (ձեռք)
ե. Առակաց Դ.26–27 (ոտք)
զ. Առակաց Ը.7 (բերան)
է. Առակաց Ժ.4 (ձեռք)
ը. Առակաց ԺԲ.15 (աչքեր)

3. «Առաքինի կին» (Առակաց ԼԱ.10)

Հանձնարարեք դասարանի անդամներին վերանայել Առակաց ԼԱ.10–31 հատվածները և թվել առաքինի կնոջ հատկանիշները: Նշեք, որ սրանք հատկանիշներ են, որ մենք բոլորս՝ տղամարդ թե կին պետք է ձգտենք զարգացնել: Գուցե կամենաք գրել դասարանի անդամների պատասխանները գրատախտակին: Պատասխանները կարող են ներառել հետևյալը.

Հատված Հատկանիշ
11 Կարելի է վստահել
13 Գործում է հոժարությամբ
20 Գթասիրտ է
25 Ուժեղ է և պատվավոր
26 Խոսում է իմաստությամբ և բարությամբ
28 Նվիրված կին է և մայր
30 Հնազանդվում է Տիրոջը

Հրավիրեք մի քանի դասարանի անդամների խոսել իրենց իմացած այն մարդկանց մասին, որոնք այս հատկանիշների լավ օրինակ են:

Դաս
32

«Ես գիտեմ, որ փրկիչս կենդանի է»

Հոբ Ա–Բ, ԺԳ, ԺԹ, ԻԷ, ԽԲ

Նպատակ

Օգնեք դասարանի անդամներին զարգացնել ուժ՝ ձախորդությանը դիմակայելու համար, ապավինելով Տիրոջը, կառուցելով իրենց վկայությունները նրա մասին և պահպանելով անձնական մաքրություն:

Նախապատրաստում

1. Աղոթքով ուսումնասիրեք հետևյալ սուրբ գրությունները (նաև ուսումնասիրեք գլուխների վերնագրերը Հոբի գրքում՝ պատմության վերաբերյալ համառոտ ակնարկ ներկայացնելու համար):

   ա. Հոբ Ա–Բ: Հոբը, մի արդար և հավատարիմ մարդ, անցնում է ծանր փորձություններին միջով: Նա հավատարիմ է մնում Տիրոջը, չնայած կորցնում է իր ունեցվածքը, երեխաներին և առողջությունը:
   բ. Հոբ ԺԳ.13–16, ԺԹ.23–27: Հոբն ուժ է գտնում՝ ապավինելով Տիրոջը և Փրկչի իր վկայությանը:
   գ. Հոբ ԻԷ.2–6: Հոբն ուժ է գտնում իր անձնական արդարության և ազնվության մեջ:
   դ. Հոբ ԽԲ.10–17: Հետո, երբ Հոբը հավատարմորեն դիմանում է իր փորձություններին, Տերն օրհնում է նրան:

2. Լրացուցիչ ընթերցանություն՝ Հոբի գրքի այլ գլուխներ, Վարդապետություն և Ուխտեր 121.1–10:

Առաջարկվող դասի զարգացում

Ուշադրության կենտրոնացման վարժություն

Օգտագործեք հետևյալ վարժությունը (կամ ձեր սեփականը) դասը սկսելու համար:

Դասարանի անդամների հետ կիսվեք հետևյալ համանմանությամբ (կամ խնդրեք դասարանի որևէ անդամի նախապատրաստվել կիսվելու այդ պատմությամբ):

Երեց Ջոզեֆ Բ. Վիրթլինը մի անգամ պատմեց ֆերմերների մասին, որոնք Մեքսիկայի հյուսիս արևմտյան մասի շոգ անապատում «աճեցնում էին եգիպտացորենի և լոբու սորտեր, որոնք սովորաբար բարձր դիմադրողականություն ունեին և երաշտադիմացկուն էին: Այս սորտերը գոյատևում և ծաղկում են խիստ կլիմայական պայմաններում, որտեղ այլ բույսեր կթոշնեին և կչորանային: Այդ բույսերից մեկը սպիտակ սրատերև լոբին է: Նրա սերմը ծլարձակում է և բույսն աճում է, նույնիսկ, երբ շատ քիչ անձրև է գալիս: Այն ուղարկում է իր արմատները մոտ 2 մետր խորությամբ քարքարոտ, ավազային հողի խորքերը՝ իրեն անհրաժեշտ խոնավություն գտնելու համար: Այն կարող է ծաղկել և պտղաբերել անապատային 45 ջերմաստիճանում՝ տարին միայն մեկ անձրևային տեղումով: Նրա տերևածածկույթը մնում է բավականին կանաչ, քիչ ոռոգման դեպքում էլ, նույնիսկ, հուլիսի կեսերի տապի ժամանակ»:

- Ի՞նչ կարող ենք սովորել այս համանմանությունից, որը կարող է մեզ օգնել ձախորդությանը դիմանալու համար:

Երեց Վիրթլինն առաջարկել է. «Հավանաբար, Եկեղեցու անդամները կարող են օրինակ վերցնել այս դիմացկուն, ամուր բույսերից: Մենք պետք է ուղարկենք մեր արմատներն

ավետարանի հողի խորքերը: Մենք պետք է աճենք, ծլենք, ծաղկենք և առատորեն լավ պտուղ տանք, չնայած չարին, գայթակղությանը կամ քննադատությանը, որին կարող է հանդիպենք: Մենք պետք է սովորենք բուռն աճել ձախորդության տապի մեջ» (in Conference Report, Apr. 1989, 7; or *Ensign*, May 1989, 7):

Բացատրեք, որ այս դասը Հոբի մասին է՝ մարդ, որի հավատքը և արդարությունն օգնեց նրան դիմանալ դաժան ձախորդությունների:

Սուրբ գրության քննարկում և կիրառում

Երբ ուսուցանեք սուրբգրքյան հետևյալ հատվածները, քննարկեք թե ինչպես է այն վերաբերում ամենօրյա կյանքին: Խրախուսեք դասարանի անդամներին կիսվել փորձառություններով, որոնք կապված են սուրբգրքյան սկզբունքների հետ:

1. Հոբը ցավագին ստուգման է ենթարկվում:

Ուսուցանեք և քննարկեք Հոբ Ա–Բ:

- Ինչպիսի՞ մարդ էր Հոբը: Գուցե կամենաք թվարկել հետևյալ հատկանիշներից մի քանիսը գրատախտակի վրա: Համապատասխան հղումներից շատերն ընթերցանության հանձնարարության մեջ չեն մտնում, այնպես որ դուք գուցե կամենաք խնդրել դասարանի անդամներին անհատապես գտնել դրանք և պատմել, թե ինչ հատկանիշ է նկարագրվում:

  ա. Նա բարի մարդ էր, որը վախենում էր Աստծուց և հեռու էր մնում չարությունից (Հոբ Ա.1):
  բ. Նա հարուստ էր, բայց տարված չէր հարստությամբ (Հոբ Ա.3, 21):
  գ. Նա ուղղամիտ մարդ էր (Հոբ Բ.3):
  դ. Նա զորացնում էր տկարներին (Հոբ Դ.3–4):
  ե. Նա քայլում էր Տիրոջ ճանապարհներում և պահում էր Տիրոջ խոսքերը (Հոբ ԻԳ.10–12):
  զ. Նա կարեկից էր այրիների, աղքատների, կաղերի և կույրերի հանդեպ (Հոբ ԻԹ.12–16):
  է. Նա իր թշնամիների համար մտահոգվում էր, ներում նրանց (Հոբ ԼԱ.29–30):

- Ինչպիսի՞ փորձություններ տարավ Հոբը: Գուցե կամենաք թվարկել այդ փորձություններից մի քանիսը՝ գրի առնելով գրատախտակին: Համապատասխան հղումներից շատերն ընթերցանության հանձնարարության մեջ չեն մտնում, այնպես որ դուք կարող եք խնդրել դասարանի անդամներին ինքնուրույն գտնել դրանք և ասել, թե ինչ փորձություն է նկարագրվում:

  ա. Ծառաների, ունեցվածքի և եկամտի կորուստը (Հոբ Ա.13–17):
  բ. Երեխաների կորուստը (Հոբ Ա.18–19):
  գ. Ֆիզիկական հիվանդությունն ու ցավը (Հոբ Բ.7, Է.5, ԺԶ.16):
  դ. Մղձավանջներով լի անհանգիստ քունը (Հոբ Է.4, 13–14):
  ե. Դաժան մեղադրանքներն ու օգնության կորուստն ընկերներից և ընտանիքից (Հոբ Բ.9, Դ.1, 7–8, ԺԱ.1–6, ԺԹ.13–22):
  զ. Շփոթմունքը, թե ինչու էր իրենից պահանջվում անցնել այս փորձությունների միջով (Հոբ Ժ.15):
  է. Ծաղրը նրանց կողմից, ովքեր ուրախանում էին նրա անկմամբ (Հոբ ԺԶ.10–11, Լ.1, 8–10):
  ը. Զգացումը, որ Աստված մոռացել է իրեն կամ չի լսում (Հոբ ԺԹ.6–8, ԻԳ.3–4, նշեք, որ *նրան* բառը Հոբ ԻԳ.3–4 հատվածներում վերաբերում է Աստծուն):

- Ինչպե՞ս են Հոբի փորձությունները նման այն փորձություններին, որոնք մարդիկ տանում են մեր օրերում (Փորձությունները նույնն են՝ ունեցվածքի կորուստ, երեխաների

կորուստ, առողջության կորուստ, ընկերների և ընտանիքի սիրո և ընկերակցության կորուստ):

- Ինչո՞վ էր սատանան բացատրում Հոբի արդարության պատճառը (Տես Ա.9–10): Սատանան ի՞նչ կանխագուշակեց Հոբի արձագանքի վերաբերյալ, երբ նրա հարստությունը և մյուս օրհնությունները կվերցվեին (Տես Հոբ Ա.11, Բ.4–5): Ինչպե՞ս արձագանքեց Հոբը, երբ դա պատահեց (Տես Հոբ Ա.20–22, Բ.10): Ի՞նչ կարող ենք սովորել այս արձագանքներից:
- Չնայած իր ձախորդությանը, Հոբը «չմեղանչեց և Աստծուն անզգամություն չտվավ» (Հոբ Ա.22): Ինչպե՞ս են երբեմն մարդիկ հիմարաբար մեղադրում Աստծուն, երբ վիշտ, դժբախտություն կամ ողբերգություն է պատահում նրանց հետ (Նրանք կարող են մեղադրել Աստծուն կամ կասկածի ենթարկել նրա իմաստությունը կամ հեռատեսությունը, զգալով, որ նա չի հասկանում կամ սիրում իրենց: Ոմանք նույնիսկ կարող է կասկածի տակ դնեն նրա գոյությունը):

2. Հոբն ուժ է գտնում Տիրոջ մեջ:

Ուսուցանեք և քննարկեք Հոբ ԺԳ.13–16, ԺԹ.23–27:

- Տիրոջ հանդեպ Հոբի վստահությունը նրա համար հոգևոր ուժի մեծ աղբյուր էր (Հոբ ԺԳ.13–16): Ի՞նչ է նշանակում վստահել Տիրոջը: Ինչպե՞ս կարող ենք զարգացնել վստահություն Տիրոջ հանդեպ, որը կհաստատի մեզ փորձությունների ընթացքում (Տես Հռովմայեցիս Ը.28, 2 Նեփի 2.2, 11, 24, Վարդապետություն և Ուխտեր 58.2–4, 122.5–9): Վկայեք, որ քանզի Տերը սիրում է մեզ, նա մեզ հավաստիացրել է, որ երբ հավատարիմ լինենք, բոլոր բաները կլինեն մեր օգտի համար և կօգնեն մեզ աճել:
- ԺԹ գլխում Հոբը նկարագրում է փորձությունները, որոնք բաժին են ընկել իրեն, ապա վկայում Փրկչի մասին: Ինչպե՞ս Փրկչի մասին Հոբի վկայությունն օգնեց նրան դիմանալ իր փորձություններին (Տես Հոբ ԺԹ.25–27): Ինչպե՞ս կարող է Փրկչի մասին վկայությունն ուժ տալ մեզ ձախորդության ժամանակ:

  Հանձնարարեք դասարանի անդամներին երգել «Գիտեմ ապրում է Փրկիչն իմ» (Հիմներ և մանկական երգեր, էջ 38), կամ կարող եք միացնել այս օրհներգի ձայնագրությունը:

3. Հոբն ուժ է գտնում իր անձնական արդարության և ուղղամտության մեջ:

Ուսուցանեք և քննարկեք Հոբ ԻԷ.2–6:

- Հոբի ուղղամտությունը ևս մեկ հոգևոր ուժի աղբյուր էր իր չարչարանքների ժամանակ (Հոբ ԻԷ.2–6): Ի՞նչ է ուղղամտությունը: Ինչպե՞ս զորացրեց Հոբին իր անձնական ուղղամտությունն իր փորձությունների ժամանակ: Ինչպես կարող է մեր անձնական ուղղամտությունն օգնել մեզ մեր փորձությունների ժամանակ (Երբ մենք պահպանում ենք մեր ուղղամտությունը, մենք կարող ենք ձեռք բերել ուժ՝ գիտենալով, որ մեր կյանքի ընթացքը Տիրոջ համար գոհացուցիչ է):

  Երեց Ջոզեֆ Բ. Վիրթլինը սահմանել է *ուղղամտությունը* որպես «միշտ անելն այն, ինչը ճիշտ է և բարի, անկախ անմիջական հետևանքներից: Դա նշանակում է լինել արդար հենց մեր հոգու խորքից ոչ միայն մեր գործողություններում, այլ ամենակարևորը, մեր մտքերում և մեր սրտերում: Անձնական ուղղամտությունը ներառում է այնպիսի վստահելիություն և անարատություն, որ մենք անկարող ենք կեղծ լինել որևէ վստահության կամ ուխտի հանդեպ» (in Conference Report, Apr. 1990, 38; or *Ensign*, May 1990, 30):

4. Հետո, երբ Հոբը հավատարմորեն դիմացավ իր փորձություններին, Տերն օրհնեց նրան:

Ուսուցանեք և քննարկեք Հոբ ԽԲ.10–17:

- Հետո, երբ Հոբը հավատարմորեն դիմացավ իր փորձություններին, ինչպե՞ս Տերն օրհնեց նրան (Տես Հոբ ԽԲ.10–15, Հակոբոս Ե.11): Ինչպե՞ս է Տերն օրհնում մեզ, երբ մենք հավատարմորեն դիմանում ենք մեր փորձություններին (Տես Հոբ ԻԳ.10, 3 Նեփի ԺԵ.9: Խրախուսեք դասարանի անդամներին կիսվել անձնական վկայություններով: Գուցե կամենաք նշել, որ չնայած Տերն օրհնեց Հոբին «իր ունեցածից երկու անգամ ավելի», հոգևոր օրհնությունները, որոնք Տերը տալիս է մեզ, երբ մենք հավատարմորեն դիմանում ենք, նույնիսկ, ավելի մեծ են, քան աշխարհիկ օրհնությունները):

  Երեց Օրսոն Ֆ. Ուիթնին ասել է. «Ոչ մի ցավ, որ մենք տանում ենք, ոչ մի փորձություն, որով անցնում ենք, իզուր չէ: Այն ծառայում է մեր դաստիարակությանը, զարգացնելու այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են համբերությունը, հավատքը, ուժը և հեզությունը: Այն ամենը, ինչից մենք տառապում ենք և այն ամենը, ինչ մենք տանում ենք, հատկապես, երբ մենք այն տանում ենք համբերությամբ, ամրացնում է մեր բնավորությունը, մաքրում է մեր սիրտը, ընդարձակում մեր հոգին և դարձնում մեզ ավելի մեղմ և ավելի գթառատ, ավելի արժանի կոչվելու Աստծո զավակներ…. և վշտի ու տառապանքի միջոցով է, որ մենք ստանում ենք այն կրթությունը, որը մենք գալիս ենք այստեղ ձեռք բերելու համար, և որը մեզ ավելի նման է դարձնում մեր Հորը և Մորը, որ երկնքում են» (quoted in Spencer W. Kimball, *Faith Precedes the Miracle,* 98):

  Մարգարե Ջոզեֆ Սմիթն ասել է. «Ես նման եմ մի վիթխարի, անտաշ քարի, որը վար է գլորվում մի բարձր սարից, և միակ հոկումը, որ ես ստանում եմ, այն ժամանակ է, երբ որևէ անկյուն կոկվում է՝ շփման մեջ մտնելով որևէ այլ բանի հետ…. հարթեցնելով մի անկյուն այստեղ և մի անկյուն այնտեղ: Այս ձևով ես կդառնամ մի հոկված և փայլուն նետ Ամենազորի կապարճում» (*Teachings of the Prophet Joseph Smith,* sel. Joseph Fielding Smith [1976], 304):

Եզրափակում

Ամփոփեք Հոբի գրքի քննարկումը, շեշտելով, որ մենք կարող ենք ուժ ստանալ մեր փորձություններին դիմանալու համար՝ վստահելով Տիրոջը, կառուցելով մեր վկայությունները նրա մասին և պահպանելով մեր ուղղամտությունը, որպեսզի կարողանանք իմանալ, որ մեր կյանքը գոհացուցիչ է նրա համար: Գուցե կամենաք պատմել դասարանի անդամներին այն ժամանակի մասին, երբ դուք ստացաք ուժ ձախորդության ժամանակ: Առաջարկեք, որ դասարանի անդամները մտածեն, թե ինչպես կարող են կիրառել այս դասում քննարկվող սկզբունքները՝ օգնելու նրանց դիմանալ ձախորդություններին:

Ուսուցման լրացուցիչ գաղափարներ

Հետևյալ նյութը լրացնում է առաջարկվող դասի ուրվագիծը: Օգտագործեք այդ գաղափարներից մեկը կամ մի քանիսը որպես դասի բաղկացուցիչ մաս:

1. Հոբի ընկերները

- Ինչպե՞ս Եղիփազը և Բաղդատը՝ Հոբի երկու ընկերները բացատրեցին նրա տառապանքը: (Տես Հոբ Դ.7–8, Ը.6: Նրանք մտածեցին Հոբի տառապանքը պատիժ էր Աստծուց այն մեղքերի համար, որ Հոբն էր գործել): Որո՞նք են, բոլոր տառապանքները որպես մեր մեղքերի համար Աստծո պատիժ ստանալուն հավատալու վտանգները:
- Ինչպե՞ս կարող է Հոբի ընկերների սխալները սովորեցնել մեզ մարդկանց օգնելու մասին, ովքեր տառապում են ձախորդությունից:

2. Ձախորդության ժամանակ տրվող հարցեր

Երեց Ռիչարդ Գ. Սքոթն ասել է. «Երբ հանդիպում եք ձախորդության, ձեզ մոտ կարող են առաջանալ շատ հարցեր: Մի քանիսը կարող են ծառայել օգտակար նպատակի, մյուսները ոչ: Հարցնելը, թե ինչո՞ւ է այս պատահում ինձ հետ: Ինչո՞ւ պետք է տառապեմ այժմ: Ի՞նչ եմ արել սրան արժանանալու համար, կտանեն ձեզ դեպի փակուղիներ: Իսկապես, ոչ մի լավ բան չի բերում հարցեր տալը, որոնք արտացոլում են հակադրություն Աստծո կամքին: Ավելի լավ է հարցրեք, Ի՞նչ անեմ: Ի՞նչ պետք է սովորեմ այս փորձառությունից: Ի՞նչ պետք է փոխեմ: Ո՞ւմ պետք է օգնեմ: Ինչպե՞ս կարող եմ հիշել իմ բազմաթիվ օրհնությունները փորձության ժամանակ» (in Conference Report, Oct. 1995, 18; or *Ensign,* Nov. 1995, 17):

3. Ձախորդության ժամանակ պահպանելով հեռանկարը

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալն ասել է.

«Եթե մենք նայենք մահկանացու կյանքի վրա որպես գոյության միակ ամբողջություն, ապա ցավը, վիշտը, ձախողումը և կարճ կյանքն աղետ կլինի: Բայց եթե մենք նայենք կյանքի վրա՝ որպես հավերժական մի բան, որը ձգվում է հեռու դեպի նախամահկանացու անցյալ և շարունակվում դեպի հավերժական հետմահու ապագան, ապա բոլոր պատահարները կարող են դրվել համապատասխան հեռանկարում:

.... Մի՞թե գայթակղությունները նրա համար չեն, որ ստուգվի մեր ուժը, հիվանդությունը՝ որ սովորենք համբերություն, մահը՝ որ կարողանանք անմահանալ և փառավորվել:

Եթե բոլոր հիվանդները, որոնց համար մենք աղոթում ենք, ապաքինվեին, եթե բոլոր արդարները պաշտպանվեին և ամբարիշտները կործանվեին, Հոր ողջ ծրագիրը զերոյի կհավասարվեր և ավետարանի հիմնական սկզբունքը՝ ազատ կամքը, կավարտվեր: Ոչ մի մարդու պետք չէր լինի ապրել հավատքով» (*Faith Precedes the Miracle* [1975], 97):

4. Ամբարիշտների բարգավաճումը կարճատև է:

- Երբեմն թվում է ամբարիշտները բարգավաճում են, մինչդեռ արդարները տառապում են: Ի՞նչ է սովորեցնում Հոբի գիրքն ամբարիշտների թվացյալ բարգավաճման մասին (Տես Հոբ ԻԱ, ԻԴ):

Աշխարհի հետ կիսվելով Ավետարանով

Դաս
33

Հովնան Ա–Դ, Միքիա Բ, Դ –Է

Նպատակ

Խրախուսեք դասարանի անդամներին կատարել իրենց պարտականությունները որպես վերջին օրերի Իսրայել՝ սիրելով աշխարհի բոլոր ժողովուրդներին և նրանց հետ կիսվելով ավետարանի օրհնություններով:

Նախապատրաստում

Աղոթքով ուսումնասիրեք սուրբ գրության հետևյալ հատվածները՝

ա. Հովնան Ա–Բ: Տերը կանչում է Հովնանին քարոզելու ապաշխարություն Նինվեի ժողովրդին: Հովնանը փորձում է նավով փախչել Տիրոջից, մի մեծ ձուկ նրան կուլ է տալիս, նա աղոթում է և ազատվում ձկան փորից:

բ. Հովնան Գ–Դ: Հովնանը մարգարեանում է Նինվեի կործանումը և բարկանում է, երբ Նինվեի ժողովուրդն ապաշխարում է, և Տերը խնայում է քաղաքը (Հովնան Գ.9–10 հատվածների Ջոզեֆ Սմիթի Թարգմանությունը բացատրում է, որ ոչ թե Աստված, այլ ժողովուրդն ապաշխարեց): Տերն օգտագործում է մի դդմենի և մի որդ՝ Հովնանին սովորեցնելու համար, որ նա պետք է սիրի բոլոր մարդկանց:

. Միքիա Բ.12–13, Դ.1–7, 11–13, Ե.2–4, 7–8, Զ.6–8, Է.18–20: Միքիան մարգարեանում է վերջին օրերին Իսրայելի առաքելության մասին:

Առաջարկվող դասի զարգացում

Ուշադրության կենտրոնացման վարժություն

Օգտագործեք հետևյալ վարժությունը (կամ ձեր սեփականը) դասը սկսելու համար:

- Եկեղեցու քանի՞ երիտասարդ տղամարդ է Տերը կամենում, որ ծառայեն լիաժամկետ միսիա (Բոլոր արժանի, ունակ երիտասարդները): Ինչո՞ւ է կարևոր, որ այս երիտասարդներից յուրաքանչյուրն արձագանքի այս կանչին: Է՞լ ովքեր է ցանկալի, որ ծառայեն լիաժամկետ միսիա (Արժանի չամուսնացած 21 տարեկան կամ ավելի մեծ տարիքով քույրեր և տարեց զույգեր, երբ նրանց հնարավորությունները թույլ տան):

1979 թվականին Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալը խոսեց ավելի շատ միսիոներների անհրաժեշտության մասին, ովքեր կկարողանային քարոզել ավետարանը մարդկանց աշխարհի բոլոր մասերում: Նա հայտարարեց. «Ես հավատում եմ Տերը կարող է անել այն ամենը, ինչ նա դնում է իր մտքում անել: Բայց չեմ կարողանում լավ հիմնավորում տեսնել, թե ինչու պետք է Տերը դռներ բացի, որոնք մենք պատրաստ չենք մտնելու» (“The Uttermost Parts of the Earth,” *Ensign*, July 1979, 9):

Այս դասը կքննարկի, թե ինչպես Հովնանի և Միքիայի կյանքն ու գրվածքները կարող են օգնել մեզ հասկանալ բոլոր մարդկանց սիրելու և նրանց հետ ավետարանով կիսվելու մեր պարտականությունները:

Սուրբ գրության քննարկում և կիրառում

Երբ ուսուցանեք սուրբ գրության հետևյալ հատվածները, քննարկեք, թե ինչպես են դրանք վերաբերում ամենօրյա կյանքին: Խրախուսեք դասարանի անդամներին կիսվել փորձառություններով, որոնք կապված են սուրբգրքյան սկզբունքների հետ:

1. Հովնանը կանչվում է քարոզելու Նինվեի ժողովրդին, բայց նա փախչում է:

Ուսուցանեք և քննարկեք Հովնան Ա–Բ:

- Ինչո՞ւ էր Տերը կամենում, որ Հովնանը Նինվե գնար (Տես Հովնան Ա.2): Ինչո՞ւ Հովնանը հապաղեց ընդունել Նինվե գնալու միսիոներական կանչը (Տես Նաում Գ.1–5, որտեղ նկարագրվում է Նինվեի մեծ ամբարշտությունն ու բռնությունը: Ասորեստանի մայրաքաղաք Նինվեի ժողովուրդը Իսրայելի թշնամիներն էին):
- Ինչո՞ւ Հովնանը Թարսիս գնաց (Տես Հովնան Ա.3): Ինչպե՞ս ենք մենք երբեմն փախչում Տիրոջ ներկայությունից կամ կոչումից, որը տրվում է մեզ նրա ներկայացուցիչների կողմից: Ինչպիսի՞ն են այդ ջանքերի արդյունքները:
- Ինչպե՞ս Տերը ողորմություն և օգնություն ցույց տվեց Հովնանին (Տես Հովնան Ա.4–Բ.10): Ի՞նչ սովորեց Հովնանը մինչ մեծ ձկան ներսում էր (Տես Բ.1–9): Ինչպե՞ս է Տերն օգնում մեզ ապաշխարել և դառնալ դեպի իր ուղիները:
- Իր երկրային ծառայության ժամանակ, Փրկիչը խոսեց «Հովնան մարգարեի նշանի մասին» (Մատթեոս ԺԲ.39): Ի՞նչ էր նշանակում այդ նշանը (Տես Մատթեոս ԺԲ.39–41: Հովնանը երեք օր և երեք գիշեր անցկացրեց մեծ ձկան փորում և հետո ողջ դուրս եկավ: Փրկիչը երեք օր և գիշեր անցկացնելու էր հողում թաղված և հետո դուրս էր գալու հարություն առած):
- Իր մարգարեների միջոցով Տերն անընդհատ պատվիրել է յուրաքանչյուր արժանի, ունակ երիտասարդի ծառայել լիաժամկետ միսիա: Նա նաև հորդորել է տարեց միսիոներական զույգերին ծառայել որպես լիաժամկետ միսիոներներ, եթե նրանք կարող են: (Տես ուսուցման լրացուցիչ գաղափարները): Որո՞նք են այն պատճառները, թե ինչո՞ւ որոշ ունակ երիտասարդներ և տարեց զույգեր ընտրում են չծառայել միսիայում: (Պարտավորվածության և հավատքի բացակայություն, անարժանություն, տան և ընտանիքի հարմարավետ կյանքը թողնելու դժկամություն, վախ այն բանից, թե ինչ կպահանջվի իրենցից): Ի՞նչ կարող ենք սովորել Հովնանից, որը կօգնի մեզ ավելի քաջ լինել Տիրոջը հնազանդվելիս և ավետարանը քարոզելիս:

2. Նինվեի ժողովուրդն արձագանքում է Հովնանի ուղերձին և ապաշխարում է:

Ուսուցանեք և քննարկեք Հովնան Գ–Դ:

- Հովնանի ապաշխարելուց հետո, Տերը կրկին կանչեց նրան քարոզել ապաշխարություն Նինվեի ժողովրդին: Ինչպե՞ս Նինվեի ժողովուրդն արձագանքեց Հովնանի ուղերձին: (Տես Հովնան Գ.5–9: Հին ժամանակներում մարդիկ հագնում էին կտավից գործված կոպիտ հագուստ, որը կոչվում էր քուրձ և նստում էին մոխրի մեջ, որպեսզի ցույց տան, որ նրանք խոնարհ են և ապաշխարող): Ինչպե՞ս Աստված արձագանքեց մարդկանց մեջ այդ փոփոխությանը (Տես Հովնան Գ.10):
- Հովնանաը մարգարեացել էր Նինվեի կործանման մասին (Հովնան Գ.4): Ինչպե՞ս արձագանքեց Հովնանը, երբ Տերը ներեց Նինվեի ժողովրդին (Տես Հովնան Դ.1-3: Նա բարկացավ, որովհետև Տերը ողորմած էր ժողովրդի հանդեպ):
- Ի՞նչ Տերը սովորեցրեց Հովնանին դդմենու աճելով, որը նրան ստվեր և հանգիստ տվեց և հետո չորացավ (Տես Հովնան Դ.4–11: Աստված սիրում է իր բոլոր զավակներին: Ճիշտ ինչպես նա ողորմած եղավ Հովնանի հանդեպ, նա ցանկանում էր ողորմածություն ցույց տալ Նինվեի ապաշխարող ժողովրդին): Ի՞նչ կարող է Հովնանի փորձառությունը սովորեցնել մեզ ուրիշներին սիրելու մասին:

3. Միքիան մարգարեանում է վերջին օրերի Իսրայելի առաքելության մասին:

Ուսուցանեք և քննարկեք Միքիայի գրքից հետևյալ հատվածները:

Մարգարե Միքիան կոչ արեց Իսրայելի ժողովրդին ապաշխարել իրենց ամբարշտությունից և դառնալ դեպի Տերը: Նա մարգարեացավ Հակոբի (Իսրայել) և Հուդայի կործանման մասին: Նա նաև մարգարեացավ, որ վերջին օրերի Իսրայելը (Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին) Տիրոջ նպատակներն իրականացնելու էր մեծ զորությամբ:

- Ի՞նչ խոստումներ տվեց Տերը Միքիային Բ.12–13 հատվածներում: (Նա խոստացավ, որ կհավաքեր Իսրայելի մնացորդը, որ նրանք դառնալու էին մեծ բազմություն, և որ նա առաջնորդելու էր նրանց): Ինչպե՞ս են այս խորհուրդներն իրականանում այսօր:
- Միքիայի մեծ մարգարեություններից մի քանիսը վերջին օրերի մասին են, որոնք գրված են Միքիա Դ.1–7 հատվածներում: Ի՞նչ է Միքիան մարգարեացել վերջին օրերի տաճարի մասին (Տես հատվածներ 1–2): Ի՞նչ է նա մարգարեացել Հազարամյակի մասին (Տես հատվածներ 3–7): Ինչո՞ւ են այս մարգարեությունները կարևոր մեզ համար:
- Ի՞նչ կարող ենք սովորել Միքիա Դ.11–13 հատվածներում վերջին օրերի Իսրայելի ճակատագրի մասին: (Հին աշխարհում եզներին հաճախ օգտագործում էին հատիկը կալսելու համար: Նրանք քայլում էին հացահատիկի վրա, առանձնացնելով մղեղը հատիկից: Մղեղը փչում հեռացնում էին, իսկ հատիկը պահում: Ազգերը, որոնք հակառակվում են Սիոնին կհավաքվեն խրձերով և կկալսվեն Իսրայելի կողմից): Ինչպե՞ս կարելի է հատիկի այս առանձնացումը մղեղից համեմատել ողջ աշխարհում միսիոներական աշխատանք կատարելու վերջին օրերի Իսրայելի պարտականության հետ (Տես ՎԼՈՒ 29.7, 33.5–7):
- Ո՞ւմ մասին էր Միքիան մարգարեանում Միքիա Ե.2–4: (Համեմատեք այս մարգարեությունը Մատթեոսի Բ.4–6 հատվածներում արձանագրված դրա իրականացման հետ):
- Ինչի՞ հետ է համեմատվում Տիրոջ ժողովուրդը Միքիա Ե.7 հատվածում: Ինչպե՞ս կարող է խոտի վրա ցողի և շաղի պատկերը համեմատվել աշխարհի ժողովուրդների վրա Եկեղեցու անդամների ազդեցության հետ: Ի՞նչ եք կարծում, ի՞նչ ի նկատի ուներ Միքիան՝ ասելով, որ այդ շաղը «մարդու որդկանց» չի սպասում: (Ճիշտ ինչպես մահկանացուները չեն կարող կանգնեցնել ցողի կազմավորումը կամ շաղի տեղալը, ոչ մի բան չի կարող կանգնեցնել Տիրոջ աշխատանքի առաջընթացը ողջ աշխարհում):
- Ինչի՞ հետ է համեմատվում Տիրոջ ժողովուրդը Միքիա Ե.8 հատվածում: Ի՞նչ է այս պատկերը հուշում Տիրոջ գործի ուժի և զորության մասին: (Ճիշտ ինչպես հոտի ոչխարներն ուժ չունեն կանգնեցնելու կորյունին, այնպես էլ երկրի վրա ոչ մի ուժ չի կարող խանգարել Տիրոջ աշխատանքը):

  1842 թվականին Մարգարե Ջոզեֆ Սմիթը հայտարարեց. «Ոչ մի անսուրբ ձեռք չի կարող կանգնեցնել առաջ գնացող այս աշխատանքը: Հալածանքները կարող են մոլեգնել, ամբոխները՝ միավորվել, բանակներ կարող են հավաքվել, զրպարտությունը կարող է անվանարկել, սակայն Աստծո ճշմարտությունը համարձակ, փառապանծ ու անկախ առաջ կգնա, մինչև որ մուտք կգործի ամեն մայրցամաք, կայցելի ամեն ժամանակային գոտի, կընդգրկի ամեն երկիր, և կհնչի ամեն ականջում, մինչև որ Աստծո նպատակները կիրականանան, և Մեծ Եհովան կասի՝ աշխատանքը կատարված է» (*History of the Church*, 4:540):
- Ինչպե՞ս կարող է Միքիայի Զ.6–8 հատվածներն օգնել մեզ, երբ մենք ընկճված ենք զգում այն ամենից, ինչ ակնկալվում է մեզանից:
- Վերջին օրերին Տիրոջ աշխատանքի մասին մարգարեանալուց հետո, ի՞նչ եզրակացության եկավ Միքիան Աստծո էության մասին (Տես Միքիա Է.18–20): Այս հատվածներում ի՞նչ արտահայտություններ կարելի է վերագրել Նինվեի ժողովրդի հետ ունեցած Տիրոջ

գործերին: Այս արտահայտություններից որո՞նք կարելի է վերագրել մեզ հետ ունեցած Տիրոջ գործերին:

Եզրափակում

Վկայություն բերեք, որ Տերը սիրում է բոլոր իր զավակներին, և որ մենք, որպես վերջին օրերի Իսրայել, ունենք մեծ պատասխանատվություն կիսվելու նրա սիրով և ավետարանի ճշմարտություններով բոլոր մարդկանց հետ: Խնդրեք դասարանի անդամներին կիսվել, նրանով, ինչ սովորեցին Հովնանից և Միքիայից:

Ուսուցման լրացուցիչ գաղափարներ

Հետևյալ նյութը լրացնում է առաջարկվող դասի ուրվագիծը: Օգտագործեք այդ գաղափարներից մեկը կամ մի քանիսը որպես դասի բաղկացուցիչ մաս:

1. Ամեն արժանի, ունակ երիտասարդ պետք է պատրաստվի ծառայել միսիայում

Քննարկեք Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալի հետևյալ միտքը՝

«Երբ ես խնդրում եմ ավելի շատ միսիոներներ, ես չեմ խնդրում ավելի շատ վկայություն չունեցող կամ անարժան միսիոներներ: Ես խնդրում եմ, որ մենք սկսենք ավելի վաղ և ավելի լավ ուսուցանել մեր միսիոներներին ողջ աշխարհի յուրաքանչյուր ճյուղում և յուրաքանչյուր ծխում: Դա մեկ այլ մարտահրավեր է, որ երիտասարդները հասկանան, որ միսիայի գնալը մեծ արտոնություն է, և որ նրանք պետք է լինեն ֆիզիկապես լավ վիճակում, մտավոր կարողություններով , հոգեպես ուժեղ , և որ «Տերը չի կարող մեղքը նվազագույն իսկ աստիճանով թույլատրելի համարել….

Հաճախ հարց է տրվում. Արդյոք յուրաքանչյուր տղա պե՞տք է ծառայի միսիա: Եվ պատասխանը տրվել է Տիրոջ կողմից: «Այո՛»: Յուրաքանչյուր տղա պետք է ծառայի միսիա» (“When the World Will Be Converted,” *Ensign,* Oct. 1974, 7–8):

2. Միսիոներական տարեց զույգերի անհրաժեշտությունը

Քննարկեք Երեց Դեյվիդ Բ. Հեյթի հետևյալ միտքը.

«Եղբայրների անունից՝ սա մի կոչ է թոշակի անցած զույգերին, որ լրջորեն մտածեն միսիայում ծառայելու մասին: Մենք խիստ կարիք ունենք ավելի շատ միսիոներական զույգերի, որոնք կօգնեն բավարարելու մեր կարիքները…. Միսիոներական զույգերի համար միսիայի մեր նախագահների կողմից ներկայացվող խնդրագրերից բավարարվում է ավելի քիչ, քան 50 տոկոսը….

Եղբայրները հուսով են, որ գնալով ավելի շատ զույգեր իրենց մատչելի կդրաձնեն Եկեղեցու լիաժամկետ ծառայության համար: Անհրաժեշտությունը մեծ է: Ամեն տարի հարյուր հազարավոր նոր անդամներ են միանում Եկեղեցուն, և նրանք կարիք ունեն լսելու փորձառու անդամների աջակցող ու մխիթարող ընկերական ձայնը:

«Կգնամ ուր կուզես դու, Տե՛ր» օրհներգի (*Հիմներ և մանկական երգեր,* 46 էջ, 1999) կրկներգը պետք է լինի ավելին քան օրհներգ, որը մենք երգում ենք կիրակի օրը: Այն պետք է լինի մեր սեփական հավատքի աղոթքը, երբ մենք ծառայում ենք, որտեղ որ Տերը մեր կարիքն ունի (“Couple Missionaries: ‘A Wonderful Resource,’ ” *Ensign,* Feb. 1996, 7, 12):

«Ես քեզ պիտի նշանեմ ինձ համար արդարությունով»

Դաս
34

Ովսէէ Ա–Գ, ԺԱ, ԺԳ–ԺԴ

Նպատակ

Օգնեք դասարանի անդամներին հասկանալ, որ Տերը սիրառատ է և գթառատ և կների մեզ, երբ մենք ապաշխարենք և դառնանք դեպի նա:

Նախապատրաստում

1. Աղոթքով ուսումնասիրեք հետևյալ սուրբ գրությունները՝

   ա. Ովսէէ Ա–Գ: Օգտագործելով հավատարիմ ամուսնու և շնացող կնոջ համեմատությունը Ովսէէն նկարագրում է Տիրոջ և Իսրայելի փոխհարաբերությունը:

   բ. Ովսէէ ԺԱ, ԺԳ–ԺԴ: Իր ժողովրդի հանդեպ սիրո պատճառով Տերը շարունակում է հրավիրել Իսրայելին ապաշխարել և դառնալ դեպի իրեն:

2. Լրացուցիչ ընթերցանություն՝ Ովսէէի մնացած գլուխները:

3. Եթե օգտագործելու եք ուշադրության վարժությունը, գրեք հետևյալ արտահայտություններից յուրաքանչյուրն առանձին թերթիկի վրա դասարանի առջև: Եթե ձեր դասարանը փոքր է, պատրաստեք միայն մեկ թերթիկ դասարանի յուրաքանչյուր անդամի համար:

   «Եվ Իսրայելի որդկանց թիվը ծովի ավազի պես պիտի լինի» (Ովսէէ Ա.10):
   «Նրանց վրա պիտի թափեմ ջրերի պես իմ բարկությունը» (Ովսէէ Ե.10):
   «Տերը…. պիտի գա մեզ համար անձրևի պես» (Ովսէէ Զ.3):
   «Նա պիտի գա արծիվի պես» (Ովսէէ Ը.1):
   «Մի սաղարթածավալ որթ է Իսրայելը» (Ովսէէ Ժ.1):
   «Դատաստանը սեզի պես պիտի բուսնե արտի ակոսների վրա» (Ովսէէ Ժ.4):
   «Պիտի…. ծխնելույզից դուրս եկած ծխի պես լինեն» (Ովսէէ ԺԳ.3):
   «Նրանց պիտի հանդիպեմ ձագերը կորցրած արջի նման» (Ովսէէ ԺԳ.8):
   «Ես կանաչ մայրի ծառի պես եմ» (Ովսէէ ԺԴ.8):

Առաջարկվող դասի զարգացում

Ուշադրության կենտրոնացման վարժություն

Օգտագործեք հետևյալ վարժությունը (կամ ձեր սեփականը) դասը սկսելու համար:

Բաժանեք ձեր պատրաստած թերթիկները դասարանի անդամների միջև (տես «Նախապատրաստում» վերում): Բացատրեք, որ այս արտահայտություններից յուրաքանչյուրը համեմատություն է Ովսէէի գրքից: Հանձնարարեք դասարանի յուրաքանչյուր անդամի, ով ստացել է թերթիկը, բարձրաձայն կարդալ արտահայտությունը և համեմատության համար առաջարկել մեկ հնարավոր իմաստ: Օրինակ՝ որևէ մեկին ասելով «առյուծի նման է» կարող ենք նկատի ունենալ ուժեղ կամ կատաղի լինելը:

- Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ են Ովսէէն և մյուս մարգարեները օգտագործում համեմատություններ: (Համեմատելով մի բարդ կամ անծանոթ գաղափար մեկ ուրիշի հետ, որն ավելի պարզ է կամ ավելի ծանոթ, դարձնում է այն ավելի հասկանալի ուսուցանվող մարդկանց համար: Համեմատությունները նաև օգնում են ուղղակի մի քանի բառով տալ բազմաթիվ մանրամասներ):

Բացատրեք, որ բացի այդ փոքր համեմատություններից Ովսէէն օգտագործել է նաև ծավալուն համեմատություններ, որոնք կոչվում են փոխաբերություններ կամ նմանություններ (*նմանությունն* այն բառն է, որն օգտագործվում է սուրբ գրքերում): Ովսէէի գիրքը պարունակում է մի քանի համեմատություններ՝ օգնելու մեզ հասկանալ փոխհարաբերությունը Հիսուս Քրիստոսի և իր ժողովրդի միջև:

Սուրբ գրության քննարկում և կիրառում

Երբ ուսուցանեք սուրբ գրության հետևյալ հատվածները, քննարկեք, թե ինչպես է այն առնչվում ամենօրյա կյանքին: Խրախուսեք դասարանի անդամներին կիսվել փորձառություններով, որոնք կապված են սուրբգրքյան սկզբունքների հետ:

1. **Օգտագործելով հավատարիմ ամուսնու և շնացող կնոջ նմանությունը, Ովսէէն նկարագրում է Տիրոջ և Իսրայելի միջև գոյություն ունեցող փոխհարաբերությունը:**

Ուսուցեք և քննարկեք Ովսէէ Ա–Գ գլուխները: Եթե չեք օգտագործել ուշադրության վարժությունը, նախքան քննարկումը սկսելը բացատրեք, թե ինչ է նմանությունը:

Ամենահաճախ օգտագործվող նմանություններից մեկը սուրբ գրություններում նկարագրում է Տիրոջը որպես փեսա (կամ ամուսին) և նրա ուխտի ժողովրդին որպես հարս (կամ կին): Ովսէէն Ա–Գ գլուխներում վարպետորեն օգտագործում է այս նմանությունը, համեմատելով Իսրայելի կռապաշտությունը շնության հետ: Այս գլուխներում մարգարե Ովսէէն ներկայացնում է Տիրոջը որպես ամուսին, իսկ Գոմերը ներկայացվում է որպես Իսրայելի կին:

- Ովսէէի գրքում Տիրոջ փոխհարաբերությունը Իսրայելի հետ (և Եկեղեցու հետ այսօր) համեմատվում է ամուսնու և կնոջ միջև փոխհարաբերության հետ: Ի՞նչ է այս համեմատությունը սովորեցնում մեզ պարտավորության այն մակարդակի և նվիրվածության մասին, որ Տերը սպասում է մեզանից:
- Ինչպե՞ս էր հին Իսրայելը համեմատվում Գոմերի հետ, որը նկարագրվում է որպես «պոռնկության կին» (Տես Ովսէէ Ա.2–3, Բ.5, 13: Գոմերը թողել էր իր ամուսնուն իր սիրեկանների համար. Իսրայելը մոռացել էր Տիրոջը և դարձել ամբարիշտ):
- Ովքե՞ր կամ ինչե՞ր էին Իսրայելի «հոմանիները»՝ այն բաները, որոնք ստիպում էին ժողովրդին հեռանալ Տիրոջից (Այլ աստվածներ, նյութական բարիքներ և աշխարհիկ գործեր): Ինչպիսի՞ բաներ կարող են շեղել մեզ Փրկչին հետևելու մեր նվիրվածությունից:
- Ո՞ւմ ապավինեց պոռնկացող կինն իր ուտելիքի և հագուստի համար (Տես Ովսէէ Բ.5): Ո՞ւմ պարգևն էին Իսրայելացիները համարում պտղաբեր երկիրը, որտեղ նրանք ապրում էին (Տես Ովսէէ Բ.5, 12. իրենց կեղծ աստվածներին կամ կուռքերին): Ինչպե՞ս են մարդիկ այսօր վստահում կեղծ աստվածներին այն օրհնությունների համար, որ նրանք ստանում են:
- Ինչպե՞ս ամուսինը հիշեցրեց իր կնոջը, որ ինքն է ապահովում նրան ուտելիքով, ջրով և այլ ունեցվածքով, ոչ թե նրա հոմանիները (Տես Ովսէէ Բ.8–9): Ինչպե՞ս է Տերն ապահովել ձեզ նյութական և հոգևոր օրհնություններով: Ինչպե՞ս կարող ենք ցույց տալ մեր երախտագիտությունը Տիրոջն այն օրհնությունների համար, որ նա տալիս է մեզ:
- Ինչպիսի՞ն էր ամուսնու վերաբերմունքն իր անհավատարիմ կնոջ հանդեպ Ովսէէի Բ.6–13 հատվածներում: Ինչպե՞ս է տարբերվում այս վերաբերմունքը 14–23 հատվածներում: (Նշեք, որ չնայած կինն անհավատարիմ էր եղել, ամուսինը դեռ սիրում էր նրան և կամենում էր, որ նա վերադառնա իր մոտ: Նմանապես Տերը դեռ սիրում է իր ժողովրդին, որը շեղվել է, և նա կամենում է, որ նա կրկին վերադառնա իր մոտ):

Երեց Հենրի Բ. Այրինգը բացատրել է. «Սա սիրո պատմություն է: Սա սիրով կապված ամուսնական ուխտի պատմություն է, անսասան սիրով կապված…. Տերը, ում հետ ես օրհնվել եմ ուխտ կապելով, սիրում է ինձ և ձեզ մի անսասան ձևով, որով ես անընդհատ հիանում եմ, և որից ես կամենում եմ ողջ իմ սրտով օրինակ վերցնել» (*Covenants and Sacrifice* [address delivered at the Church Educational System Symposium, 15 Aug. 1995], 2):

- Ի՞նչ խոստացավ ամուսինն իր կնոջը, եթե նա վերադառնար իր մոտ (Տես Ովսէէ Բ.19): Ի՞նչ է Տերը խոստանում իր ժողովրդին, եթե նրանք ապաշխարեն և վերադառնան իր մոտ (Տես Ովսէէ Բ.20, 23): Ինչո՞ւ է այս խոստումը կարևոր:
- Ովսէէ Գ.1–2 հատվածներում, ամուսինը գնում է իր կնոջն իր հոմանուց (գուցե կամենաք բացատրել, որ Հին Կտակարանի մշակույթում, կանանց հաճախ համարում էին սեփականություն և նրանց կարող էին գնել կամ վաճառել): Ի՞նչ պահանջեց ամուսինն իր կնոջից նրան գնելուց հետո: (Տես Ովսէէ Գ.3): Նա ի՞նչ խոստացավ նրան: Ի՞նչ իմաստով է Հիսուս Քրիստոսը «գնել» մեզանից յուրաքանչյուրիս (Տես Ա Պետրոս Ա.18–19): Ի՞նչ է փոխարենը պահանջում մեզանից Քրիստոսը:

2. Իր ժողովրդի հանդեպ իր սիրո պատճառով Տերը շարունակում է հրավիրել Իսրայելին ապաշխարել և վերադառնալ իր մոտ:

Ուսուցանեք և քննարկեք Ովսէէ ԺԱ, ԺԳ–ԺԴ:

Ողջ Ովսէէի գրքում Տերը նախատում է Իսրայելացիներին իրենց մեծ մեղքերի համար: Այնուհետև Ովսէէի միջոցով նկարագրում է գերությունը և կործանումը, որը կառաջանա Իսրայելի ամբարշտությունից, նա կրկին հրավիրում է իր ժողովրդին ապաշխարել և վերադառնալ իր մոտ:

- Մեկ այլ նմանություն, որը հաճախ օգտագործվում է սուրբ գրքերում նկարագրելու Տիրոջ և իր ժողովրդի միջև փոխհարաբերությունը տեր և կենդանի փոխհարաբերությունն է: Այս նմանությունը համառոտակի օգտագործվում է Ովսէէ ԺԱ.4 հատվածում: Այս համեմատության միջոցով ի՞նչ ենք իմանում իր ժողովրդի հանդեպ Տիրոջ զգացումների մասին (Տես նաև Ովսէէ ԺԱ.7–9: Նշեք, որ Ջոզեֆ Սմիթի Թարգմանության մեջ 8-րդ հատվածում՝ «գալարվում է սիրտս ինձանում» հատվածի փոխարեն ասվում է. «սիրտս դեպի քեզ է դարձել»):
- Տերը մի քանի անգամ հիշեցնում է Իսրայելացիներին, թե ինչպես էին նրանց նախնիներն ազատվել Եգիպտոսից (Ովսէէ ԺԱ.1, ԺԲ.9, ԺԳ, ԺԳ.4–5): Ինչի՞ն է նմանեցվում այս իրադարձությունը (Տես Ովսէէ ԺԳ.14: Ինչպես Տերն ազատեց Իսրայելի որդիներին Եգիպտոսի գերությունից, այնպես էլ նա մեղքից և մահից կազատի նրանց և ողջ ժողովրդին, ովքեր գալիս են դեպի իրեն):
- Ի՞նչ պետք է անեին Իսրայելացիները դեպի Տերը վերադառնալու և ազատություն ստանալու համար (Տես Ովսէէ ԺԲ.6, ԺԴ.2–3: Նրանք պետք է ապաշխարեին իրենց մեղքերից և հրաժարվեին ուրիշ աստվածներից, որոնց նրանք երկրպագել էին): Ի՞նչ խոստացավ անել Տերը, եթե նրանք ապաշխարեին (Տես Ովսէէ ԺԴ.4–7): Ի՞նչ է խոստանում անել Տերը, եթե մենք ապաշխարենք մեր մեղքերից:
- Ինչպե՞ս են Ովսէէի գրքի նմանություններն օգնում ձեզ հասկանալ, թե ինչ է Փրկիչը զգում ձեր հանդեպ:

Եզրափակում

Վկայեք, որ չնայած Տիրոջ օրհնությունները պահված են նրանց համար, ովքեր պահում են նրա պատվիրանները, նրա սերը հաստատուն է և տարածվում է բոլորի վրա: Նույնիսկ երբ մենք հեռանում ենք նրանից մեղքի միջոցով, Տերը սիրում է մեզ և կամենում, որ

մենք ապաշխարենք և վերադառնանք դեպի իրեն: Խրախուսեք դասարանի անդամներին հավատարիմ լինել Տիրոջը:

Ուսուցման լրացուցիչ գաղափարներ

Հետևյալ նյութը լրացնում է առաջարկվող դասի ուրվագիծը: Օգտագործեք այդ գաղափարներից մեկը կամ մի քանիսը որպես դասի բաղկացուցիչ մաս:

1. «Ողորմություն եմ ուզում՝ և ոչ թե զոհ» (Ովսէէ Զ.6)

Ովսէէ Զ.6 Տերն ասում է Իսրայելին. «Ողորոմություն եմ ուզում՝ և ոչ թե զոհ, և Աստծո գիտություն՝ քան թե ողջակեզներ»: Իր երկրային ծառայության ժամանակ, Քրիստոսը երկու անգամ դիմեց այս հատվածին՝ պատասխանելու Փարիսեցիների քննադատությանը (Մատթեոս Թ.13, ԺԲ.7): Այս երկու մեջբերումների ենթատեքստը քննելուց հետո (Մատթեոս Թ.10–13, ԺԲ.1–8), քննարկեք, թե ինչ է նշանակում այս հատվածը:

2. «Քեզ կործանեցիր, ով Իսրայել» (Ովսէէ ԺԳ.9)

Ովսէէի ծառայության ժամանակ Հյուսիսային Թագավորությունը (Իսրայելը) հարձակման ենթարկվեց Ասորիների կողմից, ովքեր ի վերջո կործանելու էին թագավորությունը և գերության տանելու ժողովրդին: Բառացիորեն, Ասորիները պատասխանատու էին Իսրայելի կործանման համար: Բայց Տերն ասաց. «Քեզ կործանեցիր, ով Իսրայել» (Ովսէէ ԺԳ.9):

- Ի՞նչ իմաստով էր Իսրայելը կործանել իրեն: Իրենց ազգի կործանումից հետո, ի՞նչն էր Իսրայելի փրկության միակ հույսը: (Տես Ովսէէ ԺԳ.9–10, ԺԴ.1): Ինչպե՞ս կարող է Հիսուս Քրիստոսին հետևելը պաշտպանել մեզ աշխարհիկ և հոգևոր կործանումից:

3. Ապաշխարություն

Եթե մատչելի է, գուցե կամենաք ցուցադրել «Ապաշխարությո՛ւն. Երբեք ուշ չէ» վեց րոպեանոց շարժանկարը Ընտանեկան երեկոյի տեսանյութերի (միջազգային) հավելվածից (53277):

Աստված հայտնում է Իր գաղտնիքներն Իր մարգարեներին

Դաս 35

Ամոս Գ, Է–Թ, Հովել Բ–Գ

Նպատակ

Ուսուցանեք դասարանի անդամներին, որ վերջին օրերում Տերը հայտնում է իր գաղտնիքներն իր մարգարեներին և թափում իր Հոգին ողջ ժողովրդի վրա:

Նախապատրաստում

1. Աղոթքով ուսումնասիրեք հետևյալ սուրբ գրությունները՝

   ա. Ամոս Գ.6–7: Ամոսը սովորեցնում է, որ Տերը հայտնում է իր գաղտնիքներն իր ծառաներին՝ մարգարեներին:

   բ. Ամոս Է.10–17, Ը.11–13, Թ.8–15: Ամոսը կանչվում է Աստծուց՝ լինելու մարգարե (Է.10–15): Նա մարգարեանում է Իսրայելի գերության և ցրման մասին (Է.16–17, Թ.8–10): Նա մարգարեանում է, որ Տիրոջ խոսքը լսելու սով կլինի (Ը.11–13): Նա մարգարեանում է, որ վերջին օրերին Իսրայելը կհաստատվի որպես մեծ և բարգավաճող ժողովուրդ (Թ.11–15):

   գ. Հովել Բ, Գ.16–17: Հովելը մարգարեանում է վերջին օրերին պատերազմների և աղետների մասին (Բ.1–11): Նա ժողովրդին ապաշխարության է կանչում (Բ.12–14, նշեք, որ Ջոզեֆ Սմիթի Թարգմանության 13 և 14 հատվածները բացատրում են, որ ոչ թե Տերը, այլ մարդիկ պիտի ապաշխարեին): Հովելը մարգարեանում է, որ Աստված օրհնելու է իր ժողովրդին վերջին օրերին և դուրս է թափելու իր Հոգին նրանց վրա (Բ.15–32, Գ.16–17):

2. Լրացուցիչ ընթերցանություն՝ Ջոզեֆ Սմիթ–Պատմություն 1.41, Վարդապետություն և Ուխտեր 1.14–28, 37–38:

3. Եթե օգտագործելու եք ուշադրության երկրորդ վարժությունը, փորձեք երաժշտական նվագակցություն ապահովել օրհներգի համար: Հրավիրեք նաև դասարանի անդամներին համառոտ կիսվել մարգարեի վերջին խորհուրդներից մեկով:

4. Եթե հնարավոր է, ձեռք բերեք ապրող մարգարեի նկարը:

Առաջարկվող դասի զարգացում

Ուշադրության կենտրոնացման վարժություն

Օգտագործեք հետևյալ վարժություններից մեկը (կամ ձեր սեփականը) դասը սկսելու համար: Ընտրեք այն վարժությունը, որն ամենահարմարը կլինի դասարանի համար:

1. Դասարանի անդամների հետ կիսվեք հետևյալ պատմությամբ.

   «Երբ ես երիտասարդ կին էի և մայր, ամուսինս երկու տարի անցկացրեց օդային ուժերում: Մենք ապրում էինք զինվորական կացարանում Լոնգ Այլնդում, Նյու Յորք: Մեր փոքր երեխաներին խնամելիս ես հաճախ այցելում էի մեր հարևաններին, ովքեր եկել էին երկրի տարբեր մասերից: Մի օր, երբ ես և հարևաններից մեկը խոսում էինք մեր հավատքի մասին, նա հետաքրքրվեց, թե ինչո՞վ էր տարբերվում Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին:

   Ես նրան համառոտ պատմեցի Վերականգման մասին և բացատրեցի, որ Հիսուս Քրիստոսի վերականգված Եկեղեցին ունի ապրող մարգարե այսօր: Կարծես սա իսկապես շարժեց նրա հետաքրքրասիրությունը և նա կամեցավ իմանալ, թե ինչ էր ասել մարգարեն:

Երբ ես սկսեցի պատմել նրան Վարդապետություն և Ուխտերի և ժամանակակից հայտնությունների մասին, նա ասաց. «Իսկ ի՞նչ է նա ասել վերջերս»: Ես ասացի նրան գերագույն համաժողովի մասին, և որ Եկեղեցին ուներ ամենամսյա հրատարակություն՝ ուղերձ մարգարեից: Այդ ժամանակ նա իսկապես հետաքրքրվեց: Ես այնքան նեղվեցի ընդունելով, որ չէի կարողացել այդ ընթացիկ ուղերձը: Նա ավարտեց մեր զրույցը՝ ասելով. «Ուզում ես ասել, որ դուք ունեք ապրող մարգարե, և դու չգիտես, թե ինչ է նա ասե՞լ» (Janette Hales Beckham, "Sustaining the Living Prophets," *Ensign,* May 1996, 84):

- Եթե որևէ մեկը հարցնի ձեզ, թե ի՞նչ է ասել ապրող մարգարեն վերջերս, կկարողանա՞ք այդ հարցին պատասխանել:

Բացատրեք, որ այս դասը շեշտում է ապրող մարգարեին լսելու և հետևելու կարևորությունը:

2. Խնդրեք դասարանի անդամներին երգել «Փառք Քեզ, Տեր, Մարգարեի համար» («Հիմներ և մանկական երգեր», էջ 36): Բացատրեք, որ մեզ համար կարևոր է ուսումնասիրել մեր ապրող մարգարեի խորհուրդը: Հրավիրեք դասարանի անդամներին կիսվել ինչ-որ խորհրդով, որ նա է տվել վերջերս: Կամ հրավիրեք դասարանի որևէ հանձնարարված անդամի համառոտակի պատմել մարգարեի կողմից վերջերս տրված որևէ խորհրդի մասին:

Սուրբ գրության քննարկում և կիրառում

Երբ ուսուցանեք սուրբ գրության հետևյալ հատվածները, քննարկեք, թե ինչպես է այն վերաբերում ամենօրյա կյանքին: Խրախուսեք դասարանի անդամներին կիսվել փորձառություններով, որոնք կապված են սուրբգրքյան սկզբունքների հետ:

Ամովսը հովիվ էր Թեկուեում՝ մի փոքրիկ քաղաք Երուսաղեմի հարավում: Նա ծառայում էր Իսրայելի թագավորության ժողովրդին 800–750 թվականին Ք.ծ.ա.: Այդ ժողովրդի մեծ մասն ուրացության մեջ էր: Նրանք սիրում էին հարստություններ և ճնշում էին աղքատներին, և նրանք այնքան կարծրացած էին, որ նույնիսկ սովը կամ ժանտախտը չխոնարհեցրեցին նրանց: Երբ Ամովսը մեղադրում էր ժողովրդին իրենց մեղքերի համար, նա մարգարեացավ ավելի խիստ պատիժների մասին: Այնուամենայնիվ, նա շեշտեց, որ Աստված ուզում էր մաքրել բոլոր նրանց, ովքեր կապաշխարեին, հորդորելով. «Տիրոջը որոնեցեք և կապրեք» (Ամովս Ե.6): Ամովսը մարգարեացավ նաև վերջին օրերի մասին:

Մարգարե Հովելը ծառայեց Հուդայի թագավորության ժողովրդին: Մենք ճշգրիտ չգիտենք, երբ է նա ապրել, բայց նրա մարգարեությունները հատուկ կարևորություն ունեն մեզ համար, որովհետև դրանցից շատերը վերաբերում են վերջին օրերին: Հովելն օգտագործում է խժռող մորեխի զորքը խորհրդանշելու այն ամայացումը, որ զորքերը և Աստծո դատաստաններն են բերելու վերջին օրերին: Հովելը մարգարեացել է նաև վերջին օրերի մեծ օրհնությունների մասին, կանխագուշակելով, որ Տերը «կթափի [Իր] հոգին ամեն մարմնի վրա» (Հովել Բ.28):

1. Ամովսը սովորեցնում է, որ Տերը հայտնում է իր գաղտնիքներն իր ծառաներին՝ մարգարեներին:

Ուսուցանեք և քննարկեք Ամովս Գ.6–7:

- Ինչպե՞ս ենք մենք լսում Տիրոջ խոսքը մեր օրերում: Ի՞նչ ուսուցանեց մարգարե Ամովսը մարգարեների կարևորության մասին (Տես Ամովս Գ.7): Ի՞նչ երկու բառեր էին փոխվել Ամովսի Գ.6–7 հատվածների Ջոզեֆ Սմիթի թարգմանության մեջ: (Ջոզեֆ Սմիթի թարգմանության մեջ 6-րդ հատվածում *արած* բառի փոխարեն օգտագործվում է *իմացած* բառը, իսկ 7-րդ հատվածում օգտագործվում է *մինչև* բառը *եթե* բառի փոխարեն): Ինչպե՞ս են այս փոփոխությունները պարզեցնում հատվածի իմաստը: Նշեք, որ Ջոզեֆ Սմիթի Թարգմանությունն ինքնինքստյան մի օրինակ է մեր օգտի համար Տիրոջ գաղտնիքները մարգարեին հայտնի դարձնելու մասին:

- Ի՞նչեն սովորեցնում Վարդապետություն և Ուխտերի 1.37–38 հատվածները մարգարեների ուղերձների հանդեպ մեր հարգանքի մասին (Ցուցադրեք ապրող մարգարեի մի նկար): Ինչպես արձանագրված է Վարդապետություն և Ուխտերի 21.4–5 հատվածներում, ի՞նչ խորհուրդ և պատվիրան Տերը տվեց Սրբերին այն օրը, երբ կազմակերպվեց Եկեղեցին: Ի՞նչ օրհնություններ նա խոստացավ, եթե Սրբերն անեն այս (Տես ՎԵՈՒ 21.6): Ինչպե՞ս է այս խոստումը ձեր աչքի առջև իրականություն դարձել ձեր սեփական կյանքում, երբ դուք հնազանդվել եք մարգարեների խորհրդին:

2. Ամովսը մարգարեանում է հնադարյան և վերջին օրերի Իսրայելի մասին:

Ուսուցանեք և քննարկեք Ամովս Է.10–17, Ը.11–13, Թ.8–15:

- Ինչո՞ւ Ամասիան՝ Իսրայելի թագավորության քահանան, խնդրեց Ամովսին հեռանալ երկրից (Տես Ամովս Է.10–17: Ամովսը մարգարեացել էր, որ չարիք էր գալու ժողովրդի և նրանց թագավորի վրա: Ամասիան և իր ժողովուրդը չկամեցան լսել ճշմարտությունն իրենց գործած չարիքների մասին): Ի՞նչ են սովորեցնում 14–17 հատվածները մարգարե Ամովսի մասին: (Նա ուներ հավատարմություն և քաջություն: Նա չէր կամենում փոխել, ինչ Տերն էր պատվիրել նրան ասել, այլ շարունակում էր մարգարեանալ, որ ժողովրդի վրա չարիք է գալու, եթե նրանք չապաշխարեին):
- Բոլոր դարերի ժամանակաընթացքում ինչո՞ւ են այդքան շատ մարդիկ մերժել կամ անտեսել մարգարեների ուղերձները: Ի՞նչ մարգարեացավ Ամովսը, ինչպիսին էր լինելու հետևանքը՝ մարգարեների խորհուրդը Իսրայելի կողմից մերժելու դեպքում (Տես Ամովս Ը.11–13: Տեղի էր ունենալու հոգևոր սով, կամ ուրացություն): Որոնք են անհատապես մեզ համար մարգարեների խորհուրդը մերժելու հետևանքը:

  Հոգևոր սովի վերաբերյալ Ամովսի մարգարեությունն իրականացավ Իսրայելի որդիների մեջ Մաղաքիայի՝ Հին Կտակարանի վերջին մարգարեի, ժամանակից հետո: Այս ժամանակաշրջանն ավարտվեց մոտավորապես 400 տարի հետո, երբ Հովհաննես Մկրտիչը կանչվեց նախապատրաստելու Հիսուս Քրիստոսի ճանապարհը: Ամովսի մարգարեությունը վերաբերում է նաև Մեծ Ուրացությանը, հոգևոր խավարի դարերին, որոնք հետևեցին Փրկչի Առաքյալների մահվանը և ավարտվեցին Ջոզեֆ Սմիթի միջոցով ավետարանի վերականգնմամբ:
- Ինչպե՞ս կարող է Տիրոջ խոսքի բացակայությունը համեմատվել սովի հետ: Ի՞նչ ապացույց եք տեսնում, որ մարդիկ այսօր թափառում են «ծովից ծով» որոնելով Տիրոջ խոսքը: Ինչպե՞ս կարող է վերականգված ավետարանի օրհնություններն ունենալը համեմատվել խնջույքի հետ:
- Ի՞նչ հույսի ուղերձով է ավարտվում Ամովսի գիրքը (Տես Ամովս Թ.8–15: Իսրայելի որդիները լիովին չեն կործանվի, նրանք կցրվեն ազգերի մեջ, և վերջին օրերին կվերահաստատվեն որպես մեծ և բարգավաճ ժողովուրդ: Նշեք, որ հատված 9-ի վերջում, Տերը պարզաբանում է, որ նա մտահոգված է Իսրայելի տան յուրաքանչյուր անդամի համար):

3. Հովելը մարգարեանում է, որ Աստված կօրհնի իր ժողովրդին վերջին օրերին և կթափի իր Հոգին նրանց վրա:

Ուսուցանեք և քննարկեք Հովել Բ, Գ.16–17:

Մարգարե Հովելը նկարագրեց վերջին օրերի որոշ իրադարձություններ, որոնք կնախորդեն Երկրորդ Գալստին: Նա նկարագրել է մի մեծ բանակի գալը, որը մեծ ավերում կառաջացնի ժողովրդի ամբարշտության պատճառով (Հովել Բ.1-11): Նա կանչեց Իսրայելին ապաշխարել և դառնալ դեպի Տերը, խոստացավ, որ Աստված կլինի նրանց մեջ և նկարագրեց Իսրայելի վերջնական հաղթանակը և փրկագնումը (Հովել Բ.12–32):

- Գրատախտակին գրեք *Հովել Բ.12–32* և *Հովել Գ.16–17:* Խնդրեք դասարանի անդամներին վերընթերցել այս հատվածները և որոնել հետևյալ հարցի պատասխանը՝ Ի՞նչ հրավերներ է Տերը տվել նրանց, ովքեր կապրեն վերջին օրերում:

  Գրեք *Հրավերներ* բառը գրատախտակին: Երբ դասարանի անդամները նշեն արտահայտությունները, գրեք յուրաքանչյուր հրավերի հիմնական բառերը գրատախտակին: Խրախուսեք դասարանի անդամներին ընդգծել այդ արտահայտություններն իրենց սուրբ գրություններում: Ահա մի քանի հրավերներ, որոնք կարելի է նշել.

  Հրավերներ

  ա. «Դեպի ինձ դարձեք ձեր բոլոր սրտով» (Հովել Բ.12):
  բ. «Պատառեցեք ձեր սրտերը» (Հովել Բ.13, նշանակում է կոտրեք ձեր սիրտը կամ եղեք խոնարհ):
  գ. «Ետ դարձեք դեպի ձեր Տեր Աստվածը» (Հովել Բ.13):
  դ. «Ժողովքը սրբեցեք» (Հովել Բ.16):
  ե. «Մի վախենար, ով երկիր, ցնծա և ուրախացիր» (Հովել Բ.21):

- Ի՞նչ են այս հրավերները հուշում մեր բոլոր սրտով դեպի Տերը դառնալու կարևորության մասին: Ի՞նչ կարող ենք անել մեզ սրբագործելու համար, որպեսզի արժանի լինենք Տիրոջ խոստացված օրհնություններին:

- Խնդրեք դասարանի անդամներին վերընթերցել Հովել Բ.12–32 և Հովել Գ.16–17 հատվածները՝ որոնելով հետևյալ հարցերի պատասխանները. Ի՞նչ օրհնություններ է Տերը խոստացել նրանց, ովքեր հետևում են իրեն վերջին օրերում:

  Գրատախտակին գրեք Օրհնություններ բառը: Երբ դասարանի անդամները նշեն արտահայտությունները, գրեք յուրաքանչյուր օրհնության կարևոր բառերը գրատախտակի վրա: Գուցե դասարանի անդամները կամենան ընդգծել այս արտահայտություններն իրենց սուրբ գրություններում: Ահա մի քանի օրհնություններ, որոնք կարող են նշվել.

  Օրհնություններ

  ա. «Տերը ողորմած և գթած է, երկայնամիտ. նա շատ բարի է և չարը կհեռացնի ձեզանից» (տես Ջոզեֆ Սմիթ Թարգմանություն, Հովել Բ.13):
  բ. Տերը «կողորմէ իր ժողովրդին» (Հովել Բ.18):
  գ. Տերը կքշի հյուսիսային բանակը (որը նկարագրվում է 1–11 հատվածներում) մի ամայի երկիր (Հովել Բ.20):
  դ. «Դուք պիտի ուտեք ու ուտեք և կշտանաք» (Հովել Բ.26):
  ե. «Ես Իսրայելի մեջ եմ…. և իմ ժողովուրդը պիտի չամաչի հավիտյան» (Հովել Բ.27):
  զ. «Ես պիտի իմ հոգին թափեմ ամեն մարմնի վրա» (Հովել Բ.28, տես նաև հատված 29):
  է. Երիտասարդ և ծեր պիտի մարգարեանան, երազներ երազեն և տեսիլքներ տեսնեն (Հովել Բ.28):
  ը. «Ամենը, ով որ կանչէ Տիրոջ անունը, կփրկվի» (Հովել Բ.32):
  թ. «Տերը պիտի գոչէ Սիոնից, և Երուսաղեմից ձայն պիտի տա» (Հովել Գ.16):
  ժ. «Տերն ապավեն կլինի իր ժողովրդի համար» (Հովել Գ.16):
  ի. «Տերն ամրոց կլինի Իսրայելի որդկանց համար» (Հովել Գ.16):
  լ. «Եվ դուք պիտի իմանաք, որ ես եմ ձեր Տեր Աստվածը, որ բնակվում եմ իմ սուրբ Սիոն սարումը» (Հովել Գ.17):

- Ի՞նչ են այս օրհնությունները սովորեցնում իր ուխտի ժողովրդի հանդեպ Տիրոջ պարտավորության մասին, իր Սրբերի համար նրա զորության մասին, նրա ողորմության և սիրո մասին, վերջին օրերին մեր հնարավորությունների մասին:

- Հովելի հայտարարությունը, որ Տերը կթափի իր Հոգին բոլոր ժողովրդի վրա վերջին օրերին (Հովել Բ.28–29) ճիշտ հակառակն է այն սովի, որ նկարագրում է Ամովսը

(Ամովս Ը.11–12): Մորոնի հրեշտակը մեջբերեց Հովելի մարգարեությունը Ջոզեֆ Սմիթին և ասաց նրան, որ այն դեռ չէր իրականացել, բայց շուտով պիտի լիներ (Ջոզեֆ Սմիթ Թարգմանություն 1.41): Երիտասարդների և մեծահասակների կյանքում այդպիսի դրսևորման ինչպիսի օրինակներ եք տեսել այսօր:

Եզրափակում

Շեշտեք, որ վերջին օրերում ապրելը մեծ օրհնություն է, երբ բազմաթիվ օրհնություններ իրականանում են, և երբ մենք ունենք ապրող մարգարեի առաջնորդությունը: Խրախուսեք դասարանի անդամներին աղոթքով ուսումնասիրել ապրող մարգարեի խոսքերը և կիրառել նրա խորհուրդն իրենց կյանքում:

Ուսուցման լրացուցիչ գաղափարներ

Հետևյալ նյութը լրացնում է առաջարկվող դասի ուրվագիծը: Օգտագործեք այդ գաղափարներից մեկը կամ մի քանիսը որպես դասի բաղկացուցիչ մաս:

1. Ապահով դառնալով Սիոնում

- Ամովսը նախազուշացրել է ժողովրդին «Սիոնում ապահով» դառնալու դեմ (Ամովս Զ.1): Ի՞նչ է նշանակում ապահով դառնալ Սիոնում (Տես 2 Նեփի 28.19–24, 27, 29–30): Ինչպե՞ս կարող ենք ապահով լինել Սիոնում: Ինչպես կարող ենք զգուշանալ սրանից:

2. «Ես կթափեմ իմ հոգին ամեն մարմնի վրա» (Հովել Բ.28)

- Ճանապարհորդության և հաղորդակցության բոլոր ժամանակակից հայտնագործությունները եկել են ավետարանի վերականգնվելուց հետո: Ինչպե՞ս են այս զարգացումներն օգնել իրականանալու Հովել Բ.28–29 հատվածների Հովելի մարգարեությունները: Ինչպե՞ս են այս զարգացումներն օգնում առաջ տանել Տիրոջ գործը մեր օրերում:

  Կարդացեք Երեց Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի հետևյալ միտքը՝ օգնելու դասարանի անդամներին հասկանալ Տիրոջ գործը կատարելիս այս հայտնագործությունների մեծ օգտակարությունը:

  «Ես համոզված եմ, որ եթե չլիներ ավետարանի վերականգնումը և Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու կազմավորումը, չէր լինի ռադիո, չէին լինի օդանավեր և չէին լինի բժշկության, քիմիայի, էլեկտրականության բնագավառներում այն հրաշալի հայտնագործությունները և բազմաթիվ ուրիշ բաներ, որոնց շնորհիվ աշխարհն օրհնվեց այդ հայտնագործությունների միջոցով: Այդ դեպքում այս օրհնությունները ետ կպահվեին, քանզի դրանք պատկանում են Ժամանակների Լրության Տնտեսությանը, որում ավետարանի վերականգնումը և Եկեղեցու կազմավորումը կենտրոնական տեղ են գրավում, որից ճառագում է Տիրոջ Հոգին ողջ աշխարհում: Տիրոջ ոգեշնչումը դուրս է եկել և տիրում է մարդկանց մտքերին, չնայած նրանք այդ մասին չգիտեն և նրանք ուղղորդվում են Տիրոջ կողմից: Այս ձևով նա բերում է նրանց իր ծառայությանը, որպեսզի իր նպատակները և իր արդարությունը, ուրույն ժամանակին կարողանան գերակայել երկրի վրա:

  …. Ես ոչ մի վայրկյան չեմ հավատում, որ այս հայտնագործությունները եկել են պատահաբար, կամ դրանք եկել են գերագույն բանականության շնորհիվ, որով օժտված են մարդիկ այսօր, ի տարբերություն նրանց, ովքեր ապրել են անցած դարերում: Դրանք եկել են և գալիս են, որովհետև ժամանակը հասունացել է, որովհետև Տերն է կամեցել դա, և որովհետև նա թափել է իր Հոգին ամեն մարմնի վրա» (in Conference Report, Oct. 1926, 117):

Դաս
36

Սիոնի փառքը կլինի պաշտպանություն

Եսայիա Ա–Զ

Նպատակ

Խրախուսեք դասարանի անդամներին խուսափել աշխարհի չարիքից՝ կանգնելով սուրբ վայրերում, օգնելով նրանց ուժ առնել Եսայիայի ծառայելու պատրաստակամությունից:

Նախապատրաստում

1. Աղոթքով ուսումնասիրեք Եսայիայի Ա–Զ գլուխները, որոնք քննարկվում են այս դասում:
2. Լրացուցիչ ընթերցանություն՝ 2 Նեփի 11:

Առաջարկվող դասի զարգացում

Ուշադրության կենտրոնացման վարժություն

Օգտագործեք հետևյալ վարժությունը (կամ ձեր սեփականը) դասը սկսելու համար:

Բացատրեք, որ Տերը հաճախ կրկնում է նույն գաղափարը շատ անգամներ ողջ սուրբ գրություններում: Գրեք հետևյալ հղումները գրատախտակին և խնդրեք դասարանի անդամներին բացահայտել, թե ինչ խորհուրդ է Տերը տվել մեզ՝ օգնելու համբերել վերջին օրերի փորձություններին.

Վարդապետություն և Ուխտեր 45.32
Վարդապետություն և ՈՒխտեր 87.8
Վարդապետություն և Ուխտեր 101.22

Գրեք գրատախտակին «Կանգնեք սուրբ տեղերում և մի շարժվեք»:

- Ի՞նչ եք կարծում, ի՞նչ է նշանակում այս արտահայտությունը: (Պատասխանները կարող են ներառել՝ արժանի լինել ամեն ժամանակ, ցանկանալով, հաճախ լինել սուրբ վայրերում, ընտրել չգնալը ոչ սուրբ վայրեր, ունենալ վստահություն, որ Աստված կառաջնորդի ձեզ, պաշտպանելու ճշմարտությունն ու սրբությունը):

Բացատրեք, որ այս գրքում, դասարանի անդամները կբացահայտեն, թե ինչո՞ւ է Տերը պատվիրել մեզ կանգնել սուրբ տեղերում և որոնք են այդ սուրբ տեղերը:

Սուրբ գրության քննարկում և կիրառում

Երբ ուսուցանեք սուրբ գրության հետևյալ հատվածները, քննարկեք, թե ինչպես են դրանք վերաբերում ամենօրյա կյանքին: Խրախուսեք դասարանի անդամներին կիսվել փորձառություններով, որոնք կապված են սուրբգրքյան սկզբունքների հետ:

«Մեծ են Եսայիայի խոսքերը» հայտարարեց Փրկիչը, երբ նա պատվիրեց Նեփիացիներին քննել Եսայիայի մարգարեությունները (3 Նեփի 23.1): Եսայիայի մարգարեություններն ավելի հաճախ են մեջբերվում Նոր Կտակարանում, Մորմոնի Գրքում և Վարդապետություն և Ուխտերում, քան որևէ այլ մարգարեի խոսքերը: Նա շատ բաներ մարգարեացավ Փրկչի երկրային առաքելության մասին, Իսրայելի ամբարշտությանը հաջորդող կործանման մասին և Իսրայելի վերջին օրերի ճակատագրի մասին:

1. Եսայիան նկարագրում է աշխարհի վիճակը վերջին օրերին

- Եսայիայի նախազուշացումներից և մարգարեություններից շատերը վերաբերում են ինչպես իր ժամանակին, որը մեծ ամբարշտության ժամանակ էր, այնպես էլ մեր

ժամանակին: Ինչպե՞ս են սուրբ գրություններում նկարագրվող հետևյալ պայմաններն աշխարհում ակնհայտ այսօր: (Գուցե կամենաք գրել հղումները գրատախտակին և հանձնարարեք դասարանի անդամներին գտնել դրանք):

ա. Եսայիա Ա.3–5 (Ապստամբություն Տիրոջ դեմ)
բ. Եսայիա Ա.11–15 (Անիմաստ կամ առաց հավատքի կրոնական ծիսակատարություններ)
գ. Եսայիա Բ.7–8 (Տիրոջ փոխարեն աշխարհիկ բաների և ռազմական ապահովության պաշտամունք, նշեք, որ ձիերն ու կառքերն օգտագործվում էին որպես հին ժամանակներում պատերազմի միջոցներ)
դ. Եսայիա Բ.11–12 (Հպարտություն)
ե. Եսայիա Գ.5 (Ուրիշ մարդկանց ճնշում և ուրիշների հանդեպ հարգանքի բացակայություն)
զ. Եսայիա Գ.9 (Մեղքի համար ամոթի բացակայություն)
է. Եսայիա Գ.14–15 (Աղքատին շահագործելը և նրանց մասին հոգ չտանելը)
ը. Եսայիա Գ.16–24 (Շեշտադրում Ֆիզիկական արտաքին գեղեցկության վրա արդարության և լավ բնավորության փոխարեն)
թ. Եսայիա Ե.8 (Ավելի ու ավելի շատ նյութական բաներ ունենալու ցանկություն, ագահություն)
ժ. Եսայիա Ե.11–12 (Տիրոջը և նրա գործին ձգտելու փոխարեն անընդհատ ձգտում դեպի աշխարհիկ հաճույքները)
ի. Եսայիա Ե.20 (Ասել, որ չար բաները բարի են և բարի բաները՝ չար)
լ. Եսայիա Ե.21 (Աստծուն վստահելու փոխարեն ինքն իրեն վստահելը)
խ. Եսայիա Ե.24 (Աստծո պատվիրանների և խոսքի արհամարհում)

- Ինչպե՞ս են այս մարգարեություններն իրականանում այսօր (Տես ուսուցման լրացուցիչ գաղափար այս մարգարեություններից մի քանիսի հետագա քննարկման համար):

2. Եսայիան խորհուրդ է տալիս հավատարիմներին կանգնել սուրբ տեղերում:

- Որո՞նք են այն ապահով տեղերը, աշխարհիկ պայմաններից դուրս, որոնց մասին նշում է Եսայիան: Որո՞նք են այն երեք սուրբ տեղերը, որոնք նշվում են Եսայիա Դ.5–6 հատվածներում:

ա. Սիոն սարի ամեն տեղեր (տներ)
բ. Ժողովքներ (ցցեր, ծխեր, և ճյուղեր, տես նաև ՎԿՈ 115.5–6)
գ. Վրան (տաճարներ)

- Ինչպե՞ս կարող է տունը սուրբ վայր լինել, որն ապաստան է ապահովում աշխարհի ամբարշտությունից: Ինչպե՞ս կարող են ցցերը, ծխերը և ճյուղերը լինել սուրբ վայրեր և ապաստան: Ինչպե՞ս կարող է տաճարը սուրբ վայր լինել և ապաստան: Ինչպե՞ս են այս երեք սուրբ վայրերն օգնել ապահովել ձեզ համար պաշտպանություն աշխարհի չարիքի դեմ:

Գրեք գրատախտակին, *Կանգնեք սուրբ տեղերում* իսկ հետո ներքևում գրեք *1. Տներ. 2. Ցցեր, Ծխեր և Ճյուղեր. և 3. Տաճարներ:* Յուրաքանչյուր վերնագրի տակ գրի առեք դասարանի անդամների դիտողությունները:

- Ի՞նչ արտահայտություններ են օգտագործվում Եսայիա Դ.5–6 հատվածներում, թե ինչպես այս սուրբ վայրերը կպաշտպանեն մեզ:

ա. «Հովանի ցերեկվա շոգից»
բ. «Ապաստանի տեղ»
գ. «Ծածկ մրրիկից ու անձրևից»

- Եսայիայի գրվածքներից շատերն ընդգրկված են նաև Մորմոնի Գրքում: Հանձնարարեք դասարանի անդամներին կարդալ 2 Նեփի 14.5 հատվածը՝ բացահայտելու, թե ինչ խոսքեր են ավելացվել Եսայիա Դ.5 հատվածին: (Ավելացված է *Միոնի* բառը): Ինչպե՞ս է այս բառն ավելացնում այս հատվածի ձեր հասկացողությունը:
- Վերջին օրերի տաճարների մասին ի՞նչ մարգարեություն է ներառված Եսայիայի Բ.2–3 հատվածներում: (Շատ մարդիկ կգան Աստծո տունը, որը տաճարն է, և կցանկանան սովորել Աստծո պատվիրանները և քայլել նրա ուղիներում): Ի՞նչ եք կարծում ինչո՞ւ է Եսայիան նկարագրում տաճարը որպես «Տիրոջ սար» (Հնադարյան մարգարեները հաճախ գնում էին սարերը հաղորդակցվելու Տիրոջ հետ և ստանալու խորհուրդ նրանից: Այնտեղ Նա հայտնում էր նրանց բաներ: Մենք այսօր կարող ենք նմանատիպ փորձառություններ ունենալ տաճարում):

3. Եսայիան նկարագրում է Իսրայելի հավաքումը վերջին օրերին:

Եսայիա Ե.26–29 հատվածներում նկարագրվում է վերջին օրերի Իսրայելի հավաքումը: Դրոշը, որը կբարձրացվի, Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին է: «Սուլել» նշանակում է շվացնել կամ կանչել, որը հրավեր է հանդիսանում երկրի ազգերին հավաքվելու Եկեղեցում: Այս հավաքումը կլինի սրընթաց և հզոր:

- Ինչպե՞ս է Եկեղեցում ազգերի հավաքման մարգարեությունն իրականանում այսօր: (Միսիոներները գնում են աշխարհով մեկ ուսուցանելու ավետարանը և հավաքելու մարդկանց դեպի ճշմարտություն): Ի՞նչ կարող է մեզանից յուրաքանչյուրն անել՝ օգնելու այս մարգարեության իրականացմանը:

4. Եսայիան պատրաստակամորեն պատասխանեց մարգարե լինելու իր կանչին:

Տերը կանչեց Եսայիային լինել մարգարե մի տեսիլքի միջոցով, որի ժամանակ Եսայիան տեսավ Տիրոջն իր փառքի մեջ: Այս տեսիլքն արձանագրված է Եսայիա Զ գլխում:

- Ինչպե՞ս է Եսայիան նկարագրում Տիրոջ փառքը (Տես Եսայիա Զ.1–4): Ինչպիսի՞ն էր Եսայիայի արձագանքը, երբ նա տեսավ Տիրոջը (Տես Եսայիա Զ.5: Եսայիան անարժան զգաց լինել Տիրոջ ներկայության մեջ): Ինչպե՞ս Տերը խորհրդանշաբար ցույց տվեց, որ Եսայիան մաքուր էր նրա առաջ (Տես Եսայիա Զ.6–7): Ինչպե՞ս Եսայիան արձագանքեց, երբ Տերը կանչեց նրան մարգարե լինել (Տես Եսայիա Զ.8):
- Նրա կոչն ընդունելիս, Եսայիան օգտագործեց նույն խոսքերն ինչ որ Փրկիչը, երբ Նա ընդունեց պարտավորություն իրականացնել իր զավակների համար մեր Երկնային Հոր փրկության ծրագիրը (Աբրահամ 3.27): Որոնք են այն իրադրությունները, որոնց ժամանակ մենք ևս գուցե պետք է պատասխանենք Տիրոջը նմանատիպ խոսքերով: (Պատասխանները կարող են ներառել, երբ մենք կանչվում ենք ծառայելու միսիայում, երբ մենք կանչվում ենք ծառայելու Եկեղեցում, և երբ մեզ հորդորում են համբերել դժվարին փորձություններին):
- Եսայիայի բազմաթիվ գլուխներ արձանագրված են Մորմոնի Գրքում՝ ներառյալ գլուխ 2-ից մինչև գլուխ 6-ը: Ի՞նչպես է պատճառաբանել մարգարե Նեփին Եսայիայի գրվածքներն իր արձանագրության մեջ ընդգրկելու համար (Տես 2 Նեփի 11.8):
- Եսայիայի այս գլուխներից ո՞ր ուղերձներն են ձեզ ուրախություն պատճառում: Ըստ ձեզ այս գլուխներից ո՞ր ուղերձներն են առավել կարևոր, ձեզ վերագրելու համար:

Եզրափակում

Եսայիայի խոսքերը մեզ շատ բաներ են սովորեցնում վերջին օրերի մասին: Ուսումնասիրելով Եսայիայի խորհուրդը, մենք կարող ենք սովորել, թե ինչպես կանգնել սուրբ տեղերում և խուսափել աշխարհի չարիքներից: Հետևելով նրա օրինակին, մենք կարող ենք ավելի հոժարակամ ծառաներ լինել մեր Երկնային Հոր համար:

Ուսուցման լրացուցիչ գաղափարներ

Հետևյալ նյութն օժանդակում է առաջարկվող դասի ուրվագծին: Օգտագործեք մեկ կամ մի քանի գաղափարներ որպես դասի բաղկացուցիչ մաս:

Հետագա քննարկումներ Եսայիա Ա–Զ գլուխների Եսայիայի մարգարեությունների վերաբերյալ

Տիրոջ համար ընդունելի դարձնելով մեր կրոնական կանոնների պահպանումը

- Ըստ Եսայիայի Ա.11, 16–17, ինչո՞ւ էին Իսրայելացիների զոհաբերություններն անընդունելի Տիրոջ համար: (Չնայած Իսրայելացիները փորձում էին արտաքուստ կրոնասեր լինել, նրանց սրտերը հեռու էին Աստծուց: Տես նաև Մատթեոս Ե.23–24, Մորոնի 7.6–9): Ինչո՞ւ են որոշ մարդիկ փորձում արտաքուստ լինել կրոնասեր, չնայած նրանց սրտերը հեռու են Աստծուց: Ինչո՞ւ է այսպիսի կեղծավորությունը վիրավորում Աստծուն:

Ներման օրհնությունները

- Եսայիան տվել է երկու գեղեցիկ պատկերներ, որոնք օգնում են մեզ հասկանալ, թե որքան լիովին Տերը կների նրանց, ովքեր ապաշխարում են: Նա ասել է. «Եթե ձեր մեղքերը կրկնակի կարմիրի պես լինեն, ձյունի պես պիտի սպիտականան. Եթե նրանք որդան կարմիրի պես լինեն ասրի պես սպիտակ պիտի դառնան» (Եսայիա Ա.18): Ինչպե՞ս կարող են այս պատկերներն օգնել մեզ, երբ մենք մեղանչում և հեռու ենք մեզ զգում Տիրոջից (Տես նաև ՎԿՈՒ 58.42):

Արտաքինում խուսափելով աշխարհիկությունից

- Երեց Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթն ասել է, որ Եսայիայի Գ.16–24 հատվածների մարգարեությունը վերաբերում է այսօրվա Եկեղեցու անդամներին և «վերաբերում է ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց» (*Answers to Gospel Questions*, comp. Joseph Fielding Smith Jr., 5 vols. [1957–66], 5:174): Ինչպե՞ս կարող է մեր հագուստի ձևն արտացոլել կամ ազդել մեր հոգևոր բարօրության վրա: Ի՞նչ է նշանակում համեստ հագնվել: Որո՞նք են մեր հագուստով կամ արտաքինով խիստ մտահոգված դառնալու վտանգները (Տես Ալմա 31.27–28): Ինչպե՞ս կարող ենք երեխաներին սովորեցնել խուսափել արտաքնապես աշխարհիկ լինելուց:

Կոչելով չարը բարի և բարին՝ չար

- Ինչո՞ւ է Իսրայելի չարի և բարու միջև զանազանելու ունակությունը թուլացած (Տես Եսայիա Ե.20): Ի՞նչ ձևերով են մարդիկ այսօր չարը բարի կոչում և բարին՝ չար: Ի՞նչ կարող ենք անել, համոզվելու համար, որ ճանաչում ենք բարու և չարի միջև տարբերությունը (Տես 2 Նեփի 32.5, ՎԿՈՒ 45.57):

«Վայ նրանց, որ իրենց աչքին իմաստուն են»

- Ի՞նչ ի նկատի ուներ Եսայիան, երբ նա նախազուշացնում էր մարդկանց, որ չլինեն «իրենց աչքին իմաստուն, և իրենց առաջը՝ գիտուն» (Եսայիա Ե.21): Ի՞նչն է առաջացնում այս խնդիրը: Ինչո՞ւ է այն վտանգավոր: Ինչպե՞ս կարող ենք զգուշանալ սրանից:

«Նրա ձեռքը դեռ մեկնած է»

- Եսայիա Ե.25, Թ.12, Թ.17, Թ.21, և Ժ.4 հատվածներում ի՞նչ ուղերձ է շեշտել Եսայիան: Ինչո՞ւ է այս ուղերձը կարևոր: Ինչպե՞ս եք դուք հասկացել, որ այս ուղերձը ճշմարիտ է:

Դաս
37

«Դու հրաշալի բաներ արեցիր»

Եսայիա ԻԲ, ԻԴ–ԻԶ, ԻԸ–Լ

Նպատակ

Օգնեք դասարանի անդամներին գալ դեպի Քրիստոսը՝ այն հրաշալի բաներից մի քանիսը ճանաչելու միջոցով, որ նա արել է:

Նախապատրաստում

Աղոթքով ուսումնասիրեք հետևյալ սուրբ գրությունները՝

ա. Եսայիա ԻԲ.22: Փրկիչը բացում է դուռը դեպի Երկնային Հոր ներկայություն:
բ. Եսայիա ԻԴ.21–22: Փրկիչը ողորմություն է ցույց տալիս հոգևոր բանտում գտնվողների հանդեպ:
գ. Եսայիա ԻԵ.1–4, ԼԲ.1–2: Փրկիչն ուժ է և ապաստան:
դ. Եսայիա ԻԵ.6–9: Փրկիչը խնջույք կպատրաստի և կվերացնի «վարագույրը»:
ե. Եսայիա ԻԵ.8: Փրկիչը սրբում է մեր արցունքները:
զ. Եսայիա ԻԶ.19: Փրկիչը կբերի Հարությունը:
է. Եսայիա ԻԸ.16: Փրկիչն է մեր ամուր հիմքը:
ը. Եսայիա ԻԹ.4, 9–14, 18, 24. Փրկիչը կվերականգնի ավետարանը երկրի վրա:
թ. Եսայիա Լ.19–21: Փրկիչը գիտի մեր փորձությունները և առաջնորդում է մեր ուղիները:

Առաջարկվող դասի զարգացում

Ուշադրության վարժություն

Օգտագործեք հետևյալ վարժությունը (կամ ձեր սեփականը) դասը սկսելու համար:

Պատմեք մի դասընկերոջ կամ ընտանիքի անդամի կամ էլ որևէ ընկերոջ մասին, որը մի հրաշալի բան է արել ձեզ համար: Հրավիրեք դասարանի անդամներին խոսել մարդկանց մասին, ովքեր հրաշալի բաներ են արել նրանց համար: Խնդրեք նրանց համառոտակի նկարագրել իրենց զգացումներն այդ մարդկանց հանդեպ: Բացատրեք, որ այս դասը կշեշտի այն հրաշալի բաներից մի քանիսը, որոնք Փրկիչն է արել:

Սուրբ գրության քննարկում և կիրառում

Երբ սովորեցնեք սուրբ գրության հետևյալ հատվածը, քննարկեք, թե ինչպես են դրանք կիրառվում ամենօրյա կյանքում: Խրախուսեք դասարանի անդամներին կիսվել փորձառություններով, որոնք կապված են սուրբգրքյան սկզբունքների հետ:

Բացատրեք, որ մարգարե Եսայիան իր ուսուցման մեծ մասն արել է խորհրդանշական լեզվով: Այս լեզուն ուղղակիորեն չի սովորեցնում, այսպիսով, մենք պետք է քննենք և խորհրդածենք Եսայիայի խոսքերի մասին, որ բացահայտենք այն ճշմարտությունները, որ դրանք սովորեցնում են:

Եսայիայի ամենագեղեցիկ և ամենախորը խորհրդանշական լեզուն Փրկչի մասին է, որն այս դասի կենտրոնում է: Գուցե կամենաք գրել գրատախտակին. «*Նրա անունը կկոչվի Սքանչելի*» (Եսայիա Թ.6): Երբ քննարկեք Փրկչի մասին հետևյալ մարգարեությունները, ամփոփեք դրանցից յուրաքանչյուրը գրատախտակին:

1. Փրկիչը բացում է դուռը դեպի Երկնային Հոր ներկայություն:

Քննարկեք Եսայիա ԻԲ.22:

- Եսայիա ԻԲ.22 հատվածն ասում է, որ Մեսիան ունի «Դավթի տան բանալին»: Սա խորհրդանշական ձև է ասելու, որ Փրկիչն ունի իշխանություն ներս թողնելու կամ դուրս հանելու որևէ անձնավորության Երկնային Հոր ներկայությունից: (Տես նաև Հայտնություն Գ.7–8, 2 Նեփի 9.41): Ի՞նչ արեց Փրկիչը դուռը բացելու մեզ համար: Ի՞նչ պետք է մենք անենք, որ կարողանանք մտնել (Տես 2 Նեփի 9.45):

2. Փրկիչը ողորմածություն է ցույց տալիս հոգևոր բանտում գտնվողների հանդեպ:

Քննարկեք Եսայիա ԻԴ.21–22:

- Ի՞նչ բանտի մասին է խոսվում Եսայիա ԻԴ.21–22 հատվածներում (Հոգևոր բանտ՝ տեղ, որտեղ որոշ մահացած մահկանացուների հոգիները գնում են, մինչ սպասում են Հարության): Ինչո՞ւ են որոշ մահացած մահկանացուների հոգիները հոգևոր բանտում (Տես ՎԿՈՒ 138.32: Նրանցից ոմանք չընդունեցին ավետարանը երկրի վրա, իսկ մյուսները քաջ չէին իրենց վկայություններում):
- Ի՞նչ արեց Փրկիչը հոգևոր բանտի համար (Տես Եսայիա ԽԲ.5–7, ՎԿՈՒ 138.29–37: Նա կազմակերպեց նրանց արդար հոգիներին սովորեցնելու ավետարանը): Ինչպե՞ս է սա ցույց տալիս Փրկչի սերը և ողորմածությունը (Տես Եսայիա ԽԹ.9–10):

3. Փրկիչն ուժ է և ապաստան:

Քննարկեք Եսայիա ԻԵ.1–4, ԼԲ.1–2:

- Եսայիան գրել է, թե ինչպես է Փրկիչը զորացնում մեզ փոթորիկների, հողմերի, անապատների և մեր կյանքի տապի ժամանակ: Ի՞նչ են հետևյալ պատկերները սովորեցնում, թե ինչպե՞ս է Փրկիչն օգնում մեզ, երբ մենք այդպիսի մարտահրավերների ենք դիմակայում:

  ա. Նա ապաստան է փոթորիկից (Եսայիա ԻԵ.4):
  բ. Նա հովանի է տաքությունից (Եսայիա ԻԵ.4):
  գ. Նա քամիի դեմ եղող պատսպարան է (Եսայիա ԼԲ.2):
  դ. Նա ծածկոց (ծածկ) է փոթորիկից (Եսայիա ԼԲ.2):
  ե. Նա չոր տեղում ջրերի վտակներ է (Եսայիա ԼԲ.2):
  զ. Նա մեծ ապառաժի հովանի է ծարավոտ (պապակ) երկրում (Եսայիա ԼԲ.2):

4. Փրկիչը խնջույք կպատրաստի և կվերացնի «վարագույրը»:

Քննարկեք Եսայիա ԻԵ.6–9:

- Եսայիայի ԻԵ.6–7 հատվածների մեկնաբանություններից մեկն այն է, որ սարը տաճարի խորհրդանիշն է (տես նաև Եսայիա Բ.2, ՎԿՈՒ 58.8–9): Ի՞նչ խնջույքի մասին է նշված Եսայիա ԻԵ.6 հատվածում: (Քրիստոսի խոսքերի և ուսմունքների խնջույք): Ինչպե՞ս կարող է տաճար հաճախելը նման լինել խնջույքի:
- Վարագույրը բարակ ծածկոց է: Խորհրդանշաբար այն հաճախ ներկայացնում է անհավատությունը, որը խանգարում է մարդկանց իսկապես գալ դեպի Քրիստոս (Մովսես 7.26): Ինչպե՞ս է վերացվելու «վարագույրը», որը երկրի վրա է (Տես Եսայիա ԻԵ.7–9):

5. Փրկիչը սրբում է մեր արցունքները:

Քննարկեք Եսայիա ԻԵ.8:

- Ի՞նչ եք անում դուք, երբ ինչ-որ մեկն արտասվում է: Ինչպե՞ս է Փրկիչը «սրբում [մեր] արցունքները» (Առաջարկեք, որ դասարանի անդամները պատկերացնեն մի ծնողի, որը սրբում է արցունքները երեխայի երեսից: Այս գործողության մեջ ինչ-որ մտերմության

ներիմաստ կա: Դա քնքշանք արտահայտող ժեստ է, մարդկանց կողմից, ովքեր խորապես սիրում և վստահում են միմյանց):

- Որո՞նք են այն պայմանները, որոնք նշվում են Հայտնություն ԻԱ.4 հատվածում, որոնք առաջացնում են այդ արցունքները: Ինչպե՞ս Փրկիչը կսրբի արցունքները, որոնք առաջացել են այդ պայմաններից:

6. Փրկիչը Հարություն կբերի:

Քննարկեք Եսայիա ԻՁ.19:

- Եսայիան մարգարեացել է, որ երբ Մեսիան գա, նա կմահանա և հարություն կառնի (Եսայիա ԻԵ.8): Էլ ո՞վ է հարություն առնելու (Տես Եսայիա ԻՁ.19, Ա Կորնթացիս ԺԵ.20–22, Ալմա 11.43–44: Աստծո բոլոր զավակները, ովքեր ապրել են երկրի վրա, հարություն կառնեն): Ի՞նչ է ասում Եսայիա ԻՁ.19 հատվածն այն մասին, թե ինչպես կզգանք, երբ հարություն առնենք (Տես նաև ՎԵՈՒ 138.12–16, 50):

  Մարգարե Ջոզեֆ Սմիթն ասել է. «Երբ ձայնը կանչի մեռելներին վեր կենալ…. ի՞նչը կլինի իմ սրտի առաջին ուրախությունը: Հանդիպել իմ հորը, իմ մորը, եղբորս, քրոջս, և երբ նրանք իմ կողքին կլինեն, ես կգրկեմ նրանց, իսկ նրանք ինձ» (*Teachings of the Prophet Joseph Smith,* sel. Joseph Fielding Smith [1976], 295–96):

7. Փրկիչը մեր անսասան հիմքն է:

Քննարկեք Եսայիա ԻԸ.16:

- Ի՞նչ է ասում մեզ Եսայիան Փրկչի մասին, նրան ակնարկելով որպես «ընտիր վեմ» (Տես Մովսես 7.5): Ինչպե՞ս է Հիսուս Քրիստոսը մեր «հաստատուն հիմքը» (Տես Հելաման 5.12): Ի՞նչ կարող ենք անել այս հիմքի վրա կառուցելու համար: Ի՞նչ է խոստանում Տերը, եթե մենք կառուցենք այս հիմքի վրա (Տես ՎԵՈՒ 50.44):

8. Փրկիչը կվերականգնի ավետարանը երկրի վրա:

Քննարկեք Եսայիա ԻԹ.4, 9–14, 18, 24:

- Ի՞նչ կանխագուշակեց Եսայիան ավետարանի վերջին օրերի վերականգման մասին: (Տես Եսայիա ԻԹ.4, 9–14: Նա կանխագուշակեց, որ այն առաջ էր գալու հոգևոր խավարի մի ժամանակաշրջանում: Նա տեսավ նաև Մորմոնի Գրքի ի հայտ գալու մասին:

  Համեմատեք հետևյալ հատվածները Եսայիա ԻԹ գլխում համապատասխան հատվածների հետ Մորմոնի Գրքում, Թանկագին Մարգարիտում և Վարդապետություն և Ուխտերում՝ տեսնելու թե ինչպես են իրականացել Եսայիայի մարգարեություններից մի քանիսը:

ա. Եսայիա ԻԹ.4	Մորոնի 10.27
բ. Եսայիա ԻԹ.9–10, 13	Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.18–19
գ. Եսայիա ԻԹ.11–12	Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.63–65
դ. Եսայիա ԻԹ.14	Վարդապետություն և Ուխտեր 4.1, 6.1

- Եսայիան խոսել է մարդկանց մասին, որոնք բերանով են մոտենում Տիրոջը, մինչդեռ նրանց սրտերը հեռու են Նրանից (Եսայիա ԻԹ.13): Ինչպե՞ս կարող ենք համոզվել, որ մոտ ենք Տիրոջը մեր մտքերով և գործերով, այնպես ինչպես մեր խոսքերով:

- Եսայիան ասել է, որ Մորմոնի Գիրքը կօգնի հոգեպես խուլին և կույրին լսել և տեսնել (Եսայիա ԻԹ.18, 24): Ինչպե՞ս է այս մարգարեությունն իրականացել: Ինչպե՞ս է Մորմոնի գիրքն օգնել հոգեպես ավելի լավ տեսնել և լսել:

9. Փրկիչը գիտի մեր փորձությունները և առաջնորդում է մեր ուղիները:

Քննարկեք Եսայիա Լ.19–21:

- Ի՞նչ են սովորեցնում Եսայիա Լ.19–21 հատվածները ձախորդության մասին: Ի՞նչ են սովորեցնում այս հատվածներն այն մասին, թե ինչ կանի Փրկիչը մեզ համար, երբ գա ձախորդությունը (Տես նաև Ալմա 37.37):

Եզրափակում

Բերեք ձեր վկայությունը Փրկչի մասին, արտահայտելով երախտագիտություն այն հրաշալի բաների համար, որ նա արել է ձեզ համար: Հրավիրեք դասարանի անդամներին վերանայել գրատախտակի վրայի ցուցակը և արտահայտել, թե ինչպես են իրենք զգում, երբ մտածում են այդ բաների մասին: Քննարկեք, թե ինչ կարող ենք անել մենք փոխհատուցելու համար: (Տես Եսայիա ԼԵ. 3–4): Հանձնարարեք դասարանի անդամներին երգել «Ես մնում եմ զարմացած» երգը (Հիմներ և մանկական երգեր էջ 22):

Ուսուցման լրացուցիչ գաղափարներ

Հետյալ նյութն օժանդակում է առաջարկվող դասի ուրվագծին: Օգտագործեք մեկ կամ մի քանի գաղափարներ որպես դասի բաղկացուցիչ մաս:

1. Առարկաներ, որոնք ներկայացնում են Եսայիայի մի քանի պատկերներից մի քանիսը:

Ցուցադրեք տարբեր առարկաներ կամ նկարներ, որոնք ներկայացնում են Եսայիայի պատկերներից մի քանիսը, ինչպես օրինակ բանալի, քար կամ հովանի անապատում, երբ քննարկեք այդ պատկերները:

2. Երաժշտություն Հենդելի *Մեսիայից*

Միացրեք «Մեզ համար մանուկ ծնվեց» Եսայիա Թ.6 հատվածի մոտիվներով գրված Ջորջ Ֆրեդերիկ Հենդելի *Մեսիան*:

3. «Վարդապետի ձեռքի հպումը»

Եթե *Ընտանեկան երեկոյի տեսանյութերի (միջազգային) հավելվածը* (5X736) մատչելի է, ցուցադրեք «Վարդապետի ձեռքի հպումը» 18-րոպեանոց շարժանկարը, որպես դասի բաղկացուցիչ մաս:

Դաս
38

«Ինձանից ջոկ Փրկիչ չկա»

Եսայիա Խ-ԽԹ

Նպատակ

Օգնեք դասարանի անդամներին հասկանալ, որ Հիսուս Քրիստոսն անզուգական է իր ժողովրդի հանդեպ նվիրվածությամբ և նա նրանց համար մեծ գործ ունի, որ անեն:

Նախապատրաստում

1. Աղոթքով ուսումնասիրեք Եսայիա Խ–ԽԹ հատվածները, որոնք քննարկվում են այս դասում:
2. Եթե օգտագործելու եք ուշադրության վարժությունը, դասարանի առջև գրեք հետևյալ մեջբերումները պաստառի կամ գրատախտակի վրա:

   ա. «Ձեզ ինչպե՞ս է երևում Քրիստոսի համար» (Մատթեոս ԻԲ.42):
   բ. «Ինչպիսի՞ մարդ եք դուք պարտավոր լինել» (3 Նեփի 27.27):
   գ. «Մարդիկ ինձ համար ո՞վ են ասում, որ մարդի Որդին լինի…. Իսկ դուք ո՞վ եք ասում ինձ համար, թե լինեմ» (Մատթեոս ԺԶ.13, 15):
   դ. «Ո՞վ է Եհովայի կողմից» (Ելից ԼԲ.26):
   ե. «Ընդունե՞լ եք դուք նրա պատկերը ձեր դեմքին» (Ալմա 5.14):

3. Եթե *Ընտանեկան երեկոյի տեսանյութերի (միջազգային) հավելվածը* (5X736) մատչելի է, ցուցադրեք հինգ րոպեանոց «Ձեզ ինչպե՞ս է երևում Քրիստոսի համար» հատվածը:

Առաջարկվող դասի զարգացում

Ուշադրության կենտրոնացման վարժություն

Օգտագործեք հետևյալ վարժությունը (կամ ձեր սեփականը) դասը սկսելու համար:

Դասարանի անդամների ուշադրությունը հրավիրեք այն մեջբերումների վրա, որոնք գրել եք պաստառի կամ գրատախտակի վրա (տես «Նախապատրաստում» վերևում): Այնուհետև ուղղեք հետևյալ հարցերը.

- Ի՞նչ ընդհանուր բան ունեն այս մեջբերումները: (Դրանք բոլորը հարցեր են սուրբ գրություններից, որոնք օգնում են մեզ գնահատել Փրկչի մասին մեր վկայությունը և նրա աշակերտը լինելու մեր պարտականությունը): Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ այդքան շատ այսպիսի հարցեր կան սուրբ գրություններում:

Բացատրեք, որ այս դասի մի մասը կենտրոնանում է սուրբ գրությունների հարցերի վրա, որոնք շեշտում են Փրկչի մեծությունը:

Սուրբ գրության քննարկում և կիրառում

Երբ ուսուցանեք սուրբ գրության հետևյալ հատվածները, քննարկեք, թե ինչպես են դրանք կիրառվում ամենօրյա կյանքում: Խրախուսեք դասարանի անդամներին կիսվել անձնական փորձառություններով, որոնք կապված են սուրբգրքյան սկզբունքների հետ:

1. Եսայիան ուսուցանում է, որ Փրկիչն անզուգական է:

- Եսայիայի միջոցով Տերը կրկնողաբար մի որոշակի հարց է ուղղում տարբեր ձևերով: Ի՞նչ հարց է ուղղվում հետևյալ հատվածներից յուրաքանչյուրում:

  ա. Եսայիա Խ.18 («Ուրեմն ո՞ւմ եք նմանեցնում Աստծուն»):

բ. Եսայիա ԽԴ.8 («Մի՞թե ինձանից ջոկ Աստված կա»):
գ. Եսայիա ԽԶ.5 («Ո՞մ եք նմանեցնում ինձ և հավասարեցնում, և ինձ հետ [համեմատում]»):

- Ի՞նչն է նմանատիպ նախորդ հարցերում: (Դրանք բոլորը սովորեցնում են, որ Փրկիչն ավելի մեծ է, քան որևէ անձնավորություն կամ որևէ բան, որի հետ կարողանայինք համեմատել նրան): Ինչպե՞ս կպատասխանեիք այս հարցերին: Ինչպե՞ս են դրանք պատասխանվում Եսայիայի գրքում (Տես ներքևում բերված հատվածները, նշելով որ յուրաքանչյուր դեպքում Տերը խոսում էր կռապաշտ ժողովրդի հետ, ովքեր իրենք էին ստեղծում իրենց սեփական արծաթից և ոսկուց կեղծ աստվածները):

ա. Եսայիա ԽԳ.11 («Ինձանից ջոկ Փրկիչ չկա»):
բ. Եսայիա ԽԴ.6 («Ինձանից ջոկ Աստված չկա»):
գ. Եսայիա ԽԵ.5 («Ինձանից ջոկ Աստված չկա», տես նաև հատվածներ 6, 14, 18, 21–22):
դ. Եսայիա ԽԶ.9 («Ես եմ Աստված. և ուրիշը չկա [ինձ նման]):

- Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ են այս հարցերը և պատասխաններն այդքան շատ անգամ կրկնվում Եսայիայի գրքում: Ինչպե՞ս են այս հարցերը և պատասխաններն արդիական մեր օրերում:

2. Եսայիան նկարագրում է Փրկչի անզուգական հատկանիշները:

- Մարգարե Ջոզեֆ Սմիթը սովորեցրել է, որ մենք պետք է «*ճիշտ* գաղափար ունենանք [Աստծո] բնավորության, կատարելության և հատկանիշների մասին», որպեսզի Նրա հանդեպ հավատք ունենանք (*Lectures on Faith* [1985], 38): Եսայիան տալիս է բազմաթիվ գեղեցիկ նկարագրություններ Փրկչի բնավորության և հատկանիշների մասին: Հանձնարարեք դասարանի անդամներին կարդալ ստորև բերված մի քանի հատվածները և քննարկեք հետևյալ հարցերը. Փրկչի ի՞նչ հատկանիշ է նշված հատվածում: Ինչպե՞ս է այդ հատկանիշի մասին գիտենալն օգնում մեծացնել մեր հավատքը Փրկչի հանդեպ: Գուցե կամենաք գրի առնել այդ հատկանիշները գրատախտակին:

ա. Եսայիա Խ.13–14 (Ոչ ոք նրան խորհուրդ չի տալիս կամ ղեկավարում):
բ. Եսայիա Խ.28–31 (Նա երբեք չի հոգնում, նա զորացնում է մեզ):
գ. Եսայիա Խ.12, 21–22, 26; ԽԵ.12, 18 (Նա է ծրագրել և ստեղծել տիեզերքը և գիտի նրա յուրաքանչյուր մասը):
դ. Եսայիա ԽԱ.17–18 (Նա լսում է մեզ, երբ մենք նեղության մեջ ենք և օրհնում է մեզ առատորեն):
ե. Եսայիա ԽԲ.1, 4 (Նա չի թուլանա կամ հուսահատվի մինչև որ իրականացնի իր նպատակները):
զ. Եսայիա ԽԲ.16 (Նա լուսավորում է և ուղղում ճանապարհն իր ժողովրդի համար, ովքեր կորած են):
է. Եսայիա ԽԳ.1–4 (Նա կօգնի իր ժողովրդին իրենց փորձությունների մեջ):
ը. Եսայիա ԽԳ.25–26, ԽԴ.21–23 (Նա ջնջում է մեր մեղքերը և այլևս չի հիշում դրանք):
թ. Եսայիա ԽԴ.2–4 (Նա թափում է իր Հոգին մեր ընտանիքների վրա, ինչպես ջուրը չոր գետնի վրա):
ժ. Եսայիա ԽԶ.3–4 (Նա տանում է իր ժողովրդին ծննդից մինչև ծեր տարիքը):
ի. Եսայիա ԽԹ.14–16 (Նա երբեք չի մոռանա մեզ: Մենք «փորագրված» ենք նրա ձեռքերի ափերի մեջ):

Հրավիրեք դասարանի անդամներին պատմել այն փորձառությունների մասին, որոնք զորացրել են իրենց վկայությունները Փրկչի այս հատկանիշներից որևէ մեկի վերաբերյալ:

3. Մեր նվիրվածության համար աշխարհը (Բաբելոնը) մրցակցում է Փրկչի հետ:

- Ո՞ւմ է ուղղված Եսայիայի ԽԷ գլուխը (Բաբելոնը հնադարյան աշխարհի մի հզոր քաղաք էր, որը կործանվեց իր ամբարշտության պատճառով: Սուրբ գրություններում Բաբելոնը հաճախ օգտագործվում է նաև որպես խորհրդանիշ աշխարհի ամբարշտության համար):
- ԽԷ գլխում Եսայիան նախազգուշացնում է, որ Բաբելոնը կկործանվի իր ամբարշտության պատճառով: Ի՞նչ են սովորեցնում հետևյալ հատվածներն աշխարհիկ ամբարիշտ ուղիներին ձգտելու հետևանքների մասին:

  ա. Եսայիա ԽԷ.1, 5 (Աշխարհը փոշուն կհավասարեցվի և կդառնա լուռ և խավար):
  բ. Եսայիա ԽԷ.7–9 (Չնայած աշխարհը կարծում է, որ այն անպարտելի է, այն կկործանվի և կկորցնի մեծագույն արժեքի բաները, որոնք խորհրդանշված են ամուսնու և երեխաների կորստով):
  գ. Եսայիա ԽԷ.10–11 (Քանի որ աշխարհը հայտարարում է, որ այն ավելի մեծ է, քան Աստված, ամայացում պիտի գա նրա վրա):

- Եսայիա ԽԷ.8, 10, ի՞նչ է հռչակում Բաբելոնը (աշխարհը), որը նույնն է ինչ Փրկչի հայտարարությունն իր մասին (Ես եմ և ինձանից ջոկ մեկը չկա): Ի՞նչ կարող է առաջարկել աշխարհը համեմատած նրա հետ, ինչ Փրկիչն է առաջարկում: Ինչո՞ւ են այդքան շատ մարդիկ Փրկչին նվիրվելու փոխարեն իրենց նվիրաբերում աշխարհին: Ինչպե՞ս կարող ենք օգնել ուրիշներին տեսնել, թե ինչ է առաջարկում Փրկիչը:
- Եսայիա ԽԸ.17–18 հատվածներում, Տերը մեծ օրհնություններ է խոստանում նրանց, ովքեր որոնում են ավելի շուտ իրեն, քան աշխարհը: Ինչպե՞ս է այս խոստումն ազդում ողջ սրտով Փրկչին հետևելու ձեր զգացման վրա:

4. Եսայիան նկարագրում է վերջին օրերի Իսրայելի առաքելությունը

- Եսայիա ԽԹ գլուխը պարունակում է բազմաթիվ մարգարեություններ վերջին օրերի Իսրայելի առաքելության մասին: Այս մարգարեությունները կարող են օգնել մեզ հասկանալ այն կարևոր աշխատանքը, որ Տերն ունի յուրաքանչյուրիս համար, որ կատարենք: Հանձնարարեք դասարանի անդամներին կարդալ ներքևում նշված մի քանի հատվածները և քննարկեք հետևյալ հարցը. Ի՞նչ է այս հատվածը սովորեցնում մեր պարտականությունների մասին այս վերջին օրերում: (Նշեք, որ մարգարեություններից շատերը վերաբերում են ինչպես Փրկչի աշխատանքին, այնպես էլ Իսրայելի տանը՝ նրա ծառաների աշխատանքին [Եսայիա ԽԹ.3]):

  ա. Եսայիա ԽԹ.1, 5: «Եհովան ինձ արգանդիցն է կանչել»: (Մենք կանչված ենք ծննդից ի վեր կատարելու Տիրոջ աշխատանքը վերջին օրերին. տես նաև Երեմիա Ա.5):
  բ. Եսայիա ԽԹ.2: «Իմ բերանը սրած թուրի պես է արել»: (Այս պատկերը նշանակում է ճշմարտության զորավոր խոսքեր խոսել՝ Տիրոջ խոսքերը. տես նաև ՎԱՈՒ 6.2):
  գ. Եսայիա ԽԹ.2. «Իր ձեռքի հովանիի տակին ծածկել է ինձ» (Տերը պահպանել է մեզ և պատրաստել մեզ մեր մեծ պարտականությունների համար. տես նաև ՎԱՈՒ 86.9):
  դ. Եսայիա ԽԹ.2. «Ինձ փայլուն նետ է շինել» (Փայլեցված կոթով նետերը թռչում են ուղիղ և ճիշտ: Մենք փայլեցվել ենք և պատրաստվել ենք Տիրոջ կողմից թռչելու ուղիղ և ճիշտ, ուր էլ նա ուղարկի մեզ):
  ե. Եսայիա ԽԹ.6: «Դու իմ փրկությունը [պիտի] լինես, մինչև երկրի ծայրերը» (Տերը խնդրել է իր ծառաներին վեր կենալ և վերականգնել Իսրայելի մնացորդին և լույս լինել Հեթանոսներին: Այս ձևով մենք կարող ենք օգնել փրկություն բերել երկրի ծայրերին. տես նաև ՎԱՈՒ 86.8–11):

Եզրափակում

Վկայեք, որ Եսայիայի գրվածքները կարող են օգնել մեզ զարգացնել ավելի մեծ սեր Փրկչի հանդեպ և ավելի մեծ ըմբռնում այն աշխատանքի վերաբերյալ, որ նա կամենում է, որ մենք անենք: Հրավիրեք դասարանի անդամներին կամ մի փոքրիկ խմբի երգել «Աստծո Սրբեր» օրհներգը («Հիմներ և մանկական երգեր, էջ 6):

Ուսուցման լրացուցիչ գաղափարներ

Հետևյալ նյութն օժանդակում է առաջարկվող դասի ուրվագծին: Օգտագործեք մեկ կամ մի քանի գաղափարներ որպես դասի բաղկացուցիչ մաս:

1. Եսայիայի կողմից օտագործվող խորհրդանիշներ

- Եսայիան կրկնողաբար օգտագործել է կուրությունը որպես ամբարշտության և հոգևոր տգիտության խորհրդանիշ (Եսայիա ԻԹ.10, 18, ԼԲ.6–7, ԽԲ.16–18, ԽԳ.8, ԽԴ.9): Երբ խորհեք այս հատվածների մասին, հիշեք որ Փրկիչը հաճախ հայտարարել է, որ Նա է Աշխարհի Լույսը (Հովհաննես Ը.12): Ինչպե՞ս կարող ենք ավելի լիովին բացել մեր հոգևոր աչքերն աշխարհի Լույսի առաջ:
- Եսայիան կրկնողաբար օգտագործում է ջրի պատկերները (ԺԲ.3, ԼԲ.2, ԽԱ.17–18, ԽԳ.19–20, ԽԴ. 3–4, ԽԸ.18, 21, ԽԹ.10): Ինչպե՞ս է Փրկչի ուսմունքը, որ նա է կենդանի ջրի աղբյուրը, օգնում ձեզ հասկանալ այս հատվածները (Տես Հովհ. Դ.7–14):

2. Ապավինել Տիրոջը

- Ի՞նչ է նշանակում «ապավինել Տիրոջը» (Եսայիա Խ.31): Ինչպե՞ս է Տերը նորոգում նրանց ուժը, ովքեր ապավինում են նրան (Տես Եսայիա ԽԱ.10): Հրավիրեք դասարանի անդամներին կիսվել փորձառություններով մարդու հոգևոր կամ ֆիզիկական ուժը նորոգող Տիրոջ մասին:

3. «Բայց դու ինձ չկանչեցիր»

- Ինչո՞ւ են մեզանից ոմանք զգում, որ Տերը լքել է մեզ: Եթե զգում ենք, որ Տերը ետ է քաշվել մեզանից, ո՞րն է հավանական պատճառը (Տես Եսայիա ԽԳ.22–26, Մոսիա 5.13): Ի՞նչ կարող ենք անել Նրան կրկին մոտ զգալու համար:

  Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալն ասել է. «Ես հասկացել եմ, որ երբ ես անփույթ եմ դառնում աստվածության հետ իմ փոխհարաբերություններում, թվում է թե ինձ ոչ մի աստվածային ականջ չի լսում և ոչ մի աստվածային ձայն չի խոսում ինձ հետ, որ ես հեռու հեռվում եմ: Երբ որ խորասուզվում եմ սուրբ գրությունների մեջ, հեռավորությունը կրճատվում է և հոգևորությունը վերադառնում է» (*The Teachings of Spencer W. Kimball*, ed. Edward L. Kimball [1982], 135):

Դաս
39

«Ի՞նչ գեղեցիկ են սարերի վրա»

Եսայիա Ծ–ԾԳ

Նպատակ

Զորացնել դասարանի յուրաքանչյուր անդամի վկայությունը Հիսուս Քրիստոսի Քավության մասին:

Նախապատրաստում

1. Աղոթքով ուսումնասիրեք Եսայիա Ծ–ԾԳ գլուխները, որոնք քննարկվում են այս դասում: Դրանք կենտրոնացած են Փրկչի քավող զոհաբերության վրա:
2. Լրացուցիչ ընթերցանություն՝ Մոսիա 14–15:
3. Եթե օգտագործելու եք ուշադրության վարժությունը, հանձնարարեք երկու կամ երեք դասարանի անդամների ընտրել մի սիրված օրհներգ Փրկչի սիրո և զոհաբերության մասին և պատրաստվեք պատմել դասարանին օրհներգի ուղերձի և նրա մասին, թե ինչպես է այն ազդել իրենց վրա: Պատմեք Փրկչի մասին ձեր իսկ սիրելի օրհներգերից մեկի մասին:

Առաջարկվող դասի զարգացում

Ուշադրության կենտրոնացման վարժություն

Օգտագործեք հետևյալ վարժությունը (կամ ձեր սեփականը) դասը սկսելու համար:

Բացատրեք, որ Եկեղեցու շատ օրհներգեր օգնում են մեզ հասկանալ նրա քավող զոհաբերության միջոցով մեր հանդեպ ցուցաբերած Փրկչի սերը: Հրավիրեք դասարանի հանձնարարված անդամներից յուրաքանչյուրին պատմել Փրկչի սիրո և զոհաբերության մասին որևէ սիրելի օրհներգ: Քանի որ երաժշտությունը կարող է օգնել Տիրոջ Հոգին դասարան հրավիրել, խնդրեք դասարանի անդամներին երգել քննարկված հիմներից մեկը:

Բացատրեք, որ այս դասը կքննարկի Փրկչի կյանքի և առաքելության մասին Եսայիայի մարգարեություններից մի քանիսը:

Սուրբ գրության քննարկում և կիրառում

Երբ ուսուցանեք սուրբ գրության հետևյալ հատվածները, քննարկեք, թե ինչպես են դրանք վերաբերում ամենօրյա կյանքին: Խրախուսեք դասարանի անդամներին կիսվել փորձառություններով, որոնք կապված են սուրբգրքյան սկզբունքների հետ:

1. Եսայիան խոսում է սուրհանդակների մասին, ովքեր բերում են ավետիս:

- Եսայիա ԾԲ.7: Եսայիան բանաստեղծական ձևով նկարագրել է մեծ ուղերձ բերող մարդկանց: Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ է Եսայիան ակնարկում սուրհանդակի ոտքերի մասին: (Հին աշխարհում նախքան էլեկտրոնային հաղորդակցությունների մատչելի դառնալը, կարևոր ուղերձները հաճախ բերվում էին վազորդների միջոցով, որոնք ճանապարհորդում էին ոտքով: Եսայիան օգտագործում է սուրհանդակների ոտքերը խորհրդանշելու հենց սուրհանդակներին): Ի՞նչ էր զգում Եսայիան այդ սուրհանդակների հանդեպ:
- Ինչպե՞ս է Եսայիան նկարագրում այդ առաքվող ուղերձը (Այն բարի լուրերի ուղերձ է, խաղաղության և փրկության ուղերձ): Մորմոնի Գրքի մարգարե Աբինադին բացատրեց, որ Եսայիայի կողմից նկարագրվող սուրհանդակները ներառում են մարգարեներին և

նաև հենց Տիրոջը (Մոսիա 15.13–18): Խաղաղության և փրկության ի՞նչ մեծ ուղերձ են բերել այդ սուրհանդակները (Տես 2 Նեփի 2.6–8):

- Էլ ովքե՞ր են բերում ավետարանի ուղերձն աշխարհին: Խնդրեք դասարանի անդամներին պատմել այն փորձառությունների մասին, որ նրանք ունեցել են ավետարանի ուղերձով կիսվելիս: Խնդրեք, դասարանի անդամներին, որ պատմեն, թե ինչ են նրանք զգում այն մարդկանց հանդեպ, ովքեր այդ ուղերձը բերեցին իրենց:

2. Եսայիան մարգարեանում է Փրկչի քավող զոհաբերության մասին:

Քննարկեք Փրկչի քավող զոհաբերության մասին հետևյալ մարգարեություններն ու օրհնությունները:

- Եսայիա Ծ.5–7: Ի՞նչ է սովորեցնում այս հատվածը մեզ համար արվող Փրկչի մեծ զոհաբերության մասին: Ի՞նչ է սովորեցնում Մատթեոս ԻԶ.39 և Փիլիպպեցիս Բ.8 հատվածները Փրկչի վերաբերմունքի մասին, երբ նա դիմակայում էր մեծ տառապանքին:
- Եսայիա ԾԱ.6: Ի՞նչ համեմատություն է արվում այս հատվածում: Որքան երկար կտևի Քավության ազդեցությունը (Տես նաև Մոսիա 16.9, Ալմա 34.10, 14):
- Եսայիա ԾԱ.22: Ո՞ւմ համար է Փրկիչն աղաչում: Ինչպե՞ս է Քավությունը թույլ տալիս նրան լինել մեր Բարեխոսը: (Տես ՎԼՈՒ 45.3–5): Ի՞նչ է «թմրության բաժակը», որ նա խմեց մեզ համար (Տես ՎԼՈՒ 19.15–20): Ի՞նչ պետք է անենք մենք ստանալու Քավության միջոցով առաջարկվող լրիվ օրհնությունները:
- Եսայիա ԾԲ.3: Ի՞նչ է նշանակում «առանց փողի փրկվել» (Տես 2 Նեփի 26.27–28, Եսայիա ԾԵ.1–3):
- Եսայիա ԾԳ.2–4: Ի՞նչ են ասում մեզ այս հատվածները Փրկչի կյանքի մասին: Ինչո՞ւ է նա կարողանում հասկանալ մեր ցավերն ու մեր վիշտը (Տես Ալմա 7.11–13, Եբրայեցիս Բ.16–18, Դ.15): Ինչպե՞ս եք զգացել, որ նա հասկանում է ձեր ցավերն ու վիշտը:
- Եսայիա ԾԳ.5: Ինչո՞ւ Փրկիչը կամեցավ տանել վիրավորված, զարկված և խարազանված լինելու ցավը (Տես 1 Նեփի 19.9):
- Եսայիա ԾԳ.6–7: Բնավորության ինչպիսի՞ հատկանիշներ դրսևորեց Փրկիչը, երբ նրան ճնշեցին, չարչարեցին և ստիպեցին տանել մեր անօրինությունները: Ինչպե՞ս ենք մենք ավելի շուտ «դառնում [մեր] ճանապարհին», քան ընդունում Երկնային Հոր կամքը: Ինչպե՞ս կարող է Փրկչի օրինակն օգնել մեզ ընդունել Երկնային Հոր կամքը:
- Եսայիա ԾԳ.10: Ի՞նչ ի նկատի ուներ Եսայիան, երբ նա ասաց, որ «Տերը հաճեց զարկել» Փրկչին: Ի՞նչ ենք իմանում այս հատվածից մեր հանդեպ Երկնային Հոր սիրո մասին (Տես նաև Հովհաննես Գ.16–17):
- Եսայիա ԾԳ.8–11: Բացատրեք, որ Մորմոնի Գրքի մարգարե Աբինադին զորեղ մեկնաբանություն տվեց այս հատվածների վերաբերյալ, երբ նա խոսում էր թագավոր Նոյի ամբարիշտ քահանաների հետ (Մոսիա 15.10–13): Ըստ Աբինադիի՝ ո՞վ էր դառնալու Փրկչի սերունդը (Տես նաև Մոսիա 5.7–8):
- Եսայիա ԾԳ.12: Բացատրեք, որ մարտի վերջում հաղթանակող բանակի հրամանատարը բաժանում էր հաղթանակի պտուղներն իր հետևորդների միջև: Որո՞նք են մեղքի և մահվան վրա Քրիստոսի հաղթանակի պտուղները, որոնցով նա կամենում է կիսվել մեզ հետ (Տես Հռովմայեցիս Ը.16–17, Բ Տիմոթեոս Դ.7–8):

3. Եսայիան նկարագրում է մեր պարտականություններից մի քանիսը:

- Ինչպես արձանագրված է Եսայիա ԾԱ և ԾԲ գլուխներում ինչպիսի պարտականություններ ունենք մենք, որպես մարդիկ, ովքեր ընդունել ենք Փրկչի Քավությունը:

ա. Եսայիա ԾԱ.1, 4, 7: Լսեք և հնազանդվեք Տիրոջը. մի վախեցեք մարդկանց նախատինքից:
բ. Եսայիա ԾԱ.12–13: Հիշեք Տիրոջը, որն Արարիչն է: Մի վախեցեք սատանայից:
գ. Եսայիա ԾԲ.1–2: Զարթնիր և հագիր քահանայության զորությունդ (տես ՎԿՈՒ 113.7–8): Հագիր արդարության գեղեցիկ հանդերձներդ (տես Հայտնություն ԺԹ.7–8): «Քանդիր պարանոցիդ կապերը» (տես ՎԿՈՒ 113.9–10):
դ. Եսայիա ԾԲ.11: Հեռացեք աշխարհի ամբարշտությունից: Մի դիպչեք պիղծ բաների. մաքուր եղեք:

- Ինչպե՞ս կարող ենք ավելի լավ կատարել այս պարտականություններից յուրաքանչյուրը:

Եզրափակում

Վերընթերցեք Մոսիա 15.18 հատվածը, որտեղ մարգարե Աբինադին նկարագրում է Փրկչին որպես սուրհանդակ, որի ոտքերը գեղեցիկ են սարերի վրա: Բացատրեք, որ նրա ոտքերը գեղեցիկ լինելու պատճառներից մեկն այն էր, որ դրանք կրում էին մեխերի հետքերը՝ քավող սիրո նշանները: Բերեք վկայություն, թե ինչպես են Եսայիայի ուսմունքները զորացրել ձեր սերը Փրկչի հանդեպ և նրա քավող զոհաբերության օրհնություններին արժանի լինելու ձեր ցանկությունը: Խնդրեք դասարանի անդամներին կիսվել, թե ինչպես զորացան նրանց վկայությունները ևս:

Ուսուցման լրացուցիչ գաղափարներ

Հետևյալ նյութն օժանդակում է առաջարկվող դասի ուրվագծին: Օգտագործեք մեկ կամ մի քանի գաղափարներ որպես դասի բաղկացուցիչ մաս:

1. Քայլել լույսով

Վերընթերցեք Եսայիա Ծ.10–11 հատվածները և նշեք այն ընտրությունը, որը Եսայիան տալիս է մեզ այս հատվածներում: Եթե մենք ընտրում ենք երկյուղել Տիրոջից, հնազանդվել նրա ծառաների ձայնին և վստահել նրան, մենք կունենանք մեզ առաջնորդող նրա լույսը և չենք քայլի խավարում (Հովհ. Ը.12, ԺԲ.46): Եթե մենք ընտրենք քայլել մեր սեփական լույսով, որը համեմատվում է կայծերի լույսին, Տերը նախազգուշացնում է, որ մենք «ցավով պիտի պառկենք»:

2. Միսիոներական աշխատանք

Եթե *Ընտանեկան երեկոյի տեսանյութերի (միջազգային) հավելվածը* (5X736) մատչելի է, ցուցադրեք «Միսիոներական աշխատանք՝ մեր մեծագույն պարտականությունը» հինգ րոպեանոց հատվածը, որպես դասի բաղկացուցիչ մաս:

«Լայնացրու քո վրանի տեղը»

Դաս
40

Եսայիա ԾԴ–ԾԶ, ԿԳ–ԿԵ

Նպատակ

Խրախուսեք դասարանի անդամներին զորացնել Սիոնի ցցերը և նախապատրաստվել Երկրորդ Գալստյանը և Հազարամյակին:

Նախապատրաստում

1. Աղոթքով ուսումնասիրեք Եսայիա ԾԴ–ԾԶ և ԿԳ–ԿԵ հատվածները, որոնք քննարկվում են այս դասում:
2. Եթե օգտագործելու եք ուշադրության վարժությունը, բերեք վրանի մի ցից:
3. Եթե ունեք Հարություն առած Քրիստոսի նկարը, օգտագործեք այն դասի ժամանակ (62187, Ավետարանական Արվեստի Նկարների Ժողովածու 239):

Առաջարկվող դասի զարգացում

Ուշադրության կենտրոնացման վարժություն

Օգտագործեք հետևյալ վարժությունը (կամ ձեր սեփականը) դասը սկսելու համար:

Գրատախտակի վրա պատկերեք վրանի մի նկար ստորև ցույց տրվածի նման: Այնուհետև ցուցադրեք վրանի մի ցից և ուղղեք հետևյալ հարցերը՝



- Ինչո՞ւ են այս վրանին անհրաժեշտ ցցեր: Ի՞նչ կպատահեր, եթե վրանը չամրացվեր ցցերով:
- Ի՞նչ է ներկայացնում Եսայիա ԾԴ.2 հատվածում նշված վրանը (Հիսուս Քրիստոսի Եկեղեցին): Ի՞նչ են ներկայացնում վրանի ցցերը:

  Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոնն ասել է.

  «*Ցից* տերմինը խորհրդանշական արտահայտություն է: Ձեր մտքում պատկերն իրենից ներկայացնում է մի մեծ վրան, որը պահվում է պարաններով, որոնք տարածվում են դեպի բազմաթիվ ցցեր, որոնք պինդ ամրացված են գետնին:

  Մարգարեները վերջին օրերի Սիոնը նմանեցրել են մի մեծ վրանի, որը պարփակում է երկիրը: Այդ վրանը պարաններով ամրացված է ցցերին: Այդ ցցերը, իհարկե, երկրագնդի

վրա տարածված տարբեր աշխարհագրական կազմակերպություններ են: Ներկայումս Իսրայելը հավաքվում է Սիոնի տարբեր ցցերում» (“Strengthen Thy Stakes,” *Ensign*, Jan. 1991, 2):

Պատմեք դասարանի անդամներին, որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու առաջին ցցերը կազմավորվել են Կիրթլենդում՝ Օհայո, և Քլեյ Գավառում՝ Միսսուրի, 1834 թվականին: Երբ Եկեղեցին աճեց, ավելի շատ ցցեր ավելացան ինչպես պատվիրված էր Տիրոջ կողմից (ՎԵՈՒ 101.20–21): Այսօր ողջ աշխարհում տեղակայված են հարյուրավոր ցցեր:

Բացատրեք, որ այս դասը կքննարկի, թե ինչպես կարող ենք ամրացնել Սիոնի ցցերը: Այն նաև կքննարկի Եսայիայի հզոր ուսմունքները Երկրորդ Գալստյան և Հազարամյակի վերաբերյալ:

Սուրբ գրության քննարկում և կիրառում

Երբ ուսուցանեք սուրբ գրության հետևյալ հատվածները, քննարկեք, թե ինչպես են դրանք կիրառվում ամենօրյա կյանքում: Խրախուսեք դասարանի անդամներին կիսվել փորձառություններով, որոնք կապված են սուրբգրքյան սկզբունքների հետ:

1. «Երկարացրու չվաններդ, և ցցերդ պնդացրու» (Եսայիա ԾԴ.2):

- Ի՞նչ եք կարծում, ի՞նչ է նշանակում «Լայնացրու քո վրանի տեղը» արտահայտությունը (Եսայիա ԾԴ.2): (Տերն ուզում է, որ Եկեղեցու անդամները կիսվեն ավետարանով շատ մարդկանց հետ, այնպես որ այն կարողանա ծածկել երկիրը: Եսայիան մարգարեացել է, որ վերջին օրերում, Եկեղեցին բուռն աճ կունենա և շատ մարդիկ ողջ աշխարհում դարձի կգան դեպի ճշմարտությունը [Եսայիա ԾԴ.3]):
- Էլ ի՞նչ խորհուրդ է տրվում Եսայիա ԾԴ.3 հատվածում վրանի կամ Եկեղեցու վերաբերյալ: Ինչպե՞ս կարող ենք հետևել այս խորհրդին: Ամփոփեք քննարկումը գրատախտակին, ինչպես ցույց է տրված ներքևում:

Եսայիայի խորհուրդը	Ի՞նչ կարող ենք անել մենք
Տարածիր վրանի վարագույրները և երկարացրու պարանները:	Ծառայել որպես լիաժամկետ միսիոներներ. կիսվել ավետարանով ընկերների և հարևանների հետ:
Պնդացրու վրանի ցցերը:	Ամրացնել մեր տեղական ցցերը:

- Ի՞նչ կարող ենք անել ամրացնելու այն ցիցը, որտեղ մենք ապրում ենք (Պատասխանները կարող են ներառել հետևյալը՝ զարգացնել անձնական հոգևոր ուժ, ազդել մեր ընտանիքների և ընկերների վրա անելու նույնը, ծառայել մեր անդամ և ոչ անդամ հարևաններին և ընդունել Եկեղեցում ծառայելու կոչումներ քահանայության առաջնորդներից):
- Ինչպե՞ս կարող են ցցերն օրհնել մարդկանց կյանքը (Տես ՎԵՈՒ 115.5–6): Ինչպե՞ս են Սիոնի ցցերը պաշտպանության և ապաստանի վայրեր մեզ համար:

2. «Մեծ ողորմություններով քեզ պիտի ժողովեմ» (Եսայիա ԾԴ.7):

- Չնայած Իսրայելը ցրված էր շատ տարիների ընթացքում, Տերը խոստացավ, որ նա կհավաքի նրան ճշմարիտ Եկեղեցում վերջին օրերին (Եսայիա ԾԴ. 4–10): Ի՞նչ կարող

ենք սովորել Տիրոջ մասին Եսայիա ԾԴ. 4–10 հատվածներում: Ի՞նչ առանձնահատուկ օրհնություններ է Տերը խոստանում իր արդար ծառաներին (Տես Ասայիա ԾԴ.13–14, 17): Ինչո՞ւ են այս խոստումները կարևոր:

- Ովքե՞ր են հրավիրված ապաստան գտնել՝ հավաքվելով Սրբերի հետ: (Երկնային Հոր բոլոր զավակները): Վերընթերցեք հետևյալ հատվածները Եսայիայից, որոնք նկարագրում են մարդկանց խմբեր, ում Տերը կամենում է, որ գան դեպի իրեն և ապահովություն գտնեն ավետարանում:

  ա. Եսայիա ԾԵ.1–3: (Բոլորը, ովքեր ծարավ են): Ինչպիսի՞ ծարավի մասին է ակնարկվում այս հատվածներում: Ի՞նչ է պատահում, երբ մենք փորձում ենք բավարարել հոգևոր ծարավը՝ ծախսելով փող և ջանք աշխարհիկ բաների վրա: Ինչպե՞ս կարող է իսկապես բավարարվել մեր հոգևոր ծարավը (Տես 2 Նեփի 9.50–51, 3 Նեփի 20.8):
  բ. Եսայիա ԾԵ.6–7. (Ամբարիշտները, ովքեր կապաշխարեն): Ի՞նչ խոստում է տրվում նրանց, ովքեր ապաշխարում են:
  գ. Եսայիա ԾԶ.3, 5–8. (Օտարներ, ովքեր չգիտեն Տիրոջը): Ի՞նչ պետք է անի օտարականը Տիրոջ կողմից ընդունվելու համար:

- Ի՞նչ են այս հատվածներն ուսուցանում Տիրոջ ողորմածության մասին: Ի՞նչ են դրանք սովորեցնում մեզ այն մասին, թե ինչպես պետք է ընդունենք բոլոր Երկնային Հոր զավակներին:

- Եսայիան գրել է, որ Աստծո խոսքը կարող է սնել մեր հոգիները ճիշտ ինչպես անձրևն ու ձյունը սնում են սերմերը (Եսայիա ԾԵ.10–13): Ինչպե՞ս է Աստծո խոսքը սնուցում մեր հոգիները (Տես Ալմա 32.28, 41)

3. Հազարամյակը կլինի խաղաղության և ուրախության ժամանակ:

- Իր գրվածքներում Եսայիան վկայել է, որ չնայած կլինեն պայքարներ, գայթակղություններ և տառապանք այս աշխարհում, բարին վերջում կհաղթի չարին, և արդարների համար ապագան լի կլինի ուրախությամբ: Եսայիան ջերմեռանդ աղոթեց Փրկչի Երկրորդ Գալստի համար, որը կբերի փոխհատուցում ամբարիշտների համար և մեծ ուրախություն արդարների համար (Եսայիա ԿԴ): Հույսի և ուրախության ինչպիսի ուղերձ է պարունակվում Եսայիա ԿԴ.1–4 հատվածներում: Ինչպե՞ս է այս ուղերձը մեծացնում մինչև վերջ Տիրոջը ծառայելու ձեր ցանկությունը:

- Եսայիայի գրվածքների եզրափակիչ գլուխները ներկայացնում են Հազարամյակի մի գեղեցիկ պատկեր, խաղաղության հազարամյա ժամանակաշրջանը, որը մուտք կգործի Փրկչի Երկրորդ Գալստով: Ինչպես գրված է Եսայիայի ԿԵ.17–25 հատվածներում, ինչպիսի պայմաններ գոյություն կունենան Հազարամյակի ժամանակ (Գրի առնեք այդ պայմանները գրատախտակի վրա, տես նաև Եսայիա ԺԱ. 6–9):

  ա. Տերը կստեղծի նոր երկինք և նոր երկիր (Եսայիա ԿԵ.17):
  բ. Կլինի մեծ ուրախություն և այլևս լաց չի լինի Տիրոջ ժողովրդի համար (Եսայիա ԿԵ.18–19):
  գ. Մարդիկ չեն մահանա երիտասարդ, նրանք կապրեն մինչև 100 տարի (Եսայիա ԿԵ. 20):
  դ. Մարդիկ կվայելեն իրենց սեփական աշխատանքի պտուղները (Եսայիա ԿԵ.21–23):
  ե. Աղոթքներն անմիջապես կպատասխանվեն (Եսայիա ԿԵ.24):
  զ. Գազանների միջև թշնամություն չի լինի (Եսայիա ԿԵ.25):

- Ի՞նչ է սովորեցնում Եսայիա ԿԳ.7–9 հատվածները Տիրոջ անսահման բարության և սիրո մասին (Խնդրեք դասարանի անդամներին առաջարկել խոսքեր և արտահայտություններ այս հատվածներից, որոնք ցույց են տալիս մեր հանդեպ Փրկչի սերը: Գրեք

դրանք գրատախտակին): Ինչ ձևերով է Փրկիչը ցույց տվել ձեզ «իր գթությունը և առատ ողորմությունը»:

Եզրափակում

Վկայեք, որ երբ մենք զորացնում ենք Սիոնի ցցերը և կիսվում ավետարանով աշխարհի հետ, հավերժության գանձեր են սպասում մեզ: Մենք կարող ենք սպասել Փրկչի Երկրորդ Գալստին և այն խաղաղությանը և ուրախությանը, որը գոյություն կունենա Հազարամյակի ընթացքում: Եսայիայի մարգարեությունները խրախուսում են մեզ հիշել, որ արտոնություն է ծառայել Տիրոջը, և որ նա օրհնում է իր աշակերտներին:

Ուսուցման լրացուցիչ գաղափարներ

Հետևյալ նյութն օժանդակում է առաջարկվող դասի ուրվագծին: Օգտագործեք մեկ կամ մի քանի գաղափար որպես դասի բաղկացուցիչ մաս:

1. Ծոմի ճշմարիտ օրենքը (Եսայիա ԾԸ.3–12)

- Ի՞նչ կարող ենք սովորել Եսայիա ԾԸ գլխից ծոմի մասին: Որո՞նք են ճշմարիտ ծոմի բաղկացուցիչ տարրերը (Տես Եսայիա ԾԸ. 3–7):

  Ճշմարիտ ծոմի տարրերից մեկն առատաձեռն ծոմի նվիրատվություն տալն է: Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալն ասել է. «Կարծում եմ, երբ մենք հարուստ ենք, ինչպես մեզանից շատերն են, որ մենք պարտավոր ենք լինել շատ, շատ առատաձեռն…. և տալ մեր երկու ճաշի ծոմապահությամբ խնայված գումարի փոխարեն, գուցե շատ, շատ ավելի՝ տաս անգամ ավելի, երբ ի վիճակի ենք դա անել» (in Conference Report, Apr. 1974, 184):

- Ի՞նչ օրհնություններ են խոստացված ծոմի օրենքով ապրելու համար Եսայիա ԾԸ գլխում:

  ա. Մենք դառնում ենք ուժեղ գայթակղությանը դիմադրելիս (Եսայիա ԾԸ.6):
  բ. Մեր բեռները թեթևանում են (Եսայիա ԾԸ.6):
  գ. Մեր ֆիզիկական և հոգևոր առողջությունը լավանում է (Եսայիա ԾԸ.8):
  դ. Մենք խոնարհ ենք դառնում և պատրաստվում հաղորդակցվել Տիրոջ հետ (Եսայիա ԾԸ.9):
  ե. Մենք օգնում ենք աղքատներին և կարիքավորներին (Եսայիա ԾԸ.10)
  զ. Մենք շարունակաբար առաջնորդություն ենք ստանում Տիրոջից (Եսայիա ԾԸ.11):
  գ. Մենք մեր հոգիները կշտացած ենք ունենում երաշտի ժամանակ և դառնում ենք «ջրի ակնի պես, որի ջուրը չի պակասում» (Եսայիա ԾԸ.11):

  Հրավիրեք դասարանի անդամներին կիսվել օրինակներով սուրբ գրություններից, Եկեղեցու պատմությունից կամ անձնական փորձառությունից, որոնք ցույց են տալիս ծոմի օրենքով ապրելու օրհնությունները: (Տես Սուրբ Գրքերի Ուղեցույց «Ծոմ, Ծոմապահություն»):

- Ինչպե՞ս կարող ենք դառնալ ավելի ջանասեր՝ ապրելով ծոմի օրենքով:

2. Փրկչի ծառայության նկարագրություն

- Եսայիա ԿԱ.1–3 հատվածները Փրկչի կոչման և ծառայության հայտարարություն է: Նազարեթում իր վաղ ծառայության ժամանակ Փրկիչը մեջբերեց այս հատվածները և ասաց մարդկանց. «Այսօր այս գիրքը կատարվեցավ ձեր ականջներումը» (Ղուկաս Դ.14–21): Ի՞նչ են այս հատվածներն ուսուցանում Հիսուս Քրիստոսի բնավորության և առաքելության մասին:

3. Քրիստոսի Երկրորդ Գալուստը (Եսայիա ԿԳ.1–6)

- Փրկչի Երկրորդ Գալուստը նկարագրված է Եսայիա ԿԳ.1–6 հատվածներում: Ի՞նչ գույնի կլինի Փրկչի պարեգոտը, երբ նա գա իր փառքով (Տես Եսայիա ԿԳ.2, Հայտնություն ԺԹ.11–13, ՎԼՈՒ 133.46–48): Ի՞նչ է խորհրդանշում կարմիր գույնը (Արյունը, որ նա հեղեց, երբ տառապեց մեր մեղքերի համար Գեթսեմանիում և խաչի վրա):

Դաս
41

«Ես քեզ այսօր…. երկաթի սյուն եմ շինում»

Երեմիա Ա–Բ, ԺԵ, Ի, ԻԶ, ԼԶ–ԼԸ

Նպատակ

Խրախուսեք դասարանի անդամներին հավատարիմ մնալ ձախորդության ժամանակ և չընդդիմանալ :

Նախապատրաստում

1. Աղոթքով ուսումնասիրեք հատվածներ Երեմիայից, որոնք քննարկվում են այս դասում: Այս դասը կենտրոնացած է Երեմիայի քաջության և նվիրվածության վրա, երբ նա դիմակայում էր, շրջապատված գտնվելով բոլոր իր հակառակորդների կողմից:
2. Եթե օգտագործելու եք ուշադրության վարժությունը, դասարան բերեք մետաղյա մի ձող:

Առաջարկվող դասի զարգացում

Ուշադրության կենտրոնացման վարժություն

Օգտագործեք հետևյալ վարժությունը (կամ ձեր սեփականը) դասը սկսելու համար:

Ցույց տվեք մետաղյա մի ձող և առաջարկեք դասարանի որևէ անդամի ջարդել այն: Այնուհետև ուղղեք հետևյալ հարցը.

- Եթե այդ առարկան ներկայացներ որևէ մարդու հատկանիշները, այն ինչ կհուշեր նրա մասին:
- Խնդրեք դասարանի անդամներին կարդալ Երեմիա Ա.17–19: Ի՞նչ արտահայտություններ է օգտագործում Տերը 18 հատվածում Երեմիային նկարագրելու համար: Ի՞նչ են հուշում այս արտահայտություններն այն մասին, թե ինչպիսի մարդ էր Երեմիան: Ինչպե՞ս կզգայիք դուք, եթե այս խոսքերն օգտագործվեին նկարագրելու ձեզ, երբ սկսեիք կատարել Տիրոջ կողմից որևէ կոչում կամ հանձնարարություն:

Բացատրեք, որ թագավորները, իշխանները, քահանաները և երկրի ողջ ժողովուրդը դեմ կանգնեցին Երեմիային իր առաքելության ժամանակ, բայց նա քաջաբար արեց այն, ինչ Տերը հրամայեց: Հիշեցրեք մետաղյա ձողը և բացատրեք, որ Երեմիան «երկաթի սյուն» էր, որը մեծ ուժ ուներ ձախորդության ժամանակ և չէր ծռվում կամ կոտրվում:

Սուրբ գրության քննարկում կամ կիրառում

Երբ ուսուցանեք սուրբ գրության հետևյալ հատվածները, քննարկեք թե ինչպես են դրանք կիրառվում ամենօրյա կյանքում: Խրախուսեք դասարանի անդամներին կիսվել փորձառություններով, որոնք կապված են սուրբգրքյան սկզբունքների հետ:

Երեմիան ծառայեց հինգ թագավորների թագավորության ժամանակ՝ Հովսիայից սկսած մինչև Սեդեկիա (626–586 Ք.ծ.ա.): Հովսիայի հետ նա փորձեց դարձի բերել ժողովրդին կռապաշտությունից և անբարոյականությունից: Բայց թագավորները Հովսիայից հետո կառավարեցին ամբարշտությամբ և ժողովուրդն ամբողջովին ուրացության մեջ էր: Երեմիայի առաքելությունն էր նախազգուշացնող ձայն բարձրացնել այս ժողովրդին և նրանց ամբարշտության նրա դատապարտումն ամենախիստն է բոլոր սուրբ գրությունների մեջ: Նրա ձայնը վերջին նախազգուշացնող ձայներից մեկն էր նախքան Բաբելոնացիների կողմից Հուդայի նվաճումը:

Երեմիայի կյանքը լի էր ցավով, բայց նրա արձագանքը փորձություններին կարող է ուսուցանել և ոգեշնչել մեզ: Նա ծեծվեց և բանտարկվեց Հուդայի թագավորության դեմ մարգարեանալու համար: Նրա կյանքն անընդհատ սպառնալիքի տակ էր: Բայց չնայած ողջ ճախորդությանն ու ընդդիմությանը, Երեմիան նման էր «երկաթի սյունի» (Երեմիա Ա.18): Երեմիայի գիրքը իր կյանքի տառապանքների և հիասթափությունների դեմ մարգարեի արձագանքի վերաբերյալ անձնական հավատք խթանող արձանագրություն է:

1. Երեմիան կանչվում է Աստծուց՝ լինելու մարգարե:

Վերընթերցեք Երեմիայի մարգարե կանչվելու պատմությունը, ինչպես արձանագրված է Երեմիա Ա.4–10 հատվածներում:

- Ի՞նչ է մեզ սովորեցնում նախակարգման մասին Երեմիայի կանչվելը (Տես Երեմիա Ա.5): Ի՞նչ եք կարծում, ի՞նչն էր օգնում Երեմիային իմանալ, որ նախաերկրային գոյության ժամանակ նա նախակարգված էր մարգարե լինելու:

  Մարգարե Ջոզեֆ Սմիթն ասել է. «Յուրաքանչյուր մարդ, որն այս աշխարհի բնակիչներին ծառայելու կոչում ունի, կարգվել է հենց այդ նպատակով երկնային Մեծ Խորհրդի ժամանակ, այս աշխարհի լինելուց առաջ» (*History of the Church*, 6:364):

- Ի՞նչ էր անում Տերը, երբ Երեմիան անհամապատասխան էր զգում իրեն (Տես Երեմիա Ա.6–10): Ինչպե՞ս եք հավաստիացում ստացել Տիրոջ կողմից, երբ ձեզ անհամապատասխան եք զգացել:

2. Շատ մարդիկ ընդդիմանում են Երեմիային և փորձում խանգարել նրան իրականացնելու իր առաքելությունը:

Օգտագործեք հետևյալ սուրբ գրությունները քննարկելու ընդդիմության մասին, որին դիմակայում էր Երեմիան, երբ նա իրականացնում էր Տիրոջ կողմից իրեն տրված առաքելությունը:

ա. Երեմիա Ի.1–6: Երեմիայի մարգարեություններից դժգոհ՝ Փասուրը՝ տաճարի գլխավոր կառավարիչը, ծեծել տվեց Երեմիային և դրեց նրան կոճղում: Երեմիան մարգարեացավ, որ Փասուրը, նրա ընտանիքը և նրա ընկերները գերի կտարվեն Բաբելոնացիների կողմից և կմահանան Բաբելոնում:

բ. Երեմիա ԻԶ.7–15: Երկրի ժողովրդի մեծ մասը, ներառյալ քահանաները, ընդդիմացան Երեմիային և նրա ուղերձին (ԻԶ.7–11): Այնուամենայնիվ, Երեմիան քաջաբար հանձնեց ուղերձը, որը Տերը պատվիրել էր նրան տալ (ԻԶ.12–15): Երեմիային դեմ էին և նրան ատում էին նույնիսկ նրա հարևանները և բարեկամները (ԺԱ.19–21, ԺԲ.6: Ի նկատի ունեցեք, որ Երեմիան Անաթովթ քաղաքից էր):

գ. Երեմիա ԼԶ.1–6, 20–32: Երեմիայի մարգարեության խոսքերը գրի առնվեցին և կարդացվեցին ժողովրդին (ԼԶ.1–6): Թագավորն այրեց այդ խոսքերը և Տերը պատվիրեց Երեմիային դրանք նորից գրել (ԼԶ.20–32):

դ. Երեմիա ԼԷ.12–15, ԼԸ.4–13: Երեմիային անարդար ձևով մեղադրեցին և բանտ դրեցին (ԼԷ.12–15): Հետագայում նրան գցեցին գուբը, որտեղ նա ընկղմված էր տիղմի մեջ (ԼԸ.4–6): Թագավոր Սեդեկիայի հրամանով Երեմիան գուբից ազատվեց և ետ բերվեց բանտ (ԼԸ.7–13):

- Ի՞նչ է Երեմիա Ի.14–18 հատվածները բացահայտում այն մասին, թե ինչ էր զգում Երեմիան, երբ դիմանում էր այդպիսի գերլարված ընդդիմությանը: Ի՞նչ կարող ենք սովորել Երեմիայից, որը կօգնի մեզ, երբ մենք ձախորդության մեջ ենք լինում: (Պատասխանները կարող են ներառել, որ Երեմիան շարունակում էր հնազանդվել Տիրոջը և կատարել իր կոչումը, նույնիսկ, երբ նա հալածված էր և հուսալքված, տես Երեմիա ԻԶ. 12–15):

- Երեմիա Բ.13, ի՞նչ երկու չարիքներ էր Տերն ասել, որ գործել էր իր ժողովուրդը: (Նրանք թողեցին նրան՝ կենաց ջրերի աղբյուրին: Եվ նրանք իրենց համար հորեր փորեցին, ծակծակոտ հորեր, որոնք չեն կարող Տիրոջ կենաց ջուրը պահել, որը նշանակում է, որ նրանք ձգտեցին կայացման և ապահովության աշխարհիկ բաների մեջ): Ինչու՞ էր այդպիսի հատկանիշներով ժողովուրդը դժվարանում ընդունել Երեմիայի խոսքերը: Ինչո՞ւ էին նրանք անընդունակ ձախորդությանն արձագանքել այնպես, ինչպես Երեմիան էր արձագանքում: Ինչպես ենք մենք երբեմն ստեղծում «ծակծակոտ հորեր», որոնք չեն կարողանում պահել Փրկչի կենաց ջուրը:

  Երեց Մարիոն Դ. Հանքսն ասել է.

  «Նյութական նպատակները սպառում են մեր ուշադրության խիստ մեծ մասը: Պայքարը նրա համար, ինչը մեզ անհրաժեշտ է, կամ ավելի շատի համար, քան մեզ անհրաժեշտ է, կլանում է մեր ժամանակը և էներգիան: Մենք ձգտում ենք հաճույքի կամ զվարճության կամ դառնում գերզբաղված ընկերակցություններով կամ քաղաքացիական հարցերով: Իհարկե, մարդիկ կարիք ունեն հանգստի, պետք է ձգտումներ ունենան, պետք է ներդրումներ ունենան. բայց եթե այդ ամենը տրվում է Քրիստոսի ընկերությունը զոհաբերելու գնով, գինը խիստ բարձր է:

  «Որովհետև իմ ժողովուրդը կրկնապատիկ չարություն գործեց,– ասել է Տերն Իսրայելին,– ինձ՝ կենաց ջրի աղբյուրիս, թողեցին, որ իրենց համար հորեր փորեն՝ ծակծակոտ հորեր, որոնք չեն կարող ջուրը պահել» (Երեմիա Բ.13):

  Այն փոխարինող բաները, որոնք պատկերացնում ենք, թե կգրավեն Աստծո տեղը մեր կյանքում, իսկապես ջուր չեն պահում:Այդպիսով, այնքանով որքանով մենք մերժում ենք «կենդանի ջուրը», մենք բաց ենք թողնում այն ուրախությունը, որ կարող էինք ունենալ» (in Conference Report, Apr. 1972, 127; or *Ensign,* July 1972, 105):

Երեմիայի մարգարեությունները, որ Բաբելոնացիները կկործանեն Երուսաղեմը, կատարվեցին, ինչպես արձանագրված է Երեմիա ԼԹ–Խ գլուխներում: Երեմիան պաշարման ժամանակ բանտում էր, բայց հետո Բաբելոնացիներն ազատեցին նրան և թույլ տվեցին նրան և հրեաների մի մնացորդի մնալ Հուդայի երկրում: Հոհանանը՝ նրանց առաջնորդը, ովքեր մնացել էին, խնդրեց Երեմիային հարցնել Տիրոջ կամքն իրենց համար և խոստացավ հնազանդվել նրան (Երեմիա ԽԲ.1–6): Երեմիայի միջոցով Տերն ասաց ժողովրդին մնալ Հուդայի երկրում և խոստացավ օրհնել նրանց, եթե նրանք անեին այդպես (Երեմիա ԽԲ.9–22): Բայց Հոհանանը տարավ ժողովրդին Եգիպտոս, որտեղ նրանցից շատերը շարունակեցին ապրել ամբարշտության մեջ (Երեմիա ԽԳ–ԽԴ):

3. Երեմիան զորացվում էր ձախորդության մեջ Աստծո խոսքի հանդեպ իր սիրո միջոցով:

Քննարկեք հետևյալ սուրբ գրությունները, որոնք ցույց են տալիս, թե Աստծո խոսքն ինչպես օգնեց Երեմիային ուժեղ մնալ ձախորդության ժամանակ:

- Ինչպես արձանագրված է Երեմիա Ա.9-ում, ի՞նչ դրեց Տերը Երեմիայի բերանում: Ինչպես արձանագրված է Երեմիայի ԺԵ.16-ում, ի՞նչ արեց Երեմիան Տիրոջ խոսքի հետ (Նա կերավ դրանք, որը բանաստեղծական լեզվով նշանակում է, որ Աստծո խոսքը դարձավ նրա մի մասը): Ի՞նչ զգացումներ ուներ Երեմիան Տիրոջ խոսքի հանդեպ:
- Ինչպե՞ս կարող ենք «ուտել» Տիրոջ խոսքերն, ինչպես Երեմիան արեց (Ուսումնասիրելով սուրբ գրությունները և վերջին օրերի մարգարեների խորհուրդները): Մորմոնի Գրքի մարգարե Նեփին ասել է «սնվեք Քրիստոսի խոսքերով» (2Նեփի 32.3): Ինչպե՞ս կարող է Տիրոջ խոսքերով սնվելը զորացնել մեզ:

- Երեմիա Ի.9-ում, ինչպե՞ս է Երեմիան նկարագրում Տիրոջ խոսքն իր ներսում: Ի՞նչ եք կարծում, ի՞նչ է նշանակում ունենալ Տիրոջ խոսքը որպես այրող կրակ ձեր ոսկորներում: Ի՞նչ եք կարծում, ինչու՞ Երեմիան չէր կարող ետ կագնել Տիրոջ խոսքն ուսուցանելուց:

Եզրափակում

Արտահայտեք ձեր զգացումները Երեմիայի օրինակի հանդեպ և ձախորդությունների ժամանակ հավատարիմ լինելու մասին: Խրախուսեք դասարանի անդամներին հետազոտել և խորհել Տիրոջ խոսքերի մասին, մինչև այդ խոսքերը դառնան կրակ իրենց ոսկորներում, զորացնելով նրանց, երբ նրանք անեն Տիրոջ գործը: Եթե դուք օգտագործելու եք ուշադրության վարժությունը, ցույց տվեք մետաղյա ձողը և դասարանի անդամներին կոչ արեք Երեմիայի նման երկաթե սյուն դառնալ Տիրոջ համար:

Ուսուցման լրացուցիչ գաղափարներ

Հետևյալ նյութն օժանդակում է առաջարկվող դասի ուրվագծին: Օգտագործեք մեկ կամ մի քանի գաղափար, որպես դասի բաղկացուցիչ մաս:

1. «Կավ…. բրուտի ձեռքում» (Երեմիա ԺԸ.6):

- Վերընթերցեք բրուտին կատարած այցելության Երեմիայի պատմությունը, որն արձանագրված է Երեմիա ԺԸ.1–4 հատվածներում: Ի՞նչ սովորեցրեց Տերն իր ժողովրդին Երեմիայի փորձառության միջոցով (Տես Երեմիա ԺԸ.5–10: Տերը ցույց տվեց նրանց, որ եթե նրանք ապաշխարեն, նա կկաղապարի նրանց՝ դարձնելով էլ ավելի լավ մի բան, ճիշտ ինչպես բրուտը կրկին ծեփեց վնասված անոթը: Նա նաև հիշեցրեց նրանց, որ նա ուներ զորություն կործանելու նրանց, եթե նրանք չապաշխարեն):
- Ինչպե՞ս է այս համեմատությունը վերաբերում մեզ այսօր: Ինչպե՞ս կարող ենք ավելի լավ կավ դառնալ Տիրոջ ձեռքում (Լինելով խոնարհ՝ հնազանդվելով, ապաշխարելով, վստահելով Տիրոջը և որոնելով նրա կամքը: Հրավիրեք դասարանի անդամներին կիսվել փորձառություններով, որոնք ցույց կտան, թե ինչպես է Տերը ձևավորել և պատրաստել մարդկանց՝ իրականացնելու իր նպատակները): Ի՞նչ է պատահում, երբ մենք դիմադրում ենք Տիրոջ կողմից կաղապարվելուն:

  Նախագահ Հեբեր Կ. Քիմբալը տվել է հետևյալ ներըմբռնումները Երեմիայի ԺԸ.1–10 հատվածների համեմատության վերաբերյալ:

  «Բոլոր նրանք, [ովքեր] Աստծո ձեռքերում հնազանդ են և հեշտությամբ ենթարկվում են Նրա հրամաններին, պատվի անոթներ են և Աստված կընդունի նրանց» (History of the Church, 4:478):

  Կան շատ անոթներ, որոնք կաղապարվելուց և ձևավորվելուց հետո ոչնչանում են: Ինչո՞ւ: Որովհետև նրանք չեն հարմարվում այն ձևի հետ, որը բրուտը տալիս է նրանց, այլ անմիջապես իրենց դնում են մի ձևի մեջ, որն իրենց է գոհացնում, ուստի նրանք հեռու են Աստծո ծրագրերը հասկանալուց և նրանք իրենց կործանում են սեփական ազատ կամքի իրավունքով: [Այդ մարդիկ] պետք է անցնեն մեծ թվով կաղապարումներով և ձևավորումներով, ապա…. պետք է ջնարակվեն և կիզվեն և երբեմն թրծման ժամանակ որոշ անոթներ նույնիսկ ճաքում են (in Stanley B. Kimball, Heber C. Kimball: Mormon Patriarch and Pioneer [1981], 270):

2. Երեմիան քարոզել է նույն ժամանակ, ինչ որ Մորմոնի Գրքի մարգարե Լեքին

Մարգարե Երեմիան ուսուցանում էր և նախազուշացնում Հուդայի ժողովրդին, երբ Լեքին թողեց Երուսաղեմը: Ինչպես Երեմիան այնպես էլ Լեքին մարգարեացան, որ Երուսաղեմը կործանվելու էր:

- Որտե՞ղ էր Երեմիան, երբ Լեքին և նրա ընտանիքը թողեցին Երուսաղեմը (Տես Երեմիա ԼԷ.15–16, 1 Նեփի 7.14):
- Երեմիան շատ ժամանակ էր անցկացնում խորհրդակցելով Սեդեկիայի՝ Հուդայի թագավորի հետ, բայց Սեդեկիան հրաժարվեց հնազանդվել Երեմիայի կողմից հաղորդված Տիրոջ խոսքերին: Ի՞նչ պատահեց Սեդեկիայի հետ որպես իր անհնազանդության արդյունք (Տես Երեմիա ԼԹ.4–7):
- Մորմոնի Գրքից մենք իմանում ենք, որ Սեդեկիայի որդիներից մեկը չսպանվեց Բաբելոնացիների կողմից: Ի՞նչ էր նրա անունը (Տես Հելաման 8.20–21): Ո՞ւր գնաց նա (Տես Օմնի 1.15):

«Նրանց սրտի վրա պիտի գրեմ այն»

Դաս
42

Երեմիա ԺԶ, ԻԳ, ԻԹ, ԼԱ

Նպատակ

Խրախուսել դասարանի անդամներին մասնակցել Աստծո վերջին օրերի մեծ աշխատանքին և գրված ունենալ նրա օրենքն իրենց սրտերում:

Նախապատրաստում

1. Աղոթքով ուսումնասիրեք Երեմիա ԺԶ, ԻԳ, ԻԹ և ԼԱ գլուխները:
2. Լրացուցիչ ընթերցանություն՝ Երեմիա Գ–Թ, ԺԳ, Լ, ԼԲ.37–42, ԼԳ, ԼԵ:

Առաջարկվող դասի զարգացում

Ուշադրության կենտրոնացման վարժություն

Օգտագործեք հետևյալ վարժությունը (կամ ձեր սեփականը) դասը սկսելու համար: Եթե կարողանայիք ականատես լինել կամ մասնակցել Հին Կտակարանի որևէ պատմության կամ իրադարձության, ո՞րը դուք կընտրեիք: (Գրեք դասարանի անդամների պատասխանները գրատախտակին):

- Եթե դուք կարողանայիք ականատես լինել կամ մասնակցել Հին Կտակարանի որևէ պատմության կամ իրադարձության, ո՞րը դուք կընտրեիք: (Կարող եք դասարանի անդամների պատասխանները գրել գրատախտակին:)
- Ինչո՞ւ կկամենայիք ականատես լինել կամ մասնակցել այդ իրադարձությանը:
- Ի՞նչ է կատարվում այսօր Եկեղեցում, որը կարելի է համեմատել այն մի քանի իրադարձություններին, որ դուք ընտրել եք:

Բացատրեք, որ չնայած Երեմիան իր օրերի համար հույսի քիչ ուղերձներ ուներ, նա կանխատեսեց հույսի մի ժամանակ վերջին օրերի Իսրայելի հավաքման համար: Այս դասը քննարկում է Երեմիայի մարգարեությունները վերջին օրերի մեծ հավաքման վերաբերյալ, որին մենք մասնակցում ենք այսօր:

Սուրբ գրության քննարկում և կիրառում

Երբ ուսուցանեք սուրբ գրության հետևյալ հատվածները, քննարկեք թե դրանք ինչպես են վերաբերում ամենօրյա կյանքին: Խրախուսեք դասարանի անդամներին կիսվել փորձառություններով, որոնք կապված են սուրբգրքյան սկզբունքների հետ:

1. Երեմիան կանխատեսում է Իսրայելի վերջին օրերի հավաքումը:

Եթե Եգիպտոսից Իսրայելի ելիցը նշված չէ ուշադրության վարժությունում, բացատրեք որ այն Հին Կտակարանի ամենահրաշափառ իրադարձություններից մեկն է: Դրան անդրադարձել են Երեմիայի գրքում և Հին Կտակարանի այլ գրքերում, ինչպես նաև Մորմոնի Գրքում:

- Ի՞նչ էր զգում Մովսեսը Ելիցի կարևորության մասին (Տես Երկրորդ Օրինաց Դ.32–35): Ի՞նչ եք կարծում, ինչպե՞ս կզգայիք մասնակից լինելով Եգիպտոսից Իսրայելի ելիցին:
- Շատ սերունդներ հետո, Երեմիան տեսիլքներ տեսավ վերջին օրերի մի իրադարձության վերաբերյալ, որը Տերն ասաց այնքան մեծ կլինի, ինչպես մեծ Ելիցը (Երեմիա

ԺԶ.14–16, ԻԳ.3–8): Ի՞նչ իրադարձություն է նկարագրվում Երեմիա ԺԶ.15 և ԻԳ.3 հատվածներում (Իսրայելի հավաքումը և Եկեղեցու աճը): Ովքե՞ր են հովիվները, որոնց մասին խոսվում է Երեմիա ԻԳ.4 հատվածում (Քահանայության առաջնորդները և Եկեղեցու այլ առաջնորդներ): Ո՞վ էր Թագավորը, որի մասին խոսվում է Երեմիա ԻԳ.5–6 հատվածներում (Հիսուս Քրիստոսը): Ինչո՞ւ եք կարծում, որ այս իրադարձությունները նույնքան մեծ են ինչպես Ելիցը:

- Երեց Լեգրանդ Ռիչարդսն ասել է, որ ձկնորսներն ու որսորդները, որոնք նկարագրվում են Երեմիա ԺԶ.16 հատվածում Եկեղեցու միսիոներներն են (in Conference Report, Apr. 1971, 143; or *Ensign,* June 1971, 98–99): Ի՞նչ ընդհանուր բան ունեն ձկնորսներն ու որսորդները միսիոներների հետ (Տես Մատթեոս Դ.18–19): Ինչպե՞ս կարող ենք լինել ավելի արդյունավետ միսիոներներ:

2. Աստված կգրի իր օրենքն իր ժողովրդի սրտում:

- Իսրայելի որդիները վստահեցին Մովսեսին իրենց համար հայտնություն ստանալ անապատում իրենց ճամփորդությունների ընթացքում: Ի՞նչ մեծ ցանկություն Մովսեսն արտահայտեց Թվոց ԺԱ.29 հատվածում (Նա կամեցավ, որ ժողովուրդը սովորեր Աստծո օրենքը և սովորեր ինքնուրույն լսել Հոգուն):

- Ինչպես արձանագրված է Երեմիա ԼԱ.31–34 հատվածներում, ի՞նչ խոստացավ անել Տերը վերջին օրերում (Տես նաև Եզեկիել ԺԱ.17–20, ԼԶ.24–28, Բ Կորնթացիս Գ.2–3): Ի՞նչ է նշանակում Աստծո օրենքը գրված ունենալ մեր սրտերում: Ի՞նչ պետք է անենք որպեսզի Աստծո օրենքը գրված ունենանք մեր սրտերում:

- Ինչպե՞ս է մեր վարքն ազդեցության ենթարկվում, երբ մենք Աստծո օրենքը գրված ենք ունենում մեր սրտերում: Գուցե քննարկեք, թե ինչպես է սա օգնում մեզ հնազանդվել հատուկ պատվիրանների, ինչպես օրինակ՝

  ա. Մեր մերձավորներին սիրելը:
  բ. Մեր ծնողներին հարգելը:
  գ. Բարոյապես մաքուր լինելը:
  դ. Հանգստյան օրը սուրբ պահելը:
  ե. Պատշաճ կինոնկարներ, հեռուստածրագրեր, գրքեր և ամսագրեր ընտրելը:
  զ. Համեստ հագուստներ կրելը:
  է. Հարմար երաժշտություն ընտրելը:

- Մի անգամ Ջոզեֆ Սմիթին հարցրեցին, թե ինչպես է նա հաջողությամբ կառավարում այդքան շատ մարդկանց: Նա ասաց. «Ես սովորեցնում եմ մարդկանց ճիշտ սկզբունքներ և նրանք կառավարում են իրենք իրենց» (quoted by John Taylor, in *Journal of Discourses,* 10:57–58). Ինչպե՞ս է այս միտքը կապված մեր սրտերում Աստծո օրենքը գրված ունենալու հետ:

- Երեմիան մարգարեացավ, որ 70 տարի հետո, երբ Հուդայի ժողովուրդը գերի կտարվի Բաբելոն, նրանք կվերադառնան իրենց հայրենի երկիրը և կրկին կապրեն Աստծո հետ ներդաշնակության մեջ (Երեմիա ԻԹ.10–14, այս մարգարեության իրականացումը քննարկվում է 47 դասում): Ըստ Երեմիայի ԻԹ.12–14, ի՞նչ կարող ենք անել Աստծուն մոտենալու համար: Ի՞նչ են նշանակում *կանչել, աղոթել, որոնել և խնդրել* բառերն այն զգացումների հետ, որ մենք պետք է ունենանք, կապված Աստծուն մոտենալու մեր ձգտումներում : Հրավիրեք դասարանի անդամներին կիսվել փորձառություններով, որ նրանք ունեցել են, երբ նրանք ձգտել են մոտենալ Աստծուն:

Եզրափակում

Բերեք վկայություն, որ մենք ապրում ենք մի ժամանակաշրջանում, որ Երեմիան և շատ ուրիշ մարգարեներ սպասել են ուրախությամբ: Խրախուսեք դասարանի անդամներին մասնակցել Իսրայելի հավաքմանը և ունենալ Աստծո օրենքը գրված մեր սրտերում:

Ուսուցման լրացուցիչ գաղափարներ

Հետևյալ նյութն օժանդակում է առաջարկվող դասի ուրվագծին: Օգտագործեք մեկ կամ մի քանի գաղափար, որպես դասի բաղկացուցիչ մաս:

1. Այժմ է ապաշխարելու ժամանակը

Տիրոջ ողորմածությունը միշտ տարածվում է նրանց վրա, ովքեր ապաշխարում են: Սակայն մարդիկ, ովքեր հետաձգում են ապաշխարությունը, կարող են ապաշխարելը խիստ դժվար համարել:

Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթն ուսուցանել է. «Մարդն իր ետևում կուտակված և չներված անիրավությամբ կարող է չարից խուսափելու հնարավորություն այլևս չունենալ և նրա վիճակն աշխարհում կդառնա անհույս, և նա, ով անխոհեմաբար չարից խուսափելու ամեն հնարավորություն կորցնում է՝ անցյալի անուշադրության մատնված չարիքների պատճառով, ամենադժբախտն է դառնում: Ուրեմն աստվածային ողորմածությանը և ներմանը ձգտելու ամենօրյա գործընթացը, երբ մենք առաջ ենք ընթանում, տալիս է մեզ ուժ խուսափել չարիքից» (*Gospel Doctrine,* 5th ed. [1939], 374):

- Ի՞նչ են հետևյալ հատվածներն ուսուցանում Տիրոջ խոսքը պատշաճորեն լսելու և ապաշխարելու կարևորության մասին:

  Երեմիա Ե.1–5, 21–25
  Երեմիա Զ.10–17
  Երեմիա Է.23–28
  Երեմիա Ը.6–12, 20
  Երեմիա ԺԳ.11, 23
  Երեմիա ԺԷ.23

2. Ականջ դնել մարգարեների խոսքերին

- Երեմիան հաճախ է արձանագրել, որ ժողովուրդը չէր ականջ դնում իր խոսքերին (Երեմիա Է.13, ԻԵ.3–4, ԻԶ.2–5, ԼԲ.33): Վերջին օրերի մարգարեների ինչ խոսքերի մենք պետք է ավելի ջանասիրաբար հետևենք:

3. Կրկնելով նախորդ սերունդների մեղքերը

- Երեմիան նախազգուշացրեց իր օրերի հրեաներին, որ մեղքերը, որ նրանք գործում էին, նույն մեղքերն էին, որոնց համար անցյալ սերունդները խստորեն պատժվել էին (Երեմիա ԺԱ.1–12): Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ Երեմիայի սերունդը չէր կամենում սովորել իրենց նախահայրերի մեղքերից, հատկապես, երբ այդ մեղքերի համար պատիժներն այդքան հստակորեն փաստագրված էին: Ինչպես կարող ենք ավելի լիակատար օգուտ քաղել այն դասերից, որոնք ուսուցանվել էին Աստծո ուխտի ժողովրդի նախորդ սերունդների կողմից:

4. Աստծուն վստահելու կարևորությունը

- Երեմիա ԺԷ.5–8 հատվածներում ի՞նչ համեմատություններ են արվում մարդկանց միջև, ովքեր վստահում են մարդկանց և այն մարդկանց միջև, ովքեր վստահում են Աստծուն: Նկատում ե՞ք, որ այս համեմատությունները ճշգրիտ են: Ինչպե՞ս կարող ենք ցույց տալ մեր վստահությունն առ Աստված:

5. Կեղծ մարգարեներ

- Սեդեկիան մի թագավոր էր, որը ցանկանում էր, որ մարգարեներն ասեին նրան այն, ինչ նա կամենում էր լսել: Հետևաբար, շատ կեղծ մարգարեներ խոստանում էին, որ Երուսաղեմը չէր ընկնի (Երեմիա ԻԸ.1–4, ԼԷ.19): Այսօր շատ կեղծ մարգարեներ են գալիս «ոչխարի» հանդերձով (Մատթեոս Է.15): Ի՞նչ ապացույց կա, որ մեր մեջ էլ այսօր կեղծ մարգարեներ կան: Որո՞նք են այսօրվա կեղծ մարգարեների ուղերձներից մի քանիսը: Ինչպե՞ս կարող ենք խուսափել կեղծ մարգարեների կողմից մոլորեցվելուց:

Իսրայելի հովիվները

Դաս
43

Եզեկիել ԺԸ, ԼԴ, ԼԷ

Նպատակ

Խրախուսեք դասարանի անդամներին, որպես «Իսրայելի հովիվներ», կատարել իրենց պարտականությունները (Եզեկիել ԼԴ.2):

Նախապատրաստում

1. Աղոթքով ուսումնասիրեք հետևյալ սուրբ գրությունները՝
   ա. Եզեկիել ԼԴ: Տերը նախատում է այն հովիվներին, ովքեր չեն արածեցնում հոտը: Նա կփնտրի բոլոր կորած ոչխարներին և կլինի նրանց Հովիվը:
   բ. Եզեկիել ԺԸ.21–32: Եզեկիելն ուսուցանում է, որ ամբարիշտները, որոնք ապաշխարում են, կփրկվեն և որ արդարները, որոնք դառնում են դեպի ամբարշտություն, դուրս կգցվեն:
   գ. Եզեկիել ԼԷ.1–14: Եզեկիելը տեսիլք է տեսնում, որում շատ չոր ոսկորների կյանք է տրվում:
   դ. Եզեկիել ԼԷ.15–28: Եզեկիելը մարգարեանում է, որ Հուդայի փայտը և Հովսեփի փայտը մեկ կդառնան Տիրոջ ձեռքում:
2. Լրացուցիչ ընթերցանություն՝ Եզեկիել Բ:

Առաջարկվող դասի զարգացում

Ուշադրության կենտրոնացման վարժություն

Օգտագործեք հետևյալ վարժությունը (կամ ձեր սեփականը) դասը սկսելու համար:

Կարդացեք (կամ գրեք գրատախտակին) հետևյալ հարցը.

- Ինչպե՞ս է հովիվը տարբերվում հոտարածից:

Խնդրեք դասարանի անդամներին լսել այս հարցի պատասխանները Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոնի հետևյալ մեջբերման մեջ (Հանձնարարեք դասարանի անդամներին կարդալ մեջբերումը).

«Հիսուսի ժամանակ պաղեստինյան հովիվը հայտնի էր իր ոչխարների պաշտպանությամբ: Ի տարբերություն ժամանակակից հոտարածների, հովիվը միշտ քայլում էր իր հոտի առջևից: Նա առաջնորդում էր նրանց: Հովիվը գիտեր ոչխարներից յուրաքանչյուրին և սովորաբար յուրաքանչյուրի համար անուն ուներ: Ոչխարները ճանաչում էին նրա ձայնը և վստահում էին նրան և չէին հետևում օտարականին: Այսպիսով, երբ նրանց կանչում էին, նրանք գալիս էին նրա մոտ (Տես Հովհաննես Ժ.14, 16):

Գիշերը հովիվներն իրենց ոչխարներին բերում էին մի անասնոց, որը կոչվում էր ոչխարների փարախ: Փարախը շրջապատված էր բարձր պատերով, իսկ այդ պատերի գագաթին փշեր էին դրվում՝ արգելելու վայրի կենդանիներին և գողերին մագլցել դրանց վրայով:

Սակայն երբեմն որևէ վայրի կենդանի սովից մղված ցատկում էր պատերի վրայով ոչխարների մեջ՝ վախեցնելով նրանց: Այդպիսի իրավիճակներում ճշմարիտ հովիվը, որը սիրում էր իր ոչխարներին, տարբերվում էր վարձկանից, որն աշխատում էր միայն փողի և պարտականության համար:

Ճշմարիտ հովիվը պատրաստ էր տալ իր կյանքը ոչխարների համար: Նա գնում էր ոչխարների մեջ և կռվում նրանց ապահովության համար: Ի տարբերություն հովվի, վարձկանը ոչխարներից վեր էր դասում իր սեփական ապահովությունը և սովորաբար փախչում էր վտանգից» (in Conference Report, Apr. 1983, 61; or *Ensign*, May 1983, 43):

Մեջբերումը կարդալուց հետո, խնդրեք դասարանի անդամներին ամփոփել տարբերությունները հովվի և հոտարածի (կամ վարձկանի) միջև: Անհրաժեշտության դեպքում օգտագործեք հետևյալ հարցերը և գրի առեք պատասխանները գրատախտակին:

- Ոչխարների հոտի ո՞ր կողմից է քայլում հովիվը: Որտեղո՞վ է քայլում հոտարածը: (Հովիվը քայլում է ոչխարների առջևից և առաջնորդում է նրանց, մեջբերումը նշում է, որ հոտարածը քայլում է ոչխարների ետևից և քշում է նրանց):
- Ինչպիսի՞ն է հովվի կապը ոչխարներից յուրաքանչյուրի հետ: Ինչպիսի՞ն է հոտարածի կապը ոչխարներից յուրաքանչյուրի հետ:
- Ինչպե՞ս է արձագանքում հովիվը, երբ ոչխարները վտանգի մեջ են լինում: Ինչպե՞ս է արձագանքում հոտարածը:

Բացատրեք, որ այս դասի մի մասը քննարկում է մեր պարտականությունները որպես հոգևոր հովիվներ:

Սուրբ գրության քննարկում և կիրառում

Երբ ուսուցանեք սուրբ գրության հետևյալ հատվածները, քննարկեք, թե վտանգից» են դրանք վերաբերում ամենօրյա կյանքին: Խրախուսեք դասարանի անդամներին կիսվել անձնական փորձառություններով, որոնք կապված են սուրբգրքյան սկզբունքների հետ:

Ք.ծ.ա. 597 թվականին Բաբելոնի թագավոր Նաբուգոդոնոսորը Հուդայի թագավորությունից գերության տարավ շատ ժողովուրդ: Այդ գերյալների մեջ էր Եզեկիելը, որին Տերը հինգ տարի անց կանչեց որպես մարգարե: Ք.ծ.ա. 587 թվականին բաբելոնացիները կործանեցին Երուսաղեմը և վերցրեցին ավելի շատ գերիներ: Եզեկիելը ծառայեց իր աքսորված ժողովրդին մինչև Ք.ծ.ա. 570 թվականը:

Եզեկիելի գրվածքները ներառում են մռայլ նախատինքներ և փառահեղ խոստումներ, որոնք վերաբերվում են ոչ միայն Հուդայի հնադարյան թագավորությանը, այլ ողջ Իսրայելին, ներառյալ այսօրվա Եկեղեցու անդամներին: Չնայած Երուսաղեմը կործանված էր, Եզեկիելը կանխագուշակեց մի օրվա մասին, երբ Իսրայելը կհավաքվի և կվերականգնվի: Այս իրադարձությունը խորհրդանշվում է չորացած ոսկորների հովտի տեսիլքում և Հուդայի ու Հովսեփի փայտերի մասին մարգարեության մեջ:

1. Իսրայելի հովիվները

Ուսուցանեք և քննարկեք Եզեկիել ԼԴ գլուխը: Այս գլխում Տերը նախատում է իրենք իրենց արածեցնող Իսրայելի հովիվներին, ովքեր չեն արածեցնում հոտը: Ապա նա նկարագրում է իրեն՝ որպես Բարի Հովիվ, որը կհավաքի իր հոտը վերջին օրերին և կառաջնորդի նրանց Հազարամյակի ժամանակ:

- Ովքե՞ր են «Իսրայելի հովիվները», որոնց մասին խոսվում է Եզեկիել ԼԴ գլխում (Եզեկիելի օրերի կրոնական առաջնորդները): Ինչո՞ւ էր Տերը դժգոհ նրանցից (Տես Եզեկիել ԼԴ.2–4): Ի՞նչ պատահեց ոչխարներին, երբ հովիվներն աչքաթող արեցին նրանց (Տես Եզեկիել ԼԴ.5–6):
- Ինչպե՞ս կարող է մեզանից յուրաքանչյուրն Իսրայելի հովիվ համարվել (Մենք պետք է հսկենք և զորացնենք միմյանց որպես ընտանիքի անդամներ, Եկեղեցու անդամներ, հարևաններ, ընտանեկան ուսուցիչներ և այցելող ուսուցիչներ և քվորումի ու դասարանի անդամներ):

Երեց Բրյուս Ռ. Մակքոնկին ասել է. «Յուրաքանչյուրը, ով ծառայում է որևէ կոչումում Եկեղեցում, որով նա պատասխանատու է Տիրոջ որևէ զավակի հոգևոր կամ աշխարհիկ բարօրության համար, հովիվ է այդ ոչխարների համար: Տերը պատասխանատվության է ենթարկում իր հովիվներին իր ոչխարների ապահովության (փրկության) համար» (*Mormon Doctrine,* 2nd ed. [1966], 710):

- Տերը դժգոհ էր որոշ հովիվներից, հոտերն արածեցնելու փոխարեն ավելի շուտ իրենք իրենց արածեցնելու համար (Եզեկիել ԼԴ.2–3, 8): Ինչպե՞ս կարող են մեզանից ոմանք կատարել նույն սխալն այսօր:
- Համաձայն Եզեկիելի ԼԴ.11–16 հատվածների, ի՞նչ են անում ճշմարիտ հովիվներն իրենց ոչխարների համար (Նշեք՝ *որոնում, փնտրում, ազատում, հավաքում, արածեցնում, կապում* և *զորացնում* բայերը): Ինչպե՞ս կարող ենք օգնել, կանխարգելելով՝ մարդկանց մոլորվելն ու ցրվելը: Ինչպե՞ս կարող ենք օգնել, հավաքելով ՝ մոլորված մարդկանց : Ինչպե՞ս կարող ենք արածացնել և զորացնել Տիրոջ հոտերը: Ինչպե՞ս եք օրհնվել ճշմարիտ հովիվների կողմից, ովքեր արել են այս բաները:

  Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոնն ասել է. «Մենք կոչ ենք անում ձեզ ջանք գործադրել նորոգված նվիրվածությամբ…. Մենք ուզում ենք, որ դուք հսկեք, արածեցնեք, խնամեք և հոգ տանեք հոտի մասին և երբ ոմանք ժամանակավորապես կորում են, մենք կոչ ենք անում ձեզ գտնել նրանց» (in Conference Report, Apr. 1983, 64; or *Ensign,* May 1983, 45):
- Ինչպե՞ս է Փրկիչը հովվի պես մեզ համար (Տես Եզեկիել ԼԴ.11–16, Սաղմոս ԻԳ, Եսայիա. Խ.11, Հովհաննես Ժ.11–15): Քննարկեք, թե Փրկիչն ինչպես է արել այս սուրբ գրություններում նկարագրված բաներից յուրաքանչյուրը: Բերեք վկայություն Փրկչի մասին, երբ Հոգու կողմից հուշում զգաք:

2. Ապաշխարություն և ներում

Ուսուցանեք և քննարկեք Եզեկիել ԺԸ.21–32:

- Ի՞նչ է սովորեցնում այս հատվածն ապաշխարության և ներման մասին (Տես Եզեկիել ԺԸ.21–22, 27–28): Ի՞նչ է նշանակում «…. Նոր սիրտ և նոր հոգի գործեցեք» (Եզեկիել ԺԸ.31): Ինչո՞ւ է կարևոր հասկանալ, որ ապաշխարությունը ներառում է ինչպես մեղքից հեռու շրջվելը, այնպես էլ սրտի փոփոխություն ունենալը: Ինչպե՞ս կարող ենք զգալ սրտի այս փոփոխությունը (Տես Ալմա 5.7–14):
- Ի՞նչ է սովորեցնում այս հատվածն այն մարդկանց մասին, ովքեր հեռանում են արդարությունից և չեն ապաշխարում (Տես Եզեկիել ԺԸ.24, 26):
- Ի՞նչ է այս հատվածը սովորեցնում Տիրոջ մասին, երբ նա պատժում է ամբարիշտներին (Տես Եզեկիել ԺԸ.23, 32):
- Ի՞նչ է այս հատվածը սովորեցնում Տիրոջ արդարության և ողորմածության մասին (Տես Եզեկիել ԺԸ.25, 29–32): Ինչո՞ւ է կարևոր իմանալ, որ Տերն արդար է և ողորմած:

3. Եզեկիելի տեսիլքը ոսկորների հովտի մասին

Ուսուցանեք և քննարկեք Եզեկիել ԼԷ.1–14: Բացատրեք, որ ոսկորների հովտի մասին Եզեկիելի տեսիլքը խորհրդանշում է և՛ Հարությունը, և՛ Իսրայելի վերականգնումը և՝ նրա որդիների վերադարձը դեպի խոստացված երկիրը:

- Ինչպե՞ս է խորհրդանշվում Հարությունը Եզեկիելի տեսիլքում (Ոսկորները մոտեցան միմյանց, ծածկվեցին մսով և մաշկով և նրանց կյանք տրվեց. տես Եզեկիել ԼԷ.1–10. տես նաև Ալմա 11.42–44, 40.23):

- Ինչպե՞ս է Իսրայելի վերականգնումը, նրա որդիների դեպի խոստացված երկիր վերադարձը խորհրդանշվում Եզեկիելի տեսիլքում (Տես Եզեկիել ԼԷ.11–14: Հարությունն օգտագործվում է խորհրդանշելու այս վերականգնումը):
- Եզեկիելի տեսիլքը կարող է նաև կարդացվել որպես համանմանություն, որը նկարագրում է Իսրայելի «հույսի» նորացումը (Եզեկիել ԼԷ.11): Չնայած Իսրայելի հույսը կարող է մեռած լինել ինչպես ոսկորների «մեծ բանակը», որը տեսավ Եզեկիելը, Փրկիչը կարող է այն ետ բերել դեպի կենսունակություն և կյանք: Ինչպե՞ս է Փրկիչը նորացրել ձեր հույսը (Կարդացեք Մորոնի 7.41, երբ քննարկեք այս հարցը):
- Եզեկիելի տեսիլքում ոսկորները սկսեցին կյանք առնել հետո, երբ Եզեկիելն ասաց նրանց. «լսեցեք Տիրոջ խոսքը» (Եզեկիել ԼԷ.4): Ինչպե՞ս է Տիրոջ խոսքը մեզ կյանք տալիս:

4. Հուդայի փայտը և Հովսեփի փայտը

Ուսուցանեք և քննարկեք Եզեկիել ԼԷ.15–28: Բացատրեք, որ Հուդայի և Հովսեփի փայտերի Եզեկիելի մարգարեությունը երկակի իմաստ ունի: Այն վերաբերում է վերջին օրերին Հուդայի և Հովսեփի (Իսրայելի) սուրբ գրությունների միացմանը: Այն վերաբերում է նաև Հուդայի և Հովսեփի (Իսրայելի) թագավորությունների վերամիավորմանը:

- Ինչպե՞ս իրականացավ Եզեկիելի ԼԷ.15–20 հատվածների մարգարեությունը (Տես 1 Նեփի 5.14, 2 Նեփի 3.12, ՎԱՈՒ 27.5: Բացատրեք, որ *փայտ* բառն այս հատվածներում վերաբերում է գրելու փայտյա տախտակի մի տեսակի, որը սովորաբար օգտագործվում էր Եզեկիելի օրերում: Հուդայի փայտը խորհրդանշում է Աստվածաշունչը, իսկ Հովսեփի փայտը խորհրդանշում է Մորմոնի Գիրքը):

  Երեց Բոյդ Կ. Փակերն ասել է. «Հուդայի փայտը կամ հիշատակարանը՝ Հին Կտակարանը և Նոր Կտակարանը, և Եփրեմի փայտը կամ հիշատակարանը՝ Մորմոնի Գիրքը, որը ևս մեկ վկայություն է Հիսուս Քրիստոսի մասին, այժմ միահյուսված են միմյանց այնպիսի մի սերտաճմամբ, որ երբ ջանասիրաբար ուսումնասիրում եք մեկը, դուք մղվում եք դեպի մյուսը, երբ սովորում եք մեկից, լուսավորվում եք մյուսով: Դրանք իսկապես մեկ են մեր ձեռքում: Եզեկիելի մարգարեությունն այժմ իրականություն է դարձել» (in Conference Report, Oct. 1982, 75; or *Ensign*, Nov. 1982, 53):
- Ի՞նչ օրհնություններ են եկել ի լրումն Աստվածաշնչի Մորմոնի Գիրքն ունենալուց (Տես 1 Նեփի 13.39–40. 2 Նեփի 3.12): Ինչպե՞ս է Մորմոնի Գիրքն օգնել ձեզ ավելի լավ հասկանալ Աստվածաշունչը: Ինչպե՞ս է այն ուժեղացրել ձեզ համար Աստվածաշնչի վկայությունը Տեր Հիսուս Քրիստոսի մասին:
- Ի՞նչ է ասել Եզեկիելն այն մասին, թե ի՞նչ է պատահելու երկու փայտերը միացվելուց հետո:

  ա. Իսրայելի որդիները կհավաքվեն միասին և կմիավորվեն մեկ թագավորության մեջ՝ Փրկչին ունենալով որպես Թագավոր (Եզեկիել ԼԷ.21–22):
  բ. Ժողովուրդը կսրբվի և կմաքրվի (Եզեկիել ԼԷ.23):
  գ. Ժողովուրդը կհետևի Տիրոջ օրենքներին (Եզեկիել ԼԷ.24):
  դ. Ժողովուրդը կբնակվի խոստացված երկրում (Եզեկիել ԼԷ.25):
- Ի՞նչ այլ օրհնություններ էր Տերը խոստացել Եզեկիելին ԼԷ.26–28 հատվածներում (Տիրոջ սրբարանը կամ խորանը, որը նշանակում է տաճար, վերականգնելը կարևոր մի օրհնություն է: Հաջորդ դասն ավելի մանրամասնորեն է քննարկում տաճարի օրհնությունները):

Եզրափակում

Եզեկիելի ուսմունքներն օգնում են մեզ հասկանալ, թե Փրկիչը որքան շատ է սիրում և հոգ տանում մեզանից յուրաքանչյուրի մասին: Նա մեր Հովիվն է: Նա շատ է ցանկանում ներել: Նա մեզ համար հնարավոր դարձրեց հարությունը: Նա ղեկավարում է Իսրայելի վերջին

օրերի հավաքումը: Եվ նա առաջ բերեց Մորմոնի Գիրքը որպես ևս մեկ վկայություն իր մասին: Հրավիրեք դասարանի անդամներին կիսվել իրենց վկայություններով այս ճշմարտությունների մասին:

Ուսուցման լրացուցիչ գաղափարներ

Հետևյալ նյութն օժանդակում է առաջարկվող դասի ուրվագծին: Օգտագործեք մեկ կամ մի քանի գաղափար որպես դասի բաղկացուցիչ մաս:

1. Սովորել լավ հովիվներ լինել

Երբ քննարկեք մեր պարտականությունները որպես հովիվներ, կարդացեք կամ պատմեք Նախագահ Ջեյմս Ի. Ֆաուստի հետևյալ պատմվածքը.

«Երբ ես շատ փոքր մի տղա էի, հայրս անապատում մեն մենակ մի գառ էր գտել: Ոչխարների հոտը, որին պատկանում էր նրա մայրը, առաջ էր շարժվել և ինչ-որ ձևով գառն առանձնացել էր իր մորից և հովիվն ամենայն հավանականությամբ չէր իմացել, որ այն կորել է: Քանի որ այն չէր կարող միայնակ գոյատևել անապատում, հայրս վերցրել և տուն էր բերել նրան : Եթե գառնուկին թողներ այնտեղ, դա կնշանակեր անխուսափելի մահ, կամ զոհ կդառնար դաշտագայլերին կամ սովին, քանի որ այնքան փոքր էր, որ դեռ կաթի կարիք ուներ…. Հայրս գառը տվեց ինձ, և ես դարձա նրա հովիվը:

Մի քանի շաբաթ ես տաքացնում էի կովի կաթը և նորածնի կաթի շշով կերակրում գառնուկին: Մենք դարձանք անբաժան ընկերներ…. Այն սկսեց աճել: Գառնուկս և ես խաղում էինք մարգագետնում: Երբեմն մենք պառկում էինք միասին խոտի վրա, և ես դնում էի գլուխս նրա փափուկ, բրդոտ փորին և նայում կապույտ երկնքին և սպիտակ վերբարձրացող ամպերին: Ես օրվա ընթացքում փակի տակ չէի պահում գառնուկիս: Նա ոչ մի տեղ չէր փախչում: Շուտով նա սովորեց խոտ ուտել: Ես կարողանում էի կանչել գառնուկիս բակի ցանկացած մասից, ուղղակի որքան կարող էի լավ նմանակելով ոչխարի մայոցի ձայնին….

Մի գիշեր սարսափելի փոթորիկ սկսվեց: Ես մոռացել էի գառնուկիս գոմ տանել այդ գիշեր, ինչը պարտավոր էի անել: Ես գնացի քնելու: Իմ փոքրիկ ընկերը վախեցած էր փոթորկից, և ես լսում էի նրա մայոցը: Գիտեի, որ պետք է օգնեի իմ սիրելիին, բայց ես ուզում էի մնալ ապահով, տաք և չոր իմ անկողնում: Ես չվերկացա, ինչը պետք է արած լինեի: Հաջորդ առավոտ ես դուրս գնացի և գառնուկիս մահացած գտա: Երևի ինչ-որ շուն նույնպես լսել էր նրա մայող կանչը և սպանել էր նրան: Սիրտս կոտրված էր: Ես լավ հովիվ կամ խնամակալ չեղա նրա համար , ում հայրս վստահել էր ինձ: Հայրս ասաց. «Որդիս, միթե՞ ես չէի կարող վստահել քեզ խնամել ընդամենը մեկ գառնուկի»: Հայրիկիս դիտողությունն ավելի ցավ պատճառեց, քան իմ բրդոտ ընկերոջ կորուստը: Ես այդ օրը որպես փոքրիկ տղա վճռեցի, , որ ես էլ երբեք աչքաթող չէի անի որպես հովիվ իմ խնամակալությունը, եթե երբևէ ինձ նորից տրվեր այդ պարտավորությունը:

Տարիներ անց , ես կանչվեցի որպես տնային ուսուցչի երիտասարդ ընկերակից: Լինում էին դեպքեր, երբ այնքան ցուրտ էր լինում կամ փոթորկոտ, որ ես ցանկանում էի մնալ տանը և հարմարավետ զգալ, բայց իմ մտքի ականջով ես լսում էի գառնուկիս մայոցը և հասկանում էի, որ պետք է լինեմ բարի հովիվ և պիտի գնամ իմ ավագ ընկերակցի հետ: Այդ բոլոր տարիների ընթացքում, երբ ես ցանկություն էի ունենում աչքաթող անել իմ պարտականությունները, հիշում էի թե որքան ցավ զգացի ես այն գիշեր այնքան շատ տարիներ առաջ, երբ ես չկարողացա լինել բարի հովիվ» (in Conference Report, Apr. 1995, 62–63; or *Ensign*, May 1995, 46):

2. Դետեր՝ նախազուշացնող ձայն բարձրացնելու համար

- Կանչելով Եզեկիելին՝ որպես մարգարե, Տերն ասաց. «Ես քեզ դետ եմ դրել Իսրայելի տան համար» (Եզեկիել Գ.17): Ինչո՞վ էին Եզեկիելի պարտականությունները որպես մարգարե նման դետի պարտականություններին (Տես Եզեկիել Գ.17–21, ԼԳ.1–9: Եզեկիելի օրերում աշտարակի վրայի դետը նախազգուշացնում էր ժողովրդին թշնամու զորքերի կողմից սպառնացող վտանգից: Եզեկիելը նախազգուշացնում էր իր ժողովրդին թշնամիների մասին, ովքեր վտանգի կենթարկեին նրանց հոգեպես):
- Ովքե՞ր են մեր դետերը վերջին օրերին: Ինչո՞ւ է կարևոր ունենալ այդ դետերին: Ո՞րն է մեր դետ լինելու պարտականությունը (Տես ՎԱՈՒ 88.81: Այս պարտականության մասն է կազմում սովորեցնել ավետարանը նրանց, ովքեր չեն ստացել այն):

Մարգարեների նախազգուշացումներին ականջ դնելու կարևորությունն ուսուցանելու, և ավետարանը նրանց սովորեցնելու միջոցով մեր մերձավորներին նախազգուշացնելու վերաբերյալ, Երեց Բոյդ Կ. Փակերը պատմել է 1976 թվականին Այդահոյում Տետոն Դամի փլուզման պատճառով առաջացած մի կործանիչ ջրհեղեղի մասին: Սրընթաց շարժվող հեղեղաջրերի անմիջական ճանապարհի վրա էին 7,800 մարդ: Երբ հեղեղը ներխուժեց հովիտ այն ավերեց 790 տուն և խիստ վնասեց ևս 800 տներ, եկեղեցիներ, դպրոցներ և գործատեղեր: Հաշվի առնելով ջրի քանակությունը, նրա արագությունը և տարածքի բնակչությունը, մի մասնագետ գնահատեց, որ 5,300 մարդ պետք է զոհվեին: Անսպասելիորեն խեղդվեցին ընդամենը 6 մարդ:

Երեց Փակերը հարցրել էր.

«Ինչպե՞ս կարող էր այդպիսի սոսկալի ավերածություն տեղի ունենալ կյանքերի այդքան քիչ կորստով…. Որովհետև նրանց նախազգուշացրել էին: Նրանք երկար ժամանակ չունեին, բայց նրանք նախազգուշացվել էին և յուրաքանչյուր մարդ, որը նախազգուշացվել էր, նախազգուշացրել էր իր հարևանին….

Իսկ ի՞նչ կասեք այն վեցի մասին, ովքեր խեղդվեցին: Նրանցից մեկը հենց ամբարտակի ներքևում էր եղել և այլընտրանք չէր ունեցել: Նրանցից երկուսը չէին հավատացել նախազգուշացմանը, մինչև արդեն շատ ուշ էր եղել: Հետագայում նրանց գտան իրենց մեքենաների մեջ, բայց նրանք ականջ չէին դրել նախազգուշացմանը: Նրանցից երեքը վերադարձել էին մի քանի իրեր վերցնելու և նրանք կորցրել էին իրենց կյանքը:

Բայց դա վիթխարի նշանակության հրաշք էր: Որպես Վերջին Օրերի Սրբեր՝ մենք սովորում ենք ականջ դնել նախազուշացումներին….

Այժմ ես տեսնում եմ մեծ նմանություն այն բանի հետ, ինչ կատարվում է աշխարհում՝ չարիքի և ամբարշտության մեծ ալիքի մակընթացություն: Այն ուղղակի հոսում է մեր շրջակայքում և գնալով ավելի ու ավելի խորանում: Մեր կյանքը վտանգված է: Մեր ունեցվածքը վտանգված է: Մեր ազատությունը վտանգված է, և այնուամենայնիվ, մենք անփութորեն գնում ենք մեր գործին՝ անընդունակ հասկանալու, որ անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր մարդ, որը նախազգուշացվել է, նախազգուշացնի իր հարևանին….

Մենք նախազգուշացվել ենք մարգարեի կողմից: Արդյոք [մենք] ականջ կդնե՞նք նախազգուշացմանը, թե կլինենք այն վեցի պես Այդահոյում, որոնք մտածում էին թե նախազգուշացումն իրենց համար չէր» (*That All May Be Edified* [1982], 220–21, 223):

«Այն ամեն տեղերում ուր այն…. գետը գնում է, պիտի ապրէ»

Դաս
44

Եզեկիել ԽԳ–ԽԴ, ԽԷ

Նպատակ

Խրախուսել դասարանի անդամներին ճաշակել կյանք տվող, բժշկող զորություններից, որոնք մատչելի են տաճարում:

Նախապատրաստում

1. Աղոթքով ուսումնասիրեք հետևյալ սուրբ գրությունները.

   ա. Եզեկիել ԽԳ.1–12, ԽԴ.6–9, 23. Եզեկիելին ցույց է տրվում Երուսաղեմի տաճարի տեսիլքը:
   բ. Եզեկիել ԽԷ.1, 6–12: Եզեկիելը տաճարից հոսող մի գետ է տեսնում, որը կյանք է տալիս անապատին և բժշկում Մեռյալ ծովը:
   գ. Եզկիել ԽԷ.2–5: Եզեկիելը չափում է գետի խորությունը և հայտնաբերում, որ ջուրն ամեն անգամ խորանում է, երբ նա առաջ է գնում նրա մեջ:

2. Գծեք 209 էջի վրայի քարտեզը պաստառի կամ գրատախտակի վրա նախքան դասը սկսելը:

3. Լրացուցիչ ընթերցանություն՝ Եզեկիել Խ–ԽԲ, Հովել Գ.18, Զաքարիա ԺԴ.8, Հայտնություն ԻԲ.1–3, 1 Նեփի 8.10–11, 11.25, Վարդապետություն և Ուխտեր 97.8–20:

Առաջարկվող դասի զարգացում

Ուշադրության վարժություն

Օգտագործեք հետևյալ վարժությունը (կամ ձեր սեփականը) դասը սկսելու համար:

Դասարանի անդամներին տվեք հետևյալ հարցերը.

- Դուք երբևէ հուզվե՞լ եք՝ նայելով որևէ սպորտային իրադարձություն կամ որևէ այլ տիպի զվարճություն:
- Դուք երբևէ եղե՞լ եք այնքան հուզված այդ իրադարձությունից, որ կանգնել եք և բացականչել կամ ծափահարել:
- Կարո՞ղ եք մտածել սրբազան իրադարձությունների մասին, որոնք ուղեկցվել են կամ կուղեկցվեն ուրախության և երախտագիտության ջերմեռանդ արտահայտություններով: Այդպիսի իրադարձություններից մի քանիսը ներառում են՝

  ա. Երկրագնդի ստեղծումը (Հոբ ԼԸ.4–7):
  բ. Հիսուսի հաղթական մուտքը Երուսաղեմ (Հովհաննես ԺԲ.12–16):
  գ. Քրիստոսի Երկրորդ Գալուստը և Հարությունը (Ա Թեսաղոնիկեցիս Դ.16):

- Ինչպե՞ս է սպորտային իրադարձությունների կամ այլ զվարճությունների հուզմունքը համեմատվում այս սուրբ իրադարձությունների ուրախության հետ: (Մինչ սպորտային իրադարձությունների կամ այլ զվարճությունների հուզմունքը ժամանակավոր է, սրբազան իրադարձությունների հետ կապված ուրախությունը հավերժական է):
- Ինչպիսի՞ սրբազան իրադարձություն կա Եկեղեցում, որտեղ մասնակիցները ցույց են տալիս իրենց ուրախությունը , արտահայտելով երախտագիտություն, կանգնելով, բացականչելով , ծածանելով, ողջունելով (Տաճարի նվիրագործման ժամանակ, համայնքն

իր մասնակցությունն է բերում մեծ ուրախության դրսևորմամբ, բացականչելով Օվսաննա):

«Օվսաննայի Բացականչությունը լիահոգի է և տրվում է մարդու ողջ ուժով: Համայնքը կանգնում է և միաձայն բացականչում «Օվսա՜ննա, Օվսա՜ննա, Օվսա՜ննա Աստծուն և Գառին: Ամեն, Ամեն և Ամեն» բառերը՝ կրկնելով դրանք երեք անգամ: Սա, սովորաբար, ուղեկցվում է բարձրացրած ձեռքերով սպիտակ թաշկինակների ռիթմիկ ծածանումով: «Գառ» մակդիրը կապված է Հիսուս Քրիստոսի բարեհաճության և քավության հետ» (in Daniel H. Ludlow, ed., *Encyclopedia of Mormonism*, 5 vols. [1992], 2:659).

Բացատրեք, որ այս դասը կօգնի դասարանի անդամներին հասկանալ բազմաթիվ ուղիներից մի քանիսը, որոնցով տաճարն ուրախություն է բերում:

Սուրբ գրության քննարկում և կիրառում

Երբ ուսուցանեք սուրբ գրության հետևյալ հատվածները, քննարկեք, թե ինչպես են դրանք վերաբերում ամենօրյա կյանքին: Խրախուսեք դասարանի անդամներին կիսվել անձնական փորձառություններով, որոնք կապված են սուրբգրքյան սկզբունքերի հետ:

1. Եզեկիելին ցույց է տրվում Երուսաղեմի տաճարի տեսիլքը:

Ուսուցանեք և քննարկեք Եզեկիել ԽԳ.1–12, ԽԴ.6–9, 23:

- Հանձնարարեք դասարանի անդամներին կարդալ Եզեկիել ԽԳ.1–12 և ԽԴ.6–9, 23: Ի՞նչ կարող ենք սովորել տաճարի մասին այս հատվածներից:

  Գրի առեք դասարանի անդամների պատասխանները գրատախտակին և քննարկեք դրանց իմաստը: Պատասխանները կարող են ներառել հետևյալը՝

  ա. Տիրոջ փառքը լցնում է տաճարը (Եզեկիել ԽԳ.2, 4–5):
  բ. Տաճարը «[Տիրոջ] աթոռի տեղն» է երկրի վրա (Եզեկիել ԽԳ.7):
  գ. Տերը քայլում է տաճարում, կոչելով այն իր «ոտների գարշապարների տեղը» (Եզեկիել ԽԳ.7):
  դ. Տաճարը մի տեղ է, որտեղ Տերը կարող է իր ժողովրդի «մեջ բնակվել» (Եզեկիել ԽԳ.7):
  ե. Տաճարում մենք սովորում ենք Տիրոջ օրենքների մասին (Եզեկիել ԽԳ.11):
  զ. Տաճարում կան արարողություններ, որոնք Տերը կամենում է, որ մենք կատարենք (Եզեկիել ԽԳ.11):
  է. Նույնիսկ տաճարը շրջապատող տարածքը «ամենասուրբ է» (Եզեկիել ԽԳ.12):
  ը. Տաճար պետք է մտնեն միայն նրանք, ովքեր արժանի են (Եզեկիել ԽԴ.6–9):
  թ. Տաճարում մենք սովորում ենք տարբերությունը սուրբի և անսուրբի միջև և մաքուրի ու անմաքուրի միջև (Եզեկիել ԽԴ.23):

2. Եզեկիելը տեսնում է տաճարից հոսող մի գետ, որը կյանք է տալիս անապատին և բժշկում է Մեռյալ ծովը:

Ուսուցանեք և քննարկեք Եզեկիել ԽԷ.1, 6–12:

- Ի՞նչ տեսավ Եզեկիելը Երուսաղեմի տաճարի արևելյան դռներից դուրս եկող (Տես Եզեկիել ԽԷ.1): Ո՞ւր էր գնում ջուրը: (Տես Եզեկիել ԽԷ.8: Քարտեզի վրա ցույց տվեք, որ Հրեաստանի անապատը և Մեռյալ ծովը Երուսաղեմի արևելյան կողմում են):



- Հրեաստանի անապատն անբերրի անապատ է, իսկ Մեռյալ ծովը խիստ աղի է կենդանական կյանք ապահովելու համար: Ըստ Եզեկիելի տեսիլքի՝ ի՞նչ փոփոխություններ տեղի կունենան Հրեաստանի անապատում և Մեռյալ ծովում այն գետի շնորհիվ, որը հոսում էր տաճարից: (Տես Եզեկիել ԽԷ.6–12):
- Եզեկիելի տեսիլքի նման մի տեսիլքում Հովհաննես Սիրեցյալին ցույց տրվեց Աստծո աթոռը (Հայտնություն ԻԲ.1–3: Նշեք որ Եզեկիել ԽԳ.7 հատվածում Տերը կոչում է տաճարը «իմ աթոռի տեղը»): Ի՞նչ էր հոսում Աստծո աթոռից Հովհաննեսի տեսիլքում (Տես Հայտնություն ԻԲ.1): Ի՞նչ է «կենաց ջուրը»: (Ավետարանի վարդապետությունները. տես 30-րդ դասի ուշադրության վարժությունը): Ինչո՞վ ենք նման Հրեաստանի անապատին և Մեռյալ ծովին, եթե մենք չենք ճաշակում կենաց ջրից:
- Ինչպե՞ս է կենաց ջուրը, որը մատչելի է տաճարում, բժշկում և կյանք տալիս ամուսնություններին, ընտանիքներին, մեր նախնիներին, Եկեղեցուն: Էլ ի՞նչ է հոսում տաճարից, որը հոգևոր կյանք է տալիս և բժշկություն (Պատասխանները կարող են ներառել՝ ճշմարտություն, իմաստություն, հայտնություն և ուխտեր):
- Եզեկիել ԽԷ.12 հատվածը նկարագրում է ծառերը, որոնք աճում էին գետափի երկայնքով Եզեկիելի տեսիլքում: Ի՞նչ ընդհանուր բան ունեին ծառերը գետի ջրերի հետ: (Դրանք բժշկող և կյանք տվող զորություն ունեին):
- Ի՞նչ էր աճում Հովհաննեսի տեսիլքի գետափի երկայնքով (Տես Հայտնություն ԻԲ.2): Էլ ո՞ր սուրբ գրություններում են մարգարեներին ցույց տրվել կենաց ծառը (Տես 1 Նեփի 8.10–11, 11.25): Լեքիին և Նեփիին տրված երազում, ինչ էր ներկայացնում կենաց ծառը (Տես 1 Նեփի 11.25):
- Ինչպե՞ս է Աստծո սերը բժշկում և կյանք տալիս: Ի՞նչ հոգևոր և ֆիզիկական վերքեր կբժշկի Աստծո սերը:

3. Եզեկիելը չափում է գետի խորությունը

Ուսուցանեք և քննարկեք Եզեկիել ԽԷ.2–5:

- Որքա՞ն էր գետի խորությունն առաջին անգամ, երբ Եզեկիելն առաջ գնաց՝ անցնելով այն (Տես Եզեկիել ԽԷ.2–3): Որքան էր խորությունը երկրորդ, երրորդ և չորրորդ անգամ, երբ նա առաջ գնաց՝ անցնելով այն: (Տես Եզեկիել ԽԷ.4–5): Ի՞նչ ճշմարտություններ են հուշում տաճարի մասին այս հատվածները (Տաճարի ուժը մեծանում է մեր կյանքում որքան որ ավելի հաճախ ենք այցելում):

- Տաճարում հրաշալի ճշմարտություններ են սովորեցվում՝ շատերը խորհրդանիշների միջոցով: Եթե առաջին անգամ մեր հասկացողությունն ընդամենը «գարշապարի խորության» է, ի՞նչ պետք է մենք անենք (Տես Եզեկիել ԽԷ.2–5):

Եզրափակում

Պատմեք դասարանի անդամներին, որ Տերն անվանել է տաճարը «գոհաբանության տեղ» (ՎԱՈՒ 97:13): Արտահայտեք ձեր գոհությունն այն օրհնությունների համար, որոնք գալիս են տաճարի շնորհիվ և հրավիրեք դասարանի անդամներին կիսվել տաճարի համար իրենց երախտագիտության զգացումներով: Վկայեք, որ ճիշտ ինչպես տաճարի ջրերը բժշկեցին Հրեական անապատն ու Մեռյալ ծովը Եզեկիելի տեսիլքում, Հիսուս Քրիստոսի ավետարանը կբժշկի և կմաքրի մեզ, եթե մենք ճաշակենք դրանից:

Ուսուցման լրացուցիչ գաղափարներ

Հետևյալ նյութն օժանդակում է առաջարկվող դասի ուրվագծին: Օգտագործեք մեկ կամ մի քանի գաղափար որպես դասի բաղկացուցիչ մաս:

1. «Ես սիրում եմ քո տան բնակությունը» (Սաղմոս ԻԶ.8)

Սաղմոսներից շատերը նշում են օրհնությունները, որ մենք ստանում ենք տաճար հաճախելուց և արտահայտում սիրո գեղեցիկ զգացումներ և գոհաբանություն տաճարի համար: Հարցրեք դասարանի որոշ անդամների արտահայտել երախտագիտության իրենց զգացումները տաճարի համար, երբ դուք քննարկեք հետևյալ սաղմոսները՝

Սաղմոս ԻԴ.3–4
Սաղմոս ԻԶ.6–8
Սաղմոս ԻԷ.1, 4–6
Սաղմոս ԿԵ.4
Սաղմոս ՁԴ
Սաղմոս ՃԻԲ
Սաղմոս ՃԼԴ

2. «[Մեր] անդամության մեծ խորհրդանիշը»

Նախագահ Հովարդ Վ. Հանթերն ասել է. «Ես կոչ եմ անում Վերջին Օրերի Սրբերին նայել Տիրոջ տաճարին որպես մեր անդամության մեծ խորհրդանիշ: Սրտիս ամենախորը ցանկությունն է, որ Եկեղեցու յուրաքանչյուր անդամ արժանի մտնի տաճար: Տիրոջը հաճելի կլիներ, եթե յուրաքանչյուր չափահաս անդամ արժանի լիներ և ունենար գործող տաճարային երաշխավորագիր: Բաները, որ պետք է անենք կամ չանենք, որպեսզի արժանի լինենք տաճարային երաշխավորագիր ունենալու համար, հենց այն բաներն են, որոնք ապահովում են, որ մենք երջանիկ լինենք որպես անձեր և ընտանիքներ» (in Conference Report, Oct. 1994, 8; or *Ensign*, Nov. 1994, 8):

- Ինչպե՞ս կարող ենք տաճարը դարձնել «[մեր] անդամության մեծ խորհրդանիշը» Եկեղեցում: Ինչպե՞ս կարող է այս ձևով դեպի տաճար նայելն ազդել կյանքի հանդեպ մեր հայեցակետի վրա և Տիրոջ աշխատանքի մեր նվիրվածության վրա:

«Եթե կմեռնեմ, թող մեռնեմ»

Դաս
45

Դանիել Ա, Գ, Զ, Եսթեր Գ–Ե, Է–Ը

Նպատակ Օգնեք դասարանի անդամներին քաջություն ունենալ ապրելու ըստ ավետարանի չափանիշների:

Նախապատրաստում

1. Աղոթքով ուսումնասիրեք հետևյալ սուրբ գրությունները՝

   ա. Դանիել Ա: Դանիելը և նրա ընկերները հրաժարվում են Թագավոր Նաբուգոդոնոսորի ուտելիքը ուտելով պղծել իրենց (Ա.1–16, նշեք, որ ընդեղենն ուտելիք է, որը պատրաստվում է հատիկներից և ուտելի սերմերից): Տերն օրհնում է Դանիելին և նրա ընկերներին լավ առողջությամբ և իմաստությամբ (Ա.17–21):

   բ. Դանիել Գ: Սեդրաքը, Միսաքը և Աբեդնագովը հրաժարվում են երկրպագել թագավոր Նաբուգոդոնոսորի կուռքին (Գ.1–12): Թագավոր Նաբուգոդոնոսորը նրանց գցում է շիկացած հնոցը և Տերը նրանց փրկում է մահից (Գ.13–30):

   գ. Դանիել Զ: Թագավոր Դարեհի մարդիկ համոզում են թագավորին մի հրովարտակ ստորագրել, որ 30 օր բոլոր խնդրանքները պետք է ուղղվեն իրեն, և ոչ թե որևէ այլ մարդու կամ Աստծուն (Զ.1–9): Չնայած թագավորի հրովարտակին՝ Դանիելն աղոթում է Աստծուն (Զ.10–13): Որպես հրովարտակին չհնազանդվելու պատիժ Դանիելը գցվում է առյուծների գուբը (Զ.14–17): Տերը մի հրեշտակ է ուղարկում պաշտպանելու Դանիելին (Զ.18–23):

   դ. Եսթեր Գ–Ե, Է–Ը: Մուրթքեն հրաժարվում է խոնարհվել Համանի առջև (Գ.1–4): Համանը համոզում է Ասուերոս թագավորին թագավորությունում գտնվող բոլոր հրեաներին մահվան դատապարտելու հրովարտակ պատրաստել (Գ.5–14): Եսթերն իմանում է իր ժողովրդին սպանելու Համանի ծրագրի մասին, և վտանգի ենթարկելով իր կյանքն, օգնության համար գնում է թագավորի մոտ (Դ.1–17): Թագավորն ընդունում է Եսթերին և բավարարում Համանի հետ խնջույքի գնալու նրա խնդրանքը (Ե.1–8): Խնջույքի ժամանակ Եսթերը բացահայտում է հրեաներին սպանելու Համանի դավադրությունը (Է.1–6): Թագավորը կախում է Համանին (Է.7–10): Թագավորը մեծարում է Մուրթքեին և բավարարում Համանի հրովարտակը չեղյալ համարելու Եսթերի խնդրանքը (Ը.1–17):

2. Լրացուցիչ ընթերցանություն՝ Դանիել Ե, Եսթեր Ա–Բ, Զ, Թ–Ժ:

3. Եթե օգտագործելու եք ուշադրության վարժությունը, խնդրեք դասարանի երկու անդամների պատրաստվել համառոտակի պատմել մի դեպքի մասին, երբ նրանք կամ ինչ-որ մեկը, որին իրենք գիտեն, Տիրոջը հնազանդվելու համար անհրաժեշտ է եղել քաջություն ցուցաբերել:

4. Եթե հետևյալ նկարները մատչելի են, օգտագործեք դրանցից մի քանիսը դասի ժամանակ՝ «Դանիելը մերժում է թագավորի միսն ու գինին» (62094, Ավետարանական Արվեստի Նկարների Հավաքածու 114), «Երեք մարդ կրակով բորբոքված հնոցում» (62093, Ավետարանական Արվեստի Նկարների Հավաքածու 116), և «Դանիելն առյուծների գուբում» (62096, Ավետարանական Արվեստի Նկարների Հավաքածու 117):

Առաջարկվող դասի զարգացում

Ուշադրության կենտրոնացման վարժություն

Օգտագործեք հետևյալ վարժությունը (կամ ձեր սեփականը) դասը սկսելու համար:

Խնդրեք դասարանի հանձնարարված անդամներին համառոտակի պատմել որևէ դեպք, երբ իրենք կամ ինչ-որ մեկը Տիրոջը հնազանդվելու համար անհրաժեշտ է եղել քաջություն ցուցաբերել:

Դասարանի անդամներն իրենց փորձառություններով կիսվելուց հետո, բացատրեք, որ այս դասը Հին Կտակարանի վեց մարդկանց մասին են, ովքեր մեծ քաջություն ցուցաբերեցին՝ հնազանդվելով Տիրոջը:

Սուրբ գրության քննարկում և կիրառում

Երբ ուսուցանեք սուրբ գրության հետևյալ հատվածները, քննարկեք թե ինչպես են դրանք վերաբերում ամենօրյա կյանքին: Խրախուսեք դասարանի անդամներին կիսվել փորձառություններով, որոնք կապված են սուրբգրքյան սկզբունքների հետ:

1. Դանիելը և նրա ընկերները հրաժարվում են ուտել թագավոր Նաբուգոդոնոսորի ուտելիքը. նրանք օրհնվում են լավ առողջությամբ և իմաստությամբ:

Ուսուցանեք և քննարկեք Դանիել Ա գլուխը:

Որպես պատանի՝ Դանիելը Երուսաղեմից գերության տարվեց Բաբելոն: Նա և եբրայեցի մյուս խոստումնալից երիտասարդները, ներառյալ նրա ընկերներ Սեդրաքը, Միսաքը և Աբեդնագովը, ուսուցանվում էին թագավոր Նաբուգոդոնոսորի պալատում:

- Ի՞նչ առաջարկեցին Դանիելն ու նրա ընկերները, երբ թագավորի կողմից միս ու գինի տրվեց նրանց (Տես Դանիել Ա.8–4): Ի՞նչ օրհնություններ ստացան նրանք Տիրոջ առողջության օրենքին հնազանդվելու համար (Տես Դանիել Ա.15, 17, 20): Ինչպե՞ս են նրանց ստացած օրհնությունները նման Տիրոջ մեզ տված խոստումներին, եթե մենք հնազանդվենք Իմաստության Խոսքին (Տես ՎԵՈՒ 89.18–20):

  Երեց Բոյդ Ք. Փակերն ուսուցանել է. «Ես հասկացա…. որ Իմաստության Խոսքի հիմնական նպատակը կապ ունի հայտնության հետ: Ձեր շատ վաղ հասակից մենք սովորեցնում ենք ձեզ խուսափել թեյից, սուրճից, ալկոհոլից, ծխախոտից, թմրանյութերից և որևէ այլ բանից, որը վնասակար է ձեր առողջությանը…. Եթե մեկը «ազդեցության տակ» հազիվ է կարողանում լսել սովորական խոսքը, ինչպե՞ս նրանք կարող են պատասխանել հոգևոր հուշումներին, որոնք դիպչում են նրանց ամենանուրբ զգացումներին: Իմաստության Խոսքը՝ որպես առողջության օրենք ինքնին լինելով շատ արժեքավոր, կարող է շատ ավելի արժեքավոր լինել ձեր հոգևորի, քան ֆիզիկականի համար» (in Conference Report, Oct. 1979, 28–29; or *Ensign*, Nov. 1979, 20):

- Ի՞նչ կարող է սովորեցնել մեզ այս պատմությունը, երբ մենք ճնշում ենք զգում անելու ինչ-որ բան, որը մենք չպետք է անենք (Տես Դանիել Ա.5, 8): Ի՞նչ իրավիճակներ են այսօր մեզանից քաջություն պահանջում Տիրոջ պատվիրաններին հնազանդվելու համար: Ինչպե՞ս կարող ենք զարգացնել քաջություն, որն անհրաժեշտ է այդպիսի իրավիճակներում հնազանդվելու համար:

2. Տերը փրկում է Սեդրաքին, Միսաքին և Աբեդնագովին կրակով բորբոքված հնոցից:

Ուսուցանեք և քննարկեք Դանիել Գ:

- Նաբուգոդոնոսոր թագավորը հրաման արձակեց, որ եթե որևէ մեկը չերկրպագեր իր արձանին, կգցվեր կրակով բորբոքված հնոցը (Դանիել Գ.1–6): Ինչպե՞ս

արձագանքեցին Սեդրաքը, Միսաքը և Աբեդնագովն այդ հրամանին (Տես Դանիել Գ.13–15, 19–20):

- Ի՞նչ ասացին Սեդրաքը, Միսաքը և Աբեդնագովը, երբ թագավորը սպառնաց գցել նրանց հնոցը (Տես Դանիել Գ.16–18):

  Երեց Նիլ Ա. Մաքսվելն ասել է. «Մենք [ոչ] միշտ կազատվենք մեր կյանքում հանդիպող խնդիրներից, բայց մենք կազատվենք հավիտենական մահից: Մինչդեռ վերջին հույսը հնարավոր է դարձնում ասել նույն խոսքերը, որոնք օգտագործվել են դարեր առաջ երեք քաջարի մարդկանց կողմից: Նրանք գիտեին Աստված կարող էր ազատել իրենց կրակով բորբոքված հնոցից, եթե Նա կամենար: «Բայց եթե ոչ», նրանք ասացին, այնուամենայնիվ, միևնույն է կծառայեն Նրան» (in Conference Report, Oct. 1994, 45; or *Ensign,* Nov. 1994, 35):

- Ի՞նչ կարող է Սեդրաքի, Միսաքի և Աբեդնագովի պատասխանը սովորեցնել մեզ Տիրոջ պատվիրաններին հնազանդվելու մասին: (Սեդրաքը, Միսաքը և Աբեդնագովը հոժարակամ էին հնազանդվել Տիրոջը, անկախ նրանից նա պաշտպանում էր նրանց, թե ոչ: Մեր հնազանդությունը չպետք է պայմանավորված լինի, թե արդյոք ի պատասխան Տերը տալիս է մեզ սպասվող օրհնությունը սպասված ժամանակին): Որո՞նք են Տիրոջը հնազանդվելու վտանգները միայն այն պատճառով, որ մենք սպասում ենք, որ նա ի պատասխան մեզ կտա որոշակի օրհնություն:

- Ի՞նչ պատահեց, երբ Սեդրաքը, Միսաքը և Աբեդնագովը գցվեցին հնոցը (Տես Դանիել Գ.21–27): Ո՞վ էր նրանց հետ հնոցում (Տես Դանիել Գ.25): Ինչպե՞ս է Փրկիչն օգնում մեզ, երբ մենք նրան ենք դիմում մեր փորձությունների ժամանակ:

- Ի՞նչ ազդեցություն ունեցան Սեդրաքը, Միսաքը և Աբեդնագովը Նաբուգոդոնոսորի վրա (Տես Դանիել Գ.28–30): Ինչպե՞ս են մեր գործողություններն ազդում Եկեղեցու հանդեպ մեր հարևանների վերաբերմունքի վրա:

3. Դանիելն աղոթում է, չնայած թագավորի հրովարտակին և գցվում է առյուծների գուբը: Տերն ուղարկում է մի հրեշտակի՝ Դանիելին պաշտպանելու համար:

Ուսուցանեք և քննարկեք Դանիել Զ գլուխը:

Նաբուգոդոնոսոր թագավորին հաջորդեց իր որդին՝ Բաղդասարը: Երբ Բաղդասարը սպանվեց «Մարաց Դարեհն առավ թագավորությունը» (Դանիել Ե.31), և Դանիելը շատ պատվավոր դիրքի հասավ: (Հիշեք՝ Մարաց Դարեհը նույն թագավոր Դարեհը չէ, որը կառավարում էր պարսկական կայսրությունը Կյուրոսից հետո, և որին դիմեցին հրեաները, երբ վերակառուցում էին տաճարը: Տես Եզրաս Դ–Զ. դաս 47. և Սուրբ գրքերի ուղեցույց, «Դարեհ», էջ 48):

- Ինչո՞ւ էին թագավորի հրամանատարները և կուսակալները ցանկանում Դանիելի վրա հանցանք գտնել (Տես Դանիել Զ.1–5: Նրանք նախանձում էին, որ թագավորը գերադասում էր Դանիելին և նրանք անհանգստանում էին, որ թագավորը կարող էր նրան ավելի շատ իշխանություն տալ): Այս մարդիկ թագավորին ի՞նչ հրովարտակ համոզեցին ստորագրել: (Տես Դանիել Զ.6–9: Իմանալով, որ Դանիելը կանոնավորապես աղոթում էր, նրանք համոզեցին Դարեհ թագավորին հրովարտակ ստորագրել, որ 30 օրվա ընթացքում բոլոր խնդրանքներն ավելի շուտ պետք է ուղարկվեին իրեն, քան որևէ այլ մարդու կամ Աստծուն: Նրանք, ովքեր չէին հնազանդվի հրովարտակին, կգցվեին առյուծների գուբը):

- Ինչպե՞ս պատասխանեց Դանիելը թագավորի հրովարտակին (Տես Դանիել Զ.10): Ի՞նչ կարող ենք սովորել Դանիելից աղոթքի կարևորության մասին: (Աղոթքն այնքան կարևոր էր Դանիելի համար, որ նա շարունակում էր աղոթել, նույնիսկ, երբ նրա

կյանքը սպառնալիքի տակ էր այդ անելու համար): Խնդրեք դասարանի անդամներին խորհել, թե Երկնային Հորն աղոթելու արտոնությանն ինչ կարևորություն ենք մենք տալիս:

- Ինչպե՞ս զգաց Դարեհ թագավորը, երբ նրա մարդիկ զեկուցեցին, որ տեսել էին Դանիելին աղոթելիս (Տես Դանիել Զ. 12–15): Ինչպե՞ս թագավորը ցույց տվեց իր հավատքն առ Աստված (Տես Դանիել Զ.16, 18):
- Ինչպե՞ս Տերն օրհնեց Դանիելին առյուծների գուբում (Տես Դանիել Զ.19–23): Ի՞նչ ազդեցություն ունեցավ Դանիելի հավատքը և քաջությունը Դարեհ թագավորի և թագավորության ժողովրդի վրա (Տես Դանիել Զ.24–28):

  Երեց Լ. Թոմ Փերին ասել է. «Դանիելի ծառայությունն օգտակար էր ոչ միայն թագավորի համար, այլ այդ հավատքի շնորհիվ, որ Դանիելն ուներ Տիրոջ հանդեպ, այն ազդեց ողջ երկրի վրա: Թագավորը հրովարտակ ուղարկեց, որ թագավորության ողջ ժողովուրդը պետք է երկրպագի ճշմարիտ և կենդանի Աստծուն, այն Աստծուն, որին Դանիելն էր երկրպագում: Որքան հզոր էր մեկ արդար մարդու ծառայության ուժը, որն ազդեց այդքան շատերի վրա, երբ նա ծառայեց «աշխարհում», որում *մենք* ենք ապրում» (in Conference Report, Apr. 1988, 16; or *Ensign*, May 1988, 15):

4. Եսթերը վտանգի է ենթարկում իր կյանքը՝ իր ժողովրդին փրկելու համար:

Ուսուցանեք և քննարկեք Եսթեր Գ–Ե, Է–Ը գլուխները:

Եսթերը հրեա կին էր, որն ապրել է Դանիելի ժամանակից ոչ շատ անց: Իր ծնողների մահից հետո, նրան մեծացրեց իր զարմիկ Մուրքքեն: Եսթերը շատ գեղեցիկ էր և Ասուերոսը՝ Պարսկաստանի և Մարաստանի թագավորը, այնպես հիացած էր նրա գեղեցկությամբ, որ նա դարձրեց նրան իր թագուհին:

- Ասուերոս թագավորն առաջ քաշեց Համանին լինելու իր բարձրագույն աստիճանի իշխանը (Եսթեր Գ.1): Ինչպե՞ս Մուրքքեն քաջություն ցույց տվեց, երբ թագավորը հրամայեց նրան և մյուս ծառաներին խոնարհվել Համանի առջև (Տես Եսթեր Գ.2–4): Ինչպիսի՞ն էր Համանի արձագանքը (Տես Եսթեր Գ.5–14: Նա բարկացավ և համոզեց թագավորին հրամայել «մի ազգի», այսինքն՝ բոլոր հրեաների կործանումը թագավորությունում):
- Երբ Եսթերն իմացավ հրեաների մեջ սգի մասին, նա մի սուրհանդակ ուղարկեց հարցնելու Մուրքքեից, թե ինչ էր պատահել (Եսթեր Դ.1–6): Ի՞նչ խնդրեց Մուրքքեն Եսթերից (Տես Եսթեր Դ.7–9): Ինչո՞ւ էր Եսթերի համար վտանգավոր գնալ և խոսել թագավորի հետ (Տես Եսթեր Դ.10–11: Օրենքը թույլ էր տալիս թագավորին սպանել ամեն մեկին, ով կմոտենար նրան առանց հրավերի):
- Ի՞նչ լուր ուղարկեց Մուրքքեն Եսթերին, երբ նա իմացավ թագավորին մոտենալու նրա մտահոգությունների մասին (Տես Եսթեր Դ.13–14): Ի՞նչ եք կարծում, ի՞նչ էր զգում Եսթերը, երբ նա մտածում էր «մի այսպիսի ժամանակի համար թագուհության գալու» իր ունեցած հնարավորության մասին (Եսթեր Դ.14): Ինչպե՞ս կարող ենք համոզվածություն ձեռք բերել, որ մեր կյանքը նպատակ ունի: Ինչպե՞ս կարող է այս համոզվածությունն օգնել մեզ:
- Ի՞նչ խնդրեց Եսթերն իր աղախիններից և տեղի հրեաներից, երբ նա պատրաստվում էր մոտենալ թագավորին (Տես Եսթեր Դ.16): Ինչպե՞ս կարող է միասնական ծոմը և շատ մարդկանց աղոթքներն օգնել մեզ:
- Նշելով թագավորին մոտենալու իր մտադրությունը, Եսթերն ասաց. «Եթե կմեռնեմ թող մեռնեմ» (Եսթեր Դ.16): Ինչպե՞ս էր այս հայտարարությունը, նախքան իրենց հնոցը գցելը, Սեդրաքի, Միսաքի և Աբեդնագովի մտքի նման (Տես Դանիել Գ.17–18):

Ինչպե՞ս այս հայտարարությունը ցույց տվեց Եսթերի նվիրվածությունն իր ժողովրդին և Աստծուն:

- Երբ Եսթերը մոտեցավ թագավորին, նա ընդունեց նրան և ասաց, որ կշնորհի նրան այն ամենն ինչ կխնդրի (Եսթեր Ե.1–3): Նա խնդրեց, որ թագավորը և Համանը գային խնջույքին (Եսթեր Ե.4–8): Ի՞նչ խնդրեց Եսթերը թագավորից խնջույքի երկրորդ օրը (Տես Եսթեր Է.3–4): Ի՞նչ արեց թագավորը, երբ իմացավ, որ այն ժողովուրդը, որին Համանը դավադրում էր կործանել, հրեաներն էին (Տես Եսթեր Է.5–10):
- Համանին կախեցին, բայց հրեաներին սպանելու հրովարտակը ողջ թագավորությունում արդեն ուժի մեջ էր մտել: Եսթերն ի՞նչ խնդրեց թագավորին անել (Տես Եսթեր Ը.5–6): Ի՞նչ օրհնություններ ստացան հրեաները Եսթերի քաջության և հավատքի շնորհիվ (Տես Եսթեր Ը.16–17): Ինչպիսի՞ օրհնություններ եք ստացել դուք ուրիշների խիզախության և հավատքի շնորհիվ:
- Ինչպիսի՞մարտահրավերների ենք հանդիպում մենք այսօր, որոնք պահանջում են նույնպիսի խիզախություն, ինչպիսին Եսթերինն էր: Ի՞նչ օրհնություններ կստանանք մենք, երբ մենք ձգտենք անել այն, ինչ ճիշտ է, եթե նույնիսկ սպասվող հետևանքները ծանր լինեն:

Եզրափակում

Վկայեք, որ Տերը կօրհնի մեզ, երբ մենք ունենանք քաջություն պաշտպանելու ճշմարտությունը: Խրախուսեք դասարանի անդամներին հետևել Դանիելի, Սեդրաքի, Միսաքի, Աբեդնագովի, Եսթերի և Մուրքքեի օրինակին:

Ուսուցման լրացուցիչ գաղափարներ

Հետևյալ նյութն օժանդակում է առաջարկվող դասի ուրվագծին: Օգտագործեք մեկ կամ մի քանի գաղափար որպես դասի բաղկացուցիչ մաս:

1. Քաջարի հնազանդության վերջնական օրհնությունները

- Ի՞նչ ընդհանրություն ունեին Դանիելը, Սեդրաքը, Միսաքը, Աբեդնագովը, Եսթերը և Մուրքքեն: (Նրանք բոլորն ունեին խիզախություն՝ անելու այն, ինչը ճիշտ էր, նույնիսկ երբ այդպես անելով նրանք դնում էին իրենց կյանքը վտանգի տակ): Ինչպիսի՞ իրավիճակներում եք հայտնվել, երբ դուք ստիպված եք եղել որոշել, թե արդյոք պաշտպանելու եք այն, ինչը գիտեք, որ ճիշտ է:

Վկայեք, որ երբ մենք ձգտում ենք պահել պատվիրանները, Տերն օրհնում է մեզ: Սակայն օրհնությունները, որոնք մենք ստանում ենք, միշտ չէ, որ անմիջապես ակնհայտ են դառնում: Այս բացատրելու համար, քննարկեք այն փորձությունները, որոնց դիմացան հետևյալ մարդիկ՝

ա. Սարան անընդունակ էր երեխաներ ունենալ մինչև 90 տարեկանը (Ծննդոց ԺԷ.15–17, ԻԱ.1–2):
բ. Հովսեփը վաճառվեց իր եղբայրների կողմից, իսկ այնուհետև բանտարկվեց մի հանցագործության համար, որը նա չէր գործել (Ծննդոց ԼԷ.27–28, ԼԹ.7–20):
գ. Փրկչին դավաճանեց ընկերը, անօրինաբար դատվեց և խաչվեց (Հովհ. ԺԸ–ԺԹ):
դ. Նեփիին իր եղբայրները ծեծեցին, իսկ այնուհետև, կապեցին պարաններով (1 Նեփի 3.28, 18.10–11):
ե. Ալման և Ամուղեկը ստիպված եղան նայել, թե ինչպես էին կանանց և երեխաներին այրում նրանց հավատալիքների համար (Ալմա ԺԴ.8–11):
զ. Ջոզեֆ Սմիթը բանտարկվեց և նահատակվեց (ՎևՈՒ 135):

- Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ Տերը թույլ տվեց այս մարդկանց տանել նման փորձություններ: Ի՞նչ եք կարծում ինչո՞ւ նրանք կարողացան դիմանալ այս փորձություններին: Ի՞նչ կարող ենք սովորել նրանց փորձություններից:

2. Պաշտպանելով ճշմարտությունը

Հանձնարարեք դասարանի անդամներին տարբեր իրավիճակների դերակատարումներ, որոնց ժամանակ նրանք պետք է պաշտպանեն այն, ինչը նրանք գիտեն, որ ճիշտ է: Մտածեք հանգամանքների մասին, որոնք կվերաբերվեն դասարանի անդամներին: Հետևյալ առաջարկները կարող են օգտակար լինել.

ա. Ընկերներից մեկը նվաստացնում է մեկ ուրիշին և խրախուսում է ձեզ անել նույնը:
բ. Ինչ-որ մեկն առաջարկում է, որ դուք լսեք ինչ-որ երաժշտություն, որը դուք գիտեք, որ անպատշաճ է:
գ. Ինչ-որ մեկը խնդրում է ձեզ ռեստորան գնալ կիրակի օրը եկեղեցուց հետո:
դ. Ինչ-որ մեկն առաջարկում է ձեզ մի քիչ ալկոհոլ կամ որևէ այլ նյութ, որը հակառակ է Իմաստության Խոսքին:

«Մի թագավորություն, որ հավիտյանս չի ավերվի»

Դաս
46

Դանիել Բ

Նպատակ

Զորացնել դասարանի անդամների վկայությունները Հիսուս Քրիստոսի վերականգված Եկեղեցու մասին և խրախուսել նրանց օգնել կառուցել Աստծո արքայությունը երկրի վրա:

Նախապատրաստում

1. Աղոթքով ուսումնասիրեք հետևյալ սուրբ գրությունները՝
   ա. Դանիել Բ.1–23: Նաբուգոդոնոսոր թագավորը երազ է տեսնում և հրամայում է իր խորհրդականներին մեկնաբանել և նկարագրել այն (Բ.1–13): Դանիելն աղոթում է իր ընկերների հետ և Աստված նրա համար բացահայտում է երազը և նրա մեկնաբանությունը (Բ.14–23):
   բ. Դանիել Բ.24–49: Դանիելը հայտնում է, որ Նաբուգոդոնոսոր թագավորի երազը կանխագուշակում է երկրի մեծ թագավորությունների բարձրացումը և անկումը և Աստծո արքայության վերջին օրերի հաղթանակը բոլոր մյուս թագավորությունների վրա:
2. Լրացուցիչ ընթերցանություն՝ Վարդապետություն և Ուխտեր 65:
3. Հրավիրեք երկու կամ երեք դասարանի անդամների պատրաստվել համառոտ վկայություններ բերել Եկեղեցու ճշմարտացիության մասին:
4. Եթե օգտագործելու եք ուշադրության վարժությունը, գծեք այս էջի ներքևում գտնվող աղյուսակը պաստառի վրա կամ գրատախտակին նախքան դասի սկսելը:
5. Եթե օգտագործելու եք «Նաբուգոդոնոսորի երազի» սխեման (տես էջ 218), դասից առաջ գծեք այն պաստառի կամ գրատախտակի վրա: Մի գրեք առանձին թագավորությունների անունները, մինչև սխեման չքննարկեք դասարանում:
6. Եթե «Դանիելը մեկնաբանում է Նաբուգոդոնոսորի երազը» նկարը մատչելի է, օգտագործեք այն դասի ընթացքում (62531, Ավետարանական Արվեստի Նկարների Հավաքածու 115):

Առաջարկվող դասի զարգացում

Ուշադրության կենտրոնացման վարժություն

Օգտագործեք հետևյալ վարժությունը (կամ ձեր սեփականը) դասը սկսելու համար:

Հրավիրեք դասարանի անդամների ուշադրությունն աղյուսակի վրա, որը դուք գծել եք պաստառի վրա կամ գրատախտակին:

	6 ապրիլ 1830	1880	1930	1980	1995	2000
	6	133628	670017	4639822	9340898	Ավելի քան 11000000
	1	10	16	44	88	100
	0	23	104	1218	2150	2581
	0	10	30	188	307	334
	0	1	7	19	47	102

- Ի՞նչ եք կարծում, ի՞նչ են ներկայացնում այս թվերը:

	6 ապրիլ 1830	1880	1930	1980	1995	2000
Եկեղեցու անդամներ	6	133,628	670,017	4,639,822	9,340,898	Ավելի քան 11,000,000
Հետևյալ լեզուներով Մորմոնի Գրքի տպագրված հրատարակություններ	1	10	16	44	88 (39 լրիվ և 49 մասնակի թարգմանություններ)	100 (61 լրիվ և 39 մասնակի թարգմանություններ)
Ցցեր	0	23	104	1,218	2,150	2,581
Միսիաներ	0	10	30	188	307	334
Գործող տաճարներ	0	1	7	19	47	102

Դասարանի անդամներին տվեք մի քանի րոպե այս հարցին պատասխան տալու համար: Այնուհետև լրացրեք աղյուսակն ինչպես ցույց է տրված ներքևում՝

(Ընթացիկ վիճակագրության տվյալներ կարելի է գտնել Եկեղեցու վերջին հրատարակություններում: Աղյուսակում մի սյունակ ավելացրեք այդ տվյալները ներառելու համար):

Հրավիրեք դասարանի անդամներին մեկնաբանել Եկեղեցու բուռն աճի մասին: Բացատրեք, որ այս դասը պատմում է Դանիելի մասին, մի հնադարյան մարգարեի, ով կանխագուշակեց Աստծո թագավորության՝ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու հաղթանակը երկրի վրա:

Սուրբ գրության քննարկում և կիրառում

Երբ ուսուցանեք սուրբ գրության հետևյալ հատվածները, քննարկեք թե ինչպե՞ս են դրանք վերաբերում ամենօրյա կյանքին: Խրախուսեք դասարանի անդամներին կիսվել փորձառություններով, որոնք կապված են սուրբգրքյան սկզբունքների հետ:

1. Դանիելը հայտնություն է ստանում, որում նրան ցույց է տրվում Նաբուգոդոնոսոր թագավորի երազը և տրվում դրա մեկնաբանությունը:

Ուսուցանեք և քննարկեք Դանիել Բ.1–23:

Նաբուգոդոնոսոր թագավորը մի գիշեր մտահոգիչ երազ տեսավ: Նա ստուգեց իր խորհրդականներին ասելով նրանց, որ ինքը մոռացել էր այն և հրամայեց նրանց բացահայտել այն և դրա մեկնաբանությունը (Դանիել Բ.2–5): Երբ նրանք ասացին, որ իրենք չէին կարող նկարագրել երազը, Նաբուգոդոնոսորը հրամայեց Բաբելոնի բոլոր իմաստուն մարդկանց, ներառյալ Դանիելին և նրա ընկերներին, մահվան դատապարտել (Դանիել Բ.10–13): Երբ թագավորի դահճապետը եկավ Դանիելին մահապատժի ենթարկելու, Դանիելը գնաց թագավորի մոտ և ժամանակ խնդրեց երազը մեկնաբանելու համար (Դանիել Բ. 14–16):

- Դանիելն ինչպե՞ս պատրաստվեց մեկնաբանել թագավորի երազը (Տես Դանիել Բ.17–18: Նա խնդրեց իր ընկերներին աղոթել իր հետ): Ինչպե՞ս են ընտանիքի անդամների և ընկերների աղոթքներն օգնել ձեզ:
- Ինչպե՞ս պատասխանվեցին Դանիելի և նրա ընկերների աղոթքները (Տես Դանիել Բ.19, 27–28): Ի՞նչ բացահայտեցին նրա խոսքերն աստծո հանդեպ նրա զգացմունքների մասին: Ինչո՞ւ է կարևոր երախտագիտություն ցուցաբերել Տիրոջ հանդեպ: Ինչպե՞ս կարող ենք ցույց տալ նրա հանդեպ մեր երախտագիտությունը:
- Հակադրեք այն աղբյուրները, որոնց դիմեցին Դանիելն ու Նաբուգոդոնոսորը, երբ նրանք հարցերին պատասխաններ էին որոնում: (Տես Դանիել Բ.2, 19–23, 28): Ի՞նչ կասկածելի աղբյուրների են մարդիկ դիմում այսօր, երբ նրանք դժվարին հարցերին պատասխանելու կամ կարևոր որոշումներ ընդունելու համար օգնության կարիք են ունենում: Ի՞նչն է շատ մարդկանց այդպիսի իրավիճակներում ետ պահում Աստծո առաջնորդությունը որոնելուց:

2. Դանիելը նկարագրում է և մեկնաբանում Նաբուգոդոնոսորի երազը:

Ուսուցանեք և քննարկեք Դանիել Բ.24–49:

- Ինչպե՞ս Դանիելը նկարագրեց այն մեծ պատկերը, որը թագավորը տեսել էր իր երազում (Տես Դանիել Բ.31–33: Օգտագործեք «Դանիելը մեկնաբանում է Նաբուգոդոնոսորի երազը» նկարը կամ ստորև ցույց տրված ձեր նկարած սխեման):



- Ինչե՞ր էին ներկայացնում արձանի տարբեր մասերը (Տես Դանիել Բ.36–43: Մասերը ներկայացնում էին տարբեր թագավորություններ, որոնք հաջորդելու էին միմյանց որպես աշխարհիկ իշխանություններ):

  Գրեք թագավորությունների անունները սխեմայի վրա, երբ վերանայեք Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալի հետևյալ մեկնաբանությունը.

  ա. Ոսկե գլուխը ներկայացնում էր Նաբուգոդոնոսորին և Բաբելոնի նրա թագավորությունը:
  բ. Արծաթյա կուրծքը և ձեռքերը ներկայացնում էին Կյուրոսին և Մարաստանի և Պարսկաստանի նրա թագավորությունը:
  գ. Պղնձե որովայնը և ազդրերը ներկայացնում էին Փիլիպոսին և Ալեքսանդրին ու հունական կամ մակեդոնական թագավորությունները:
  դ. Երկաթյա ոտքերը ներկայացնում էին Հռոմեական կայսրությունը:
  ե. Երկաթե և կավե ոտնաթաթերը ներկայացնում էին Եվրոպական մի խումբ ազգեր (In Conference Report, Apr. 1976, 10; or *Ensign,* May 1976, 8):

- Նաբուգոդոնոսորի երազում, ինչն ավերեց արձանը, որը ներկայացնում էր երկրային թագավորությունները (Տես Դանիել Բ.34–35): Ի՞նչ էր ներկայացնում «առանց ձեռքի կտրված քարը» (Տես Դանիել Բ.44–45, ՎԱՈՒ 65.2):

  Նախագահ Քիմբալը սովորեցրել է. «Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին վերականգվեց 1830 թվականին…. Սա այն թագավորությունն է, որը հիմնադրվել է Երկնքի Աստծո կողմից, որը երբեք չի ավերվի կամ էլ ուրիշին տրվի, իսկ առանց ձեռքերի սարից կտրված քարը կդառնա մեծ սար և կլցնի բոլոր երկիրը» (in Conference Report, Apr. 1976, 10; or *Ensign,* May 1976, 8–9):

- Ի՞նչ մարգարեացավ Դանիելը վերջին օրերի Եկեղեցու վերաբերյալ (Տես Դանիել Բ.34–35, 44):

  Գրի առեք հետևյալ մարգարեությունները գրատախտակին: Դանիելը մարգարեացավ, որ Եկեղեցին.

  ա. «Կկտրվի առանց ձեռքերի» (Դանիել Բ.34):
  բ. Կդառնա «մի մեծ սար և [կլցնի] բոլոր երկիրը» (Դանիել Բ.35):
  գ. «Երբեք չի ավերվի» (Դանիել Բ.44):
  դ. «Ուրիշ ազգի չի թողնվի [տրվի]» (Դանիել Բ.44):
  ե. «Կվերջացնի բոլոր [մյուս] թագավորությունները» (Դանիել Բ.44):
  զ. «Կմնա հավիտյանս» (Դանիել Բ.44):

- Ի՞նչ է նշանակում, որ «քարը կկտրվի առանց ձեռքերի» (Տես Դանիել Բ.34: Այն չի կարող մարդու կողմից պատրաստված լինել): Ինչպե՞ս է Հիսուս Քրիստոսի վերականգված Եկեղեցին նման առանց ձեռքերի կտրված քարի:

  Երեց Ջոզեֆ Բ. Վիրթլինն ասել է. «Մեր Տերն ու Փրկիչը կանգնած է այս եկեղեցու գլխին և ղեկավարում է այն իր ծառաների միջոցով: Սա Տիրոջ եկեղեցին է, սա մարդկանց եկեղեցի չէ» (in Conference Report, Oct. 1993, 4; or *Ensign,* Nov. 1993, 5):

- Ինչպե՞ս է Դանիելի մարգարեությունը, որ Եկեղեցին «կլցնի բոլոր երկիրը» և «երբեք չի ավերվի» իրականանում այսօր: (Գուցե կամենաք դիմել ուշադրության վարժության երկրորդ աղյուսակին):

  Նախագահ Գորդոն Բ. Հինքլին վկայել է. «Այս Եկեղեցին ճշմարիտ է: Այն կհաղթահարի ամեն փոթորիկ, որ կզարկի նրան: Այն կհարատևի ամեն քննադատի, որը կբարձրանա ծաղրելու այն: Այն հաստատվել է Աստծո՝ մեր Երկնային Հոր կողմից բոլոր սերունդների Իր որդիներին և դուստրերին օրհնելու համար»: Այն կրում է Նրա

անունը, ով կանգնած է որպես նրա ղեկավար, այսինքն՝ Տեր Հիսուս Քրիստոսի, աշխարհի Փրկչի: Այն կառավարվում է և շարժվում քահանայության զորությամբ: Այն առաջ է ուղարկում աշխարհին Տիրոջ աստվածայնության մասին ևս մեկ վկայություն: Հավատարիմ եղեք, ընկերներ: Եղեք անկեղծ: Եղեք անձնվեր Աստծո այն մեծ բաներին, որոնք բացահայտվել են այս տնտեսության ժամանակ» (“Keep the Faith,” *Ensign*, Sept. 1985, 6):

- Ի՞նչ կարող ենք անել մենք՝ մասնակցելու Տիրոջ արքայության կառուցմանը մեր տներում, մեր համայնքներում և ողջ աշխարհում:

Հրավիրեք դասարանի հանձնարարված անդամներին բերել համառոտ վկայություններ Եկեղեցու ճշմարտացիության վերաբերյալ:

Եզրափակում

Վկայեք, որ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին Աստծո արքայությունն է երկրի վրա, և որ Հիսուս Քրիստոսն է առաջնորդում այն: Խրախուսեք դասարանի անդամներին մասնակցել երկրի վրա Աստծո արքայության կառուցմանը:

Դաս
47

«Եկեք վեր կենանք և շինենք»

Եզրաս Ա–Ը, Նէեմեա Ա–Բ, Դ, Զ, Ը

Նպատակ Խրախուսեք դասարանի անդամներին օգնել կառուցել Սիոնը և ցույց տալ Քրիստոսանման սեր նրանց հանդեպ, ովքեր դեմ են կանգնում Տիրոջ աշխատանքին:

Նախապատրաստում

1. Աղոթքով ուսումնասիրեք հետևյալ սուրբ գրությունները.

   ա. Եզրաս Ա–Զ: Կյուրոս թագավորը կարդում է իր անունը Եսայիայի մարգարեություններում և լցվում է Տիրոջ կամքն անելու ցանկությամբ: Նա ազատում է հրեաներին, ովքեր գերի էին եղել Բաբելոնում և հրավիրում է նրանց վերադառնալ Երուսաղեմ և վերակառուցել տաճարը (Եզրաս Ա): Զորաբաբելը և Հեսուն մոտավորապես 50000 մարդ ետ են բերում Երուսաղեմ և սկսում վերակառուցել տաճարը (Եզրաս Բ–Գ): Սամարացիներն առաջարկում են օգնել աշխատելու տաճարի վրա, մերժվում են և փորձում կանգնեցնել աշխատանքը. վերակառուցումը դադարեցվում է (Եզրաս Դ): Տարիներ անց Անգե և Զաքարիա մարգարեները հրեաներին հորդորում են վերջացնել տաճարը. Սամարացիները շարունակում են ընդդիմանալ դրան (Եզրաս Ե. տես նաև Անգե Ա): Դարեհ թագավորը նորացնում է տաճարը վերակառուցելու Կյուրոսի հրովարտակը և այն ավարտի է հասցվում և նվիրագործվում մոտավորապես Ք.ծ.ա. 515 թվականին (Եզրաս Զ):

   բ. Եզրաս Է–Ը: Տաճարի նվիրագործումից ավելի քան 50 տարի անց Եզրասը թույլտվություն է ստանում Պարսից Արտաշես թագավորի կողմից հրեաների մեկ այլ խմբի ետ տանելու Երուսաղեմ: Եզրասը և նրա մարդիկ ծոմ են պահում և աղոթում և Տերը պաշտպանում է նրանց իրենց ճամփորդության ժամանակ:

   գ. Նէեմեա Ա–Բ, Դ, Զ: Իմանալով, որ հրեաները, ովքեր վերադարձել էին Երուսաղեմ «մեծ նեղության և անարգության մեջ էին» Նէեմեան թույլտվություն է ստանում Արտաշես թագավորից գնալ Երուսաղեմ վերակառուցելու քաղաքի պատերը (Նէեմեա Ա–Բ): Հրեաների թշնամիները ձգտում են նրանց խանգարել քաղաքի պատերը վերակառուցելիս: Նէեմեան զինում է բանվորներին և շարունակում առաջ տանել աշխատանքը, մինչև որ պատերի կառուցումն ավարտվում է (Նէեմեա Դ, Զ):

   դ. Նէեմեա Ը: Երուսաղեմի շուրջը պատերի վերակառուցումից հետո, Եզրասը կարդում է ժողովրդին սուրբ գրությունները: Երբ նրանք լսում են օրենքի խոսքերը, մարդիկ արտասվում են և ցանկանում հնազանդվել դրանց:

2. Լրացուցիչ ընթերցանություն՝ Անգե Ա, «Եզրաս», Սուրբ Գրքերի Ուղեցույց, էջ 52. «Նէեմեա», Սուրբ Գրքերի Ուղեցույց, էջ 169:

3. Հրավիրեք դասարանի անդամներին պատրաստվել համառոտ պատմել պատմական իրավիճակի մասին, որը տրված է առաջին սուրբ գրության պատմության սկզբում:

4. Եթե մատչելի է «Հին դարերում օգտագործվող տաճար» նկարը, օգտագործեք այն դասի ընթացքում (62300, Ավետարանական Արվեստի Նկարների Հավաքածու 118):

Առաջարկվող դասի զարգացում

Ուշադրության կենտրոնացման վարժություն

Օտագործեք հետևյալ վարժությունը (կամ ձեր սեփականը) դասը սկսելու համար:

Հանձնարարեք դասարանի անդամներին կարդալ Երեց Դալին Հ. Օուքսի հետևյալ մեջբերումը.

«Մենք կարող է.... հայտնաբերենք, որ սուրբ գրության մի որոշակի հատված, որը խոսվել է բոլորովին ուրիշ նպատակով, բոլորովին ուրիշ դարում, Սուրբ Հոգու մեկնաբանող ազդեցությամբ մեզ տալիս է մի շատ անձնական ուղերձ՝ հարմարեցված մեր այսօրվա կարիքներին.... Եթե մենք ձգտում ենք նմանեցնել սուրբ գրությունները մեր սեփական հանգամանքներին «որպեսզի դա [լինի] մեր օգտի և ուսման համար» (1 Նեփի 19.23), սիրառատ Երկնային Հայրը կարող է օգտագործել դրանք օրհնելու մեզ շատ անհատական ուղիներով» (*Studying the Scriptures* [devotional given in the Salt Lake Tabernacle, 24 Nov. 1985]):

- Երբևէ կարդացե՞լ եք սուրբ գրությունները և զգացել, որ մի որոշակի հատված ուղղակիորեն խոսում է ձեզ հետ: (Հրավիրեք դասարանի անդամներին կիսվել իրենց փորձառություններով): Ինչպե՞ս են սուրբ գրություններն օգնել՝ ուղղություն տալով առանձնապես ձեր կյանքի համար:

Բացատրեք, որ այս դասում քննարկվող իրադարձությունները գործի դրվեցին մի մարդու կողմից, ով գտավ, որ սուրբ գրության մի հատված, որը գրվել էր իր ծննդից 150 տարի առաջ, խոսեց իր հետ անձնապես, փաստորեն, այն դիմում էր իրեն անունով:

Սուրբ գրության քննարկում և կիրառում

Երբ ուսուցանեք սուրբ գրության հետևյալ հատվածները, քննարկեք, թե ինչպես են դրանք վերաբերում ամենօրյա կյանքին: Խրախուսեք դասարանի անդամներին կիսվել փորձառություններով, որոնք կապված են սուրբգրքյան սկզբունքների հետ:

1. Կյուրոս թագավորը թույլ է տալիս հրեաներին վերադառնալ Երուսաղեմ վերակառուցելու տաճարը:

Ուսուցանեք և քննարկեք Եզրաս Ա–Զ:

Ներկայացրեք (կամ հանձնարարեք դասարանի որևէ անդամի ներկայացնել) պատմական հետևյալ տեղեկության համառոտ բովանդակությունը.

Ք.ծ.ա. 721 թվականին, երբ Իսրայելի թագավորությունը (Հյուսիսային թագավորությունը կամ տասը ցեղերը) գերության վերցվեց Ասորեստանի կողմից, Ասորեստանի կայսրությունն ամենամեծն էր աշխարհում: Մինչև Ք.ծ.ա. 612 թվականը, այնուամենայնիվ, Ասորեստանի կայսրությունը կործանվեց Բաբելոնացիների կողմից: Նաբուգոդոնոսոր թագավորի օրոք Բաբելոնն իշխում էր այն բոլոր երկների մեծ մասի վրա, որոնք գրավվել էին Ասորիների կողմից: Հուդայի (Հարավային թագավորության) վրա Բաբելոնի տիրապետությունը տևեց մոտավորապես Ք.ծ.ա. 605 թվականից, երբ նրանք շատ հրեաների գերի վերցրեցին, մինչև Ք.ծ.ա. 587 թվականը, երբ նրանք ավերեցին Երուսաղեմը:

Ք.ծ.ա. 562 թվականին Նաբուգոդոնոսորի մահից հետո, Բաբելոնի իշխանությունը սրընթաց վայէջք կատարեց: Ք.ծ.ա. 539 թվականին Բաբելոնն ընկավ Կյուրոսի ղեկավարության ներքո միավորված Մարաց և Պարսկաստանի ձեռքը: Ի տարբերություն Նաբուգոդոնոսորի, որն իր տիրապետության տակ գտնվողներին դաժանությամբ էր վերաբերվում, Կյուրոսը բարեգործ կառավարիչ էր: Պարտված ժողովուրդներին բարությամբ վերաբերվելով և հարգելով նրանց կրոնները, Կյուրոսը վաստակեց նրանց վստահությունը, ում նա իշխում էր:

Բաբելոնին ոչ շատ անց պարտության մատնելուց հետո, Կյուրոսը հրովարտակ ուղարկեց, որ Երուսաղեմի տաճարը պետք է վերակառուցվեր: Նա հրավիրեց իր կայսրությունում գտնվող հրեաներին վերադառնալ Երուսաղեմ և վերակառուցել տաճարը և նա վերադարձրեց ոսկյա և արծաթյա սպասքները, որոնք Նաբուգոդոնոսորի զորքերը գողացել էին տաճարից: (Տես Բ Մնացորդաց Լ.22–23, Եզրաս Ա.1–3, 7: Այս հատվածներում հիշատակվող Երեմիայի մարգարեությունն այն մասին է, որ հրեաները Բաբելոնյան գերությունից Երուսաղեմ կվերադառնան 70 տարի հետո. տես Երեմիա ԻԵ.11–12, ԻԹ.10):

- Ինչո՞ւ Կյուրոսը հրովարտակ հայտարարեց, որ տաճարը պետք է նորից կառուցվի Երուսաղեմում (Տես Եզրաս Ա.1–2): Ինչպե՞ս Կյուրոսն իմացավ, որ Տերը կամենում էր, որ ինքը դա անի: Կյուրոսի խոսքերը, որոնք գրված են Եզրաս Ա.2 հատվածում վերաբերում են Եսայիա ԽԴ.28 հատվածի մարգարեությանը, որը նշում է Կյուրոսին անունով (Տես նաև Եսայիա ԽԵ.1–5, բացատրեք, որ չնայած Կյուրոսի պատմությունը Հին Կտակարանում Եսայիայի գրքից առաջ է, Եսայիան ապրել է Կյուրոսի ծննդից 150 տարի առաջ): Հրեա հնադարյան պատմաբան Ֆլավիուս Ջոզեֆուսը տեղեկացնում է, որ Կյուրոսը կարդացել էր իր անունը Եսայիայի մարգարեություններում, և Տիրոջ Հոգուց ազդված ցանկացել կատարել այն, ինչ գրված էր (*The Works of Flavius Josephus, Antiquities of the Jews,* trans. William Whiston [n.d.], bk. 11, chap. 1, pars. 1–2):
- Ի՞նչ կզգայիք դուք, եթե սուրբ գրությունները կարդալիս կարդայիք մի մարգարեություն, որը տար ձեր անունը և նկարագրեր որոշակի բաներ, որ դուք պիտի անեիք:

Երբ Զորաբաբելը և Հեսուն հրեաների առաջին խմբին ետ տարան Երուսաղեմ, նրանք այնտեղ հանդիպեցին Սամարացիների: Բացատրեք, որ Սամարացիներն իսրայելացիների հետնորդներն էին, ովքեր փախուստի էին դիմել գերության ժամանակ և խառն ամուսնությունների մեջ մտել ասորեստանցի և բաբելոնացի գաղութատերերի հետ, որոնց ուղարկել էին թագավորները երկիրը գրավելու համար:

- Ի՞նչ խնդրեցին Սամարացիները վերադարձած հրեաներից (Տես Եզրաս Դ.1–2): Ի՞նչ պատասխանեցին հրեաները Սամարացիների խնդրանքին (Տես Եզրաս Դ.3: Հրեաները մերժեցին Սամարացիներին թույլ տալ օգնելու տաճարի վերակառուցմանը, որովհետև նրանք զգացին, որ Սամարացիներն իսկական Իսրայելացիներ չէին): Ի՞նչ արեցին Սամարացիները, երբ հրեաները մերժեցին նրանց՝ թույլ չտալով օգնել (Տես Եզրաս Դ.4–7, 11–24: Նրանք փորձեցին կանգնեցնել տաճարի վերակառուցումը՝ բողոքելով թագավորներին, ովքեր հաջորդեցին Կյուրոսին):
- Ի վերջո, աշխատանքը տաճարի վրա դադարեց: Ի՞նչը հուշեց հրեաներին վերսկսել իրենց աշխատանքը մի քանի տարի անց (Տես Եզրաս Ե.1–2, Անգե Ա: Անգե և Զաքարիա մարգարեները ոգեշնչված ուղղություն տվեցին): Ի՞նչ ասաց Տերն Անգեի միջոցով Երուսաղեմի հրեաներին տաճարի մասին (Տես Անգե Ա.3–4, 7–8): Ի՞նչ վերաբերմունք կար հրեաների մեջ, որը խանգարում էր տաճարի վերակառուցմանը (Տես Անգե Ա.2): Ինչպիսի՞ վերաբերմունքն է խանգարում մեզ տաճարում կանոնավորապես երկրպագելուց և ծառայելուց:
- Սամարացիները կրկին փորձեցին կանգնեցնել տաճարի վերակառուցումը, երբ շինարարությունը վերսկսվեց: Բայց հրեաները բացատրեցին, որ Կյուրոս թագավորի և Դարեհ թագավորի հրովարտակը թույլ էր տալիս շարունակել աշխատանքը (Եզրաս Ե–Զ): Ի՞նչ արեցին հրեաները, երբ տաճարն ավարտվեց (Տես Եզրաս Զ.15–22):

2. Եզրասը հրեաների ևս մեկ խմբի հետ է տանում Երուսաղեմ:

Ուսուցանեք և քննարկեք Եզրաս Է–Ը:

- Ճիշտ ինչպես Տերը նախկինում շարժեց Կյուրոս թագավորի սիրտը հրեաներին ազատելու համար, Նա շարժեց Արտաշես թագավորի սիրտը ևս՝ թույլատրելով

հրեաների Եզրասի խմբին վերադառնալ Երուսաղեմ (Եզրաս Է.27–28. տես նաև 11–26 հատվածները): Կառավարության ղեկավարների սրտերը Եկեղեցու հանդեպ փափկացնելու ինչպիսի՞ օրինակներ կան վերջին օրերում (Տես, օրինակ, Թոմաս Ս. Մոնսոնի ելույթը «Conference Report»-ում, ապրիլ 1989, էջ 65–69; կամ «Ensign» ամսագիր, մայիս 1989, էջ 50–53): Ի՞նչ կարող ենք անել խրախուսելու կառավարության ղեկավարների սրտերը Եկեղեցու հանդեպ փափկեցնելու համար: (Պատասխանները կարող են ներառել երկրի օրենքներին հնազանդվելը, բարիք անելը, նախապատրաստվելով ուսուցանել ավետարանը ողջ աշխարհին և աղոթելով Տիրոջը՝ փափկացնելու ղեկավարների սրտերը Տես ՎԱՈՒ 58.21, 27, 98.4–6):

- Ի՞նչ արեց Եզրասն ապահովելու հրեաների խմբին, որոնց նա տանում էր Երուսաղեմ պաշտպանված լինելու համար (Տես Եզրաս Ը.21–23, 31): Ինչպե՞ս եք դուք, ձեր ընտանիքը, կամ ուրիշները, որոնց դուք ճանաչում եք, օրհնվել ծոմապահության միջոցով:

3. Նէեմեան գնում է Երուսաղեմ և ղեկավարում ժողովրդին քաղաքի պաշտպանական պատերը վերակառուցելիս:

Ուսուցանեք և քննարկեք Նէեմեա Ա–Բ, Դ, Զ: Նշեք , որ Նէեմեան Պարսկաստանում Արտաշես թագավորի մատռվակն էր: Սա մեծ վստահության և պատասխանատվության պաշտոն էր, պահանջելով Նէեմեայից ապահովել, որ թագավորի ուտելիքը և խմելիքն անվտանգ լիներ: Չնայած Նէեմեան Պարսկաստանում կարևոր պաշտոն էր զբաղեցնում, նա մտահոգվում էր Երուսաղեմում գտնվող իր ժողովրդի համար և ձգտում էր օգնել նրանց, երբ նա լսում էր նրանց դժվարությունների մասին:

- Ի՞նչ արեց Նէեմեան, երբ նա լսեց Երուսաղեմի իր ժողովրդի դժվարությունների մասին (Տես Նէեմեա Ա.4–11, Բ.1–5): Ինչպե՞ս Արտաշես թագավորը պատասխանեց Նէեմեայի խնդրանքին (Տես Նէեմեա Բ.6–8: Թագավորը գնալու թույլտվություն շնորհեց Նէեմեային, նրան զորապետեր և ձիավորներ տվեց ապահովության համար և լիազորեց նրան օգտագործել անտառի փայտը քաղաքի պատերը վերակառուցելու համար): Ի՞նչ կարող ենք սովորել Նէեմեայից, որը մեզ առաջնորդի, երբ մենք անհանգստացած լինենք ուրիշների տառապանքից:
- Ինչպե՞ս Նէեմեան խրախուսեց ժողովրդին վերակառուցել քաղաքը շրջապատող պատերը (Տես Նէեմեա Բ.17–18): Ձեր կարծիքով, ինչո՞ւ է ճշմարտության մասին վկայելն ու հոգևոր փորձառություններով կիսվելն այդպիսի ուժ ունենում ոգեշնչելու ուրիշներին բարիք անել: Ինչպե՞ս են վկայությունները և ուրիշների հոգևոր փորձառությունները ոգեշնչել ձեզ:
- Սանաբաղատը Սամարիայի կառավարիչն էր, և նա ու իր ժողովուրդը թշնամի էին հրեաներին, ովքեր վերադարձել էին Զորաբաբելի հետ: Ինչպե՞ս վերաբերվեց Սանաբաղատը քաղաքի պատերը վերակառուցելու ծրագրերին (Տես Նէեմեա Բ.10, 19, Դ.1-3, 7–8, 11): Ինչպե՞ս պատասխանեցին հրեաները պատերի շինարարությունը կանգնեցնելու փորձերին (Տես Նէեմեա Դ.9, 13–15):
- Ի՞նչ արեց Նէեմեան, երբ Սանաբաղատը խնդրեց նրան դադարեցնել աշխատանքը և հանդիպել իր հետ (Տես Նէեմեա Զ.1–4): Ինչպե՞ս են այժմ որոշ մարդիկ փորձում շեղել Եկեղեցու անդամներին Տիրոջ աշխատանքից: Ինչպե՞ս պետք է պատասխանենք այդպիսի շեղումներին:

  Երեց Մարվին Զ. Աշթոնն ասել է. «Որոշ մարդիկ և կազմակերպություններ փորձում են դրդել մեզ հակառակության, չարախոսությունների, զրպարտությունների և այլ անպատշաճ արարքների: Որքա՞ն ոչ իմաստուն պիտի լինենք մենք այսօրվա հասարակությունում մեզ թույլ տալու զայրանալ, ահաբեկվել կամ վիրավորվել, որովհետև

ուրիշները թվում է բավականություն են զգում զրպարտելով մեր դիրքորոշումը կամ ներգրավվածությունը: Խառնակիչների խոսքերից մեր սկզբունքները կամ չափանիշները չեն ցածրանա նրանից, ինչ իրականում կան: Մեր պարտքն է բացատրել մեր դիրքորոշումը տրամաբանորեն, բարյացակամորեն համոզելով և ճշգրիտ փաստերով: Մեր պարտքն է ամուր և անզիջում կանգնել այն հարցերում, որ վերաբերում են այսօրվա բարոյականությանը և ավետարանի հավերժական սկզբունքներին, սակայն չհակառակվել ոչ մի մարդու, ոչ էլ կազմակերպության հետ.... Մեր գործն է լսելի դառնալ և ուսուցանել: Մեր գործն է ոչ միայն հեռու մնալ հակառակություններից, այլ վերացնել դրանք»: (in Conference Report, Apr. 1978, 10; or *Ensign*, May 1978, 8):

4. Ժողովուրդն ուրախանում է, երբ Եզրասը նրանց համար կարդում է սուրբ գրությունները:

Ուսուցանեք և քննարկեք Նէեմեա Ը գլուխը:

- Երբ ժողովուրդը վերջացրեց քաղաքի պատերի վերակառուցումը, ի՞նչ խնդրեցին նրանք Եզրասից (Տես Նէեմեա Ը.1–2: Նշեք, որ հրեաների մեծ մասը գերության մեջ էր եղել այնքան երկար, որ նրանք երբեք չէին լսել կամ կարդացել սուրբ գրությունները):
- Որքա՞ն երկար կարդաց Եզրասը ժողովրդի համար: (Տես Նէեմեա Ը.3, 17–18): Ինչպե՞ս արձագանքեցին մարդիկ (Տես Նէեմեա Ը.3, 6, 9, 12): Ինչպե՞ս կարող ենք ավելի ուշադիր լինել, երբ կարդում ենք սուրբ գրությունները: (Քննարկեք, թե ինչպես ավելի ուշադիր լինենք, երբ ինքներս ենք կարդում սուրբ գրությունները և Սուրբ Հոգու շշուկների հանդեպ, որոնք գալիս են, երբ կարդում ենք սուրբ գրությունները): Ինչպե՞ս կարող ենք նման ոգևորություն զարգացնել սուրբ գրությունների հանդեպ, ինչպիսին ուներ այդ ժողովուրդը:
- Ի՞նչ արեց Եզրասն իր ժողովրդին օգնելու հասկանալ սուրբ գրությունները (Տես Նէեմեա Ը.8): Ի՞նչն է օգնել ձեզ ձեր ջանքերում՝ անձամբ հասկանալ սուրբ գրությունները և ձեր ընտանիքին օգնել հասկանալ դրանք: (Հրավիրեք դասարանի անդամներին կիսվել այն հատուկ բաներով, որ նրանք արել են բարելավելու սուրբ գրությունների իրենց անձնական և ընտանեկան ուսումնասիրությունը):
- Ի՞նչ ասացին Եզրասը և մյուս ղեկավարները, երբ մարդիկ սկսեցին արտասվել, երբ լսեցին սուրբ գրությունները (Տես Նէեմեա Ը.9–11): Ինչպե՞ս են սուրբ գրություններն ուրախություն պատճառել ձեզ:

Եզրափակում

«Նէեմեայի եռանդը, ունակությունը, անեսասեր հայրենասիրությունը և անձնական շիտակությունը մեկ անգամ ևս գոյություն տվեց մի նոր ծաղկող Հուդայի: Երուսաղեմի վերականգնումը, որը մեկ դար ու կես ավերակ էր եղել, սկսվեց: Եզրասը, մի արդար, նվիրված քահանա, միացավ Նէեմեային այս աշխատանքում և միասին նրանք հաջողության հասան՝ Երուսաղեմում մեկ անգամ ևս վերականգնելով հրեական համայնքը» (*Old Testament Student Manual:1 Kings–Malachi* [1982], 314):

Բացատրեք, որ ճիշտ ինչպես հրեաները պարտավորություն ունեին վերակառուցել Երուսաղեմը, Վերջին Օրերի Սրբերը պարտավորություն ունեն կառուցել Սիոնը ողջ աշխարհում: Այս անելիս մեզ օգնելու համար, մենք պետք է հետևենք սուրբ գրությունների ուսմունքներին և մասնակցենք տաճարային աշխատանքին: Վկայեք սուրբ գրությունների ճշմարտացիության և տաճարային աշխատանքի կարևորության մասին:

Դասարանի անդամներին հիշեցրեք, որ որոշ մարդիկ կփորձեն խանգարել Տիրոջ աշխատանքը: Մենք պետք է նրանց հանդեպ ցույց տանք Քրիստոսանման սեր, բայց թույլ չտանք, որ նրանք մեզ շեղեն Աստծո թագավորությունը կառուցելու մեր ջանքերից:

Ուսուցման լրացուցիչ մտքեր

Հետևյալ նյութն օժանդակում է առաջարկվող դասի ուրվագծին: Օգտագործեք մեկ կամ մի քանի գաղափար որպես դասի բաղկացուցիչ մաս:

1. «Այս գործը մեծ և ընդարձակ է. և մենք ցրված ենք» (Նէեմեա Դ.19):

Երուսաղեմի շուրջ բոլորը պատ կառուցելիս հրեաները միմյանցից առանձնացան, որպեսզի միաժամանակ կարողանային աշխատել պատի տարբեր մասերի վրա (Նեեմիա Գ, Դ.19): Երբեմն նրանք միմյանցից հեռու էին գտնվում, բայց նրանք բոլորն աշխատում էին նույն նպատակի համար, և աշխատելով միասին, նրանք կարողացան ավարտել պատը: Հիշեցրեք դասարանի անդամներին, որ Եկեղեցին բաժանված է տարբեր միավորների (ինչպես օրինակ ընտանիքների, ծխերի, ճյուղերի, ցցերի, շրջանների և քվորումների) ողջ աշխարհում: Երբեմն մի միավորը կարող է հեռու թվալ մյուս միավորից: Բայց բոլոր Սրբերն աշխատում են նույն նպատակների ուղղությամբ և եթե յուրաքանչյուր անձնավորություն աշխատի ջանասիրաբար, ողջ Եկեղեցին կշարունակի աճել:

2. «Տաճարները հավերժական ուխտերի համար են»

Եթե *Ընտանեկան երեկոյի տեսանյութերի (միջազգային) հավելվածը* (5X736) մատչելի է, ցույց տվեք «Տաճարները հավերժական ուխտերի համար են» վեց րոպեանոց հատվածը, որպես տաճարների կարևորության մասին քննարկման մաս:

Դաս
48

«Տիրոջ մեծ և ահեղ օրը»

Զաքարիա Ժ–ԺԴ, Մաղաքիա

Նպատակ

Խրախուսել դասարանի անդամներին (1) պատրաստվել Տեր Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալստին, (2) վճարել ազնիվ տասանորդ և առատ նվիրատվություններ և (3) զգալ օրհնությունները, որոնք գալիս են քահանայության կնքող զորության շնորհիվ:

Նախապատրաստում

1. Աղոթքով ուսումնասիրեք Զաքարիա Ժ–ԺԴ գլուխները և Մաղաքիայի գիրքը, որոնք քննարկվում են այս դասում:
2. Լրացուցիչ ընթերցանություն՝ Վարդապետություն և Ուխտեր 45:
3. Գրեք սուրբ գրության որոշ հղումներ դասի առաջին մասից թղթի առանձին թերթիկների վրա դասարանի անդամներին բաժանելու համար:
4. Եթե օգտագործելու եք ուշադրության վարժությունը, ձեռք բերեք Երկրորդ Գալստի նկարը (62562, Ավետարանական արվեստի Նկարների Հավաքածու 238):
5. Ձեռք բերեք *Նոր Կտակարանի Դասարանի Անդամի Ուսումնական Ուղեցույց* (31392) ձեր դասարանի յուրաքանչյուր անձնավորության համար: (Ծուխը պետք է որ պատվիրած լինի այս ուսումնական ուղեցույցները որպես ամենամյա ծրագրի մաս, եպիսկոպոսության որևէ անդամ պետք է դրանք տա կիրակնօրյա դպրոցի նախագահությանը:

Առաջարկվող դասի զարգացում

Ուշադրության կենտրոնացման վարժություն

Օգտագործեք հետևյալ վարժությունը (կամ ձեր սեփականը) դասը սկսելու համար:

Ցույց տվեք Երկրորդ Գալստի նկարը: Այնուհետև ուղղեք հետևյալ հարցերը.

- Ի՞նչ զգացումներ եք ունենում, երբ լսում եք խոսքեր ինչպես *Երկրորդ Գալուստը, վերջին օրեր* կամ *ժամանակների նշաններ:* Սուրբ գրությունները նշում են Երկրորդ Գալստի մասին որպես «մեծ և ահեղ օր» (Մաղաքիա Դ.5): Ինչպե՞ս այն կարող է լինել երկուսն էլ:

  Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոնն ասել է. «[Փրկչի] գալուստը կլինի և փառահեղ և սարսափելի, կախված հոգևոր վիճակից նրանց, ովքեր մնացած կլինեն» (“Prepare Yourself for the Great Day of the Lord,” *New Era,* May 1982, 49):

Բացատրեք, որ այս դասը ներառում է քննարկումներ (1) այն մարգարեությունների մասին, որոնք Զաքարիան և Մաղաքիան արել են վերջին օրերի և (2) Երկրորդ Գալստին մեր նախապատրաստվելու վերաբերյալ:

Սուրբ գրության քննարկում և կիրառում

Երբ դուք սովորեցնում եք սուրբ գրության հետևյալ հատվածները, քննարկեք թե ինչպե՞ս է այն վերաբերում ամենօրյա կյանքին: Խրախուսեք դասարանի անդամներին կիսվել փորձառություններով, որոնք կապված են սուրբգրքյան սկզբունքների հետ:

1. Զաքարիան և Մաղաքիան մարգարեանում են վերջին օրերի բազմաթիվ իրադարձությունների մասին:

Քննարկեք Զաքարիայի և Մաղաքիայի հետևյալ մարգարեություններից մի քանիսը, որոնք նկարագրում են վերջին օրերի իրադարձությունները: Եթե դուք պատրաստել եք թղթի թերթիկների վրա գրված սուրբ գրությունների հղումներ, բաժանեք դրանք դասարանի անդամներին: Հանձնարարեք դասարանի անդամներին կարդալ յուրաքանչյուր հատվածը և պատմել, թե ինչ է այն ուսուցանում: Եթե հատվածը տեղեկություն է տալիս, որ կարող է օգնել մեզ պատրաստվել Երկրորդ Գալստի համար, քննարկեք թե ինչպես կարող ենք կիրառել այն:

Մարգարեություններ, որոնք իրականացել են ի նախապատրաստումն Երկրորդ Գալստյան

ա. Մաղաքիա Գ.1: Մաղաքիան մարգարեացավ, որ մի սուրհանդակ պատրաստելու էր ճանապարհ Տիրոջ գալստյան համար: Հովհաննես Մկրտիչը պատրաստեց ճանապարհ Տիրոջ մահկանացու ծառայության համար և Զոզեֆ Սմիթը սուրհանդակն էր, որը պատրաստեց ճանապարհը Երկրորդ Գալստյան համար (տես Մատթեոս ԺԱ.10, Joseph Fielding Smith, *Doctrines of Salvation,* comp. Bruce R. McConkie, 3 vols. [1954–56], 1:193–95, 3:10–14):

բ. Մաղաքիա Դ.5–6: Մաղաքիան մարգարեացավ, որ Եղիա մարգարեն վերադառնալու էր նախքան Երկրորդ Գալուստը դարձնելու հայրերի սրտերը դեպի որդիքը և որդկանց սրտերը դեպի իրենց հայրերը: Այս մարգարեությունն իրականացավ, երբ Եղիան հայտնվեց Զոզեֆ Սմիթին Կիրթլենդի տաճարում, վերականգնելով կնքող զորության բանալիները (ՎԱՈՒ 110.3–16): *Հնարավոր կիրառում.* Մենք պետք փնտրենք մեր նախնիների անունները և նրանց համար տաճարում կատարենք արարողություններ (սա հետո ավելի մանրամասն քննարկվում է դասի ընթացքում):

- Ինչո՞ւ է օգտակար իմանալ, որ Երկրորդ Գալստի վերաբերյալ մարգարեություններից մի քանիսն արդեն կատարվել են:

Մարգարեություններ, որոնք դեռ պիտի կատարվեն Փրկչի գալուց առաջ

ա. Զաքարիա Ժ.6–8: Հուդայի և Հովսեփի ժողովուրդը կհավաքվի, իսկ Եփրեմի ժողովուրդը կդառնա հզոր: Տերը «կսուլի» կամ կկանչի իր ժողովրդին և կհավաքի նրանց: *Հնարավոր կիրառում.* Մենք կարող ենք օգնել այս հավաքմանն ուրիշների հետ կիսվելով ավետարանով:

բ. Զաքարիա ԺԲ.2–3, 8–9: Մի մեծ պատերազմ կմղվի Երուսաղեմի մեջ և շրջակայքում, բայց Տերը կմիջամտի և կփրկի Երուսաղեմի բնակիչներին կործանումից: *Հնարավոր կիրառում.* Մենք պետք է վստահենք Աստծուն պաշտպանելու իր ժողովրդին վերջին օրերի դժվարությունների ժամանակ:

գ. Զաքարիա ԺԴ.8: Երուսաղեմում տաճարից կենդանի ջրեր կհոսեն և կբժշկեն Մեռյալ ծովը և Հրեաստանի անապատը (տես նաև Եզեկիել ԽԷ.1, 8–9):

- Վերջին օրերին մարգարեություններից շատերը ներառում են ողբերգություններ, ինչպես օրինակ պատերազմ, բնական աղետներ և լայնատարած ամբարշտություն: Ինչպե՞ս կարող ենք պահպանել մեր հույսը, երբ լսում ենք այս մարգարեությունների մասին և ականատես դառնում դրանց իրականացմանը (Տես ՎԱՈՒ 38.28–30):

Մարգարեություններ, որոնք կկատարվեն, երբ Փրկիչը գա

ա. Զաքարիա ԺԴ.3–4: Փրկիչը կկանգնի Ձիթենյաց սարի վրա և սարը կբաժանվի երկու կեսի (տես նաև ՎԱՈՒ 45.48):

բ. Զաքարիա ԺԲ.10, ԺԳ.6: Հրեա ժողովուրդը, ապրելով Երուսաղեմի ազատման ժամանակ, կտեսնի Հիսուս Քրիստոսին և կսգա, որովհետև նրանք որպես ժողովուրդ մերժեցին նրան՝ որպես Մեսիա (տես նաև ՎԱՈՒ 45.51–53):

գ. Զաքարիա ԺԳ.2: Կեղծ կուռքերը, անմաքուր ոգիները և կեղծ մարգարեները կկործանվեն:
դ. Զաքարիա ԺԴ.5: Արդարները, ովքեր կենդանի կլինեն երկրի վրա, կհափշտակվեն դիմավորելու Փրկչին: Արդարները, ովքեր մահացած կլինեն, հարություն կառնեն և վեր կհափշտակվեն նրան դիմավորելու համար (տես նաև ՎԱՈՒ 88.96–98):
ե. Զաքարիա ԺԴ.9: Տերը թագավոր կլինի ողջ երկրի երեսին և կկառավարի Հազարամյակի ընթացքում:
զ. Զաքարիա ԺԴ.12–13, Մաղաքիա Գ.13–18, Դ.1–3: Ամբարիշտները կկործանվեն և արդարները կխնայվեն (տես նաև 1 Նեփի 22.15–17, 19):

- Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ է Տերը հայտնել այս մարգարեությունները վերջին օրերի, Երկրորդ Գալստի և Հազարամյակի մասին (Տես ՎԱՈՒ 45.34–44): Ինչպե՞ս կարող ենք նախապատրաստվել Փրկչի Երկրորդ Գալստին (Տես ՎԱՈՒ 45.56–57):

  Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոնն ասել է. «Երբ ապրում ենք Աստծո պատվիրաններով, մենք կարող ենք ուրախ ակնկալիքով սպասել Տեր Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալստին՝ իմանալով, որ մեր ջանքերի միջոցով մենք արժանի ենք, մեր սիրելիների հետ ապրել Նրա ներկայության մեջ ողջ հավերժության ընթացքում: Անկասկած չկա խիստ դժվար որևէ բան այս մեծ նպատակին հասնելու համար: Մենք չենք կարող թուլանալ ոչ մի պահ: Մենք պետք է ապացուցենք մեր կյանքի յուրաքանչյուր օրը, որ մենք կամենում ենք անել Տիրոջ կամքը՝ տարածել վերականգնված ավետարանը, վկայություն բերել աշխարհին, կիսվել ավետարանով ուրիշների հետ» (*The Teachings of Ezra Taft Benson* [1988], 341):

- Ինչպե՞ս է օգնում ձեզ այն գիտելիքը, որ արդարությունն ի վերջո կհաղթի ամբարշտությանը:

2. Մաղաքիան ուսուցանում է այն օրհնությունների մասին, որոնք գալիս են նրանց, ովքեր վճարում են տասանորդներ և նվիրատվություններ:

Ուսուցանեք և քննարկեք Մաղաքիա Գ.8–12:

- Ինչպե՞ս են մարդիկ «կողոպտում Աստծուն» չվճարելով տասանորդներ և նվիրատվություններ:

- Ի՞նչ է նշանակում լրիվ տասանորդ վճարել:

  Առաջին Նախագահությունն ասել է. «Ամենապարզ դատողությունը, որի մասին մենք գիտենք հենց Տիրոջ դատողությունն է, այսինքն, որ Եկեղեցու անդամները պետք է վճարեն »իրենց տարեկան ամբողջ եկամուտի մեկ տասներորդը», որը հասկացվում է նշանակելով շահույթը: Ոչ ոք արդարացված չէ որևէ այլ դատողություն անել, բացի սրանից (First Presidency letter, 19 Mar. 1970; see also D&C 119:1–4):

- Ի՞նչ օրհնություններ է Տերը խոստացել մեզ, եթե մենք տասանորդ վճարենք: (Տես Մաղաքիա Գ.10–12): Ինչպե՞ս է Տերն օրհնել ձեզ, երբ դուք տասանորդ և նվիրատվություններ եք վճարել:

- Ի՞նչը պետք է լինի տասանորդներ և նվիրատվություններ վճարելու մեր շարժառիթը:

  Անդրադառնալով օրհնություններին, որոնք Տերը տալիս է տասանորդ վճարողներին, Նախագահ Գորդոն Բ. Հինքլին ասել է.

  «Դե ինձ սխալ մի հասկացեք: Ես այստեղ չեմ ասելու, որ եթե դուք ազնիվ տասանորդ եք վճարում, դուք կիրականացնեք հրաշալի տան, Ռոլս Ռոյսի և Հավայան կղզիներում ամառանոց ունենալու ձեր երազանքը: *Տերը կբացի երկնքի պատուհանները համաձայն մեր կարիքի, և ոչ թե համաձայն մեր ագահության:* Եթե մենք վճարում ենք տասանորդ

հարստանալու համար, մենք դա անում ենք սխալ պատճառով: Տասանորդի հիմնական նպատակը Եկեղեցուն միջոցներ ապահովելն է այն ուղիներով, որոնք անհրաժեշտ են Նրա աշխատանքն առաջ տանելու համար» (in Conference Report, Apr. 1982, 60; or *Ensign,* May 1982, 40):

- Ինչո՞ւ է երբեմն տասանորդին հնազանդվելու օրենքը մարտահրավեր դառնում: Ի՞նչ կարող ենք անել այդ մարտահրավերը հաղթահարելու համար:

3. Մաղաքիան մարգարեանում է կնքող զորության բանալիները վերականգնելու համար Եղիայի երկիր վերադառնալու մասին:

Ուսուցանեք և քննարկեք Մաղաքիա Դ.5–6:

- Մաղաքիան մարգարեացել է, որ Եղիա մարգարեն երկիր կգա Տիրոջ Երկրորդ Գալստից առաջ (Մաղաքիա Դ.6): Ինչպե՞ս կատարվեց այս մարգարեությունը (Տես ՎԿՈՒ 110.13–16): Եղիան հայտնվեց Կիրթլանդի տաճարում և վերականգնեց՝ Ջոզեֆ Սմիթին տալով կնքող զորության բանալիները): Ի՞նչ է նշանակում «դարձնէ հայրերի սիրտը դեպի որդիքը և որդկանց սիրտը՝ դեպի իրենց հայրերը»: (Դա նշանակում է հավիտյան կնքվել բոլոր մեր նախնիների հետ՝ մեր «հայրերի» և բոլոր մեր ժառանգների՝ մեր «որդկանց» հետ: Քահանայության կնքող զորության շնորհիվ և ողջերի ու մահացածների համար տաճարային արարողությունների շնորհիվ, ընտանիքները կարող են կապված լինել միմյանց հավերժության համար):
- Ինչպե՞ս եք զգացել, որ ձեր սիրտը դարձել է դեպի ձեր նախնիները, երբ դուք արել եք ընտանեկան պատմության և տաճարային աշխատանք նրանց համար: Ինչպե՞ս են տաճարային ուխտերի խոստումները դարձնում ձեր սրտերը դեպի ձեր ծնողները, ամուսինը և երեխաները:
- Մաղաքիա Դ.5–6 հատվածների ուղերձն ուսուցանվում է կանոնիկ աշխատություններից յուրաքանչյուրում (Ղուկաս Ա.17, 3 Նեփի ԻԵ.5–6, ՎԿՈՒ Բ.1–3, Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.37–39): Ի՞նչ եք կարծում ինչո՞ւ է այս ուղերձն այդքան հաճախ կրկնվում:

Եզրափակում

Վկայություն բերեք այն բաների մասին, որոնք դուք ընտրել եք դասի ընթացքում քննարկելու համար: Որպես այս տարվա ուսումնական դասընթացի եզրափակում՝ արտահայտեք նաև ձեր երախտագիտությունը Հին Կտակարանի ուսմունքների համար:

Դասարանի յուրաքանչյուր անդամի տվեք *Նոր Կտակարանի Դասարանի Անդամի Ուսումնական Ուղեցույցը* (31392, տես «Նախապատրաստում» էջ 225): Բացատրեք, որ հաջորդ տարվա ուսումնական դասընթացը Նոր Կտակարանն է: Խրախուսեք անդամներին սկսել օգտագործել ուսումնական ուղեցույցը՝ նախապատրաստվելու հաջորդ շաբաթվա դասին և ուսումնասիրելու Նոր Կտակարանն իրենց ընտանիքների հետ:

Ուսուցման լրացուցիչ գաղափարներ

Հետևյալ նյութն օժանդակում է առաջարկվող դասի ուրվագծին: Օգտագործեք մեկ կամ մի քանի գաղափար որպես դասի բաղկացուցիչ մաս:

1. Մարգարեություններ Փրկչի հայտնվելու մասին

- Փրկչի վերջին օրերի հայտնվելու առնվազն յոթը կանխագուշակումներ են արվել սուրբ գրություններում: Դրանցից քանի՞սը կարող եք նշել:

Հետևյալ տեղեկությունը կօգնի պատասխանել այս հարցին.

ա. Մարգարե Ջոզեֆ Սմիթին Առաջին Տեսիլքում (Գործք Գ.19–21, Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.15–17):
բ. Իր վերջին օրերի տաճարներում (Մաղաքիա Գ.1, ՎԵՈՒ 133.1–2):
գ. Ադամ-օնդի-Ահման հովտում (ՎԵՈՒ 116, Դանիել Է.13–14, 22. տես նաև ՎԵՈՒ 107.53–56 հատվածներում, որոնք նկարագրում են անցյալ մի հանդիպում Ադամ-օնդի-Ահմանում, որը նման է այն հանդիպմանը, որը տեղի կունենա այնտեղ):
դ. Երուսաղեմում մի համաշխարհային ընդհարման ժամանակ, որը հայտնի է որպես Արմագեդոնի ճակատամարտ (Եզեկիել ԼԸ–ԼԹ):
ե. Նոր Երուսաղեմ քաղաքում՝ Ինդիփենդենսում՝ Միսսուրի նահանգ (3 Նեփի 21.24–26):
զ. Արդարներին՝ Իր Երկրորդ Գալստյան ժամանակ (Զաքարիա ԺԴ.5, Ա Թեսաղոնիկեցիս Դ.16–17, ՎԵՈՒ 88.96–98):
է. Ամբարիշտներին (ՎԵՈՒ 133.42–51):

2. Երբ տեղի կունենա Երկրորդ Գալուստը:

Տերը հստակ է դարձրել, որ չնայած նա կրկին անկասկած գալու է, ոչ մի մարդ չգիտի ճշգրիտ ժամանակը (ՎԵՈՒ 39.20–21, 49.7):

Երեց Ռիչարդ Լ. Էվանսն ասել է. «Եղբայրներից մի քանիսը…. մոտեցան [Նախագահ Վիլֆորդ Վուդրուֆին] և…. հարցրեցին նրանից, թե ինչ էր զգում, երբ էր լինելու վերջը, երբ էր լինելու Տիրոջ գալուստը: Կարծում եմ սրանք նրա ճշգրիտ խոսքերը չեն, բայց դրանք արտահայտում են նրա հաղորդած պատասխանի ոգին. «Ես կապրեի այնպես, կարծես թե այն վաղն էր լինելու, բայց ես դեռ կեռասենիներ եմ տնկում»: Կարծում եմ մենք լավ կլինի վերցնենք սա որպես մի էջ մեր սեփական գրքի համար և ապրենք կարծես թե վերջը վաղն է լինելու և դեռ կեռասենիներ տնկենք: Անհանգստանալով այնպիսի բաների մասին, որոնք մեր հասանելիությունից դուրս են, մենք չպետք է աչքաթող անենք պատեհ առիթները մեր ընտանիքների և ընկերների հետ, անհանգստանալով հնարավոր իրադարձությունների մասին, մենք չպետք է անտեսենք այն բաները, որոնք պետք է արվեն այստեղ և այժմ, և որոնք հասանելի են մեզ» (in Conference Report, Apr. 1950, 105–6):

ՀԻՍՈՒՍ
ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

ARMENIAN
4 02355 70201 9
35570 201